

ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ М. НАЛБАНДЯНА
РЕСПУБЛИКАНСКАЯ СТУДЕНЧЕСКАЯ
КОНФЕРЕНЦИЯ
(С МЕЖДУНАРОДНЫМ УЧАСТИЕМ)
11 НОЯБРЯ, 2022



ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ)
11 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2022

M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF
SHIRAK
REPUBLICAN STUDENT CONFERENCE
(WITH INTERNATIONAL PARTICIPATION)
11 NOVEMBER, 2022



ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ)
11 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2022

ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ М. НАЛБАНДЯНА
РЕСПУБЛИКАНСКАЯ СТУДЕНЧЕСКАЯ КОНФЕРЕНЦИЯ
(С МЕЖДУНАРОДНЫМ УЧАСТИЕМ)
11 НОЯБРЯ, 2022

M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF SHIRAK
REPUBLICAN STUDENT CONFERENCE
(WITH INTERNATIONAL PARTICIPATION)
11 NOVEMBER, 2022

*Երաշխավորվել է սպազորության ՇՊՀ-ի գիտական խորհրդի կողմից
10.10.2023թ.-ի նիստում (որոշում N 2.5)*

Կազմհանձնաժողով

- **Երվանդ Սերոբյան** - նախագահ, ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Արմենուհի Սարգսյան** - տեղակալ, ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Սամվել Սարգսյան** - տեղակալ, ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Անի Սահակյան** - պատասխանատու քարտուղար, ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Երանուհի Սարգսյան** - պատասխանատու քարտուղար, ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Նազելի Ավետիսյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Գագիկ Նիկողոսյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Հովիկ Մելքոնյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Թերեզա Խաչատրյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Լևոն Մարտիրոսյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Աիդա Գարեգինյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Օֆելյա Հովհաննիսյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Արթուր Մկրտչյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Ռուզաննա Մարդոյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Հենրիկ Դրմեյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Սպարտակ Սողոմյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Սամվել Ալեքսանյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Արտուշ Թամրազյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Սերգո Հայրապետյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Գագիկ Խաչիկյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Անահիտ Հովհաննիսյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Արտաշես Մկոյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Հովհաննես Խորիկյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
- **Անահիտ Կիրակոսյան** - ՇՊՀ, Գյումրի, ՀՀ

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Շ 642 ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ,
2022.- ԳՅՈՒՄՐԻ: ՇՊՀ, 2023.- 622 էջ:

ՀՏԴ 378:001(082)
ԳՄԴ 74.48+72g43

Оргкомитет

- **Ерванд Серобян** - председатель, ШГУ, Гюмри, РА
- **Арменуи Саргсян** - заместитель, ШГУ, Гюмри, РА
- **Самвел Саркисян** - заместитель, ШГУ, Гюмри, РА
- **Ани Саакян** - ответственный секретарь, ШГУ, Гюмри, РА
- **Ерануи Саргсян** - ответственный секретарь, ШГУ, Гюмри, РА
- **Назели Аветисян** - ШГУ, Гюмри, РА
- **Гагик Никогосян** - ШГУ, Гюмри, РА
- **Овик Мелконян** - ШГУ, Гюмри, РА
- **Тереза Хачатрян** - ШГУ, Гюмри, РА
- **Левон Мартиросян** - ШГУ, Гюмри, РА
- **Аида Гарегинян** - ШГУ, Гюмри, РА
- **Офелия Оганнисян** - ШГУ, Гюмри, РА
- **Артур Мкртчян** - ШГУ, Гюмри, РА
- **Рузанна Мардоян** - ШГУ, Гюмри, РА
- **Генрик Дрмеян** - ШГУ, Гюмри, РА
- **Спартак Согоян** - ШГУ, Гюмри, РА
- **Самвел Алексанян** - ШГУ, Гюмри, РА
- **Артуш Тамразян** - ШГУ, Гюмри, РА
- **Серго Айрапетян** - ШГУ, Гюмри, РА
- **Гагик Хачикян** - ШГУ, Гюмри, РА
- **Анаит Оганесян** - ШГУ, Гюмри, РА
- **Артасес Мкоян** - ШГУ, Гюмри, РА
- **Оганнес Хорикян** - ШГУ, Гюмри, РА
- **Анаит Киракосян** - ШГУ, Гюмри, РА

*Approved for Publication by the Scientific Board of SUSH
at the sitting on 10.10.2023 (decision N 2.5)*

Organizing Committee

- **Yervand Serobyán** - President, SUSH, Gyumri, RA
- **Armenuhi Sargsyan** - Deputy, SUSH, Gyumri, RA
- **Samvel Sargsyan** - Deputy, SUSH, Gyumri, RA
- **Ani Sahakyan** - Secretary, SUSH, Gyumri, RA
- **Eranuhi Sargsyan** - Secretary, SUSH, Gyumri, RA
- **Nazeli Avetisyan** - SUSH, Gyumri, RA
- **Gagik Nikoghosyan** - SUSH, Gyumri, RA
- **Hovik Melkonyan** - SUSH, Gyumri, RA
- **Tereza Khachatryan** - SUSH, Gyumri, RA
- **Levon Martirosyan** - SUSH, Gyumri, RA
- **Aida Gareginyan** - SUSH, Gyumri, RA
- **Ofelya Hovhannisyan** - SUSH, Gyumri, RA
- **Arthur Mkrtchyan** - SUSH, Gyumri, RA
- **Ruzanna Mardoyan** - SUSH, Gyumri, RA
- **Henrik Drmeyan** - SUSH, Gyumri, RA
- **Spartak Soghoyan** - SUSH, Gyumri, RA
- **Samvel Aleksanyan** - SUSH, Gyumri, RA
- **Artush Tamrazyan** - SUSH, Gyumri, RA
- **Sergo Hayrapetyan** - SUSH, Gyumri, RA
- **Gagik Khachikyan** - SUSH, Gyumri, RA
- **Anahit Hovhannisyan** - SUSH, Gyumri, RA
- **Artashes Mkoyan** - SUSH, Gyumri, RA
- **Hovhannes Khorikyan** - SUSH, Gyumri, RA
- **Anahit Kirakosyan** - SUSH, Gyumri, RA

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Հախվերդյան Ա. Ա.

Լոռու մարզում զբոսաշրջության առանձին տեսակների զարգացման հեռանկարայնության վերլուծություն 20

Մկրտչյան Գ. Վ.

Բժշկաաշխարհագրական թեմատիկ քարտեզների կազմման առանձնահատկությունները (Սյունիքի մարզի օրինակով) 31

Արզումանյան Ի. Ա.

Փողոցում վաճառվող կաթի որակական ցուցանիշների հետազոտումը Երևանում 37

Բուրովա Վ. Կ., Ղազարյան Ա. Վ.

Գրիպի տարածման հավանականության որոշումը շնչած և արտաշնչած օդում մոլեկուլների կոնցենտրացիայի հաշվարկի միջոցով 45

Մուզայրովա Ի. Օ.

Պարկինսոնի հիվանդության զարգացման էկզոգեն և էնդոգեն մեխանիզմների փոխազդեցության ուսումնասիրության մաթեմատիկական մեթոդները 55

Պետրոսյան Ա. Ա.

Լույսի գործոնի ազդեցությունը կարտոֆիլի *in vitro* բուսակների աճի ու զարգացման գործընթացների վրա ֆիտոտրոնի պայմաններում 61

Ստրեբկովա Տ. Վ.

Հակավիրուսային դեղերի վաճառքի սեզոնայնության XYZ վերլուծությունը Կուրսկ քաղաքի դեղատների օրինակով 73

Սումբուլյան Դ. Ս., Գալստյան Ս. Ս.

Պատրինջ դեղատուի (MELISSA OFFICINALIS L.) վիրուսազերծ բուսակների ստացումը *in vitro* բազմացման պայմաններում 80

Ղարամյան Ա. Ս.

Արցախի բուսական աշխարհի առավել կիրառելի որոշ տեսակների ուսումնասիրությունը 86

Համբարձումյան Ն. Հ.

Աշխարհագրության սկսնակ ուսուցչի արդյունավետ գործունեության փորձի դիտարկում 95

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Լ. Լ.

Բարդ համադասական կառույցի՝ միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչ նախադասությունների եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցությունը Ռ. Հովսեփյանի արձակում 105

Աբրահամյան Ն. Ա.

Ինքնակենսագրական վեպի արժևորումը հայ նորագույն գրականության մեջ Հակոբ Ասատուրյանի եռապատումի քննությամբ 113

Մելիքսեթյան Ա. Վ.	
Բանահյուսության վիպական ժանրի դրսևորման առանձնահատկությունները Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպաքում	123
Հակոբյան Տ. Վ.	
Տարածության և ժամանակի հարաբերակցությունը Դիանա Համբարձումյանի երկերում	134
Քալաշյան Մ. Մ.	
Վեպի և պատմվածքի ժանրերի հարաբերակցումը Հովհաննես Երանյանի վիպական կառույցում	144
Թաթոյան Ն. Կ.	
Դրամի ներգործուն ուժը Վահե Հայկի մի քանի պատմվածքներում	154
Կոստանյան Ա. Ն.	
Նաղաշ Հովնաթանի «Ուստի՞ կու գաս, քաղցր բլբուլ» և Մայաթ-Նովայի «Ուստի՞ գու քաս, դարի բ բլբուլ» տաղերի առանձնահատկությունները	161
ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Ալեքսանյան Ն. Մ.	
Բնագիտական հոսքում բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցման արդյունավետության վերաբերյալ	170
Հովհաննիսյան Մ. Ա.	
Ռուս գրականությունից թեստավորումը որպես ավագ դասարանների աշակերտների հարցման և գիտելիքների ստուգման ձև	182
Գրիգորյան Գ. Կ.	
Մշակութային հումորի թարգմանական առանձնահատկությունները «Ուրախ ավտոբուս» ֆիլմում	194
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	
Ահարոնյան Ի. Վ.	
Ավարները որպես ազգային փոքրամասնություն արդի իրողությունների համատեքստում	206
Հայրապետյան Մ. Ռ.	
Ֆրանս-պրուսական պատերազմի արձագանքը «Մեղու Հայաստանի» թերթում ..	214
Զիլավյան Գ. Գ.	
«Կառլոսյան երկրորդ պատերազմի» արձագանքը «Եվրոպա» պարբերականում	226
Սարգսյան Շ. Գ.	
Թալիշական գործոնը ազգային ինքնագիտակցության ձևավորման տեսանկյունից	236
Վարդանյան Վ. Ա.	
Ավգուստո Պինոչետ: Իշխանության գալու ճանապարհին	245
Գասպարյան Ա. Է.	
Ժամանակակից Թուրքիայում քրդական հարցի հետազոտությունը և դրա հեռանկարկները տարածաշրջանում	256

Բարինյան Ս. Ռ.	
Հնդկական իսլամի առանձնահատկությունների պատմական ակնարկ	265
Մաթևոսյան Հ. Գ.	
Ախալցխայի 1918թ. ինքնապաշտպանության դասերը	278
Վարդանյան Ա. Կ.	
Կրթական կյանքը Շուշիում 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունից հետո (ըստ «Փայլակ» թերթի հրապարակումների)	285
Լալաբեկյան Ա. Կ.	
Տեղ գյուղի ավանդական ուսուցիչները և խմիչքները որպես նյութական մշակույթի դրսևորումներ	292

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մարգարյան Ա. Կ.	
Քաղաքացիական անձանց պաշտպանության իրավական գործընթացը միջազգային իրավունքի համակարգում	300
Ասիկյան Ա. Ս.	
Անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ պայքարի քրեաիրավական և կրիմինալոգիական որոշ հարցեր	309
Անդրեասյան Ս. Հ.	
ՀՀ աշխատանքային օրենսգիրքը՝ աշխատանքային կարգապահության իրավական խնդիրների կարգավորման վերաբերյալ	321
Կարապետյան Ս. Հ.	
Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում	330
Նահապետյան Շ. Վ.	
ՀՀ սահմանադրական բարեփոխումների իրավական հիմքերը	339
Կիրակոսյան Ա. Ժ.	
Երիտասարդությունը և Հայաստանի հոգևոր անվտանգության ապահովման խնդիրը	348
Դավթյան Տ. Գ.	
Ազգային պետության հիմնադրումը որպես քաղաքական արդիականացման նպատակ	357
Մարկոսյան Գ. Հ.	
«Հոգևոր Հայաստան» քաղաքակրթական նախագծի իրատեսությունը	368
Մեխակյան Ա. Հ.	
Հայահավաք: Հայրենադարձության պարտադրանքն ու հնարավորությունները	377

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Աբրահամյան Մ. Մ.	
Ուսանողների ինքնուրույն գործնական աշխատանքները որպես կրթական վերջնարդյունքների ապահովման միջոց	385

Մարգարյան Ե. Ա.	
Ընթերցասիրության դաստիարակչական նշանակությունը հասարակության կյանքում	393
Գալստյան Ա. Լ.	
Ներառական կրթության ներդրման միջավայրային և վերաբերմունքի խոչընդոտները Շիրակի մարզում և հաղթահարման ուղիները	400
Հովհաննիսյան Ե. Ս.	
Հետտրավմատիկ սթրեսների հաղթահարման ելուղիները հակամարտությունից տուժած անձանց և ընտանիքների հետ տարվող հոգեբանավերականգնողական աշխատանքում	410
Գրիգորյան Մ. Ա.	
Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրը հետպատերազմյան Հայաստանում	420
Պողոսյան Է. Ե.	
Մասնագիտական արդի մոտեցումները և առաջնահերթությունները երեխաների հետ տարվող սոցիալական աշխատանքում	425
Մուրադյան Ն. Հ.	
Երեխայի հոգեկան անդորրի պահպանումը պատերազմական իրավիճակում	436
Թորոսյան Մ. Ա.	
Ուսումնառության գործընթացից առաջին կուրսեցիների սպասումների էությունը և դրսևորման առանձնահատկությունները	445
Մարգարյան Ռ. Ժ.	
Ժամանակակից կրթական հաստատությունների ձեռքբերումներն ու ձախողումները Շիրակի մարզի միջին և ավագ դպրոցների օրինակով	450
Պետրոսյան Բ. Հ.	
Ժամանակակից թատրոնի դերը հայ հասարակության մեջ (Գյումրու գործող թատրոնների օրինակով)	458
Քոչարյան Զ. Ս.	
Արտաքին միգրացիայի և դրանք ծնող պատճառների ու հետևանքների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն	466
Մկրտչյան Թ. Ա.	
Խաղի դերը տարրական դպրոցում մայրենիի դասերին	475
Ավետիսյան Ա. Խ.	
Կապակցված խոսքի զարգացումը տարրական դպրոցում մայրենիի դասերին ...	484
Հովհաննիսյան Դ. Հ.	
Ծերանոցի ընկալումը. հայացք ներսից	491
Սահակյան Շ. Վ.	
Ժարգոնի օգտագործումը երիտասարդության շրջանում որպես ինքնահաստատման միջոց (համառոտ վերլուծություն)	502
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	
Մնտյան Է. Ա.	
Ստարտափ էկոհամակարգի վերլուծությունը և զարգացման ուղիները ՀՀ-ում (2021թ.)	509

Մնացականյան Վ. Ռ.	
Տնտեսական տրանսֆորմացման խնդիրները և հեռանկարները Մերձավոր Արևելքի երկրներում	518
Գրիգորյան Ա. Հ.	
2022 թվականի իրադարձությունների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վրա ելնելով աշխատուժի միգրացիայից	529
Ավագյան Ս. Ս., Հակոբյան Գ. Ա.	
Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի բնույթը և արտաքին առևտրի զարգացման առանձնահատկությունները	540
Հովհաննիսյան Ա. Հ.	
Ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում	550
Սարգսյան Ա. Է.	
Համայնքների բյուջեների եկամուտների ձևավորման աղբյուրների վերլուծությունը և առանձնահատկությունները համայնքների խոշորացման համատեքստում	559
Աբրահամյան Ռ. Վ.	
Էլեկտրոնային առևտրի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում (համառոտ վերլուծություն)	568
Աբրահամյան Ն. Մ.	
Կրեատիվ մտածողության կիրառումը և դրա առավելությունները PR ոլորտի մասնագետների աշխատանքները կազմակերպելիս	577
ՄՊՈՐՏ ԵՎ ԱՐՎԵՍՏ	
Գովեյան Ա. Ս.	
Գյումրեցի երիտասարդ ծանրորդները 2019-2021թթ. միջազգային մրցաշարերում (համառոտ վերլուծություն)	587
Արշակյան Ա. Ս.	
Տիեզերքի մասին պատկերացումները հայկական ժայռապատկերներում (համառոտ վերլուծություն)	594
Հովհաննիսյան Գ. Ա.	
Գեղարվեստական մարմնամարզության մրցավարության կանոնների փոփոխության ազդեցությունը սպորտային պատրաստության գործընթացի վրա	604
Արզումանյան Վ. Ա.	
Ստեփանակերտի Վ. Փափագյանի անվան պետական դրամատիկական թատրոնի երեկն ու այսօրը (համառոտ վերլուծություն)	612

О Г Л А В Л Е Н И Е

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ, МЕДИЦИНА, СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО, ГЕОГРАФИЯ И ТУРИЗМ

Ахвердян А. А.

Анализ перспектив развития отдельных видов туризма в Лорийской области 20

Мкртчян Г. К.

Особенности составления тематических медико-географических карт (на примере Сюникской области) 31

Арзуманян И. А.

Исследование показателей качества молока, продаваемого на улице в Ереване 37

Бурова В. К., Казарян А. В.

Определение вероятности распространения вируса гриппа на основе расчета концентрации молекул в выдыхаемом и вдыхаемом воздухе 45

Музалева И. О.

Математические методы изучения взаимодействия экзогенных и эндогенных механизмов в развитии болезни Паркинсона 55

Петросян А. А.

Влияние светового фактора на процессы роста и развития растений картофеля *in vitro* в условиях фитотрона 61

Стребкова Т. В.

XYZ анализ сезонности продажи противовирусных препаратов на примере аптек города Курск 73

Сумбулян Д. С., Галстян С. С.

Получение безвирусных растений лекарственной мяты (melissa officinalis l.) в условиях размножения *in vitro* 80

Гарамян А. С.

Некоторые экономически ценные виды растительного мира Арцаха 86

Амбарцумян Н. А.

Наблюдение за опытом эффективной деятельности начинающего учителя географии 95

АРМЯНСКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

Абовян Л. Л.

Соотношения форм наклонения и временных форм, связывающих соединительными отношениями составные предложения в сложносочинной структуре в прозе Р. Овсепяна 105

Абраамян Н. А.

Ценность автобиографического романа в новейшей армянской литературе по исследованиям трилогии Акопа Асатуряна 113

Меликсетян А. В.

Особенности проявления жанра фольклора отчаяние в романе Х. Даштенца “Зов пахаря” 123

Акопян Т. В.	
Соотношение пространства и времени в творчестве Дианы Амбарцумян	134
Калашян М. М.	
Соотношение жанров романа и рассказа в структуре романа Ованеса Ераняна	144
Татоян Н. К.	
Внутренняя сила денег в некоторых рассказах Ваге Айка	154
Костанян А. Н.	
Особенности строф «Откуда идешь, сладкий соловей?» Нагаша Овнатана и «Откуда идешь, странник-соловей?» Саят-Новы	161

ИНОСТРАННЫЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

Алексамян Н. С.	
Об эффективности предметно-языкового интегрированного обучения в классах естествознания	170
Оганнисян М. А.	
Тестирование по русской литературе как форма опроса и контроля знаний учащихся старших классов	182
Григорян Г. К.	
Особенности перевода культурного юмора в фильме "Веселый автобус"	194

ИСТОРИЯ

Агаронян И. В.	
Авары как национальное меньшинство в контексте современных событий	206
Айрапетян М. Р.	
Отзыв франко-прусской войны в газете "Мегу Аястани"	214
Джилаван Г. Г.	
Реакция на «вторую карлистскую войну» в периодическом издании «Европа»	226
Саргсян Ш. Г.	
Талышский фактор с точки зрения формирования национального самосознания	236
Варданян В. А.	
Августо Пиночет на пути к власти	245
Гаспарян А. Э.	
К вопросу о курдском движении в современной Турции и его перспективах в регионе	256
Баринян С. Р.	
Исторический взгляд на особенности индийского ислама	265
Матевосян Г. Г.	
Уроки самообороны Ахалцихе в 1918 году	278
Варданян А. К.	
Учебная жизнь Шуши после февральской революции 1917 года (по публикациям "Пайлака")	285

Лалабекян А. К.	
Традиционные блюда и напитки как проявление материальной культуры села Тех	292

ПРАВОВЕДЕНИЕ И ПОЛИТИКА

Саргсян А. К.	
Юридический процесс защиты гражданских лиц в системе международного права	300
Асликян А. С.	
Некоторые уголовные и криминологические вопросы борьбы с организацией нелегальной миграции	309
Андреасян С. А.	
Трудовой кодекс РА: об упорядочении правовых проблем трудовой дисциплины	321
Карапетян М. Г.	
Институт гражданской законодательной инициативы в Республике Армения	330
Нагапетян Ш. В.	
Основы конституционных правовых преобразований РА	339
Киракосян А. Ж.	
Молодежь и проблема обеспечения духовной безопасности Армении	348
Давтян Т. Г.	
Создание национального государства как цель политической модернизации	357
Маркосян Г. Г.	
Реальность цивилизованного проекта "Духовная Армения"	368
Мегахкян А. А.	
Армянское собрание. Принуждение и возможности репатриации	377

ПЕДАГОГИКА, ПСИХОЛОГИЯ, СОЦИОЛОГИЯ И СОЦИАЛЬНАЯ РАБОТА

Абрамян М. М.	
Собственные практические работы студентов как средство обеспечения образовательных результатов	385
Саргсян Е. А.	
Воспитательное значение любви к чтению в жизни общества	393
Галстян А. Л.	
Препятствия в обращении и подходу образования во вкладе инклюзивного образования в Ширакской области и пути их преодоления	400
Ованнисян Э. С.	
Пути преодоления посттравматического стресса в психолого-реабилитационной работе с лицами и семьями, пострадавшими в зоне боевых действий	410
Григорян М. А.	
Военно-патриотическое воспитание—главная проблема послевоенной Армении ...	420
Погосян Э. Е.	
Профессиональные современные подходы и приоритеты в социальной работе с детьми	425

Мурадян Н. О.	
Сохранение психического спокойствия ребёнка в условиях войны	436
Торосян М. А.	
Особенности проявления сущности ожиданий первокурсников в процессе обучения	445
Саргсян Р. Дж.	
Достижения и неудачи современных образовательных учреждений на примере средних и высших школ Ширакской области	450
Петросян Б. О.	
Роль современного театра в армянском обществе (на примере театров, действующих в Гюмри)	458
Кочарян К. С.	
Изучение общественного мнения о зарубежных миграциях, их причинах и последствиях	466
Мкртчян Т. А.	
Роль игры в младшей школе на уроках родного языка	475
Аветисян А. Х.	
Развитие связной речи в начальной школе на уроках родного языка	484
Оганнисян Д. Г.	
Восприятие домов престарелых: взгляд изнутри	491
Саакян Ш. В.	
Употребление жаргона в кругу молодежи как средства самоутверждения (краткий анализ)	502

ЭКОНОМИКА И УПРАВЛЕНИЕ

Мноян Э. А.	
Анализ стартап-экосистемы и пути развития в РА (2021г.)	509
Мнацаканян В. Р.	
Проблемы и перспективы экономической трансформации в странах Ближнего Востока	518
Григорян А. Г.	
Влияние событий 2022 года на трудовой рынок Армении на основе трудовой миграции	529
Авагян С. С., Акобян Г. А.	
Характер внешнеэкономических связей Республики Армения и особенности развития внешней торговли	540
Оганнисян А. У.	
Основы повышения эффективности инвестиционной политики в Республике Армения	550
Саргсян А. Э.	
Анализ и характеристика источников формирования доходов бюджета сообщества в условиях расширения сообществ	559

Абрамян Р. В.	
Перспективы развития электронной торговли в Республике Армения (краткий анализ)	568
Абрамян Н. М.	
Применение креативного мышления и его преимущество при организации работ специалистов PR-сферы	577
СПОРТ И ИСКУССТВО	
Говелян А. С.	
Молодые гюмрийские тяжелоатлеты в международных соревнованиях 2019-2021 годов	587
Аршакян А. С.	
Представления о Вселенной в армянских петроглифах (краткий анализ)	594
Ованнисян Г. А.	
Влияние изменений правил судейства по художественной гимнастике на процесс подготовки	604
Арзуманян В. А.	
Вчера и сегодня Государственного степанакертского драматического театра им. В. Папазяна	612

CONTENT

NATURAL SCIENCES, MEDICINE, AGRICULTURE, GEOGRAPHY AND TOURISM

Hakhverdyan A. A.

The Analysis of Development Perspectives of Different Types of Tourism in Lori Region 20

Mkrtchyan G. K.

Specificity of the compilation of Medical-Geographical Thematic Maps (on the Example of the Syunik Region) 31

Arzumanyan I. A.

Investigation of the Milk Quality Sold Streets in Yerevan 37

Burova V. K., Ghazaryan A. V.

Probability Determination of Spread of the Influenza Virus Based on the Calculation of the Concentration of Molecules in the Exhaled and Inhaled Air 45

Muzalyova I. O.

Mathematical Methods for Studying Interaction Exogenous and Endogenous Mechanisms in Development Parkinson's Disease 55

Petrosyan A. A.

Influence of the Light Factor on the Processes of Growth and Development of Potato Plants *in Vitro* Under Phytotron Conditions 61

Strebkova T. V.

XYZ Analysis of Sale's Seasonality of Antiviral Drugs by Example of Pharmacies of Kursk 73

Sumbulyan D. S., Galstyan S. S.

Obtaining Virus-Free Plants of Melissa Officinalis L. with in Vitro Production 80

Gharamyan A. S.

Some Economically Valuable Species of the Flora of Artsakh 86

Hambardzumyan N. A.

Observation of the Experience of Effective Activity of a Novice Geography Teacher 95

ARMENIAN LANGUAGE AND LITERATURE

Abovyan L. L.

Mood and Time Correlation of the Component Clauses of a Complex Structure in R. Hovsepyan's Prose 105

Abrahamyan N. A.

The Valuation of an Autobiographical Novel in Modern Armenian Literature (with Special Reference to Hakob Asaturyan's Trilogy) 113

Melqsetyan A. V.

Characteristics of the Manifestation of the Novel Genre in Khachik Dashtens's "The Call of the Plowmen" 123

Hakobyan T. V.

Time and Space Correlation in Diana Hambardzumyan's Works 134

Kalashyan M. M.	
Correlation in the Genres of Novel and Story in Hovhannes Yeranyan's Novelistic Structure	144
Tatoyan N. K.	
The Inner Power of Money in Some Stories of Vahe Hayk	154
Kostanyan A. N.	
The Peculiarities of the Poems “Where do You Come from, My Sweet Nightingale?” by Naghash Hovnatan and “Where do You Come from, My Wandering Nightingale?” by Sayat Nova	161
FOREIGN LANGUAGE AND LITERATURE	
Aleksanyan N. S.	
On the Effectiveness of Content and Language Integrated Learning in the Classroom of Natural Sciences Study	170
Hovhannisyan M. A.	
Russian Literature Testing as a Way of Monitoring the Knowledge of High School Students	182
Grigoryan G. K.	
The Translation Peculiarities of Cultural Humor in the Armenian Movie “Merry Bus”	194
HISTORY	
Aharonyan I. V.	
Avars as Ethnic Minority in the Context of Current Situation	206
Hayrapetyan M. R.	
The Reaction of the Franco-Prussian War in “Meghu Armenia” Newspaper	214
Jilavyan G. G.	
The Response "Europe" Periodical to the "Second Carlist War"	226
Sargsyan Sh. G.	
The Talish Factor from the Point of View of National Self-Awareness Formation	236
Vardanyan V. A.	
Augusto Pinochet: on the Way of Coming to Power	245
Gasparyan A. E.	
To the Problem of Kurdish Movement in Modern Turkey and its Perspectives in the Region	256
Barinyan S. R.	
A Historical Overview of the Characteristics of Indian Islam	265
Matevosyan H. G.	
Self-Defense Lessons of Akhaltskha in 1918	278
Vardanyan A. K.	
Educational Life of Shushi after the February Revolution of 1917 (According to "Paylak's" Newspaper)	285
Lalabekyan A. K.	
The Traditional Dishes and Drinks of Village Tegh as Manifestations of Material Culture	292

JURISPRUDENCE AND POLITICAL SCIENCE

Sargsyan A. K.	
Protection of Civilians under International Humanitarian Law	300
Aslikyan A. S.	
Some Criminal and Criminological Questions of the Fight Against the Organization of Illegal Migration	309
Andreasyan S. H.	
The RA Labor Code on the Regulation of Legal Issues of Labor Discipline	321
Karapetyan M. H.	
Institute of Civil Legislative Initiative in the Republic of Armenia	330
Nahapetyan Sh. V.	
Legal Foundations of RA Constitutional Reforms	339
Kirakosyan A. Zh.	
The Youth and the Problem of Supporting Spiritual Security of Armenia	348
Davtyan T. G.	
The Establishment of the Nation State as a Goal of Political Modernization	357
Markosyan G. H.	
The Reality of the Civilizing Project of “Spiritual Armenia”	368
Mekhakyan A. H.	
Armenian Gathering. Compulsion and Possibilities of Repatriation	377

PEDAGOGY, PSYCHOLOGY, SOCIOLOGY AND SOCIAL WORK

Abrahamyan M. M.	
Students’ Practical Individual Paper of as a Means of Ensuring the Final Outcomes of Education	385
Sargsyan E. A.	
The Educational Importance of Reading in the Life of Society	393
Galstyan A. L.	
Environmental Investment and Attitude Barriers in the Context of Inclusive Education in Shirak Region	400
Hovhannisyan E. S.	
Ways to Overcome Post-Traumatic Stress with Persons and Families Affected by the Conflict Ongoing Psychological Rehabilitation Work	410
Grigoryan M. A.	
The Problem of Military-Patriotic Education in Post-War Armenia	420
Pogosyan E. E.	
Modern Professional Approaches and Priorities in the Social Work with Children	425
Muradyan N. H.	
Preserving Children’s Mental Harmony in a State of War	436

Torosyan M. A.	
The Essence and Features of First-Year Students' Anticipations and Specificities in the Context of Learning Process	445
Sargsyan R. Zh.	
“Modern Educational Institution’s Achievements and Failures with the Example of Shirak Region’s Secondary and High School”	450
Petrosyan B. H.	
“The Role of the Contemporary Theater in the Armenian Society” (Based on Theaters Operating in Gyumri)	458
Kocharyan Q. S.	
A Study of Public Opinion on External Migration and its Causes and Consequences	466
Mkrtchyan T. A.	
The Role of Games in Junior School in Mother Tongue Lessons	475
Avetisyan A. Kh.	
Development of Coherent Speech in Primary School Lessons in Mother Language Teaching	484
Hovhannisyan D. H.	
Perception of Nursing Homes: an Inside Look	491
Sahakyan Sh. V.	
The Usage of Jargons Among the Youth as a Means of Self-Affirmation (General Overview)	502
ECONOMICS AND MANAGEMENT	
Mnoyan E. A.	
Startup Ecosystem Analysis and Development Paths in RA (2021)	509
Mnatsakanyan V. R.	
Problems and Prospects of Economic Transformation in the Countries of the Middle East	518
Grigoryan A. H.	
The Impact of 2022 Events on the Labour Market in the Republic of Armenia Based on the Analysis of Labour Migration	529
Avagyan S. S., Hakobyan G. A.	
The Nature of the Foreign Economic Relations of the Republic of Armenia and the Features of the Development of Foreign Trade	540
Hovhannisyan A. H.	
The Fundamentals of Increasing the Efficiency of Investment Policy in the Republic of Armenia	550
Sargsyan A. E.	
Analysis and Characteristics of Community Budget Income Formation Sources in the Context of Community Enlargement	559
Abrahamyan R. V.	
Prospects of E-Commerce Development in the Republic of Armenia (General Overview)	568

Abrahamyan N. M.	
Implementation of Creative Thinking and its Advantages for Organizing PR Activities	577
SPORT AND ART	
Govelyan A. S.	
Gyumri Young Weightlifters in International Competitions between 2019-2021 (General Overview)	587
Arshakyan A. S.	
Ancient Armenian Ideas About Space, Earth, and Sky (General Overview)	594
Hovhannisyan G. A.	
The Significance of Rhythmic Gymnastics Judging Rules in the Process of Sports Training	604
Arzumanyan V. A.	
Yesterday and Today of Stepanakert State Drama Theater after V. Papazyan	612

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՄԱԿՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Հախվերդյան Ա. Ա.**

Լոռու մարզում զբոսաշրջության զարգացմանը խթանող հիմնական գործոնների և դրանց ուսումնասիրության գնահատման արդյունքում անհրաժեշտ էր պարզել զբոսաշրջության զարգացման հեռանկարները և ոլորտի մասնագետների կարծիքը հաշվի առնելով՝ համեմատական անցկացնել զարգացման հեռանկարայնության վերաբերյալ, բացահայտել տարբեր տարիքային խմբերի հետաքրքրությունները և այն, թե տարբեր շրջաններում ապրող ու կրթական տարբեր աստիճան ունեցող սպառողներն ինչպես են պատկերացնում իրենց հանգիստը և ինչ պայմաններում, այնուհետև արդյունքների բազմակողմանի վերլուծության շնորհիվ պարզել, թե զբոսաշրջության որ ճյուղերը կապահովեն տնտեսական առաջընթաց, և ինչպես դա կնպաստի մարզի բրենդավորմանը:

Բանալի բառեր. ճանաչողական և ռեկրեացիոն զբոսաշրջություն, հանգիստ, զբոսաշրջային օբյեկտներ, ծառայություններ, սպասարկում:

Թեման արդիական է այնքանով, որ Լոռու մարզում խնդիր ունենք պարզելու, թե զբոսաշրջության որ ճյուղերի զարգացումը կապահովի տնտեսական առաջընթաց և ինչքանով կնպաստի մարզի գործազրկության մակարդակի հաղթահարմանը: Անհրաժեշտ է պարզել, թե ինչի կարիքներ ունեն սպառողները, և զբոսաշրջության ոլորտի մասնագետները ինչ լուծումներ են առաջարկում խնդրի հաղթահարման համար:

Լոռու մարզում դեռևս որևէ հետազոտություն չի անցկացվել՝ պարզելու համար այն խնդիրները, որոնք ներկայացված և վերլուծված են ստորև: Այս հարցերն առաջին անգամ են քննարկվում այս տարածաշրջանի համար և կարող են հիմք ծառայել հետագա ուսումնասիրությունների համար:

Զբոսաշրջային ռեսուրսների առկայությունը, ոլորտի նորարարությունները զբոսաշրջության զարգացման առաջնահերթ խթանող միջոցներն են: Լոռու մարզը եզակի զբոսաշրջային արդյունք

առաջարկելու զգալի ներուժ ունի՝ շնորհիվ իր կլիմայական պայմանների, առանձնահատուկ խոհանոցի, բնական, պատմամշակութային հարուստ ռեսուրսների, սակայն ոլորտի անբավարար տեղեկացվածության և թույլ զարգացածության պատճառով դեռևս շարունակում է մնալ զբոսաշրջային պասիվ գոտի: Զբոսաշրջային ներհոսքը դեպի Լոռի վերջին տարիներին համեմատաբար ակտիվ է նախորդ տարիների համեմատությամբ. դա պայմանավորված էր ներքին և ներգնա զբոսաշրջության աճի տեմպերով:


Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Լոռու մարզում, տնտեսության զարգացումը խթանող միջոցներից է զբոսաշրջությունը գերակա ուղղություն դարձնելը: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում բացահայտել, ուսումնասիրել, վերլուծել և գնահատել Լոռու մարզում զբոսաշրջային գրավչություն ներկայացնող հայտնի և դեռևս պակաս ուսումնասիրված օբյեկտները: Դրանք խելամիտ օգտագործելու և զբոսաշրջության ժամանակակից ամբողջական համակարգ ստեղծելու դեպքում հնարավոր է Լոռին դարձնել զբոսաշրջության խոշոր և գրավիչ տարածաշրջան:

Զբոսաշրջային շուկայում զբոսաշրջության առանձին տեսակների զարգացման հեռանկարայնության գնահատման և վերլուծության նպատակով սպառողների և փորձագետների շրջանում անց ենք կացրել հարցումներ՝ օգտագործելով իմ աշխատանքի ղեկավար Գ. Թադևոսյանի կողմից կազմված հարցաթերթիկները [2], որոնց արդյունքները մեքենայական մշակման և վերլուծության ենք ենթարկել Google Forms ծրագրային միջավայրում, այնուհետև կատարել արդյունքների բազմակողմանի վերլուծություն և գնահատում, արդյունքները ներկայացրել ենք ստորև: Հարցումները անց ենք կացրել ինչպես համացանցում՝ ամբողջ հանրապետության տարածքում, այնպես էլ Վանաձոր, Ստեփանավան և Ալավերդի քաղաքների մի շարք ավագ դպրոցներում, վարժարաններում և բուհերում: Բացի այդ, վերլուծել ենք նաև զբոսաշրջային գործունեության կազմակերպիչների, փորձագետների (կառավարման տարածքային օրագաններ, հասարակական կազմակերպություններ, զբոսաշրջության ոլորտի հիմնարկներ, բիզնես ոլորտի ներկայացուցիչներ, զբոսաշրջության ոլորտի ուսանողներ և դասախոսներ) կարծիքները: Հարցմանը մասնակցել են 47 փորձագետներ: Սպառողների շրջանում անցակցված հարցումներին մասնակցել են 268 ռեսպոնդենտ Երևան, Վանաձոր, Ստեփանավան քաղաքներից, Ալավերդի խոշորացված համայնքից:

Մարկետինգային հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզվել են զբոսաշրջության այն տարատեսակների շրջանակները, որոնց նախապատվություն են տալիս սպառողները: Ջուզահեռ ստացել ենք նաև Լոռու մարզում զբոսաշրջության առանձին տեսակների հեռանկարայնության գնահատականը:

Նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցների 58.1%-ը պատկանում է 17-25 տարիքային խմբին, 24.3%-ը՝ 25-35 տարիքային խմբին, 12.2%-ը՝ 35-50 տարիքային խմբին, հարցմանը չեն մասնակցել 65 տարեկանից բարձր տարիքային խմբերը: Հարցվողների 79.7%-ը ունի բարձրագույն կրթություն, 12.2%-ը՝ թերի բարձրագույն, 6.8%-ը՝ միջին մասնագիտական, և փոքր մասն են կազմում դպրոցականները:

Հարցման մասնակիցների կարծիքով Լոռու մարզում զբոսաշրջության առավել մասսայական տեսակներն են ճանաչողականը (հարցվածների 58.1%-ը) և ռեկրեացիոնը (33.8%-ը): Բացի այդ, հարցվածների 40.5%-ը նախապատվությունը տալիս է ակտիվ, և 31.1%-ը՝ գյուղական տեսակներին, ամնասն չի մնում հասարակական զբոսաշրջության ձևը՝ 29.7% (այցելություն ընկերներին և բարեկամներին):



Նկար 1. Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները:


Հարցման մասնակիցների 58.1%-ը Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտ է համարում ճանապարհների վատ վիճակը, 51.4%-ը՝ զբոսաշրջային օբյեկտների մասին տեղեկատվության

բացակայությունը, 50%-ը՝ կանոնավոր տրանսպորտային հաղորդակցության բացակայությունը, 29.7%-ը՝ սպասարկման ցածր որակը (նկ. 1):

Լոռու մարզում զբոսաշրջային օբյեկտներից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում և մեծ մասսայականություն վայելում Սանահինը, Հաղպատը, Օձունը, Ախթալան, Դենդրոպարկը, Լոռի բերդը և Արևածագի ձորը:

Հարցվածները, զբոսաշրջության առումով, մարզի առավել գրավիչ համայնքներ են համարել Դսեղը, Օձունը, Ալավերդին, Վանաձորը, Ստեփանավանը, Ախթալան, Սանահինը:

Հարցվածների 39.2%-ը հաճախ ճանապարհորդում է Լոռու մարզում, իսկ 35.1%-ը՝ երբեմն (նկ. 2):



Նկար 2. Լոռու մարզում ռեսպոնդենտների ճամփորդության համեմատական գրաֆիկը:

Փորձագետներին բաժանված երկու հարցաթերթիկները պարունակում են Լոռու մարզում զբոսաշրջության տեսակների զարգացման հեռանկարների մասին հարցեր, հանձնարարականներ և առաջարկություններ՝ գնահատելու զբոսաշրջության տեսակների զարգացման հեռանկարայնությունը 10 միավորանոց համակարգով:

Հարցումների արդյունքներից երևում է, որ Լոռու մարզում մշակութային-ճանաչողական զբոսաշրջությունն ունի հետևյալ ուղղությունները՝ ազգագրական, պատմաճարտարապետական, հնագիտական: Փորձագետները բավականին բարձր են գնահատել Լոռու մարզում արկածային, գյուղական, էքստրեմալ, բուժա-

առողջարարական և իրադարձային զբոսաշրջության զարգացման հեռանկարները:

Հարցվածների կարծիքով Լոռու մարզը կարող է մասնագիտանալ զբոսաշրջության հետևյալ ուղղություններով՝ ճանաչողական, մշակութային, պատմական, գյուղական, քայլարշավային և արկածային: Մարզի առանձին շրջանների և համայնքների ռեսուրսների հետագա համալիր վերլուծությունը թույլ կտա վերհանել դրանց զբոսաշրջային մասնագիտացման հիմնական ուղղությունները:

Այսպիսով, կատարված հարցումների արդյունքների վերլուծությունը և մարզի տարածքում առկա զբոսաշրջային ռեսուրսների բազմազանությունը թույլ է տալիս ենթադրել, որ Լոռին ունի զբոսաշրջության համալիր զարգացմանն անհրաժեշտ բոլոր նախադրյալները և ռեսուրսները, որոնք այժմ ոչ բավարար են օգտագործվում: Ռեկրեացիոն զբոսաշրջային ռեսուրսների համալիր գնահատականից երևում է, որ հեռանկարում Լոռին կարող է դառնալ հանրապետության հիմնական ռեկրեացիոն շրջաններից մեկը: Մարզի բնական, տնտեսական և պատմամշակութային ներուժը թույլ է տալիս ներքին և ներգնա զբոսաշրջիկների համար ամենաբարձր մակարդակով կազմակերպել բազմաբովանդակային ծառայություններ, ինչը զգալիորեն կավելացնի ինչպես հանրապետության, այնպես էլ մարզի բյուջեի շահույթները՝ զբոսաշրջությունը վերածելով արտարժույթային մուտքերի կարևոր աղբյուրի: Հաշվի առնելով սպառողների և փորձագետների կարծիքները՝ կարելի է փաստել, որ ռեկրեացիոն ռեսուրսների բազմազանության, կլիմայական բարենպաստ պայմանների, հարուստ էթնոմշակութային ժառանգության շնորհիվ մարզը կարող է ձեռք բերել զարգացման բարձր մակարդակ:

Հաշվի առնելով անցկացված հարցման արդյունքների վերլուծությունը՝ կարելի է առանձնացնել Լոռու ռեկրեացիոն մասնագիտացման հետևյալ ուղղությունները՝ առողջարարական զբոսաշրջություն, լեռնամարզական զբոսաշրջություն, գյուղական, էթնոմշակութային զբոսաշրջություն, էքսկուրսիոն-ճանաչողական հանգիստ, էկոզբոսաշրջություն, ձիարշավություն, լուսանկարչական որս: Բնական միրջավայրի խոցելիության բարձր ռիսկերը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է սահմանել բնապահպանական ցանցի կազմակերպում և կատարելագործում:

Զբոսաշրջային ծառայությունների իրականացման հնարավորությունները որոշվում են զբոսաշրջային ռեսուրսները և ծառայութ-

յունները սպառողի պահանջներին համապատասխանեցնելու կարողությամբ: Այդ պատճառով ժամանակակից զբոսաշրջային ապրանքներ ստեղծելու համար կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է ձևավորել տեղացի և արտասահմանցի զբոսաշրջիկների պահանջները բավարարող ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ պայմաններ [3]:

Զարգացման բարձր տեմպեր արձանագրելու համար անհրաժեշտ է հետամուտ լինել մարզի զբոսաշրջային ռեսուրսների մասին տեղեկատվության լուսաբանմանը:

Զբոսաշրջության համալիր զարգացման կարևոր նախադրյալ է հանդիսանում նաև Լոռու բրենդների միջազգային համբավը, որոնց թվին են պատկանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Հաղպատը և Սանահինը, Դսեղը, Գյուլագարակի մոտ գտնվող «Սոճուտ» բուսաբանական այգին և ռելիկտային սոճու հանրապետությունում (նաև Կովկասի) ամենամեծ՝ 116 հա զբաղեցնող անտառապուրակը, Դեբեդի և Ձորագետի կանիոնները, «Հայաստան» առողջարանը, Վահագնիի (Զամանլուի) երկաթուղային կամուրջը: Մարզի ներհանրապետական բրենդների թվին են պատկանում Վանաձոր քաղաքի հարավային մասում գտնվող Վանաձորի կիրճն իր հանգստավայրերով և առողջարանով, վարպետ Մեհրաբի կառուցած ինքնատիպ աղբյուր-հուշարձանները, Վանաձորի «Վանաձոր» բուսաբանական այգին, «Խանդակ» տեղամասում գործող ճոպանուղին, Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանը, Վ. Թայիրովի ամառանոցը, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատը, Ղարաքիլիսայի ճակատամարտի հուշ-կոթողը, Լոռի բերդը, Սբ. Սարգիս (Շովեր) լիճը՝ Դսեղի մոտ, «Լոռի» հանգստյան տունը, Քոբայրի, Օձունի վանական համալիրները և այլն [1]: Իրադարձային զբոսաշրջության զարգացման համար կարող են հիմք հանդիսանալ «Լոռվա ձմեռ», «Երզնի տոն», «Ծաղկի տոն», «Քաղաքի տոն», «Բերքի տոն» ամենամյա միջոցառումները, որոնք Լոռիում և մասնավորապես Վանաձորում անցկացվում են աշնանային և ձմեռային սեզոններին: Այս բրենդները պրոֆեսիոնալ բարձր մակարդակով կազմակերպման դեպքում կարող են ձեռք բերել միջազգային համբավ [1]:

Զբոսաշրջության ինդուստրիան զարկ կտա տնտեսության, մասնավորապես փոքր և միջին բիզնեսների զարգացմանը և ներդրումների համար կատալիզատոր կձառայի: Կարևոր խնդիր է զբոսաշրջային օբյեկտների կիրառումը, զբոսաշրջության զարգացմանը

նպաստող հարկային քաղաքականության մշակումը և իրականացումը, սպասարկման և ծառայությունների միջազգային չափանիշներին համապատասխանող կադրերի պատրաստման միացյալ համակարգի ստեղծումը, ինչպես նաև ոլորտի զարգացման համար հայրենական և արտասահմանյան կապիտալի ներգրավման ուղղությամբ գործնական քայլերի մշակումը և իրականացումը:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրածը, շեշտենք, որ մարզում զբոսաշրջության զարգացման հեռանկարները լիարժեքորեն կյանքի կկոչվեն միայն ենթակառուցվածքային ցանցի կատարելագործման դեպքում, որոնց թվին են պատկանում տրանսպորտի, կապի, հյուրանոցների համակարգերի, տեղաբաշխման ու սպասարկման այլ օբյեկտների ցանցերը: Այս բոլորի հիմքում ընկած է զբոսաշրջության զարգացման ողջ ներուժի՝ զբոսաշրջային ռեսուրսների լիարժեք, համակողմանի ուսումնասիրումը, գնահատումը և խելամիտ օգտագործումը [3]:

Վերջապես, զբոսաշրջային այցելությունների թիվը, ինչպես նաև զբոսաշրջության նշանակությունը հետզհետե մեծանում է: Սա կարող է դառնալ Լոռու մարզի տնտեսության կարևոր բաղադրիչներից, որն ապահովում է տեղի բնակչության զբաղվածությունը, ենթակառուցվածքների զարգացումը, արտարժույթի ներհոսքը: Բացի դրանից, այն խթանում է ճանաչմանը, ներքին և արտաքին հարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, մշակույթների և ավանդույթների փոխճանաչմանն ու ընկալմանը: Մասնավորապես, Լոռու մարզում զբոսաշրջության սպասարկման ոլորտում իրականացվելիք բարեփոխումները կնպաստեն մարզում աշխատատեղերի քանակի ավելացմանը, բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը, որն էլ, բնականաբար, դրականորեն կանդրադառնա բնակչության կենսամակարդակի վրա: Գյուղական զբոսաշրջության զարգացումը կնպաստի գործազրկության կրճատմանը և եկամուտների ավելացմանը:

Հավելված

Աղյուսակ 1.

Հարցաթերթիկ սպառողների և փորձագետների համար:

Հարց	Պատասխանի տարբերակներ
1.Տարիքը	1.Մինչև 17 տարեկան 2.17-25 տարեկան 3. 25-35 տարեկան 4.35-50 տարեկան 5. 50 տարեկան և ավելի

2.Մեռը	1. արական 2. իգական
3. Որքա՞ն հաճախ եք Դուք ճանապարհորդում	1. Նախընտրում եմ հանգստանալ տանը 2. Տարվա ընթացքում 1 անգամից պակաս 3. Մեկ անգամ տարվա ընթացքում 4. Երկու անգամ տարվա ընթացքում 5. Ավելի քան 2 անգամ տարվա ընթացքում
4. Որտե՞ղ եք Դուք նախընտրում հանգստանալ	1. Արտասահմանում 2. ՀՀ տարածքում 3. Լոռու մարզի տարածքում
5. Զբոսաշրջային ուղևորության սովորական տևողությունը	1. 1-2 օր 2. 3-5 օր 3. 5-10 օր 4. 11-14 օր 5. 15-21 օր
6. Որքա՞ն հաճախ եք ճամփորդում Լոռու մարզի տարածքում	1. Միշտ 2. Հաճախ 3. Երբեմն 4. Երբեք
7. Ձեր զբոսաշրջային ուղևորության սովորական նպատակները	1. Ռեկրեացիոն 2. Բուժա-առողջարարական 3. Գործնական 4. Ճանաչողական 5. Արկածային 6. Ուխտագնացային 7. Զվարճային 8. Շոփինգ 9. Այլ (նշեք տեսակը)
8. Արդյո՞ք Դուք նախընտրում եք ծրագրային տուրերը	1. Միշտ օգտվում եմ տուրֆիրմաներից 2. Երբեմն օգտվում եմ տուրֆիրմաներից 3. Միշտ ճանապարհորդում եմ ինքնուրույն
9. Որոշեք Ձեր նախընտրությունները ըստ զբոսաշրջության տեսակի (նշեք 3 տեսակ)	1. Մշակութային-ճանաչողական 2. Ռեկրեացիոն 3. Բուժա-առողջարարական 4. Ակտիվ 5. Գործնական 6. Մարզական 7. Որսի և ձկնորսության 8. Լեռնադահուկային 9. Գյուղական 10. Էկոլոգիական 11. Ուխտագնացային 12. Այցելություն բարեկամների 13. Այլ (նշեք տեսակը)

10.Նշեք Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հիմնական խնդիրները և խոչընդոտները	1.Հյուրանոցների անբավարար քանակ 2.Կանոնավոր տրանսպորտային ցանցի բացակայություն 3. Ճանապարհների վատ վիճակ 4.Զբոսաշրջային օբյեկտների մասին տեղեկատվության բացակայություն 5.Օառայությունների թանկություն 6.Սպասարկման ցածր մակարդակ 7.Քրեածին իրադրություն 8.Կլիմայական պայմաններ 9.Ցուցադրվող օբյեկտների ցածր գրավչություն
11. Որո՞նք են զբոսաշրջային ցուցադրության առավել մասսայական օբյեկտները Լոռու մարզում	
12.Նշեք Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման առավել գրավիչ համայնքները	

Աղյուսակ 2.

Հարցաթերթիկ փորձագետների համար

h/h	Զբոսաշրջության տեսակի անվանումը	Հեռանկարայինության գնահատումը									
		1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Մշակութային-ճանաչողական										
2	Ռեկրեացիոն										
3	Բուժա-առողջարարական										
4	Գործնական										
5	Մարզական										
6	Արկածային										
7	Էքստրեմալ										
8	Ուխտագնացային										
9	Գյուղական										
10	Էկոլոգիական										
11	Շրջագայական										
12	Տրանզիտ										
13	Իրադարձային										
14	Արդյունաբերական										
15	Այլ (նշեք տեսակը)										

АНАЛИЗ ПЕРСПЕКТИВ РАЗВИТИЯ ОТДЕЛЬНЫХ ВИДОВ ТУРИЗМА В ЛОРИЙСКОЙ ОБЛАСТИ

Ахвердян А. А.

В результате оценки основных факторов, способствующих развитию туризма в Лорийской области и их изучения, необходимо было выяснить перспективы развития туризма, и, с учётом мнения специалистов в данной области, провести сравнительное исследование на перспективы развития, выявить интересы разных возрастных групп, и то, как потребители разных сфер представляют свой отдых и в каких условиях. Затем, благодаря разностороннему анализу результатов, выяснить, какие отрасли туризма обеспечат экономический прогресс и как это будет способствовать брендингу региона.

Ключевые слова: познавательный и рекреационный туризм, отдых, туристические объекты, услуги, обслуживание.

THE ANALYSIS OF DEVELOPMENT PERSPECTIVES OF DIFFERENT TYPES OF TOURISM IN LORI REGION

Hakhverdyan A. A.

For the purpose of assessing the main factors promoting the development of tourism in Lori Region, it was necessary to find out the perspectives of tourism development and the opinions of experts in the field. We have touched upon the prospects of tourism development and identified the interests of various age groups based on the experts' views. The paper mirrors the state of consumers (way of living, education level, the proper environment of rest) and how consumers living in different regions. Thanks to the deep analysis of the results, we have found out branches of tourism that promote economic progress and contribute to the branding of the province.

Keywords: cognitive and recreational tourism, rest, tourist facilities, service.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թադևոսյան Գ. Լոռու զբոսաշրջային ռեսուրսները, Վանաձոր, ՄԻՍ հրատ., 2015, 156 էջ:

2. Թաղևոսյան Գ. Լոռու մարզում զբոսաշրջային ուղղվածություն ունեցող ռեսուրսների որակավորման հատկանիշների վերլուծությունը, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու:
3. Энциклопедия туризма [Текст]: справочник, Зорин И. В., Квартальнов В. А., М., “Финансы и статистика”, 2003, 368 с.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Հայսվերդյան Ա. Ա. - բակալավրիատ 4-րդ կուրս

ՎՊՀ, Հասարակական գիտությունների ֆակուլտետ, Մերվիս
Էլ. փոստ՝ haxverdyan_amalya@mail.ru

Գիտական ղեկավար՝ Թաղևոսյան Գ., աշխ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 20.10.2022
Գրախոսվել է՝ 29.11.2022

**ԲԺՇԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)
Մկրտչյան Գ. Կ.**

Բժշկաաշխարհագրական թեմատիկ քարտեզները ունեն կիրառական մեծ նշանակություն, լուծում են բազմաթիվ խնդիրներ, դրանց միջոցով պարզվում են հիվանդությունների տարածման շրջանները: Աշխատանքում անդրադարձել ենք բժշկաաշխարհագրական քարտեզների, ատլասների կազմման առանձնահատկություններին: Փորձել ենք քարտեզագրել Սյունիքի մարզի առողջապահական սպասարկման համակարգը և ներկայացնել դրա կարևորությունը ընթերցողի համար:

Բանալի բառեր. բժշկաաշխարհագրական քարտեզներ, մասշտաբ, թեմատիկ քարտեզներ, քարտեզագիր, լեգենդա, վիճակագրություն, առողջապահություն:

Բժշկական աշխարհագրությունը բժշկագիտության ու աշխարհագրության միջև ձևավորված սահմանային գիտություն է, որն ուսումնասիրում է տարածքի բնական ու սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները՝ մարդու առողջության վրա ազդեցության և նոր հիվանդությունների տարածման տեսանկյունից:

Գիտությունների զարգացման ընթացքում ձևավորվել է հետազոտական մեթոդների մի հսկա համակարգ, որում քարտեզագրական մեթոդն ունի կարևորագույն նշանակություն: Այս բովանդակության քարտեզներն արտացոլում են՝

1. մարդու հիվանդությունների տարածման գործոնները, որոնք բնորոշ են բնական և արտադրական տարածքային համալիրներին, դրանց համադրություններն ու դրսևորման պայմանները,
2. բնական բուժական, առողջարար ռեսուրսները և դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունները [8]:

Բժշկաաշխարհագրական քարտեզագրությունը սկսեց ակտիվորեն զարգանալ 20-րդ դարում, հատկապես նրա երկրորդ կեսին, որը պայմանավորված էր ամբողջ աշխարհում ինչպես հիվանդությունների տարածման շրջանակների մեծացմամբ, այնպես էլ գիտության

մաթեմատայնացմամբ, իսկ վերջինս ուղղակիորեն նպաստում է քարտեզագրման զարգացմանը: 1950-ական թվականներին առաջին անգամ կազմվեց հիվանդությունների տարածման համաշխարհային ատլասը, որը դարձավ պատմական նշանակալի քարտեզագրական հիմնարար աշխատություն: Բժշկաաշխարհագրական գործերը կրկին մեծ թափ ստացան 2000-ական թվականներին: Բարձրարժեք աշխատանք է համարվում Ռուսաստանի Դաշնության բժշկաաշխարհագրական ատլասը, որը կոչվում է «Целебные источники и растения» («Բուժիչ աղբյուրներ և բույսեր», Մոսկվա, 2008թ.), որը ՌԴ բնական առողջարարական ռեսուրսների մասին տեղեկատվության առաջին քարտեզագրական գործն է (հանքային ջրեր, բուժիչ ցեխ և բուժիչ բույսեր): Ատլասը ներառում է ավելի քան 100 քարտեզ՝ 1:30 000 000 մասշտաբի, յուրաքանչյուրն ուղեկցվում է տեքստային, գրաֆիկական տեղեկատվությամբ, լուսանկարներով և վերլուծական նյութերով [6]:

Հայաստանում բժշկաաշխարհագրական քարտեզագրության ժառանգությունն այնքան էլ հարուստ չէ: Կարևոր թեմատիկ նշանակություն ունի «Медико-экологический атлас Армении» Москва «Медицина» 1998 ատլասը (Հայաստանի բժշկաէկոլոգիական ատլաս) [3]: Ատլասի հեղինակը Ռուսաստանի բժշկագիտության ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Պ. Հայրիյանն է: Ատլասը թեև առաջին հայացքից պարզ քարտեզներ է պարունակում, բայց այն վերլուծական մեծ աշխատանք է իրենից ներկայացնում: Ատլասում վերլուծված է վիճակագրական հարուստ նյութ: Պայմանանշանային համակարգը պահանջում է բավական մեծ ուշադրությամբ ընթերցել, քանի որ նշանները քիչ հանդիպող են: Ատլասում վերլուծված է հսկայական տեղեկատվություն Հայաստանի տարբեր շրջաններում տարածված հիվանդությունների, մահացության պատճառների, հիվանդությունների առաջացման գործոնների և այլնի շուրջ:

Քարտեզագրական ինքնատիպ աշխատանք է իրենից ներկայացնում նաև «Атлас-Климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении» ատլասը (Երևան, 2010), որը լույս է տեսել միայն ռուսերեն տարբերակով: Ատլասում ներկայացված են Հայաստանի կլիմային և բնական առողջարար ռեսուրսներին վերաբերող քարտեզներ, որոնք հիմնականում փոքրամասշտաբ են [4]: Ատլասում ներկայացված շատ քարտեզներ կարելի է համադրել այլ ատլասների քարտեզների հետ և արդյունքում հանգել բժշկաաշխարհագրական պատճառահետևանքային կապերի բացահայտմանը: Օրինակ՝ վերոնշյալ ատլասի

քարտեզներից մեկը, որը ցույց է տալիս թթվածնի պարունակությունը օդում, կարելի է համադրել ըստ վերընթաց գոտիների բնակչության խտության քարտեզի հետ ու հանգել թերթթվածնայնության հնարավոր ռիսկի բացահայտմանը: Կան աշխատանքներ, որոնք վերաբերում են քաղաքային միջավայրի բժշկաաշխարհագրական առանձնահատկություններին, բժշկաաշխարհագրական շրջանացմանը, վարակիչ որոշ հիվանդությունների տարածմանը և այլն [1, 2]:

Բժշկաաշխարհագրական քարտեզագրությունը համարվում է թեմատիկ քարտեզագրության առանձին ուղղություն: Այն տարբերվում է նաև առաջադրվող պահանջներով և քարտեզագրման առանձնահատկություններով: Բժշկաաշխարհագրական քարտեզների ստեղծման ամենալավ արդյունքները ստացվում են բժշկաաշխարհագրագետների և քարտեզագիրների համատեղ աշխատանքի արդյունքում: Քարտեզի հիմնական գաղափարի որոշման առաջին փուլում, լեզենդան մշակելիս և անհրաժեշտ տեղեկատվությունը ընտրելիս, առաջատար դերը պատկանում է բժշկաաշխարհագրագետներին: Բայց բնօրինակի հիմքի և քարտեզագրական միջոցների ընտրության, այլ քարտեզների ուրվագծերի հետ դրա համաձայնության գործում գլխավոր դերը պատկանում է քարտեզագիրներին: Նրանք նաև վերահսկում են դիզայնի և աշխատանքները:


Մաթեմատիկական հիմքի նախագծումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ինչպիսիք են տարածքի մեծությունը, ձևը, զծագրությունը և այլն: Որպես հիմնական՝ ընդունված է Գաուս Կրուգերի պրոյեկցիան: Բժշկաաշխարհագրական քարտեզների ամբողջ շարքը ստեղծվել է միասնական տիպային ընդհանուր աշխարհագրական մասշտաբով՝ 1:1000000 [7]:

Հայաստանում բժշկաաշխարհագրական քարտեզագրության զարգացման անհրաժեշտությունը շատ մեծ է, քանի որ այդ քարտեզները կարող են բացահայտել բազմաթիվ խնդիրներ, կանխարգելել հնարավոր հիվանդությունների տարածումը, առողջապահական սպասարկման տարածական կազմակերպումը դարձնել առավել արդյունավետ:

Ուսումնասիրելով Սյունիքի մարզի առողջապահական համակարգը և օգտվելով վիճակագրական նյութերից՝ փորձել ենք կազմել Սյունիքի մարզի առողջապահական սպասարկման քարտեզը, որը տալիս է տեղեկատվություն մարզում առողջապահական օբյեկտների տարածման, սպասարկման շրջանների և կառուցվածքի շուրջ [8]: Քարտեզը կազմվել է Surfer ծրագրի միջոցով, որը հետագայում

կենթարկվի որոշակի փոփոխության: Քարտեզը օգտագործողին հնարավորություն է ընձեռում հասկանալու մարզում առկա հիվանդանոցային համակարգը և առանձնացնելու իրեն անհրաժեշտ բաժանմունքները, որոնցից հետագայում կարող է օգտվել (նկ. 1): Կարելի է նաև ըստ տարածաշրջանների ներկայացնել բնակչության հիվանդացությունն ըստ առանձին հիվանդաձևերի՝ մշակելով վիճակագրական հսկայական տեղեկատվություն:

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱԳԱՀԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ



Նկ. 1. Մյունիքի մարզի առողջապահական սպասարկում:
Հեղինակներ՝ Ա. Վալեսյան, Գ. Մկրտչյան:

Կատարված աշխատանքի հիման վրա կարելի է եզրակացնել.

1. Բժշկաաշխարհագրական առաջին քարտեզները կազմվել են՝ ելնելով դրանց խիստ անհրաժեշտությունից, բացահայտելով համաճարակների ընդգրման մասշտաբները, կորուստները:
2. Բժշկաաշխարհագրական քարտեզների կազմման համար անհրաժեշտ են՝ տեղեկատվական հարուստ հիմք, տվյալների մաթեմատիկական վերլուծություն, քարտեզագրական մեթոդների համատեղ օգտագործում:

3. Ստեղծված քարտեզագրական աշխատանքները կարող են հիմք հանդիսանալ նոր գործերի ստեղծման համար, քանի որ նման թեմատիկ քարտեզները կարող են ուղղակիորեն նպաստել հիվանդությունների հնարավոր տարածման կանխարգելմանը, առջապահական ոլորտի աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:
4. Ներկայումս ավելի նպատակահարմար է բժշկաաշխարհագրական քարտեզագրության մեջ ԱՏՀ-ների օգտագործումը, որոնք թույլ են տալիս իրականացնել ոչ միայն նախնական տվյալների պահպանումը, այլև վերլուծել իրավիճակը, ցուցադրել ստացված արդյունքները:
5. Հայաստանում բժշկաաշխարհագրական քարտեզների ու ատլասների կազմումը մեծ կարևորություն ունի, քանի որ քիչ են նմանատիպ բովանդակությամբ ատլասներն ու քարտեզները:

ОСОБЕННОСТИ СОСТАВЛЕНИЯ ТЕМАТИЧЕСКИХ МЕДИКО-ГЕОГРАФИЧЕСКИХ КАРТ (НА ПРИМЕРЕ СЮНИКСКОЙ ОБЛАСТИ)

Մկրտչյան Գ. Կ.

Медико-географические тематические карты имеют большое прикладное значение, решают множество задач с их помощью выясняются зоны распространения болезней. В работе мы обратились к медико-географическим картам и атласам, к их особенностям. Попробовали картографировать систему обслуживания здравоохранения Сюникской области и представить ее важность для читателей.

Ключевые слова: медико-географические карты, масштаб, тематические карты, картограф, легенда, статистика, здравоохранение.

SPECIFICITY OF THE COMPILATION OF MEDICAL-GEOGRAPHICAL THEMATIC MAPS (ON THE EXAMPLE OF THE SYUNIK REGION)

Մկրտչյան Գ. Կ.

Medical-geographical thematic maps are of great practical importance: they solve many problems, trying to find out the districts in which diseases are common. In the paper, we have referred to the features of medical-geographical maps and atlases. We have tried to map the health care system of Syunik region and presented its importance to the reader.

Keywords: medical-geographical maps, scale, thematic maps, cartographer, a legend, statistics, healthcare.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտչյան Ռ. Հայաստանի բժշկակլիմայական գոտիները: Աշխարհագրություն-99: Գիտ. աշխատությունների ժող. -Եր.: Երևանի համալս. հրատ., 1999: 199 էջ:
2. Վալեսյան Ա. Պ. «Գյումրի քաղաքի էկոլոգիական վիճակի բժշկաաշխարհագրական գնահատումը»: Երևան: ԵՊՀ հրատ.: 2004թ.:
3. Айриян А. П. “Медико-экологический атлас Армении”. Москва.1998.
4. Атлас-Климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении, Ереван. 2010.
5. Комплексные региональные атласы. Изд-во Моск. ун-та, 1976.
6. <https://www.rgo.ru/ru/article/nachalas-prodazha-pervogo-mediko-geograficheskogo-atlasa-rossii>
7. <https://www.polnaja-jenciklopedija.ru/geografiya/karty-mediko-geograficheskie.html>
8. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=14367>

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մկրտչյան Գ. Կ. – բակալավրիատ 4-րդ կուրս

ԵՊՀ, Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, Քարտեզագրություն և կադաստրային գործ

էլ. փոստ՝ gayanemkrtchyan2000@mail.ru

Գիտական ղեկավար՝ Վալեսյան Ա., աշխ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 10.11.2022

Գրախոսվել է՝ 20.12.2022

**ՓՈՂՈՑՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՂ ԿԱԹԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ
Արզումանյան Ի. Ա.**

Կաթը լայն սպառում ունեցող մթերք է, որը մի շարք կարևորագույն ու սննդարար նյութերի աղբյուր է մարդու համար: Սակայն կաթի՝ ոչ ճիշտ սանիտարական վիճակում ստանալու և պահելու հետևանքով այն մի շարք հիվանդությունների առաջացման պատճառ կարող է հանդիսանալ: Մեր հետազոտության նպատակն է եղել պարզել Երևանի տարբեր վայրերում փողոցում վաճառվող կաթի որակը, վաճառքի ընթացքում կաթի պահման պայմանները և պարզել դրանց համապատասխանությունը կաթին ներկայացվող հիգիենիկ պահանջներին: Այս նպատակով կատարել ենք կաթի ֆիզիկաքիմիական և մի շարք սննդարար ցուցանիշների ուսումնասիրություն:

Բանալի բառեր. կաթ, սպառողներ, սննդային ռիսկ, կաթնաշաքար, օսլա, կաթի կեղծում:

Նախաբան: Հետազոտության գիտական նորույթը այն է, որ առաջին անգամ համապարփակ ձևով ուսումնասիրվել է Երևան քաղաքի տարբեր վայրերում փողոցում վաճառվող կաթի զգայաբանական և ֆիզիկաքիմիական ցուցանիշները, ինչպես նաև այնպիսի ցուցանիշներ, որոնք ցուցադրում են կաթի սննդարարության աստիճանն ու ռիսկայնությունը սպառողների առողջության տեսանկյունից: Մեր նախնական ուսումնասիրությունները փաստում են, որ Երևանում (և ոչ միայն) դեռևս առկա են փողոցում վաճառվող կաթի և կաթնամթերքի դեպքեր: Սա հատկապես վտանգավոր է տարվա տաք ժամանակահատվածում, քանի որ վաճառվող մթերքները չեն պահվում այն տարրական սանիտարական և հիգիենիկ պայմաններում, որոնք անհրաժեշտ են դրանց համար, մասնավորապես՝ սառնարանային պայմանների ապահովումը: Մեկ այլ հարց է նաև այն տարաների հիգիենիկ վիճակը, որոնցում դրանք վաճառվում են, ինչպես նաև հենց այս տարաները, քանի որ կաթի դեպքում մեծամասամբ օգտագործում են գազավորված խմիչքների պլաստիկ տարաներ, որոնք չեն կարող ենթարկվել պատշաճ ախտահանման: Այս ամենն ունի բազմակողմանի

պատճառներ, և երկարատև հետազոտության և ուսումնասիրության կարիք կա:

Ինչպես գիտենք, կաթը հարուստ է սպիտակուցով, մի շարք տարրերով՝ հատկապես կալցիումով, մագնեզիումով, կալիումով, ցինկով և ֆոսֆորով: Կաթն ու կաթնամթերքը մարդու սննդանյութերով ապահովման կարևոր աղբյուրներն են, դրական ազդեցություն ունեն մարդու օրգանիզմի առողջության և զարգացման համար ողջ կյանքի ընթացքում [3, 4]:

Ոչ պատշաճ պայմաններում կաթի ստացման և սպառման հետևանքով նրանում կարող են հայտնվել ախտածին մանրէներ, որոնք կարող են մեծ վտանգ ներկայացնել սպառողների համար, իսկ նմանատիպ կաթը վտանգ կհանդիսանա հանրային առողջության համար [2]: Փողոցում վաճառվող և սպառվող կաթի և կաթնամթերքի որակի և անվտանգության ըմբռնումը կօգնի մշակել այնպիսի ռազմավարություն, որը նվազագույնի կհասցնի երկրում աղտոտված կաթնամթերքի օգտագործումից առաջացած հանրային առողջության ռիսկերը [5]: Եթովպիայի հետազոտողները ուսումնասիրել են փողոցում վաճառվող կաթը և պարզել, որ կաթի մանրէաբանական որակը հիմնականում վատ է, և դա բացատրվել է վաճառողների կողմից կաթի ոչ պատշաճ ստացմամբ, ինչպես նաև վաճառքի վայրերում կաթի պահման համապատասխան միջոցների բացակայությամբ [5]: Քենիայում կատարված հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են փողոցում վաճառվող կաթի զգալի աղտոտվածություն և հակասանիտարական պայմաններ: Հետազոտողները հանգել են այն եզրակացության, որ կաթի մանրէային աղտոտվածության բարձր մակարդակը կարող է վտանգ ներկայացնել հանրային առողջության համար, և կաթի որակը բարելավելու համար անհրաժեշտ են հրատապ գործողություններ [6]:

Փարիզում հետազոտել են կաթի փողոցային վաճառքի կետերի սանիտարական և հիգիենիկ պայմանները և պարզել, որ փողոցային վաճառքի կետերն ամբողջությամբ չեն պահպանում սանիտակարան և հիգիենիկ կանոնները [7]:

Մեթոդաբանություն: Մեր հետազոտման նպատակներից էր պարզել ոչ միայն փողոցում վաճառվող կաթի սննդարար և անվտանգության ցուցանիշները, այլև պարզել, թե արդյոք այս կաթի զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները համապատասխանում են բնականոն պայմաններին:

Այդ նպատակով հետազոտել ենք կաթի հետևյալ ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ կաթի թթվություն, յուղայնություն, խտություն, մեխանիկական ախտոտվածություն, օսլայի առկայություն, սոդայի քանակ, սպիտակուցների քանակ, ավելացված ջրի առկայություն, ինչպես նաև կատարել են ալկոհոլային թեստ:



Նկ. 1. Կաթի նմուշներ:



Նկ. 2. Կաթի նմուշի կապրոնե տարա:

Զգայորոշման ցուցանիշները (գույն, համ, հոտ) որոշել ենք դասական եղանակով:

Նմուշառումը կատարել ենք վաղ առավոտյան: Նմուշառումը կատարել ենք 20 տարբեր կաթ վաճառողներից, յուրաքանչյուրից՝ 0,5-ական կամ 1-ական լիտր: Նմուշները վերցվել են իրենց իսկ տրամադրած կապրոնե տարաներով, որոնք հետազոտման վայր են փոխադրվել հատուկ սառնարանային պայմաններ ապահովող պայուսակներով:

Կաթի կարևորագույն մի շարք ցուցանիշներ, որոնք արտացոլում են կաթի սանիտարահիգիենիկ վիճակը, որոշվել են FoodLab վերլուծիչ սարքով (նկ. 3): Վերոհիշյալ սարքով որոշվել են հետևյալ ցուցանիշները՝ կաթնաշաքար, միզանյութ, ամոնիակ, պերօքսիդազ, որոնց ռեակտիվները ձեռք ենք բերել AGRI CAMP-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:


Արդյունքներ և վերլուծություն: Կաթի բոլոր նմուշների գույնը եղել է սպիտակադեղնավուն, ինչը համապատասխանել է նրանց բնականոն գույնին: Մակայն նմուշների 65 %-ում արձանագրել ենք կոդմնակի համ և հոտ: Մասնավորապես, որոշակի չափով զգացվել է անասնակերի, գոմի հոտ, ոչ բնականոն համ:

Կաթի զգայորոշման հատկությունների որոշումից հետո որոշել ենք կաթի ֆիզիկաքիմիական ցուցանիշները:

Բոլոր նմուշներում կաթի թթվությունը եղել է ստանդարտին համապատասխան սահմաններում՝ 16-19°Թ, իսկ pH-ը տատանվել է 6.2-6.8 սահմաններում: Կաթի թթվության որոշելը կարևոր էր մեզ համար, քանի որ այն հնարավորություն է տալիս սահմանել դրա ապրանքային որակը և արժեքը: Թարմ կաթը թույլ թթվային հեղուկ է, քանի որ դրա pH=6.3-6.9 է, իսկ թույլատրելի թթվությունը՝ արտահայտված Թյորնեթի աստիճանով՝ 16-18°Թ [1]:

Բոլոր նմուշներում կաթի յուղայնությունը եղել է ստանդարտին համապատասխան սահմաններում՝ 3.4-4.3 %: Մա նշանակում է, որ մեր կողմից հետազոտված նմուշներում վաճառողների կողմից յուղայնության ուղղությամբ կեղծումներ չեն կատարվել:

Բոլոր նմուշներում կաթի խտությունը եղել է ստանդարտին համապատասխան և տատանվել է 1027-1032 կգ/մ³ սահմաններում: Ինչպես հայտնի է, ջրի ավելացման դեպքում կաթի խտությունը փոքրանում է: Կաթի խտությունը պայմանավորված է նրա բաղադրիչ մասերի խտությամբ, ընդ որում՝ սպիակուցները, ածխաջրերը և աղերը կաթի խտությունը բարձրացնում են, իսկ յուղը՝ իջեցնում [1]:



Նկ. 3. FoodLab վերլուծիչ սարքով հետազոտման համար նախապատրաստված նմուշներ:

Ինչպես հայտնի է, կաթի կեղծումը՝ հատկապես ջրով, բավականին տարածված երևույթ է: Այդ պատճառով հետազոտել ենք նաև փողոցում վաճառվող կաթի՝ ջրով կեղծման հավանականությունը: Նշենք, որ ավելացված ջրի քանակ հայտնաբերվել է միայն Արաբկիր և Շենգավիթ վարչական շրջաններից նմուշառված կաթերում:


Ինչ վերաբերում է կաթի մեխանիկական մաքրությանը, ապա նշենք, որ նմուշների 75%-ում մեխանիկական ախտոտումը դասվել է 3-րդ, իսկ 25%-ում մեխանիկական ախտոտումը դասվել է 2-րդ դասի:

Հիշեցնենք, որ ըստ մեխանիկական ադոտովածության՝ կաթը բաժանվում է երեք խմբի.

- Առաջին խումբ (լավորակ կաթ), երբ ֆիլտրի վրա նստվածք չի երևում (1 լ կաթի մեջ պարունակվում է մինչև 3 մգ մնացորդ):
- Երկրորդ խումբ (բավարար որակի կաթ), երբ ֆիլտրի վրա նստվածքը չնչին է (4-6 մգ մնացորդ 1 լ կաթի հաշվով):
- Երրորդ խումբ (վատորակ կաթ), երբ ֆիլտրի վրա զգալի չափով նստվածք կա (7 մգ և ավելի մնացորդ 1 լ կաթի հաշվով) [1]:

Նմուշների 85%-ը, ըստ ալկոհոլային թեստի, համապատասխանել է 5-րդ դասին (նկ. 4):

Ըստ ալկոհոլային թեստի՝ կաթը բաժանվում է հինգ դասի, իսկ հինգերորդ դասը վատորակն է, երբ տարայում կաթի մնացորդային փաթիլները մեծաքանակ են:



Նկ. 4. Ալկոհոլային թեստի արդյունքներ



Նկ. 5. Կաթի օսլայի քանակի որոշում

Հետազոտելով օսլայի և սոդայի առկայությունը՝ կարող ենք փաստել, որ մեր կողմից հետազոտվող նմուշներում վերոհիշյալ նյութերը բացակայում են, ինչը համարում ենք բարենպաստ:

Ինչպես արդեն նշել ենք, FoodLab կաթի վերլուծիչ սարքով որոշել ենք հետևյալ ցուցանիշները՝ կաթնաշաքար, միզանյութ, ամոնիակ և պերօքսիդազ:

Կաթի 20 նմուշների մեջ կաթնաշաքարի քանակը տատանվել է 3.86-5.50 գ-ի սահմաններում: Կաթնաշաքարի բարձր պարունակությամբ կաթ հայտնաբերվել է Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն, Շենգավիթ, Արաբկիր, Աջափնյակ, Կենտրոն համայքներից նմուշառված կաթում: Կաթնաշաքարի ցածր պարունակությամբ կաթ հայտնաբերվել է Էրեբունի վարչական շրջանում:

Կաթի բոլոր նմուշներում հայտնաբերվել է ամոնիակի ցածր քանակ (<1.00 ppm): Մա դրական արդյունք է, քանի որ ազոտի քանակը պայմանավորված է կովերի կերով, իսկ որքան բարձր է կերում սպիտակուցը, այնքան բարձր է կաթում ազոտի քանակը, ինչը վտանգավոր է և՛ կենդանու, և՛ մարդկանց առողջության համար:

Մենդում միզանյութի բարձր քանակը վտանգավոր է հանրային առողջության համար: Կաթում միզանյութի բարձր քանակը կարող է վկայել ոչ հիգիենիկ կթի մասին:

Կաթի 2 նմուշներում միզանյութի քանակը եղել է 50 մկգ/մլ-ից ցածր, իսկ 18 նմուշներում այն տատանվել է 221-505 մկգ/մլ-ի սահմաններում: Կաթի որոշ նմուշներում միզանյութի թուլլատրեյի քանակը գերազանցել է նորման (թուլլատրեյի քանակ՝ 70 մգ 100 մլ-ի հաշվով): Միզանյութի բարձր քանակներ հայտնաբերվել են Նոր Նորք, Էրեբունի, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններից նմուշառված կաթերում:

Պերօքսիդազը հակամանրէային ֆերմենտ է, որը կթից հետո կաթի պաղեցման դեպքում մոտավորապես 2 ժամ թույլ չի տալիս մանրէների զարգացումը կաթում: Կաթի հետազոտված նմուշների մեջ պերօքսիդազի քանակը տատանվել է <100-4206 U/L (միավոր մեկ լիտրի համար) սահմաններում:

Պերօքսիդազ բարձր պարունակությամբ կաթ հայտնաբերվել է Արաբկիր և Էրեբունի վարչական շրջաններից նմուշառված կաթում: Իսկ կաթի 4 նմուշներում, որոնք նմուշառվել են Շենգավիթ, Աջափնյակ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններից, հայտնաբերվել է պերօքսիդազի բավականին ցածր արժեք:

Եզրակացություն: Փողոցում վաճառվող սննդամթերքը, հատկապես՝ կենդանական ծագման, դեռևս համարվում է սննդի անվտանգության հիմնական խնդրահարույց դեպքերից մեկը: Մեր կողմից ուսումնասիրված կաթի նմուշներից ոչ բոլորն են իրենց զգայորոշման ցուցանիշներով համապատասխանել բնականոն վիճակին, ինչը արդեն իսկ կարող է փաստել կաթի ստացման ոչ հիգիենիկ պայմանների մասին: Ճիշտ է, մեր ուսումնասիրությունների ժամանակ մենք չեն հայտնաբերել կաթի մեջ սողայի կամ օսլայի ավելացում, սակայն մի քանի ցուցանիշներ, որոնք վկայում են կաթի ոչ հիգիենիկ պայմաններում ստացման և պահելու մասին, եղել են համեմատաբար բարձր քանակներով կամ մոտ են եղել սահմանային թուլլատրեյի քանակներին:

Չարծում ենք, որ պետք է շարունակական իրազեկման աշխատանքներ տարվեն փողոցում՝ հատկապես կենդանական ծագման մթերքների վաճառքի արգելման կամ գոնե դրանց քանակի նվազեցման ուղղություններով:

**ИССЛЕДОВАНИЕ ПОКАЗАТЕЛЕЙ КАЧЕСТВА МОЛОКА,
ПРОДАВАЕМОГО НА УЛИЦЕ В ЕРЕВАНЕ
Арзуманян И. А.**

Молоко-широко потребляемый продукт питания, являющийся источником ряда важных и питательных веществ для человека. Однако, в результате хранения молока в ненадлежащих санитарных условиях, оно может вызвать ряд заболеваний. Целью нашего исследования было выяснить качество молока, продаваемого на улице в разных местах г.Еревана, условия хранения молока при реализации, выяснить их соответствие гигиеническим требованиям к молоку. С этой целью нами было проведено исследование физико-химических и ряда пищевых показателей молока.

Ключевые слова: молоко, потребители, пищевой риск, лактоза, крахмал, фальсификация молока.

**INVESTIGATION OF THE MILK QUALITY SOLD STREETS IN YEREVAN
Arzumanyan I. A.**

Milk is a widely consumed product, and it is a source of a number of important and nutritious substances. Storing milk in improper sanitary and hygienic conditions can cause several diseases. The aim of our research is to assess the quality of milk sold on the streets of different parts of Yerevan, the conditions of milk storage during sale, and to find out their compliance with the sanitary and hygienic requirements for milk. For this purpose, a study of the physicochemical and a few nutritional indicators of milk was carried out.

Keywords: milk, consumers, food risk, lactose, starch, milk adulteration .

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբաբյան Ա. Ա., Բեգլարյան Ռ. Ա., Արաքսյանց Ա. Է. «Կաթի քիմիա և ֆիզիկա»: 1998 թ.:

2. Daniel Lopez de Roman~ a, Manuel Olivares and Fernando Pizarro- Milk and Dairy Products 2018.
3. Milk and Dairy Products and Their Nutritional Contribution to the Average Polish Diet- Hanna Górska-Warsewicz, Krystyna Rejman, Waclaw Laskowski, and Maksymilian Czeczotko 2019.
4. Daniel Lo´ pez de Roman~ a, Manuel Olivares and Fernando Pizarro- Milk and Dairy Products 2018.
5. Debebe Worku, Eyassu Seifu and Geremew Bultosa- Handling Practices and Safety of Street-Vended Milk in and Around Addis Ababa City 2014.
6. Simon N. Nyokabi, Imke J. M. de Boer, Pieter A. Luning, Luke Korir, Johanna Lindahlde, Bernard Bett, Simon J. Oosting- Milk quality along dairy farming systems and associated value chains in Kenya: An analysis of composition, contamination and adulteration.
7. Ewa Czarniecka-Skubina, Joanna Trafiałek, Michał Wiatrowski- An Evaluation of the Hygiene Practices of European Street Food Vendors and a Preliminary Estimation of Food Safety for Consumers, Conducted in Paris.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Արզումանյան Բ. Ա. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ՀԱԱՀ, Պարենալոգիայի և տեխնոլոգիաների ֆակուլտետ, Սննդամթերքի անվտանգություն

Էլ. փոստ՝ ivetaarzumanyan@gmail.com

Գիտական ղեկավար՝ Համբարձումյան Գ., անասնաբուժ. գիտ. թեկն.

Ստացվել է՝ 19.10.2022

Գրախոսվել է՝ 15.12.2022

**ОПРЕДЕЛЕНИЕ ВЕРОЯТНОСТИ РАСПРОСТРАНЕНИЯ ВИРУСА
ГРИППА НА ОСНОВЕ РАСЧЕТА КОНЦЕНТРАЦИИ МОЛЕКУЛ В
ВЫДЫХАЕМОМ И ВДЫХАЕМОМ ВОЗДУХЕ****Бурова В. К., Казарян А. В.**

Статья посвящена проблеме распространения острых респираторных заболеваний. В исследовании рассмотрены два способа определения дыхательного объема легких методами номограммы и самодельного спирографа. Авторами предложен способ расчета вероятности распространения вируса гриппа на основе определения концентрации молекул в выдыхаемом и вдыхаемом воздухе.

Ключевые слова: дыхательный объем легких, объем воздуха, концентрация молекул, острые респираторные заболевания, номограмма, спирограф, спирография, жизненная емкость легких.

Сегодня острые респираторные заболевания занимают важное место в структуре заболеваемости. По данным Всемирной организации здравоохранения ежегодно гриппом и другими острыми респираторными заболеваниями страдают в Российской Федерации – 25-35 миллионов, из них 45-60% – дети.

Наивысший процент возбудителей, выделенных в остром периоде заболевания, подтверждает особую эпидемиологическую опасность таких больных, как источников заражения. Однако и после клинического выздоровления значительная часть (9-19%) переболевших (реконвалесцентов) продолжает оставаться потенциальным источником инфекции. С реконвалесцентами, в частности, связано возникновение 10% вспышек ОРЗ в детских коллективах. Инфекционный процесс при ОРЗ может протекать не только в клинически выраженной форме, но и бессимптомно, о чем специалисты узнают по четырехкратному и более приросту в сыворотке крови концентрации антител к данному возбудителю.

Поражая эпителий слизистой оболочки, вирус нарушает защитную функцию верхних дыхательных путей, повышает проницаемость стенок капилляров. Данная группа заболеваний передается преимущественно

аэрогенным путем, в связи с чем его распространение тяжело поддается контролю. Эта особенность приводит к возникновению локальных вспышек заболеваемости среди населения [6]. На сегодняшний день для функционального обследования дыхательной системы широко используются методы спирографии и номограммы, которые остаются ключевыми в ходе исследования дыхательного аппарата и выявления вентиляционных нарушений в ходе заболевания органов дыхания. Таким образом, проблема распространения вируса гриппа является на сегодняшний день актуальной. В данном исследовании предлагается определить вероятность распространения вируса гриппа среди молодых людей – студентов, измеряя концентрацию молекул в выдыхаемом и вдыхаемом воздухе в условиях одной учебной комнаты.

Острые респираторные заболевания (ОРЗ) – это большая группа острых инфекционных заболеваний, возбудители которых (вирусы, бактерии, хламидии, микоплазмы) проникают в организм через дыхательные пути, колонизируются и репродуцируются преимущественно в клетках слизистых оболочек респираторной системы, повреждают их, выявляя тем самым возникновение основного симптомокомплекса заболевания – синдрома поражения респираторного тракта.

Ежегодно инфекционными болезнями в мире заболевают 40 млн человек, из них 90% приходится на грипп и ОРЗ. Каждый взрослый в среднем в течение года 2 раза болеет гриппом или другими ОРЗ, школьник – 3 раза, ребенок дошкольного возраста – 6 раз [2].

В большинстве случаев источник инфекции – заболевший человек. Основной путь передачи инфекции – воздушно-капельный. Характерна сезонность простудных заболеваний с выраженным пиком заболеваемости в осенне-зимний период. Повышают вероятность возникновения болезни вдыхание влажного холодного воздуха, иммунные и обменные нарушения в организме человека, неблагоприятные профессиональные факторы, алкоголизм и курение, неполноценное питание.

Каждая из ОРВИ имеет отличительные черты в соответствии с тропностью тех или иных вирусов к дыхательной системе. Вирусы гриппа, РС-вирусы, аденовирусы могут поражать эпителий как верхних, так и нижних дыхательных путей с развитием бронхита, бронхиолита и синдромом обструкции нижних дыхательных путей, в то время как при риновирусной инфекции преимущественно страдает эпителий носовой полости, а при парагриппе – гортани [1].

Возбудителями ОРВИ могут быть вирусы гриппа, парагриппа, аденовирус, респираторно-синтициальный, рео- и риновирусы. Большинство из названных возбудителей относится к РНК-содержащим вирусам, исключение составляет аденовирус, в вибрион которого входит ДНК. Длительно сохраняются в окружающей среде лишь рео- и аденовирусы, остальные быстро гибнут от воздействия температуры, УФ-лучей, обычных дезинфицирующих средств.

Острые респираторные инфекции относятся к типичным человеческим (так называемым антропонозным) заболеваниям и поэтому единственным источником инфекции является больной или зараженный человек. Опасность таких источников инфекции во многом зависит от формы заболевания, стадии болезни, выраженности катаральных симптомов и степени контактов с больными. Человек с клинически выраженным ОРЗ любой этиологии является главным источником инфицирования окружающих [4].

Эпидемиологические данные, подтверждающие меру опасности лиц как источников инфекции, в инкубационном периоде заболевания пока еще малочисленны, но достаточно высокий процент выделения возбудителей в этот период говорит сам за себя. Наивысший процент возбудителей, выделенных в остром периоде заболевания, подтверждает особую эпидемиологическую опасность таких больных как источников заражения. Однако и после клинического выздоровления значительная часть (9-19%) переболевших (реконвалесцентов) продолжает оставаться потенциальным источником инфекции. Таким образом, определение вероятности распространения вируса гриппа является актуальной задачей.

Для того чтобы рассчитать концентрацию молекул в выдыхаемом и вдыхаемом воздухе, необходимо определить дыхательный объем легких. Существует два способа определения данного параметра. Первый способ – определение дыхательного объема легких человека по номограмме

Номограмма – это графическое представление функции от нескольких переменных, позволяющее с помощью простых геометрических операций (например, прикладывания линейки) исследовать функциональные зависимости без вычислений.

Особенность номограмм заключается в том, что каждый чертёж изображает заданную область изменения переменных, и каждое из значений переменных в этой области изображено на номограмме определённым геометрическим элементом (точкой или линией); изобра-

жения значения переменных, связанных функциональной зависимостью, находятся на номограмме в определённом соответствии, общем для номограмм одного и того же типа.

Для определения дыхательного объёма лёгких с помощью номограммы нужно соединить при помощи линейки, прямой линией показатели веса и частоты дыхания [3].

Значение дыхательного объёма находят в точке пересечения прямой, соединяющей показатели веса (на шкале I) и частоты дыхания (на шкале III), со шкалой II.




Рисунок 1. Определение дыхательного объема легких человека по номограмме.

Второй способ определения дыхательного объема легких человека – это метод спирографии. Спирография – это процедура, позволяющая графически изобразить на экране или бумаге качество вентиляционной работы легких. С помощью указанного обследования можно точно выявить нарушение функции альвеол и оценить качество проводимой терапии [5]. В процессе выполнения соответствующего обследования используются специализированные аппараты – спирографы. Для расшифровки показателей врач использует таблицы с указанием нормы того или иного показателя. Если значения сильно отличаются, тогда фиксируется определенная выраженность патологического процесса.

Проведение спирографии при бронхиальной астме, пневмонии и других патологиях будет сопровождаться снижением указанных показателей [3].

Так, количество выдыхаемых вирусных частиц не зависит от степени выраженности болезни, т.е. от симптомов. От степени выраженности симптомов гриппа зависит концентрация частиц гриппа в полости носа, которые могут быть выброшены во время чихания.

Таблица 1.

Концентрация микробных клеток

Среда	Число микробов в необлученной комнате в 1 кубическом сантиметре
Воздух у пола	110
Воздух на высоте 0,5 м от пола	88
Воздух на высоте 1,7 м от пола	78
Воздух на высоте 2,3 м от пола	89

На первом этапе проведенного исследования проводилось определение объема легких человека по площади поверхности его тела с помощью номограммы.

Таблица 2.

Определение объема легких по площади поверхности тел

Вес, кг	52	51	55	49	50	62	60	61	65	67
Рост, см	164	159	168	160	158	170	169	171	178	175
Площадь поверхности, м ²	1,5	1,49	1,59	1,43	1,47	1,72	1,7	1,73	1,84	1,82
Объем легких, мл	3750	3700	3975	3350	3675	4300	4250	4325	4500	4550

Для определения площади поверхности тела человека с помощью номограммы соединили при помощи линейки прямой линией показатели массы и длины тела. Точка пересечения этой прямой со шкалой S дает значение площади поверхности [22]. Далее рассчитали объем легких по формуле для юношей

$$V = 2,5 \cdot 10^{-3} \cdot S \text{ и для девушек } V = 2 \cdot 10^{-3} \cdot S$$

Так, считается, что каждому квадратному метру поверхности тела юноши соответствует 2500 мл, а девушки – 2000 мл объема легких. Результаты измерений представлены в таблице 2.

Известно, что жизненная емкость легких в среднем у взрослого человека составляет 3000-4500 мл. Она возрастает у спортсменов, особенно у гребцов и пловцов, и может достигать 8 л. Мы получили для

девушек диапазон объема легких от 3350 до 3975 мл, для юношей от 4300 до 4550 мл. Объем легких юношей больше, так как их вес и рост больше, чем у девушек, а значит и количество вдыхаемого воздуха в легкие больше. Это приводит к более частому захвату при вдохе молекул, побывавших в легких других людей. Следовательно, юноши более предрасположены к вирусным заболеваниям.

На втором этапе исследования была проведена самодиагностика легких путем измерения дыхательного объема при помощи самодельного спирографа, также был определен объем воздуха в комнате.

В качестве самодельного спирографа используем воздушный шарик. При выдохе воздуха в шарик он надувается. Объем шарика можно вычислить, если измерить его диаметр по формулам 1 и 2:

$$V = \frac{\pi d^3}{6} \quad (1)$$

$$V = \frac{4}{3} \pi R^3 \quad (2)$$

Измерили дыхательный объем легких. Для этого сделали в шарик 10 спокойных выдохов. Измерили диаметр шарика, вычислили объем заполняющего его воздуха. Вычислили дыхательный объем легких, разделив объем шарика на 10. Повторили опыт 3 раза. Затем вычислили средний дыхательный объем легких и занесли в таблицу.

Средний дыхательный объем легких от 0,6 до 1,1 л для девушек, для юношей – от 0,6 до 2 л. Во время каждого дыхательного движения человек вдыхает и выдыхает количество воздуха, составляющее 300-500 мл и называемое дыхательным объемом. Объем воздуха, который человек может выдохнуть после спокойного выдоха – резервный объем воздуха – составляет 1500 – 2000 мл. Жизненная емкость легких и состоит из суммы объемов дыхательного, резервного вдоха и резервного выдоха. С помощью самодельного спирографа мы получаем жизненную емкость легких для девочек примерно от 3000 мл до 3500 мл (по номограмме от 3350 до 3975 мл), для мальчиков – от 4000 до 5100 мл (по номограмме от 4300 до 4550). В ходе третьего этапа исследования производилось определение объема воздуха в комнате по формуле объема прямоугольного параллелепипеда:

$$V = abc$$

К примеру, объем воздуха в комнате с определенными размерами равен:

$$V = 4,1 \cdot 4 \cdot 2,7 = 44 \text{ м}^3$$

Таблица 3.

Определение дыхательного объема легких при помощи самодельного
спирографа

Пара- метры	Девушки					юноши				
	1	2	3	4	5	1	2	3	4	5
Количество выдохов в шарик	10	10	10	10	10	10	10	10	10	10
Длина окружности, м	0,86	0,68	0,82	0,77	0,84	0,93	0,81	1,00	0,62	1,00
	0,88	0,70	0,77	0,80	0,88	0,84	0,85	0,98	0,68	1,12
	0,80	0,74	0,80	0,62	1,0	0,96	0,87	1,12	0,76	1,06
Среднее значение длины, м	0,85	0,71	0,80	0,80	0,91	0,91	0,84	1,03	0,68	1,06
Среднее значение радиуса, м	0,135	0,11	0,13	0,13	0,14	0,14	0,13	0,16	0,11	0,17
Среднее значение объема, заполняющего его воздуха, м ³	0,01	0,006	0,01	0,01	0,011	0,011	0,01	0,017	0,006	0,02
Средний дыхательный объем легких, м ³	0,001	0,0006	0,001	0,001	0,0011	0,0011	0,001	0,0017	0,0006	0,002
Средний дыхательный объем легких, л	1,0	0,6	1,0	1,0	1,1	1,1	1,0	1,7	0,6	2,0

Молекул воздуха не существует, так как воздух – это смесь газов (азота, кислорода, углекислого газа и других). А также из-за испарения в воздухе всегда присутствуют молекулы воды. Заражение в основном происходит воздушно-капельным путем. Рассчитаем, сколько молекул воды вдохнет человек, если при одном вдохе он получил 1,0 литр воздуха. Будем считать, что в нем содержится 1 капля воды. Размер одного атома равен 10^{-10} метра, диаметр молекулы воды равен $3 \cdot 10^{-8}$ см. Положим, что каждая молекула воды при плотной упаковке молекул занимает объем $V_1 = 3 \cdot 10^{-8} \text{ см}^3$. Объем капли равен $V = 1 \text{ см}^3$, тогда

$$N = \frac{V}{V_1}$$

$$N = \frac{1 \text{ см}^3}{3 \cdot 10^{-8} \text{ см}^3} \approx 3,7 \cdot 10^{22}$$

Подсчитано, что в 1 л воздуха содержится $2,7 \times 10^{22}$ молекул.

Тогда $1,19 \times 10^{27}$ молекул содержится в комнате. Если мы при одном вдохе получили 1,0 л воздуха, то на каждого человека примерно приходится:

$$\frac{1,19 \cdot 10^{27}}{25 \text{ человек}} = 4,7 \cdot 10^{24} \text{ молекул}$$

Считая, что в 1 см^3 воздуха на высоте 0,5 м от пола содержится 88 микробов, то в 1 л вдыхаемого воздуха – 88 млн. микробов. Если предположить, что микробы равномерно распределятся по всему кабинету, то каждому, находящемуся в комнате, достанется более 3,5 миллионов микробов. Вирусы в отличие от молекул, крупнее, и идет их постоянное размножение. Официальные медицинские данные дают следующий результат: через 30 минут увеличение составит в 1000 раз. А это значит, что даже один учащийся, болеющий гриппом, окажется в учебной комнате, то это создаст высокую вероятность заражения других студентов.

Таким образом, в данном исследовании представлены результаты по определению дыхательного объема легких методами номограммы и самодельного спирографа, рассчитано количество молекул выдыхаемого воздуха и количество молекул вируса гриппа, выдыхаемого и вдыхаемого студентами. В результате опытным путем была выявлена вероятность распространения вируса гриппа среди студентов одной группы путем расчета концентрации молекул в выдыхаемом и вдыхаемом ими воздухе.

**ԳՐԻՊԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԾՆՉԱԾ ԵՎ
ԱՐՏԱԾՆՉԱԾ ՕՂՈՒՄ ՄՈՒԵԿՈՒԼՆԵՐԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՅԻ
ՀԱՇՎԱՐԿԻ ՄԻՋՈՑՈՎ
Բուրովա Վ. Կ., Ղազարյան Ա. Վ.**

Հոդվածը նվիրված է սուր շնչառական հիվանդությունների տարածման խնդրին: Ուսումնասիրությունը ուսումնասիրել է երկու ճանապարհ՝ որոշելու շնչառական ծավալը թոքերի մեթոդների nomogram և տնական spirograf: Հեղինակների կողմից առաջարկվել է գրիպի վիրուսի տարածման հավանականությունը հաշվարկելու միջոց՝

արտաշնչվող և ներշնչվող օդում մոլեկուլների խտության որոշման հիման վրա:

Բանալի բառեր. թոքերի շնչառական ծավալ, օդի ծավալ, մոլեկուլների կոնցենտրացիա, սուր շնչառական հիվանդություններ, նոմոգրամ, սպիրոգրաֆ, սպիրոգրաֆի, թոքերի կենսունակություն:

**PROBABILITY DETERMINATION OF SPREAD OF THE INFLUENZA
VIRUS BASED ON THE CALCULATION OF THE CONCENTRATION OF
MOLECULES IN THE EXHALED AND INHALED AIR**

Burova V. K., Ghazaryan A. V.

The article is devoted to the problem of the spread of acute respiratory diseases. The study considers two ways to determine the respiratory volume of the lungs by the methods of a nomogram and a homemade spirometer. The author proposes a method for calculating the probability of the spread of the influenza virus based on the determination of the concentration of molecules in the exhaled and inhaled air.

Keywords: respiratory volume of the lungs, air volume, concentration of molecules, acute respiratory diseases, nomogram, spirometer, spirometry, vital capacity of the lungs.

ЛИТЕРАТУРА

1. Баранов В. Л. Исследование функции внешнего дыхания /Баранов В. Л., Куренкова И. Г., Казанцев В. А. – СПб.: Санкт-Петербургская Военно-медицинская академия, кафедра терапии усовершенствования врачей, 2002. - 7-9, 21-23 с.
2. Давыдченко С. В. Исследование вентиляционной функции лёгких / Давыдченко С. В., Бова А. А. - Минск: Генезис, 2007. - 3, 26 – 28, 37-39 с.
3. Карпухин Г. И. Диагностика, профилактика и лечение острых респираторных заболеваний / Карпухин Г. И., Карпухина О. Г. - СПб.: Гиппократ, 2000. – 57 с.
4. Лыткина И. Н. Профилактика гриппа и острых респираторных вирусных инфекций среди эпидемиологически значимых групп населения /Лыткина И. Н., Волкова Н. А.// Лечащий врач. - 2011. № 9. - 83-85 с.

5. Новик Г. А. Спирометрия и пикфлоуметрия. Учебное пособие/ Новик Г. А. - СПб.: ГПМА, 2005. 16-19 с.
6. Самсыгина Г. А. Проблемы острых респираторных вирусных заболеваний в педиатрии /Самсыгина Г. А.// Медицина. 2015. № 4. 66-67 с.

Сведения об авторе и научном руководителе

Бурова В. К. - 1-ый курс

ФГБОУ ВО Курский государственный медицинский университет, Стоматологический факультет,
Стоматология

Эл. почта: burovaviktorija.burova@yandex.ru

Казарян А.В. - 4-ый курс

ФГБОУ ВО Курский государственный медицинский университет, Стоматологический факультет,
Стоматология

Эл. почта: anikazaryann@mail.ru

Научный руководитель: Рышкова А., канд. пед. наук

Поступила 21.10.2022

Прошла рецензию 06.12.2022

**ՊԱՐԿԻՆՍՈՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԷԿՉՈԳԵՆ ԵՎ
ԷՆԴՈԳԵՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ
Մուգայրովա Ի. Օ.**

Հոդվածը նվիրված է Պարկինսոնի հիվանդության զարգացման էկզոգեն և էնդոգեն մեխանիզմների փոխազդեցության մաթեմատիկական մեթոդներով գնահատմանը: Հատկապես ուսումնասիրված է սթրեսային գործոնների ազդեցությունը պաթոլոգիկ վիճակների առաջացման վրա, կապը Պարկինսոնի հիվանդության (ՊՀ) առաջացման և ալկոհոլի, ծխելու, հաճախակի սուրճի, շոկոլադի օգտագործման միջև, հարազատների շրջանում ՊՀ կամ այլ նեյրոդեգեներատիվ հիվանդությունների առկայությունը: Հեղինակների կողմից ցույց է տրված, որ ՊՀ զարգացման հաճախականության ամենամեծ ռիսկը հետազոտվող խմբի մեջ կապված է խրոնիկ սթրեսի կամ ալկոհոլի հաճախակի օգտագործման հետ: Երկարատև հոգեհուզական սթրեսը, ալկոհոլի հաճախ օգտագործումը կարելի է ենթադրել որպես ՊՀ զարգացման ռիսկի գործոն:

Բանալի բառեր. Պարկինսոնի հիվանդության զարգացման էկզոգեն մեխանիզմներ, գործոնների փոխադարձ կապ, Պարկինսոնի հիվանդության զարգացման ռիսկեր:

Նախաբան: Կապված կյանքի միջին տևողության երկարացման տենդենցի հետ՝ Պարկինսոնի հիվանդությունը (ՊՀ) իրենից ներկայացնում է հատուկ գիտական հետաքրքրություն, քանի որ հանդիսանում է ծերունական տարիքում ամենահաճախ հանդիպող նեյրոդեգեներատիվ հիվանդություններից, որը ունի լայն դիապազոն շարժողական և այլ խանգարումների [2, 3]:


Հիվանդության էությունը կայանում է ցողունային և գլխուղեղի էքստրապիրամիդալ կառույցների ախտահարման, ինչպես նաև մեդիատորների փոխանակման խանգարման մեջ, առավելապես դոֆամինային մեդիատորների [1, 4]:

Հետազոտության նպատակը: Բացահայտել հավանական ռիսկի գործոնները և ազդեցության մեխանիզմը դոֆամիներգիկ նիգրոստիյար նեյրոնների վրա:

Հետազոտության նյութերը և մեթոդները: Ուսունմասիրված է 50 (27 տղամարդ և 23 կին) պացիենտների հիվանդության պատմագրեր (տարիքային սահմանաչափը 57-86), որոնք կցված են Կուրսկի քաղաքային թիվ 2 հինանդանոցին, ունեն հաստատված Պարկինսոնի հիվանդություն: ՊՀ հավանական ռիսկի գործոնների բացահայտման համար վերոհիշյալ պացիենտներից հավաքվել են անամնեստիկ տվյալներ, որոնք իրենց մեջ ներառում են տեղեկատվություն, որը հաստատում է հիվանդների սուր կամ խրոնիկ հոգեհուզական սթրեսը, ալկոհոլի օգտագործումը, ծխելը, սննդի առանձնահատկությունները (սուրճի և շոկոլադի հաճախ օգտագործումը), ՊՀ կամ այլ նեյրոդեգեներատիվ հիվանդությունների առկայությունը հարազատների շրջանում:

Ստատիստիկ տվյալների մշակման համար օգտագործվել է կորեկյացիոն անալիզի մեթոդը:


Հետազոտության արդյունքները: Համեմատական վերլուծության ընթացքում էական տարբերություն հետազոտվող պարամետրերում սեռային և տարիքային սկզբունքներով չի հայտնաբերվել: Հիվանդության սկզբնական փուլի միջին տարիքը կազմում է 66-67 տարեկան: Հետազոտման արդյունքում բացառվեց նաև կապը ՊՀ ծխելու, սուրճի, շոկոլադի օգտագործման հետ, քանի որ նշված գործոնների հարաբերակցության գործակիցը ՊՀ հետ տվյալ խմբի պացիենտների մոտ կազմում է համապատասխանաբար 0,0029; 0,04 և 0,22:



Նկ.1. Ժառանգական գործոնի դերը Պարկինսոնի հիվանդության զարգացման մեջ:


Հիվանդության առաջացման հարցում ժառանգական գործոնների ազդեցության հետազոտությունը տվեց, որ ընդամենը 33% պացիենտների մոտ ընտանիքում առկա է նեյրոդեգեներատիվ հիվանդություն (նկ. 1):

Համաձայն հոգեհուզական սթրեսի՝ որպես գործոն հիվանդության առաջացման հարցում՝ ուսումնասիրման ընթացքում պարզաբանվեց, որ ՊՀ հաստատված պացիենտների 90%-ի մոտ առկա է արտահայտված հոգեհուզական սթրես անամնեզով (նկ. 2):



Նկ. 2. Սթրեսի մակարդակը ՊՀ ունեցող հիվանդների մոտ:

Հետազոտման արդյունքների համաձայն՝ ՊՀ առաջացման հարցում ալկոհոլի օգտագործման գործոնը առկա է 96% ՊՀ պացիենտների մոտ, ովքեր երկու ամիսը մեկ կամ ավելի հաճախ օգտագործել են ալկոհոլ (նկ. 3):



Նկ. 3. Ալկոհոլ օգտագործող պացիենտներ, որոնք ունեն ՊՀ:

Այսպիսով, ներկայացված արդյունքներից երևում է, որ հետազոտվող պացիենտների խմբում առավել հաճախ ՊՀ կապված է կամ քրոնիկ սթրեսի, կամ հաճախ ալկոհոլի օգտագործման հետ:

Մեր կարծիքով սթրեսի ազդեցությունը ՊՀ առաջացման և զարգացման հարցում կարելի է բացատրել նրանով, որ սթրեսային իրավիճակները խթանում են գորշ նյութում նեյրոնների ալտերացիան: Նման ալտերացիաների մեխանիզմները կարող են հիմնավորված լինել սթրեսի հիմնական էֆեկտներով: Մակերիկամների հիպերֆունկցիան, որը խթանված է սթրեսով, արյան մեջ առաջացնում է գլյուկոկորտիկոիդ հորմոնների (կորտիզոլ) բարձր մակարդակ, որը բերում է ընդհանուր կատաբոլիկ էֆեկտի և որպես հետևանք՝ նեյրոններում դեստրուկտիվ փոփոխությունների: Օրգանիզմում ադրենալինի բարձրացումը խթանում է լիպիդների ջրածնային օքսիդացումը և օքսիդատիվ սթրեսի առաջացմանը, որը կարևոր դեր է խաղում նիգրոստիյար կառուցվածքների դեգեներացիայի զարգացման հարցում և դոֆամինի արտազատման նվազեցմանը: Գլյուկոկորտիկոիդների լիպոցիտոլոգիկ ազդեցությունը հանգեցնում է հիպոսուպրետորային իմունոդիֆիցիտի առաջացմանը, որի ֆոնին կարող են առաջանալ նեյրո-աուտոիմուն ռեակցիաներ: Արդյունքում կարող է առաջանալ ինչպես գորշ նյութի նեյրոնների դեստրուկցիա (ոչնչացման), այնպես էլ պոչավոր կորիզի նեյրոնների ռեցեսսիվների հասկությունների խանգարման: Սթրեսային իրավիճակների ֆոնի վրա առաջանում է գլխուղեղի արյան շրջանառության խանգարում, որը հանգեցնում է իշեմիայի, որն էլ իր հերթին՝ հիպոքսիայի, որի արդյունքում առաջանում է գորշ նյութի նեյրոնների դեգեներացիա: Այս բոլոր էֆեկտները հանգեցնում են նիգրոստիյար կառուցվածքներում պաթոլոգիկ փոփոխությունների: Ալկոհոլի հաճախակի օգտագործումը հանգեցնում է օրգանիզմում էթանոլի հիմնական մետաբոլիտ քացախաթթվային ալդեհիդի կուտակմանը: Քացախաթթվային ալդեհիդի տոքսիկ ազդեցությունը հանգեցնում է գլխուղեղի նեյրոններում դոֆամինի փոխանակման խանգարման, որն էլ իր հերթին բերում է ՊՀ:

Եզրահանգում: Տվյալ խմբում հետազոտվող պացիենտների մոտ ՊՀ արագ զարգացումը կապված է կամ քրոնիկ սթրեսի առկայության, կամ ալկոհոլի հաճախակի օգտագործման հետ:

Երկարատև հոգեհուզական սթրեսը, ալկոհոլի հաճախակի օգտագործումը կարելի է դիտարկել որպես ենթադրվող գործոն ՊՀ առաջացման համար:

**МАТЕМАТИЧЕСКИЕ МЕТОДЫ ИЗУЧЕНИЯ ВЗАИМОДЕЙСТВИЯ
ЭКЗОГЕННЫХ И ЭНДОГЕННЫХ МЕХАНИЗМОВ В РАЗВИТИИ
БОЛЕЗНИ ПАРКИНСОНА**

Музалева И. О.

Статья посвящена оценке экзогенных и эндогенных механизмов в развитии болезни Паркинсона с помощью математических методов анализа. В частности, проанализировано воздействие стрессовых факторов на формирование патологического состояния, взаимосвязь риска развития болезни Паркинсона с употреблением алкоголя, курением, частым употреблением кофе, шоколада, наличием болезни Паркинсона или других нейродегенеративных заболеваний у родственников. Авторами показано, что наибольшая частота развития болезни Паркинсона в исследуемой группе пациентов связана с наличием хронического стресса либо с частым употреблением алкоголя. Длительный психоэмоциональный стресс, частое употребление алкоголя можно рассматривать в качестве факторов, предрасполагающих к возникновению болезни Паркинсона.

Ключевые слова: экзогенные механизмы развития болезни Паркинсона, эндогенные механизмы развития болезни Паркинсона, взаимосвязь факторов, риск развития болезни Паркинсона.

**MATHEMATICAL METHODS FOR STUDYING INTERACTION
EXOGENOUS AND ENDOGENOUS MECHANISMS IN DEVELOPMENT
PARKINSON'S DISEASE**

Muzalyova I. O.

The article is devoted to the assessment of exogenous and endogenous mechanisms in the development of Parkinson's disease using mathematical methods of analysis. In particular, the impact of stress factors on the formation of a pathological condition, the relationship of the risk of developing Parkinson's disease with alcohol consumption, smoking, frequent use of coffee, chocolate, the presence of Parkinson's disease or other neurodegenerative diseases in relatives was analyzed. The authors have shown that the highest incidence of Parkinson's disease in the study group of patients is associated with the presence of chronic stress or with frequent alcohol consumption.

Prolonged psychoemotional stress, frequent alcohol consumption can be considered as factors predisposing to the occurrence of Parkinson's disease.

Keywords: exogenous mechanisms of Parkinson's disease development, endogenous mechanisms of Parkinson's disease development, interrelation of factors, risk of Parkinson's disease development.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Левин О. С. Болезнь Паркинсона /Левин О. С., Федорова Н. В. – 6-е изд. – М.: МЕДпресс-информ, 2016 – 384 с.
2. Нейропсихологические расстройства на ранней стадии болезни Паркинсона /Вереютина И. А., Иллариошкин С. Н., Журавлева Е. Ю., Шихкеримов Р. К. // Анналы клинической и экспериментальной неврологии. – 2012. – Т. 6, №2. – С. 11-15.
3. Степкина Д. А. Прогрессирование когнитивных расстройств при болезни Паркинсона /Степкина Д. А., Захаров В. В. // Клиническая геронтология. – 2007. – Т. 13, №8. – С. 55-59.
4. Федорова Н. В. Болезнь Паркинсона: диагностика и лечение / Федорова Н. В. // Неврология в терапевтической практике. – 2016. – № 1. – С. 13-17.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարների մասին

Սուզալյովա Ի. Օ. - 6-րդ կուրս

Վուրսկի պետական բժշկական համալսարան, Ընդհանուր բժշկության ֆակուլտետ,
Բուժական գործ

Էլ. փոստ՝ i.muzalyova@yandex.ru

Գիտական ղեկավարներ՝ Սնեգիրյովա Լ., կենսաբ. գիտ. թեկն., դոցենտ,

Սուզալյովա Օ. Ե., բժիշկ,

Գրիգորյան Գ., ֆիզմաթ. գիտ. թեկն.

Ստացվել է՝ 07.11.2022
Գրախոսվել է՝ 15.12.2022

**ԼՈՒՅՄԻ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՏՈՖԻԼԻ *IN VITRO*
ԲՈՒՍԱԿՆԵՐԻ ԱՃԻ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎՐԱ
ՏԻՏՈՏՐՈՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
Պետրոսյան Ա. Ա.**

Կարտոֆիլի *in vitro* բուսակների արտադրողականության վրա մեծ ազդեցություն են ունենում միջավայրային գործոնները: Մեր հետազոտությունը նպատակ է ունեցել ուսումնասիրել կարտոֆիլի տնկանյութի ստացման պրոցեսում լույսի սպեկտրի, ինտենսիվության և լուսային օրվա տևողության ազդեցությունը մի քանի կարևորագույն սորտերի *in vitro* բուսակների աճի ու զարգացման գործընթացների վրա ֆիտոտրոնի պայմաններում, առաջարկել լուսային գործոնի այն լավագույն տարբերակները, որոնց դեպքում *in vitro* մեկ բուսակից ստացվում է մինիպալարների առավելագույն ելքը: Արդյունքում կարտոֆիլի մերիսթեմային բույսերի ֆիտոտրոնային բազմացման սկզբնական շրջանում կարելի է ապահովել կարմիր և կապույտ լույսերի համատեղ ազդեցություն, այնուհետև անցում կատարել սպիտակ լույսին՝ սահմանելով 3000 լյուքս լուսավորություն և 8 ժամ լուսային օր:

Բանալի բառեր. կարտոֆիլ, *in vitro* բուսակ, ադապտացիա, ֆիտոտրոն, մինիպալար, լուսային գործոն:

Նախաբան: Տվյալ հետազոտական աշխատանքները իրականացվել են Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող և «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի (ICARE) կողմից իրականացվող «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար» (ԱԳԲԻ ՔԵՄՓ) ծրագրի աջակցությամբ:

Բովանդակությունը միմիայն հեղինակ/ներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Կարտոֆիլը (*Solanum tuberosum* L.) ՀՀ-ում մշակվող գլխավոր գյուղատնտեսական մշակաբույսերից է, որի ցանքատարածությունները վերջին տարիներին զգալիորեն աճում են, ինչն էլ ընդգծում է կարտոֆիլի

առանձին դերը մարդկանց սննդացանկում [4]: Այն մշակվում է գրեթե յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությունում և իրավամբ անվանվում է «երկրորդ հաց»: Հայտնի է, որ կարտոֆիլը մշակման ընթացքում տուժում է մի շարք հիվանդություններից (վիրուսային, վիրոիդային, միկոպլազմային և այլն), որոնց հիմնական փոխանցող են հանդիսանում հիվանդ պալարները. արդյունքում ստացվում է բերքի որակի և քանակի անկում: Վերարտադրությունների ընթացքում կարտոֆիլի այլասերման հիմնական պատճառը վիրուսային հիվանդություններն են:

Գենետիկայի, մոլեկուլային կենսաբանության և վիրուսաբանության բնագավառներում կատարված հայտնագործությունների շնորհիվ վերջին տարիներին բույսերի ընտրասերման ոլորտում ինտենսիվ կերպով կիրառվում են բուսական բջիջների և հյուսվածքների *in vitro* կուլտիվացման տեխնոլոգիաները՝ մշակովի բույսերի առանձին տեսակների ու սորտերի բարելավման և նոր ձևերի ստեղծման ակնկալիքով:

Տեխնոլոգիայի հիմնական բաղադրյալներ են կազմում էքսպլանտի ընտրությունը, նրա աճեցումը և բազմացումը փորձանոթներում՝ որոշակի սննդարար միջավայրի վրա (*in vitro*), հիվանդությունների էլիմինացիան, կանխարգելումը, բույսերի աճման համար համապատասխան ջերմային և լուսային գործոնների ապահովումը և բույսերի աղապտացիան:

Շատ չեն հետազոտությունները այն մասին, թե ինչ ազդեցություն են ունենում ջերմային և լուսային գործոնների տարբեր մակարդակները կարտոֆիլի *in vitro* բուսակների արտադրողականության վրա: Սակայն կան աշխատանքներ, որտեղ հստակ նշվում է լույսի վճռորոշ դերը կարտոֆիլի բույսերի աճը և զարգացումը կարգավորելու գործում [11]:

Ուսումնասիրություններով հաստատվել է, որ լյումինեսցենտային լամպերի կարմիր լույսի ազդեցության տակ գտնվող կարտոֆիլի բույսերը ավելի թույլ և բարակ են ստացվում՝ փոքր տերևներով, մինչդեռ կապույտ լյումինեսցենտային լամպերի տակ գտնվող բույսերը լինում են ամուր՝ լավ զարգացած տերևներով [3, 8, 9]: Դեղին լույսը, որը ստացվում է սառը սպիտակ լյումինեսցենտային լամպերի միջոցով, որոնք հազեցված են դեղին ֆիլտրերով, նպաստում է կարտոֆիլի *in vitro* բույսերում ցողունի աճին [10]:

Այնուամենայնիվ, խնդրո առարկա հիմնահարցը հիմնովին պարզաբանված չէ, կարիք ունի հետագա փորձարկումների և հիմնավորումների:

Մեր հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել կարտոֆիլի տնկանյութի ստացման պրոցեսում լույսի սպեկտրի, ինտենսիվության և լուսային օրվա տևողության ազդեցությունը մի քանի կարևորագույն սորտերի *in vitro* բուսակների աճի ու զարգացման գործընթացների վրա ֆիտոտրոնի պայմաններում, առաջարկել լուսային գործոնի այն լավագույն տարբերակները, որոնց դեպքում *in vitro* մեկ բուսակից ստացվում է մինիպալարների առավելագույն ելքը:

Նպատակին հասնելու համար խնդիր է դրվել պարզել.

1. Ի՞նչ ազդեցություն ունեն լույսի սպեկտրը, ինտենսիվությունը և լուսային օրվա տևողությունը կարտոֆիլի *in vitro* բուսակների աճի ու զարգացման գործընթացների վրա:
2. Արդյո՞ք նույն պայմաններում աճեցված կարտոֆիլի տարբեր սորտերի մոտ լույսի գործոնը կարող է ունենալ տարբեր ազդեցություններ:
3. Ի՞նչ բաղադրության ու ինտենսիվության լույսի և քանի՞ ժամ լուսավորվածության պայմաններում կստացվեն ամենամեծ քանակությամբ մինիպալարները մեկ *in vitro* բուսակից:

Նյութը և մեթոդները: Հետազոտությունները կատարվել են ՀԱԱՀ «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղում: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել կարտոֆիլի Ֆիալետովի, Ազիլա և Իմպալա սորտերը: Առողջացումը կատարվել է բույսի ապիկալ մերիսթեմայի միջոցով, համընդհանուր ընդունված մեթոդով: Ուսումնասիրվել են լույսի 4 տարբեր

- ինտենսիվություններ՝ 2000 լյուքս, 3000 լյուքս, 4000 լյուքս և 6000 լյուքս,
- սպեկտրներ՝ սպիտակ, կարմիր, կապույտ ճառագայթներ և կարմիրի ու կապույտի համադրությունը,
- տևողություններ՝ 6 ժամ, 8 ժամ, 12 ժամ և 16 ժամ:

Փորձերը դրվել են 3-ական կրկնողություններով: Ֆիտոտրոնում բուսակների աճի ու զարգացման ընթացքում ուսումնասիրվել են դրանց աճման ինտենսիվությունը, վեգետատիվ օրգանների զարգացման ընթացքը, հետագայում՝ դրանց ադապտացիայի ընթացքը, արտադրողականությունը, մինիպալարների ելքը: Ռեզենտացված բուսակներում ստուգվել է վիրուսների առկայությունը, իսկ առողջ բույսերն

օգտագործվել են հետագա կտրոնավորումների համար: Մեկ մայր բույսից ստացվել են 5–9 հատ դուստր բուսակներ, որոնք տնկվել են 0,1 մգ/լ ինդոլիլ-3-քացախաթթու պարունակող Մուրաշիգե Սկուզ (MS) միջավայրում: 3-4 կտրոնավորումից հետո զարգացած արմատային համակարգով բույսերը տնկվել են բուսամաններում և աճեցվել ջերմատան պայմաններում:

Արդյունքները և վերլուծությունը: Կարտոֆիլը լուսասեր մշակաբույս է, սակայն, ըստ բույսերի ժամանակակից ֆոտոպարբերական դասակարգման, կարտոֆիլի սորտերը դասակարգվում են որպես կարճ օրվա բույսեր, այսինքն՝ այնպիսիները, որոնց զարգացման համար կարճ օրը խիստ անհրաժեշտ չէ, սակայն այն արագացնում է: Կարտոֆիլի տարբեր սորտերի մոտ օրվա տևողության նկատմամբ պահանջը տարբեր է լինում [6]:

Լույսի սպեկտրալ կազմը և դրա որակը, լուսավորության ինտենսիվությունը ազդում են բույսի ֆիզիոլոգիական զարգացման վրա: Զգալի նշանակություն ունեն և՛ սեզոնային, և՛ ամենօրյա դինամիկան [5]:

Հետազոտությունն իրականացնելիս խնդիր է դրվել ուսումնասիրել կարտոֆիլի *in vitro* բուսակների աճի, զարգացման և մինիպալարների ձևավորման վրա լույսի սպեկտրի, ինտենսիվության և լուսային օրվա տևողության ազդեցության փոփոխությունները: Չնայած ուսումնասիրությունները ի սկզբանե ընդգրկում էին նաև առանձին կարմիր և կապույտ լույսերը, ինչպես նաև 6000 լյուքս լուսավորությունն ու 16 ժամ լուսային օրվա տևողությունը, սակայն այդ տարբերակները լիովին անարդյունավետ էին, և բույսերը մինչև փորձի ավարտ չպահպանվեցին: Դա է պատճառը, որ այդ տարբերակները բացակայում են տվյալների աղյուսակներում:

Մեծ թվով տարբերակների և դրանց համապատասխան կրկնողությունների առկայությամբ պայմանավորված՝ մերիսթեմայի անջատումը և ռեգեներացիան կատարվել է 2 ժամկետում՝ մարտի 7-ին և 9-ին: Մերիսթեմա կրող փորձանոթները տեղադրվել են համապատասխան լուսային պայմաններում, և հետևելով զարգացման ընթացքին՝ արձանագրվել են բույսերի ռեգեներացիայի սկիզբը, բազմացման գործակիցը, արմատագոյացման սկիզբը, ինչպես նաև ադապտացիայի տոկոսը (աղյուսակ 1):

Ռեգեներանտ բույսերը կտրոնավորվել են՝ յուրաքանչյուր միկրոկտրոնը տեղադրելով 1 փորձանոթում:

Աղյուսակ 1.

Լույսի գործոնի ազդեցությունը կարտոֆիլի մի քանի սորտերի in vitro բուսակների ձևավորման և ադապտացիայի ընթացքի վրա

Լույսի			Կարտոֆիլի սորտը	Մերիտթենայի տեղադրում սննդ. միջավայրում	Բույսերի ռեգեներացիայի սկիզբը	Արմատագոյացման սկիզբ	Բազմացման գործակիցը	Ադապտացիա, %
սպեկտրը	ինտենսիվությունը, լյուքս	տևողությունը, ժամ						
Սպիտակ լույս	2000	6	Իմպալա	07.03	20.03	06.05	1:5	95
			Ագիլա	07.03	22.03	04.05	1:6	95
			Ֆիալետովի	07.03	21.03	05.05	1:5	95
		8	Իմպալա	07.03	20.03	04.05	1:6	95
			Ագիլա	07.03	20.03	04.05	1:6	95
			Ֆիալետովի	07.03	21.03	05.05	1:7	95
		12	Իմպալա	07.03	20.03	05.05	1:8	95
			Ագիլա	07.03	19.03	03.05	1:7	95
			Ֆիալետովի	07.03	20.03	04.05	1:8	95
	3000	6	Իմպալա	07.03	19.03	05.05	1:5	95
			Ագիլա	07.03	20.03	04.05	1:5	95
			Ֆիալետովի	07.03	21.03	05.05	1:5	95
		8	Իմպալա	07.03	19.03	06.05	1:7	95
			Ագիլա	07.03	20.03	04.05	1:7	95
			Ֆիալետովի	07.03	20.03	04.05	1:8	95
		12	Իմպալա	07.03	19.03	04.05	1:8	95
			Ագիլա	07.03	19.03	06.05	1:8	95
			Ֆիալետովի	07.03	19.03	03.05	1:9	95
	4000	6	Իմպալա	07.03	19.03	06.05	1:3	95
			Ագիլա	07.03	21.03	05.05	1:4	95
			Ֆիալետովի	07.03	20.03	05.05	1:5	95
		8	Իմպալա	07.03	19.03	04.05	1:5	95
			Ագիլա	07.03	20.03	04.05	1:5	95
			Ֆիալետովի	07.03	19.03	03.05	1:5	95
12		Իմպալա	07.03	20.03	05.05	1:5	95	
		Ագիլա	07.03	19.03	04.05	1:5	95	
		Ֆիալետովի	07.03	19.03	03.05	1:6	95	
Կարմիր-կապույտ լույս	2000	6	Իմպալա	09.03	22.03	05.05	1:4	90
			Ագիլա	09.03	22.03	04.05	1:5	90
			Ֆիալետովի	09.03	23.03	05.05	1:6	90
		8	Իմպալա	09.03	20.03	04.05	1:5	90
			Ագիլա	09.03	20.03	05.05	1:4	90
			Ֆիալետովի	09.03	20.03	04.05	1:6	90
		12	Իմպալա	09.03	20.03	04.05	1:4	90
			Ագիլա	09.03	21.03	05.05	1:6	90
			Ֆիալետովի	09.03	20.03	05.05	1:7	90

	3000	6	Իմպալա	09.03	21.03	04.05	1:4	90	
			Ագիլա	09.03	22.03	05.05	1:5	90	
			Ֆիալետովի	09.03	21.03	05.05	1:5	90	
		8	Իմպալա	09.03	23.03	05.05	1:5	90	
			Ագիլա	09.03	22.03	05.05	1:5	90	
			Ֆիալետովի	09.03	22.03	03.05	1:6	90	
		12	Իմպալա	09.03	20.03	03.05	1:5	90	
			Ագիլա	09.03	21.03	05.05	1:6	90	
			Ֆիալետովի	09.03	21.03	03.05	1:6	90	
	000	4	6	Իմպալա	09.03	21.03	05.05	1:5	90
				Ագիլա	09.03	21.03	04.05	1:3	90
				Ֆիալետովի	09.03	22.03	06.05	1:5	90
8		Իմպալա	09.03	19.03	05.05	1:8	90		
		Ագիլա	09.03	20.03	03.05	1:5	90		
		Ֆիալետովի	09.03	20.03	04.05	1:5	90		
12		Իմպալա	09.03	22.03	06.05	1:5	90		
		Ագիլա	09.03	21.03	03.05	1:4	90		
		Ֆիալետովի	09.03	20.03	04.05	1:6	90		

Բույսերի ռեգեներացիան սկսվել է մերիսթեմայի անջատումից մոտ 15 օր հետո, 1-10 օր ընդմիջումներով: Արդյունքում ամենաշուտը ռեգեներացվել են կարմիր+կապույտ լույսի 4000 լյուքս լուսավորության և 8 ժամ լուսային օրվա պայմաններում գտնվող Իմպալա սորտի բույսերը՝ մերիսթեմայի անջատումից 10 օր անց, ինչպես նաև սպիտակ լույսի 4000 լյուքս լուսավորության, 8 ժամ լուսային օրվա պայմաններում գտնվող Իմպալա և Ֆիալետովի սորտերի բույսերը՝ մերիսթեմայի անջատումից 12 օր անց: Ամենաուշը ռեգեներացվել են սպիտակ լույսի 2000 լյուքս լուսավորության և 6 ժամ լուսային օրվա պայմաններում գտնվող Ագիլա սորտի բույսերը:

Բույսերի արմատագոյացումը սկսվել է միկրոկոտրոնների տեղադրումից 45-48 օր հետո՝ սպիտակ լույսի պարագայում, և 42-44 օր հետո՝ կարմիր+կապույտ լույսի պարագայում: Հստակ երևում է, որ կարմիր+կապույտ լույսի առկայությունը խթանում է արմատագոյացման ընթացքը և արագացնում այն: Սպիտակ լույսի պարագայում ամենաուշը արմատագոյացման են անցել Իմպալա սորտի բուսակները՝ 2000 լյուքս լուսավորության և 6 ժամ լուսային օրվա պայմաններում: Նույն պայմաններում գտնվող Ագիլա և Ֆիալետովի սորտերի բուսակները 1-2 օրով ավելի շուտ են անցել արմատագոյացման: Կարմիր+կապույտ լույսի պարագայում ամենաուշը արմատագոյացման են անցել կրկին Իմպալա սորտի բուսակները՝ 3000 լյուքս լուսավորության և 6 ժամ

լուսային օրվա պայմաններում: Ազիլա և Ֆիալետովի սորտերի բուսակները ընդամենը 1 օրով են ավելի շուտ արմատներ գոյացրել:

Յուրաքանչյուր միկրոցողունից ստացվել է բուսակների տերևահանգույցների տարբեր քանակներ, որոշվել է միկրոբազմացման գործակիցը: Փորձարկվող տարբերակներում բույսերի բազմացման գործակիցը տատանվում է 3-9-ի սահմաններում: Միջինում բույսերի մեծամասնությունն ունեցել են 5-6 բազմացման գործակից: Ամենացածր բազմացման գործակից ունեցել են կարմիր+կապույտ լույսի 4000 լյուքս լուսավորության և 6 ժամ լուսային օրվա պայմաններում գտնվող Ազիլա սորտի բուսակները: Բազմացման մեծ գործակցով (1:9) աչքի են ընկել սպիտակ լույսի 3000 լյուքս լուսավորության և 12 ժամ լուսային օրվա պայմաններում գտնվող Ֆիալետովի սորտի բույսերը:

Ադապտացիայի ընթացքում գրեթե բոլոր բույսերը հարմարվել են միջավայրի պայմաններին: Սպիտակ լույսի տակ գտնվող բույսերը ավելի լավ են հարմարվել միջավայրի պայմաններին՝ անկախ լուսավորվածության աստիճանից և լուսային օրվա տևողությունից՝ ապահովելով 95% կաչողականություն, իսկ կարմիր+կապույտ լույսի տակ գտնվողները՝ 90%:

Կարտոֆիլի սերմնաբուծությունում հատուկ տեղ է հատկացվում *in vitro* բուսակներից մինիպալարների ստացման տեխնոլոգիային, որի համար շատ կարևոր է ջերմային և լուսային գործոնների կարգավորումը՝ առավելագույն ելք ստանալու համար [1, 2, 7]: Մեր կողմից կատարված հետազոտությունները ընդգրկել են նաև լույսի գործոնի ազդեցության ուսումնասիրությունը մինիպալարների ելքի վրա: Արձանագրվել են 1 բույսի մինիպալարների քանակը, 1 մինիպալարի միջին կշիռը և 1 բույսի մինիպալարի բերքատվությունը (աղյուսակ 2):

Յուրաքանչյուր բույսից ստացվել է միջինում 4-6 մինիպալար, չնայած տարբերակների մեծամասնությունում եղել է 5 մինիպալար: Առավելագույն՝ 6 մինիպալարի քանակով աչքի են ընկել միայն Ֆիալետովի սորտի բույսերը՝ սպիտակ լույսի 3000 լյուքս լուսավորության, 8 և 12 ժամ լուսային օրվա տևողության պայմաններում, ինչպես նաև կարմիր+կապույտ լույսի 3000 ու 4000 լյուքս լուսավորությունների և 8 ժամ լուսային օրվա պայմաններում: Լուսավորության որոշ տարբերակներում 1 բույսից ընդամենը 4 մինիպալար են ձևավորել Ազիլա սորտի բուսակները: Ակնհայտ է, որ բացի լույսի

ազդեցությունից, այստեղ իր ուրույն դերն ունի նաև սորտի պոտենցիալը:

Աղյուսակ 2.

Լույսի գործոնի ազդեցությունը կարտոֆիլի մի քանի սորտերի մինիպալարների ձևավորման վրա

Լույսի			Կարտոֆիլի սորտը	1 բույսի մինիպալարների քանակը, հատ	1 մինիպալարի միջին կշիռը, գ	1 բույսի բերքատվությունը (մինիպալարի), գ
սպեկտրը	ինտենսիվությունը, լյուքս	տևողությունը, ժամ				
Սպիտակ լույս	2000	6	Իմպալա	4	22	88
			Ագիլա	4	23	92
			Ֆիալետովի	5	25	125
		8	Իմպալա	5	24	120
			Ագիլա	5	25	125
			Ֆիալետովի	5	24	120
		12	Իմպալա	5	24	120
			Ագիլա	5	24	120
			Ֆիալետովի	5	25	125
	3000	6	Իմպալա	5	24	120
			Ագիլա	5	23	115
			Ֆիալետովի	5	25	125
		8	Իմպալա	5	23	115
			Ագիլա	5	23	115
			Ֆիալետովի	6	30	180
		12	Իմպալա	5	24	120
			Ագիլա	5	24	120
			Ֆիալետովի	6	25	150
	4000	6	Իմպալա	5	24	120
			Ագիլա	4	24	96
			Ֆիալետովի	5	23	115
		8	Իմպալա	5	25	125
			Ագիլա	5	25	125
			Ֆիալետովի	5	26	130
12		Իմպալա	5	25	125	
		Ագիլա	4	26	104	
		Ֆիալետովի	5	24	120	
Կարմիր-կապույտ լույս	2000	6	Իմպալա	5	20	100
			Ագիլա	4	20	80
			Ֆիալետովի	5	21	105
		8	Իմպալա	5	24	120
			Ագիլա	5	25	125
			Ֆիալետովի	5	25	125
12	Իմպալա	5	23	115		

	3000		Ագիլա	5	23	115
			Ֆիալետովի	5	24	120
		6	Իմպալա	5	22	110
			Ագիլա	5	22	110
		8	Ֆիալետովի	5	24	120
			Իմպալա	5	24	120
	4000	6	Իմպալա	5	23	115
			Ագիլա	4	23	92
		8	Ֆիալետովի	5	24	120
			Իմպալա	5	24	120
		12	Ագիլա	5	24	120
			Ֆիալետովի	6	28	168
		6	Իմպալա	5	20	100
			Ագիլա	5	20	100
		8	Իմպալա	5	20	100
			Ֆիալետովի	5	22	110

Մեկ մինիպալարի կշիռը, ըստ սորտերի և տարբերակների, տատանվել է 20-30 գրամի սահմաններում: Մինիպալարների խոշորությամբ կրկին առանձնացել են Ֆիալետովի սորտի բույսերը: Ամենախոշորները եղել են սպիտակ լույսի 3000 լյուքս լուսավորության և 8 ժամ լուսային օրվա տևողության պայմաններում (30 գ): Ընդամենը 2 գ-ով նրան զիջում են կարմիր+կապույտ լույսի 4000 լյուքս լուսավորության և 8 ժամ լուսային օրվա տևողության պայմաններում եղած բուսակները: Ամենամանր մինիպալարներ ստացվել են կարմիր+կապույտ լույսի 2000 լյուքս լուսավորության և 6 ժամ լուսային օրվա տևողության պայմաններում աճած Ագիլա և Իմպալա սորտերի բուսակներից:

Մեկ բույսից ստացված մինիպալարների քանակի և մեկ մինիպալարի միջին կշռի հիման վրա հաշվարկվել է մինիպալարների էլքը մեկ բույսից: Մեկ բույսից, ըստ տարբերակների և սորտերի, ստացվում է 80-180 գ մինիպալար: Առավելագույն բերքատվություն, բնականաբար, ապահովել են սպիտակ լույսի 3000 լյուքս լուսավորության և 8 ժամ լուսային օրվա տևողության պայմաններում եղած Ֆիալետովի սորտի բուսակները:

Եզրակացություն.

1. Լույսի սպեկտրը, ինտենսիվությունը և լուսային օրվա տևողությունը իրենց էական ազդեցությունն են ունենում

կարտոֆիլի *in vitro* բուսակների աճի, զարգացման, ադապտացիայի ընթացքի և մինիպալարների ելքի վրա:

2. Արմատագոյացումն ավելի արագ է ընթանում կարմիր+կապույտ լույսի պայմաններում լույսի ինտենսիվությունն ու լուսային օրվա տևողությունը այստեղ էական ազդեցություն չեն ունեցել:
3. Բազմացման մեծ գործակից է ստացվում սպիտակ լույսի 3000 լյուքս լուսավորության և 12 ժամ լուսային օրվա պայմաններում գտնվող բուսակներից:
4. Ադապտացիան առավել լավ է ընթանում սպիտակ լույսի տակ գտնվող բույսերի մոտ անկախ լույսի ինտենսիվությունից և տևողությունից:
5. Մեկ բույսից ստացված մինիպալարների քանակով աչքի են ընկնում լույսի 3000 և 4000 լյուքս ինտենսիվության և 8-12 ժամ տևողության պայմաններում աճած Ֆիալետովի սորտի բույսերը, որոնք առավելագույն բերքատվությունը ապահովում են սպիտակ լույսի պայմաններում:

Այսպիսով, կարտոֆիլի մերիսթեմային բույսերի ֆիտոտրոնային բազմացման սկզբնական շրջանում կարելի է ապահովել կարմիր և կապույտ լույսերի համատեղ ազդեցություն՝ արմատագոյացումը խթանելու համար, այնուհետև անցում կատարել սպիտակ լույսին՝ սահմանելով 3000 լյուքս լուսավորություն և 8 ժամ լուսային օր, քանի որ դրանից ավելի բարձր լուսավորության և օրվա տևողության պայմաններում նշանակալի բարձր առավելություն չի արձանագրվում:

**ВЛИЯНИЕ СВЕТОВОГО ФАКТОРА НА ПРОЦЕССЫ РОСТА И
РАЗВИТИЯ РАСТЕНИЙ КАРТОФЕЛЯ *IN VITRO* В УСЛОВИЯХ
ФИТОТРОНА
Петросян А. А.**

На продуктивность растений картофеля *in vitro* большое влияние оказывают факторы окружающей среды. Целью наших исследований было изучение влияния светового состава, интенсивности и продолжительности светового дня в процессе получения посадочного материала картофеля на процессы роста и развития нескольких важных сортов растений *in vitro* в условиях Фитотрона, предложить оптимальные варианты по световому фактору которых, в условиях *in vitro*, максимальный выход миниклубней получается с одного растения. В

результате, в начальный период фитотронного размножения меристемных растений картофеля можно обеспечить сочетание действий красного и синего света, затем перейти на белый свет, установив освещенность 3000 лк и 8-часовой световой день.

Ключевые слова: картофель, *in vitro* растение, адаптация, фитотрон, миниклубень, световой фактор.

INFLUENCE OF THE LIGHT FACTOR ON THE PROCESSES OF GROWTH AND DEVELOPMENT OF POTATO PLANTS *IN VITRO* UNDER PHYTOTRON CONDITIONS

Petrosyan A. A.

The productivity of potato plants *in vitro* is strongly influenced by environmental factors. The purpose of our research is to study the effect of the light composition, intensity and duration of daylight hours in the process of obtaining potato planting material on the growth and development of several important plant varieties *in vitro* under Phytotron conditions, to propose optimal options for the light factor, which, under *in vitro* conditions, the maximum yield minitubers are obtained from one plant. As a result, in the initial period of phytotron propagation of meristem culture of potato plants, it is possible to provide a combined effect of red and blue light, then switch to white light by setting the illumination to 3000 lux and 8-hour daylight hours.

Keywords: potato, *in vitro* plant, adaptation, phytotron, minituber, light factor.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кокшарова М. К., Лепп Ф. Р., Келик Л. А. Влияние внешних факторов на образование микроклубней *in vitro* и использование их в оригинальном семеноводстве картофеля. Пермский аграрный вестник №3 (23) 2018. с. 60-66
2. Кононенко А. Н. Влияние различных источников света на развитие минирастений картофеля в условиях светокультуры. Агронотомия. Ветеринария и Зоотехния. 2016. с. 50-56
3. Мартиросян Ю. Ц., Диловарова Т. А., Мартиросян В. В., Креславский В. Д., Кособрюхов А. А. Действие светодиодного облучения разного спектрального состава на фотосинтетический аппарат растений картофеля (*Solanum tuberosum* L.) в культуре *in vitro*. Сельскохозяйственная биология, 2016, том 51, № 5, с. 680-687

4. Саакян А. Д., Барсегян А. А., Мелян Г. Г., Мартиросян Ю. Ц. Сравнительная оценка урожая миниклубней картофеля, полученных из in vitro-растений в теплице и в аэропоники. Субтропическое и декоративное садоводство. 2018, 66. с. 179-184 doi: 10.31360/2225-3068-2018-66-179-184
5. Тихомиров А. А. Светокультура растений в теплицах /А. А. Тихомиров, В. П. Шарупич, Г. М. Лисовский // Издательство СО РАН. – Новосибирск.
6. Федорова Ю. Н., Лебедева Н. В., Влияние света разного спектрального состава на рост растений картофеля in vitro. Известия Великолукской ГСХА, 2016. №4, с. 2-7
7. Фомин Д. С., Чухланцев Н. В. Исследование эффективности использования различных источников света при выращивании картофеля in vitro. Спецвыпуск «Фотон-Экспресс-Наука 2019». 2019, №6, с. 74-75. DOI 10.24411/2308-6920-2019-16033
8. Aksenova N. P., Konstantinova T. N., Sergeeva L. I., Machachkova I., Golyanovskaya S. A. 1994. Morphogenesis of potato plants in vitro. I. Effect of light quality and hormones. Journal of Plant Growth Regulation, 13, 143-146.
9. Morphogenesis of Potato Plant in vitro. I Effekt of light quality and hormones /N. P. Aksenova, T. N. Konstantinova, L. I. Sergeeva, I. Machachkova, S. A. Golyanovskaya// J. Plant Growth Regul. – 2014. – V.13. – P.143-146
10. Seabrook J E A, Douglass L. K. 1998. Prevention of stem growth inhibition and alleviation of intumescence formation in potato plantlets in vitro by yellow filters. American Journal of Potato Research, 5, 219-224.
11. Seabrook J E A. 2005. Light effects on the growth and morphogenesis of potato (*Solanum tuberosum*) in vitro: A review. American Journal of Potato Research, 82, 353-367.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Պետրոսյան Ա. Ա. – մագիստրատուրա 2-րդ կուրս

ՀԱԱՀ, Ազրոնոմիական ֆակուլտետ, Ջերմաստնային ագրոտեխնոլոգիա

Էլ. փոստ anpetrosyan1999@mail.ru

Գիտական ղեկավար՝ Ալոյան Տ.

Ստացվել է՝ 21.10.2022

Գրախոսվել է՝ 12.12.2022

**ՀԱԿԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ԴԵՂԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՍԵՁՈՆԱՅՆՈՒԹՅԱՆ XYZ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՐՄԿ ՔԱՂԱՔԻ ԴԵՂԱՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ
Ստրեկովա Տ. Վ.**

Ամեն տարի հակավիրուսային դեղամիջոցների արժեքը ավելանում է: Մեր կարծիքով, որպեսզի ճիշտ պլանավորել այդ դեղամիջոցների գնումը արտադրողից, շատ կարևոր է իմանալ, թե որ հակավիրուսային դեղամիջոցներն են այսօր առավել պահանջված, և արդյոք դրանց պահանջարկը սեզոնային է:

Բանալի բառեր. XYZ վերլուծություն, վաճառքի սեզոնայնություն, հակավիրուսային դեղամիջոցներ, գնման պլանավորում:

Նախաբան: Աշխարհում իր քանակով և հաճախականությամբ վիրուսային հիվանդություններից առաջին տեղն է զբաղեցնում գրիպը (կազմում է վարակիչ հիվանդությունների 95%), որը սուր շնչառական վիրուսային հիվանդություն է: Ռուսաստանում ամեն տարի 28-41 մլն. մարդ հիվանդանում է գրիպով և այլ շնչառական հիվանդություններով: Գրիպի բռնկումները տարբեր խմբերում տեղի են ունենում տարվա աշուն-ձմեռ ժամանակահատվածում և շարունակվում են մոտ 6-8 շաբաթ: Այդ պատճառով էլ ինչպես ցանկացած տարածաշրջանի, այնպես էլ Կուրսկ քաղաքի դեղատներում հակագրիպային պրեպարատների պահանջարկը ավելանում է:

Աշխատանքի նպատակն է 2017 թվականի հունվար և փետրվար ամիսներին առավել շատ պահանջարկ ունեցող հակավիրուսային դեղամիջոցների մասով հարցման վերլուծումը:

Նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ էր՝

- մանրամասն ուսումնասիրել հակագրիպային դեղամիջոցների տեսականին,
- կազմել հարցաթերթիկ և դեղատների աշխատակիցների շրջանում անցկացնել հարցում,
- իրականացնել վաճառքի XYZ վերլուծություն,
- բացահայտել ավելի կայուն վաճառվող դեղամիջոցներ:

Ներկայումս կենցաղում և բժշկական պրակտիկայում լայնորեն օգտագործվում են հակավիրուսային դեղամիջոցները: Հակավիրուսային

դեղամիջոցները պարունակում են այնպիսի նյութեր, որոնք ճնշում են այն մանրէների և վիրուսների կենսագործունեությունը, որոնք, ընկնելով մարդու օրգանիզմ, առաջացնում են տարբեր հիվանդություններ:

Գնալով ամեն տարի հակավիրուսային դեղամիջոցների նշանակությունը աճում է:

Մեր կարծիքով, որպեսզի ճիշտ պլանավորել դեղերի գնումը արտադրողից, շատ կարևոր է իմանալ, թե հակավիրուսային որ դեղամիջոցներ են այսօր առավել շատ պահանջված, և արդյոք պահանջարկը սեզոնային է:

Բոլոր հակավիրուսային դեղամիջոցները բաժանվում են հետևյալ խմբերի.

- Հակավիրուսային դեղամիջոցներ, որոնք պարունակում են հակահիստամինային և իմունոմոդուլյար պրեպարատներ (անաֆերոն, արբիդոլ), քիմիական ազդեցություն ունեն վիրուսի վերարտադրման վրա և նպաստում են սեփական ինտերֆերոնի արտադրմանը:
- Միջոցներ, որոնք պարունակում են ինտերֆերոն (գրիպֆերոն, ալֆարոն): Ինտերֆերոնը բնական սպիտակուցային կառուցվածք ունի, որի շնորհիվ մարմնի բջիջները դառնում են վիրուսային բջիջների նկատմամբ անընկալունակ:
- Ինտերֆերոնի խթանիչներ (կագոցել, լավոմաքս): Մրանք ակտիվացնում են օրգանիզմում այն գործընթացները, որոնք խթանում են բջիջների կողմից ինտերֆերոնի արտադրումը:
- Նեյրամինիդազայի ինհիբիտորներ (տամիֆլու, ռելենգա): Այս պրեպարատները ճնշում են նեյրամինիդազան (վիրուսի սպեցիֆիկ սպիտակուցներ), որը դադարեցնում է դրա հետագա զարգացումը:

Մեր կողմից իրականացվել է հարցում Կուրսկ քաղաքի կենտրոնական շրջանի դեղատների դեղագործների շրջանում, որի արդյունքում պարզվել է, որ ամենապահանջված 10 դեղամիջոցներն են՝ ինգավիրին, ցիկլոֆերոն, կագոցել, գրիպֆերոն, ամիքսին, վիֆերոն, օցիլոկոկցինիում, տամիֆլու, անաֆերոն, արբիդոլ:

Հակավիրուսային դեղամիջոցների վաճառքի կայունության որոշման համար մենք օգտագործել ենք XYZ վերլուծությունը:

XYZ վերլուծությունը թույլ է տալիս որոշել ապրանքների կայունությունը և տեսականու մեջ առանձնացնել 3 խմբի ապրանքներ.

X - կայուն վաճառքի խումբ, որի մատակարարումը հեշտ է պլանավորել:

Y - միջին կայունության վաճառքի խումբ, որոնց վաճառքի ճշգրիտ կանխատեսումը նվազում է, իսկ դա նշանակում է հեշտությամբ սխալվել և գնել չիրացվող ապրանք:

Z - ոչ կայուն վաճառքի խումբ, որտեղ կանխատեսել ապրանքի պահանջարկը հնարավոր չէ:

Ըստ հարցման արդյունքների՝ պարզվել է յուրաքանչյուր դեղամիջոցի վաճառքի միջին արժեքը: Այս տվյալների հիման վրա կատարվել է վաճառքի գործակցի վերլուծություն (աղյուս. 1):

Աղյուսակ 1.

Հակավիրուսային դեղերի վաճառքի միջին արժեքները

	Ին- գա- վի- րին	Կա- գո- ցել	Տամի - ֆլու	Ար- բի- դոլ	Ա- միկ- սին	Օցիլոն - կոկ- ցի- նու	Անա- ֆերոն	Վիֆե- րոն	Ցիկլո- ֆերոն	Գրիպ - ֆերոն
Հունվար	9045	11234	9763	5697	875	3654	2875	923	375	598
Փետրվար	9431	9072	8485	6946	970	4004	3206	1030	493	784
Մարտ	9735	6304	3745	3763	926	4484	1562	690	260	804
Ապրիլ	5387	2657	4650	3311	908	1298	1324	256	357	258
Մայիս	7895	4587	4376	3365	965	3098	1209	538	378	674
Հունիս	8769	9730	3764	2376	854	2654	1106	987	276	893
Հուլիս	9524	4528	1923	1287	859	1879	1175	698	387	729
Օգոստոս	5689	7980	1985	1476	892	2865	1154	774	342	351
Սեպտեմբեր	8796	9075	3421	2567	963	2986	1287	762	380	730
Հոկտեմբեր	6754	5698	2130	1643	907	1287	1232	576	276	463
Նոյեմբեր	9875	8723	2154	1786	844	1543	1198	962	251	586
Դեկտեմբեր	9570	7629	4367	2451	897	2967	1169	981	375	490

XYZ վերլուծության անցկացման հաճախականությունը կախված է այն ապրանքներից, որոնց հետ աշխատում է ընկերությունը: Օրինակ, որքան թանկ է ապրանքը, այնքան ավելի քիչ է վաճառվում: Այդ դեպքում վերլուծությունը պետք է անցկացվի կես տարին մեկ կամ ավելի ուշ, քանի որ հաճախակի վերլուծության դեպքում նույն ապրանքը տարբեր ժամանակահատվածներում կարող է հայտնվել տարբեր (XYZ) խմբերում: Բացի դրանից, վերլուծության հաճախակի անցկացումը կախված է ապրանքի կյանքի ցիկլից: Որքան կարճ է ցիկլը, այնքան հաճախ է պետք անցկացնել վերլուծությունը: Կյանքի ցիկլի սկզբում ապրանքը իրեն ոչ անկայուն է պահում: Երբ նկատվում է պահանջարկի պիկը, ապրանքի վաճառքը ավելի կայուն է, իսկ անկման ժամանակ (կյանքի ցիկլի վերջում) կրկին նկատվում է վաճառքի մեծ անկայունություն: Վերլուծության հաճախակի անցկացման վրա ազդում է սեզոնայնությունը: Բայց քանի որ մեր դեպքում խոսքը գնում է

դեղագործական մանր բիզնեսի մասին, վերլուծության պարբերաբար անցկացումը ուսումնասիրվել է դեղատների համար:

Աղյուսակ 2.

Միջին արժեքից շեղման և վաճառքի տատանման գործակցի որոշումը


	Ինգա- վիրին	Կագո- ցել	Տամի- ֆլյու	Արբի- դոլ	Ամիկ - սին	Օցիլ- լո- կոկցի - նում	Անա- ֆերոն	Վի- ֆե- րոն	Ցիկ- լո- ֆե- րոն	Գրիպ - ֆերոն
Հունվար	9045	11234	9763	5697	875	3654	2875	923	375	598
Փետրվար	9431	9072	8485	6946	970	4004	3206	1030	493	784
Մարտ	9735	6304	3745	3763	926	4484	1562	690	260	804
Ապրիլ	5387	2657	4650	3311	908	1298	1324	256	357	258
Մայիս	7895	4587	4376	3365	965	3098	1209	538	378	674
Հունիս	8769	9730	3764	2376	854	2654	1106	987	276	893
Հուլիս	9524	4528	1923	1287	859	1879	1175	698	387	729
Օգոստոս	5689	7980	1985	1476	892	2865	1154	774	342	351
Սեպտեմբեր	8796	9075	3421	2567	963	2986	1287	762	380	730
Հոկտեմբեր	6754	5698	2130	1643	907	1287	1232	576	276	463
Նոյեմբեր	9875	8723	2154	1786	844	1543	1198	962	251	586
Դեկտեմբեր	9570	7629	4367	2451	897	2967	1169	981	375	490
Միջին արժեք	8372,5	7268,1	4230,3	3055,7	906,7	2726,6	1541,4	763,9	345,8	613,3
Միջին շեղում	1588,17	2530,1	2506,8	1733,9	41,7	1048,8	713,4	230,9	69,7	192,9
Վաճառքի ծավալ	100470	87217	50763	36668	10880	32719	18497	9167	4150	7359
Տատանման գործակից	18,97	34,8	59,3	56,7	4,6	38,5	46,3	30,2	20,2	31,5

Ապրանքների (դեղամիջոցների) մեծ մասը վաճառվում է շատ կայուն, ինչը նշանակում է, որ վերլուծության արդյունքները վերանայելու անհրաժեշտություն չկա: Տեսականու մեծ մասը, օրինակ՝ բժշկական սարքերը, ավելի քիչ կայուն պահանջարկ ունեն: Հաշվի առնելով որոշ դեղամիջոցների սեզոնայնությունը՝ արժե համադրել վերլուծության պարբերաբար անցկացման հետ (ձմեռային, ամառային և այլ ժամանակահատվածներ): Այսպիսով, վերլուծությունը անցկացվում է տարվա մեջ ամենաքիչը երկու անգամ: Վաճառքի փոփոխականությունը գնահատվում է մեր կողմից XYZ վերլուծության առաջին փուլում հաշվարկված տատանման գործակցի միջոցով: Տատանման գործակիցը հաշվելու բանաձևը ստանդարտ շեղման հարաբերությունն է վաճառքի ծավալի մաթեմատիկական սպասմանը: Տատանման գործակցի իմաստը վաճառքի ծավալի տոկոսային շեղումն է միջին արժեքից: Որքան մեծ է տատանման ցուցանիշը, այնքան քիչ կայուն է տվյալ տեսակի ապրանքի վաճառքի ծավալը: Հավաքված տվյալների հիման վրա կատարվել են

հաշվարկներ: Դրանց մեջ են՝ վաճառքի տատանման գործակիցը, ինչպես նաև վաճառքի միջին արժեքը, միջին քառակուսային շեղումը, կոնկրետ դեղամիջոցի վաճառքի ընդհանուր ծավալը (աղյուս. 2):

Մեր կողմից կատարվել է դեղամիջոցների խմբերի բաժանում՝ ըստ դրանց վաճառքի կայունության XYZ մակարդակներում: Նման բաշխումը ավելի արդյունավետ է գրաֆիկական մեթոդով, այսինքն՝ գրաֆիկ կառուցելով, որտեղ առանցքը գործակցի թվային արժեքն է, իսկ առանցքը ապրանքի անվանումն է:

XYZ խմբերը որոշվում են այնպես, ինչպես ցույց է տրված նկ. 3 -ում:



Նկ. 3. Հակավիրուսային դեղամիջոցների X, Y, Z խմբերի որոշումը:

Սկզբում միացնում ենք տատանման գրաֆիկի ծայրակետերը, այնուհետև ստացված ուղղին զուգահեռ տանում ենք շոշափողը և զուգահեռ տեղափոխում ենք մինչև գրաֆիկի առաջին դուրս եկած կետը: Ուղղի հատման գրաֆիկի այդ կետը X խմբի սահմանն է: Մեր X խմբի մեջ են մտնում ամիքսինը և ինգավիրինը: Նույն ձևով որոշում ենք Y և Z խմբերի դեղամիջոցները:

Այսպիսով, մեր կողմից անցկացրած հետազոտություններից պարզվեց, որ կայուն վաճառվող դեղամիջոցների խումբ իրականում գոյություն ունի: Ըստ հաշվարկների՝ ցիկլոֆերոնը, վիֆեռոնը, գրիպեֆերոնը և կազոցելը ամենակայուն վաճառվող դեղամիջոցներն են:

Անցկացրած հարցումը, այնուհետև կատարված մաթեմատիկական հաշվարկները թույլ են տալիս եզրակացնել, որ հակավիրուսային

դեղամիջոցների պահանջարկը կա շուրջտարին և չի կորելյացվում տարվա եղանակների փոփոխման հետ: Ստացվում է, որ յուրաքանչյուր անուն հակավիրուսային դեղամիջոցի վաճառքի միջին ծավալը տվյալ ժամանակահատվածում մնում է հաստատուն: Դա բացատրվում է նրանով, որ չնայած վիրուսային հիվանդությունները եղանակային բնույթ ունեն, այնուամենայնիվ դրանք բնակչության կողմից օգտագործվում են որպես մշտական պրոֆիլակտիկ միջոցներ:

XYZ АНАЛИЗ СЕЗОННОСТИ ПРОДАЖИ ПРОТИВОВИРУСНЫХ ПРЕПАРАТОВ НА ПРИМЕРЕ АПТЕК ГОРОДА КУРСК

Стребкова Т. В.

С каждым годом значение противовирусных препаратов возрастает. И, на наш взгляд, для того, чтобы правильно планировать закупку этих препаратов у производителей, очень важно понимать, какие противовирусные препараты на сегодня наиболее востребованы, и является ли спрос на них сезонным.

Ключевые слова: XYZ–анализ, сезонность продаж, противовирусные препараты, планирование закупок.

XYZ ANALYSIS OF SALE'S SEASONALITY OF ANTIVIRAL DRUGS BY EXAMPLE OF PHARMACIES OF KURSK

Strebkova T. V.

Every year the cost of antiviral drugs increases. And in our opinion, in order to properly plan the purchase of these drugs from manufacturers, it is important to understand which antiviral drugs are in demand today, and whether the demand for them is seasonal.

Keywords: XYZ-analysis, seasonality of sales, antiviral drugs, procurement planning.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бузукова Е. А. Анализ ассортимента и стабильности продаж с использованием ABC-анализа и XYZ-анализа. [Электронный ресурс] - Режим доступа. - URL: http://zakup.vl.ru/files/avs_i_huz_analizi.pdf.

2. Ксенофонтова О. Л., Новосельская Н. А. Моделирование деятельности торговой организации с помощью ABC-XYZ – анализа // Современные наукоемкие технологии. – 2013. – № 10-1. – С. 20-22.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարների մասին

Մտրերկուվա Տ. Վ. – 1-ին կուրս

Կուրսի պետական բժշկական համալսարան, Ընդհանուր բժշկության ֆակուլտետ,
Բուժական գործ

Էլ. փոստ՝ tatjana0412.s@gmail.com

Գիտական ղեկավարներ՝ Տետիսուվա Ե., մանկ. գիտ. թեկն.,
Գրիգորյան Գ., ֆիզմաթ գիտ. թեկն.

Ստացվել է՝ 07.11.2022
Գրախոսվել է՝ 08.12.2022

**ՊԱՏՐԻՆՋ ԴԵՂԱՏՈՒԻ (MELISSA OFFICINALIS L.) ՎԻՐՈՒՍԱԶԵՐԾ
ԲՈՒՍԱԿՆԵՐԻ ՍՏՍՑՈՒՄԸ IN VITRO ԲԱԶՄԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
Սուսնայան Դ. Ս., Գալստյան Ս. Ս.**


Հոդվածում ներկայացված են պատրինջ դեղատուի (*Melissa officinalis L.*) *in vitro* բազմացման տեխնոլոգիայի ուսումնասիրությունների արդյունքները առողջ բուսականների ստացման համար:

Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ *in vitro* բազմացման տեխնոլոգիայի ներդրմամբ ստացվում են հիվանդությունների հարուցիչներից զերծ, առողջացված բուսակներ, ինչն իր հերթին նպաստում է կատարվելիք պայքարի միջոցառումների դեմ ծախսերի նվազեցմանը և ապահովում բարձրորակ բերքի ստացում:

Բանալի բառեր. վայրի դեղաբույս, պատրինջ դեղատու, *in vitro*, մշակություն, առողջ բուսակ:

Պատրինջ դեղատուն (*Melissa officinalis L.*) պատկանում է շրթնածաղկազգիների (*Lamiaceae*) ընտաիքին և աշխարհում աճող 5 տեսակներից մեկն է, որը վայրի վիճակում աճում է ՀՀ-ում: Այն հակաօքսիդանտ և մեծ քանակությամբ էթերայուղեր պարունակող դեղաբույս է, գործածվում է դեղորայքի արտադրությունում, որպես թեյաբույս օգտագործվում է նաև թեյախառնուրդներում [1]:

2018թ.-ից Արարատի մարզի Սուրենավան համայնքի պայմաններում կատարել ենք դեղաբույսի վայրի ձևի տրանսպլանտացման աշխատանքներ՝ մշակության մեջ ներդրման համար: Մշակության արդյունքում պարզ է դարձել, որ պատրինջ դեղատուն դաշտային պայմաններում ձեռք է բերում Սեպտորիա (*Septoria*) սնկային հիվանդությունը (նկ. 1) [2]: Առողջ բուսակներ ստանալու համատեքստում մեր առջև խնդիր է դրվել մշակել *in vitro* բազմացման տեխնոլոգիա պատրինջ դեղատուի համար, ինչը կապահովի բարձրորակ բերքի ստացում:



Նկ. 1. Մեպտորիա (Septoria) հիվանդության առաջացում:

Բույսերի *in vitro* մշակությունը մեծ ազդեցություն ունի ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության վրա՝ ապահովելով բույսեր, որոնք անհրաժեշտ են բավարարելու անընդհատ աճող համաշխարհային պահանջարկը՝ կապված պարենի հետ: Այն վերջին ժամանակներում զգալի ներդրում է ունեցել գյուղատնտեսական գիտությունների առաջխաղացման գործում, և այսօր դրանք անփոխարինելի գործիք են ժամանակակից գյուղատնտեսության մեջ:

Աշխարհի մի շարք երկրներում գերակայությունը տրվում է բույսերի բազմացման *in vitro* եղանակին, որն ունի շատ առավելություններ վեգետատիվ բազմացման ավանդական մեթոդների նկատմամբ: Սակայն դեղաբույսերի բազմացման այս տեխնոլոգիան դեռևս շատ խոր ուսումնասիրված չէ Հայաստանի բնակլիմայական պայմաններում:

Հետևաբար պատրինջ դեղատուփ (*Melissa officinalis L.*) *in vitro* բազմացման տեխնոլոգիայի ուսումնասիրությունը այժմեական է և բխում է Հայաստանում վերոնշյալ ոլորտների և տնտեսության զարգացման ռազմավարությունից:

Նյութը և մեթոդը: Լաբորատոր աշխատանքները իրականացվել են ՀԱԱՀ «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաձյուղում:

In vitro բույսերի ստացման նպատակով կիրառվել է ապիկալ մերիսթեմայի աճեցման մեթոդը: Ապիկալ մերիսթեման ազատ է վիրուսներից և իրենից ներկայացնում է ակտիվորեն բազմացող բջիջների խումբ, որոնց չափսը կազմում է 0,2–0,4 մմ:

Միկրոբազմացման գործընթացը ընթացել է 4 փուլերով՝

- ներդնում կուլտուրա /մերիսթեմայի ինդուկցիա/,
- բողբոջների և ընձյուղների պրոլիֆերացիա,
- միկրոկտրոնավորում,
- միկրոկտրոնների արմատակալում:

Հյուսվածքային մշակությունը թույլ է տալիս արտադրել և տարածել գենետիկորեն միատարր, հիվանդությունից զերծ բուսանյութ: Բջիջների

և հյուսվածքների *in vitro* մշակությունը օգտակար գործիք է սումակլոնային վարիացիա առաջացնելու համար: Հյուսվածքների կուլտուրայով առաջացած գենետիկական փոփոխականությունը կարող է օգտագործվել որպես փոփոխականության աղբյուր՝ նոր կայուն գենոտիպեր ստանալու համար: Օգտագործվել է հյուսվածքային կուլտուրայի մեթոդը՝ մասնավորապես միկրոբազմացումը, որը շատ կարևոր երկրնորանք է բույսերի բազմացման ավանդական մեթոդների նկատմամբ:



Նկ. 2. Պատրինջ դեղատուի (*Melissa Officinalis L.*) *in vitro* ստացում:

Մեթոդի կիրառման փուլերը անցել են հետևյալ գործընթացների հաջորդականությամբ.

- մայր բույսի ընտրություն,
- բույսի թերմոթերապիա,
- էքսպլանտի անջատում,
- էքսպլանտի աճեցում և ռեգեներանտի ստացում,
- հիվանդությունների էլիմինացիա,
- սննդարար միջավայրերի վրա բույսերի միկրոբազմացում,
- բույսերի ադապտացիա:

Այս մեթոդի կիրառմամբ հնարավոր է եղել արտադրել բազմաթիվ առողջացած բույսեր (Նկ. 2) [4]:


Արդյունքները և վերլուծություն: *In vitro* բազմացման տեխնոլոգիայի կիրառմամբ ստացել ենք առողջ բուսակներ, որոնք, անցնելով ջերմատնային ադապտացիա, հնարավոր է եղել տեխափոխել բաց գրունտի պայմաններում աճեցման: Դաշտային մշակությունը կատարվել է Արարատի մարզի Սուրենավան համայնքի պայմաններում, որտեղ կատարվել է հողի մշակման աշխատանքներ՝ վար, փխրեցում, կուլտիվացիա, ախտահանում, որոշվել է տնկման համար համապատասխան ցանքի սխեման, որը հնարավորություն է տվել ավելի շատ բերք ստանալ (բույսի հիմնական բերք համարվում են տերևները):

Կատարել ենք կենսաչափումներ և ֆենոլոգիական փուլերի ուսումնասիրություններ (Նկ. 3):



Նկ. 3. Առողջ բույսերի կենսաչափումներ:

Ստացված արդյունքները համեմատելով անցած տարիների ավանդական եղանակով մշակության արդյունքների հետ՝ պետք է նշել, որ ունեցել ենք գոհացող արդյունք: (Գծ. 1)



Գծապատկեր 1. Պատրինջ դեղատուփի (*Melissa Officinalis L.*) բերքատվությունը ըստ տարիների (2020-2022թթ.):

Քանի որ բույսը բազմամյա է, տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությունը կարելի է համեմատել հաջորդ տարիների ընթացքում ստացվող բերքի հետ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ *in vitro* տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն է տալիս կրճատել կիրառվող պայքարի միջոցառումները, ստանալ որակյալ բերք և օգտագործել նվազագույն ռեսուրսներ մշակության համար:

Եզրակացություն.

- Մեթոդը կարելի է կիրառել պատրինջի և ազգակից դեղաբույսերի համար, այն արդյունավետ է և անուղղակիորեն նպաստել է բերքատվության աճի բարձրացմանը՝ ստացված բերքի (տերևների, ցողունների) որակի ապահովմամբ:
- *In vitro* մշակության տեխնոլոգիան ծախսատար է համարվում և ժամանակ պահանջող պրոցես, բայց բարձր արդյունք և արդյունավետություն է ապահովում:
- *In vitro* մշակության տեխնոլոգիայով ստացված առողջ բուսակների դաշտային մշակությունը ավելի արդյունավետ է, եթե կիրառվում են մշակության օրգանիկ կամ կանաչ տեխնոլոգիաներ:

Տվյալ հետազոտական աշխատանքները իրականացվել են Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող և Ագրոբիոտեխնոլոգիայի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն հիմնադրամի (ICARE) կողմից իրականացվող «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար» (ԱԳՐԻ ԲԵՄՓ) ծրագրի աջակցությամբ:

Բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ПОЛУЧЕНИЕ БЕЗВИРУСНЫХ РАСТЕНИЙ ЛЕКАРСТВЕННОЙ МЕЛИССЫ (MELISSA OFFICINALIS L.) В УСЛОВИЯХ РАЗМНОЖЕНИЯ IN VITRO

Сумбулян Д. С., Галстян С. С.

В статье представлены результаты научно-исследовательской работы по технологии *in vitro* размножения Melissa лекарственной (*Melissa Officinalis* L.) для получения здоровых саженцев.

В результате исследований выявлено, что при использовании технологии размножения *in vitro* получаются здоровые саженцы, что, в свою очередь, способствует снижению затрат на необходимые меры борьбы и обеспечивает получение урожая высокого качества.

Ключевые слова: дикорастущее лекарственное растение, Мелисса лекарственная, *in vitro*, выращивание, здоровый саженец.

OBTAINING VIRUS-FREE PLANTS OF MELISSA OFFICINALIS L. WITH IN VITRO PRODUCTION

Sumbulyan D. S., Galstyan S. S.

The article represents the results of research work on the *in vitro* technology of propagation of lemon balm (*Melissa officinalis* L.) to obtain healthy seedlings.

As a result of the research, it was revealed that when using *in vitro* reproduction technology, plants are obtained that are more resistant to diseases, which in turn helps to reduce the cost of the necessary control measures and ensures a high-quality crop.

Keywords: wild medicinal plant, *Melissa officinalis*, *in vitro*, cultivation, healthy seedling.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Abrahamyan A., “Changes in distribution and structure of wild *Melissa officinalis* L. Populations during the last decade in Armenia and implications for conservation”, ISSN 1691-5402 ISBN 978-9984-44-071-2 Environment. Technology. Resources Proceedings of the 8th International Scientific and Practical Conference. Volume II. Rēzeknes Augstskola, Rēzekne, RA Izdevniecība, 2011.
2. Seon-Ah Yanga, In-Young Cho, “Occurrence and Characterization of Leaf Spot Caused by Septoria melissae on Lemon Balm in Korea”, LWT - Food Sci Technol. 2008;41(3):391–400.
3. Moradkhani, H.; Sargsyan, E.; Bibak, H.; Naseri, B.; Sadat-Hosseini, M.; Fayazi- Barjin, A. and Meftahizade, H (2010) *Melissa officinalis* L., a valuable medicine plant: A review. J. Med. Plants. Rese. 4(25) 2753- 2759.
4. Viswambharan S. “Importance of in vitro technology to future conservation programmes worldwide”, 65: 549–554 (2010).

Տեղեկություններ հեղինակների և գիտական ղեկավարի մասին

Սումբուլյան Դ. Ս. - մագիստրատուրա 1-ին կուրս

ՀԱԱՀ, Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ, Ճշգրիտ գյուղատնտեսություն

Էլ. փոստ dsumbulyan@gmail.com

Գալստյան Ս. Ս. - մագիստրատուրա 1-ին կուրս

ՀԱԱՀ, Ագրոնոմիական ֆակուլտետ, Ջերմատնային ագրոտեխնոլոգիա

Գիտական ղեկավար՝ Աբրահամյան Ա., կենս. գիտ. դոկ.

Ստացվել է՝ 29.11.2022

Գրախոսվել է՝ 06.12.2022

**ԱՐՑԱԽԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՎԵԼ ԿԻՐԱՌԵԼԻ ՈՐՈՇ
ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈւՍՈւՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ղարամյան Ա. Ս.

Աշխատանքում ներկայացվում են Արցախի ֆլորայի տնտեսապես արժեքավոր որոշ բույսերի տարածվածությունը, 2020-2022թթ. ընթացքում կատարված ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների արդյունքները: Արցախի բուսական աշխարհն իր մեջ ընդգրկում է արժեքավոր այնպիսի տեսակներ, որոնք միաժամանակ հանդիսանում են եթերայուղատու, ներկատու, սննդային, համեմունքային և դեղատու:

Բանալի բառեր. Արցախ, կերբելուկ, շուշանբանջար, աստղիկ, անմոռուկ, դանդուռ, հորթալեզու, շրեշ, սիբեխ, գինագոխ:

Արցախը գտնվում է Փոքր Կովկասի հարավարևելյան մասում: Մակերևույթը տիպիկ լեռնային է: Արցախի տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1100 մ [3]:

Արցախի ֆլորայում գրանցվել են 2027 տեսակի անոթավոր բույսեր, որոնք պատկանում են 653 ցեղերի և 127 ընտանիքների [2]:

Սկսած հնադարից՝ հայ ժողովուրդն իր գոյությունը պահպանել է որսորդությամբ, ձկնորսությամբ և վայրի բույսերի օգտագործմամբ՝ փոխանցելով այդ ավանդույթը սերունդներին: Պատմական տվյալները ցույց են տալիս, որ հայ ժողովուրդը դարերի ընթացքում մշակովի բանջարեղենին ու կանաչեղենին զուգընթաց գործածել է նաև մեծ քանակությամբ վայրի ուտելի բույսեր: Հայկական լեռներում կարող ենք գտնել բազմաթիվ ուտելի բույսեր: Դրանցից մի քանիսն աչքի են ընկնում իրենց յուրահատուկ բուրմունքով և համով: Կազմելով հայ ժողովրդի մի մասնիկը՝ Արցախի բնակչությունը ևս շատ է օգտագործում իր կենցաղում ուտելի բույսեր: Արցախի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսապաշարների առկայությունից, որոնք երկրի համար ռազմավարական ռեսուրսներ են, և դրանց պահպանությունը պետք է դասել արդի խնդիրների շարքին:

Աշխատանքի արդիականությունը այն է, որ Արցախի բնակչության բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար վճռական

նշանակություն ունեն անհրաժեշտ քանակությամբ սննդանյութերի և էներգիայի աղբյուր հանդիսացող բուսական պաշարները, որոնք ներկայումս հանդիսանում են Արցախի ֆլորայի տարրեր:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ու ներկայացնել Արցախի բուսական աշխարհի օգտակար, տնտեսապես արժեքավոր որոշ բույսերի տարածվածությունը և նրանց կառուցվածքային առանձնահատկությունները:

Աշխատանքի համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել գրական աղբյուրները [1, 5], ինչպես նաև հարցումները բնակչության շրջանում: Արցախի ֆլորայի տնտեսապես արժեքավոր բույսերի ուսումնասիրության ու գիտական հետազոտությունների կատարման համար կազմակերպվել են երթուղիներ, որոնց ընթացքում կիրառվել են հերբարիումային և նկարագրական մեթոդները:

Արցախի ֆլորայի ուտելի խոտաբույսերն օգտագործվում են ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված վիճակում: Առավել օգտագործվող տեսակներից են աստղիկ սովորականը, սիբեի սովորականը, գինագոխ բծավորը, բոխի մանրապտուղը, դեղատու ծնեբեկը, շուշանբանջար խոշորապտուղը, փիփերթ անտառայինը և այլն: Վայրի պտղատուներից առավել արժեքավոր են ընկուզենի սովորականը, տիլենի սովորականը, տանձենի կովկասյանը, խնձորենի արևելյանը, սգնի արևելյանը, հոնի սովորականը, մոշենի կովկասյանը և այլն:

Որպես Արցախի ֆլորայի տնտեսապես արժեքավոր բույսեր՝ ուսումնասիրել ենք ստորև ներկայացված ընտանիքներին պատկանող որոշ տեսակների տարածվածությունը, նրանց կառուցվածքային առանձնահատկությունները:

Ընտանիք՝ Շրթնաձաղկավորներ /Lamiaceae/

Ցեղ՝ Խնկածաղիկ /Origanum/

Տեսակ՝ Խ. սովորականը /Origanum vulgare L./ կոճղարմատավոր, բազմամյա խոտաբույս է: Համեմունքային և լայն տարածված դեղաբույս է: Բուժական նպատակով օգտագործում են բույսի տերևները, ծաղիկները: Բժշկության մեջ կիրառվում է ոչ միայն բուսահումքի, այլև նրանից ստացվող եթերայուղի ձևով: Մեղրատու է:

Ընտանիք՝ Նեխուրազգիներ /Հովանոցավորներ/, Apiaceae /Umbelliferae/

Ցեղ՝ Բոխի, պեքի /Hippomarathrum/

Տեսակ՝ Բ. մանրապտուղը /Hippomarathrum microcarpum (Bieb.) Petrov/ բազմամյա խոտաբույս է: Ցողունը անկյունավոր է,

ճյուղավորված: Տերևները գորշականաչավուն են՝ բազմակի փետրաձև կտրտված: Ծաղկաբույլը հովանոց է, ծաղիկները՝ դեղին: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին: Պտուղը ձվաձև է: Դեղաբույս է, նուրբ տերևակոթունները հավաքում են ապրիլ-մայիս ամիսներին և օգտագործում սննդի մեջ՝ թթու վիճակում: Պարունակում է եթերայուղեր, ալկալոիդներ: Աճում է չոր, քարքարոտ լանջերին:

Ցեղ՝ Կերբելուկ /*Anthriscus*/

Տեսակ՝ Կ. մոմատերև /*Anthriscus cerefolium Hoffm*/: Արցախյան «Ժենգյալով հաց»-ի յուրահատուկ հոտը պայմանավորող բույսը Կերբելուկ մոմատերևն է՝ Կնձմնձուկը: Կերբելուկ մոմատերևը նուրբ և սնամեջ ցողունով միամյա խոտաբույս է: Կերբելուկի թարմ տերևները պարունակում են եթերայուղեր, վիտամին C, հանքային նյութեր, Mg, K և այլն: Տարածված է Արցախում, մասնավորապես կենտրոնացած է 500-1600 մ բարձրություններում՝ հետանտառային և անտառային գոտիների ստորին զանգվածներում:

Ցեղ՝ Շուշանբանջար /*Chaerophyllum* /

Տեսակ՝ Շ. խոշորապտուղը /*Chaerophyllum macrospermum L.*/ բազմամյա խոտաբույս է: Ցողունն ուղղաձիգ է, թավոտ, պատված դեպի ներքև ուղղված մազիկներով: Հիմքից ճյուղավորված է: Տերևները եռակի փետրաձև են: Ծաղկաբույլը բարդ հովանոց է: Ծաղիկները մանր են: Ծաղկում է հունիս-հուլիսին: Աճում է լեռնային խոտածածկ լանջերին: Օգտագործում են սննդային և դեղագործական նպատակներով: Պարունակում է վիտամիններ (C), եթերայուղեր, հանքային աղեր և այլն:

Ցեղ՝ Գինագոխ /*Conium L.*/

Տեսակ՝ Գ. բծավոր, կինագոխ /*Conium maculatum L.*/: Երկամյա խոտաբույս է, որն ունի հարթ, կանաչ, սովորաբար բծավոր ցողուն, ցողունի ստորին մասը կարմրավուն է կամ մանուշակագույն: Բույսի բոլոր օրգանները մազիկներ չունեն: Տերևները մասնատված են, եռանկյունաձև: Ծաղիկները մանր են և սպիտակ: Գինագոխի պատրաստուկները՝ թթու դրած վիճակում, լայնորեն կիրառվում են ավանդական սննդում, ինչպես նաև որպես դեղաբույս՝ հակաուռուցքային միջոց:

Ցեղ՝ Սիբեխ /*Falcaria*/

Տեսակ՝ Ս. սովորականը /*Falcaria vulgaris Bernh*/ երկամյա խոտաբույս է: Տերևները գրեթե կաշվեկերպ են, սղոցաեզր: Ծաղկաբույլը հովանոց է, ծաղիկները սպիտակ են, մանր: Ծաղկում է հուլիս-օգոստոսին: Պտուղը մանր, երկարավուն, թույլ կնճռոտ, կողքերից

սեղմված սերմ է: Ունի սննդային նշանակություն: Աճում է չոր լանջերին, անտառաեզրերին, թփուտներում, դաշտերում:

Ընտանիք՝ Դանդուռազգիներ /Portulacaceae/

Ցեղ՝ Դանդուռ, տանդոռնը /Portulaca/

Տեսակ՝ Դ. սովորականը /Portulaca oleraceae L./ միամյա խոտաբույս է: Տերևները նստադիր են: Տերևանութներում աճում են փնջերով վառ դեղին ծաղիկները: Պտուղը լայնակի բացվող բազմասերմ տուփիկ է: Աճում է ստորին լեռնային գոտում, ցանքերում և բանջարանոցներում, ճանապարհների եզրերին:

Ընտանիք՝ Եղինջազգիներ /Urticaceae/

Ցեղ՝ Եղինջ /Urtica/

Տեսակ՝ Ե. երկտուն /Urtica dioica L./: Անվանում են նաև պենջար, եղինջ, մոմռուկ, կծան խոտ: Բազմամյա խոտաբույսեր են՝ այրող մազիկներով: Մատղաշ ընձյուղները և տերևները սննդում, ինչպես նաև ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են հին ժամանակներից: Պատրաստուկները կիրառվում են որպես միզամուղ, հակաբորբոքային, արյունահոսությունը դադարեցնող միջոց: Ծաղիկները մանր են, միասեռ և կանաչ: Պտուղը փոքր ընկուզիկ է:

Տեսակ՝ Եղինջ այրող /Urtica urens L./

Միամյա խոտաբույս է: Միատուն է: Օղականման ծաղկաբույլեր կազմող բաց դեղին և կանաչ ծաղկապատյանով արական և իգական ծաղիկները գտնվում են տերևածոցերում: Ամբողջ բույսը ծածկված է խայթող-այրող գեղձամազիկներով:

Ընտանիք՝ Թելուկազգիներ /Amaranthaceae/

Ցեղ՝ Թելուկ /Chenopodium/

Տեսակ՝ Թ. սպիտակ /Chenopodium album L./: Այլ կերպ անվանում են մոխրաթալ, սագախոտ: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են այս բույսի տարբեր մասերը: Պատրաստուկներն օգտագործում են ուռուցքների, ստամոքսաղիքային հիվանդությունների դեպքերում:

Ընտանիք՝ Ծներեկազգիներ /Asparagaceae/

Ցեղ՝ Ծներեկ /Asparagus/

Տեսակ՝ Ծ. դեղատու /Asparagus officinalis L./, բազմամյա խոտաբույս է: Գարնանը կոճղարմատից դուրս են գալիս ուղղաձիգ, թեփուկանման եռանկյունաձև տերևներով, հաստ մսալի կանաչավուն ընձյուղներ: Պտուղները նարնջագույն-կարմիր են, գնդաձև, եռաբույն և սև փայլուն սերմերով: Հատապտուղներ են: Բուժական նպատակներով օգտագործում են արմատները և երիտասարդ կանաչ ընձյուղները, որոնք պարու-

նակում են ասպարգին, ամինաթթուներ, ածխաջրեր, օսլա, կարոտին, C, B₁, B₂, PP վիտամիններ, եթերայուղեր, հանքային աղեր և այլն:

Ընտանիք՝ Խաչածաղկավորներ /Cruciferae/

Ցեղ՝ Հովվամախաղ /Capsella/

Տեսակ՝ Հ. սովորական /Capsella bursa-pastoris L./: Անվանում են նաև ծոսապաշար: Մերձարմատային տերևները կոթունավոր են: Ծաղկաբույլը ողկույզ է, ծաղիկները՝ մանր: Պտուղը հակաեռանկյունաձև պատիճակ է: Ուտելի է և մեղրատու: Պատրաստուկներն օգտագործում են որպես արյունահոսությունը դադարեցնող, լեղամուղ, արյան ճնշումն իջեցնող միջոց:

Ընտանիք՝ Թաղաղուազգիներ /Asphodelaceae/

Ցեղ՝ Շրեշ /Eremurus/

Տեսակ՝ Շ. ուշագրավը /Eremurus spectabilis M.Bieb/ գարնանը հավաքում են որպես սննդային նշանակություն ունեցող բույս: Այն կոճղարմատավոր բազմամյա խոտաբույս է: Ծաղկաբույլը բազմածաղիկ ողկույզ է, ծաղիկները՝ սպիտակ: Ծաղկում է մայիս-հունիսին: Պտուղը գնդաձև տուփիկ է: Ունի դեղատու, գեղազարդային նշանակություն:

Ընտանիք՝ Փիփերթազգիներ /Malvaceae/

Ցեղ՝ Փիփերթ /Malva/

Տեսակ՝ Փ. արհամարհվածը /Malva neglecta Wallr/ հանդիպում է ամենուր՝ ճանապարհաեզրերին, բանջարանոցներում, այգիներում: Բույսը պարունակում է մեծ քանակությամբ դաբաղանյութեր, լորձ: Այդ է պատճառը, որ փիփերթը կիրառվում է ժողովրդական բժշկության մեջ՝ որպես խորխաբեր, հակաբորբոքային միջոց:

Ընտանիք՝ Մեխակազգիներ /Caryophyllaceae/

Ցեղ՝ Աստղիկ, ճրճոկ /Stellaria /

Տեսակ՝ Ա. սովորականը /Stellaria media L./ Արցախյան «Ժենգյալով հաց»-ի մեջ ամենագործածական խոտաբույսերից է: Մատղաշ ցողունները գարնանն ունեն սննդային նշանակություն: Դեղաբույս է, կիրառվում է որպես հակաբորբոքային միջոց:

Ընտանիք՝ Գաղտրիկազգիներ /Boraginaceae/

Ցեղ՝ Հորթալեզու /Anchusa /

Տեսակ՝ Հ. լազուրը /Anchusa azurea-Anchusa italica L./ բազմամյա խոտաբույս է: Ծաղկում է մայիս-օգոստոսին, պտուղը քառընկուզիկ է: Աճում է դաշտերում, ճանապարհների եզրերին: Բուժական նպատակներով օգտագործում են տերևները, արմատներն ու ցողունները: Կիրառում են որպես ջերմիջեցնող միջոց:

Ցեղ՝ Անմոռուկ /Myosotis/

Տեսակ՝ Ա. դաշտայինի /Myosotis arvensis L./ տերևները պատված են խիտ մազիկներով: Ծաղիկները փոքր խմբերով են և հավաքված են ողկույզ ծաղկաբույլերում: Պտուղն ընկուզիկ է: Մեղրատու է և դեղատու:

Ընտանիք՝ Սոխազգիներ /Alliaceae/

Ցեղ՝ Սոխ /Allium /

Տեսակ՝ Ա. տարօրինակը /Allium paradoxum L./ օգտագործվում է սննդի մեջ և բուժիչ նպատակներով: Ունի մանրէասպան և հակալնդախտային հատկություններ: Տարածված է անտառային լանդշաֆտներում՝ սկսած 900-1200 մ բարձրություններից:

Արցախյան «Ժենգյալով հաց»-ի բաղադրության մեջ մտնող բույսերի մեծամասնությունը հանդիսանում է ոչ միայն վիտամինների աղբյուր, այլև դեղաբույսեր, որոնք ունեն հակաբորբոքային ազդեցություն:

Մեր հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ Արցախի տարածքում աճող և «Ժենգյալով հաց»-ի բաղադրության մեջ մտնող բուսատեսակների մի մասը բնակիչների կողմից տարբեր անվանումներ են ստացել ու հաճախ են շփոթություն առաջացնում տեսակը կամ ցեղը ճշտելիս [3, 5]: Քանի որ գիտական անվանումները քիչ են կիրառվում, կամ էլ բնակչության կողմից անտեղյակություն է տիրում նրանց գիտական անվանումների մասին, հետևաբար անհրաժեշտ է պարզություն մտցնել և պահպանել բույսերի տեղական անվանումները, որոնք ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Արցախյան «Ժենգյալով հաց»-ի մեջ ընդգրկվող բույսերը և նրանց տեղական անվանումները

N	Տեղական անվանումը	Գիտական անվանումը	Ռուսերեն անվանումը	Լատիներեն անվ.
1	Կնձմնձուկ	Կերբելուկ մոմային	Купырь бутенелистный	<i>Anthriscus cerefolium</i>
2	Սամիթ, անեթում	Սամիթ բուրավետ	Укроп пахучий	<i>Anethum graveolens</i>
3	Խազագ, խազեզ	Սոխ տարօրինակ	Лук странный	<i>Allium paradoxum</i>
4	Գլուխ սոխ, կանաչ սոխ	Գլուխ սոխ	Лук репчатый	<i>Allium cepa</i>
5	Ճռճռուկ, ճրճռուկ	Աստղիկ սովորական	Звездчатка средняя	<i>Stelaria media</i>
6	Պովապորտ, պառավի պորտ	Կավաժիպակ, հորթալեզու դաշտային	Воловик полевой	<i>Anchusa arvensis</i>

7	Ծեթուկ, ծիթենուկ	Նոնեա դեղին	Нонея желтая	<i>Nonea lutea</i>
8	Պուտուտկուն- տոպ	Կակաչ ինքնացան	Мак самосейка	<i>Papaver rhoeas</i>
9	Սիմսիմուկ	Քերչախոտ փոլած	Острица простертая	<i>Asperugo procumbens</i>
10	Կյունանջուկ, կյունագուճ, գառնականջ	Ծվծվուկ կամ Էլիզանտե գիշերային	Смолевка ночецветная или Элизанте ночная	<i>Silene noctiflora, Elisanthe noctiflora</i>
11	Թրթնջուկ	Ավելուկ սովորական, թթվաշ	Щавель кислый или обыкновенный	<i>Rumex acetosa</i>
12	Պենջար	Եղինջ երկտուն	Крапива двудомная	<i>Urtica dioica</i>
		Եղինջ այրող	Крапива жгучая	<i>Urtica urens</i>
13	Կինձ	Գինձ ցանովի, համեմ	кориандр посевной, кинза	<i>Coriandrum sativum</i>
14	Տոապաշար, ծոապաշար, ուտենտիտեմ	Հովվամախաղ սովորական	Пастушья сумка обыкновенная	<i>Capsella bursa- pastoris</i>
15	Թալ	Հավակատար հասկավոր	Амарант запрокинутый	<i>Amaranthus retroflexus</i>
16	Մոխրաթալ	Թելուկ սպիտակ	Марь белая	<i>Chenopodium album</i>
17	Ճակնդեղ	Ճակնդեղ սովորական	Свёкла обыкновенная	<i>Beta vulgaris</i>
18	Սպանախ	Սպանախ բանջարանո- ցային	Шпинат огородный	<i>Spinacia oleracea</i>
19	Մնեշակ	Մանուշակ բուրավետ	Фиалка душистая	<i>Viola odorata</i>

Ներկայումս առանձնահատուկ սրությամբ է դրվում ցանկացած տարածաշրջանի, այդ թվում և Արցախի ֆլորայի գենետիկական բազմազանության պահպանության հարցը, որն ունի գիտական և էկոլոգիական կարևոր նշանակություն: Արցախի ֆլորայի արժեքավոր բուսատեսակները նույնպես պահպանության կարիք ունեն՝ կանոնա-կարգելով դրանց արդյունավետ օգտագործումը: Գյուղատնտեսական հողատարածքների, բնական աղետների, արոտավայրերի ընդարձակ-ման, բնափայտի արդյունաբերական օգտագործման, ինչպես նաև դեղաբույսերի, գեղազարդային բույսերի անկանոն հավաքների հետևանքները տանում են դեպի վայրի աճող բույսերի պաշարների կրճատմանը:

Վերջին տարիներին Արցախի բնակչությունն առավել մեծ հետաքրքրություն է դրսևորում դեղատու բույսերի ու նրանց բուժական նշանակության հանդեպ, ուստի վայրի աճող դեղաբույսերը ներկայումս ավելի շատ են ենթարկվում մարդածին ազդեցության: Այդ պատճառով առավել արդիական է բնական էկոհամակարգերի նպատակային պահպանությունը և արդյունավետ օգտագործման կազմակերպումը, ներառյալ՝ դեղատու բույսերի պոպուլյացիաների թվաքանակի ապահովումը, բուսական աշխարհի օբյեկտների ոչ ոսցիոնալ օգտագործման կանխումը:

НЕКОТОРЫЕ ЭКОНОМИЧЕСКИ ЦЕННЫЕ ВИДЫ РАСТИТЕЛЬНОГО МИРА АРЦАХА

Гарамян А. С.

В работе представлены некоторые экономически ценные виды растений арцахской флоры, результаты изучений и полевых исследований, сделанных в период 2020-2022 годов. Растительный мир Арцаха включает в себя такие ценные сорта растений, которые в то же время являются эфирномасличными, красильными, съедобными, пряными и лекарственными.

Ключевые слова: Арцах, Купырь, Бутень, Звездчатка, Незабудка, Портулак, Воловик, Эремурус, Резак, Болиголов.

SOME ECONOMICALLY VALUABLE SPECIES OF THE FLORA OF ARTSAKH

Gharamyan A. S.

The paper presents the distribution of some economically valuable plants of Artsakh flora, the results of studies and field researches carried out from 2020-2022. The flora of Artsakh consists of precious species which are simultaneously essential oil, dyes, nutritional, spicy and medicinal.

Keywords: Artsakh, Anthriscus, Chaerophyllum, Stellaria, Myosotis, Portulaca, Anchusa, Eremurus, Falcaria, Conium.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Հ. Մ. Հայաստանի բնաշխարհ: Երևան: 2006: Էջ 585:

2. Բալայան Կ. Վ. Լեռնային Ղարաբաղի ֆլորան (Անոթավոր բույսեր): Սեղմագիր ատեն., կենս. գիտ. թեկն.: Երևան: 2014: 25 էջ:
3. Գուլյան Ա. Ա., Բալայան Կ. Վ. Բուսանունների հայերեն, լատիներեն, ռուսերեն բառարան: Երևան: 2013: 183 էջ:
4. Մելքումյան Ս. ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն: Երևան: 2005: էջ 345-346:
5. Ղազարյան Ռ. Ս. Բուսանունների հայերեն-լատիներեն, ռուսերեն-անգլերեն, ֆրանսերեն-գերմաներեն բառարան, Երևան: 1981: 180 էջ:
6. Новиков В. С., Губанов И. А. Популярный атлас-определитель “Дикорастущие растения”. М. 2008. С. 292.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Ղարաբայան Ա. Ս. – բակալավրիատ 4-րդ կուրս

ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ, Կենսաբանություն

Էլ. փոստ՝ astghik-2001@mail.ru

Գիտական ղեկավար՝ Բալայան Կ., կենս. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 26.11.2022

Գրախոսվել է՝ 07.12.2022

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԿՄՆԱԿ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԷՏ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ
Համբարձումյան Ն. Հ.**

Աշխարհագրության ուսուցմանը ներկայացվող ժամանակակից պահանջները ակնկալում են մեթոդական լուրջ պատրաստվածություն ունեցող ուսուցիչներ, ովքեր կկարողանան լուծել արդի կրթադաստիարակչական խնդիրները: Ժամանակակից ուսուցիչն այսօր դպրոց մտնելիս պետք է հիանալի տիրապետի ուսուցման կազմակերպման սկզբունքներին, ձևերին, միջոցներին և մեթոդներին, քաջատեղյակ լինի դպրոցական կրթության նպատակներին և հայեցակարգային մոտեցումներին: Սկսնակ ուսուցիչներին անհրաժեշտ է լիարժեք տիրապետել հատկապես դասագրքերի հետ իրականացվող աշխատանքների եղանակներին, քանի որ վերջիններս հանդիսանում են հիմնական և կարևոր ուղեցույցը դպրոցական ուսուցման կազմակերպման գործընթացում: Աշխարհագրության սկսնակ ուսուցիչը պետք է կարևորի հետևյալ կետերը՝ աշխարհագրության դասավանդման մեթոդները, գիտելիքների և կարողությունների ստուգումը, գործնական աշխատանքը, կրկնության դասը, «Էքսկուրսիա» դասը, աշխարհագրության դասասենյակի կահավորումը, արտադասարանային միջոցառումը, օլիմպիադաները:

Բանալի բառեր. մեթոդ, ուսուցիչ, մանկավարժական պահանջ, կրթություն, ուսուցում:

Սույն հոդվածը նվիրված է աշխարհագրության սկսնակ ուսուցչի փորձի ուսումնասիրությանը:

Հետազոտական մեթոդներից կիրառվել են վերլուծական և համեմատության մեթոդները:

Հիմնական հանրակրթության համակարգում աշխարհագրությունը միակ դպրոցական առարկան է, որի բովանդակությունը միաժամանակ ընդգրկում է ինչպես բնական, այնպես էլ հումանիտար-հասարակական գիտական գիտելիքների բազմաթիվ ասպեկտներ, որոնք ձևավորում են աշխարհագրական միջավայրի և աշխարհի ամբողջական ընկալման համապարփակ պատկերացում: Ներկայումս

դպրոցական կրթության ոլորտում ստեղծված իրավիճակը վկայում է առարկայի նկատմամբ աշակերտների հետաքրքրության նվազման մասին: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում «Աշխարհագրություն» առարկայի ուսումնասիրության գործում բարձրացնելու սովորողների /աշակերտների/ մոտիվացիան: Երեխաների կարողությունների և հմտությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունի դասավանդման ընթացքում մեթոդների ճիշտ ընտրությունը: Աշակերտն այսօր կարևորում է ուսուցչի կողմից իրեն գիտելիք հաղորդելու ձևը: Այս առումով էլ անհրաժեշտ է, որ աշխարհագրության ուսուցիչը յուրաքանչյուր դասին պատրաստվի հանգամանորեն, որովհետև աշակերտի կողմից ծրագրային նյութի յուրացումը զգալի չափով պայմանավորված է այս նյութը մատուցողի մասնագիտական հմտություններով և մատուցման որակով: Ուսուցիչը կրթական համակարգի վերակառուցման հիմնական օղակն է: Ուսուցչի աշխատանքը բազմակողմանի է, հետևաբար շատ կարևոր է այն կազմակերպել այնպես, որ աշխատանքի և ժամանակի նվազագույն ծախսերով լավագույն արդյունքի հասնել:

Դպրոցում «Աշխարհագրություն» առարկայի ուսուցման հաջողությունը մեծապես կախված է դասապրոցեսում կիրառվող մեթոդների և նյութերի ընտրությունից:

Հիմնական խնդիրները, որոնք լուծվում են ուսուցչի աշխատանքային փորձն ուսումնասիրելիս.

1. Ստեղծել կապեր դասապրոցեսի և արտադպրոցական աշխատանքի միջև:
2. Այլ ուսուցիչների ծանոթացնել այս ուսուցչի փորձին, ցույց տալ այս ուսուցչի ձեռքբերումները այլ ուսուցիչների աշխատանքում օգտագործելու հնարավորությունները:

Այդ խնդիրը լուծելու համար ուսուցիչը պետք է ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, հրաժարվի ժամանակավրեպ գործելակերպից, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ [4, էջ 51]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային

ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցումը աշակերտների ուսուցումն ու փոխկախվածությունն ուժեղացնելու համար փոքր խմբերի օգտագործման կազմակերպված և կառուցվածքային եղանակ է: Բացի միմյանցից սովորելուց, աշակերտները սովորում են նաև թիմի կազմում աշխատել և սովորել միմյանցից [1, էջ 23]: Կառուցողական մոտեցումը (կառուցողական ուսուցում) ամենակարճ ուղին է, որն ուղղված է անձի զարգացմանը և ինքնակատարելագործմանը:

Ուսուցիչը բարձր տեխնոլոգիաների միջավայրում ոչ միայն տեղեկատվության աղբյուր է, որ օգնում է աշակերտներին հասկանալ, թե ինչ է ուսուցման գործընթացը, այլև ուսուցիչն օգնում է աշակերտներին գտնել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը, պարզել, թե համապատասխանում է սահմանված պահանջներին, և հասկանալ, թե ինչպես պետք է օգտագործել այս տեղեկատվությունը, պատասխանել հարցերին և լուծել բարդ խնդիրներ [2, էջ 9-10]: Այս տեխնոլոգիան նպաստում է երեխայի անձի զարգացմանը, ուսուցչի մասնագիտական վարպետության աճին, արագացնում և հարստացնում է ուսումնական գործընթացը: Ուսուցման գործընթացում կիրառվող այն տեխնոլոգիաները, որոնք համապատասխանում են տեխնոլոգիական չափանիշներին, ներառում են համակարգայնություն, կառավարելիություն և արդյունավետություն [5]:

Գիտամանկավարժական հետազոտությունն իրականացվել է Տավուշի մարզի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցում:

Ուսումնասիրվել են հետևյալ կետերը՝

1. աշխարհագրության դասավանդման մեթոդները,
2. գիտելիքների և կարողությունների ստուգումը,
3. գործնական աշխատանքը,
4. կրկնության դասը,
5. «Էքսկուրսիա» դասը,
6. աշխարհագրության դասասենյակի կահավորումը,
7. արտադասարանային միջոցառումները,
8. օլիմպիադաները:

Աշխարհագրության դասավանդման մեթոդներ: Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայի գիտելիքները կարևոր տեղ են զբաղեցնում

աշխարհագրության ուսուցչի կայացման գործում: Այսօր, բացի տեսական գիտելիքներից, մեծ տեղ են գրավում գործնական գիտելիքները և կարողությունները: Ուսուցչի նկատմամբ պահանջները անընդհատ փոփոխվում են, ուստի ուսուցիչը պետք է մեծ ուշադրություն դարձնի դասավանդման մեթոդների ճիշտ ընտրությանը: Ամենատարածված մեթոդներ են համարվում ինտերակտիվ մեթոդները, կիրառության լայն շրջանակ ունեն ինտերակտիվ գրատախտակները, որոնք ավելի հետաքրքիր են դարձնում դասը, երբ երեխան ինքն է իր ձեռքով տեղադրում գետը, հրաբուխը, անտառը և այլն: Աշակերտների մոտ գիտելիքների ամրապնդման և զարգացման համար օգտագործվել է «Խճանկար» մեթոդը:

«Խճանկար» մեթոդը կիրառել ենք 11-րդ դասարանում: «Խճանկար» մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերերում [1, էջ 29-30]:

Գիտելիքների և կարողությունների ստուգում: Գիտելիքների ստուգումը կատարվում է տարբեր եղանակներով, ստուգումը կատարվել է գրավոր աշխատանքի տեսքով 7-րդ դասարանում: Աշխատանքի մեջ ներառվել է 12 հարց՝ երկու տարբերակով: Գրավոր աշխատանքին մասնակցել է 20 աշակերտ, որից 6 աշակերտ ստացել է 9 միավոր, 3 աշակերտ՝ 8 միավոր, 4 աշակերտ՝ 7 միավոր, 5 աշակերտ՝ 6 միավոր, 2 աշակերտ՝ 5 միավոր:

Աղյուսակ 1.

Միավորների գնահատման սանդղակ

Միավորների գումար	0-1	2	3	4	5	6-7	8-9	10	11	12
Գնահատական	1	2	3	4	5	6	7	8	9	10

Կարողությունների ստուգում կատարվել է 8-րդ դասարանում: Աշխարհագրական կարողությունը աշակերտի տիրապետած գործողության եղանակ է, որը ձևավորվում է աշխարհագրության

ուսուցման ընթացքում և կիրառվում ուսումնախմացական նպատակով: Աշակերտների համար կարևոր տեղ են զբաղեցնում քարտեզով աշխատանքները: Աշակերտներին ուղղվել են հարցեր, և նրանք պատասխանել են քարտեզի օգնությամբ:

Գործնական աշխատանք: 6-րդ դասարանում գրվել է աշխարհագրական թելադրություն: Թեման՝ Ավստրալիա մայրցամաք:

Դասի ընթացքում աշակերտներին բաժանվել է Ավստրալիա մայրցամաքի ուրվագծային քարտեզը: Նրանք ծանոթացել են քարտեզին 1-2 րոպե, որին հաջորդել է թելադրությունը: Բարձրաձայն կարդացվել է մայրցամաքի գետերի, լճերի, լեռների, ծոցերի, ծովերի, անապատների, հարթավայրերի, ափերը ողողող օվկիանոսների, հրվանդանների անունները, իսկ աշակերտները համապատասխան անունները գրել են Ավստրալիա մայրցամաքի ուրվագծային քարտեզի վրա: Ավարտելուց հետո յուրաքանչյուր աշակերտ ստուգել է իր աշխատանքը հետևյալ կերպ. պրոյեկտորի օգնությամբ քարտեզի վրա ցույց է տվել համապատասխան օբյեկտների տեղը, իսկ աշակերտները հետևել են, թե որ օբյեկտների անուններն են ճիշտ գրել, որոնք՝ սխալ: Այս մեթոդը կարող է նպաստել նյութի ավելի մատչելի յուրացմանը:

Կրկնության դաս: Այս տեսակի դասերը տարբեր նպատակներ ունեն, սակայն դրանցից գլխավորը անցած թեմայի կրկնությունն է, դրա հստակ ամրագրումը, նախկինում ստացած գիտելիքների վրա հիմնված նոր թեմաների ուսումնասիրության համար բազայի պատրաստումը, բովանդակության տարրերի արդիականացումը: Կրկնության դասի նպատակն է գիտելիքների ավելի խոր յուրացում, ուսումնական նյութի ընդհանրացում, համակարգման բարձր մակարդակ, տրամաբանական կապի հաստատում նոր և նախկինում ուսումնասիրված նյութի միջև: Կրկնության դաս անցկացվել է 9-րդ դասարանում «Հայկական լեռնաշխարհ» թեմայով: Ընդգրկվել է բանավոր 6 հարց: Դասը անցկացվել է տեսամեթոդով՝ սահիկների օգնությամբ:

Էքսկուրսիա դաս: Նման դասերում աշակերտները կարող են կապ հաստատել ուսման և իրական կյանքի միջև, ուսումնասիրել օբյեկտները, երևույթները, բնական միջավայրում տեղի ունեցող գործընթացները, տեսանելիությունը, մատչելիությունը, գիտականությունը, տեսության և պրակտիկայի կապը: Այս դիդակտիկ սկզբունքներն իրականացվում են դաս-էքսկուրսիաներում [3, էջ 29-30]: Երեխաներին ներկայացվող պահանջները՝ պահպանել էքսկուրսիայի անվտանգության կանոնները և կրել համապատասխան հագուստ: Էքսկուրսիա-

դաս կազմակերպվել է 10-րդ դասարանում՝ «Գետային ջրաբանություն» թեմայի շուրջ: Դասը անցկացվել է Ադստն գետի ափին: Մկգբում աշակերտներին ներկայացվել է, թե ինչ է գետը, գետահովիտը, գետի հունը, ջրհավաք ավազանը: Աշակերտներին համառոտ ներկայացվեց, որ Ադստն գետը սկիզբ է առնում Փամբակի լեռներից և ունի երկու վտակ՝ Գետիկը և Ոսկեպարը, հիմնականում ձնհալքից և անձրևաջրերից է սնվում, նշվեց, որ գետի երկարությունը 133 կմ է: Գետի վրա է կառուցված Բերքաբերի ջրամբարը: Աշակերտների հետ որոշվել է նաև Ադստն գետի ծախսը:

Արտադասարանային միջոցառում: Միջոցառումը անցկացվել է «Աշխարհագրություն» առարկայից՝ ներառելով 9-րդ, 10-րդ և 11-րդ դասարանի աշակերտներին: Միջոցառման թեման եղել է աշխարհի «ամենա ամենաները»: Ընդգրկվել է 20 ինտելեկտուալ հարց, յուրաքանչյուր հարցի համար նախատեսված է եղել միավորներ /1,2,5/, հարցերին պատասխանելու համար տրվել է 20 վայրկյան: Եթե խումբը չի կարողացել պատասխանել հարցին, մյուս խմբերը հնարավորություն են ստացել պատասխանելու:

Գնահատում-միջոցառման վերջում հաղթող թիմը որպես մրցանակ ստացել է «Հայաստանի ազգային ատլաս» գիրքը:

Օլիմպիադաներ: Ամեն տարի յուրաքանչյուր դպրոցում, այդ թվում՝ նաև Հաղարծնի միջնակարգ դպրոցում, անցկացվում են առարկայական օլիմպիադաներ: Հետազոտության է ենթարկվել 2018թ.-ի, 2019թ.-ի և 2020թ.-ի օլիմպիադային մասնակցած աշակերտների մասնակցությունը: 2018թ.-ին աշխարհագրության դպրոցական օլիմպիադային մասնակցել է 9-րդ դասարանի 3 աշակերտ, 10-րդ դասարանի 2 աշակերտ: Մարզային փուլ անցել է 2 աշակերտ՝ 9-րդ դասարանից, սակայն նրանք հանրապետական փուլի շեմը չեն կարողացել հաղթահարել: 2019թ.-ին աշխարհագրության դպրոցական օլիմպիադային մասնակցել է 9-րդ դասարանի 7 աշակերտ, 10-րդ դասարանի 6 աշակերտ և 11-րդ դասարանի 6 աշակերտ, սակայն մարզային փուլը աշակերտները չեն կարողացել հաղթահարել: 2020թ.-ին աշխարհագրության դպրոցական օլիմպիադային մասնակցել է 9-րդ դասարանի 3 աշակերտ, 10-րդ դասարանի 3 աշակերտ, 11-րդ դասարանի 2 աշակերտ: Մարզային փուլ անցել է 3 աշակերտ՝ 9-րդ դասարանից, և հանրապետական փուլ անցել է 2 աշակերտ: Դպրոցական փուլը բոլոր աշակերտները հաղթահարում են, իսկ մարզային և հանրապետական փուլերի շեմի հաղթահարումը այսօր ինդիք է դառնում աշակերտների համար, այդ իսկ պատճառով

այդ շեմերը չհաղթահարած աշակերտների հետ պետք է կատարվեն որոշակի աշխատանքներ: Առաջարկվում է ստեղծել խմբակներ, որտեղ աշակերտները կստանան իրենց հուզող հարցերի պատասխանները [6]:

Աշխարհագրության դասասենյակի կահավորում: Ունենալով այն ամենը, ինչ անհրաժեշտ է դասի համար, և դասապրոցեսում դրանք արագ և ցանկացած պահի գտնելը և օգտագործելը կարևոր է ոչ միայն ուսուցչի ժամանակի խնայողության, այլև հաջող և արդյունավետ դասի համար: Աշխարհագրության դասասենյակը հատուկ կահավորված տարածք է աշխարհագրության ուսուցման կազմակերպման համար: Այն համալրված է ուսուցման միջոցներով, որոնք անհրաժեշտ են աշխարհագրության ուսուցման գործընթացում, դրանք են՝ քարտեզներ, գլոբուսներ, ատլասներ, նկարներ, աշխարհագրական գրադարան, ֆիլմադարան, իսկ ժամանակակից դասասենյակն ունի նաև մուլտիմեդիական համալիր՝ համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ, ինտերակտիվ պրոեկտոր: Տարբեր դպրոցներում, կախված տարածքային պայմաններից, աշխարհագրության դասասենյակները տարբեր են լինում: Աշխարհագրության կաբինետում ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները աշակերտների ճանաչողական գործունեության զարգացման համար: Առկա են ցուցադրական ձեռնարկներ, դիդակտիկ նյութեր, մեթոդական գրականություն: Երեխաներին պետք է ավելի շատ ինքնուրույնություն տալ գիտելիք ձեռք բերելու հարցում: Չէ՞ որ մենք երեխաներին ոչ թե սովորեցնում ենք մեր առարկան, այլ պատրաստում ենք բազմակողմանի զարգացած անհատականություն, որը կարող է հարմարվել հասարակության կյանքի փոփոխվող սոցիալական պայմաններին:

Եզրակացություն.

- Կարևոր է ծանոթանալ սկսնակ ուսուցչի մեթոդական հմտության գնահատման չափանիշներին: Ուսուցչի մեթոդական հմտությունների գնահատման հստակ չափանիշները պետք է օգնեն որոշելու այն մեթոդաբանական հմտությունների անհրաժեշտ մակարդակը, որը պետք է ունենա երիտասարդ ուսուցիչը:
- Ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունն ու բազմակողմանի կրթվածությունը և նրա ղեկավարությամբ աշակերտներին դեպի գիտելիքների աշխարհ կողմնորոշելը արդի ժամանակաշրջանում դառնում է հասարակական, պետական պահանջ, կենտրոնական հիմնախնդիր, որի լուծումը պայմանավորված է

դպրոցի դերն ու նշանակությունը գիտակցող ուսուցիչների բարելիւն գործունէութեամբ:

- Աշխարհագրութեան ուսուցչի գլխավոր խնդիրն է ձևավորել սովորողների աշխարհագրական մտածողությունը, որը հնարավորութիւն կտա տեսնել և արձանագրել մարդու և հասարակութեան զարգացման ընթացքն ու արդյունքը ժամանակի և տարածութեան մեջ:
- Ակտիվ ուսուցման մեթոդները առավել արդյունավետ են, քանի որ կարող են բարձրացնել աշակերտների մոտիվացիան և աշխարհագրութեան ուսուցման որակը:
- Աշխարհագրութեան դասերի ընթացքում դպրոցականների ճանաչողական գործունէութեան զարգացման համար անհրաժեշտ է օգտագործել ուսուցման ավելի ակտիվ ձևեր և մեթոդներ:
- Առանձնացվել է աշխարհագրութեան սկսնակ ուսուցչի արդյունավետ գործունէութեան կազմակերպման հետևյալ կետերը՝
 1. աշխարհագրութեան դասավանդման տարբեր մեթոդների կիրառումը,
 2. գիտելիքների և կարողութիւնների ստուգումը,
 3. գործնական աշխատանքի իրականացումը,
 4. կրկնութեան և դաս-էքսկուրսիաները,
 5. աշխարհագրութեան կախիմութի կահավորումը,
 6. ինտելեկտուալ տարբեր միջոցառումների կազմակերպումը,
 7. օլիմպիադաների անցկացումը:
- Մանկավարժը պետք է խրախուսի սովորողին դեպի ինքնազարգացում, ստեղծի ստեղծագործական գործունէութեան պայմաններ: Նշված մեթոդները բավականին մեծ ազդեցութիւն ունեցան աշակերտների գիտելիքների ամրապնդման վրա և մոտիվացիա դարձան աշակերտների համար՝ ավելի խորացված ուսումնասիրելու առարկան:

**НАБЛЮДЕНИЕ ЗА ОПЫТОМ ЭФФЕКТИВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ
НАЧИНАЮЩЕГО УЧИТЕЛЯ ГЕОГРАФИИ
Амбарцумян Н. А.**

Современные требования к обучению географии ожидают учителей с серьезной методической подготовкой, которые смогут решить современные учебно-воспитательные задачи. Современный учитель

сегодня, поступая в школу, должен прекрасно владеть принципами, формами, средствами и методами организации обучения, хорошо разбираться в целях и концептуальных подходах к школьному образованию. Начинающим учителям необходимо полноценно владеть способами работы, особенно с учебниками, поскольку последние являются самым основным и важным руководством в организации школьного обучения. Начинающий учитель географии должен выделить следующие моменты: методы обучения географии, проверка знаний и умений, практическая работа, урок повторения, экскурсионный урок, обустройство кабинета географии, внеклассное мероприятие, олимпиады.

Ключевые слова: метод, учитель, педагогическое требование, образование, обучение, знания.

OBSERVATION OF THE EXPERIENCE OF EFFECTIVE ACTIVITY OF A NOVICE GEOGRAPHY TEACHER

Hambardzumyan N. A.

The requirements for teaching geography count on teachers with serious methodological training and readiness who will be able to solve actual educational tasks: a modern teacher, entering school today, should be well informed about the principles, forms, means and methods of organizing education, and be aware of the goals and conceptual approaches of school education: Novice teachers need to fully master, in particular, in the methods of working with textbooks, since the latter are the main and important guide in the organization of school education. A novice geography teacher should highlight the following points: methods of teaching geography, testing knowledge and skills, practical work, repetition lesson, excursion, arrangement of geography class, extracurricular activities, olympiads.

Keywords: method, teacher, pedagogical requirement, education, training.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արնատուդյան Ա., Գյուլբրուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ. «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար»: Երևան: 2004թ.: 52 էջ:

2. Николаев Ш. О.- «Активные методы обучения на уроках географии как фактор повышения мотивации обучающихся», 2014-2015гг., 66 с.
3. Петрова Е. Ю. - «Современные технологии в обучении географии», Томск. 2018 г., 124 с.
4. Методический журнал-«География в школе» N 6, Москва-1980г., 60 с.
5. <https://padlet.com/>, /25.07.2022, 14:00/:
6. <https://www.olymp.am/>,/18.07.2021, 12:30/:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Համբարձումյան Ն. Հ. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ԵՊՀ-ի ԻՄ, Հումանիտար ֆակուլտետ, Գպրոցական մանկավարժություն և մեթոդիկա

Էլ. փոստ՝ narine.hambarzumyan.97@mail.ru

Գիտական ղեկավար՝ Հովհաննիսյան Գ., աշխ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 23.09.2022
Գրախոսվել է՝ 13.01.2023

**ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ՝ ՄԻԱՎՈՐԱԿԱՆ
 ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԲԱՂԱԴՐԻՉ
 ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ
 ՁԵՎԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ Ռ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ
 Արքայան Լ. Լ.**

Աշխատանքում անդրադարձել ենք բարդ համադասական կառույցի՝ միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչ նախադասությունների եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցությանը, տարժամանակության և համաժամանակության հիմնական դրսևորումներին, բաղադրիչ նախադասությունների միջև եղած ժամանակային անցումներին: Իբրև բնագրային նյութ ընտրել ենք Ռ. Հովսեփյանի արձակը:

Բանալի բառեր. եղանակ, ժամանակ, հարաբերակցություն, համաժամանակյա, տարժամանակյա, միավորական, բարդ համադասական:

Նախաբան: Բարդ համադասական կառույցի՝ միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչ նախադասությունների եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցության կապակցությամբ որոշ հայ լեզվաբաններ նշում են, որ այն կարևոր նախապայման է, առանց որի չի կարող իրականանալ բաղադրիչների կապակցում բարդ համադասական նախադասություններում:

Աշխատանքը գրելիս մեր նպատակն է եղել Ռուբեն Հովսեփյանի ստեղծագործությունների լեզվական նյութի հիման վրա հնարավորինս ամբողջական քննել բարդ համադասական կառույցի՝ միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչ նախադասությունների եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցությունը, տալ հնարավորինս ամբողջական պատկերացում բարդ համադասական կառույցի՝ միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչ նախադասությունների եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցության վերաբերյալ՝ հաշվի առնելով հեղինակային ինքնատիպությունները:

Ռ. Հովսեփյանի արձակն աչքի է ընկնում լեզվաբանական տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող կառույցներով,

մասնավորապես՝ միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչ նախադասությունների եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցությամբ, որոնք մեզանում մինչ այժմ ուսումնասիրված չեն. հենց սա էլ աշխատանքի արդիականությունն է:

Ժամանակակից հայերենի բարդ կառույցների ուսումնասիրության առումով շարահյուսության հարցերից է բարդ համադասական կառույցի բաղադրիչ նախադասությունների *եղանակային և ժամանակային ձևերի* հարաբերակցությունը: Բարդ համադասական կառույցի՝ միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչների միջև հնարավոր համաձայնական կապը դրսևորվում է նաև *եղանակաժամանակային* համաձայնությամբ:

Սույն աշխատանքում բարդ համադասական կառույցի՝ միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչ նախադասությունների *եղանակային և ժամանակային ձևերի* հարաբերակցությունը ուսումնասիրելու համար որպես բնագրային նյութ ընտրել ենք Ռ. Հովսեփյանի արձակը¹:

Գ. Գարեգինյանը նկատում է (հեղինակը նկատի ունի հիշյալ հարաբերակցությունը). «Առանց որի չի կարող իրականանալ (չհաշված մասնակի մի քանի դեպքեր) բաղադրիչների կապակցություն բարդ համադասական նախադասություններում [3, 38]: Ն. Պետրոսյանը բարդ նախադասության բաղադրիչների կապակցումը բնութագրելիս հպանցիկ նշում է նաև *եղանակաժամանակային* հարաբերակցությունը: Նա գրում է. «Կապակցությունը դրսևորվում է շաղկապներով, շաղկապական բառերով, հնչերանգով, *եղանակաժամանակային ձևերի* հարաբերակցությամբ, շարահյուսությամբ և այլ միջոցներով» [6, 134]: Վ. Առաքելյանը ևս բարդ համադասական նախադասությունը քննելիս անդրադառնում է *եղանակաժամանակային ձևերի* դերին. «Որոշ բարդ նախադասության առանձին մասերի կապակցության մեջ մեծ դեր են կատարում բայերի եղանակներն ու ժամանակները» [2]:

Ժամանակային հարաբերությունը կապվում է բարդ համադասական կառույցի՝ գերազանցապես միավորական հարաբերություն արտահայտող բաղադրիչ նախադասությունների միջև եղած տարբերությունների հետ. այն ունի երկու հիմնական դրսևորում՝ *միաժամանակություն* և *տարժամանակություն* [1, 321]:

¹ Ռ. Հովսեփյան Երկար, հրաշալի օր: Վիպակ, պատմվածքներ: Երևան-1980: «Սովետական գրող» հրատարակչություն: 255 էջ, էջ 6 (այսուհետ քառակուսի փակագծերում կնշվեն միայն էջերը):

Հարկ է նշել, որ բայ-ստորոգյալի ժամանակ հասկացությունը վերաբերում է ոչ միայն պարզ ստորոգյալներին, այսինքն՝ խոնարհված բայերին, այլև բաղադրյալ ստորոգյալներին, որոնք արտահայտվում են հանգույցով [2,569]:

Ս. Աբրահամյանը նկատում է. «Ժամանակային հարաբերությունն արտահայտվում է երկու հիմնական եղանակով՝ *քերականական* և *բառական*», ինչպիսիք հանդիպում են նաև Ռ. Հովսեփյանի արձակում: Օրինակ՝ «Էլի *սպիտակել էին* բալենիները, ծիրանենիները, էլի նուրբ թափանցիկ ծաղիկներով *էին ներկվել* դեղձենիները» [184]: «*Սկզբում* Երանոսը, *հետո* նաև եկվորը դուրս եկան դեղձենու ետևից, թափ տվեցին շավարի ծնկամասերը, հիմար – հիմար ժպտացին՝ իբր բոլորովին չեն վախեցել...» [191]: Բերված օրինակներում *ժամանակային հարաբերությունը* մի դեպքում արտահայտված է *քերականական (սպիտակել էին, ներկվել էին)*, մյուս դեպքում՝ *բառական (սկզբում, հետո)* եղանակով:

Միաժամանակության և *տարժամանակության* տարաբնույթ դրսևորումների համար մեծ է հատկապես գործողությունների ու հանգամանքների բազմազանության դերը. սրանով պայմանավորված՝ հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնց բաղադրիչ նախադասություններում տեղ են գտնում *և՛ միաժամանակություն, և՛ տարժամանակություն*: Օրինակ՝ «Սահակը լուսամուտը *թակել էր* բահի ցեղոտ պոչով, ապակու վրա *լերդանում էր* ցեղաջրի որդանման հետքը, և դրա շուրջ *թպրտում, գլուխ էին կոտրում* կաղամբակեր, սպիտակ թիթեռները» [192] կառույցի առաջին բաղադրիչ նախադասությունը մյուս բաղադրիչ նախադասությունների հետ գտնվում է տարժամանակային հարաբերության մեջ, տարժամանակային հարաբերություն են առաջ բերում նաև կառույցի երկրորդ և երրորդ, երկրորդ և չորրորդ բաղադրիչները, սակայն երրորդ և չորրորդ բաղադրիչ նախադասություններում կատարվող գործողությունները (*թպրտում էին, գլուխ էին կոտրում*) համաժամանային հարաբերության մեջ են: Առաջին և երկրորդ բաղադրիչ նախադասությունների միջև դրսևորվող տարժամանակությունը պայմանավորված է պատճառահետևանքային կապով, քանի որ երկրորդ համադասն արտահայտում է առաջին համադասից բխող հետևանք *թակել էր – լերդանում էր*: Նույն պատճառահետևանքային կապն առկա է նաև երկրորդ և երրորդ, երկրորդ և չորրորդ համադասականների միջև. *լերդանում էր – թպրտում էին, լերդանում էր – գլուխ էին կոտրում*: Հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որոնց միջև դրսևորվող տարժամանակային հարաբե-

րությունը պայմանավորված է ոչ թե *նախորդող գործողություն* – *հաջորդող գործողություն*, այլ *հաջորդող գործողություն* – *նախորդող գործողություն* կապով, ինչպես՝ «Պղտոր ջուր էր, թանձր սաքերում, երևի երեկ, առաջին օրը անձրև էր թափվել» [193]:

Համադասների միջև դրսևորվող տարժամանակությունն առաջ է բերում նաև ժամանակների որոշակի հաջորդականություն.

ա) անցյալ – անցյալ – ներկա – ներկա

«...Նստած էի լինում շվաքում ու ննջում էի, – դե տարիքս առած մարդ եմ, շատ եմ քնում...» [201]:

բ) ներկա – ներկա – ապառնի՝

«Պառաված շուն է, թափվում են մազերը... տանեմ, ուրիշ տեղ կապեմ» [193] կառույցի առաջին բաղադրիչում ներկա ժամանակի իմաստն արտահայտված է բաղադրյալ ստորոգյալով, դրան հաջորդող ներկան և ապառնին՝ պարզ ստորոգյալներով:

գ) Անցյալ – ներկա – անցյալ՝

Ժամանակային անցումների տեսանկյունից հետաքրքրական է նաև «Համատարած սպասում էր, տաք, անգուսպ կիրք է խլրտում չորս դին, և Առաքելը ոռնաց անձայն, ընկավ հողին...» [195] կառույցը, որում իբրև անցյալ ժամանակի ցուցիչ հանդես են եկել *սպասում էր* բաղադրյալ, և *ոռնաց, ընկավ* պարզ ստորոգյալները, իբրև ներկա ժամանակի ցուցիչ՝ *խլրտում է* պարզ ստորոգյալը:

Եթե բերված կառույցի գործողությունը գիտակցում ենք որպես անցյալ ժամանակում կատարված, այդ դեպքում ներկան ըմբռնվում է *պատմական ներկայի իմաստով* [2, 574]:

դ) ներկա – անցյալ – ապառնի՝

«... դու տունուտեղդ մոռացած, աստծուդ ուրացած *ասում ես . բերի* կրասավիցա մայա, դարոմ *բերի*, ես քո բոլոր գույներին մատաղ...» [194] կառույցի բաղադրիչ նախադասություններում տեղ գտած բայ-ստորոգյալներն առաջ են բերում ժամանակային գունեղ բազմազանություն՝ արտահայտելով **ներկա – անցյալ – ապառնի** հաջորդականությունը, ընդ որում՝ պետք է նկատել հետևյալը. վերջին բաղադրիչ նախադասության կազմում հանդես եկող ապառնի ժամանակն արտահայտված է զեղչված ստորոգյալով, որի իմաստային ընկալումը կատարվում է տվյալ համատեքստում (*մատաղ լինեմ*):

«Վաղը շաբաթ է ու կգնամ» [185] կառույցի առաջին համադասում ապառնի ժամանակի իմաստն արտահայտված է *վաղը* բառական միջոցով, ճիշտ է, նրանում գործածված բաղադրյալ ստորոգյալն ունի

ներկա ժամանակի նշանակություն, սակայն ամբողջ բաղադրիչ նախադասությունն ընկալվում է որպես ապառնի ժամանակ մատնանշող ժամանակային տիրույթ, որին ևս հաջորդում է ապառնի ժամանակի իմաստով գործածված *կգնամ* բաղադրիչը: Սա բաղադրիչների միջև առաջ է բերում *համաժամանակություն*: Սա *բառական համաժամանակություն* է. վաղը բառն ունի այդ ապառնիության իմաստը:

Ժամանակային նմանօրինակ բազմազանություններով հարուստ կապակցությունների կիրառումը հեղինակի կողմից ինքնատիպ մտածողության արդյունք է, որը միաժամանակ նպաստում է նաև պատումը հետաքրքիր դարձնելուն:

Համաժամանակությունը կարող է լինել *լիակատար* և *մասնակի*, որով պայմանավորված՝ նախադասությունները հանդես են բերում կառուցվածքային յուրահատկություններ: Լիակատար համաժամանակության դեպքում ստորոգյալները արտահայտվում են միևնույն ժամանակաձևերով [1, 322]: Նմանատիպ կառույցներ հանդիպում են նաև Ռ. Հովսեփյանի արձակում, ինչպես՝ «Սահակս ծիրանը *հավաքել, տարել էր* ծովափ ծախելու» [203]: «Մեղանը պատշգամբում *գցեցին*, հինգ հավասար մասի *բաժանեցին* ձվածեղը...» [142] կառույցների բաղադրիչ նախադասություններում գործածված բայ-ստորոգյալներն արտահայտված են սահմանական եղանակի նույն ժամանակաձևերով. մի դեպքում՝ վաղակատար անցյալով (անցյալ ժամանակ), մյուս դեպքում՝ անցյալ կատարյալով (անցյալ ժամանակ):

Լրիվ համաժամանակությունը կարող է արտահայտվել նաև այնպիսի կառույցներում, որտեղ մի համադասում հանդես եկող բայ-ստորոգյալը պարզ է, մյուսում՝ բաղադրյալ, ինչպես՝ «Միայն Գարսևանի այգին *էր մնացել* անքաղ, միայն Գարսևանի այգու խրտվիլակն *էր ողջ*» [209]: «Գարսևանը *խուլ էր, համր էր*, Գարսևանը երկճղանի գցեր *էր հենում* ողկույզներով ծանրացած ճյուղերի տակ ու մտքում, սրտահովանքի համար, *հայհոյում էր* հարևաններին, նրանց հավերին, ճնճղուկներին, աստծուն, իրեն, կնոջը, Ավետիսին...» [210]:

Ինչ վերաբերում է մասնակի համաժամանակությանը, ապա այն կարող է դրսևորվել այնպիսի համադասներում, որոնցում գործածված բայ-ստորոգյալներն արտահայտված են նույն եղանակի տարբեր ժամանակային ձևերով [2,322], օրինակ՝ «Գիտնականին հրաժեշտ տալու պատրվակով կառամատույց *ելավ* նաև Հոփսիմեն ու աչքի պոչով ռեստորանի բաց դռնից ներս *էր նայում...*» [144]: «Շտապով *վայր գցեց*

ուսապարկը, *փռվեց* հողին ու *սպասում էր* հոպոպի կանչին» [148]: Բերված երկրորդ կառույցի բաղադրիչ նախադասությունների միջև դրսևորված մասնակի համաժամանակությունն արտահայտված է բայով և հարադիր բայով հանդես եկող բայ-ստորոցյալներով:

Բարդ համադասական կառույցի միավորական հարաբերությամբ կապակցվող բաղադրիչ նախադասություններում եղանակաժամանակային հարաբերակցությունն առաջ է բերում նաև շարադասական տարբերակումներ [7,15]:

Պետք է նկատի առնել հետևյալը. բարդ համադասական նախադասություններում շարադասությունն ազատ է, երբ գոյություն չունեն *գործողությունների ժամանակային հաջորդականության* և *պատճառահետևանքային հարաբերություններ*, և կայուն է, եթե կան գործողությունների *ժամանակային հաջորդականության* և *պատճառահետևանքային հարաբերություններ* [8]:

Հմտ.՝ «Հոդացավը մոռացած գրադարանավարուհին մի ուստյունով *հասավ* Արային, *խլեց* գիրքը, խելագարի մոլուցքով *թերթեց* էջերը» [127] և «Պատերազմից հետո տղամարդկանց *պաշտամունք էր*. կովից էին *վերադարձել*, *տառապած էին*, *վիրավորված*, *հաշմանդամ*, *իմաստնացել էին...*» [129] նախադասությունները: Առաջին կառույցում բաղադրիչների միջև գոյություն ունի *ժամանակային* հստակ *հաջորդականություն* [8], որով էլ պայմանավորվում է համադաս նախադասությունների *միջև կայուն շարադասությունը*, բաղադրիչների կազմում հանդես եկող բայերը (*խլեց*, *թերթեց*) սահմանում են գործողությունների կոնկրետ հաջորդականություն, որոնց խախտման դեպքում կխաթարվի նաև նախադասության իմաստը: Տվյալ նախադասության տիրույթում լիարժեք համաժամանակությունը պայմանավորվում է փոխհաջորդող գործողություններով: Երկրորդ կառույցում բաղադրիչների միջև առկա շարադասությունն *ազատ է*, քանի որ դրանցում չկա *ժամանակային հաջորդականություն* և դրանով պայմանավորված՝ իմաստային մթագնում:

Եզրահանգում: Քննելով միավորական հարաբերությամբ կապակցված բաղադրիչների միջև դրսևորվող *եղանակաժամանակային* հարաբերակցությունը՝ հանգեցինք այն եզրակացության, որ Ռ. Հովսեփյանի արձակում հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնցում բաղադրիչների միջև եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցությունը պահպանված չէ՝ չնայած դրա՝ կապակցման հարցում առաջնային և կարևոր գործոն լինելուն, ինչն առաջ է բերում

հեղինակային ինքնատիպ կառուցվածքներ: Սա առավելապես պայմանավորված է պատումում առկա գործողությունների բնույթով: *Տարժամանակության և համաժամանակության* ընդհանուր պատկերում բացահայտել ենք հեղինակային ինքնատիպությամբ ձևավորված կառույցներ, որոնցում տարժամանակությունն արտահայտված է բայի բոլոր ժամանակներով՝ *ներկա-անցյալ-ապառնի* հերթագայությամբ: Հետաքրքրական է նաև համաժամանակությունն արտահայտող կառույցների պատկերը, որոնցում համաժամանակության արտահայտման ձևերն աչքի են ընկնում բազմազանությամբ (պարզ ստորոգյալ, բաղադրյալ ստորոգյալ, հարադիր բայ): Հատկապես գերակշռում են անցյալով արտահայտված համաժամանակությունները, քանի որ հեղինակը պատումը կառուցում է գերազանցապես անցյալ ժամանակով:

**СООТНОШЕНИЯ ФОРМ НАКЛОНЕНИЯ И ВРЕМЕННЫХ ФОРМ,
СВЯЗАЫВАЮЩИХ СОЕДИНИТЕЛЬНЫМИ ОТНОШЕНИЯМИ
СОСТАВНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В СЛОЖНОСОЧИННОЙ СТРУКТУРЕ В
ПРОЗЕ Р. ОВСЕПЯНА
Абовян Л. Л.**

В работе мы коснулись соотношений форм наклонения и временных форм, связывающих соединительными отношениями составные предложения в сложносочиненной структуре, основных проявлений диахронии и синхронии, временных переходов между частями составных предложений. В качестве исследуемого материала мы выбрали прозу Р. Овсепян.

Ключевые слова: наклонение, время, соотношение, одновременный, разновременный, соединительный, сложносочиненный.

**MOOD AND TIME CORRELATION OF THE COMPONENT CLAUSES OF A
COMPLEX STRUCTURE IN R. HOVSEPYAN'S PROSE
Abovyan L. L.**

The paper considers mood and time correlation of the component clauses of a complex structure (which are connected by the unitary relation), to the main manifestations of synchronicity and asynchrony, and to the time transitions between the component clauses. R. Hovsepyan's prose serves as original material.

Keywords: mood, time, correlation, synchronous, asynchronous, unitary, compound.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս. և ուրիշներ Հայոց լեզու. շարահյուսություն, մաս երկրորդ: Երևան: 1976: «Լույս» հրատարակչություն: 478 էջ:
2. Աբրահամյան Ս. և ուրիշներ Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, երրորդ հատոր, Երևան: 1976: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 854 էջ:
3. Առաքելյան Վ. Հայերենի շարահյուսություն, հատոր երկրորդ: Երևան: 1964: Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն: 466 էջ:
4. Գարեգինյան Գ. Ժամանակակից հայոց լեզու: Բարդ նախադասություն: Երևան: 1984: Երևանի համալսարանի հրատարակչություն: 421 էջ:
5. Հովսեփյան Ռ. Երկար, հրաշալի օր, վիպակ, պատմվածքներ, Երևան: 1980: «Սովետական գրող» հրատարակչություն: 255 էջ:
6. Պալասանյան Ս. Քերականութիւն մայրենի լեզուի: Թիֆլիս: 1906: 193 էջ:
7. Պապոյան Ա., Բաղիկյան Խ. Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն (ներածություն, բառակապակցություն, պարզ նախադասություններ): Ուս. ձեռնարկ: Երևան: 2003: Երևանի համալսարանի հրատարակչություն: 462 էջ:
8. Պետրոսյան Հ. Հայերենագիտական բառարան: Երևան: 1987: «Հայաստան» հրատարակչություն: 716 էջ:
9. Սարգսյան Ա. Լ. Շարադասության գործառույթները ժամանակակից արևելահայերենում և արևմտահայերենում:
http://www.yasu.am/files/19A_Sargsyan-1454589637-.pdf, /Հասանելի է՝ 09.08.2022թ., ժամը՝ 22:21/:
10. Հարությունյան Ս. Շարադասությունը հայերենի շարահարությամբ կապակցված բարդ նախադասություններում,
[https://scilead.ru/article/672-hասանելի է՝ 09.08.2022թ., ժամը՝ 23:01/:](https://scilead.ru/article/672-hասանելի է՝ 09.08.2022թ., ժամը՝ 23:01/)

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Աբովյան Լ. Լ. – մագիստրատուրա 2-րդ կուրս

ՎՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն

Էլ. փոստ՝ abovyan2000@bk.ru

Գիտական ղեկավար՝ Խաչատրյան Գ., բան. գիտ. դոկ., պրոֆեսոր

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 10.03.2023

**ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՀԱԿՈՒ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ԵՌԱՊԱՏՈՒՄԻ
ՔՆՆՈՒԹՅԱՄԲ
Աբրահամյան Ն. Ա.**

Հոդվածը նվիրված է ինքնակենսագրական վեպին ու նրա արժևորմանը հայ նորագույն գրականության մեջ: Այն ուսումնասիրողին և, ընդհանրապես, ընթերցողին հնարավորություն է տալիս առավել լավ ճանաչելու տվյալ գրողի կյանքն ու ստեղծագործական աշխարհը: Հիմք դարձնելով Հ. Ասատուրյանի եռապատումը՝ փորձելու ենք արժևորել ինքնակենսագրական վեպը հայ նորագույն գրականության մեջ:

Բանալի բառեր. մեմուարային գրականություն, ինքնակենսագրական երկ, Հակոբ Ասատուրյան, եռապատում, սփյուռքահայ գրականություն, մանկության թեմա:

Աշխատանքն իրականացնելիս ուսումնասիրել ենք ոչ միայն Հ. Ասատուրյանի գրական ողջ ժառանգությունը և վերջինիս նվիրված գիտական վերլուծությունները, այլ նաև ինքնակենսագրական վեպին վերաբերող մենագրություններ, աշխատություններ ու հոդվածներ (Ս. Արզումանյան, Ժ. Քալանթարյան, Ս. Դանիելյան, Լ. Սաֆարյան):

Հ. Ասատուրյանի երկերին կատարված մասնակի անդրադարձի միջոցով մենք, իբրև նպատակ, ձգտել ենք ներկայացնել և՛ իր համապատկերային եռերգությունը՝ մեր ուժերի սահմաններում նպաստելով նրա՝ որպես դասական երաժշտության հմուտ կատարողի և գրողի ճանաչմանն ու երկերի ընթերցմանը, և՛ ինքնակենսագրական վեպը:


Թեմայի արդիականությունը պայմանավորված է Հակոբ Ասատուրյանի եռագրության դաստիարակիչ նշանակությամբ, քանի որ նրա վեպերում արծարծված խնդիրները գերարդիական են ու մտահոգիչ: Մեր աշխատանքի շնորհիվ հանրակրթական համակարգի սովորողները հնարավորություն են ստանում առնչվելու ինքնակենսագրական ժանրի լավագույն նմուշներից մեկին: Բացի այդ, ներկայացվում են ոչ միայն գրողի կյանքն ու ժամանակաշրջանի կարևորագույն անցքերը, այլև սովորողները ծանոթանում են

գրականագիտական այնպիսի հասկացությունների, որոնք կապ ունեն ինքնակենսագրական ժանրի հետ (արքետիպ, քրոնոտիպ):

Այսպիսով՝ թեմայի ուսումնասիրությունը, գործնական նշանակությունից զատ, ունի նաև տեսական կարևորագույն նշանակություն: Քանի որ ցայսօր Հակոբ Ասատուրյանի եռապատումը հիմնարար վերլուծության ենթարկված չէ, այս աշխատանքը գալիս է լրացնելու սփյուռքահայ գրականության ուսումնասիրության այդ բացը:

Ինքնակենսագրական երկը գրականության մեջ մեծ տարածում ու ճանաչում գտած գրական տեսակ է, որն անցել է զարգացման երկարատև ճանապարհ: Նրա ծագումը կապվում է անտիկ ժամանակաշրջանի հետ, սակայն հետագայում զարգացած ու փոփոխություններ կրած ինքնակենսագրական երկից այն տարբերվում է բովանդակային առումով. անտիկ ժամանակաշրջանում ինքնակենսագրական բանավեճը գրվում էր այն անձի կողմից, ով կատարել էր հասարակական որևէ խախտում, և ահա այդ թուղթը պիտի ծառայեր իր անմեղության ապացուցմանը: Հայ հին և միջնադարյան գրականության մեջ ինչ-որ իմաստով դրա օրինակներից է Փարպեցու «Թուղթը»:

Գծապատկեր 1.



*Դասակարգված է ըստ Ս. Արզումանյանի «Սովետահայ վեպը» գրքի առաջին հատորի (էջ 317):

Տարբեր ժամանակներում գրականագետները ինքնակենսագրական վեպերը նույնացրել են հուշագրության հետ՝ չտեսնելով նրանց միջև եղած զգալի տարբերությունները: Պատճառը գրականագիտության կողմից ինքնակենսագրական երկերի դասակարգման համար միասնական մոտեցում չցուցաբերելն է: Ճիշտ է, ինքնակենսագրական ժանրը պատկանում է մեմուարային գրականությանը, ինչպիսիք են գեղարվեստական կենսագրությունը, ընտանեկան քրոնիկը, օրագրությունը, հուշ-խոստովանանքն ու հուշագրությունը (տե՛ս գծապատկեր 1), և ունեն որոշակի նմանություններ մեկը մյուսի հետ, սակայն ինքնակենսագրական վեպը էական գծերով տարբերվում է մնացածից և հատկապես հուշագրությունից:

Ինքնակենսագրական ժանրը երկար ժամանակ եղել է գրականագետների ուսումնասիրության տիրույթում: Այս առումով մեծ են նշանավոր գրականագետներ Ս. Արզումանյանի, Ժ. Քալանթարյանի, Ս. Դանիելյանի և այլոց թողած ավանդները:

20-րդ դարասկզբին տեղի ունեցած պատմական-հասարակական իրադարձությունները իրենց հերթին հիմք դարձան ինքնակենսագրական վեպի հզոր հոսքին: Սրան նպաստեց նաև հայ ժողովրդի հերոսական պայքարի ու մարտերի թեմայի գեղարվեստական շունչ ստանալը, որը, հետագա տարիներին խորանալով, դարձավ ճննդավայրի, ժողովրդի ու մի ողջ գերդաստանի պատմություն:

Այս իմաստով առանձնանում է Ավետիս Ահարոնյանի «Իմ գիրքը» («Մանկություն» (1927թ.), «Պատանեկություն» (1931թ.))՝ որպես ժանրի առաջնեկ, և հայտնվում մի առանձնահատուկ հարթակի վրա:

Այսպես՝ սփյուռքահայ գրող Մուշեղ Իշխանն իր երեք վեպերով կարողացավ շարունակել 30-ական թվականներին սկզբնավորված կենսագրական վեպի ավանդները, որոնք շարունակվեցին նաև 50-60-ական թվականներին: Եվ արդեն 60-80-ական թվականներին ինքնակենսագրական վեպը հասավ իր զարգացման բարձրակետին: Ինքնակենսագրական վեպի տարածման ու զարգացման գործում մեծ են Գուրգեն Մահարու («Մանկություն» և «Պատանեկություն», ապա նաև «Երիտասարդության սեմին», «Երիտասարդություն», «Ծաղկած փշալարեր»), Վահան Թոթովենցի («Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա»), Զապել Եսայանի («Միլիտարի պարտեզները»), Ստեփան Զորյանի («Մի կյանքի պատմություն») ավանդները: Այսպես՝ Գուրգեն Մահարին գրեց իր հնգապատումի շարունակությունը, որն սկսվում էր արտորից: Մանկության վերհուշի դրվագներով է սկսվում նաև

Թոթովենցի վիպակը, որում կենտրոնական տեղ են գրավում ոչ միայն հեղինակ-հերոսը, այլև իր շրջապատը, բարեկամներն ու հարազատ մարդիկ: Մանկական տպավորությունների գրառումներ կան նաև Զապել Եսայանի ու Ստեփան Զորյանի երկերում: Ինչպես տեսնում ենք, ինքնակենսագրական երկ հյուսողները իրենց երկերի հիմնաքարն ու խնդիրը դարձրել են մանկության թեման, այլ կերպ ասած՝ ինքնակենսագրական վեպերի գեղագիտական կենտրոնում մեծ մասամբ պատանու ճակատագիրն է: Հենվելով հիշողության վրա՝ հեղինակը պատկերում է անցյալ կյանքի հետագա ընթացքը: Այս առումով մենք աղերս ենք տեսնում գրականության ու հոգեբանության միջև: Ինչպես հայտնի է, մարդու հոգեբանական վիճակը, վախերն ու ցնցումները «թաքնված» են նրա մանկությունում: Եվ երբ գրողը ցանկանում է գրել իր կյանքի մասին, սկսում է հենց մանկությունից, որը դառնում է նրան ուսումնասիրելու և լիարժեք ճանաչելու լավագույն միջոց:

Եվ, ընդհանրապես, յուրաքանչյուր անհատի կյանքը հարստանում է ոչ միայն մանկության հիշողություններով, այլ նաև ժամանակի սոցիալ-քաղաքական իրադարձություններով: Այն սերունդը, որ եղերական տարիներին երեխա էր, միայն տասնամյակներ անց էր կարողանալու պատմել իր մանկության դաժան հիշողությունների ու կորուստների մասին: Ռուս քաղաքական գործիչ Մերգել Կիրովը իր «Տառապյալ ժողովուրդը» հոդվածում գրում էր. *«Կարող է պատահել միայն հետո, երբ կանգ կառնեն մարդկային արյան գետերը, մի նոր Դանթե նկարագրի միլիոնավոր մարդկանց ահավոր տանջանքների պատկերը: Եվ այդ պատկերը կավելացնեն մեծ պատերազմի պատմության մեջ, և ամեն մեկը չէ, որ ուժ կունենա աչք դարձնելու նրա վրա, քանի որ այն ամբողջովին զառանցանք կլինի»* [6, էջ 443]: Եվ տարիներ անց, այդ սարսափելի հարվածներից մի կերպ աչք բացած, մի շարք տաղանդավորներ աշխարհի տարբեր ծագերում սկսեցին հյուսել եղեռնապատումի առաջին էջերը, որոնց թվին պատկանում էր նաև Հակոբ Ասատուրյանը, ում եռապատումը ինքնակենսագրական վեպի լավագույն և առավել ամբողջական օրինակներից է սփյուռքահայ գրականության մեջ:

Իր գրական գործունեությունը Հակոբ Ասատուրյանը սկսել է Մեծ Եղեռնից հետո Ամերիկայում. *«Առաջին քերթուածս երեւցաւ «Հայաստանի Կոչնակ»ի 1923ի թիւերէն մէկուն մէջ, Յ. Յ. Ա. ստորագրութեամբ»* [3, էջ 270]: Բայց գրական ընտանիքում իր տեղն ամրապնդեց այն ժամանակ, երբ լույս տեսան իր երեք վեպերը՝

«Հովակիմի թոռները», «Հովակիմի թոռնորդիները» և «Տօ, լա՛ճ տնաւեր»:
Վստահաբար այս եռագրությունը կարող ենք կոչել ինքնակեն-
սագրական վեպ, քանի որ վերջինս համապատասխանում է
ինքնակենսագրական երկը բնութագրող հատկանիշներին:

Նախ՝ հարկ է ուշադրություն դարձնել վեպերի վերնագրերին.
դրանք արդեն իսկ հուշում են, որ պատմությունը նվիրված է
«հովակիմյան» գերդաստանին, նրանց անցած իրական ճանապարհին՝
դեռ նախքան ծանոթանալը երկերի կերպարներին ու
բովանդակությանը:

Եռագրության առաջին գիրքը նվիրված է հեղինակի մանկությանը,
նրա ծննդին, գյուղական ապրելակերպին, նիստուկացին: Մակայն պետք
է նշել, որ գրողը երեք վեպերում էլ երեք տարբեր անուններով է հանդես
գալիս՝ Հարություն, Լևոն և Կարապետ: Այս հերոսները հեղինակի
ինքնության երեք դեմքերն են, որոնց շնորհիվ մենք ծանոթանում ենք
հեղինակի ողջ կյանքին՝ ծննդից մինչև ապրած հետագա տարիները:
Բացի այդ, վերջին երկու կերպարները ընդհանրական են, ահա թե ինչու
ենթադրվում է, որ նրանք հաջորդ սերնդի ներկայացուցիչներ են:

Հետաքրքրական է վեպի մուտքը. վերջինս սկսվում է գրողի
հարազատ գյուղի՝ Չոմախլուի համագյուղացիների ու հարազատ
բնության նկարագրությամբ: Նկատելի է, որ հեղինակների մոտ սա
գեղարվեստական միջոց է՝ միմյանց հակադրելու բնության երանելի և
իրականության սարսուղեցնող վիճակները:

Ինչպես Մահարու, Թոթովենցի և այլոց գործերում, այնպես էլ
Հակոբ Ասատուրյանի եռապատումի առաջին գրքի գլխավոր թեման
հերոսի մանկության անխռով պատկերներն են, որոնք ուղեկցելու են
նրան ողջ կյանքում: Մակայն Ասատուրյանի եռագրությունը ևս ներքին
անտեսանելի կապով միահյուսվում է ժամանակաշրջանի պատմահա-
սարակական իրադարձություններին: Բացի այդ, մանկության հուշերի
իրական նկարագիրը միաժամանակ պատկերում է գրողի ապրած
վայրը, նրա կոլորիտը և հայկական այլ ուրույն գծեր: Եվ ինչպես նշել է
գրականագետ Սևակ Արզումանյանը. «*Իսկական գրողը, գրական
անհատականությունը չի կարող չունենալ մեծ կյանք, հարուստ
կենսագրություն: Ու այդ կենսագրության մեջ չեն կարող չերևալ
ժողովրդի ու պատմական ժամանակաշրջանի մի շարք տիպական
կողմերը*» [5, էջ 330]: Սովորաբար Ասատուրյանն իրեն չի ներկայացնում
դեպքերի կենտրոնում, այլ փորձում է տալ շրջապատի ու ժամանակի
ճշգրիտ նկարագիրը: Թեև առաջին գիրքը բաղկացած է երեք մասից և

առանձին-առանձին փոքրածավալ պատումներից, սակայն դրանից երկի ամբողջականությունը և ավարտուն տեսքը չի տուժում, ավելին՝ անգամ այդ փոքր պատումները, առանձին վերցրած, ունեն ավարտուն հասկանիչներ:

Հստակ է վեպի նյութը, իրական ու հավաստի. դա գրողի գյուղն է, ծննդավայրը, ուր ապրում են խաղաղ ու հանգիստ առօրյայով: Եվ ահա գյուղական այս մթնոլորտում էլ ծնվում է ևս մեկ հայ՝ կրողն ու պահպանողը իր գյուղի ավանդույթների, ում կոչում են Հարություն, ով դառնում է վեպի գլխավոր հերոսը: Ու հնչում է հայոց հին ծննդյան երգը՝ օրորոցայինը: Զգացվում է նահապետական մարդու երջանկությունը, լսվում օրորոցայինի ձայնը, և հին սովորության համաձայն՝ տաք ավազաշորի մեջ են փաթաթում երեխային, ով տարիներ անց պիտի ընկներ անապատի տաք ավազագիրկը: Կյանքն ընթանում է իր բնականոն հունով, և թվում է, թե այդ ընթացքը հավերժական է լինելու՝ ուրախ վիճակներով, դժվարին աշխատանքով, նաև սիրով ու զոհերով, բայց հանկարծ հայոց աչքին սև մշուշ է իջնում, փոթորիկ, որը մի վայրկյանում սրբում-տանում է հայոց աշխարհը, դադարում է մանկան երգը, և սկսվում կականը... գաղթի ճամփա, տեղահանություն, զարկված ու զրկված հայի ճակատագիր:

Գրողը իր երկերում ոչինչ չի չափազանցրել, գրել է այն, ինչ կատարվել է իրենց հետ: Պատանու հուշերում անջնջելի հետք են թողնում եղերական դեպքերը՝ տեղահանություն, աքսոր, անապատային փոշոտ ճամփաներ, մահ, հարազատի ու հայրենիքի կորուստ, որոնք դառնալու են մարդկային ճակատագրի մի մասնիկն ու կյանքի ուղեկիցը: Մեկը մյուսից ցնցող ու տպավորիչ տեսարաններով Ասատուրյանը պատկերում է բռնություններն ու ողբերգությունը մի ողջ ժողովրդի: Պատանի Հարությունի մանկությունը վերածվում է ողբերգության, երեխան, ով պիտի խաղար ու վայելեր իր անհոգ օրերը, տեսնում է դիակույտեր ու անցնում դժոխային պարունակների միջով. կորցնելով մանկությունը՝ հերոսը միանգամից հասունանում է: Աստիճանաբար ընթերցողի առջև գծագրվում է հերոսի մոր ու քույրերի նկարագիրը, «հովակիմյան թոռների» դաժան ճակատագիրը: Այս առումով կարևոր են հատկապես «Ավագախորուն» և «Հսկումի գիշերներեն» շարքերը:

«...1918-ի աշնան մտած եմ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Երուսաղեմի որբանոցը: Շուրջ մեկուկես տարի յետոյ, ազգականի օգնութեամբ, եկած եմ Ամերիկա», - պատմում է գրողը Նյու Ջերսիում տված հարցազրույցի ժամանակ [3, էջ 269]: Այս իրական

փաստերը ստացել են գեղարվեստական շունչ ու դարձել գրական երկի մի մասնիկը: Մորն ու քույրերին անապատում կորցնելուց հետո նա հայտնվում է Երուսաղեմի որբանոցում, ապա Ամերիկայում: Վեպն ավարտվում է խորհրդանշական պատկերով. հերոսը իր հետ Ամերիկա է տանում հայրենիքի մասունքները՝ մի բուռ հող ու քար:

Եռագրության երկրորդ գիրքը՝ «*Հովակիմի թոռնորդիները*» (1982թ.), պատկերում է նույն գերդաստանի հետագա ճակատագիրը: Այստեղ ևս գլխավոր հերոսը հեղինակն է կամ գուցե իր հաջորդ սերունդը, ով կրում է Լևոն անունը: Համեմատելով առաջին վեպի գլխավոր հերոսի հետ՝ կարող ենք ասել, որ Լևոնը հանդիսանում է վերջինիս հայկականության կրողն ու պահպանողը: Այսպես, Ամերիկայում հաստատվելուց հետո գաղութաբնակ տաղանդավոր հայ երիտասարդները հավաքվում են և հիմնում «*Նոր գիր*» գրական հանդեսը, որի կազմում էր նաև Հակոբ Ասատուրյանը:

Եռագրության այս հատորը վեր է հանում արդիական խնդիրներ. օտար ավերում հայտնված աղջիկները, երբեմն սիրելով, երբեմն՝ ոչ, բայց հույսը սրտներում պահած, ամուսնանում էին հայ երիտասարդների հետ՝ պահելու համար հայի գենը: Նույն կերպ է վարվում նաև Լևոնը՝ ամուսնանալով հայուհի Ագնեսի հետ: Նշենք՝ գրողի կինը՝ Մարթա Ասատուրյանը (Անանյան) ևս հայուհի էր: Իր արծարծած խնդիրներով գրողը նոր աշխարհ է բացում ընթերցողի առաջ:

Օտար միջավայրը, բարքերն ու մարդիկ հերոսի առջև դնում են նոր պահանջներ՝ հեռացում լեզվից, մշակույթից ու հավատից: Հետաքրքիր է մեկ այլ իրական, բայց ցավալի փաստ՝ հին ու նոր սերնունդների բախումը օտար միջավայրի ազդեցությամբ: Թեև Լևոնը կարողացավ դիմակայել, բայց նույնը չստացվեց իր ժառանգների մոտ. մեծ տղան ամուսնացավ օտար աղջկա հետ:

Վերջին երրորդ գիրքը՝ «*So, լի՛ճ տնաւեր*»-ը (1986թ.), ինչպես գրողն է անվանում, ուղևորավեպ է, որտեղ պատկերված են հայրենիքից վերադարձի կարևոր դրվագները: Հերոսը Կարապետն է, ով ավելի շատ պատմում է հայաստանյան այցելության, քան իր ընտանիքի մասին: Հատորում պատմվում է, թե ինչպես է հերոսը Նյու Յորքից հասնում Թուրքիա, ապա մեքենայով՝ իրենց գյուղ, թե ինչեր է տեսել, ում հետ զրուցել ու ինչ զգացել: Թվում է, թե հեղինակը պիտի վերագտներ տասնամյակներ առաջ կորցրած գյուղը, պիտի վերապրեր մանկության ջերմ հուշերը, սակայն իր առջև արդեն այլ գյուղ էր, նախկին շեն բնակավայրից չէր մնացել ոչինչ. կիսաքանդ էին տները, ավերված ու

պղծված՝ եկեղեցին: Այս ամայացումը ազդել է ոչ միայն հայի, այլև թուրքի վրա: Նուրբ հոգեբանական գծերով է օժտված թուրք ծերուկ ջրաղացպանի ու հեղինակ-հերոսի գրույցը, որով բացահայտվում են ծերունու կրած հոգեկան տանջանքները: Նրանց մեջ գուցե եղել են արդար մարդիկ, սակայն եղել են նաև այնպիսիները, որոնց մեջ հայտնվել է թալանչի նախնիների բնագոր: Երբ հերոսը վերադառնում է Ամերիկա, նամակ է ստանում Թուրքիայից, որտեղ վարորդն առաջարկում էր իրեն ուղարկել գյուղում թաղված գանձերի քարտեզը՝ այն կիսելու պայմանով: Սա հորինված պատմությունն է, այլ իրական, որը հավաստում է գրողի կողմից գրքում զետեղված նամակի լուսատիպ պատճենը: Հետաքրքրական է տվյալ փաստաթղթի ներմուծումը վիպական հյուսվածք: Չնայած հեղինակը պատմում է իրականում կատարվածի մասին, սակայն ժամանակակից ընթերցողին հետաքրքիր է փաստերի «լեզուն»: Ինչպես գրել է ռուս գրականագետ Պալինսկին. *«Դա նման է այն մարդու հանդեպ վերաբերմունքին, որը, միանգամայն իրավացի լինելով հանդերձ, անօգնական է: Փաստաթուղթը գործում է անպատիժ և առանց հատուկ ճիգ ու ջանքի, խորամանկորեն: Նա նրբանկատ է, նա տեսնում է և չի տեսնում, խոսում է և չի խոսում: Հորինել ավելի ձեռնտու ձև, դժվար է»* [7, էջ 96]:

Այսպես, համեմատելով եռագրության երեք կերպարները, կարող ենք ասել, որ նրանք նույնանում են իրենց բարձրացրած խնդիրներով, այն է՝ ավանդույթների պահպանում, խուսափում ուժացումից ու սպիտակ ջարդից: Ի տարբերություն իրենց՝ նրանց հետնորդները չկարողացան խուսափել ձուլումից և այն դարձրին վերջնական:

Ամփոփելով ինքնակենսագրական երկի ժանրային առանձնահատկությունները և դրանց կոնկրետ դրսևորումները թե՛ մեզանում և թե՛ Մփյուռքում՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին, որ ինքնակենսագրական երկը իր բնորոշ տարբերակիչ հատկանիշներով առանձնանում է մեմուարային գրականության մնացած ժանրերից և իր ուրույն տեղն է զբաղեցնում գրականության մեջ: Այն անցել է զարգացման երկարատև ճանապարհ, որի ընթացքում ենթարկվել է բովանդակային փոփոխությունների ու հետագա զարգացումների: Ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության մեջ տվյալ ժանրն ունեցել է մեծ տարածում և զարգացել է՝ պայմանավորված պատմահասարակական իրադարձություններով: Հայ գրականության մեջ ինքնակենսագրական ժանրի տարածմանը խթան դարձան Մեծ Եղեռնը Արևմտյան Հայաստանում և խորհրդահայ ժամանակաշրջանը

Արևելյան Հայաստանում: Վերլուծելով Հակոբ Ասատուրյանի եռագրությունը՝ փորձում ենք հաստատել երկի ժանրային առանձնահատկությունները և նրա առանձին արժեքն ու ամբողջականությունը:

ЦЕННОСТЬ АВТОБИОГРАФИЧЕСКОГО РОМАНА В НОВЕЙШЕЙ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ ПО ИССЛЕДОВАНИЯМ ТРИЛОГИИ АКОПА АСАТУРЯНА

Абраамян Н. А.

Статья посвящена автобиографическому роману и его оценке в современной армянской литературе. Это дает возможность исследователю и, вообще, читателю лучше узнать жизненный и творческий мир данного писателя. На основе трилогии А. Асатурияна мы попытаемся оценить автобиографический роман в современной армянской литературе.

Ключевые слова: мемуарная литература, автобиографическая книга, Акоп Асатуриян, трилогия, армянская литература диаспоры, тема детства.

THE VALUATION OF AN AUTOBIOGRAPHICAL NOVEL IN MODERN ARMENIAN LITERATURE (WITH SPECIAL REFERENCE TO HAKOB ASATURYAN'S TRILOGY)

Abrahamyan N. A.

The article is dedicated to the autobiographical novel and its evaluation in the modern Armenian literature. It provides the researcher and also the reader with an opportunity to better know the life and creative world of the given writer. Based on H. Asaturyan's trilogy, we will try to evaluate the autobiographical novel in the context of modern Armenian literature.

Keywords: memoir literature, autobiographical work, Hakob Asaturyan, trilogy, literature of Armenian Diaspora, the topic of childhood.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատուրյան Հ. Հովակիմի թոռները: «Հայաստան» հր.: Եր.: 1974: 418 էջ:
2. Ասատուրյան Հ. Հովակիմի թոռնորդիները: «Սիփան» հր.: Պէյրուս: 1982, 267 էջ:
3. Ասատուրեան Յ. Վերջալոյսի յոյզեր: «Սիփան» հր.: Պէյրուս: 1996: 293 էջ:
4. Ասատուրեան Յ. Տօ, լա՛ճ տնաւեր: Թեքէեան մշակութային միութեան հր.: Նիւ Եորք: 1986: 164 էջ:

5. Արզումանյան Ս. Սովետահայ վեպը, Գիրք 1: «Հայաստան» հր.: Եր.: 1967: 582 էջ:
6. Գաբրիելյան Վ. Հայ նորագույն գրականություն. Սփյուռքահայ գրականություն (ուսումնական ձեռնարկ): «ԵՊՀ» հր.: Եր.: 2016: 424 էջ:
7. Դանիելեան Ս. Սփյուռքահայ վեպը, Գիրք Ա. Ժանրը, աւանդոյթները, պատմութեան փիլիսոփայութիւնը: Անթիլիաս: 1992: 366 էջ:
8. Թամրազյան Հր. Հակոբ Ասատուրյան, Կյանքը և գործը: «ԵՊՀ» հր.: Եր.: 1993: 144 էջ:
9. Կարապետ Ն. Երկու աշխարհ (գրական փորձագրութիւններ): Ուորթթաուն: 1992 թ.: 403 էջ:
10. Քալանթարյան Ժ. Գրականության տեսության արդի խնդիրներ: «ԵՊՀ» հր.: Երևան: 2016: 330 էջ:
11. Киров С. М. Народ страдающий.- Геноцид армян в Османской империи. /Сборник документов и материалов под ред. М. Нерсисяна /, Ер. „ Айастан“. 1982. 704 стр.
12. Палиевский П., Пути реализма, М. „Современник“ 1974. 220 стр.

Ժողովածու

1. Ավետիսյան Ա. Յեղասպանության վերհուշը Հ. Ասատուրյանի «Հովակիմի թոռները» վեպում, ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ, Էջմիածին, ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ: 2017: էջ 112-116:
2. Դավթյան Ն. Ինքնակենսագրության ժանրի արժարժումները սփյուռքահայ գրականության մեջ: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, № 3 (37): Երևան: 2017: էջ 42-52:
3. Սաֆարյան Լ. Ինքնակենսագրական տեքստի ժանրային առանձնահատկությունները// ԿԱՆԹԵՂ. Գիտական հոդվածների ժողովածու: 2002: Հատոր 2: էջ 102-109:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Աբրահամյան Ն. Ա.- մագիստրատուրա 1-ին կուրս

ՇՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն

Էլ. փոստ՝ naira.abrahamyan211@gmail.com

Գիտական ղեկավար՝ Մանասյան Լ., բան. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 09.11.2022

Գրախոսվել է՝ 02.02.2023

**ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՎԻՊԱԿԱՆ ԺԱՆՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Խ. ԴԱՇՏԵՆՑԻ
«ՌԱՆՉՊԱՐՆԵՐԻ ԿԱՆՉԸ» ՎԻՊԱՍՔՈՒՄ
Մելիքսեթյան Ա. Վ.**

Բանահյուսության և գրականության միջև սերտ կապ կա: Որքան էլ փոխվում են ժամանակները, միևնույն է, մարդն իր հոգու նվիրական անկյուններում որոնում է խորապես ազգային խոսք, և այդ խոսքը գտնում է բանահյուսության տարբեր ժանրերով ավանդված ստեղծագործություններում: Դրանք ժողովրդի աշխարհընկալումների հետ սերտորեն կապված գրողների շնորհիվ, հաճախ սկզբնաղբյուրներից գրի առնվելով կամ մշակվելով, խմբագրվելով, յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում գրականության մեջ իրենց նոր տեղն են գտնում: Ակնհայտ է, որ Խ. Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» վիպասքը կառուցելիս առատորեն օգտվել է հայ բանահյուսության աստղծից՝ Էպոսից, վիպական երգերից, քնարական և էպիկական երգերից, ավանդություններից ու թևավոր խոսքերից՝ իր ժողովրդաշունչ վեպին տալով խորապես ազգային բնույթ: Բանահյուսության տարբեր ժանրերով նյութերի առատ կիրառությունը գրողի երկում գեղարվեստորեն միահյուսում է մեր ժողովրդի հազարամյակների բանավոր մշակույթը ներկայի ու ապագայի հետ:

Բանալի բառեր. բանահյուսություն, վիպասք, ավանդություն, միֆ, էպոս, հայդուկ, առասպելական կերպար, նորագույն գրականություն:

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, նրա հավաքական բանականության արտացոլումը: Այն սկզբնավորվել է դեռ այն ժամանակ, երբ մարդիկ չէին ստեղծել տառերը: Բանահյուսությունն անընդհատ նորոգվել, թարմացել է՝ իր մեջ առնելով ժողովրդական լայն զանգվածների աշխարհընկալումը, դարավոր կենսափորձը, նրանց ըմբռնումներն ու իմաստությունները:

Հայտնի է, որ բանահյուսական երկերը ստեղծվել են ժողովրդի տաղանդավոր անհատների ստեղծագործական ընդունակությունների շնորհիվ, դրանք հորինվել են բանավոր կերպով, բնականաբար ունեցել են բազմազան պատումներ, միահյուսված են եղել ժողովրդական արվեստի այլ տեսակների (պար, երգ, թատերական ներկայացում) հետ,

ունեցել են խորիմաստ բովանդակություն ու առանձին դեպքերում գեղարվեստական կատարելություն [4, էջ 4-5]: Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված է ժողովրդի կյանքը, նրա աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդական փիլիսոփայությունը: Պատահական չէ, որ ժողովրդական բանահյուսություն նշանակող «ֆոլկլոր» բառը միջազգային եզրույթ է, որն անգլերեն է և նշանակում է **ժողովրդական իմաստություն** [4, էջ 4]: Այն ունի ճանաչողական մեծ արժեք՝ հատկապես ժողովուրդների նախապատմական շրջանի կյանքի ժամանակահատվածն ընկալելու առումով: Բանավոր գեղարվեստական ստեղծագործություններում յուրովի են արտացոլվել, ինչ խոսք, նաև հետագա դարերի ազգային հոգևոր կյանքի ամենատարբեր կողմերը: Այս ամենի շնորհիվ բանահյուսությունը շարունակ հայտնվում է գրողների ուշադրության կենտրոնում և օգտագործվում է ազգային կյանքը խորությամբ ու գունեղ պատկերելու համար: Բնականաբար ժամանակակից գրականության տեսության մեջ գրականագետներն իրենց հողվածներում կարևորում են գրողների գրական-գեղարվեստական ստեղծագործություններում ժողովրդի միֆամտածողությունն արտահայտող բանահյուսական հորինվածքների գեղարվեստական, գաղափարական դերակատարությունը ուսումնասիրելու գործը: Ժողովրդական բանահյուսությունը համաշխարհային գրականության, այդ թվում նաև հայ գրականության մեջ զարգացման տարբեր փուլերում յուրովի, սակայն անհրաժեշտաբար կիրառվել է:

Ժողովրդական բանահյուսության պատառիկները որոշակի խմբագրություններով առատորեն հանդես են գալիս նորագույն շրջանի հայ գրականության ականավոր ներկայացուցիչ, կորուսյալ երկրի բանասաց (բնորոշումը՝ Կարո Վարդանյանի) Խաչիկ Դաշտենցի ստեղծագործություններում, մասնավորապես «Ռանչպարների կանչը» վիպասքում: «Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակում» ուսումնասիրության մեջ գրականագետ Ալվարո Սեմիրջյան-Բեքմեզյանը իրավացիորեն նկատում է. «60-70-ականների և մեր օրերի հայ արձակի ընդհանրություններից մեկն էլ Խաչիկ Դաշտենցի միֆակիրառման սկզբունքն է՝ մասնավորապես «Ռանչպարների կանչը» վեպի օրինակով: Այստեղ հեղինակի կիրառած սկզբունքը իրականի և առասպելականի՝ գեղարվեստական տեքստում տարրալուծվելու միտումն է, ինչը արդի հայ արձակի միֆական պոետիկայի հիմնական սկզբունքներից մեկն է» [1, էջ 9]:

Վիպական բանահյուսությունը, որն ընդգրկում է գրույցները, վիպական-առասպելական երգերը, ավանդությունները, հեքիաթները, առակները և այլ արձակ ժանրեր, պարզ ու որոշակի կերպով դրսևորվել է Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքում:

Ավանդությունները պատմողական ժանրի կարճ, արձակ, տեղեկատու բնույթի գրույցներ ու հուշապատումներ են՝ տեղային նշանակություն ունեցող դեպքերի կամ դեմքերի, բնական ու մշակութային առարկաների, երևույթների վերաբերյալ, արտացոլում են իրական կամ հրաշապատում բովանդակություն: Բնույթով լինում են իրերի ու երևույթների ծագումը պատճառաբանող, անունները ստուգաբանող կամ էլ պատմական անձանց որևէ արարքի մասին պատմող գրույցներ:

Ա. Ղանալանյանն իր «Ավանդապատում» աշխատության մեջ տարբերակում է առասպելներն ու ավանդությունները: Ըստ նրա՝ «...առասպելների մեջ առկա է բնության և հասարակական կյանքի դիցաբանական ընկալումը, ... այստեղ մարդը իր երևակայության մեջ և այդ երևակայության միջոցով անգիտակցական և պատկերավոր ձևով մարմնավորել և աստվածացրել է իր համար անըմբռնելի և իր վրա իշխող մութ ու տարերային ուժերը: Մինչդեռ ավանդությունների մեջ մարդու աշխարհաճանաչողությունն ունի ավելի գիտակցական բնույթ, և առաջնայինը ոչ թե աստվածներն են, այլ մարդիկ՝ բնության ու հասարակական կյանքի հակոտնյա ուժերի դեմ իրենց պայքարով, պատմական ճակատագրով» [6, էջ ԺԵ-ԺԶ]:

«Ռանչպարների կանչը» վիպասքում հանդիպում ենք նաև ավանդությունների: Վերջիններս պատմվում են տարբեր հերոսների կողմից և բազմաբնույթ են:

Ավանդությունների մեջ կարելի է առանձնացնել բույսերի և կենդանիների պաշտամունքին նվիրված ավանդապատումներն ու նրանց առանձնահատկությունները: Այս տեսանկյունից ուշագրավ է ազգային ավանդությունների մի որոշ խմբի մասին հետևյալ դիտարկումը. «Ավանդությունների մեջ առանձնապես ցայտուն է արտահայտված հայ ժողովրդի հնօրյա այն ըմբռնում-հավատալիքը, ըստ որի՝ մարդ արարածին հատուկ է բույսի կամ կենդանու կերպարանափոխվելու կախարդական հատկությունը:

Նման կարգի ավանդությունները, ինչպես այլուր, այնպես էլ մեզանում, ծագել են տոհմատիրական-համայնական հասարակարգի դարաշրջանում, շրջապատի բույսերից ու կենդանիներից մարդու

ունեցած ամենօրյա կենսական կախման պայմաններում» [6, էջ ԾԴ]: Այս ավանդությունների հետ սերտորեն կապվում են քրիստոնեական և հեթանոսական հավատալիքներին նվիրված ավանդությունները, որոնք ձևավորվել են հեթանոսությունից քրիստոնեության անցման ժամանակաշրջանում: Կարծում ենք՝ Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքում մեր առանձնացրած ներքոբերյալ օրինակները ասվածի լավագույն նմուշներից են: Վիպասքում բանահյուսական տարրերով են պատմվում այնպիսի կերպարանափոխությունները, որոնք, ավանդություն լինելով հանդերձ, առնչություններ ունեն լեգենդի մեջ տեղի ունեցող հրաշապատում կերպարանափոխությունների հետ: Նման առնչությունները վկայում են ավանդության և լեգենդի ժանրի սերտաճումների մասին, որոնք ժողովրդի գիտակցության մեջ իրենց ֆանտաստիկ բնույթի շնորհիվ հրաշքի տպավորություն են գործում:

Ծծմակ լեռան կատարի լեգենդը պատմում է կաքավների փոխված քրմերի և քրմուհիների ավանդությունը: Երբ կործանվել են հեթանոսական տաճարները, նրանց քրմերն ու քրմուհիները քարակաքավներ են դարձել: «Տարգեվանքի գիշերը» գլխում Մենեքերիմ վարժապետը պատմում է. «... երբ Մշո դաշտի հեթանոս տաճարները կործանվեցին, նրանց քրմերն ու քրմուհիները քարակաքավներ դարձան ու թռան դեպի ապառաժոտ բլուրները: Նրանց մի մասը թաքնվեց Ծծմակա քթի ձեռքերի մեջ:...

...Ես նայում եմ նրանց և մի տեսակ սրբազան դող է պատում ինձ. մի թե իսկապես դրանք այն հին քրմերի ու քրմուհիների մնացորդներն են» [3, էջ 29]: Մեր ժողովրդի պատմաքաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները ժողովուրդն իր երևակայությամբ ներկայացրել է նման ավանդապատում-լեգենդի միջոցով:

Նույն գլխում հանդիպում ենք մեկ այլ նմանաբնույթ ավանդության, որը պատմել է Մելքոն վարժապետը՝ «Ռանչպարների կանչի» հեղինակը. «Նա ասում էր, որ Մաշտոցի գրերից առաջ Հայաստանում եղել են քարե հեթանոս մատյաններ: Երբ թշնամին մտել է Տարոն և սկսել է դրանք ջարդել, նրանց միջի բոլոր գրերը մի ակնթարթում դարձել են մեղուներ և աղմկալի դուրս փախչելով քարե մատյաններից՝ պարս են կապել Ծծմակի և Ծիրնկատարի ապառաժներին» [3, էջ 30]: Նշված ավանդությամբ Խաչիկ Դաշտենցը կարծես հաստատում է մաշտոցյան այբուբենի հայտնագործումից առաջ հայ ժողովրդի գիր և գրչություն ունեցած լինելու վարկածը՝ ավանդության միջոցով ցույց տալով, թե ինչն է եղել դրանց անհետացման պատճառը:

Գեղեցիկ և ինքնատիպ ավանդույթի տարբերակ է, որը հորինվել է այս դեպքում իբրև Մեղրագետի սկզբնավորման մասին ավանդություն: Այստեղ պատմվում է գյուղի իրիցկնոջ մաքուր սրտի ու անմեղության, քրիստոնեության հանդեպ նվիրվածության ու հավատի մասին: Անձանոթի հանդեպ հոգատարություն դրսևորելու պատճառով նա թույլ է տալիս, որ վերջինս նաև համբուրի իրեն, սակայն ամուսնու քահանայի անսպասելի հայտնվելու պատճառով նա, ամոթահար լինելով, իրեն նետում է թոնրի բոցերի մեջ, և թոնիրը լցվում է քաղցրահամ ջրով, ինքն էլ ձուկ է դառնում ու սուզվում է ջրի հատակը:

Անդրադառնալով վիպասքում գործածված միֆոլոգիական տարրին՝ գրականագետ Մ. Սարինյանը գրառում է. «Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքը ոճի ռեալիստական պատումի և միֆոլոգիզմի ներհյուսում է, ուր առասպելականի իրական աշխարհն ու իրականի առասպելական աշխարհը փոխներթափանցում են և դառնում կեցության ձև» [6, էջ 71]: Եվ, իրոք, միաձուլելով իրականը, առասպելական-միֆականն ու ժողովրդական ոգու վսեմագույն ցոլացումները, Բանասացը վեպն հասցրել է կատարելության՝ ժանրատեսակի ինքնատիպության տեսակետից:

Բանահյուսության վիպական ժանրի ստեղծագործություններից էպոսին ևս անդրադարձել է Խ. Դաշտենցն իր վիպասքում: Վիպասքի «Մեծերի ժողովը» վերնագրված հատվածում բանասաց Դաշտենցը ընդհանուր հատկանիշներով կրկնում է էպոսում կիրառված և ընթերցողների լայն շրջանում հայտնի «օդորմիների» շարքը, անշուշտ, միայն բանասացին բնորոշ ստեղծագործական մոտեցմամբ:

Համեմատենք.

Հիշենք զօդորմին Ծովինարին,
Քառսուն օդորմի Սանասարին:
Հիշենք զօդորմին Բաղդասարին,
Քառսուն օդորմի Դեղձուն-Ծամին:
Հիշենք զօդորմին Քեռի Թորոսին,
Քառսուն օդորմի Ձենով Հովանին:
Հիշենք զօդորմին Ջոջ Մհերին,
Քառսուն օդորմի Արմաղանին:
Հազար օդորմի Էն Թառլան Դավթին,
Քառսուն օդորմի Խանդութ խանումին...[7, էջ 418]:

Կամ՝

Դառնամ զօդորմի՛ն տի տամ

Դեղձուն ճուղ-Ծամին,-հազա՜ր օղորմի:
Դառնամ, զօղորմի՛ն տի տամ
Քեռի Թորոսին,-հազա՜ր օղորմի:
Դառնամ, զօղորմի՛ն տի տամ
Ձենով Հովանին,- հազա՜ր օղորմի:
Դառնամ, զօղորմի՛ն տի տամ
Արմաղանին,- հազա՜ր օղորմի...[7, էջ 166]:

«Եվ թող հիշվեն Գևորգ Չավուշն ու Շապինանդը, որ գումարեցին այդ պատմական ժողովը Գելի գյուղում:...Եվ թող հիշվի երկաթագործ Համզեն՝ անվանի դարբինը Տավորիկի: Հայտնվեց Հլողինքի մեծ տանուտեր Կիրո Օսմանը, որ սպանել էր Սելիմ բեկին «Գյալի» կովում: Թող նա էլ պայծառ հիշվի: Եվ Հլողինքի ռեսը եկավ՝ վառված ծխամորճը բերանին և բեղերը մինչև ականջները ոլորած: Եվ թող հիշվի ռես Թաթարը Տավորիկի վերին թաղից, որ բախշիշի փոխարեն օձի ձագ էր դրել Քոռ Սլոյի գրպանը...» [3, էջ 106]:

Չնայելով, որ էպոսից բերված հատվածը լիրիկական ժանրով է գրված, իսկ դաշտենցյան տարբերակը շարադրված է արձակ, չենք կարող չնկատել, որ ասելիքի կառույցը գրեթե նույն սկզբունքով է գծված. «հիշենք/դառնանք..... քառուսն, օղորմի» և «և թող հիշվեն/ի..., թող պայծառ հիշվի»: Սակայն բերված հատվածների ձևային ընդհանրությունը ամենևին չի նշանակում, թե Դաշտենցի կերտած հիշողությունների շարքը տառացիորեն կրկնում է էպոսի կառուցվածքային առանձնահատկությունը: Բանասացը, օգտվելով էպոսում գործածված և այդպիսով հերոսներին անմահացրած հնարանքից, ինքն է կերտում հիշատակության և հիշվելու արժանի նորոյա հերոսներ, քանի որ այդ օրվա հավաքից էր կախված Մասնո աշխարհի ապագան:

Տեղին է նկատել գրականագետ Մանե Սարինյանը իր «Միֆոլոգիզմը 20-րդ դարի 60-80-ական թթ. հայ արձակում» աշխատության մեջ՝ գրելով. «Այս կերպարներն ու նրանց արարքներն իրական են, բայց վեպն ընթերցելիս թվում է, թե քաջարի հայդուկները ոչ թե հողածին մահկանացուներ են, այլ էպոսի հերոսների նման աստվածային դյուցազուններ, ում էպիկական կերպարները և հերոսական արարքները հեքիաթային տարր են մտցնում վիպական պատումի մեջ» [6, էջ 71-72]:

Վիպասքում առկա են ոչ միայն էպոսից բխող ամբողջական նկարագրություններ կամ ընդհանուր սյուժեներ, այլև, ինչպես նշվեց վերևում, նկատվում են որոշակի հերոսների ընդհանուր հատկանիշներ: «Ռանչպարների կանչում» այդպիսի հերոս է Կուրավա Շմոն, որի կերպարը անվիճելի կերպով նման է էպոսի հավերժական կերպարներից Փոքր Մհերի կերպարին: Ինչպես էպոսում է Մհերի՝ Ագռավաքարից դուրս գալը կապվում բերքի առատության և արդարության վերականգնման հետ, այնպես էլ Շմոն Մշո դաշտում գտած ուրարտական խոշորահատիկ ցորենը, որն անգին գանձի պես էր պահում, շաղ կտար միայն իր երագած ազատ Հայաստանի դաշտերում: Նա անհամբեր սպասում էր բաղձալի արդարությանը: Արդարության վերականգնման սպասում կա նաև Փոքր Մհերի կերպարում, որին անդրադարձել է գրականագետ Ա. Եղիազարյանը. «Փոքր Մհերը հաղորդում է, որ քարից դուրս կգա միայն այն ժամանակ, երբ ցորենը լինի «քանց մասուր» և գարին՝ «քանց ընկույզ»: Այսինքն՝ ժողովուրդը ոչ միայն սպասում է Մհերի ելքին, այլև այն կապում է լավ օրերի սպասման հետ» [5, էջ 221]:

Կարծես մոտեցել է Փոքր Մհերի՝ քարայրից դուրս գալու ժամանակը, քանի որ նրա սահմանած պահը եկել է. ցորենը դարձել է «քանց մասուր մի» և այդ ժամանակը կանգ է առել Շմոնի ձեռքով: Ճիշտ է, մայր հողը պատրաստ է ընդունելու Մհերին, սակայն Ռանչպար Շմոն մտածում է, որ աշխարհը դեռևս շատ է անարդար և սրտատրոփ սպասում է արդարության վերածննդին, որ շաղ տա ուրարտական մասրաչափ ցորենը և այդպիսով նշան տա Փոքր Մհերին՝ քարայրից դուրս գալու:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ «Ռանչպարների կանչի» այս կերպարը գալիս է լրացնելու էպոսի հերոսների շարքը:

Լինելով գրականության նորագույն շրջանի բանասաց՝ Խ. Դաշտենցը մեկ անգամ չէ, որ օգտվել է էպոսում գործածված հրաշատիպ ավանդներից: «Պայթող աղբյուրի հրաշքը» գլուխը ասվածի լավագույն վկայությունն է: Այնպես, ինչպես էպոսի առաջին ճյուղի գլխավոր հերոսներ Ծովինարը և Սանասարն են դժվարին պահին զորակցություն ստանում Տիրոջից (մի դեպքում՝ Կաթնաղբյուրի հրաշքով, մյուս դեպքում՝ Սանասարի զորություն ստանալը ջրից, ծովի հատակից գենք ու գրահի և Քուռկիկ Ջալալու դուրս բերելով), Դաշտենցի հերոսներից Մոսե Իմոն էլ, Անգլիայի թագավորի նամակը կարդալուց հետո հուսահատված, մտածում է, որ միայն Պայթող աղբյուրի հրաշքը

կարող էր ազատել Սասունը օրհասից: Վիպասքում այդ հրաշքը տեսնողը քաջ պիտի լինի: Այսպես. «Բուլոբն էլ գիտեին, որ Պայթող աղբյուրի ակունքում ձիեր կան: Գիտեին նույնպես, որ նրանք ամեն մարդու աչքին չեն երևում: Ով քաջ է, միայն նա կարող է այդպիսի ձի տեսնել» [3, էջ 115]: Մոսե Իմոն տեսնում է, և ձիու խորհրդով ու հրաշագործ գործությամբ կարծես լուծվում է գորդյան հանգույցը:

Դիպուկ է բնորոշել Մ. Գալշոյանը. «Հույսը դարձյալ հրաշքն է. Պայթող աղբյուրի ակունքից հայտնվող Քուռկիկ Ջալալին, երկրի ընդերքից հայտնվող ձին:

Այդ հրեղեն ձին Արաբոն էր: ...Պայթող աղբյուրի հիաշքը հայ ֆիդայիներն էին» [2, էջ 309]: Ինչպես նկատում ենք, բերված օրինակում ևս անելանելի դրությունը պարզվում է աղբյուրի/ջրի միջոցով: Կարծում ենք՝ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ ջրի արքեսիպի յուրօրինակ դրսևորում նորագույն շրջանի հայ գրականության մեջ:

Վիպասքի սյուժեն հարստացած է նաև հեքիաթի ժանրով: Բանասացը միահյուսում է վիպական իրականությունը և հեքիաթը: Ծաղիկ Համբարձումը, որը ասացողի յուրահատուկ կերպար է վիպասքում, «Վա՛խ, իմ Ասլանս կորավ» և հաջորդ՝ «Երեք բաղարջ» գլուխներում պատմում է Անդրանիկ գորավարի մասին իրապատում հեքիաթաշար, որն ինքը «առել էր վերջին ասացողի ձեռքից» և պատմում էր որոշակի փոփոխություններով: Վիպասքի այս հատվածում Խ. Դաշտենցը ևս մեկ անգամ ընդգծում է Անդրանիկ/Շապինանդի կերպարի ժողովրդական լինելը: Վերջինս այնքան հայտնի ու սիրված էր ժողովրդի կողմից, որ նրա անձի շուրջ հեքիաթներ ու առասպելներ էին հյուսվում, հաճախ՝ այնպիսի կերպարների կողմից, ովքեր անձամբ չէին տեսել, չէին ճանաչում նրան, այլ նրանց էր հասել քաջ գորավարի համբավը:

Հեքիաթի ժանրի առատության տեսակետից աչքի է ընկնում վիպասքի վերջին՝ «Իմ աղունն իջավ» գլուխը: Ջրտուքվար Ֆադեն ժամանակին քաջ հայդուկ էր, իսկ այժմ ապրում է գեղջուկ աշխատավորի առօրյայով: Նրա ետևից վազվզող մանուկները Ֆադեից հաճախ են լսել հայդուկների հեքիաթախառն պատմությունները: Մանուկներին թվում է, թե ծերուկ Ֆադեի պատմածները հեքիաթ են, որ կան: Ընթերցողն էլ, յուրաքանչյուր հերոսի անունը ևս մեկ անգամ տեսնելով, հիշում է նրանց քաջագործությունները և հանգում այն գիտակցության, որ, այո՛, միայն ընտրյալները՝ երկնային գորություն ու

կամք ստացած հայորդիները, կարող էին շրջել պատմության գորեղ անիվը և նոր ընթացք տալ դրան:

Ջրտուքվար Ֆադեն մանուկներին հայտնի չէ՝ քանի անգամ էր պատմել Մոսե Իմոյի, Պայթող աղբյուրի և Շապինանդի, Մորուք Կարոյի և այլոց մասին «հեքիաթներ»: Բայց մի բան հաստատ է. մանուկները սիրով ու ոգևորությամբ էին լսում դրանք: Այսինքն՝ մատաղ սերունդը՝ դաստիարակվելու և ոգեշնչվելու նոր աղբյուր ուներ՝ քաջ ֆիդայիները՝ ազատության առասպելական մարտիկները:

Իրապատում հեքիաթի ժանրը և էպոսից բխող բանահյուսական ատաղձը, ձուլվելով ֆիդայիների իրական-պատմական կերպարներին, հարստացնում են վեպը՝ նրան տալով ասքապատումի արժեք:

Եզրահանգում: Այսպիսով՝ նորագույն շրջանի հայ գրականությունը, ի դեմս Խաչիկ Դաշտենցի, ունի բարձրարժեք գրականություն, որն իր տեսակով յուրահատուկ է: Իրականն ու առասպելականն այստեղ փոխընդանուր են միմյանց: Վիպասանը չի ձգտել իր հերոսներին նկարագրել հայերենի ողջ ճոխությամբ, այլ հեռավոր նմանություն է ուրվագծել ընթերցողին քաջածանոթ որևէ կերպարի հետ, ինչը թերևս ավելի արժեքավոր է դարձնում թե՛ հերոս-ֆիդայիների կերպարային յուրահատկությունները, թե՛ վիպասքն առհասարակ:

Վիպասքում հանդես եկող մոտիվները խորապես ազգային են, քանի որ իրենց հիմքում կրում են նախնիների կողմից ժառանգած, հային հայ պահող բանահյուսական պատառիկներ: Վերջիններիս դաշտենցյան մեկնաբանությունները նոր շունչ են հաղորդում թե՛ հնավանդ առասպելներին, ավանդություններին, հեքիաթներին, էպոսին ու վիպական ժանրի այլ դրսևորումներին, թե՛ հիմք և ուղի են տալիս ապագայում գրվելիք գրականությանը:

**ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ЖАНРА ФОЛЬКЛОРА ОТЧАЯНИЕ
В РОМАНЕ Х. ДАШТЕНЦА “ЗОВ ПАХАРЯ”
Меликсетян А. В.**

Существует тесная связь между фольклором и литературой. Как бы ни менялись времена, люди по-прежнему ищут глубоконациональное слово в заветных уголках своей души и находят это слово в произведениях разных жанров фольклора. Благодаря писателям, тесно связанным с народными мировоззрениями, они часто записываются с первоисточников

или развиваются, редактируются и находят свое новое место в литературе в каждый исторический период. Очевидно, что Х. Даштенц, создавая свой роман “Зов пахаря”, щедро использовал армянский фольклор: былины, эпические песни, лирические и эпические песни, предания и фразы, придавая своему народному роману глубоко национальный характер. Обильное использование материалов разных жанров фольклора в творчестве писателя художественно переплетает устную культуру нашего народа на протяжении тысячелетий с настоящим и будущим.

Ключевые слова: фольклор, роман, традиция, миф, эпос, сказка, мифический образ, современная литература.

CHARACTERISTICS OF THE MANIFESTATION OF THE NOVEL GENRE IN KHACHIK DASHTENS'S “THE CALL OF THE PLOWMEN”

Meliqsetyan A. V.

There is a close (strong) connection between folklore and literature. No matter how times change, people still search for a deeply national word in the sacred space of their soul, and find it in the works of different genres of folklore. Thanks to the writers closely related to the people's worldviews, they are often written down from the original sources or developed, edited, and find their new place in the literature in each historical period. It is noteworthy that while creating his novel «The Call of the Plowmen», Dashtens made abundant use of Armenian folklore: epics, epic songs, lyrical songs, traditions and idioms, giving his folk novel a deeply national character. The abundant use of materials from different genres of folklore in the writer's work artistically interweaves the oral culture of people for millennia with the present and future.

Keywords: folklore, novel, tradition, myth, epic, haiduk, mythological characters, modern literature.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեքմեզյան Ա. Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակուրմ: ԵՊՀ հրատարակչություն: Երևան: 2007: 154 էջ:
2. Գալշոյան Մ. Ագռավաքար, Բրաբիոն ծաղիկ որոնողը: «Հայաստան» հրատարակչություն: Երևան: 1990: 370 էջ:

3. Դաշտենց Խ. Ռանչպարների կանչը: «Սովետական գրող» հրատարակչություն: Երևան: 1984: 533 էջ:
4. Դոլուխանյան Ա. Հայ ժողովրդական բանահյուսություն: «Զանգակ» հրատարակչություն: Երևան: 2008: 265 էջ:
5. Եզիազարյան Ա. «Մասնա ծոեր» էպոսի պոետիկան: «Անտարես» հրատարակչություն: Երևան: 2013: 326 էջ:
6. Ղանալանյան Ա. Ավանդապատում: Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն: Երևան: 1969: 530 էջ:
7. Սարինյան Մ. Միֆոլոգիզմը 20-րդ դարի 60-80-ական թթ. հայ արձակում: «Ծիծեռնակ» հրատարակչություն: Երևան: 2012: 190 էջ:
8. Սասունցի Դավիթ հայկական ժողովրդական էպոս: «Արևիկ» հրատարակչություն: Երևան: 1988: 428 էջ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մեյիքսեթյան Ա. Վ. – հայցորդ, 2-րդ կուրս

ՇՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Նորագույն շրջանի հայ գրականություն

Էլ. փոստ՝ aregnaz.manukyan.1997@mail.ru

Գիտական ղեկավար՝ *Խաչիկյան Գ., բան. գիտ. դոկ., պրոֆեսոր*

*Ստացվել է՝ 10.11.2022
Գրախոսվել է՝ 23.01.2023*

**ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԱՆԱ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ
Հակոբյան Տ. Վ.**

Հոդվածում քննել ենք ժամանակի և տարածության պատկերման արտահայտությունները արդի հայ արձակուրդի հիմնվելով Դ. Համբարձումյանի ստեղծագործությունների վրա: Ցույց ենք տվել տիեզերական տարածության ու ժամանակի սեղմումը, ընդարձակումը և միմյանց փոխլրացումը, տարածության ու ժամանակի հարաբերությունը՝ պայմանավորված երկերի կառուցվածքային առանձնահատկությամբ: Գեղարվեստական երկի ներքին տիրույթում դիտարկել ենք տարածաժամանակային անցումները՝ վերհանելով տարածաժամանակությունների, տարածության և ժամանակի շրջադարձելիության երևույթը:

Բանալի բառեր. գեղարվեստական պայմանականություն, տարածաժամանակություն, տարածաժամանակային հարաբերակցություն, ընթացականություն, պատկեր-դրվագ, փոփոխություն, քրոնոտոպ:

Նախաբան: Աշխատանքը կատարելիս օգտվել ենք տարածության և ժամանակի վերաբերյալ գրված տեսական նյութերից, ինչպես նաև հեղինակի երկերի վերաբերյալ ուսումնասիրություններից: Տարածության ու ժամանակի առանձնահատկություններին և խնդիրներին անդրադարձել են Չ. Ավետիսյանը «Գրականության տեսություն» գրքում, «Էպիկական և ավանտյուրային ժամանակը գրականության մեջ» հոդվածում, Է. Ջրբաշյանը «Գրականագիտության ներածություն» գրքում, Ա. Ջրբաշյանը «Ժամանակի պատկերման առանձնահատկությունները պատումային երկերում» հոդվածում, Ա. Բեքմեզյանը «Գեղարվեստական ժամանակի և տարածության (քրոնոտոպի) խնդիրը գրականության մեջ» հոդվածում և այլք:

Նպատակն է բացահայտել պատումի տիրույթում տարածության և ժամանակի փոխհարաբերությունները, ընգրկման սահմանների չափումը, տարածական փոփոխություններում տարածաժամանակությունների դրսևորումները:

Տարբեր ժամանակներում տարածության ու ժամանակի քննությունը արդիական է եղել, սակայն փորձել ենք նոր հայեցակետով

քննել ընտրված երկերի տարածաժամանակային հարաբերակցությունը, որը զուգադրվել է կառուցվածքային յուրատիպության հետ, միաժամանակ ընդգծել ենք քրոնոտոպային զանազան փոխլրացնող հարաբերություններ՝ ստեղծագործություններում առկա տարածաժամանակային անցումները շեշտելու համար:

Արդի հայ արձակը, ենթարկվելով ժամանակի թելադրած պահանջներին, հանդես է գալիս գրականության բազմաբնույթ գեղագիտական աշխարհի յուրահատուկ ընկալմամբ ու պատկերմամբ: Գրական երկի պատումակառուցման յուրահատկություններից մեկը ժամանակի և տարածության փոխապայմանավորված լինելիությունն է: «Գրական-գեղարվեստական քրոնոտոպում առկա է հստակեցված և իմաստավորված ամբողջության տարածական և ժամանակային նշանների միահյուսում: Ժամանակն այստեղ խտանում, սեղմվում է, դառնում գեղարվեստորեն տեսանելի, տարածությունն իր հերթին դառնում է հագեցած, ներքաշվում ժամանակի, պուժեի, պատմության շարժման մեջ» [1, 6]: Գեղարվեստական երկի ներքին կյանքը կայանում է որոշակի տարածաժամանակային տիրույթում: «Որքան անվերջ է ժամանակը, այնքան անվերջ է տարածությունը, որքան սահմանափակ է տարածությունը, այնքան սահմանափակվում է ժամանակը» [3, 133-134]:

Ստեղծագործող անհատներից յուրաքանչյուրը ժամանակի և տարածության պատկերման, ինչպես նաև դրանց գեղարվեստական բնութագրման իր ընկալումներն ունի: Դ. Համբարձումյանի արձակի առանձնահատկություններից մեկը տարածության ու ժամանակի համահունչ ընթացականության ու փոփոխության պատկերումն է: Դրանք հանդես են գալիս իբրև միմյանց փոխլրացնող երևույթներ:

Դ. Համբարձումյանի «Դուռը թակում են» վեպում տարածությունն ու ժամանակը հանդես են գալիս ամբողջական, միահյուսված, տարածական փոփոխությունները հստակ են՝ պայմանավորված ժամանակային անցումներով: Պատումում երեք կերպարների (Զիավոր, Կին, Եկվոր) միջոցով ներկայացվում են տարբեր պատմություններ /ապրված, տեսած, լսած կամ ենթադրած/, որոնք եղել են, լինում են և լինելու են՝ ըստ էության ենթադրելով տարբեր ժամանակներ՝ անցյալ, ներկա, ապագա, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ տարածական տիրույթ: Երկը կառուցված է դիպվածային դրվագներից՝ կերպարների կողմից ներկայացվող հատվածներից:

Տարածության ու ժամանակի քննությունը պետք է զուգահեռել վեպի կառուցվածքային առանձնահատկության հետ: Երկը բաղկացած է

20 գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին՝ առանձին պատկեր-դրվագներից, ինչը ենթադրում է առանձին, միմյանց փոխլրացնող ու փոխկապակցված տարածական ու ժամանակային դաշտեր: Պատումը կառուցվում է ներկա ժամանակում, որն իր մեջ ենթադրում է անցյալ ու ապագա ժամանակները, որոնցից առավել ընդգծված է անցյալ ժամանակը:

Վիպական տարածքն անընդհատ ընդարձակվում է՝ իր մեջ ընդգրկելով արտաքին ու ներքին տարածքներ: Տիեզերական տարածությունը սեղմվում է պատումում. այն հաճախ նույնանում է փողոցի հետ. «Տիեզերքը տեղավորվում է իմ ու քո արանքում» [6, 170], հաճախ էլ այնքան է ընդարձակվում, որ վերածվում է անչափելի տարածության: Պայմանավորված դրվագային փոփոխություններով՝ փոփոխվում են նաև պատումում պատկերվող ժամանակն ու տարածությունը: Պատումի ժամանակային ընթացականությունն ապահովելու համար հեղինակը մի շարք հնարքներ է կիրառում՝ բերելով հետևյալ կադապարները. Ձիավորի անընդհատ դեգերումները, գնացքի շարժումը, ինքնաթիռով Եկվորի ու Կնոջ ճամփորդությունը, քամու ընթացքը, հայելու միջոցով ժամանակային փոփոխության մատնացույց անելը, ժամանակը ճամպրուկով տեղափոխելը և այլն: Ժամանակային այս փոփոխությունները տեղի են ունենում ինչպես ամբողջ պատումի տարածական տիրույթում, այնպես էլ ընդհանուրից ածանցված ենթապատումներում (դրանք այն դրվագներն են, որոնք վերարտադրվում են վերհուշի ձևով): Տարածաժամանակային տիրույթների միահյուսումից առաջ է գալիս տարածաժամանակային ընդարձակության գաղափարը, տարբեր տարածքներ ու ժամանակներ, ըստ էության, ամբողջանում են վեպի սահմաններում:

Երկի կերպարների կենսատարածքին զուգահեռ կարելի է քննել նաև նրանց ներքին ժամանակը: Վեպի կերպարները իրար մեջ են ու իրար հետ, քաջատեղյակ են հյուսվող պատմություններին: Նրանք քանդում են տարածության ու ժամանակի ստեղծած սահմանները. ամենուր են, մեկը մյուսի առօրյայում ու երազներում: «Վեպում տարածաժամանակային պատկերները հաճախ հեռանում են տարածությունից ու ժամանակից դեպի հոգեկան աշխարհ: Արտաքուստ տեղից տեղ շարժվող հերոսները՝ անմարդ տեղանքներում, լեռներում թափառող, ինչ-որ տեղից եկող, ինչ-որ տեղ շտապող Ձիավորը, երևանյան ետնաբակում ու եվրոպաներում իրենք իրենց որոնող Եկվորն ու Կինը անձնական ու անանձնական տազնապներով կյանքը

մոտեցնում են հոգու տարածությանն ու ժամանակին» [10]: Չորս հարյուր օր ու գիշեր հյուսվող պատմությունը ավարտվում է պատումի տիրույթում, բայց պիտի իր շարունակությունը գտնի իրական կյանքում. ժամանակը կանգ չի առնում, ոչինչ չի ավարտվում, ամեն բան իր տեղը կգտնի ենթադրելի ապագայում:

Հեղինակային մտածողության տեսակի ու ձևի յուրահատկության արդյունք է ուսումնասիրության նյութ դարձրած հաջորդ՝ «Աստծո բնակեցրած երկրում» վեպը, որը նույնպես հետաքրքիր կառուցվածք ունի՝ վեպ վեպի մեջ՝ երկուսի ընթացքն էլ շարունակական. հեղինակի վեպը ընդմիջարկվում է կերպարի՝ Սաթենիկի կողմից շարադրվող վեպով: Հեղինակի ստեղծած վեպը ունի պայմանականորեն ժամանակային հստակ չափում, գործողությունները սկսվում են սույն թվի հունվարի 6-ից և հասնում են միջև հաջորդ թվի նոյեմբերի 18-ը: Ըստ էության՝ համընկնում են հեղինակի գրած վեպի գործողությունների կատարման ժամանակն ու շարադրվող վեպի գրության ժամանակը, բայց գրության ժամանակի ու գործողությունների կատարման ժամանակների միջև սահմանը խաթարվում է: Պատկերվում է երկու արհեստական իրականություն: Պայմանականորեն հեղինակի ստեղծած վեպի իրականությունն անվանենք «առաջին արհեստական իրականություն», իսկ կերպարի կողմից շարադրվող վեպինը՝ «երկրորդ արհեստական իրականություն»: Վեպում երկու զուգահեռ տարածություն և ժամանակ է պատկերվում. սկզբում թվում է՝ հստակ տարանջատված են այդ երկու աշխարհները, մի դեպքում գործ ունենք «առաջին արհեստական իրականության» տարածության և ժամանակի հետ, մեկ այլ դեպքում՝ «երկրորդ արհեստական իրականության» տարածության ու ժամանակի հետ: Չնայած այս երկու տիրույթների զուգահեռ զարգացմանը՝ ոչ միշտ է հստակ տարանջատվում սահմանը երկու իրականությունների միջև: Երկու իրականությունների միահյուսումը տեղի է ունենում կերպարների միջոցով. «երկրորդ արհեստական իրականությունը» ստեղծվում է Սաթենիկի հիշողությունների միջոցով, որտեղ ապրում է Արտաշես Գնունին՝ իր մանկության ընկերը: Կերպարի հետագա զարգացումը պատկերվում է «առաջին արհեստական իրականության» մեջ: «Երկրորդ արհեստական իրականությունը» ինքնին անցյալ է, որը ընդմիջարկվում է այդ իրականությունը ստեղծողի հիշողության պատկերներով: Քրոնոտոպային առաձևհատկություններից մեկը, որը դրսևորվում է վեպում, ժամանակային ու տարածական տիրույթների շրջադարձելիությունն է, որը պայմանավոր-

ված է դրվագային փոփոխություններով, վեպից վեպ անցումներով: Մի դեպքում առասպելական, հեքիաթային աշխարհ՝ անցյալ, զուգահեռ՝ աշխատանքային միջավայր, սրճարանային հանդիպումներ, փողոցում տեղի ունեցած հանդիպումներ՝ ներկա ժամանակ:

Երկու վեպերի ժամանակները հավասարվում են, երբ հիվանդանոցում Սաթենիկը լսում է Արտաշես Գնունու անունը, իր վեպի շարունակությունը հյուսվում է «առաջին արհեստական իրականության» պատումի տարածական ու ժամանակային դաշտի տեղափոխումով, շարունակական հաջորդականությունը դառնում է պատումի արտաքին իրականության անմիջական կրողը: Պատումում արտահայտվող ժամանակային նշանները տեղափոխվում են կառուցվող պատումի՝ «երկրորդ արհեստական իրականության» ժամանակային տիրույթ:

Իրադարձությունների բնականոն հաջորդականությունը, որը պատճառահետևանքային կապով կապված է Սաթենիկի վեպի գործողությունների հետ, ձևավորվում է տարածամանակությունների առանձին դրվագների միահյուսման ֆոնին: Առանձին դրվագները, կերպարների կյանքի օրերը, տարբեր ժամերը հանդես են գալիս միավորված, ընդհանրական ժամանակի մեջ. «Անցյալը ներխուժում է ներկա՝ սկարների խաղաքարտերը խառնելով, ներկան սիրվտելով՝ անցյալի գիրկն է անցնում ու արջաքուն մտնում, որ ապագայի արյունը պղտորի, ու... գրվում է» [5, 128]:

Մեր քննած գրեթե բոլոր գործերում կարելի է հանդիպել պատումային ներքին անաքրոնիաներ (ժամանակային հաջորդականության տարաբնույթ խախտումներ) [2, 300]: Ժամանակն ինքնին փոփոխությունների շղթա է, և այն ենթադրում է նախորդող վիճակի փոխարինումը հաջորդող վիճակով: Նախորդող վիճակը՝ անցյալը, ինչոր կերպ պահպանվում և հարաբերվում է հաջորդող վիճակի՝ ներկայի հետ՝ ստեղծելով համեմատություններ, որոնք էլ նկարագրում են ընթացիկ փոփոխությունները: Ժամանակային բարդ ներթափանցումները պայմանավորված են տարածական տարաբնույթ դրսևորումներով:

Տարածության ու ժամանակի յուրատիպ հարաբերակցությամբ հանդես է գալիս Դ. Համբարձումյանի «Այրված կամուրջների վրայով» վիպակը: Հեղինակային մտածողության յուրատիպությունը ժամանակային անաքրոնիաների պատկերումն է: Վիպակի սկզբում ներկայացվող ներկա ժամանակը գործողությունների զարգացման ընթացքում դառնում է անցյալ ժամանակ (Ազի հոր մահը պատումի կառուցման ընթացքում վերարտադրվում է վերիուշի ձևով): Պատումի ընթացիկ

ներկային զուգահեռ պատկերվում է ապագան, որը, թվում է, լինելու է պատումի արհեստական իրականության մեջ պատկերվող ժամանակի ավարտից հետո, որին այլևս կերպարները ականատես չեն լինելու. պատկերվում է ենթադրելի, բայց, թվում է, միննույն ժամանակ կատարված գործողություն, որը դուրս է պատումի ժամանակային սահմաններից և մեկ այլ ուղղությամբ է զարգացել:

Ժամանակի ու տարածության պատկերման յուրատիպությունը հատուկ է հեղինակի բոլոր գործերին: Այս դիտանկյունից հարկ ենք համարում քննել նաև «Փեակների տարաբախտություն» վեպը, որտեղ ժամանակի պատկերումը դուրս է բնականոն հաջորդականությունից՝ պայմանավորված տարածական տարաբնույթ անցումներով: Հեղինակը պատումակառուցման հետաքրքիր հնարք է կիրառել. գործողությունների պատկերման սկիզբը ներկա ժամանակն է, իսկ երբ սկսվում է «մեծ կինոյի սցենարը», ամբողջ պատումը տեղափոխվում է անցյալ ժամանակ (երբեմն գլխավոր կերպարը՝ Մանեն, ընթերցողին տեղափոխում է ներկա ժամանակ): Պատկերվող անցյալ ժամանակը բազմապլան է, ամբողջանում է տարբեր կերպարների միջոցով: Առանցքում Մանեի հիշողություններն են, որին զուգադրվում է մոր՝ Սկալդինայի (նրան Հայաստանում անվանում էին Նարե) նոթատետրի պատմությունները, որը շարադրման պահի համար ներկա ժամանակի իրողություններն է պատկերել, իսկ ամբողջ պատումի համար դառնում է անցյալ ժամանակ: Գործողությունների զարգացմանը զուգընթաց՝ նոթատետրում շարադրված իրողությունները համընկնում են պատումում շարադրվող ժամանակի հետ՝ դառնալով դրա անմիջական շարունակությունն ու բացատրությունը, իսկ պատմությունների ավարտը տեղավորվում է պատումի արհեստական իրականության ընթացիկ ժամանակի մեջ: Նոթատետրում վերհուշի միջոցով վերարտադրված հատվածները, Ար հայրիկի կողմից Թումաս հորեղբորը պատմած ծանոթության պատմությունը Սկալդինայի հետ պատումի ընթացիկ ժամանակի մեջ դառնում են անցյալի անցյալ ժամանակ: Անցյալ ժամանակի համար պատկերվող ապագան դառնալու է պատումի ներկան: Անցյալ ժամանակի պատկերումն էլ միագիծ զարգացում չունի (գործողությունների շարադրման սկզբում աղջնակը ութ տարեկան է, իսկ շարունակական հաջորդականության մեջ շեշտվում է վեց տարեկան հասակը): Երկում արծարծվում է կանգնած ժամանակի գաղափարը, որ զուգադրվում է անփոփոխ պատկերին. «Սկալդինաս կանգնել էր անթիկնակ ցածր աթոռին նստած հայրիկիս գլխավերևում,

գլուխը պինդ գրկել էր ու կռանալով՝ շուրթերը մոտեցրել հորս գլխի լերկությանը: Հայրս ու մայրս անշարժացել էին կանգ առած ժամանակի մեջ. տխրությունը կարծես սոսնձել էր նրանց» [7, 33]: Պատումում ժամանակի այս յուրատիպ պատկերմանը զուգադրվում է նաև տարածության առանձնահատուկ բնորոշումը: Գործ ենք ունենում ընդարձակ, անսահման տարածության հետ: Սկզբում պատկերվող Շվեդիա երկիրը ընդարձակվում է, դուրս է գալիս իր սահմաններից՝ ընդգրկելով Հայաստանը, կերպարների ներաշխարհը իբրև տարածություն. ընդարձակ տարածությունը սեղմվում, փոքրանում է: Պատմական անցյալը կերպարի միջոցով տեղափոխվում է պատումի տիրույթ, խախտվում են իրականի ու անիրականի սահմանները՝ հանգեցնելով տարածական ու ժամանակային անորոշության կամ որոշակիության, քանի որ Զվարթնոցի տեղում ժամանակին եղել է Տիրաստոն մեհյանը. փաստորեն գործ ունենք հետընթաց ժամանակի հետ:

Դ. Համբարձումյանը երկում, թվում է, հպանցիկ, բայց շեշտում է մի հանգամանք, որը վերարտադրվում է վերհուշի ձևով՝ որոշակի դիպված նկարագրելու համար: Պատումի արհեստական իրականության տարածության ու ժամանակի մեջ կերպարի կենսական ժամանակի ավարտը՝ չգոյությունը, քողարկվում է գոյությամբ՝ անձնական շահից դրդված. «<...> Հայաստանում տարիներ առաջ իր դիրեկտորը մեռած հոգիներ էր պահում «Նաիրիտում», աշխատավարձ էր դուրս գրում մեռյալների համար ու չաշխատող ուրվականներին ստիպում էր ստորագրել լեվի փողի ցուցակում, հետո բուրձը թքոտելով՝ փողը հաշվում ու դնում էր գրպանը» [7, 39]: Տարածությունն ու ժամանակը փաստում են իրողությունը ու առաջ շարժվում: Ժամանակի մեջ կերպարի չգոյության իրողությունն առկա է նաև ռուս արձակագիր և բանաստեղծ Վառլամ Շալամովի «Կոլիմյան պատմություններ» ժողովածուում զետեղված «Շերրի բրենդի» պատմվածքում: Այստեղ երևույթն այլ դիտանկյունից է պատկերված. ստալինյան համակետորոնացման ճամբարում դժոխային պայմանները, ժամանակի ու ժամացույցի բացակայությունը հետաձգում են կերպարի մահվան արձանագրումը՝ սակայն հիմքում որոշակիորեն ունենալով անձնական շահը. «Իրիկվա կողմ մեռավ: Իսկ ահա դուրս գրեցին երկու օր ուշ, նրա հնարամիտ հարևաններին հաջողվեց հաց բաժանելու ժամանակ երկու անգամ ստանալ հանգուցյալի հացը. մեռյալի ձեռքը բարձրացնում էին՝ ինչպես խամաճիկ տիկնիկինը: Այսինքն՝ վախճանվեց իր մահվան ամսաթվից շուտ՝ էական հանգամանք նրա ապագա կենսագիրների

համար» [9, 97]: Գործ ունենք նույն երևույթի հետ, բայց տարբերությունն այն է, որ մի դեպքում այնպիսի միջավայր է, որտեղ բացակայում են ժամացույցն ու ժամանակը՝ մահն արձանագրելու համար, մեկ այլ դեպքում՝ այդ ամենի առկայությունն էլ չի ցուցում մարդու մահը:

Երևույթը չի վրիպել նաև Ս. Հարությունյանի աչքից, սակայն նա մեկ այլ դիտանկյունից է նայում. ամեն բան վերացարկված է, իրողությունը փիլիսոփայական մակարդակում է: «Սարդի արձաթագույն լացը» պատմվածքում կերպարի պապի մահվան ժամանակը տեղափոխվում է, որը չի համընկնում պատումի իրական ժամանակում նրա կենսաբանական մահվան ժամանակին. «Մենք պապիս թաղեցինք նրա մահից երեսուն տարի անց, թեև նրա մահվան մասին անգամ տատս արդեն իմիջիայոց էր խոսում՝ որպես հեռավոր եղելության» [8, 57]:

Եզրահանգում: Պատումի կառուցվածքային առանձնահատկություններից էլնելով՝ երկերում առաջ է քաշվում տարածության ու ժամանակի հարաբերակցության գաղափարը: Ժամանակային շղթայի շարժման հաջորդականությունը հարաբերվում է տարածական փոփոխության հետ և հանդես է գալիս յուրատիպ ամբողջությամբ: Պատումակառուցման առանձնահատկությունը հնարավորություն է տալիս տարածական ու ժամանակային տիրույթների ընդարձակման ու նեղացման: Տարածության ու ժամանակի հարաբերակցությունը պատկերվում է ոչ միայն երկի արհեստական իրականության մեջ, այլև դրան զուգընթաց զարգացող այլ տիրույթներում: Ընդգծելով տարածության ու ժամանակի դրսևորումները կերպարների ներաշխարհում՝ առանձնացրել ենք ներքին տարածության ու ժամանակի գաղափարը:

СООТНОШЕНИЕ ПРОСТРАНСТВА И ВРЕМЕНИ В ТВОРЧЕСТВЕ

ДИАНЫ АМБАРЦУМЯН

Акопян Т. В.

В статье мы рассмотрели выражение времени и пространства в современной армянской прозе на основе произведений Д. Амбарцумян. Мы показали соотношение между пространством и временем, обусловленное структурными особенностями произведений: сжатие и расширение пространства и времени, и взаимное дополнение друг друга. Во внутренней сфере художественных произведений Д. Амбарцумян

рассмотрели пространственно-временные переходы, вскрывая явления диахронии и обратимости времени и пространства.

Ключевые слова: художественная обусловленность, диахрония, пространственно-временное соотношение, текучесть, образ-эпизод, изменение, хронотоп.

TIME AND SPACE CORRELATION IN DIANA HAMBARDZUMYAN'S WORKS

Hakobyan T. V.

In the article we have discussed the phrases depicting time and space in contemporary Armenian prose based on D. Hambardzumyan's work. We have shown the time and distance relation conditioned by the structural features of the works, outer space and time compression, expansion and each other's mutual complementation. We have observed the transitions in the inner domain of the fiction, highlighting the phenomenon of space and time reversibility.

Keywords: artistic conventions, diachronism, time and space correlation, procedure, image-episode, alteration, chronotope.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բախտին Մ. Մ. Ժամանակի և քրոնոտոպի ձևերը վեպում: Երևան: «Անտարես» հրատարակչություն: 2017: 384 էջ:
2. Գրականության տեսության արդի խնդիրներ, ուսումնական ձեռնարկ: Երևան: «ԵՊՀ» հրատարակչություն: 2016: 330 էջ:
3. Էդոյան Հ. Շարժում դեպի հավասարակշռություն: Ս. Խաչենց. Փրինթինֆո: Երևան: 2009: 504 էջ:
4. Համբարձումյան Դ. Հ. Այրված կամուրջների վրայով: Երևան: «Զանգակ-97» հրատարակչություն: 2004: 128 էջ:
5. Համբարձումյան Դ. Հ. Աստծո բնակեցրած երկրում: Երևան: «Զանգակ-97» հրատարակչություն: 2010: 160 էջ:
6. Համբարձումյան Դ. Հ. Դուռը թակում են: Երևան: «Անտարես» հրատարակչություն: 2014: 265 էջ:
7. Համբարձումյան Դ. Հ. Փեակների տարաբախտություն: Երևան: «Զանգակ» հրատարակչություն: 2017: 320 էջ:

8. Հարությունյան Ս. Ս. Երկրորդ կիրակին ներառյալ: Երևան: «ՀԳՄ» հրատարակչություն: 2018: 140 էջ:
9. Շալամով Վ. Տ. Կոլիմյան պատմություններ: Թարգմ.՝ Ճաղարյալ Լ.: Երևան: «Անտարես» հրատարակչություն: 2018: 280 էջ:
10. Փաշայան Ա. Ա. Դիանա Համբարձումյանի նոր՝ «Դուռը թակում են» վեպը: «Գրանիշ»: 2013: <https://granish.org/ani-pashayan-article>: Հասանելի է 18.10.2022, ժ. 18:00:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Հակոբյան Տ. Վ. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ՎՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն
Էլ. փոստ՝ tatevhakobyan2020@mail.ru

Գիտական ղեկավար՝ Փիլոյան Վ., բան. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 19.11.2022
Գրախոսվել է՝ 23.01.2023

**ՎԵՊԻ ԵՎ ՊԱՏՄՎԱԾՔԻ ԺԱՆՐԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՄ
ԵՐԱՆՅԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՈՒՄ
Քալաշյան Մ. Մ.**

Հոդվածում քննել ենք վեպի և պատմվածքի ժանրերի հարաբերակցումը Հ. Երանյանի վիպական կառույցում՝ առանձնացնելով այդ հարաբերակցման արդյունքում առաջացող հնարավոր կառուցվածքային պայմանաձևեր, այն է՝ վեպից անցում պատմվածքի, պատմվածքից անցում վեպի, պատմվածքը՝ որպես վեպի բաղադրիչ, վիպայնությունը՝ որպես պատմվածաշարի բնութագրիչ, որոնք (բացառությամբ առաջինից) իրենց տարակերպ դրսևորումն են ունենում հեղինակի ստեղծագործության մեջ՝ այդ կերպ պայմանավորելով նրա պատումակառուցման յուրահատկությունը:

Բանալի բառեր. վեպ, պատմվածք, ժանրային հարաբերակցում, կառուցվածքային պայմանաձև, պատումակառուցում, սյուժետային գիծ, դրվագ-դեպք, դրվագային սյուժե:

Ներածություն: Հաշվի առնելով արդի հայ գրականության մեջ վեպի և պատմվածքի ժանրերի /հատկապես՝ պատմվածքի ժանրի/ ակտիվության հանգամանքը՝ աշխատանքը միտված է ընդգծելու արդի հայ վեպին հատուկ կառուցվածքային յուրահատկությունները՝ տվյալ դեպքում արտահայտված վեպի և պատմվածքի ժանրերի հարաբերակցմամբ, ինչը հնարավորություն կտա բացահայտելու արդի հայ վեպի զարգացման կառուցվածքային տրամաբանությունը և պատումակառուցման միտումները ժանրային փոխներթափանցման հայեցակետից:

Աշխատանքի ուսումնասիրության առարկան Հովհաննես Երանյանի վիպական կառույցն է, որը, հիմք ընդունելով, *նպատակ* ունենք առանձնացնելու պատմվածքի և վեպի ժանրերի հարաբերակցման արդյունքում առաջացած կառուցվածքային պայմանաձևերը:

Պատմվածքի ազդեցությամբ վիպական կառույցում նկատվող փոփոխությունները ընդգծելու համար առաջնային նախապայման է վեպի կառույցի հարափոփոխ էության ըմբռնումը. ինչպես նշում է Մ. Բախտինը, «*Վեպի ժանրային հիմնականախորհրդը դեռ հեռու է ամրացված լինելուց, և մենք դեռ չենք կարող կանխագուշակել դրա ճկունության բոլոր հնարավորությունները*» [1, 285]: Արդի հայ վեպը նույնպես,

ենթարկվելով ժանրի զարգացման տրամաբանությանը, դրսևորում է կառուցման ինքնատիպություն, որի արտահայտման օրինակ է նաև Հ. Երանյանի վիպասանությունը: Հեղինակի ստեղծագործություններին անդրադարձել է Վ. Փիլոյանը «Ակնարկներ արդի հայ գրականության» գրքում՝ ուսումնասիրելով «Մարդահամար» վեպը, և «Իրականության և առասպելի խաչմերուկում» գրախոսության մեջ՝ քննելով «Մեղքի պարան» վեպը, որտեղ իրականության և առասպելի հարաբերության խնդրից զատ՝ ուշագրավ անդրադարձ է կատարվում վեպի գրական առնչությունների և միջտեքստայնության խնդիրներին [10]: Հեղինակը գրախոսությամբ անդրադարձել է նաև Երանյանի «Ապոկալիպսիսի հրեշտակները» ժողովածուին՝ այլ հարցերից բացի քննելով նաև մեզ հետաքրքրող վիպականության հարցը՝ պատմվածաշարում բավարար նախադրյալներ չտեսնելով դրա իրացման համար [11]:

Գեղարվեստական ժանրերը իրենց դրսևորման ճանապարհին, ենթարկվելով գոյատևման պայմանականությանը, կրել են բազմաթիվ փոփոխություններ՝ ձեռք բերելով նոր որակներ, ունենալով յուրակերպ դրսևորումներ, որոնք արտահայտողն են դարձել ժամանակի գրականության գեղարվեստական միտումների: Ց. Տոդորովը նշում է, որ «ժանրը բուն ստեղծագործության մեջ առկա չէ, այն երկի օբյեկտիվ հատկանիշը չէ, այլ կցված է նրան դրսից» [2, 91]: Մրանից ենթադրելի է, որ ժանրը ստեղծագործությունը բնութագրում է, այսպես ասած, «արտաքինապես», հետևաբար ստեղծագործության՝ որևէ ժանրի պատկանելի դառնում է որոշակիորեն պայմանական, և նկատելի են դառնում ժանրերի ոչ անխառն դրսևորումներ, որտեղ նրանք փոխադարձաբար ներգործում են միմյանց վրա, միահյուսվում կամ ընդգրկում են մեկը մյուսին: Նմանօրինակ ներգործման արտահայտություն է վեպի և պատմվածքի ժանրերի հարաբերակցումը, որը բնութագրական է դառնում արդի հայ վեպի, մասնավորապես՝ Հ. Երանյանի վիպասանության համար և, տեսականորեն, իրացման չորս ճանապարհ է ենթադրում՝ *վեպից անցում պատմվածքի, պատմվածքից անցում վեպի, պատմվածքը՝ որպես վեպի բաղադրիչ, վիպայնությունը՝ որպես պատմվածաշարի բնութագրիչ*: Առաջին երկու պայմանաձևում ժանրերի հարաբերակցումը մի ստեղծագործության սահմաններից դուրս է (ունենք ստեղծագործություն /պատմվածք, վեպ/, որը հիմք է դառնում մեկ այլ ստեղծագործության համար /համապատասխանաբար՝ վեպ, պատմվածք/), իսկ երրորդ՝ *պատմվածքը որպես վեպի բաղադրիչ*,

պայմանաձևում հարաբերակցման արդյունքը երևում է մեկ ստեղծագործության սահմաններում:

Պատմվածքը որպես վեպի բաղադրիչ: Վեպի ժանրը արդեն իսկ ենթադրում է բազմաթիվ դեպքերի, դրվագների առկայություն [7, 315], որոնք սյուժեի առանցքային գծից կարող են այս կամ այն չափով շեղված լինել: Այլ է այն հարցը, թե այդ դրվագները, դեպքերը որքանով են անկախ սյուժետային գծից, որքանով են ավարտուն և որքանով են համագոր միմյանց նկատմամբ: Ելնելով այս հանգամանքներից՝ Հ. Երանյանի ստեղծագործության մեջ «*պատմվածքը՝ որպես վեպի բաղադրիչ*» պայմանաձևի իրացման երկու դրսևորում կարելի է առանձնացնել՝ *վեպ, որը կազմված է պատմվածքներից, և վեպ, որի կազմում կարելի է առանձնացնել պատմվածքային հատվածներ*: Առաջին իրողության դրսևորումը «Մարդահամար» վեպն է, որը բնորոշվել է որպես վեպ՝ պատմվածքներով [5]: Ընդհանուր պայմանականության շուրջ առանձին ժանրային միավորների կառուցումը և դրանց ընդգրկումը մեկ ստեղծագործության մեջ հայտնի իրողություն է (հայ գրականությունից կարելի է հիշել, օրինակ, Հ. Քոչարի «Մայրենի լեզուն»): «Մարդահամար» վեպը նույնպես կառուցված է այս տրամաբանությամբ, սակայն այն էական տարբերությամբ, որ ընդհանուր պայմանականություն ձևավորող իրողությունը, այն է՝ գյուղում մնացածների և գյուղից գնացածների մարդահամարը կազմակերպելու նախադրյալը չի արտահայտվում միայն մուտքի կամ վերջաբանի տեսքով, այլ տարածվում է ամբողջ ստեղծագործության երկայնքով՝ հանդես գալով միջարկությունների ձևով. «*Միջարկությունները կարող ենք համարել նաև անկախական շրջանի քրոնիկոն իր դեպքուղիավածով, տնտեսության քայքայմամբ, առևտրական խավի ձևավորմամբ, ցրտով, սովով, անտերությանբ, ինքնության կորստով ու ինքնափախուստով*» [9, 294-295]: Առանձնանում են պատումային երկու գծեր, որոնցից առաջինը ձևավորվում է միջարկություններով: Պատումային երկրորդ գիծը կազմում է պատմվածքների շարքը, որոնք միմյանց են կապվում բովանդակային առումով. սրանք գնացածների պատմություններն են, նրանց ճակատագրերը, օտարացումը, անկումը կամ նրանց գնալու արդյունքում մնացածների կյանքի թերիությունը. «Գյուղի նրանց տանը վաղուց երկու հեռուստացույց կա և ամեն տեսակ տեխնիկա: Վճարովի սովորող տղան սեփական մեքենայով է գնում քաղաք: Աղջկա ուսման վարձն էլ չեն ուշացնում: Անդոն Պոլսում հազվադեպ է խմում. երբեմն տանտերը

վիսկի կամ գինի է հյուրասիրում մասնոցով: Իրենց ընտանիքում ասում են, որ հույն է, Ստամբուլում աշխատող այլ գյուղացիների հարազատները թե քուրդ է:

-Ի՞նչ տարբերություն, թեկուզ թուրք լինի,- ասում է որդուց վերջապես գոհ մայրը» /«Զորավարը»/ [5, 43-44]:

Պատումային երկու մակարդակներում ընգրկված սյուժետային գծերը ձևավորում են, այսպես ասած, համաստորադասական կառույց, որտեղ պատմվածքների սյուժետային գծերը կախյալ վիճակում են միջարկություններով ձևավորվող սյուժետային գծի նկատմամբ և համազոր՝ միմյանց նկատմամբ: Սյուժետային գծերի նմանօրինակ հարաբերությունը տանում է դեպի համապատկերային կամ դրվագային սյուժեի ըմբռնմանը, որտեղ, ինչպես նշում է Լ. Չ. Սյուրմեյանը, *«Գաղափարը կարող է կապակցել դրվագները, և գործողության միասնության փոխարեն կարող ենք ունենալ թեմատիկ միասնություն, որ անչափ կարևոր է դրվագային սյուժեում»* [8, 178]:

Պատումային առաջին գիծը հեղինակ-պատմողի գիծն է, և հաճախ որպես մուտք է ծառայում հաջորդող պատմվածքի համար՝ այդ կերպ, անկախ վեպի բաղադրիչների ինքնուրույնությունից, ընդգծելով ստեղծագործության ամբողջականությունը: Միջարկությունների և պատմվածքների ներքին միասնությունը ընդգծում են նաև երկու պատումային գծերում էլ դրսևորվող կերպարները (օրինակ՝ *Վահրամ Հակոբյան*):

«Պատմվածքը՝ որպես վեպի բաղադրիչ» պայմանաձևի երկրորդ դրսևորման (*վեպ, որի կազմում կարելի է առանձնացնել պատմվածքային հատվածներ*) իրացումը դառնում են «Ամենագեղեցիկ հարվածը» և «Մեղքի պարան» վեպերը: Այս վեպերում արդեն տեսնում ենք «Մարդահամար» վեպում նկատվող պատումային երկու գծերի սերտաճում, հաճախ՝ ձուլում: Այսինքն՝ այստեղ կարելի է խոսել ոչ թե պատմվածքի լիարժեք արտահայտության, այլ պատմվածքային հատվածների մասին, որոնք ունեն հարաբերական անկախություն և ավարտվածություն, սակայն առավել սերտ են կապված սյուժետային կենտրոնական գծի հետ: Այս պատմվածքային հատվածների դիրքը ստեղծագործության մեջ որոշակի ընդհանրություն է հուշում է. Ջրբաշյանի կողմից նշված *միջանկյալ պատմությունների* հետ [7, 143]: Մակայն այս հատվածները Երանյանի վեպերում միջանկյալ պատմությունների համեմատությամբ չունեն այդ նույն անկախությունն ու կտրվածությունը:

«Ամենագեղեցիկ հարվածը» վեպում արտահայտված է պատումային երեք ժամանակ. *պայմանական ներկա*, որը հեղինակ-կերպարի կողմից դեպքերի շարադրման պահին է, սրա մասին հիշատակվում է «Առաջաբան»-ում. «Մեր գրույցից ավելի քան *յոթ տարի է անցել*, իսկ ես դեռ այնտեղ եմ: Այդ ընթացքում ես երկու այլ գիրք ունեցա: Վերջապես համարձակվում եմ ցավի, մեղքի ու ապաշխարության այս օրագիրն էլ հրատարակել: Գուցե այդպես վերջապես կարողանամ դուրս գրվել հիվանդանոցից» [3, 7], *անցյալ*, որը հիվանդանոցում անցկացրած շրջանն է՝ մինչև երկրորդ անգամ հիվանդանոց գնալը (սա վեպում անցյալ է ներկայի համեմատությամբ), *կրկնակի անցյալ* (սա անցյալ է ներկայի ու անցյալի համեմատությամբ), որը ձևավորվում է հիվանդանոց ընկնելուն նախորդած շրջանին պատկանող պատմությունների միջոցով. այդ պատմությունները կառուցվում են առանցքային կերպարի կամ նրա հետ այս կամ այն կերպ առնչվող կերպարների շուրջ (հայրը, կինը, եղբայրները, ընկերները, սիրուհիները, կից պալատների հիվանդները): Վեպում առանցքային սյուժետային գիծը ձևավորում է *անցյալը*, հետևաբար պատմվածքային հատվածների անկախությունը որոշում ենք այս գծի նկատմամբ ունեցած անկախությամբ: Մեզ հետաքրքրող պատմվածքային հատվածներ հանդիպում են *կրկնակի անցյալի* տիրույթում: Կա մի պատմվածքային հատված սակայն, որը ընդգրկում է նաև *կրկնակի անցյալը*, նաև *անցյալը*. դա Մելքոնի պատմությունն է [3, 119-130]: Սա պատմվածքայնության տեսակետից ամենաամբողջական հատվածն է, սակայն բավականաչափ անկախ չէ սյուժետային գծից: Մյուս հատվածները պատկանում են կրկնակի անցյալի տիրույթին. դրանք հեղինակ-կերպարի նախահիվանդանոցյան կյանքի դրվագ-դեպքեր են [3, 18-19; 43-46; 51-53; 117-118; 146]: Այս հատվածները շարադրված են երրորդ դեմքով, կենտրոնում Հովանն է՝ նույն հեղինակ-կերպարը: Հատվածներում պատմվածքայնությունը թույլ է, սակայն նկատելի են որոշակի դեպքի շուրջ դրվագի սյուժետային կառուցում և հարաբերական ավարտունություն:

«Մեղքի պարան» վեպի կառույցը ավելի բազմագիծ է. այստեղ նկատելի են պատումային երկու մակարդակներ, որոնցից առաջինը հիմնականում ձևավորվում է «Որդին» հատվածներով և իրենից ներկայացնում է ընթացիկ իրողությունների շարադրանք. սա իրականության գիծն է («Պապը», «Աղջիկը», «Թոռը», «Ծոռը» հատվածները նույնպես այս տիրույթում են), երկրորդը ձևավորվում է «Հայրը» հատվածներով, որոնք որդու կողմից ընթերցումներ են հոր

թղթերի. սա հորինվածքի գիծն է (դեպքային Սաղոյան-արքեպիսկոպոս-գիտնական գիծը): Ի վերջո, այս երկու վիպական գծերը ձուլվում են վեպի զարգացման մեջ: Այս վեպում նույնպես նկատելի են պատմվածքային հատվածներ, որոնք բացառապես հուշ-դրվագներ են՝ իրականության պատումային գծի ժամանակի հարաբերությամբ անցյալից: Այդ հատվածներից իր ավարտունությամբ, կառուցումով և շարադրանքի գեղարվեստականությամբ առանձին պատմվածք է հիշեցնում «Աղջիկը» հատվածներից մեկում շարադրված մանկության հուշ-դրվագը [6, 52-55]: Մյուս պատմվածքային հատվածները (6, 11-17; 23-32; 38-46; 80-87) բացառապես հանդիպում են «Հայրը» հատվածներում, դրանք անցյալի դրվագ-դեպքեր են, որոնք այս կամ այն կերպ լրացնում են սյուժետային ընդհանուր գիծը և, պատմվածքային հատված լինելով, չունեն անկախություն: Այս վեպին նույնպես, ինչպես «Մարդահամար» վեպին, հատուկ է դառնում դրվագային կամ համապատկերային սյուժեն, ինչին նպաստող նախադրյալներից մեկն էլ ավարտունություն ունեցող պատմվածքային հատվածների առկայությունն է:

Ինչպես նկատելի է, երկու վեպերում էլ պատմվածքային հատվածները հանդիպում են անցյալի տիրություն, ինչը կարելի է բացատրել անցյալի, ի տարբերություն ներկայի և ապագայի, ավարտուն և ամփոփ ժամանակ լինելով, որում կատարված իրողությունները ունեն հստակ հանգուցալուծում:

Վիպայնությունը որպես պատմվածաշարի բնութագրիչ: Եթե վերոնշյալ վեպերի դեպքում գործ ունեինք մի իրողության հետ, որտեղ պատմվածքը ազդում էր վեպի ժանրի վրա և դառնում նրա բաղադրիչը, ապա հեղինակի «Ապոկալիպսիսի հրեշտակները» պատմվածաշարը հնարավորություն է տալիս քննելու հակադարձ իրողությունը, երբ վեպն է ազդում պատմվածաշարի վրա՝ նրան օժտելով վիպականությամբ: Սա «Ապոկալիպսիսի հրեշտակները» պատմվածաշարը զուգահեռում է «Մարդահամար» վեպի հետ. այս երկու գործերի ժանրային տարբերությունը պայմանավորված է ընդհանուր պայմանականության արտահայտվածությամբ. եթե «Մարդահամար» վեպում ընդհանուր պայմանականությունը ուներ հստակ արտահայտություն միջարկությունների ձևով, որոնք շաղկապում էին բաղադրիչ պատմվածքները, ապա «Ապոկալիպսիսի հրեշտակները» պատմվածաշարում ընդհանուր պայմանականությունը ածանցվում է պատմվածքների բովանդա-

կությունից, սակայն դրանցից դուրս՝ միջակա տիրույթում, չի արտահայտվում:

Պատմվածաշարի համար ընդհանուր պայմանականությունը կարելի է դիտարկել մի քանի տիրույթում. ընդհանրական է պատմվածքներում արտահայտված ժամանակային գիծը, որը նշութավորվում է արտահայտված ժամանակի համար կենտրոնական իրադարձություններով՝ պատերազմ («Երեք ամիս անց», «Ապոկալիպսիսի հրեշտակները»), համավարակ («Ձայնը») և այլն: Ընդհանրական է տարածական գիծը՝ Երևան («Դերասանը», «Թավիշ և ջագ»), Երևան-Արցախ («Բանավորը», «Ապոկալիպսիսի հրեշտակները»), ինչպես նաև տաքսին՝ բոլոր պատմվածքների համար, և տաքսիով անցած ճանապարհը: Ընդհանրական է պատմվածքների առանցքային կերպարների կերտման պայմանականությունը. բոլոր պատմվածքներում նրանք կա՛մ տաքսու վարորդներ են, կա՛մ էլ տաքսու ուղևորներ, մարդկային հիմնական փոխհարաբերությունները պատկերվում են հենց այս կերպարների հարաբերմամբ: Գլխավոր ընդհանրական գծերից է մահվան մոտիվը բոլոր պատմվածքների համար՝ իր տարբեր արտահայտություններով (պատերազմ, սպանություն, ինքնասպանության մղում, գերեզմանային պատկերներ): Մահվան մոտիվի մշտական առկայությունը ընդհանրություն է ձևավորում պատկերային տիրույթում՝ ստեղծելով նույնաբնույթ, գրեթե կրկնվող պատկերներ: Դրանք մահվան վախից կամ անխուսափելիության գիտակցումից առաջացած ենթագիտակցական, երևակայական, երազային պատկերներ են (4, 59-60; 70; 119-120; 124):

Պատմվածքից անցում վեպի: Եթե պատմվածքին գերազանցապես հատուկ են սեղմությունը, մեկ իրադրության կամ դրվագի պատկերումը [7, 317], ապա վեպը, ըստ էության, կարող է բազմաթիվ իրադրություններ կամ դրվագներ ընդգրկել, հետևաբար պատմվածքը վեպի վերաճելիս կազմում է վեպի մի մասը՝ դառնալով կամ կառուցվածքաբովանդակային կենտրոն, կամ զուգակցվող պատումային գիծ: Այսինքն՝ վեպում կարող է կամ պահպանվել պատմվածքի բովանդակային շեշտը, կամ տեղափոխվել այլ իրողության վրա: Վերջինիս օրինակ է «Մարդահամար» վեպի վերջին բաղադրիչ-պատմվածքի՝ «Խարխափումների» վերաճումը «Ամենագեղեցիկ հարվածը» վեպին: «Խարխափումներ» պատմվածքը գրեթե նույնությամբ՝ աննշան փոփոխություններով և որոշակի կրճատումներով, ներբեռնվում է վեպի մեջ: Վեպում դուրս են մնացել պատմվածքի որոշ հատվածներ, որոնք մանրամասնորեն պատկերում

են մոր հիվանդության և մահվան դրվագները, քանի որ, ինչպես նշում է Վ. Փիլոյանը, պատմվածքում «գերակա է մերձավորին՝ մորը, կորցնելու պատմությունը» [9, 296], իսկ վեպում դա ընդամենը պատկերվող գծերից մեկն է: Այս երկու ստեղծագործությունները փոխադարձաբար լրացնում են միմյանց. եթե վեպի կենտրոնական կերպարի մոր հետ կապված մանրամասնությունները բացահայտվում են պատմվածքում, ապա պատմվածքի վերջում գրված միտքը («Երանի վերևում լինի, ուր չգիտեմ, թե ինչ կա, ի տարբերություն ներքևի, ուր որդեր են ու ապականություն, խոնավ է ու շատ ցուրտ. ես այնտեղ եղել եմ» [5, 139]), օրինակ, բացվում է վեպում [3, 18]:

Վերջին՝ չորրորդ պայմանաձևը *վեպից անցումն է պատմվածքի*: Ենթադրելի է, որ այստեղ պիտի ներկայացվի վերը քննված իրողության հակառակ դրսևորումը, այսինքն՝ վեպը սեղմվի պատմվածքի տիրույթում, կամ վեպի մի գիծը մասնավորվի պատմվածքում: Այս պայմանաձևի արտահայտություն չնկատելով Հ. Երանյանի ստեղծագործության մեջ՝ որպես օրինակ կարող ենք դիտարկել Լ. Խեչոյանի «Մն գիրք, ծանր բզեզ» վեպից «Հողի դողը», «Ուսուցիչը», «Փոխանակություն», «Քո դեմքով և նմանությամբ ստեղծվածները» պատմվածքների ածանցումը:

Եզրակացություն: Հ. Երանյանի վիպասանության համար բնութագրական է դառնում պատմվածքի և վեպի ժանրերի հարաբերակցումը, որը պայմանականորեն իրացման չորս ուղի է ենթադրում՝ *վեպից անցում պատմվածքի, պատմվածքից անցում վեպի, պատմվածքը՝ որպես վեպի բաղադրիչ, վիպայնությունը՝ որպես պատմվածաշարի բնութագրիչ*, որոնք, բացառությամբ առաջինից, յուրակերպ դրսևորում են ունենում հեղինակի վիպական կառույցում, որտեղ «*պատմվածքը՝ որպես վեպի բաղադրիչ*» պայմանաձևի երկու արտահայտություն է առանձնացվում՝ *վեպ, որը կազմված է պատմվածքներից*, և *վեպ, որի կազմում կարելի է առանձնացնել պատմվածքային հատվածներ*: Վիպական կառույցում այդ պատմվածքային հատվածները, որպես կանոն, ընդգրկվում են անցյալի տիրույթում՝ գերազանցապես արտահայտվելով որպես հուշ-դրվագներ, և դրանց առկայությունը հանգեցնում է դրվագային սյուժեի առաջացման:

СООТНОШЕНИЕ ЖАНРОВ РОМАНА И РАССКАЗА В СТРУКТУРЕ РОМАНА ОВАНЕСА ЕРАНЯНА

Калашян М. М.

В статье мы рассмотрели соотношение жанров романа и рассказа в структуре произведений О. Ераняна, выделяя возможные условные формы, возникающие в результате этого соотношения, а именно: переход от романа к рассказу, переход от рассказа к роману, рассказ как компонент романа, романность как характеристика цикла рассказов, которые, кроме первой, имеют свое вариантное воплощение в произведениях О. Ераняна, тем самым определяя своеобразие авторской повествовательной структуры.

Ключевые слова: роман, рассказ, жанровое соотношение, структурная условная форма, повествовательная структура, сюжетная линия, эпизод-происшествие, эпизодический сюжет.

CORRELATION IN THE GENRES OF NOVEL AND STORY IN HOVHANNES YERANYAN'S NOVELISTIC STRUCTURE

Kalashyan M. M.

In the article we have discussed the correlation of the genres of novel and story in H. Yeranyan's novelistic structure distinguishing the possible conventions arising as a result of this correlation, that is the transition from novel to story, the transition from story to novel, the story as a component of a novel, novelism as a characteristic feature of the story series, which (excluding the first one) have their variable manifestation in H. Yeranyan's work, and in this way arranging the author's peculiarity of narrative construction.

Keywords: novel, story, genre correlation, structural convention, narrative construction, storyline, episode-event, episodic plot.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բախտիև Մ. Ժամանակի և քրոնոտոպի ձևերը վեպում: Երևան: «Անտարես» հրատ.: 2017: 348 էջ:
2. Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ: Երևան: ԵՊՀ հրատ.: 2016: 330 էջ:

3. Երանյան Հ. Ամենագեղեցիկ հարվածը: Երևան: ՀԳՄ հրատ.: 2011: 152 էջ:
4. Երանյան Հ. Ապոկալիպսիսի հրեշտակները: Երևան: «Անտարես» հրատ.: 2021: 156 էջ:
5. Երանյան Հ. Մարդահամար. Պիեսներ: Երևան: ՀԳՄ հրատ.: 2008: 242 էջ:
6. Երանյան Հ. Մեղքի պարան: Երևան: «Անտարես» հրատ.: 2017: 272 էջ:
7. Ջրբաշյան Է. Գրականագիտության ներածություն: Բանարվեստի հիմունքներ: Երևան: ԵՊՀ հրատ.: 2011: 416 էջ:
8. Սյուրմելյան Լ. Զ. Արձակի տեխնիկա. չափ և խենթություն: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2008: 334 էջ:
9. Փիլոյան Վ. Ակնարկներ արդի հայ գրականության: Ուս. ձեռնարկ: Երևան: «Լուսակն» հրատ.: 2018: 408 էջ:
10. Փիլոյան Վ. Իրականության և առասպելի խաչմերուկում: <https://www.grakantert.am/archives/11565> /հասանելի է՝ 17.10.2022/:
11. Փիլոյան Վ. Հովհաննես Երանյանի «Ապոկալիպսիսի հրեշտակները» ժողովածուն: <https://www.grakantert.am/archives/16073> /հասանելի է՝ 17.10.2022/:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Քալաշյան Մ. Մ. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ՎՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն

Էլ. փոստ՝ marine.kalashyan.779@mail.ru

Գիտական ղեկավար՝ Փիլոյան Վ., բան. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 19.11.2022

Գրախոսվել է՝ 30.01.2023

**ԴՐԱՍԻ ՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈւԺԸ ՎԱՀԵ ՀԱՅԿԻ ՄԻ ՔԱՆԻ
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ
Թաթոյան Ն. Կ.**

Սույն հոդվածում բացահայտվում է սփյուռքահայ գրականության նշանավոր արձակագիրներից մեկի՝ Վահե Հայկի պատմվածքների թեմատիկ-բովանդակային ընդգծված կողմը, որտեղ դրամը՝ որպես «ամենակարող ուժ», ավելի նախընտրելի է դառնում, քան մարդկային վեհ արժեքները:

Բանալի բառեր. Վահե Հայկ, սփյուռքահայ գրականություն, Հայրենի ծխան, կարոտ, նահանջ, օտար բարքեր, դրամ, ուժացում:

Ներածություն: Վահե Հայկը պատմվածքի վարպետներից մեկն է սփյուռքահայ գրականության մեջ: Նրա «Հայրենի ծխան» վերնագիրն ունեցող հինգ ժողովածուներում բացահայտվում է գրողի կապվածությունը հայրենի տան ծխի, օջախի ավանդույթին: Այդ ժողովածուների մասին գրել կամ հեղինակին ուղարկած նամակներում խոսել են գրական և մշակութային գործիչներ Զ. Գալեմբերյանը, Հովհ. Ավագյանը, Գ. Հովսեփյանը, Լ. Ասմարյանը, Պ. Սելյանը, Վ. Գաբրիելյանը, Գ. Սևանը և ուրիշներ:

Հոդվածի նպատակն է եղել ուսումնասիրել և գրականագիտական վերլուծության ենթարկել Վահե Հայկի «Հայրենի ծխան» հնգհատոր ժողովածուում ամփոփված այն պատմվածքները, որտեղ ակնհայտորեն երևում է դրամի, փողի իշխանության գերիզուր ազդեցությունը: Աշխատանքն *արդիական է* այնքանով, որ տվյալ պատմվածքները մինչև այսօր համակողմանիորեն ուսումնասիրված չեն այլ գրականագետների կողմից:

Հիմնական շարադրանք: Իր պատմվածքներում Վահե Հայկը ավելի խորությամբ է բացահայտում սոցիալական իրականության արատները, որոնք հատուկ են ամերիկահայ կյանքին, բայց հեշտությամբ տարածվում են հայկական միջավայրում: Նրանք, ովքեր ապրում են այդ իրականությունում, դառնում են նրա ենթակաները: Ամենուրեք կարևոր է դրամը: Այս երևույթի դիտարկումն էլ նորություն է հայ գրողի ստեղծագործության մեջ:

Ահա, օրինակ, «Աստ հանգչի» պատմվածքը: Ամենասկզբում ներկայացվում է պրն. Միհրան Թեյյանի ուղին: Նա սովորել է գավառի վարժարանում, սերտել շուկայի քերականություն, հաշիվ, առևտուր: Ամերիկա հասնելով՝ 25 տարեկանն անց երիտասարդը ընդունվում է Ուստրի գործարան: Մրի ու ծխի մեջ խայտում է նրա հոգին, բայց վերջինիս նպատակը դրամն է՝ ոսկին: Քիչ-քիչ ավելի հմտանալով նոր միջավայրում՝ շահում է շրջապատի համակրությունը, երկրից եկած մարդկանց ընդունել տալիս գործարան ու գրպանում նրանց աշխատավարձի մեծ մասը:

Երկրից նրա մոտ է գալիս բարեկամի տղան՝ Աբրահամ Բադիկյանը: Վերջինիս էլ Թեյյանը տեղավորում է գործի և վարձատրվում դրա դիմաց: Աբրահամն առաջադիմում է աշխատանքում, բարձրացնում են պաշտոնը: Թեյյանը կատաղում է, չի հանդուրժում, որ իր համերկրացին դիրքով բարձր է ու իրենից շատ աշխատավարձ է ստանում: Չարությունից ղեկավարության մոտ բամբասում է Աբրահամից ու գող անվանում նրան: Ղեկավարությունն էլ, գողության մեջ մեղադրելով, հեռացնում է աշխատանքից: Աբրահամը չի էլ մտածում, որ գործում խառն է Թեյյանի մատը: Սա էլ, օգտվելով Աբրահամի չիմացությունից ու խեղճությունից, վերցնում է նրա աշխատած դրամը՝ հետագայում ուղարկելու նպատակով:

Աբրահամը վերադառնում է հայրենիք՝ հավատալով նրան: Նրա հավատը պայմանավորված է նահապետական միջավայրով: Նա չի պատկերացնում, որ համերկրացին կարող է այդպես ստորաբար խաբել իրեն: Ամերիկայի խարդախություններին անձանթ, միամիտ երիտասարդը նամակ է գրում Թեյյանին, որ դրամն ուղարկի, բայց նա չի պատասխանում: Ապա, որոշ ժամանակ անց, ստանում է 650 դոլար, որը կեղծ գումար է. խաղալիք թղթերը Թեյյանն ուղարկել է իրական գումարի փոխարեն: Այսպես սնանկանում է Աբրահամը, հետո էլ վրա են հասնում 1895-ի դեպքերը, ինչի պատճառով էլ սպանվում է՝ ընտանիքին թողնելով որբ ու անտեր: Այս ամենին զուգահեռ ներկայացվում է Թեյյանի կյանքը: Գողությամբ հափշտակված գումարով ավելի է հարստացել և հիմա էլ, օրհասին հասնելով, «բարեգործ» է դարձել: Նրան փառաբանում են իբրև «մեծ հայրենասերի», «ազգային բարերարի» և մեռնելուց հետո գրում. *«Աստ հանգչի եկեղեցասեր...ազգային բարերար... և...» [2,48]:* Հարստությունը, գումարը բավարար են «ազգային բարերար» կոչվելու:

Դրամի փայլը կուրացնում է մարդկանց՝ ոտնահարելով ցանկացած բան, ինչ մարդկային է: Եվ վատն այն է, որ նույնիսկ ամենաանմեղ

թվացող հոգիներն էլ են դառնում դրամի հզոր իշխանության ենթակաները: Հայրենիք, ծնող, ազգություն այլևս անկարևոր բաներ են դառնում: «Մեկ աչքս հետո տար» պատմվածքը սկսվում է սրտաճմլիկ տեսարանով: 17-ամյա Միմոնը մեկնում է Ամերիկա, իսկ մայրն ու քույրերն էլ դառնալի արցունքներ են թափում. անկարող են բաժանվել սիրելի զավակից: Բանն այն է, որ Միմոնի հայրը թուրք ավազակների կողմից կողոպտվել ու սպանվել է, իսկ երիտասարդն էլ չի կարող այդ պայմաններում երկրում մնալ, բացի այդ՝ պատերազմ է, լուծումը մեկն է՝ Ամերիկան:

Հայտնվելով Ամերիկայում՝ լիովին շրջադարձվում է Միմոնի կյանքը: Սկզբում բնակվում է իր հայրենակիցներից մեկի՝ պրն. Խաչիկի տանը, որը երկար տարիներ է, ինչ ապրում է Ամերիկայում: Հասարակ մի դերձակ է Խաչիկը, իսկ վաստակած գումարն էլ՝ չնչին. արդեն մոռացության է տվել տունն ու ընտանիքը: Սկզբում աշխատելով՝ Միմոնը գումար է խնայում՝ տուն ուղարկելու համար, բայց հետո արդեն տարեցտարի փոխվում է երիտասարդի էությունը:

Հեղինակը ներկայացնում է մեզ երկու Միմոնի. մեկը՝ Ամերիկա նոր եկած, անմեղ, աշխատասեր մի երիտասարդի, իսկ մյուսն էլ արդեն Ամերիկայի մեծահարուստ Միմոն Մարագյանին: Անցատանը, երբ Միմոնին թուրք են անվանում՝ նկատի ունենալով Թուրքիայից գալու հանգամանքը, նա սաստիկ վիրավորվում է, իսկ տարիներ անց արդեն չի էլ ցանկանում ճանաչել իր ազգությունը: Հաջողության անիվը հետևում է Միմոնին. նոր գնված հողատարածքում նավթի պաշարներ են հայտնաբերվել, և նա կարող է արդեն ամբողջ կյանքում չաշխատել ու գումար ստանալ:

Անցնում են տարիներ, պատերազմն ավարտվում է, մահազու եղեռնը՝ ևս (Միմոնը հույս ունի, թե մայրն ու քույրերն էլ են եղեռնի զոհ դարձել, անիմաստ է համարում հետաքրքրվել): Ամերիկայի հայությունը որոշում է գումար հավաքել՝ հալածանքներից տուժած ընտանիքներին օգնելու համար: Իբրև մեծահարուստի՝ որոշում են դիմել նաև Միմոնին: Միմոնի պատասխանը ապշեցնում է. «-Տօ՛, յիմարներ, վա՛ճ անցեք, վա՛ճ, ի՛նչ ազգ, ի՛նչ կարօտութիւն: Ես անօթի մարդիկ կերակրելու պարտք չունիմ. ձեր գործերուն նայեցեք որ մարդ ըլլաք» [4, 222]:

Միմոնի սրտի սառույցը փորձում է հալեցնել մի քահանա. «Հայր տուած է թրքական սուրին, մայր եւ քոյրեր կորուսած է արսորի ճամբաներուն վրայ, անիկա չի կրնար ապառաժ մնալ» [4,225]: Երբ քահանան Միմոնին տեղեկացնում է, թե նրա մոր խնդրանքով է եկել

այցելության, նա մի պահ կարկամում է: Հիվանդանոցում է քահանան հանդիպել խեղճ այրուն, և վերջինիս ցանկությունը մեկն է եղել լուր իմանալ որդուց, տեսնել նրան: Մահվան պահին ընդամենը մի բան է խնդրել քահանայից՝ «Մէկ Աչքս Հետդ Տար», որ կարոտն առնի որդուց: Թվում է, թե Սիմոնը պետք է դարձի գա, բայց հակառակն է տեղի ունենում. քահանային ևս մերժում է. դրամը կուրացրել է նրան: Քահանան ապշահար պատասխանում է.

«Պր. Մարագեան, շա՛տ ուրախ եմ, որ մայրդ մեռաւ, եւ աւելի ուրախ եմ, որ անոր «մէկ աչքը հետս չբերի», որովհետն երբ այդ մայրական աչքը հոս գար եւ քեզ տեսնէր այս վիճակին մեջ, անտարակոյս քեզի տուած կաթը հարա՛մ պիտի ընէր եւ տասն անգամ աւելի կսկիծով պիտի մահանար... Աստուած ողորմի նա՛խ քեզի, յետոյ մեր թշուառներուն...» [4,228]:

Դրամի վայրագ ուժը ավելի ցցուն կերպով երևում է «Կաթիդ փարան չմոռնաս, մամա» պատմվածքում: Ընդամենը մի քանի էջանոց պատմվածքում Վահե Հայկը կերտել է անհոգի, երախտամոռ զավակի և նրա մոր՝ խեղճ ու կրակ պառավի կերպարները: Հեղինակը, որը ներկայանում է որպէս այդ պատմության դիտող-մասնակից, չի թաքցնում իր զայրույթն ու արհամարհանքը նպարավաճառ որդու նկատմամբ, իսկ սերը դեպի անիրավված կինը արտահայտում է թաքնված ձևով. «-Մամա՛, անուշի՛կ և անտէր Մամա, մյուս անգամ, երբ քու հարագատ զավակէդ կաթ գնէլու գաս, քո՛ւ կաթիդ փարան չմոռնաս... ըսէ այս զայլը տղուդ, որ քու տված կաթիդ փարան վճարէ նախ... այն մայրական անարատ կաթին, որ քու էութենէդ, քու արյունիդ կաթիլներէն քանվեցավ և վազեց անոր շրթունքներուն մեջ... վազեց անհամա՛ր գիշերներով... անքո՛ւն գիշերներով... նվաղուն օրորներով և նենհիններով քաղցրացած...»

Մամա՛, միտքդ պահէ՛, մյուս անգամ խանութ գալուդ՝ կաթիդ փարան չմոռնաս... հա՛ ... չմոռնաս» [2,83]:

Մի կարևոր հանգամանք ևս պետք է ընդգծենք՝ նպարավաճառը անուն չունի, այսինքն՝ հավաքական կերպար է, և նրա նմանները շատ են հասարակությունում:

Գաղափարական առումով «Կաթիդ փարան չմոռնաս, մամա» պատմվածքին նմանողական է «Երեսուն կտոր արծաթ» պատմվածքը (այստեղ նույնպէս երևում է երախտամոռ զավակների իրական դեմքը): Սյուժեն շատ պարզ է. մոտակա քաղաքից գրողը (պատմողը) ստանում է գրություն՝ մասնակցելու մի հուղարկավորության: Մեռել էր 80-ին

մոտեցած մի բարեկամ: Ծանոթը խնդրել է գրողին՝ հանգուցյալի կամքով դամբանական խոսել: Նա, թեև օտար մարդ, երբ լսում է մահվան մասին, վշտանում է, թեև կասկածում, բայց չի ընդմիջում, այլ պատմում է ըստ կարգի, առանց գրվածքի տրամաբանությունը խախտելու: Մտնում է սրբարան, ուր դրված է դագաղը: Կան ծաղիկներ, կա բազմություն, բայց հարազատների նստարանները դատարկ են: Բոլորը զարմացած ու ապշած են, որ այդ մարդը զավակների վրա առաջին օրից մինչև վերջը խնամք է տարել, բայց նրանք ներկա չեն ծնողի հուղարկավորությանը: Գերեզմանոցում նույնպես թափուր է մնում սգավորների աթոռը: Որդիները չեն հիշում նրան, ավելի ճիշտ, հիշում են, բայց միայն ժառանգությանը տիրելու ակնկալիքով:

Ինչպես Վահե Հայկի շատ գրվածքների հերոսների, այնպես էլ այստեղ հանգուցյալի երկու չափահաս աղջիկներին հասարակական պայմանները դարձրել են եսասերներ: Նրանք սուկ մտածում են իրենց մասին, թեև ապրել են հոր քրտինքի հաշվին: Այստեղ էլ երևում է հայրերի ու որդիների պառակտումը, ուր որդիները, հետևելով օտար միջավայրին և մոռանալով ազգային ավանդույթները, խրվում են կյանքի արատների մեջ: Այս աղջիկներն էլ անգրագետ նպարավաճառից տարբերվում են իրենց ամերիկյան գրագիտությամբ. «մեծ գիտնականներ» են, բայց ում է պետք նրանց գիտությունը, երբ նրանք լքում են հարազատ հորը, որին թաղում են իբրև անտեր մեռել: 15 տարի չեն տեսել իրենց հորը, բայց վերջինիս մահվան լուրն առնելով՝ վազել են այնտեղ՝ ոչ թե զոջման զգացումից ելնելով, այլ՝ «երեսուն արծաթով վարձատրվելու»:

Հաշվենկատ ամուսնությունները դառնում են մարդկանց կործանման պատճառ: Այս երևույթն էլ նկատելի է «Հորքուրիդ աչքը կուրնար» պատմվածքում: Մր. Պրատունի գործարանի առջև, մանկիկը ձեռքին, կանգնած է մի խեղճ հայ կին: Բանն այն է, որ ամուսինը գործարանում աշխատած ամբողջ գումարը ծախսում է սեփական վայելքների համար, իսկ կնոջն ու երեխային զցել է ախոռի նմանվող տան մեջ և չի մտահոգվում նրանց համար: Գործարանի տերը հրաժարվել է գումար վճարել՝ նկատի ունենալով այդ հանգամանքը: Բայց Ալբերթը գտել է լուծումը. կնոջը հրամայել է գալ ու ցրտին կանգնել գործարանի դիմաց, որպեսզի Մր. Պրատունը, խղճահարությունից ելնելով, գումար տրամադրի Ալբերթին: Այս ամենին ականատես է դառնում հեղինակը: Պր. Պրատունից իմանալով ողջ եղելությունը՝ կնոջն առաջարկում է դատախազություն դիմել, բայց վերջինս անկարող է,

անձանոթ է միջավայրին: Գումար է առաջարկում, ինչն էլ մեծ դժկամությամբ է ընդունվում: Հինգ տարի առաջ Հունաստանից է փախել եկել Ամերիկա, ծնողները կոտորածի զոհ են դարձել: Ամերիկա գալով՝ ամուսնացել է Ալբերթի հետ ու այդ վիճակին հասել:

Սակայն հեղինակ-հերոսին մի բան էլ է մտահոգում. ո՞վ է համոզել այդ խեղճ կնոջը ամուսնանալ Ալբերթի նմանի հետ.

«Ի՞նչ գիտնամ, հորքուրս շա՛տ քսավ, թե՛ բախտդ բերեր է, շա՛տ դրամ ունի այս տղան...» [3, 122]:

Հեղինակն արձագանքում է. *«-Հորքուրիդ աչքը կուրնար... հե՛տ երկուքն ալ կուրնար... մեկը՝ մեկային ետեւեն...» [3, 122]:*

Եզրակացություն: Այսպիսով՝ յուրատեսակ կարողությամբ պատկերելով սփյուռքը, նրա վայրիվերումները, հայապահպանման մշտառկա խնդիրը՝ Վահե Հայկն այն համոզմանն է գալիս, որ ազգային ավանդույթներից նահանջը, ուժացումը, մարդու՝ որպես գերագույն արժեքի կորուստը պայմանավորված է դրամի ներգործուն ուժով: Գրողը խորին ափսոսանքով նկատում է, թե ինչպես հարստության, գումարի արժևորումով մարդը կարող է կորցնել իր խարիսխը և օտարանալ:

ВНУТРЕННЯЯ СИЛА ДЕНЕГ В НЕКОТОРЫХ РАССКАЗАХ ВАГЕ АЙКА

Татоян Н. К.

В этой статье раскрывается подчеркнутая, тематически содержательная сторона рассказов одного из выдающихся прозаиков литературы армянской диаспоры - Ваге Айк, где деньги как "всемогущая сила" становятся важнее, чем высокие человеческие ценности.

Ключевые слова: Ваге Айк, армянская литература диаспоры, приход на родине, тоска по родине, отступление, деньги, культурная ассимиляция.

THE INNER POWER OF MONEY IN SOME STORIES OF VAHE HAYK

Tatoyan N. K.

This article reveals the thematically significant side of the stories of one of the outstanding prose writers of the Armenian Diaspora - Vahe Hayk, where money as an "omnipotent force" becomes more important than high human values.

Keywords: Vahe Hayk, Diaspora Armenian literature, Homeland parish, homesickness, retreat, money, cultural assimilation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաբրիելյան Վ. Սփյուռքահայ գրականություն: Երևան: ԵՊՀ հրատ.: 2008: 424 էջ:
2. Հայկ Վ. Հայրենի ծխան: Երևան: «Հայպետ» հրատ.: 1960: 340 էջ:
3. Հայկ Վ. Հայրենի ծխան: 5 հատորով: Հատոր 2: Պատմուածքներ եւ պատկերներ: Նիւ Եորք: «Նոր օր» տպ.: 1941: 176 էջ:
4. Հայկ Վ. Հայրենի ծխան: 5 հատորով: Հատոր 3: Պատմուածքներ եւ պատկերներ: Պոսթրն: «Պայքար» տպ.: 1946: 256 էջ:
5. Հայրյան Գ. Ա., Ասմարյան Լ., Մաքսապետյան Մ. Վ. Սփյուռքահայ գրողներ: Երևան: Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ.: 1990: 376 էջ:
6. Սփյուռքահայ նորագույն պատմվածք: Երևան: ՀԳՄ հրատարակչություն: 2009: 244 էջ:
7. Սևան Գ. Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.: 1980: 320 էջ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Թաթոյան Ն. Գ. – մագիստրոս

ԵՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն

Էլ. փոստ՝ nona.tatoyan@mail.ru

Գիտական ղեկավար՝ Մանասյան Լ., բան. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 10.11.2022

Գրախոսվել է՝ 07.03.2023

**ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ «ՈՒՍՏԻՐ ԳՈՒ ԳԱՍ, ՔԱՂՑԻ ԲԼԲՈՒԼ» ԵՎ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ «ՈՒՍՏԻՐ ԳՈՒ ՔԱՍ, ՂԱՐԻՐ ԲԼԲՈՒԼ» ՏԱՂԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Կոստանյան Ա. Ն.**

Հոդվածը նվիրված է միջնադարյան հայ բանաստեղծների՝ Նաղաշ Հովնաթանի «Ուստի՛ր կու գաս, քաղցր բլբուլ» և Սայաթ-Նովայի «Ուստի՛ր գու քաս, դարիբ բլբուլ» տաղերի առանձնահատկությունների քննությանը, երկու տաղասացների երգած սիրո նմանությունների ու տարբերությունների, առհասարակ հեղինակների միջև եղած կապի ու ազդեցությունների բացահայտմանն ու ընդգծմանը: Նրանց ստեղծագործական ժառանգությունը ճանապարհ է բացում քրիստոնեական ոգին և աշխարհասիրությունը միասնական տեսնելու համար:

Նաղաշ Հովնաթանի և Սայաթ-Նովայի հարուստ ու ինքնատիպ բանաստեղծական ժառանգությունը հայ միջնադարյան պոեզիայի, մասնավորապես՝ աշխարհիկ տաղերգության շարունակությունն է:

Բանալի բառեր. Սայաթ-Նովա, Նաղաղ Հովնաթան, հայ միջնադարյան պոեզիա, աշուղական արվեստ, աշխարհասիրություն, բլբուլ, դարիբ, քաղցր բլբուլ, վարդ, պլատոնական սեր:

Կան բանաստեղծներ, որոնք կենդանության ժամանակ ստիպված են փակել իրենց ականջները՝ փառքի աղմուկից պաշտպանվելու համար: Եվ երբ նրանք խոսում են, մենք լռում ենք, ձուլվում ենք նրանց, միանում ու ամբողջանում: Ու չես հասկանում՝ նրա՞նք են խոսում, թե՞ ինքդ, նրա՞նք են սիրում, թե՞ դու, նրա՞նք են այրվում, թե՞ մենք...

Միջնադարյան հայ տաղերգության եզակի դեմքեր Նաղաշ Հովնաթանը և Սայաթ-Նովան այդ փառքի ուրույն կրողներն են, համամարդկային, անանձնական սեր տարածողները հայ իրակա-նության հորիզոններում...

16-17-րդ դարերից մեզ են հասել տաղասացների անուններ, որոնց մեջ իր յուրօրինակ ձեռագիրն ունի Նաղաշ Հովնաթանը: Իսկ Սայաթ-Նովայի հարուստ բանաստեղծական աշխարհը զարդարում է 18-րդ դարի հայ միջնադարյան պոեզիան: Առաջին հերթին պատկանելով սեփական ժողովրդին՝ իրական ապրումների անմիջականությամբ ու կենդանի լեզվամտածողությամբ, ստեղծագործությունների ակունքում

ունենալով հենց այդ ժողովրդի առանձնահատկությունները՝ մեծ բանաստեղծները իրենց քնարական ժառանգությամբ ձգտել են նմանվել բազմահարուստ բանահյուսության հարուստ գանձարանին, աշուղական բանարվեստին, նաև ընդհանուր արևելյան գրականությանը:

Երկու տաղերգուների՝ Նաղաշ Հովնաթանի և Սայաթ-Նովայի հարուստ ու ինքնատիպ բանաստեղծական ժառանգությունը հայ միջնադարյան պոեզիայի, մասնավորապես՝ աշխարհիկ տաղերգության շարունակությունն է: Մյուս կողմից՝ այս երկու քնարերգուների կապն ու ազդեցությունների հանգամանքը հնարավորություն է տալիս բացահայտելու մի շարք աղերսներ:

Անհամեմատ կարևորն այն է, որ մեծ բանաստեղծների չափածոն ինքնատիպ անակնկալ էր դեռ այդ ժամանակի հայ գրականության մեջ: Թվում է, թե գործ ունենք ոչ թե ուշ միջնադարի, այլ նոր ժամանակների ստեղծագործությունների հետ:

Այսպես, Հովնաթանյան նշանավոր տոհմի նկարչական դպրոցի հիմնադիր, աշխարհիկ աշուղ-բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի խոսքում մի ամբողջական աշխարհայեցողությունն է, որ ճանապարհ է բացում քրիստոնեական ոգին և աշխարհասիրությունը միասնական տեսնելու համար: Արդի մարդու համար այլևս բացակայում են մեր հին բանաստեղծության խիստ կրոնական շերտերը: «Նա, իհարկե, հակառակ չէ ապաշխարանքին, բայց գտնում է, որ յուրաքանչյուրն իր տեղն ունի մարդու կյանքում՝ մարմնով պետք է վայելել աշխարհը, իսկ հոգով գործած մեղքերի համար զղջալ ու թողություն խնդրել» [6]:

Իրավամբ, բարոյականություն որոնող Նաղաշ Հովնաթանը ազատ և անկաշկանդ խոսքի վարպետ է: Սայաթ-Նովան իր մեծ նախորդի՝ Նաղաշ Հովնաթանի քնարերգության միջոցով առնչվել է միջնադարյան հայ աշխարհիկ տաղերգությանը՝ դառնալով դրա վերջին խոշոր ներկայացուցիչը...

Արդ, իր արվեստով եզակի է Սայաթ-Նովան, և նկատելով այս մեծ տաղանդը՝ Վ. Բրյուսովը Սայաթ-Նովային համարում է «երկնային այն հազվագյուտ պարզներից, որոնք օրհնանք են թողնում իրենց դարին ու իրենց ժողովրդին» [7]:

Եվ իսկապես էլ, միջնադարյան հայ աշխարհիկ տաղերգության լավագույն աշուղ Սայաթ-Նովան ստեղծել է բանաստեղծություններին հատուկ արվեստ, որը կապվում է միջնադարյան հայ տաղասացների երգերի և աշուղական գրականության հետ: Աշուղական գրականությունը հայ մատենագրություն ներմուծեց արևելյան տաղաչափական

ձևեր, որոնք լիովին տարբեր էին հայկական ավանդականից, գրեց ժամանակի խոսակցական լեզվով՝ ոչ գրաբարով, և օգտագործեց պարսկերեն, արաբերեն, թուրքերեն բառեր: Նշենք նաև, որ արվեստի խնդիրներում նա կրել է Նաղաշ Հովնաթանի ազդեցությունը:

Երգահյուս քնարերգուն գունագեղ պատկերներով, ողջ Արևելքի համար ընդհանուր դարձած արտահայտչաձևերով հիասքանչ խաղեր է հյուսել՝ դրանցում արտահայտելով իր անկեղծ զգացմունքները, ուրախ և տխուր տրամադրությունները, իր պատկերացումները կյանքի ու աշխարհի, մարդկային հույզերի, հատկապես մաքուր ու անկեղծ սիրո և հավատարմության վերաբերյալ:

Ուշադրության առնելով այս ամենը՝ նշենք՝ հազվագյուտ շնորհներով օժտված հեղինակների ստեղծագործությունները, ձուլվելով ժողովրդի էությունը, հավերժանում են նրա հետ՝ դուրս գալով ժամանակի ու ազգային սահմաններից: Նրա երգերն առաջին հերթին հետաքրքրություն են ներկայացնում որպես ուշ միջնադարի հայ երաժշտաբանաստեղծական արվեստի յուրօրինակ նմուշներ:

Արդ, երկու երգիչների՝ Նաղաշ Հովնաթան և Սայաթ-Նովա հեղինակների կապը, ազդեցությունները լավագույն հնարավորությունն են նորանոր ուսումնասիրությունների, համեմատությունների, բացահայտումների:

Ահա այսպես, 1910-ին լույս է տեսնում Ա. Չոպանյանի «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» գիրքը, որում հեղինակը համեմատական քննությամբ Նաղաշ Հովնաթանին զուգադրում է Քուչակի և Սայաթ-Նովայի հետ: «Չոպանյանն իրավացիորեն երկուսին էլ առավել գերազանց է համարում Նաղաշ Հովնաթանից: Սայաթ-Նովան էլ իր հերթին բանաստեղծական ավելի կատարյալ երևույթ է, քան Հովնաթանը: Սակայն վերջինս մեծ արժեք է հայ գրականության մեջ» [2]:

Իսկ արդեն սայաթնովագետ Մ. Հասրաթյանը նկատում է, որ Սայաթ-Նովայի՝ առանձին ուշադրություն գրավող «Էյ, լսեցեք...» երգը՝ որպես սատիրական սակավաթիվ բանաստեղծություն, նման է Նաղաշ Հովնաթանի տաղերին՝ հասցեագրված այն տգետներին, որոնք փորձել են ժխտել երգչի շնորհքը՝ մրցման դուրս գալով նրա դեմ: Ուշադրության է արժանացրել ևս մի հանգամանք. «Քանի վուր ջան իմ...» երգի տողատման հարցը: Հեղինակը նշում է, որ այն գրված է Նաղաշ Հովնաթանի «Թասիրն չլինի», այսինքն՝ «Նըստիմք ի մեջլիս» երգի հանգով:

Բայց, այս ամենով հանդերձ, Սայաթ-Նովան ու Նաղաշ Հովնաթանը սրտից դեպի գլուխն ու վերջավորությունները, բարձրությամբ ու ցածրությամբ, հատուկ են իրենց կատարյալ կերպարանքով, տրոփով, անտակ հոգով, նորացող վսեմությամբ:

Ահա այսպես, առհասարակ Սայաթ-Նովայի խաղերում ոչինչ այնքան չի կրկնվում, որքան «բլբուլ» բառը: Ըստ որում՝ այդ «բլբուլն» ունի մակդիր՝ «ղարիբ»: Բանաստեղծն իրեն մեկ անգամ չէ, որ անվանում է «ղարիբ բլբուլ»: «Բլբուլ» բառը հասկանալի է բոլոր նրանց համար, ովքեր գեթ մեկ անգամ առիթ են ունեցել հաղողվելու արևելյան բանաստեղծությանը:

«Սայաթ-Նովան իրեն ղարիբ էր զգում ոչ թե Վրաստանում, այլ այն պայմաններում, որոնց մեջ էր գտնվում ինքը, Վրաստանն էլ՝ դասային անհավասարությունների մեջ, անարդարությունների ահռելի շատության և ճշմարտության ահռելի նվազության մեջ» [8]:

...Նա իրեն «ղարիբ» էր զգում, բայց չմոռանա՛նք, «բլբուլ»:

Ու երգում էր՝ այդ բլբուլը ոչ թե լոկ այն, ինչի համար ծնվել էր, այսինքն՝ սեր, այլ նաև այդ ղարիբությունն էլ:

Արձանագրենք, որ հաճախ Սայաթ-Նովան իր յարին նմանեցնում է ծաղիկների և հատկապես վարդի հետ. ամենից գեղեցիկ համեմատությունը իր և իր յարի վիճակի համեմատությունն է:

«Ուստի՞ գու քաս, ղարիբ բլբուլ» տաղում Սայաթ-Նովան օգտագործում է հայ միջնադարյան տաղերգության մեջ լայն տարածում գտած վարդի և բլբուլի այլաբանությունը: Բանաստեղծը ինքնատիպ ձևով է մատուցում այլաբանությունը. իրեն համեմատում է սիրուց տանջվող բլբուլի հետ, որն այրվում է վարդի սիրուց:

Ա՛րի բլբուլ, խօ՛սի բառըն.

Օխնըվի քու էկած սարըն.

Քի վարդն էրից, ինձ՝ իմ եարըն.

Դու մի՛ լաց՛լի, յիս իմ լալու [7]:

Նա հորդորում է բլբուլին լաց չլինել, ինքը կարտասվի երկուսի փոխարեն.

Դու մի՛ լաց՛լի, յիս իմ լալու [7]:

Շարունակելով նշենք, որ Սայաթ-Նովայի երգերում այնքան առատորեն օգտագործված «խար» բառը՝ «փուշ», «վնասատու միջատ», «ստոր» իմաստներով օգտագործված է նաև մի շարք այլ խաղերում:

Ման իմ գալի դիդարի հիդ,

Վունց ղարիբ բլբուլ խարի հիդ.

Դու՛ վարդի հիդ, յիս՛ եարի հիդ.

Դու մի՛ լաց՛լի, յիս իմ լալու [7]:

Այստեղ երգչի համար «դիդարը» (տեսք, կերպարանք, գերողը) նույնն է, ինչ սոխակի համար խարը, հետևապես և վարդը, որի մուտքն այդպես էլ հենց բացված է երրորդ տան մեջ [4].

Դու՛ վարդի հիդ, յիս՛ եարի հիդ [7].

Ուստի այս երգում «խար»-ը համազոր է «վարդ» հասկացողությանը:

Եթե առաջին տան մեջ բանաստեղծը, և՛ հորդորի, և՛ խորհուրդ տալու տրամադրությամբ վարակված, կոչ էր անում «դարիբ բլբուլ»-ին փնտրել վարդ, իսկ իրեն՝ իր «գոգալին», ապա նախավերջին տունը նոր ասելիքի տոնայնություն ու նրբություն ունի.

Դու վա՛րդ կանչե, յիս եա՛ր կանչիմ [7].

Բայց մի՞ թե՛ Սայաթ-Նովան հուսագուրկ ու հավատաթափ էր բռնորովին:

«Մի՞ թե՛»-ի պատասխանը, բարեբախտաբար, բացասական է. Սայաթ-Նովան միայն ննջում է և ոչ երբեք քնում ցավից, սպասելուց, տառապանքից:

Նա հստակ դիմում է «դարիբ բլբուլ»-ին, ում ձայնը այնքան ծանոթ է ու հայտնի, այնքան ճանաչելի. նրանք երկուսն էլ այրվում են նույն դրության մեջ.

Ղարիբ բլբուլ՛ ւլ, ձայնըդ մալում,

Յիս ու դուն էրվինք մե՛ հալում [7]:

Իսկ հիմա, միաժամանակ և՛ փառավոր, և՛ տառապալից կյանքով ապրած ու հասունացած բանաստեղծը եզրափակում է տաղը՝ ի խորոց սրտից խոսք բարբառելով.

Սայաթ-Նովէն ասաց՝ զալո՛ւմ,

Դու մի՛ լաց՛լի, յիս իմ լալու [7]:

Նաղաշ Հովնաթանի «Ուստի՛ կու գաս, քաղցր բլբուլ» տաղում նույն հարցական հնչերանգն է, բայց այն անձը ում ուղղված է հարցը, ոչ թե «դարիբ», այլ «քաղցր» բլբուլն է:

Ամենից առաջ նշենք, որ Նաղաշ Հովնաթանի երգերի մեջ, անշուշտ, կնոջ՝ նրա սիրուհու կենդանի դեմքի պատկերումը, այրող ու նվիրական սիրո ազատ ու անվախ արտահայտումը նրա աշխարհիկ հայացքի ինքնատիպ դրսևորումներն են:

Ազատ և անկաշկանդ խոսքի վարպետ Հովնաթանը՝ որպես մի պայծառ երևույթ, իր ժամանակի առաջավոր մտածողներից մեկը, սիրո

ու բնության երգերում վերարտադրել է մարդկային զգացմունքներ ու տրամադրություններ՝ հնարավորինս հեռու մնալով կրոնական ու կենցաղային կաշկանդումներից:

Նաղաշ Հովնաթանը պատրաստ է «դուլ» (գերի, ծառա, ստրուկ) լինել քաղցր բլբուլին [4]: Այնուհետև շարունակելով բանաստեղծության միտքը՝ հեղինակը մանրամասն նկարագրում է քաղցր բլբուլին՝ կարողանալով ամեն անգամ մի նոր նրբերանգ, ապրումների մի նոր ծալք գտնել իր ներաշխարհը բացահայտելու և իրեն գերող գեղեցկուհու բարեմասնությունները դրվատելու համար: Քաղցր բլբուլը հեղինակի սրտում մի մեծ երազանք է՝ հյուսված կյանքի գունագեղ երանգներից, ձևավորված բնության կենսապարզ երևույթներից.

Լեզուդ շարբաթ, սաչդ սմբուլ,
Քաղցր լեզուովդ ջուր տուր ինձի:

...

Վասմդ կասեն խիստ աննման,
Քեզնե՛ գատ էլ չունիմ կուման,
Ես ինչ կանեմ հազար թուման,
Երբ դու եար կու լինիս ինձի:
Նախշուն երես, բոլոր սուրաթ,
Մնացել ամ հէյրան ու մաթ,
Ըռահմ արա, հե՛յ, բե՛ մուրվաթ,
Քանի՞ քարէքար տաս ինձի [5]:

Բանաստեղծի նկարագրությունները հասնում են իրենց գագաթնակետին. հավատարիմ մնալով երգչի կոչմանն ու երբեմն էլ մարդկային թուլություններին՝ բանաստեղծը հաճախ գերվել է անակնկալ սիրո թովչանքներով և դրվատանքներ շռայլել գեղեցկուհուն, որով էլ լայնացել ու խորացել են սիրո թեմայի ընդգրկումները.

Առաւօտուց բացուել վարդն,
Դու էս գօզալներուն զարդն...[5]

Թուխ ծամ ունէս, դալամդաշ էս,
Ինչ որ հազնիս՝ բարով մաշէս,
Ծով աչքերովդ դամգայ քաշէս,
Սուր դանակով կուտաս ինձի:

Ատամներդ սատաֆ ինջի,
Ծոցդ պաղչայ է թուրինջի
Ես եղայ սէֆիլ զարընջի,
Էլ ի՞նչ խելք կու մնայ ինձի [5]:

Եվ տեղն է եկել շեշտելու, որ բանաստեղծի տաղերում ոչ մի այլաբանություն չկա, անգամ վարդի և սոխակի սիրված ու հին մոտիվները ներկայացված չեն: Իսկ եթե նրա երգերում առկա են վարդն ու սոխակը, ապա դրանք բնության մեջ գոյություն ունեցող և բնական տեսարանների վերարտադրության բաղկացուցիչներից են:

Ինչպես Սայաթ-Նովան անմիջապես իր տաղն ավարտեց ու ամփոփեց՝ իր անունը շեշտադրելով, այնպես էլ վարվեց Նաղաշ Հովնաթանը: Իբրև մեծ սիրահար, աշխարհիկ մարդ ու բանաստեղծ՝ նա քաղցր բլբուլին խնդրում է, համոզում, պահանջում, որ իրեն ավերակի չվերածի, վերջապես գթա, խղճա ու կարեկցի իրեն.

Նաղաշ կասեն խիստ բէչարայ,
Ե՛կ, ինձ մի՛ աներ աւարայ.
Այսչափ բաներս քեզ համար այ,
Այլ դու ե՛րբ կու խղճաս ինձի [5]:

Այսպիսով, քննության ենթարկելով Նաղաշ Հովնաթանի «Ուստի՞ կու գաս, քաղցր բլբուլ» և Սայաթ-Նովայի «Ուստի՞ գու քաս, դա՛րիբ բլբուլ» տաղերը՝ եզրակացնում ենք, որ Նաղաշ Հովնաթանի տաղն իր նկարագրություններով, լեփ-լեցուն սիրող սրտերի ջերմ բաբախներով, խենթացնող ծարավով ու տոչորումներով տարբերվում է Սայաթ-Նովայի տաղից: Ի տարբերություն Սայաթ-Նովայի՝ Հովնաթանը իր տաղում գեղեցկուհու արտաքին գովաբանությունը հասցնում է այն կետին, որ հնարավորություն ենք ունենում ընդգծելու այն հանգամանքը, թե Հովնաթանը բանաստեղծ լինելուց առաջ և հետո նախ՝ նկարիչ էր և իրականությունն ու դեմքերը տեսնում էր նկարչի աչքով: Նաղաշ Հովնաթանը դիմում է փոխադարձ սիրով իրեն կապված էակին, իսկ Սայաթ-Նովայի սերը պլատոնական է: Վերջինիս սերը անպատասխան ու անարձագանք էր: Ահա այստեղ է նրանց երգած սիրո տարբերությունը. «Էստեղ առաջ է գալիս Սայաթ-Նովայի տխուր ու ազնիվ դեմքը: Կանգնեցնենք նրան Նաղաշ Հովնաթանի զվարթ պատկերի դեմը: Ահա թե ով է դժբախտ սիրո մեջ, և ահա թե որտեղ են մերժված սիրո իսկական հառաչանքն ու տառապանքը...» [3]: Եվ Հովնաթանի պարագայում գործում էր՝ «գեղեցկություն ու այդ գեղեցկությանը տիրանալու պահանջ, և դա՛ առանց հոգեբանական խոր

ապրումների, առավել ևս՝ տանջանքների, առանց համոզելու ջանքերի, առանց կասկածների ու անվստահության տազնապների» [1]: Մեզ համար քննության առարկա դարձած տաղերը իրենց ողջ էությամբ ու ասելիքի խորությամբ հատկանշական են եղել ոչ միայն այդ հեղինակների ապրած դարաշրջանում, այլև այսօր՝ որպես ամենայն գունագեղությամբ ու մանրամասնություններով, համեմատություններով կերտված երգեր:

Մեր խորին համոզմամբ՝ միջնադարյան հայ տաղերգության եզակի դեմքերին նկարագրելիս «քայլող ազնվության», «շրջող անկեղծության» զարդարանքներով երբեք բավարարվել չենք կարող. հանձարներց մեկը հորդորում է՝ վերջին շնորհակալությունը հայտնելուց առաջ «...վստահ մոտեցեք, նրանք չեն՝ վառի. նրանք միայն կտաքացնեն ն՝ ձեզ...» [8]:

**ОСОБЕННОСТИ СТРОФ «ОТКУДА ИДЕШЬ, СЛАДКИЙ СОЛОВЕЙ?»
НАГАША ОВНАТАНА И «ОТКУДА ИДЕШЬ, СТРАННИК-СОЛОВЕЙ?»
САЯТ-НОВЫ**

Костанян А. Н.

Статья посвящена рассмотрению особенностей характеристики строф средневековых армянских поэтов Нагаша Овнатана «Откуда идешь, сладкий соловей» и Саят-Новы «Откуда идешь, странник-соловей», сходству и различию воспетой любви двумя поэтами и связи между авторами в целом, выявлению и интерпретации влияний. Их творческое наследие прокладывает путь для объединения христианского духа и жизнелюбия.

Богатое и самобытное поэтическое наследие Нагаша Овнатана и Саят-Новы является продолжением армянской средневековой поэзии, особенно, светской поэзии.

Ключевые слова: Саят-Нова, Нагаш Овнатан, армянская средневековая поэзия, ашугское искусство, жизнелюбие, соловей, странник, сладкий соловей, роза, платоническая любовь.

**THE PECULIARITIES OF THE POEMS “WHERE DO YOU COME FROM,
MY SWEET NIGHTINGALE?” BY NAGHASH HOVNATAN AND “WHERE
DO YOU COME FROM, MY WANDERING NIGHTINGALE?” BY SAYAT
NOVA**

Kostanyan A. N.

The article is devoted to the works of the Armenian medieval poets. It discusses the peculiarities of the poems “Where do you come from, my sweet

nightingale?” by Naghash Hovnatan and “Where do you come from, my wandering nightingale?” by Sayat Nova. The study focuses on the differences and similarities of the concept “love” written by both poets. It emphasizes the influence of their poetry on the Armenian literature. Their creative legacy paves a way for the union of the secular and Christian world.

The rich and peculiar poetical legacy of Naghash Hovnatan and Sayat Nova is the sequel of the Armenian Medieval Art, particularly for secular poetry.

Keywords: Sayat Nova, Naghash Hovnatan, Armenian Medieval Poetry, bard art, worldliness, nightingale, wandering, sweet nightingale, rose, Platonic Love.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Դ. Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն, Եր.: «Տիգրան Մեծ»: 2009: Էջ 799:
2. Դոլուխանյան Ա. Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից: Երևան: «Զանգակ-97» հրատ.: 2009: Էջ 112:
3. Թումանյան Հովհ. Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը: Թիֆլիս: 1916: Էջ 21:
4. Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Երևան: 2001: Էջ 332:
5. Հովնաթան Ն. Տաղեր Աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1983: Էջ 26:
6. Ներսիսյան Վ. Հայ հին գրականություն, Էջմիածին-Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: 2013: Էջ 227:
7. Սայաթ-Նովա Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյանը, Երևան: «Հայպետ» հրատ.: 1963: Էջ 19:
8. Սևակ Պ. Սայաթ-Նովա: Երևան: «Գիտություն» հրատ.: 2013: Էջ 256:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Կոստանյան Ա. Ն. - մագիստրատուրա 1-ին կուրս

ՀՊՄՀ, Բանասիրական ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն

Էլ. փոստ՝ kostanyananna5@gmail.com

Գիտական ղեկավար՝ Դոլուխանյան Ա., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, բան. գիտ. դոկ., պրոֆեսոր

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 02.02.2023

ON THE EFFECTIVENESS OF CONTENT AND LANGUAGE INTEGRATED LEARNING IN THE CLASSROOM OF NATURAL SCIENCES STUDY

Aleksanyan N. S.

The article touches upon the effectiveness of the implementation of CLIL in Science classrooms of high schools in Armenia, in particular, in teaching biology. As modern educational objectives predetermine revitalization of language-supportive methodologies, the CLIL approach sheds light on the main issues of teaching and learning processes.

On the one hand, being a highly interwoven and conceptualized on the continuum, the language and the content are taught to students promoting them to deal cognitively, consciously and emotionally with any given subject, namely with biology. On the other hand, the implementation of CLIL turns out to be a multi-objective process which makes the main challenges of the approach satisfactorily apparent.

For getting a much more reliable data, an experiment has been conducted in the form of a progress test. The results yielded to the following findings; the application of the approach encourages enlargement of science-specific vocabulary, interaction between subject teachers and language teachers, effective peer co-operative work and etc..

Keywords: content and language integrated learning, natural science classroom, language-supportive methodologies, multi-objective process, progress test.

Content and language integrated learning (CLIL) is an evolving educational approach to teaching and learning where subjects are taught through the medium of a non-native language.

CLIL refers to a situation in which the subject matter or part of the subject matter is taught via a foreign language with a two-fold objective: the learning of those contents and the simultaneous learning of a foreign language.

It has been known for a long time that teaching languages and other subjects separate from one another, in a vacuum, does not produce optimal outcomes. Both language and content teachers have already made important strides in revitalizing their teaching for this modern age within and even across their subjects. CLIL provides the opportunity to go a step further. It

creates fusion between content and language across subjects and encourages independent and co-operative learning, while building common purpose and forums for lifelong development. This provides significant added value for language learning (Mehisto, Marsh and Frigols, 2008).

The acronym CLIL was coined by David Marsh, a member of a team working in the area of multilingualism and bilingual education at the Finnish University of Jyväskylä in 1994. In 2005, Marsh suggested CLIL to be "a general 'umbrella' term to refer to diverse methodologies which lead to dual focused education where attention is given to both topic and language of instruction" (Kovács, 2014).

CLIL is not a new form of language education. It is not a new form of subject education. It is known as an innovative fusion of both. CLIL is closely related to and shares some elements of a range of educational practices. CLIL is a dual-focused educational innovation in which an additional language, not the mother tongue(s) of the learners, is used in order to teach and learn a non-language subject (Marsh, 2002).


Although the word CLIL came into existence only recently in 1994, it is not a new educational phenomenon. Not to become a mere recorder of facts and to try to penetrate the mystery of CLIL's origin, history of its development should be taken into account. Education in a language which is not the first language of the learner is believed to be as old as education itself. As individuals from different language groups have lived together, some have been educated in an additional language. This is as true of Ancient Rome as it is of the increasingly multilingual societies being created through mobility and globalization in the last century.

Two thousand years ago, provision of an educational curriculum in an additional language happened as the Roman Empire expanded and absorbed Greek territory, language and culture. Families in Rome educated their children in Greek to ensure that they would have access to not only the language, but also the social and professional opportunities it would provide for them in their future lives, including living in Greek-speaking educational communities. This historical experience has been replicated across the world through the centuries, and is now particularly true of the global uptake of English language learning (Coyle, Hood and Marsh, 2010).

Some authors even return to the history of the Acadians around 5,000 years ago. After conquering the Sumerians (the territory of modern Iraq

inhabited), the Acadians started to learn the local Sumerian language by using it as the language of instruction (Pokrivčáková, 2015).

Working towards a cohesive conceptual tool, and influenced by the early work of Mohan and his Knowledge Framework (1989), Coyle (1999) developed the 4Cs Framework. The 4Cs framework for CLIL starts with content (such as subject matter, themes, cross-curricular approaches) and focuses on the interrelationship between content (subject matter), communication (language), cognition (thinking) and culture (awareness of self and 'otherness') to build on the synergies of integrating learning (content and cognition) and language learning (communication and cultures). It unites learning theories, language learning theories and intercultural understanding which are perfectly illustrated in the graphics below introduced by Do Coyle.



Graphics 1. The 4Cs.

<u>Content</u>	<i><u>Integrating content from across the curriculum through quality language interaction</u></i>
<u>Cognition</u>	<i>Engaging learners through higher order thinking and knowledge processing</i>
<u>Communication</u>	<i>Using language to learn and mediate ideas, thoughts and values</i>
<u>Culture</u>	<i>Interpreting and understanding the significance of content and language and their contribution to identity and citizenship</i>

(Coyle, 1999)

- Content- At the heart of the learning process lie successful content or thematic learning and the acquisition of knowledge, skills and understanding. Content is the subject or the project theme.
- Communication- Language is a conduit for communication and for learning. The formula learning to use language and using language to learn is applicable here. Communication goes beyond the grammar system. It involves learners in language using in a way which is different from language learning lessons (CLIL does involve learners in learning language too but in a different way).
- Cognition for CLIL to be effective, it must challenge learners to think and review and engage in higher order thinking skills. CLIL is not about the transfer of knowledge from an expert to a novice. CLIL is about allowing individuals to construct their own understanding and be challenged – whatever their age or ability.
- Culture for our pluricultural and plurilingual world to be celebrated and its potential realized, this demands tolerance and understanding. Studying through a foreign language is fundamental to fostering international understanding. ‘Otherness’ is a vital concept and holds the key for discovering self. Culture can have wide interpretation – i.g. through pluricultural citizenship
(<https://www.sites.google.com/site/bilingeduc/pages-and-groups/principios-metodologicos/the-4cs-teaching-framework>).

CLIL has two variations: soft CLIL and hard CLIL. It is called soft if topics from the curriculum are taught as part of a language course. On the other hand it is called hard, if school teaches partial immersion programmes, where almost half the curriculum is taught in the target language. There is also a mid-way between these models, some schools teach a modular CLIL programme, where a subject such as science or art is taught for a certain number of hours in the target language (https://www.cambridgeenglish.org/Images/22191-tkt-clilhandbook.pdf?fbclid=IwAR1DdCZGVOjSEV4bVVSFxaDQIPsX8YZPke2IvCh1Y7rvqsKW_XZOF20UCCV8).

The use of this methodology in practice helps to identify its advantages, as well as some problems of its implementation in the educational process. One of the main advantages is to increase the motivation to study a foreign language. Getting into the situation of communication in a foreign language, students are unable to show their knowledge in specialised areas such as

construction, pedagogy, medicine, culture, art, etc without the knowledge of a foreign language. So, they do not have the ability to communicate in a professional context.

CLIL is closely connected to the student-centered approaches of task-based and project-based language learning. It promotes the functional use of language putting fluency before accuracy or meaning before form, leads to learner autonomy, cooperation and collaboration, uses authentic material to develop an understanding and reconstruction of a foreign perspective on a particular topic, allows students to attain a sphere of interculturality. Based on curriculum, every subject or subject area is eligible for CLIL, i.e. humanities and social science subjects, natural science subjects, creative subjects (Ellis, 2003). (<https://www.slideshare.net/ssuser9faea5/clil-an-innovative-teaching-practice>)

Table 1

Formats of CLIL

<i>Name</i>	<i>Objectives</i>	<i>Activities</i>	<i>Main people</i>
English-medium education	Teach subjects (science, math, etc) in English	Subject teachers use English in teaching other subjects	Subject teachers
Collaborative CLIL projects	Improve English language skills and learn content in subjects	Subject teacher and English teacher teach a subject together	Subject teacher and language teacher
Content-based ELT	Teach English	English teacher imports subject topics into English lessons	Language teacher

(Clegg, 2009)

Learners are genuinely encouraged to go beyond the fictional contents of foreign language teaching and deal cognitively, consciously and emotionally with any given curriculum subject, promoting optimal learning processes. Traditional classroom settings give way to modern forms of joint learning allowing students to acquire, for example, autonomy through group and

project work. The principles behind Content and Language Integrated Learning include global statements such as “*all teachers are teachers of language*” to the wide-ranging advantages of cross-curricular bilingual teaching in statements from the **Content and Language Integrated Project** (CLIP). The benefits of CLIL may be seen in terms of cultural awareness, internationalization, language competence, preparation for both study and working life, and increased motivation (The Bullock Report, 1975).

The impact of globalization has generated very prominent changes in different areas of social formation and knowledge. The inquiring and imaginative human mind responds to the wonder and awe of nature in various ways. One of the responses has been to observe the physical and biological world carefully, look for any meaningful patterns and relations, make use of new tools to interact with nature. This human endeavor is science. Science is a dynamic, expanding body of knowledge covering ever new domains of experience. Science learning needs the effective use of language. Learning of science can be considered an inevitable part of general education having its unique place in school curriculum, specific instructional objectives which define the organisation of science curriculum.

The early science learning can help learners develop curiosity, appreciation and understanding of the natural world, which are fundamental for learning progression (Eshach & Fried, 2005; Halverson, 2007). As suggested by the International Council for Science (2011) stimulating of science education is fundamental for both the future of science and the ongoing development of our global knowledge society.

Science teachers applying CLIL approach have to know the specific academic language that learners need in order to communicate their knowledge of scientific concepts, processes, functions and purposes. They also need to ask scientific questions, to analyze scientific ideas, to evaluate experimental evidence and to make conclusions and justify them. In order to achieve competence in communicating ideas, teachers should help learners notice key grammatical patterns as well as key content vocabulary (<https://www.cambridgeenglish.org/images/179514-teaching-science-through-english-a-clil-approach.pdf>).

Learning a second language can actually facilitate comprehension because learners have to work harder at understanding and articulating the essence of what is being taught/learned. This forces them to be more precise and organized in their communication. Every subject has its own terminology. A

useful step is to decide what language students absolutely must know (content-obligatory language) to master the content. The language that could be helpful, but is not absolutely necessary (content-compatible language) for learning the subject takes a back seat, although it needs to be accommodated. Content-compatible language comes to the fore as students try to express their own thoughts in relation to the topic under study (Zhanazarova, 2016).

Learners need to produce the academic register of science and they need to know both content-obligatory and content-compatible language. “For every academic topic, certain language is essential for understanding and talking about the material.” (Snow, Met and Genesee, 1992)

The comparison of subject-specific and non-subject specific language is widely believed to make the differential features more vivid.

Content-obligatory language	Content-compatible language
<ul style="list-style-type: none"> ▪ to describe leaves: ‘waxy’; ‘spikes’; ‘cuticle’; ▪ to describe environmental problems: ‘deforestation’; ‘global warming’; ‘(bio)degradable’; ‘the ozone layer’; ‘drought’; ▪ To describe laboratory experiments: ‘test tubes’; ‘goggles’; ‘pestle and mortar’; ‘precipitate’; ‘ethanol’; ‘Benedict’s solution’ ▪ to explain the blood system: ‘valves’; ‘backflow’; ‘(oxy)hemoglobin’; ‘deoxygenated’; ▪ to describe teeth: ‘molars’; ‘incisors’; ‘canines’; ‘dentine’. 	<ul style="list-style-type: none"> ▪ Adjectives or verbs with dependent prepositions: e.g. ‘resistant to’; ‘suffer from’; ‘give off energy’; ‘react to’; ‘immune to’; ‘exposed to’; ‘fight off (disease)’; ▪ phrasal verbs: e.g. ‘to break down (a substance)’; ‘to carry out (a test)’; ‘to set up (an experiment)’; ‘to speed up (photosynthesis/ a reaction)’; ▪ verb-adverb collocations: e.g. ‘increased exponentially’; ‘rises dramatically’; ▪ verb-noun and adjective-noun collocations: e.g. ‘to have an adverse effect on...’

(www.cambridgeassessment.org.uk)

Biology, subject-specific and non-subject specific languages will become the backbone of our experimental study in the further step of our research.


Participants. The participants of this study were comprised of fourteen (14) pupils; three (3) male and eleven (11) female studying in grade 10, in

Gyumri, High School N^o 2 after Vahan Tekeyan. The students age was ranging from 15-16.

Procedure. To carry out the study the participants were assigned into two groups: *control* and *experimental*. At first the students took a Pre-test. The test consisted of seven tasks, some of which were by choices (multi-choice). The reliability of pre-test was assured since it was regarded as a standard test; the items of the test were based on the students' textbook. The time allocated for this test to be done was forty-five (45) minutes. The results of Pre-test were graded for the purpose of further comparison.

Results. After the analysis of these tests the following results were obtained:

Table 2



A post-test was given to the control group and it lasted forty-five (45) minutes. The post-test consisted of seven tasks. To calculate the effectiveness of treatment on the differences between control and experimental groups' reading comprehension the post-tests were scored and analyzed.

Table 3





Table 2. provides information on the results of the pre-test and Table 3 has summarized the results of the post-test.

The results of data analysis demonstrated that there are statistically significant differences in pre- and post-tests of experimental and control groups' performance in CLIL.

The results are tabulated below in Table 4.

Table 4



The present findings confirmed that Content and Language Integrated Learning (CLIL) represents a considerable development step in the field of English teaching. Being an instructional approach that fosters content knowledge through language CLIL involves elaborate planning according to the different contexts. When implementing this approach CLIL teachers should consider some highly important aspects: subject knowledge, language proficiency, communication, motivation and so forth. Learners will be able to access language relating to the context.

Thus, the results of the experimental study provide evidence for the positive outcomes of the implementation of CLIL. It includes enlargement of science-specific vocabulary, interaction between subject teachers and language teachers, as well as a breakthrough in foreign language acquisition. We can deduce that CLIL unites learning theories, language learning theories and intercultural understanding. This aspect of research suggested that the approach prioritized the ability to communicate in a foreign language in a professional context and the attainment of sphere of interculturality.

**ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՍՔՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ
ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Ալեքսանյան Ն. Ս.**

Սույն հոդվածում անդրադառնում ենք «CLIL»-ի ներդրման արդյունավետությանը Հայաստանի ավագ դպրոցների բնագիտական

հոսքում՝ մասնավորապես «կենսաբանություն» առարկայի շրջանակներում: Քանի որ ժամանակակից կրթական հրամայականները կանխորոշում են լեզվի խթանման մեթոդաբանությունների վերաիմաստավորումը, «CLIL» մոտեցումը լուսաբանում է ուսուցման և ուսումնառության գործընթացների հիմնական խնդիրները:

Մի կողմից, լինելով խիստ փոխկապակցված և հայեցակարգված շարունակականության մեջ, լեզուն և բովանդակությունը դասավանդվում են այնպես, որ խթան հանդիսանան սովորողների համար առնչվելու ցանկացած առարկայի հետ ճանաչողական, գիտակցական և զգայական մակարդակներում: Իսկ մեկ այլ կողմից՝ «CLIL»-ի ներդրումը բազմանպատակ գործընթաց է, որը այս մոտեցման հիմնական բարդությունները դարձնում է բավականաչափ ակներև:

Առավել արժանահավատ տվյալներ ստանալու նպատակով գիտափորձ է անցակացվել առաջընթացը ստուգող թեստի տեսքով: Ստացված տվյալները երևան բերեցին հետևյալ արդյունքները. սույն մոտեցման կիրառումը նպաստում է հատուկ գիտական բառապաշարի հարստացմանը, առարկայի ուսուցիչների և լեզվի ուսուցիչների միջև կապի ամրապնդմանը, հասակակիցների միջև համատեղ աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և այլն:

Բանալի բառեր. լեզվի և բովանդակության ինտեգրված ուսուցում, բնագիտական հոսք, լեզուն խթանող մեթոդաբանություններ, բազմանպատակ գործընթաց, առաջընթացը ստուգող թեստ և այլն:

ОБ ЭФФЕКТИВНОСТИ ПРЕДМЕТНО-ЯЗЫКОВОГО ИНТЕГРИРОВАННОГО ОБУЧЕНИЯ В КЛАССАХ ЕСТЕСТВОЗНАНИЯ Александян Н. С.

В статье рассматривается эффективность внедрения CLIL на уроках естественных наук в средних школах Армении, в частности, при обучении биологии. Поскольку современные образовательные задачи преподают возрождение методологий языковым стимулом, подход CLIL проливает свет на основные вопросы процесса преподавания и обучения.

С одной стороны, будучи тесно взаимосвязанными и концептуализированными в приемственности, язык и содержание преподаются учащимся так, что становятся стимулом в соприкосновении с любым предметом на познавательном, сознательном и эмоциональном уровнях, в частности, с биологией. С другой стороны, внедрение CLIL

оказывается многоцелевым процессом, который делает основные проблемы подхода достаточно очевидными.

Для получения более достоверных данных был проведен эксперимент в виде прогресс-теста. В результате были сделаны следующие выводы; применение подхода способствует расширению словарного запаса по конкретным наукам, взаимодействию между учителями-предметниками и учителями иностранных языков, эффективной совместной работе сверстников и т. д.

Ключевые слова: предметно-языковое интегрированное обучение, уроки естественных наук, методологии поддержки языка, многоцелевой процесс, прогресс-тесты т.д.

REFERENCES

1. Bentley, K. The TKT Course: CLIL module. Cambridge, U.K.: Cambridge University Press, 2010, 124 p.
2. Clegg J. Education through a Second Language: Conditions for Success in CLIL Conference Proceedings 2008, Norwich: Norwich Institute for Language Education, 2009, 216 p.
3. Coyle Do., Theory and Planning for Effective Classrooms; Supporting Students in Content and Language Integrated Learning Contexts' in Marsh, J (ed): Learning Through a Foreign Language London: CILT, 1999, 138 p.
4. Coyle Do., Hood P., Marsh D., CLIL: Content and Language Integrated Learning, Cambridge: Cambridge University Press, 2010, 169 p.
5. Ellis. R., Task-based Language Learning and teaching. Oxford: Oxford University Press, 2003, 108 p.
6. Eshach, H., & Fried, M. N. Should Science be Taught in Early Childhood? Journal of Science Education and Technology 14(3), 2005, 76-85 p.
7. Halverson. K., Why Teach Science in Early Childhood? Viewed 21 September 2013, from <http://wenku.baidu.com/view/b2449c78a26925c52dc5bf04.html>., 2007.
8. Kovacs J. CLIL – Early Competence in Two Languages // The World at their Feet: Children's Early Competence in Two Languages through Education. Budapest: Eötvös József Könyvkiadó, 2014, 248 p.
9. Marsh D., CLIL/EMILE- The European Dimension, University of Jyväskylä, Finland, 2002, 210 p.

10. Mehisto P., Marsh D. Frigols M.J., Uncovering CLIL: Content and Language Integrated Learning in bilingual and multilingual education. Oxford: Macmillan, 2008, 147 p.
11. Pokrivčáková S. et al. CLIL in Foreign Language Education: E-Textbook for Foreign Language Teachers. Nitra: Constantine the Philosopher University, 2015, 75 p.
12. Snow M., Met M. And Genesee F., A Conceptual Framework for the Integration of Language and Content Instruction, London: Longman, 1992, 285 p.
13. The Bullock Report, A Language for Life, London: Her Majesty's Stationary Office, 1975.
14. Zhanazarova Zh., K. CLIL (Content and Language Integrated Learning) Technologies in the Process of Foreign Language Acquisition in Senior Classes" Kazakhstan, Kzyl-orða district, Kazaly region, school N204 named after Y. Altynsarin, 2016, 258 p.

Internet sources

1. https://www.cambridgeenglish.org/Images/22191-tkt-clilhandbook.pdf?fbclid=IwAR1DdCZGVOjSEV4bVSFxaDQIPsX8YZPke2IvChlY7rvqsKW_XZOF20UCCV8
2. <https://www.slideshare.net/ssuser9faea5/clil-an-innovative-teaching-practice>
3. <https://www.cambridgeenglish.org/images/179514-teaching-science-through-english-a-clil-approach.pdf>
4. www.cambridgeassessment.org.uk
5. <https://www.sites.google.com/site/bilingeduc/pages-and-groups/principios-metodologicos/the-4cs-teaching-framework>

Information about the author and scientific supervisor

Aleksanyan N. S.- 1th year Master

SUSh, Faculty of Humanities, English Language and Literature

E-mail: nelaleksanyan3@gmail.com

Scientific Supervisor: Hovhannisyán A., Doctor in Philology, Professor

Received on 24.10.2022

Reviewed on 20.12.2022

ТЕСТИРОВАНИЕ ПО РУССКОЙ ЛИТЕРАТУРЕ КАК ФОРМА ОПРОСА И КОНТРОЛЯ ЗНАНИЙ УЧАЩИХСЯ СТАРШИХ КЛАССОВ

Оганнисян М. А.

В статье рассмотрены теоретические основы тестирования, и описаны результаты экспериментального исследования разработанных нами тестов на разных этапах педагогического контроля на уроках русской литературы в старших классах армянской школы. На основе проведенного SWOT-анализа сформулированы сильные и слабые стороны тестов, представлены возможности и выявлены риски, с которыми сталкиваются как учителя, так и ученики при тестировании.

Ключевые слова: педагогический тест, опрос, контроль знаний, критерии качества, онлайн тестирование.

Одним из важнейших элементов образовательного процесса являются формы опроса и контроля знаний учащихся. Успех в обучении во многом зависит от того, в какой степени качество знаний учащихся находится в поле зрения преподавателя и какое внимание уделяется профилактике ошибок. От правильной организации контроля во многом зависит качество обучения.

Актуальность темы обосновывается необходимостью использования тестирования в современной образовательной системе за рубежом, которое в рамках модернизации учебного процесса довольно высокими темпами развивается в Армении.

Целью статьи является изучение в теоретическом и экспериментальном аспектах тестирования как формы опроса и контроля знаний учащихся на уроках русской литературы в старших классах армянской школы.

Методологической основой исследования послужили научные труды, монографии, учебные пособия, статьи Аванесова В. С., Майорова А. Н., Кима В. С., Ефремовой Н. Ф., Опаринной Н. М., Павловской И. Ю., Звонникова В. И., Чельшковой М. Б., Асямова С. В., Нерсисяна Г. Г., Тамирогян К. М.

В настоящее время невозможно представить современный образовательный процесс без тестирования. Оно является важнейшим

средством установления обратной связи, благодаря которому обучение в полном смысле слова превращается в дифференцированный, личностно-ориентированный процесс, обеспечивающий индивидуальный темп обучения, устранение субъективизма и авторитаризма в оценке уровня учебных достижений учащихся, средством объективизации экспертизы качества образовательного процесса и его индивидуализации.

Для глубинного, всестороннего изучения роли и влияния тестирования на современный образовательный процесс, а также для понимания структуры, достоинств и недостатков современных тестов необходимо обратиться к истории возникновения тестирования.

К истории тестов в своих работах обращаются Аванесов В. С., Ким В. С., Анастаси А., Майоров А. Н., Кадневский В. М., Звонников В. И., Чельшкова М. Б., Равен Дж., Нейман Ю. М., Хлебников В. А. и другие исследователи.

Исследование истории и времени возникновения тестов показывает, что среди тестологов принято в генезисе тестирования выделять два этапа: донаучный (от первых государств) и научный (XIX в.). Создание научно обоснованных тестов связано с именами Гальтона Ф., Кеттелла Дж., Бине А., Симона Т., Торндайка Э., В. М. Макколла.

В Армении тестирование стало использоваться сравнительно недавно, к вопросу тестирования как формы контроля в своих работах обращаются Нерсисян Г. Г., Тамирогян К. М., Штоян Р. Б., тест является формой проведения Единого государственного экзамена (ЕГЭ). В работах Нерсисян Г. Г., Тамирогян К. М. отмечаются преимущества тестов по сравнению с традиционными методами, это, во-первых, объективность тестового контроля, во-вторых, качественность и надежность полученной о знаниях учащихся информации.

Одним из важнейших этапов работы в обучении, как отмечает Нерсисян Г. Г., «являются формы и виды контроля, используемые на уроках» [6]. Как отмечает Павловская И. Ю., «при осуществлении контроля учитывают критерии, позволяющие судить о практическом владении различными видами речевой деятельности. Эти критерии варьируются в зависимости от уровня владения иностранным языком и от учебного учреждения» [13].

Программа по русской литературе для старшей общеобразовательной школы РА направлена: «на формирование нравственно-этических качеств; коммуникативных умений; умений

логически мыслить и осмысливать прочитанное с точки зрения современного восприятия действительности» [1].

Любой контроль прежде всего должен быть целенаправленным и объективным, должен поддаваться недвусмысленному измерению. Иначе говоря, контроль должен содержать в себе основные принципы: валидность, объективность, надежность. Данные принципы являются также основными критериями качества педагогических тестов, и при их соблюдении можно получить объективную, точную оценку знаний учащихся.

Существует много определений педагогического теста, и, в результате рассмотрения различных определений теста мы склоняемся к выводу, что приемлемым может оказаться следующее определение Кима В. С., основанное на работах Аванесова В. С. и Майорова А. Н.: «Педагогический тест - это система тестовых заданий различной трудности, которая позволяет качественно и эффективно измерить уровень и структуру подготовленности испытуемых» [10].

Как отмечает Шадрин Е. Л., «составление тестов требует тщательной подготовки. Тест очень чувствителен к качеству задания, к совершенству методики и организации, требует высокого уровня литературной, научной, и технической грамотности составителя задания» [14].

Аванесов В. С., Майоров А. Н., Шеретов С. Г., Михайлычев Е. А., Ким В. С., Ефремова Н. Ф. основными критериями качества тестирования называют надежность и валидность педагогических тестов. Асямов С. В., наряду с надежностью и валидностью тестов, выделяет и третий критерий качества – объективность.

Анализ критериев качества педагогического тестирования позволяет отметить, что все критерии качества тестов взаимосвязаны, и только при соблюдении всех их требований можно получить объективную оценку знаний учащихся.

Как отмечает Ким В. С., «формы заданий в тестовой форме могут быть весьма разнообразными» [10]. Классификация видов тестовых заданий подробно описана в работах Аванесова В. С., Майорова А. Н., Кима В. С., Павловской И. Ю., Асямова С. В.; многие исследователи, такие, как Опарина Н. М., Краснов Ю. Э., Звонников В. И., Пучков Н. П., опираются на предложенную Аванесовым В. С. и Майоровым А. Н. классификацию.

Представим проанализированную нами информацию о тестах и тестовых заданиях с помощью метода SWOT-анализ.

Таблица 1.

SWOT-анализ тестов и тестовых заданий.

<p style="text-align: center;">Сильные стороны</p> <ul style="list-style-type: none"> • объективность, • точность, • быстрота получения результата, • одинаковость условий для всех испытуемых, • четкость оценивания ответов, • повышение мотивации обучения и заинтересованности учащихся, • улучшение психологической атмосферы учебного процесса 	<p style="text-align: center;">Слабые стороны</p> <ul style="list-style-type: none"> • сложность разработки качественных тестов, • проблема угадывания и случайности, • невозможность в полной мере раскрыть творческие способности учеников, • возможность запоминания неправильного ответа
<p style="text-align: center;">Возможности</p> <ul style="list-style-type: none"> • устранение субъективизма и авторитаризма при оценивании, • развитие алгоритмического мышления и структурных знаний, • выявление, где именно учащиеся имеют пробелы в знаниях, • проведение теста в одинаковых, равных для всех условиях, • составление инструкции к тесту, что позволяет ученикам понимать: во-первых, как выполнять то или иное тестовое задание; во-вторых, по каким критериям и как они оцениваются 	<p style="text-align: center;">Риски</p> <ul style="list-style-type: none"> • если тест составлен неправильно, возрастает вероятность угадывания, • при нарушении условий проведения тестирования возможно списывание, • невозможность полностью исключить вероятность случайности; • при применении тестовых заданий исключительно закрытой формы ученики лишаются возможности самостоятельно изложить мысль, проявить индивидуальность, творчество

Из представленного анализа можно сделать вывод, что тестирование, помимо ряда значительных преимуществ, имеет и свои недостатки, как и другие формы опроса и контроля знаний. Однако мы можем устранить большинство недостатков тестирования, соблюдая правила составления тестов, выбирая тесты комбинированной формы, чередуя различные типы тестовых заданий, а также сочетая тесты с другими формами опроса и контроля знаний.

XXI век внес существенные изменения в образовательную сферу, а в связи с событиями последних лет возросла роль дистанционного

обучения и, следовательно, применения современных технологий в образовании. В этом отношении исключительное значение приобретает онлайн тестирование как форма опроса и контроля знаний учащихся.

Таблица 2.

SWOT-анализ онлайн тестирования.

<p>Сильные стороны</p> <ul style="list-style-type: none"> • получение беспристрастной оценки; • экономия времени преподавателя на оценку результатов тестирования; повышение мотивации и заинтересованности учащихся 	<p>Слабые стороны</p> <ul style="list-style-type: none"> • недостаточный уровень владения навыками работы с компьютером как у обучающихся, так и у учителей, что может привести к негативной эмоциональной и психологической реакции; проблема списывания при несоблюдении правил проведения онлайн тестирования
<p>Возможности</p> <ul style="list-style-type: none"> • возможность незамедлительно выдать тестовый балл и принять неотложные меры по коррекции усвоения нового материала на основе анализа полученных результатов, • возможность включить в тестовые задания аудио- и видеофайлы, • возможность использования онлайн тестов на этапе текущего контроля как способа выявления и устранения пробелов 	<p>Риски</p> <ul style="list-style-type: none"> • возникновение проблемы со временем выполнения заданий и невозможностью вернуться к предыдущему заданию, • применение в качестве формы контроля исключительно онлайн тестов приводит к снижению возможности адекватно и объективно оценить знания учеников

Представленный анализ позволяет сделать вывод, что онлайн тестирование имеет ряд преимуществ по сравнению с традиционным тестированием, однако, как и традиционные тесты, оно имеет свои недостатки, связанные как с той или иной формой тестового задания, так и с некоторыми техническими вопросами. При создании онлайн теста требуются не только теоретические знания в составлении тестов, но и

определенные навыки работы с компьютерными технологиями для обеспечения положительной психологической и эмоциональной реакции учеников.

Опираясь на научные труды и учебные пособия Аванесова В. С., Майорова А. Н., Ефремовой Н. Ф., Асямова С. В., Кима В. С., на статьи Нерсисян Г. Г., Тамирогян К. М. и на учебники для старшей школы, представим составленный и апробированный нами во время педагогической практики тест для проверки знаний учащихся на этапе текущего контроля, тест на аудирование, а также составленные по тем же принципам несколько вариантов тестов, которые, на наш взгляд, можно будет применить на уроках русской литературы при текущем и итоговом контроле знаний учащихся.

Апробация проводилась во время педагогической практики в старшей школе ШГУ в 10А классе с гуманитарным уклоном.

Для проверки знаний учащихся на этапе текущего контроля по теме «Поэзия М. Ю. Лермонтова» нами разработан следующий тест; по форме тест является комбинированным: состоит из различных форм тестовых заданий. Выбор такой формы теста служит, во-первых, для устранения тех или иных недостатков тестовых заданий, отмеченных нами выше; во-вторых, использование различных форм тестовых заданий позволяет наиболее объективно оценить знания учащихся и проанализировать, где именно ученик имеет пробелы в знаниях. Задания расположены по принципу возрастающей трудности. На решение теста отводится 15 минут.

В составленном нами тесте задания под номером 1, 2, 7 служат для проверки теоретических знаний учащихся. Данные задания составлены по принципам, рассмотренным нами при анализе методической литературы, во избежание таких недостатков тестовых заданий закрытой формы, как угадывание правильного ответа, использование метода исключения и других подобных искажений.

Задание №3 является заданием открытой формы и требует от учащегося краткого изложения своей мысли. Задание этой формы служит для полного исключения вероятности угадывания правильного ответа и для повышения качества педагогического измерения.

Задание №4 служит для проверки знания стихотворения учащимися. Оно является заданием на установление правильной последовательности и способствует развитию у учащихся структурных знаний.

Задания №5, №6 требуют от учащихся установления соответствия между двумя столбцами. Мы предлагаем использование заданий такой формы для улучшения понимания учащимися взаимосвязей изучаемых явлений, кроме этого, задания такой формы повышают интерес учащихся к более внимательному прочтению текста стихотворения.

Оценивание теста будет проводиться по тем принципам, которые были рассмотрены и проанализированы нами при составлении тестов. Все тесты оцениваются в 10 баллов.

Тестовую работу написали 11 учеников, из которых все получили положительную оценку:

Результаты учеников




Рисунок 1. Оценки учеников по тесту для текущего контроля знаний.

Результаты теста отражают объективную оценку учащихся, не занижая и не повышая ее. Кроме того, именно тестирование дает возможность проанализировать, где именно ученик имеет пробелы в знаниях, что дает возможность скорректировать знания учащихся, готовя их к итоговому контролю.

Являясь относительно новой формой контроля, тестирование пробуждает в учащихся интерес, повышает мотивацию к изучению, в чем мы убедились в ходе педагогического эксперимента. Таким образом, ученикам нравится работать с тестами, поскольку они у них не вызывают чувства тревоги, даже у не очень активных учащихся.

Еще одним положительным качеством тестирования является объективность, которая проявляется в оценивании тестов: при выполнении теста учащиеся понимают, как оцениваются задания, имея

четкие измерительные критерии, а после проверки теста каждый из учащихся имеет возможность просмотреть свою работу и, таким образом, полностью понять критерии оценивания своей работы. В этом отношении решаются серьезные педагогические проблемы: субъективность оценки, отсутствие четких измерительных критериев оценки.

Опишем также составленный и апробированный нами тест на аудирование, предложенный Тамирогян К. М., по русской литературе по теме «О романе «Герой нашего времени». Тест на аудирование проводится в три этапа:

I. Предтекстовой. До прослушивания преподаватель рассказывает содержание текста, записывает на доске слова и словосочетания наиболее сложные для понимания: «вянут без борьбы», личность незаурядная, «стал наслаждаться бешено всеми удовольствиями» жизни, был на голову выше, мелочных интриганов, «силы богатырские», в развращённом праздностью обществе, психологический роман; «Бэла», «Максим Максимыч», «Тамань», «Княжна Мери», «Фаталист» (главы выписать отдельно для лучшего запоминания), скука завладела им.

II. Текстовой. Учащиеся слушают текст (О романе „Герой нашего времени” [5]).

III. Послетекстовой. Здесь можно предложить различные задания: перечислить основные факты, составить сжатый пересказ и т.д. Можно также предложить и провести тест в вопросно-ответной форме: все вопросы должны быть открытыми. Ученики могут пользоваться также записанными на доске словами, при необходимости можно записать и другие опорные слова.

Таким образом, после проведения подобной работы в классе, можно отметить, что использование тестов на аудирование способствует реализации основной цели изучения русского языка и литературы в армянской школе: обучению русскоязычному общению, предполагающим овладение русским языком как средством общения. Подобные тесты повышают мотивацию к изучению русского языка, так как делают процесс обучения более творческим и интересным.

Для закрепления результатов данного теста нами предлагается составление интеллект-карты по уже обсужденным вопросам и опорным словам, записанным на доске. Такое сочетание теста с интеллект-картой способствует лучшему усвоению и запоминанию материала.

Опираясь на указанные нами выше научные труды, а также на работы Корякиной А. Н., Гданского Н. И., на учебник Грдзелян Р. Р., Мхитарян К. М., Тер-Аракелян Р. А. «Русский язык 10: Учебник для 10-го класса старшей школы», представим составленный нами онлайн тест, который также можно будет применить на уроках русской литературы.

Тест составлен на основе описанного нами выше теста по лирике Лермонтова. Представим, какие задания претерпели изменения:

а) задание №2 стало заданием открытого типа;

б) задание №3 может быть представлено двумя вариантами в зависимости от того, когда проводится тестирование: в урочное или внеурочное время. При проведении тестирования во время урока данное задание остается заданием открытого типа, а при проведении тестирования во внеурочное время от учеников требуется ответить на вопрос в виде аудиозаписи, что способствует также развитию речи учащихся.

Составленный нами онлайн тест можно найти, перейдя по следующей ссылке: <https://onlinetestpad.com/sflajvx57c4xg>.

Заключение. В соответствии с программой по русскому языку для старших классов армянской школы нами было составлено 9 тестов для проведения текущего и итогового контроля и один онлайн тест, позволяющий проведение его в двух вариантах. При составлении тестов мы пришли к выводу, что тесты комбинированной формы позволяют наиболее объективно оценить знания учащихся и проанализировать, где именно ученик имеет пробелы в знаниях, проверить знание деталей произведения, фактов, его основной идеи, а также использование тестовых заданий определенной формы способствует пониманию взаимосвязей изучаемых явлений и повышению интереса учащихся к более внимательному прочтению произведения. Тесты комбинированной формы позволяют устранить такие недостатки тестовых заданий, как угадывание правильного ответа, использование метода исключения и другие подобные искажения.

Проведенное во время педагогической практики экспериментальное исследование тестирования как формы опроса и контроля знаний на уроках русской литературы в старших классах армянской школы показало, что, являясь относительно новой формой контроля, тестирование пробуждает в учащихся интерес, повышает мотивацию к изучению,

ученикам нравится работать с тестами, поскольку они у них не вызывают чувства тревоги, даже у не очень активных учащихся.

Следовательно, тесты являются наиболее объективной, надежной и качественной формой опроса и контроля знаний учащихся, позволяющей диагностировать те или иные пробелы в знаниях учащихся и вовремя устранять их. А грамотное сочетание тестов с другими формами опроса и контроля знаний позволяет решить большинство педагогических задач.

**ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՎԱԳ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՍՏՈՒԳՄԱՆ ՁԵՎ
Հովհաննիսյան Մ. Ա.**

Հոդվածում ուսումնասիրվում են թեստավորման տեսական հիմքերը և նկարագրվում են հայկական դպրոցի ավագ դասարաններում ռուս գրականության դասերի մանկավարժական վերահսկողության տարբեր փուլերում մեր մշակած թեստերի փորձարարական ուսումնասիրության արդյունքները: SWOT վերլուծության հիման վրա ձևակերպվում են թեստերի ուժեղ և թույլ կողմերը, ներկայացվում են հնարավորությունները, և բացահայտվում են այն ռիսկերը, որոնց բախվում են ինչպես ուսուցիչները, այնպես էլ ուսանողները թեստավորման ընթացքում:

Բանալի բառեր. մանկավարժական թեստ, հարցում, գիտելիքների վերահսկում, որակի չափանիշներ, օնլայն թեստավորում:

**RUSSIAN LITERATURE TESTING AS A WAY OF MONITORING THE
KNOWLEDGE OF HIGH SCHOOL STUDENTS**

Hovhannisyan M. A.

The article discusses the theoretical foundations of testing, and describes the results of an experimental study of the tests we developed at different stages of pedagogical control during the lessons of Russian literature in the senior classes of the Armenian school. Based on the conducted SWOT analysis, the strong and weak points of the tests are formulated, the opportunities are presented and the risks faced by both teachers and students during testing are identified.

Keywords: pedagogical test, survey, knowledge control, quality criteria, online testing.

ЛИТЕРАТУРА

1. «Բնուսաց լեզու» արարկայի ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, «Մրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ, 2009: Էջ 134:
2. Аванесов В. С. Тесты в социологическом исследовании. М.: Наука, 1982. С. 199.
3. Анастаси А., Урбина С. Психологическое тестирование: 7-е изд. СПб.: Питер, 2007. С. 688.
4. Асямов С. В. Педагогическое тестирование в системе оценки знаний слушателей: уч. пособие. Ташкент: Академия МВД Республики Узбекистан, 2006. С. 43.
5. Грдзелян Р., Мхитарян К., Тер-Аракелян Р. Русский язык 10: учебник для 10-го класса старшей школы (հոսիանիսիւսը հոսը). Ереван: МАНМАР. 2011. С. 208
6. Есаджанян Б. М. Русский язык в Армении. Ереван: «Национальный институт образования». 2014. С. 64.
7. Ефремова Н. Ф. Тестовый контроль в образовании: уч. пособие. М.: Логос, 2007. С. 368.
8. Звонников В. И., Чельшкова М. Б. Современные средства оценивания результатов обучения: учеб. пособие для студ. высш. учеб. заведений. М.: Изд. центр «Академия», 2007. С. 224.
9. Кадневский В. М. Генезис тестирования в истории отечественного образования. Ек.: Изд. ОмГУ, 2007. С. 43.
10. Ким В. С. Тестирование учебных достижений: монография. Уссурийск: Изд. УГПИ. 2007. С. 214.
11. Майоров А. Н. Основы теории и практики разработки тестов для оценки знаний школьников: лекции 1–4. М.: Пед. университет «Первое сентября», 2010. С. 128.
12. Опарина Н. М., Полина Г. Н., Файзулин Р. М., Шрамкова И. Г. Адаптивное тестирование: учеб.-метод. Пособие. Хабаровск: Изд-во ДВГУПС, 2007. С. 95.
13. Павловская И. Ю., Башмакова Н. И. Основы методологии обучения иностранным языкам: Тестология: изд. 2-ое, исправленное и дополненное. СПб.: Филологический факультет СПбГУ. 2007. С. 194.

14. Шадрина Е. Л. Методические рекомендации по формированию тестовых заданий. Воронеж: ФГОУ СПО ВГКПТЭиС. 2008. С. 74.

Сведения об авторе и научном руководителе

Оганисян М. А. - магистратура 1-ый курс

ШГУ, Факультет гуманитарных наук, Русский язык и литература

Эл. почта: badoyan2030@gmail.com

Научный руководитель: Мовисян С.

Поступила 30.11.2022

Прошла рецензию 13.12.2022

THE TRANSLATION PECULIARITIES OF CULTURAL HUMOR IN THE ARMENIAN MOVIE “MERRY BUS”

Grigoryan G. K.

The article probes into the translation characteristics of cultural humor and the ways of rendering humor into the target language through various translation strategies. An Armenian post-Soviet movie “Merry Bus” was selected to provide insight into the transfer of Armenian humor to English. The study is based on a comparative method that aims at elucidating the distinction between the original movie script and the translated movie script, pointing out the potential cultural and linguistic challenges that the translator may encounter and highlighting the translator’s various translation strategies. As a result of the study, it can be stated that despite a number of deviations from the original script, the translator, in several cases, was able to find options best suited to the humorous context while preserving both the meaning and the humorous effect of the utterance. However, the translation suffered an overt and partial loss of humor, given the fact that some parts of the original script were simply not translated. Moreover, the translator, on several occasions, was not particular about the implicit meanings of some utterances and failed to go deeper, consequently providing a word-for-word translation.

Keywords: cultural humor, translation strategy, humorous context, linguistic and visual means, comedic effect.

Humor is an indispensable part of human life. Throughout history, humor has been the focus of interest for numerous thinkers from Plato, Aristotle, and Cicero to Freud, who have sought to unravel the mystery around this immensely unique phenomenon and get an understanding of its inherent properties and what role it plays in social interaction.

“Humor” is a broad term. There is no unanimous definition. *The Oxford English Dictionary* defines *humor* as the “quality of action, speech, or writing which excites amusement.” Humor is “the faculty of perceiving what is ludicrous or amusing, or of expressing it in speech, writing, or other composition; jocose imagination or treatment of a subject” [4]. According to Eric D. Olson [3], *humor* is “an involuntary state of mental amusement that comes about via observation of action, speech, writing, or introspection. Humor is not a voluntary process; people do not choose what they find to be

funny in the vast majority of cases.” Another view on humor is proposed by Thomas C. Veatch [5] who postulates that “humor is a psychological state which tends to produce laughter.” According to him, humor occurs when it seems that “things are normal (N) while at the same time something seems wrong (V). Or, in an only apparent paradox, Humor is (emotional) pain (V) that does not hurt (N).”

Humor has numerous ways of expression conveyed through different means and purposes. We encounter a daily dose of humor in the form of books, sitcoms, stand-up comedy, comedy films, advertisements, etc. R. Martin [2] divides humor according to our everyday social interaction into three broad categories: (1) jokes, which are prepackaged humorous anecdotes that people memorize and pass on to one another; (2) spontaneous conversational humor, which is created intentionally by individuals during the course of social interaction and can be either verbal or nonverbal; and (3) accidental or unintentional humor.

Different aspects of humor have undergone analysis, sprouting various classification methods. From a psychological perspective, Martin [2] divides the humor process into four essential components: (1) a social context, (2) a cognitive-perceptual process, (3) an emotional response, and (4) the vocal-behavioral expression of laughter. He indicates that “although humor has a biological basis rooted in our genes, it is also evident that cultural norms and learning play an important role in determining how it is used in social interactions, and what topics are considered appropriate for it.”

This psychological aspect of humor can also be found in Freud’s theories. He views humor as the “highest of the defense mechanisms” in one’s armamentarium. To him, humor is very beneficial:

“Like wit and comic, humor has in it a liberating element. But it has also something fine and elevating, which is lacking in the other two ways of deriving pleasure of the intellectual activity. Obviously, what is fine about it is the triumph of narcissism, the ego’s victorious assertion of its own invulnerability. It refuses to be hurt by the arrows of reality or to be compelled to suffer. It insists that it is impervious to wounds dealt by the outside world, in fact, that these are merely occasions for affording it pleasure” [Freud, 1928, as cited in 2].

Being an essential part of human nature, humor is highly influenced by cultural norms, belief systems, values, and attitudes. Cultural differences play a salient role in humor perception and usage. Humor perception and usage may

be different even in various regions of the same country. Local patterned humor in a local area is, in particular, unique and reflects the beliefs and values of the people. Local humor is a gateway to a country's culture. To tap into that world, one needs to create a bridge. Unsurprisingly, the main purpose of a translator is to serve as a bridge between two cultures, and it goes without saying that translating cultural humor is one of the most arduous tasks to be performed by translators. The fact that cultural humor abounds in culture-bound items, idioms, and proverbs creates multiple problematic challenges for the translator. Apart from the knowledge of the language, it is a necessity for a translator to have high cultural awareness and background information — that is, to have a good understanding of the cultural norms, customs, and beliefs of the people speaking the language. In other words, translators should create and use strategies to render the humor of a source culture in a way that maintains its natural humorous effect and is understandable in the target culture.

With the rise of the film industry, new challenges were created for translators as in films humor is expressed not only on a linguistic level but on a visual level as well. Several aspects related to cultural humor translation must be factored in: (1) sociolects, which are the forms of a language that people in a particular social group speak; (2) dialects, which are related to certain regions; (3) accents and pronunciation, which require special experience from the translators to deal with them; (4) idiolect, which is the speech habits peculiar to a particular person.

To overcome the challenges mentioned above, translators should apply various translation strategies, the most applicable of which are proposed by Vinay and Darbelnet [6]. The seven basic procedures, namely *borrowing, calque, equivalence, adaptation, modulation, transposition, and literal translation* proposed by Vinay and Darbelnet are complemented by special translation procedures, i.e., *generalization, concentration, and compensation*, which are based on Molina and Hurtado Albir [1].

An Armenian 2001 tragicomedy film “*Merry Bus*” was selected in quest of providing insight into the rendering of humor, characteristic of Armenia's second-largest city, Gyumri (Leninakan during the Soviet Union), also referred to as Armenia's Gabrovo¹. It is noteworthy that the film is written in the Karin dialect. The Karin dialect is chiefly spoken in the cities of Gyumri, and Artik,

¹ The city of Gabrovo situated in north-central Bulgaria is well known for the unique sense of humor.

all in Shirak Province. Thus, the process of translation is full of extra cultural challenges, so the translator needs to have a high cultural background to understand and convey the film's cultural realia and the implicit meanings of its utterances.

The film depicts the events shortly after the ruinous earthquake of 1988, which reduced several Armenian northeastern towns to ruins like Leninakan, taking away thousands of lives. This unprecedented tragedy had ineradicable effects on the lives of many of the survivors, including the lives of the main characters. Ironically, the “passengers” of *the Merry Bus* are a bunch of sad people who use humor as a weapon, “a defense mechanism” against the “arrows of reality.” The film is about an orphaned teenage boy and his teacher, a middle-aged woman, who, as a result of the earthquake, has lost her relatives and beloved ones. The boy has a firm purpose to have a family again. He constantly stalks his teacher and asks her to adopt him. In the meanwhile, he is a proponent of the nuclear family. This strong belief is inculcated in him by his late father. So he is in a constant search for a man who can be “a prime candidate” to be his father and a husband for his future mother-teacher. There is not only a myriad of cultural humor and irony in the film but also culture-bound items, idioms, puns, proverbs, and expressions specific to the people of that region.

Table 1

<i>Armenian</i>	<i>English Translation</i>	<i>Suggested Translation</i>
-Ախր դու հ'ընգեր Սատենիզին լավ չէս ճանչընա: Հ'ընգեր Սատենիզը ու՛ր, յէս ու՛ր: Հ'ընգեր Սատենիզը բարոյական կին է: Ախր մեր հարաբերությունները քուր ու ախարոյ հարաբերություն էն: 1:32:02-1:32:13	-You don't know her. She's an energetic woman and very decent at that... We're like sister and brother.	-You don't know her well. She's totally out of my league. She's a decent woman. We're like brother and sister.

The polylogue occurs among three characters: Ghazaros, an aged man, who is on his deathbed and is living the last hours of his life; Garnik, his son; and Comrade Satenik, a teacher, who has adopted a child and has no willingness to tie the knot for the second time. The old man convinces his son to propose to her. In the eyes of the viewers, Ghazaros is depicted as an overprotective father whose only misgiving is that his only son will be soon

bereaved. He considers his son too innocent, gentle, and naïve to live in this world. He takes the initiative to arrange a marriage for him. Satenik’s reaction to their unsolicited visitation is resentment as she has not overcome the loss of the beloved despite the fact that she does not accept it publicly. Upon realizing the futility of their visitation, Garnik says to his father: “*Հ’ընզէր Սասնէհար ու՛ր, յէս՛ ուր,*” which is translated into English as “*She is an energetic woman,*” which may be implicitly implied, given her character. However, this option does not transmit the character’s intentions and the meaning of the colloquial expression and, thus, alters the contextual meaning of the passage. Presumably, he meant that “she is out of his league” as their differences go far beyond a personality trait. First and foremost, they have different educational backgrounds, which shape different worldviews. Instead of revealing the gaps between them, he prefers to insinuate that on account of these differences their relationship cannot be taken to the next level. He construes their relationship as platonic by avoiding Satenik’s rejection. Though the proposed option of “She is an energetic woman” sounds more like a non sequitur, which imparts a comedic effect to the utterance, “she’s totally out of my league” is more expedient in this context. The latter not only maintains the meaning of the cultural humor but also retains the humorous effect. The punch line is the honesty of the character. As a rule of thumb, people tend not to be frank when it comes to telling their love interest’s face that they are better than them. In this extracted example, the translator applied a free translation method delivering an option that is neither grammatically nor semantically connected with the original. The translator translated the utterance based on his/her interpretation. In the suggested version, we translated the colloquial expression through an **adaptation** method by replacing the cultural reference with another expression accepted and recognized in the target language.

Table 2

<i>Armenian</i>	<i>English Translation</i>	<i>Suggested Version</i>
-Վօրփ կը մնա էս տղէն: Մէնազ մնաց՝ հոսմ-հոսմ կուղէն: Ախր գառի պէս էրէխս է Գառնիզ: 1:32:30-1:32:38	-And you will become bereaved. When he is alone, it’ll be end of him. He is so helpless. My Garnick is like a lamb.	-An orphan he’ll become. If he’s left alone in this world, he’ll be eaten alive. My Garnick wouldn’t even nick a penny.

In another passage, we come across a pun, which makes the passage sound humorous. In an endeavor to persuade Satenik, the old man compares his son, Garnik (literal translation-little lamb) to a lamb “*Ախր գառի պէս*

էրէխաւ է Գարնիկը,” which is rendered into English as *“My Garnik is like a lamb.”* The punch line plays on the two meanings of the word *“Garnik.”* This version is grammatically and lexically well-structured and transmits the main meaning. However, it does not retain the comical effect the word-play imparts. To redress this lack, we suggest another version of translation: *“My Garnik wouldn’t nick a penny,”* which contains a paronomasia. The chosen version imparts contextual meaning and humorous effect. In the suggested translation, two strategies – *compensation* and *lexical recreation* (not mentioned above) – are applied first – to make up for a translational loss and second to create a new expression. Lexical recreation technique refers to making up a neologism and is not mentioned above. This method was suggested by Diaz-Cintas and Remael.

Table 3

<i>Armenian</i>	<i>English Translation</i>	<i>Suggested Version</i>
-Խօրէնն ո՞վ է: -Էն կույր յերածիշոյր: Արի՛ : -Յօ էն բաստուրմէն չէ՞ն կերէ: -Յա՛ , բաստուրմէն ըմբէս տեղ էմ պահել օր: Գոնէ՞լ կեղնի: -Արի՛ , Մառու՛ս: Արի՛ : Տունս ձրի ռէստորան էն դարձրէ: Կերէ՛ , խմէ՛ , հըմի է նստած «Ավէ Մարիա» կը յերգէն: -Էնիգ է երէխաւ, դու մէծ մարդ էս, չէ՞ս ամընչէ: Հ՛ընգէլ էս երէխաւ յեղքին: 00:27:59-00:28:17	-Who is Khoren? -A blind musician. -Did they eat up your meat ? -Look, they turned my house into a restaurant. Had my snacks and drinks, and now singing Ave Maria. -He is a child but you’re a grown-up person. Having friendship with a kid. Shame on you.	-Who’s Khoren? -A blind musician. Come here. -Did they eat up your basturma ? -My, My. I hid it so well that no one can find it. -Look, they turned my house into a free restaurant. They’ve eaten, drunken. Now singing Ave Maria. -He’s a child, but you’re a grown-up man. Dancing to a child’s tune. Shame on you.

In this scene, an orphan, together with a blind musician, breaks into his teacher’s house and spends time there until she returns. Upon spotting strangers in her house, she panics and calls her neighbor, who has a notorious reputation for being petulant. By and large, humor is not only based on the usage of linguistic features but paralinguistic and extra-linguistic features as well. In fact, prosodic features are the linchpin for imparting humorous effect to an utterance. The punch line is as follows: after warning her neighbor about unsolicited visitors, the latter is taken aback – but not because they could have

caused immense damage to the house, or the worst case scenario, hurt the owner. Rather, she is worried about whether they have eaten the meat. The proposed option “*meat*” for “*բասուրմա*” does not fully convey the essence of cultural realia. Basturma is a highly seasoned, air-dried cured beef that exists in the cuisines of several Western-Asian countries. Due to its high price, most people could not afford it. Since the food is common in other countries as well, it is expedient to use a **borrowing** method to preserve the cultural realia. On the other hand, the translator applied a **generalization** technique as “*meat*” has a wider meaning while “*basturma*” is a specific dish. The strategy of *borrowing* is more expedient since it conveys the cultural aspect of the word.

In the same example, an Armenian idiom “*ընկնել երեխայի խելքին*,” which has a negative connotation and means “to go along with a child’s wishes and views,” is rendered into English as “*having friendship with a kid*.” Having a friendship with children should be viewed in a positive light. So this option does not transmit the offensive, derogatory aspect of the idiom. The suggested translation “*dancing to a child’s tune*” is considered more expedient in this humorous context since it means “to do what a child says without hesitating or questioning.” Not only is the suggested version closer in meaning, but it also transfers the same style and offensiveness of the passage. In the suggested translation, we have applied **modulation** to impart naturalness without sacrificing any meaning.

Table 4

<i>Armenian</i>	<i>English Translation</i>	<i>Suggested Version</i>
-Աճկրդ լուս էղի, քեզի նօր ուզողներ էն էգէ: -Էս երեխեն ընձի լոխվ կը խելըոցնէ: -Էդ ո՞ւր: -Գրօղի ծօցը: -Լույսը քեզի տեսնօղին: Էնքան չէգար, օր վերձը մէնք էգանք: Բարէ վ, ընգէ՛ր Սասնէիգ: 1:21:38-1:21:56	-You’re in for another wooer. -This kid will drive me crazy. -Where are you going? -To the devil. -Why you were not coming to see us? So we came to see you ourselves.	- Lucky you. You have new suitors. -This kid’s driving me crazy. -Where’re you going? -To the devil. - Long time no see. Well, hello there, Comrade Satenik. We hadn’t met for ages, so we decided to show up.

In this passage, a neighbor ironically congratulates the other neighbor for having new suitors. The latter seeks to avoid the undesirable situation but encounters the officials who had acted as a go-between for her and the executive committee when she adopted a child. She finds herself in a predicament.

This passage is rich in culture-bound expressions, namely «աչքդ լույս», «լույս քեզ տեսնողին», «գրողի ծոց». The translator has not translated the first two idioms. In Armenian «աչքդ լույս» is used as an expression of a pleasant surprise following some good fortune. But it can be used ironically to express the opposite. The Armenian idiom «լույս քեզ տեսնողին» is a greeting for someone one has not seen for a long time. Both culture-bound expressions have their equivalents in English, namely “lucky you” and “long time no see.” Here, we suggest applying an *equivalence* method.

Table 5

<i>Armenian</i>	<i>English Translation</i>	<i>Suggested Version</i>
<p>-Վա՛յ Աստված վօճ է՛նէ: Տէ՛ր հայր: Լո՞իվ խայդառագ կէղնի՛նք: Ախր մէր բաժինն է միճնօրդէ գօրձկօմին վօրտէգրման համար: -Գագի՛ գ ջան, հլը գնա՛ ստեղից: -Չէմ էրթա: -Հէրիկ է՛ հ՛անգրճներդ սրէս ու քեզի չըվերաբերօղ բանէր լսէս: -Շաղ էլ լա՛վ կը վերաբերվի: -Գագի՛ գ տղա, գնա՛ ստեղից: -Չէմ էրթա: Մի՛նճելվ չամուսնանաս, չէմ էրթա: Ընձի հէ՛ր է պէտկ: -Գագի՛ գ տղա, ընձի համբերութիւնից չհանէս: 1:22:49-1:23:09</p>	<p>-God forbid. Because we interceded for them. -Gagik. Dear, step aside. -No. -Don't give your ear what doesn't concern you. -It concerns me very much. -It concerns me very much. -Step aside. -I'll not go away until you marry. I need me a father.</p>	<p>-Oh, God forbid, Father. It'll bring absolute disgrace on us. It was our department that acted as a go-between for them and the ExCom. -Gagik jan, leave us alone for a moment. -No. -Enough pricking up your ears and listening to what's none of your business. -It <i>is</i> my business. -Go away. -I won't go until you get married. I need a father. -Gagik, don't try my patience.</p>

Other examples of humor expressed within interjections, prosodic features of the language, and culture-bound items are in this passage. In this humorous context, a priest, on behalf of a child, comes to persuade a woman to remarry. He tries to explicate that remarrying is not a sin, the child needs a father, and the absence of the latter, in all likelihood, will make a child become a criminal. Government officials, who overhear the conversation, are worried at the thought of a child becoming a criminal by saying «Վա՛յ Աստված վօճ է՛նէ: Տէ՛ր հայր: Լո՞իվ խայդառագ կէղնի՛նք: Ախր մէր բաժինն է միջնօրդէ գօրձկօմին վօրտէգրման համար,» which was translated to

“God forbid. Because we interceded for them.” It is obvious that some parts of the source text are not rendered in the target language. Hence, the translator applied a *concentration* method. Firstly, the interjection «վայ,» which expresses extreme surprise and worry at the same time is not rendered. Secondly, there are specific forms of address that aim at expressing respect and honor to a person who serves in the church. In the Apostolic Church, a priest is addressed as «*տէր հայր,*» which is not translated into the target language. Another common Armenian idiom, «*խայտառակ լինել,*» which articulates that someone has disgraced himself, is omitted from the target language. The official also mentions «*գործկոմ,*» which is the Armenian abbreviation of “*executive committee,*” an authoritative governing body in the USSR. By mentioning so, she emphasizes that she holds the executive committee in high regard and by no means wants to disappoint it. On account of the omission of the above-mentioned units, translation suffers a loss of authenticity and preservation of the cultural context. To redress this lack, we propose another option, which includes all the omitted expressions: “Oh, God forbid. Father. It’ll bring absolute disgrace on us. It was our department that acted as a go-between for them and the ExCom.” In this passage, we have applied an *adaptation* method with the exception of the “it’ll bring absolute disgrace on us” sentence in which such methods as transposition and dissolution have led to *modulation*.

In the same example, the woman gently urges the child to leave them alone so that they can have a private conversation. However, when the child refuses to leave she gets irritated and reproaches him by using Armenian idioms such as «*սկանջները արել*» and «*համբերությունից հանել*». The former means to cause the ears to point upward. It is also used figuratively of people to suggest listening carefully. The latter means to frustrate or annoy a person by continued unwanted behavior that may cause someone to lose patience. «*Հէրիկ է՝ հանգրճներդ արէս*» is translated into English as “*Don’t give your ear what doesn’t concern you,*” which conveys the overall meaning of the expression but does not highlight the implicit parallel between a man and an animal. While “*Enough pricking up your ears*” is an equivalent translation and imparts all the inner shades of the meaning that the expression contains. «*Համբերությունից հանել*» idiom is not translated as well. For the latter we propose “*try one’s patience*” idiom. Another culture-bound expression that is not translated is “*jan.*” In Armenia, “jan” is used to represent a kind and gentle attitude to the interlocutor and plays a salient role in daily

colloquial communication. It is expedient to translate this word as a means to preserve cultural context. In this case, a *borrowing* technique is used as the word from the ST is directly transferred to the TT without translation.

To sum up, this study has demonstrated that although humor is a universal category, humor perception and usage can highly differ across cultures making the translation of culturally diversified humor a challenging task. In the above-mentioned examples, humor was expressed through visual and linguistic means. The extracted dialogues were rich in culture-bound expressions and idioms, which in the majority of the cases were omitted by the translator. Due to this, the translation suffered a partial and complete loss of humor and culture preservation. To redress that lack, several translation methods proposed by Vinay and Darbelnet, Albir, and Molina were applied among which adaptation, modulation and borrowing proved to be the most frequently used translation methods by us. In one example, we used a lexical recreation method, which is not included in the strategies, to create a new expression for the sake of rendering humor expressed through pun. Compensation and equivalence were applied once. Given the fact that various factors, namely prosodic features and visual effects, play an important role in humor creation, the restoration of them is crucial for humor transfer.

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՄՈՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՈՒՐԱԽ ԱՎՏՈՒՄ» ՖԻԼՄՈՒՄ
Գրիգորյան Գ. Կ.**

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել մշակութային հումորի թարգմանության առանձնահատկությունները և թարգմանական զանազան ռազմավարությունների միջոցով հումորը թիրախ լեզու փոխանցելու եղանակները: Հայկական հումորի անգլերեն թարգմանության մասին ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով ընտրվել է «Ուրախ ավտոբուս» հեռուստոհրդային ֆիլմը: Ուսումնասիրությունը հիմնված է համեմատական մեթոդի վրա, որի նպատակն է զուգադրել ֆիլմի բնօրինակ սցենարը և համարժեք անգլերեն թարգմանությունը՝ վեր հանելով տարբերությունները, հնարավոր մշակութային և լեզվական խոչընդոտները, որոնց կարող է բխվել թարգմանիչը և թարգմանիչ կողմից կիրառված թարգմանական ռազմավարությունները: Ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ չնայած բնօրինակ սցենարից մի շարք շեղումներին՝ թարգմանիչը որոշ դեպքերում կարողացել է հումորային համատեքստին

համապատասխան տարբերակներ առաջարկել՝ պահպանելով ասույթի ն՝ իմաստը, ն՝ հումորային էֆեկտը: Այնուամենայնիվ, թարգմանությունը կրել է հումորի ամբողջական և մասնակի կորուստ՝ հաշվի առնելով այն փաստը, որ բնօրինակ սցենարի որոշ հատվածներ պարզապես չեն թարգմանվել: Ավելին, թարգմանիչը որոշ դեպքերում հաշվի չի առել ասույթների ներքին իմաստները՝ այդպիսով տրամադրելով բառացի թարգմանություն:

Բանալի բառեր. մշակութային հումոր, թարգմանական ռազմավարություն, հումորային համատեքստ, լեզվական և վիզուալ միջոցներ, հումորային էֆեկտ:

ОСОБЕННОСТИ ПЕРЕВОДА КУЛЬТУРНОГО ЮМОРА В ФИЛЬМЕ "ВЕСЕЛЫЙ АВТОБУС"

Григорян Г. К.

Целью данной статьи является изучение особенностей перевода культурного юмора и способов передачи юмора на целевой язык с помощью различных переводческих стратегий. Постсоветский фильм «Веселый автобус» был выбран для того, чтобы составить общее представление о переводе армянского юмора на английский язык. Исследование основано на сравнительном методе, целью которого является сравнение оригинального киносценария и эквивалентного ему английского перевода с выделением различий, возможных культурных и языковых барьеров, с которыми может столкнуться переводчик, и стратегий перевода, используемых переводчиком. В результате исследования можно констатировать, что, несмотря на ряд отступлений от оригинального сценария, переводчик в ряде случаев смог предложить варианты, соответствующие юмористическому контексту, сохранив как смысл, так и юмористический эффект высказывания. Однако перевод понес полную и частичную потерю юмора из-за того, что некоторые части оригинального сценария просто не были переведены. Кроме того, переводчик в некоторых случаях не учитывал внутренний смысл высказываний, обеспечивая дословный перевод.

Ключевые слова: культурный юмор, стратегия перевода, юмористический контекст, лингвистические и визуальные средства, комедийный эффект.

REFERENCES

1. Albir H., Molina L. Translation techniques revisited: A dynamic and functionalist approach // *Meta: Translator's Journal*. 2002. Vol. 47. P. 498-512.
 2. Martin R. A. *The psychology of humor: An integrative approach*. Burlington, MA: Elsevier Academic Press. 2007.
 3. Olson E. *The horror of humor: Tension, dehumanization, and related observations* // Minnesota. Gustavus Adolphus College. 2007.
 4. Simpson J. A., Weiner E. S. C. *The Oxford English dictionary*. Oxford. Clarendon press. Vol. 7. 1989.
 5. Veatch T. C. A theory of humor // *Humor: International Journal of Humor Research*. Vol. 11. No. 2. 1998. P. 161-216.
<https://doi.org/10.1515/humr.1998.11.2.161>
 6. Vinay J. P., Darbelnet J., *Comparative stylistics of French and English: A methodology for translation*. Trans. and eds. J. C. Sager and M. J. Hamel. Amsterdam. John Benjamins. 1995. (Original work published in 1958 as *Stylistique comparée du français et de l'anglais. Méthode de traduction*).
- Dictionaries**
7. Բարաթյան Ն., Երզնկյան Ե., Լազարյան Ա., Համբարձումյան Ն., Տեր-Պողոսյան Ի. Հայերեն-անգլերեն բառարան: Երևան: Մակմիլան-Արմենիա: 2006: 592 էջ:
 8. Սահակյան Վ., Ներսիսյան Ռ. Թևա՛վոր խոսքեր և շրջասույթներ: Երևան: ՎՄՎ-Պրինտ: 2013: 172 էջ:
 9. Cambridge University Press. (n. d.). *Cambridge Dictionary*.
<https://dictionary.cambridge.org/ru/>
- Link to the film**
10. Muradyan D., (2015, Jule 1). Ուրախ սվտոբոս. Available at:
<https://www.youtube.com/watch?v=spDfCoeKWfE&t=4899s>

Information about the author

Grigoryan G. K. - 4th year Bachelor

Brusov State University, Faculty of Translation and Intercultural Communication, Translation Studies (English-Armenian)

E-mail: gohargrigoryan256@gmail.com

Received on 04.10.2022

Reviewed on 24.01.2023

**ԱՎԱՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԻ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
Ահարոնյան Ի. Վ.**

Այս զեկույցը մի փորձ է՝ ներկայացնելու հյուսիսկովկասյան ազգերից ավարների ծագումնաբանությունը՝ նրանց բնակության և ծագման հինական վայրը, ներկայիս բնակեցման տարածաշրջանը, պատմական ոչ վաղ անցյալի նրանց հարաբերությունները այլ ժողովուրդների, երկրների և թագավորների հետ: Չեկույցի մեջ հատուկ տեղ է հատկացված ավար ազգի մղած տարատեսակ պայքարներին ու հյուսիսկովկասյան այլ ազգերի հետ նրանց համեմատություններին:

Բանալի բառեր. ավարներ, Հյուսիսային Կովկաս, ծագումնաբանություն, լեզու:

Նախաբան: Այս զեկույցը մի փորձ է՝ ներկայացնելու հյուսիսկովկասյան ազգերից ավարների ծագումնաբանությունը՝ նրանց բնակության և ծագման հինական վայրը, ներկայիս բնակեցման տարածաշրջանը, պատմական ոչ վաղ անցյալի նրանց հարաբերությունները այլ ժողովուրդների, երկրների և թագավորների հետ: Չեկույցի մեջ հատուկ տեղ է հատկացված՝ ներկայացնելու ավար ազգի մղած տարատեսակ պայքարներին ու հյուսիսկովկասյան այլ ազգերի հետ նրանց համեմատություններին: Գիտության համար մեծ կարևորություն է ներկայացնում նաև ավարերենի բառամթերքը: Թեման արդիական է նաև նրանով, որ ավարները հանդիսանում են Ադրբեջանի Հանրապետության ազգային փոքրամասնություններից մեկը, որոնք արցախյան առաջին պատերազմի տարիներին ակտիվ չեն մասնակցել ռազմական գործողություններին ադրբեջանցիների կողմից, իսկ արցախյան երկրորդ պատերազմում ակտիվ էին: Այս առումով ավարների ուսումնասիրությունը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում է ու արդիական:

Ավարների գիտական ուսումնասիրությունների սկիզբը: «Ավար» էթնոնանվան՝ Կովկասում ծագման մասին քննարկումները գիտական հանրության մեջ եղել են դեռևս 19-րդ դարում [3. Ханизов: 20]: Ներկայումս ճանաչում է ստացել գիտական այն վարկածը, որ ժամանակակից ավարների էթնոնիմը փոխկապակցված է ավարների՝

քոչվոր ժողովրդի անվան հետ, որը Հյուսիսային Կովկասում հայտնվել է մ.թ.ա. VI դարում [3. Хапизов: 2]: Ըստ Ն. Գ. Վոլկովանի՝ ավարների առանձին փոքր խմբերը տեղափոխվեցին լեռնային շրջաններ, որտեղ նրանք ի վերջո ձուլվեցին տեղական, թվային առումով գերակշռող կովկասախոս բնակչության կողմից [3. Хапизов: 2]: Եվ, չնայած տեղի բնակչության շրջանում դրանց տարրալուծմանը, այս ժողովրդի հետքը պահպանվել է «ավար» էթնիկ անվանումով: Թ. Մ. Այտբերովը նույնպես կարծում է, որ մ.թ.ա VI դ. ավարների մի մասը տեղափոխվել է Խունզախի սարահարթ և խառնվել տեղի բնակչությանը [3. Хапизов: 22] : Հետագայում այս անունը դառնում է Սարիրի տիրակալներից մեկի տիտղոսը: Այս կապակցությամբ նա առաջ է քաշում այն վարկածը, որ ավարները, քիչ թվով հաստատվելով ժամանակակից Ավարիայի կենտրոնական մասում, կազմում էին նրա իշխող վերնախավի զգալի մասը: Մի շարք ուսումնասիրողների կարծիքով, թեև ավարները երկար չմնացին Հյուսիսային Կովկասի տափաստաններում, սակայն որոշակի ազդեցություն ունեցան տեղի ցեղերի վրա [3. Хапизов: 4]: Հնարավոր է, որ Եվրոպա վերաբնակեցման ժամանակ նրանց մի մասը մնացել է ու խառնվել տեղական հյուսիսկովկասյան ցեղերին:

Նշենք, որ այս հեղինակների առաջ քաշած վարկածը մեծապես հիմնված է վրացական միջնադարյան տարեգրությունների՝ «Քարթլիս ցխովրեբա» ժողովածուի տվյալների վրա: Այն ներկայացնում է վարկած ավարների՝ Հյուսիսային Կովկաս վերաբնակեցնելու և լեռնային Դաղստանի բնակչությանը նրանց ենթարկելու մասին VI դարի վերջին՝ Քարթլիում Գուրամ թագավորի օրոք: Գործընթացի ժամանակագրությունը պարզաբանելու համար հարկ է նշել, որ իշխանության եկած Գուրամը (հզ. 568–600) Բյուզանդիայի օգնությամբ 575 թվականին կարողացավ իր վերահսկողության տակ վերցնել Վրաստանի ողջ տարածքը՝ ազատելով այն Սասանյան Իրանի իշխանությունից: Ըստ վրացական աղբյուրների՝ ավարները պատերազմի մեջ են մտել այս թագավորի հետ, որից հետո նրանք «հաշտվել են, իսկ հետո Գուրամն իբր բնակեցրել է նրանց Կովկասի լեռնային կիրճերում, ինչպես նաև Խունզախում, այժմ նրանց անվանում են ավարներ»:

Թվում է, թե այս լեզենդները գրվել են շատ ավելի ուշ, և դժվար թե դրանք վստահելի աղբյուր համարվեն: Առաջ քաշվեցին ավարների էթնոգենեզի այլ վարկածներ, որոնք իրական փաստական հիմք ունեին: Այսպիսով, խորհրդային արևելագետ Վ. Մ. Բեյլիսը կարծում էր, որ ավարների նախնիները հայտնի էին Ավգար կամ Ավխար (ավհար)

անունով, և այս էթնոնիմը այնուհետև վերածվեց արաբական աղբյուրներին հայտնի ավարի, մինչդեռ արաբական փոխանցումը միջինասիական ավարների անունն է: Միննույն ժամանակ, ըստ աղբրեջանցի հետազոտող Գ. Գեյբուլանի, **լբին**, **լփին** էթնոնիմը ակնհայտորեն ավարների այն հատվածի անունն էր, որն ապրում էր Ալբանիայում և քրիստոնյա էր: Ավարների մեկ այլ հատված, որն ապրում էր դեպի հյուսիս՝ հարավային Դաղստանում, կոչվում էր սիլվ (հայկական աղբյուրներում՝ չիլբ): Լբին, Լփին ազգանունը որպես ինքնանուն չի պահպանվել, քանի որ այժմ Լփինների հետնորդներն իրենց անվանում են «Ավար»: Բայց սա նրանց իսկական ինքնանունը չէ: Ելնելով դրանից՝ նա անում է ևս մեկ ենթադրություն, որի վրա ուշադրություն դարձնելը կարևոր ենք համարում. «Որոշ հետազոտողներ ընդունում են, որ **կովկասյան ավարներ** էթնոնիմը վերադառնում է թյուրքական ավարների էթնոնանունին: Բայց սա հազիվ թե ճիշտ լինի: Ավարների այս էթնոնիմը ուղիների շրջակայքում (այս դեպքում՝ հյուսիսարևմտյան Ալբանիայի ուղիները, որոնք բնակվում են ավարների շրջակայքում) առաջին անգամ հիշատակել է Ստեփանոս Բյուզանդացին, այսինքն՝ այն ժամանակ, երբ թյուրքական ավարները (ավելի ճիշտ՝ արբերը) չէին կարող լինել Ալբանիայում:

Ինչպես նշել է Վ. Մ. Բեյլիսը, «ավար» էթնոնանունն առաջին անգամ հանդիպում է արաբական աղբյուրներում՝ որպես Սարիրի տիրակալի տիտղոս [4. Ханизов: 92]: Միջնադարյան պատմիչներ Իբն Ռուսթեն (10-րդ դար) և Գարդիզի (XI դար) այս տիրակալին անվանում են Ավար կամ Ավազ [2. Абдуллаев: 3]: Տարբերությունն այս դեպքում պայմանավորված է արաբական տառադարձությամբ, դրանց ուղղագրության ամբողջական նույնությամբ՝ բացառությամբ վերջին հնչյունի (j/p կամ j/ʒ), որի պատճառով գրագիրները կարող էին լավ աղավաղել անձանոթ անվան անունը: Այս գրառման հիման վրա՝ Դաղստանի որոշ հետազոտողներ (Մ. Ազլարով, Օ. Դավուդով և ուրիշներ) կարծում են, որ Ավարը Սարիր թագավորի «դինաստիկ անունն է [2. Абдуллаев: 7]: Ըստ Օ. Մ. Դավուդովի՝ Սարիրցիները սկսեցին ավար կոչվել միայն 9-րդ դարից հետո, երբ այս անունը փոխանցվեց հենց ժողովրդին:

Վ. Մ. Բեյլիսը առաջարկեց իր այն ենթադրությունը, թե Սարիրին տիրող տոհմը ծագումով ալթայական էր: Միջնադարյան տարբեր աղբյուրների վերլուծության հիման վրա նա հակված էր հերքելու կովկասյան ավարների էթնոնիմի կապը Միջին Ասիայի քոչվոր աշխարհի հետ: Խոսքով Անուշիրվան I-ի գահակալության սկզբում

(531–579), ըստ Սարհրի տարածքում իրանական ծագումով տիտղոսը կրող տիրակալի (Ավհար-գ-ան-շահ) առկայության մասին տվյալների, նա համարում է, որ քիչ հավանական է, որ քոչվոր ավարները կարողանան ենթարկվել դժվարամատչելի լեռնային շրջանին: Այսպիսով, նա բաժանում է կովկասյան և միջինասիական ավարներին՝ նրանց ընդունելով որպես բոլորովին տարբեր ժողովուրդներ, որոնց «միավորում է միայն անվան թվացյալ նմանությունը»:

Վ. Մ. Բեյլիսի ստեղծագործություններն ավելի կարևոր են դառնում, եթե հաշվի առնենք, որ եվրոպական հայտնի ավարները Հյուսիսային Կովկասում մնացին ընդամենը մի քանի տարի: Առաջին անգամ հայտնվելով հյուսիսկովկասյան տափաստանների արևելքում՝ 558 թվականին ավարները ավանական «արքա Սարոգիոսի միջնորդությամբ դաշինք կնքեցին Սասանյան Իրանի դեմ պատերազմող Բյուզանդիայի հետ: Իսկ 560-561 թթ. ավարներն անցան Դոնը, հաղթեցին սլավոններին և, ի վերջո, սկսեցին հաստատվել Միջին Դանուբի ափերին, որտեղ ձևավորեցին ավարական խաքանատը, որը միավորում էր ընդհանուր լեզու չունեցող տարբեր ցեղերի: Հայտնի է, որ 560-ական թթ. «Ավարները, որոնք եկել են Դանուբ և Սավա, առաջ են շարժվել Կասպից ծովի հյուսիսային ափերից և հարավային ռուսական տափաստաններից: Մինչդեռ, ըստ վերը նշված տվյալների, արդեն 530-ական թթ. Արևելյան Կովկասում կար պետական կազմավորում, որը հայտնի էր միջնադարյան պարսկական աղբյուրներում որպես Ավհար» [5. Ханизов: 98]: Եթե հետևենք ավարների էթնոնիմի «ալթայական ծագման» հետազոտողների տրամաբանությանը, ապա կստացվի, որ ավարները, իբր, Կենտրոնական Ասիայից ժամանելով, Հյուսիսային Կովկասի տափաստաններում մնացել են ընդամենը մի քանի տարի: Այն վարկածը, ըստ որի՝ ինչ-որ քոչվոր ցեղ, փախչելով իրենց հետապնդողներից, «մի ժամանակ կարող էր երկար դարերով գրավել և հպատակեցնել Լեռնային Դաղստանը», ակնհայտորեն հեռու է թվում և չունի բավարար հիմնավորում:

Մինչդեռ «ավար» էթնոնիմի մեկնաբանմամբ զբաղվող հետազոտողները չեն էլ մտածում դրա պատշաճ ավարական ստուգաբանության հնարավորության մասին, թեև ավարերենի բառապաշարի ուսումնասիրությունը արևելակովկասյան այլ լեզուների հետ ցույց է տալիս դրա բացատրության հնարավորությունը կովկասյան լեզուների հիման վրա: Այս առումով հատկանշական է հուրիերենում «ավար» բառի առկայությունը՝ «դաշտ», որը նախկինում բնորոշ էր

Արևելյան Կովկասի լեզուների լայն շրջանակին, բայց պահպանվել է, ըստ Ի. Մ. Դյակոնովի, ռուսոլերենում՝ «սիգամարգ» իմաստով, իսկ ավարերենում՝ «կուսական հողեր»: Ն. Նոգաձեն հուրիական բառապաշարին նվիրված իր մենագրության մեջ այս «ավար» բառը հիշատակում է նաև «դաշտ» իմաստով [6. Хачигов: 3]: Հին հուրիերենում նման բառի առկայությունը, որն ընդհանուր արմատներ ուներ հեռավոր անցյալում արևելակովկասյան լեզուների հետ, հուշում է, որ այս բառը պատկանում է դադստանյան լեզուների բնօրինակ բառային ֆոնդին և փոխառություն չէ: Ավարերենում **գԻալախ** և **մեգԻեր** («լեռ») հասկացությունները տարածքի տնտեսական զարգացման մեջ ունեցել են համանման իմաստ և նշանակություն (արոտավայրեր): Մ. Ազլարովը դրանք թարգմանում է «ձմեռային տաքացումներ» (գԻալախ) և «ամառային արոտավայրեր» (մեգԻեր)՝ սահմանելով դրանք որպես երրորդ կարգի հողեր՝ հետևելով բնակավայրի տակ գտնվող հողերին (ցող) և գյուղատնտեսական հողերին (մեգ): Քննարկվող հարցի հետ կապված պետք է ուշադրություն դարձնել ավար էթնոնիմի նմանությանը և մարգարեի ավարական պատշաճ նշանակմանը՝ ավարագ: Այս բառի ստուգաբանությունը կօգնի հասկանալ էթնոնիմ ավառի ձևավորման սկզբունքը: Ինձ թվում է, որ նույն շարքում է «ճգնավոր» սկզբնական իմաստով ավարագ տերմինը, ով ապրում է հասարակությունից հեռու և զբաղվում է պաշտամունքով: Տերմինը կազմված է երկու բառից՝ ավար («վայրէջք, կույս երկիր», տարբերակ ավահԻ) և լագ («մարդ»; տարբերակ լակոտ, լակ) և նշանակում է «մարդ (մարդ, անապատից):

Ըստ այս աղբյուրի՝ Լեկերի ամենանշանակալի մասը, որը կոչվում է Հունգա (որով, հավանաբար, պետք է հասկանալ կենտրոնական ավարները), գաղթել են լեռնային Դադստանի շրջաններ: Խոսվում է նաև որոշ քոչվոր ցեղերի հզորացման մասին, որոնք մատենագրի կողմից նշանակվել են «խագարներ» (հետագոտողները կարծում են, որ դա անախրոնիզմ է), որոնք ենթարկել են ողջ Հյուսիսային Կովկասը: Այս առնչությամբ «Խոզանիհը, լինելով ավելի ազնիվ, քան Լեկի մնացած սերունդները, գնաց և նստեց լեռան մի ձեղքում, այնտեղ քաղաք շինեց և իր անունով կոչեց՝ Խոզանիխեթի: Պարսիկների հզորացումից ի վեր, այսինքն՝ Մասանյան կայսրության ստեղծումը տեղի է ունեցել III դ. մ. թ., իսկ Դերբենտ ամրոցի կառուցումը՝ 6-րդ դարում, ապա անալոգիայով կարելի է ենթադրել, որ «Խոզանիխայի» վերաբնակեցումը տեղի է ունեցել մ. թ. առաջին դարերում»: Հարկ է նշել, որ, օրինակ, լարագԻալ,

«հարթավայրերի բնակիչներ» (ժամանակակից իմաստով՝ «կումիկս») ազգանունը ձևավորվել է համանման, աշխարհագրական, ավելի ճիշտ՝ ռելիեֆային սկզբունքով: Միգուցե նույն կերպ է ձևավորվել նաև «Ավարալ» էթնոնիմը՝ «տափաստանների, ամայի բնակիչներ»: Մրա օգտին է խոսում մեր մեկ այլ դիտարկում. ավարական խոշոր ենթազգային խմբերից մեկի՝ անդիների ինքնանունը (գվանալ) իմաստով համընկնում է Ավար էթնոնիմի հետ: Վ. Մ. Բեյլիսը տրամաբանորեն նշում է, որ մեզ հասանելի աղբյուրներում չկան քոչվորների կողմից Դաղստանի լեռնային շրջանների գրավման ապացույցներ: Իշխող դինաստիայի քոչվորական ծագման հետքեր չկան: Արաբ աշխարհագրագետների աշխատություններում Սարիրը հանդես է գալիս որպես պետական կազմավորում՝ այն Սասանյան Իրանի հետ կապող ավանդույթներով, թեև այդ ավանդույթներն ունեին «զուտ գազաթային բնույթ»: Որպես Սարիրի (Ավարիի) թագավորության տիրակալների հնագույն տիտղոս՝ հիշատակվում է **նուցսալ** տերմինը, որը հայտնի է առնվազն 12-րդ դարից: Օրինակ՝ միջնադարյան տարեգրություն, որը հետագայում ներառվել է «Թարիխ Դաղստանի» պատմական աշխատության մեջ: Այն ժամանակ «Ավար» շրջանի տիրակալը կրում էր «Նուցալ» տիտղոսը՝ բացատրելով, որ «իրենց սովորությունն է այդպիսի մականուն տալ և իրենց տիրակալին նշանակել այս անունով»: Այս տերմինն օգտագործվում է Ավարիայում և՛ իսլամի պաշտոնական ընդունումից հետո՝ որպես պետական կրոն (մոտ 1302թ.): Միննույն ժամանակ, nutsal տերմինը նույնպես հազվադեպ էր օգտագործվում nuciav-ի տեսքով: Օրինակ՝ 1761թ.-ով թվագրված մի փաստաթղթում Ավարիայի տիրակալի առնչությամբ գործածվել են հետևյալ էպիտետները՝ խան, ամիր, դաստուր և նուտսիյ: Կոչումների բազմակարծությունը տարբեր պետությունների կառավարիչների բնորոշ հատկանիշն է: Օրինակ՝ Սուլեյման Կանունին 1538 թվագրված արձանագրության մեջ իրեն անվանում է Իրաքի շահ, Ռումի կայսր (կայզեր) և Եգիպտոսի սուլթան, որին կարելի է ավելացնել փառիշահ, շախրիյար, հունկար, խան և խական տիտղոսները: Միննույն ժամանակ դեպքերի ճնշող մեծամասնությունում հեղինակները օգտագործում են nutsal ձևը: Կովկասյան լեզուների հայտնի հետազոտող Պ. Կ. Ուսլարը այս տերմինը հասկանում է որպես «ավար խանի հնագույն տիտղոս»: Այնուամենայնիվ, այն օգտագործվում է նաև որպես ածանցյալ ձևաչափ: Հետագայում Ա. Ե. Կրիստոպան առաջարկել է այս տերմինի իր մեկնաբանությունը: Նրա կարծիքով՝ նուտսալը պետք է կապել

վրացերեն «նացվալ» տերմինի հետ, որը նշանակում է «համայնքի ավագի օգնական» կամ «պատգամավոր» և ավարերեն մուտք է գործել իբր 11-րդ դարում: Մեկնաբանելով այս ստուգաբանությունը դադատանցի պատմաբաններն արտահայտել են հետևյալ նկատառումը. «Նութսալ և նացվալ տերմինների ընդհանուր ծագումն ակնհայտ է, սակայն չի կարելի բացառել դրա տեղական ավարական ծագումը»: Այս առումով, ուսումնասիրված արմատի մորֆեմի հյուսիսկովկասյան իզոգլոսի վարկածը բավականին համոզիչ է թվում, և nutsal տերմինը կարելի է վերագրել ավարերենի բնիկ բառային ֆոնդին:

Եզրակացություն: Այսպիսով, կարելի է փաստել, որ ավարների մասին գիտական ուսումնասիրության սկիզբը 19-րդ դարն է: Ճանաչում է ստացել ժամանակակից ավարների էթնոնիմի փոխկապակցումը ավարների քոչվոր ժողովրդի անվան հետ գիտական վարկածը, ովքեր Հյուսիսային Կովկասում հայտնվել են մ.թ.ա. 6-րդ դարում, որ VI դ. «կայսերական ավարների մի մասը տեղափոխվել է Խունզախի սարահարթ և խառնվել տեղի բնակչությանը, որ «կովկասյան ավարներ» էթնոնիմը վերադառնում է թյուրքական ավարների էթնոնանունին: Ուսումնասիրված արմատի մորֆեմի հյուսիսկովկասյան իզոգլոսի վարկածը բավականին համոզիչ է թվում, և nutsal տերմինը կարելի է վերագրել ավարերենի բնիկ բառային ֆոնդին:

АВАРЫ КАК НАЦИОНАЛЬНОЕ МЕНЬШИНСТВО В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ СОБИТИЙ

Агаронян И. В.

Данный доклад является попыткой представить генеалогию аварцев, которые являются северокавказским народом, их основное место жительства и происхождение, регион их нынешнего расселения, их отношения в недавнем историческом прошлом с другими народами, странами и царями. Особое место в докладе отведено представлению различных видов борьбы аварского народа и сравнение их с другими северокавказскими народами.

Ключевые слова: авары, Северный Кавказ, генеалогия, язык.

AVARS AS ETHNIC MINORITY IN THE CONTEXT OF CURRENT SITUATION

Aharonyan I. V.

The paper is an attempt to present the genealogy of the Avars, who are the North Caucasian people, their ancient place of residence and origin, the

region of their current settlement, their relations in the recent historical past with other peoples, countries and kings. A special place in the paper is given to the presentation of various types of struggle of the Avar people and their comparison with other North Caucasian peoples.

Keywords: Avars, North Caucasus, Genealogy, language.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Хапизов Ш. М., НУЦАЛЫ АВАРИИ. 2021.
2. Абаев В. И., 1979, Историко-этимологический словарь осетинского языка, Т, III., Ленинград.
3. Абдуллаев И. Х., Междагестанские языковые схождения // Материалы и исследования по аваро-лакским языковым взаимоотношениям. Махачкала, 2013.
4. Хапизов Ш. М., CAUCASO-CASPICA, Выпуск I. 2016
5. Хапизов Ш. М., CAUCASO-CASPICA, Выпуск IV. 2019.
6. Хапизов Ш. М., К вопросу о происхождении этнонима АВАР. 2016.
7. Хапизов Ш. М., Исторические науки и археология. 2017.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Ահարոնյան Բ. Վ. – բակալավրիատ 3-րդ կուրս

ՀՌՀ, Արևելագիտության ինստիտուտ, Թյուրքագիտություն

Էլ. փոստ՝ aharonyan.inesa@student.rau.am

Գիտական ղեկավար՝ Հակոբյան Հ., պատմ. գիտ. թեկն.

Ստացվել է՝ 19.11.2022

Գրախոսվել է՝ 23.12.2022

**ՖՐԱՆՍ-ՊՐՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ
«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԹԵՐԹՈՒՄ
Հայրապետյան Մ. Ռ.**

19-րդ դարի երկրորդ կեսին Պրուսիան ձգտում էր միավորել գերմանական բոլոր հողերը իր իշխանության ներքո: Ֆրանսիան իր հերթին փորձում էր բացառել միացյալ և ուժեղ Գերմանիայի ստեղծումը: Այս մրցակցությունը 1870թ. հանգեցրեց ֆրանս-պրուսական պատերազմի, որն ավարտվեց Եվրոպայում Պրուսիայի դերի աննախադեպ աճով: Թիֆլիսահայ կղերապահպանողական «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը մանրամասն և օբյեկտիվորեն անդրադարձել է թեմային:

Բանայի բառեր. պատերազմ, կայսր, հակամարտություն, էլզաս, Լոթարինգիա, պայմանագիր:

Նախաբան: Ֆրանս-պրուսական պատերազմը լուրջ իրադարձություն էր ողջ Եվրոպայի քաղաքական կյանքում: Պատերազմի ավարտին Եվրոպան կանգնեց նոր իրողությունների առաջ, տեղի ունեցան սահմանների և քաղաքական դերակատարությունների վերաբաշխում: Թիֆլիսահայ պարբերական մամուլը մանրամասն շարադրում է Եվրոպայում կատարվողը: Իր տեղեկությունները «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը ստանում էր ինչպես եվրոպական մամուլի էջերից, այնպես էլ այս կամ այն քաղաքից ստացված հեռագրական լուրերից:

Նպատակ և արդիականություն: Ներկայացնել հայ մամուլի արձագանքն ու վերաբերմունքը պատերազմին և դրա հետևանքներին: Թեման հայ պատմագիտության մեջ ուսումնասիրված չէ, ուստի դրա լուսաբանումը արդիական է:

Թեման թե՛ արևմտյան, թե՛ խորհրդային պատմագրության մեջ բավարար չափով ուսումնասիրված է: Այսպես, Մոլկտեն իր աշխատության մեջ մանրամասն նկարագրում է ռազմական գործողությունների պատմությունը ականատեսի աչքերով: Տարլեն իր գրքում մանրամասնում է պատերազմին նախորդած և դրա ընթացքում տեղի ունեցած դիվանագիտական շփումները: Աշխատանքի կատարման ընթացքում ուսումնասիրվել են Մոլկտեի, Վլասովի, Սվեչինի, Տարլեի

աշխատությունները, ինչպես նաև «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի երկու տասնյակի հասնող համարներ:

1866 թվականին Ավստրիայի նկատմամբ հաղթանակից հետո պրուսական բանակը սկսեց հարգանք և վախ ներշնչել ամբողջ Եվրոպային: Ստեղծված քաղաքական իրավիճակը սկսեց չքավարարել ո՛չ Ֆրանսիային, որի հարևանությամբ փաստորեն հայտնվել էր ռազմական հզոր տերություն՝ ի դեմս Պրուսիայի գլխավորած Հյուսիսային Գերմանիայի Համադաշնության, և ո՛չ էլ Պրուսիային, որը ձգտում էր ավարտին հասցնել Գերմանիայի տարածքային միավորման գործընթացը: Այսպիսով, 1866 թվականի դրությամբ երկու տերությունների միջև պատերազմը միայն ժամանակի հարց էր [1]:

1870թ. հուլիսի սկզբին «Մեղու Հայաստանի»-ն գրում է. «Յարաբերությունները Ֆրանսիայի և Պրուսիայի մեջ տարակուսական են իսպանական թագը Հռենցուլերնի իշխանին առաջարկելու պատճառով» [5]:

Թերթի տեղեկատվությունը հավաստի է. իսպանական գահի նկատմամբ հավակնությունները, իսկապես, ավելի սրեցին ֆրանս-պրուսական հարաբերությունները: 1868 թվականին Իսպանիայի թագուհի Իզաբելլա II-ը գահընկեց արվեց, և երկրում սկսվեցին հեղափոխական գործընթացներ: Իրավիճակի կայունացումից հետո Գերմանիան և Ֆրանսիան իրենց թեկնածությունն առաջադրեցին իսպանական գահի համար: Օտտո ֆոն Բիսմարկը գաղտնի պաշտպանում էր Հռենցուլերնների դինաստիայի ներկայացուցիչ Լեոպոլդի թեկնածությունը [3]:

Թերթի հավաստի լրատվությամբ՝ Ֆրանսիայի խորհրդարանի նիստերում երկրի արտաքին գործերի նախարարը հայտնեց. «Ֆրանսիան չի հոժարիլ, որ Պրուսիան Հռենցուլերնի իշխանին սպանական գահը բարձրացնէ»: Նախարարը ապա հավելեց՝ Ֆրանսիայի կառավարությունը հավատում է Գերմանիայի խոհեմությանը և Իսպանիայի բարեկամությանը, բայց եթե նրա հույսերը չարդարանան, «նա անյապաղ, անշուշտ, կ'կատարէ իր պարտքը»: Թերթի հաղորդմամբ, ի նշան դժգոհության, Ֆրանսիայի դեսպանները ետ են կանչվում Բեռլինից և Մադրիդից [5]:

Թերթը իսպանական գահի թեկնածուներին բաժանում է 2 խմբի՝ նրանք, ովքեր կցանկանային կրել թագավորական թագը, միայն թե նրանց ոչ մի կերպ չի հաջողվում այդ, և երկրորդ՝ այնպիսիք, որոնց առաջարկում են թագը «միայն թե նոքա հաստատութեամբ մերժում են

այն»։ Վերջիններին շարքում թերթը նշում է նաև Լեոպոլդ Հոհենցոլերնի անունը [6]։

Թերթը չի սխալվում. Հոհենցոլերները, իսկապես, մեծ ցանկություն չունեին ընդունելու գահի առաջարկը։ Գահի անկայունությունը ապագայում ավելի շատ խնդիրներ էր խոստանում, քան օգուտներ։ Սակայն Բիսմարկի վճռական ջանքերի արդյունքում 1870թ. հուլիսի 2-ին Իսպանիայում Ֆրանսիայի դեսպանին զեկուցվեց Լեոպոլդի՝ թեկնածությունն ընդունելու մասին [4]։

Փարիզում հասարակական կարծիքը վրդովվեց, մամուլը բարձրաձայն բղավում էր Ֆրանսիայի արտաքին քաղաքական նոր պարտության սպառնալիքի մասին։ 1860-ականներին մի շարք դիվանագիտական ձախողումներից հետո Ֆրանսիայի ղեկավարությունը ստիպված եղավ հետևել հասարակական տրամադրություններին։ Թեև Իսպանիայի շուրջ ճգնաժամը ուղղակի վտանգ չէր ներկայացնում Ֆրանսիայի համար (Իսպանիան մեծ տերություն չէր, իսկ նրա բանակը թույլ էր), բայց Ֆրանսիայի ղեկավարությունը, հանուն իր հեղինակության, ստիպված էր ձգտել շտկել իրավիճակը՝ հոգուտ իրեն։ Հակառակ Նապոլեոնի՝ Բիսմարկը գոհ էր իրավիճակից. նա հարմար հնարավորություն ստացավ սաստկացնելու ճգնաժամը, որով կկարողանար Ֆրանսիային ներքաշել պատերազմի մեջ։

Իսպանիայի դեսպանը Փարիզում պաշտոնապես հայտնեց, որ Հոհենցոլերն իշխանը մերժեց իսպանական թագը։ «Պատերազմի երկիւղը անցաւ», - շուտով լավատեսորեն եզրակացնում է թերթը [6]։

Բանն այն է, որ 1870թ. ամռանը Նապոլեոն III-ի դեսպանը Վիլհելմ I-ից պահանջեց անձամբ մերժել Լեոպոլդի թեկնածությունը։ Չցանկանալով սրել Ֆրանսիայի հետ հակամարտությունը՝ Վիլհելմ I-ը շուտով անձամբ կապվեց Լեոպոլդի և նրա հոր՝ Անտոն Հոհենցոլերնի հետ և առաջարկեց հրաժարվել իսպանական գահի հավակնությունից։ Լեոպոլդը համաձայնվեց թագավորի փաստարկներին և հրաժարվեց թագից։ Պրուսիայի կանցլեր Բիսմարկին ամեննին դուր չեկավ Վիլհելմ I-ի որոշումը [2]։

Թվում էր, թե Եվրոպայի գլխին կախված վտանգը անցավ, սակայն, շատ չանցած, թերթը հայտնում է, որ ֆրանսիական կառավարությունը իրերի դրությունը զեկուցել է օրենսդիր մարմնին, այնուհետև հայտարարությունը վերջացրել ծանուցմամբ, որով Ֆրանսիան պատերազմ է հայտարարում Պրուսիային։ Թերթը նույն համարում հաստատում է իր տեղեկատվությունը՝ գրելով, թե դրանից 2 ժամ հետո

ստացել է մեկ այլ հեռագրալուր, որը հաստատում է՝ «պատերազմը յայտարարուած է» [7]:

Թերթի տեղեկատվությունը հավաստի է. Նապոլեոն III-ը ի վերջո տեղի տվեց կառավարությանը և ռազմատենչ հասարակական կարծիքին: 1870թ. հուլիսի 16-ին Ֆրանսիայի խորհրդարանը քվեարկեց Պրուսիայի դեմ պատերազմ հայտարարելու օգտին: 3 օր անց սկսվեցին ռազմական գործողություններ:

Նապոլեոն III-ի համար արտաքին պատերազմում հաջողությունը պետք է դառնար նաև ներքին դժվարությունները հաղթահարելու, ընդդիմությանը ջարդելու և սեփական դիրքերը ամրապնդելու հիմք:

Թերթի պատմելով՝ «Սաաբրիւքի մոտ հուլիսի 12-ին (24-ին) ճակատամարտ տեղի ունեցաւ»: Նրա տեղեկություններով՝ սպանվեցին 10 ֆրանսիացիներ, պրուսացիները գոհեր չունեն, պաշտոնական կերպով հայտնված է, որ Ֆրոսերի դիվիզիան ջարդել է 3 պրուսական դիվիզիա: «Սաբրիւքը այրվել է» [5]: Ըստ «Մեղու Հայաստանի»-ի, ֆրանսիացիները «չնայելով նոցա գերազանց զօրութեան, յետ մղվեցան արիութեամբ» [7]:

Թերթի հաղորդումը հավաստի է: Հուլիսի վերջին ֆրանսիական բանակը շարժվեց դեպի դժվարամատչելի Զաաբրյուքեն: Գեներալ Ֆրոսերի բանակը օգոստոսի 2-ին անցավ Գերմանիայի սահմանը: Պրուսացիները կատաղի դիմադրություն ցուցաբերեցին:

Պատերազմի սկզբից պարզ դարձավ, որ Ֆրանսիան պատրաստ չէ ակտիվ ռազմական գործողությունների, ռազմական տեխնիկայի ու պաշարների բացակայությունը և ղեկավարության ընդհանուր ցածր մակարդակը աշխատում էին ի վնաս ֆրանսիական բանակի: Ֆրանսիական բանակի մյուս թերությունը արագ մոբիլիզացիայի անկարողությունն էր: Հակառակ դրան՝ գերմանական զորքերը թվով անհամեմատ շատ էին, ավելի մարտունակ և տեխնիկապես հազեցած:

Թերթը այնուհետև Փարիզի պաշտոնաթերթից արտատպում է հուլիսի 23-ին Նապոլեոն կայսեր ուղերձը ֆրանսիական ազգին: Նա շեշտում է, որ ցանկացած ազգի պատմության մեջ կան վճռորոշ րոպեներ, երբ «սաստիկ գրգռած ազգային զգացմունքը ցոյց է տալիս անյաղթելի զօրութիւն»: Կայսրը վստահեցնում է՝ այժմ եկել է այդ րոպեն: 1866թ.-ից սկսած՝ Պրուսիան «աշխարհակալութեան հետևելով ամենքին իր դեմ հանեց» և Եվրոպան դարձրեց մի մեծ բանակ, ուր իշխում են անհանգստությունն ու անվստահությունը: Իր խոսքը կայսրը եզրափակում է՝ շեշտելով, որ Ֆրանսիայի նպատակն է «վերականգնելու

իրերի այնպիսի դրութիւն, որ կերաշխատրի ապահովութիւն, երկարատև ու արդիւնաւոր խաղաղութիւն» [9]:

Այնուհետ թերթը ներկայացնում է Փարիզից ստացված լուրերը, որոնք պնդում են, թէ մեծ ճակատամարտ է սպասվում Մեցի մոտ: Հրամայված է զորակոչել 30-40 տարեկան զենքի ունակ քաղաքացիներին, «պատրաստվում են զինաւորելու ամէն զէնք կրելու ընդունակ անձին»: Թերթի խոսքով՝ օգոստոսի 29-ին Բեռլինից հաղորդում են, թէ մարշալ Մակ-Մահոնի զորքը շախջախվել է Բոմոնի մոտ և ետ է մղվել Բելգիայի սահման: Ֆրանսիական բանակը ընկել է պրուսացիների ձեռքը: Հալածումը շարունակվել է մի քանի մղոն և «վերջացել գիշերվան մթութեան պատճառով» [10]:

Թերթը չի սխալվում. 1870թ. օգոստոսին մարշալ Բեգեյնի Հոենսի բանակը պրուսական I և II բանակների կողմից պաշարվեց Մեցում: Նապոլեոն III-ը և Մակմահոնը ձևավորել էին ֆրանսիական նոր Շալոնի բանակը, որպէսզի շարժվեն Մեց և պաշարումից ազատեն Բեգեյնին: Մակայն պրուսական զորքը՝ Մոլտկեի գլխավորությամբ, շարժվեց հյուսիս և կտրեց ֆրանսիացիների դիմացը Բոմոնում օգոստոսի 28-ին:

Թերթը շարունակում է, թէ օգոստոսի 26-ին՝ հինգշաբթի, Պրուսիայի թագավորը հեռագրով հայտնեց, որ մեծ ճակատամարտ է եղել Մեցի տակ, ինչի արդյունքում ֆրանսիական զորքը «խորտակուեցաւ և բանակի հաղորդակցութիւնը Փարիզի հետ կտրուեցաւ» [11]: Իսկ արդեն հոկտեմբերին Վիլիելմ թագավորը թագուհուն հղած հեռագրում հայտնում է, որ հոկտեմբերի 27-ին երեկոյան, Մեցը անձնատուր եղավ, 150.000 ֆրանսիացի զերվեց:

Տեղեկատվությունը հավաստի է, Մեցը Ֆրանսիայի բերդերից ամենաանառիկն էր: Որպէս կայազոր՝ ամրոցն ուներ մի ամբողջ բանակ: Հասկանալով պաշտպանների ուժը՝ գերմանական հրամանատարությունը հրաժարվեց բերդը գրոհելու և նույնիսկ այն հրետանիով գնդակոծելու փորձերից: Փոխարենը որդեգրեց ամրոցի ներսում գտնվողներին սովամահ անելու տակտիկան: Երբ պաշարները վերջապէս սպառվեցին թէ՛ զորքերի, թէ՛ բնակիչների շրջանում, հոկտեմբերի 27-ին կնքվեց կապիտուլյացիան: Հսկայական բանակով Մեց ամրոցի հանձնումը Ֆրանսիայում հոգեբանորեն չափազանց ծանր ընկալվեց:

Թերթը պատմում է, թէ Մեցի գրավումը Բեռլինի պաշտոնաթերթերը ներկայացնում են իբր ռազմավարական նշանակության հաջողություն, որովհետև «Մեցը Մոզելի գծի ամենանշանաւոր մասն է» [20]:

Այնուհետև թերթը մեջբերում է Բելգիայի «Ազատություն» լրագրի հոդվածը, ըստ որի՝ օգոստոսի 18-ին Մակ-Մահոնը քաշվեց Սեդան, որը «անշուշտ կ'ըջապատվի» [13]: Ըստ պաշտոնական լուրերի՝ կայսր Նապոլեոնը գերի է ընկել, իսկ մարշալ Մակ-Մահոնը «իր բոլոր զորքի հետ զինաթափուած է»:

Թերթը չի սխալվում. ֆրանսիական պատմագրությունը այս իրադարձությունը անվանում է «Սեդանի աղետ»: Այն տեղի ունեցավ 1870թ. սեպտեմբերի 1-ին և ավարտվեց ֆրանսիական զորավար Մակմահոնի ողջ բանակի գերեվարմամբ Նապոլեոն III կայսեր հետ միասին: Սեդանի մոտ կրած պարտության պաշտոնական լուրը Ֆրանսիայի մայրաքաղաքում ստացվեց սեպտեմբերի 3-ին:

Հաջորդիվ թերթը ներկայացնում է Պրուսիայի թագավորի՝ հեռագիրը՝ ուղղված թագուհուն, որտեղ կարդում ենք. «Սեդանի մոտ՝ Բելգիայի սահմանի վերայ, մենք դաշինք կապեցինք գեներալ Վիմպֆենի հետ, որ վիրավորված մարշալ Մակ-Մահոնի պաշտոնն է կատարում»: Ըստ պայմանի՝ Սեդանի ֆրանսիական զորքը անձնատուր էր լինելու որպես գերիներ: Թագավորը հայտնում է, թե Նապոլեոն կայսրը իրեն անձամբ հաղորդել է, որ իշխանությունը փոխանցում է «Փարիզի վարչութեանը», իսկ թագավորը պիտի որոշի իր համար բնակության վայր: Այսպես, 80.000 ֆրանսիացի անձնատուր եղավ: Նապոլեոնը նամակ գրեց Պրուսիայի թագավորին, որում ասում էր, թե քանի որ իրեն «չէ յաջողել մեռանել, ուստի և ինքը իր սուրը յանձնում է թագաւորին» [13]:

Թերթը ներկայացնում է ֆրանսիական “Journal des Debats” լրագրի կոչը. «Ֆրանսիայում պետք է լռեն ամեն քաղաքական տարաձայնութիւնք, պետք է թշնամու հայեացքին չներկայացնենք այլ ինչ, բայց եթե ոչ միասնութեան տեսարան» [10]:

Իսկ “Constitutional” լրագիրը պնդում է, թե Փարիզի անկարգությունների հետևում թաքնված են Բիսմարկի փողերը և մեծ է Բիսմարկի ազդեցությունը «Փարիզի անկարգութեանց մէջ» [14]:

Այնուհետև թերթը մանրամասնում է՝ անցյալ շաբաթ սաստիկ աղմուկ բարձրացավ Փարիզում: Թերթի պատմելով՝ աղմուկից հետո պարզվեց, որ «յայտնած է հասարակապետութիւն, կազմվել է ժամանակաւոր կառավարութիւն Տրոշիւից և այլ անձինքներից» [14]: Իսկ գերված Նապոլեոն կայսեր բնակության վայրը որոշվել է Հեսսեն-Կասսելը: Թերթը գրում է, թե դրանից հետո Ֆրանսիայի արտգործ նախարար Ժյուլ Ֆավրը շրջաբերական տարածեց, որում հարցադրում

էր կատարում. «Թագաւորական ցեղը ընկավ, ոտքի կ'կանգնի ազատ Ֆրանսիան, ցանկանում է արդեօք պատերազմը շարունակել Պրուսիայի թագաւորը...մենք չենք տալ ոչ մի քար մեր բերդերից» [14]:

Թերթի տեղեկատվությունը հավաստի է: Երբ Նապոլեոն III-ի և ավելի քան 80.000 զինվորի գերեվարման մասին լուրերը հասան Փարիզ, մայրաքաղաքում ժողովրդական ապստամբություն տեղի ունեցավ. Փարիզում տիրող տրամադրությունները արտացոլված են տեղական մամուլում: Թերթը մեջբերում է “Centro Genche” լրագրի հոդվածը, որտեղ կարդում ենք. «Թող պրուսացիք գերեն կայսրին, մենք կամա տալիս ենք նրան իրանց»: Արդյունքում Ֆրանսիայում ավարտվեց երկրորդ կայսրության ժամանակաշրջանը: Գեներալներ Տրոշուի, Ֆավրի և Ժամբետի գլխավորությամբ Փարիզում սեպտեմբերի 4-ին կազմված նոր կառավարությունը իրեն անվանեց Ազգային պաշտպանության կառավարություն: Ազգային պաշտպանության կառավարությունը Գերմանիային խաղաղություն առաջարկեց, սակայն հաղթանակած թշնամու անհազ պահանջների պատճառով համաձայնությունը չկայացավ:

Թերթը շուտով ներկայացնում է Բելգիայի «Ազատություն» լրագրի տեղեկությունը, թե պրուսական բանակը Սեդանից շարժվեց դեպի Փարիզ: Ապա տպագրում է իրեն հասած հեռագրալուրերը, ըստ որոնց՝ իրերի դրությունը մայրաքաղաքում «օրից օր աւելի անյուսալի է դառնում»: Շատերը մտածում են, որ դեռևս վտանգը այդքան մոտ չէ, որովհետև կայսրուհին քաղաքում է, իսկ մյուսները ամեն օր «քանիցս անգամ գնում են նայելու, թե արդեօք Տիլրիի վերայ ծածանվում է եռագոյն դրոշակը» [13]: Թերթի պատկերավոր նկարագրությամբ՝ փողոցներում շարունակվում են թափառել մարդիկ՝ պահանջելով զենք «միայն թե ոչ սահման երթալու համար»: Իսկ ամենավերջում գրում է, թե Փարիզից եկած լուրերը ցույց են տալիս, որ այստեղ ոչ ոք չի համարձակվում խոսել խաղաղությունից «առանց տերութեան դաւաճան անունը ստանալու» [20]:

Թերթի հավաստի հաղորդմամբ՝ սեպտեմբերի վերջին գերմանական զորքի մեծ մասը շարժվում է Փարիզ: Ֆրանսիական դրամատունը խնդրել է «Փարիզից հեռանալու թույլտվութիւն» [20]: Հղում անելով “Morning Post”-ին՝ թերթը հայտնում է, որ Փարիզի պաշտպանների թիվը 500.000 է:

Թերթի տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը: Պրուսական զորքերը սկսեցին Փարիզի պաշարումը 1870թ.

սեպտեմբերի 19-ին: Գերմանացիները սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Ֆրանսիա տեղափոխեցին մոտ 700.000-անոց բանակ: Նույն ժամանակ Փարիզում կարելի էր հաշվել մինչև 150 հազար զինվոր: Բացի այդ, 20-40 տարեկան մինչև 500 հազար մարդ հանդիսանում էր մոբիլիզացիոն ռեսուրս նոր կորպուսների ձևավորման համար: Այս իմպրովիզացիոն բանակը կանոնավոր զորքերի դեմ պայքարում հաջողության քիչ շանսեր ուներ: Այնուամենայնիվ, ազգային պաշտպանության կառավարությունը որոշեց շարունակել պայքարը մինչև վերջ:

«Մեղու Հայաստանի» թերթը Լոնդոնի թերթերից արտատպում է Վիկտոր Հյուգոյի նամակը, որում նա մեղադրում էր գերմանացիներին՝ այդ «մտածողների ազգին» վանդալներին հավասարվելու մեջ: Թերթը ներկայացնում է նաև Հյուգոյի մեկ այլ հոդված, որտեղ նա դիմում է ֆրանսիացիներին՝ ասելով, թե պրուսացիները որոշել են, որ Ֆրանսիան Գերմանիա է, որ «Վուլտերը աւելորդ է, երբ Բիսմարքը կայ»: Նրանց հարձակումը ուղղված է Փարիզի և աշխարհի դեմ: «Աշխարհքը կ'զարմանայ տեսնելով, թե ինչպես փառաւորապէս գիտէ Փարիզը մեռանէլ, Փարիզ, դու պսակեցիր Ստրասբուրգի արձանը ծաղիկներով, իսկ պատմութիւնը քեզ կպսակէ աստղերով», - եզրափակում է Հյուգոն [15]:

Թերթը տպագրում է նաև Նապոլեոնի սեպտեմբերի 23-ի նամակը՝ ուղղված Պրուսիայի թագավորին. «Նապոլեոնը ներում է իր ցեղի զրկումն գահից, եթե միայն սրանով Ֆրանսիան ստանում է աւելի կարելիութիւն աքսորելու թշնամուն»: Գերված կայսրը նաև զգուշացնում է, որ պատերազմի շարունակումը ավելի վնասաբեր է լինելու Գերմանիայի, քան Ֆրանսիայի համար [13]:

Շուտով, համադրելով իրեն հասած տարաբնույթ տեղեկությունները, թերթը կանխատեսում է. «Թշնամին էսօր կամ եգուց պետք է նուաճէ Փարիզն էլ սովով»: Ապա գրում, որ ի սկզբանե ինքը ամեն բան հաղորդեց առանց «խորամանկութեան», բայց այն ըռպէից, երբ «ազատուած Ֆրանսիայի դէմ վերկացան ամբոխները և Եւրոպային նոր ձև տուողները», այդ պահից թերթի խմբագրակազմի համակրանքը ուղղվեց դեպի ֆրանսիական ազգը [14]:

Ներքևում թերթը գրում է, որ այս ամենի հետևանքը գուշակելը դժվար չէ: Եթե Գերմանիան հաղթի, «անհնարին կ'լինի մի քանի տարի հանգիստ ապրել որևիցէ տեղում, ուր ներկայ կ'գտնվին մի քանի առողջ գերմանացիք», իսկ եթե Փարիզի պատերի տակ նրանց հարված հասցվի,

ամբողջ երկիրը ոտքի կկանգնի «ամեն կին, ամեն երեխա կզինաւորի և այն ժամանակ շատ քիչ գերմանացի իր հայրենիքը կ'տեսնի»: Այսինքն՝ թերթը ի վերջո խոսում է կողմերից մեկի նկատմամբ իր համակրանքի մասին:

Սեպտեմբերին թերթը ներկայացնում է ֆրանսիական լրագրերում տպագրված Ժյուլ Ֆավրի հաշվետվությունը: Նա նախ ընդգծում է, որ եվրոպական արքունիքների համակրանքը ուղղվել է դեպի իրենց, ուստի «արդեն շատ կառավարութիւններ ճանաչեցին հասարակապետութիւնը»: Ապա խոսում է Բիսմարկի հետ հանդիպումից: Ժյուլ Ֆավրը ընդգծում է, որ Ֆրանսիան վճռական է և չի ընդունի խաղաղություն, որը կարճատև է և անհուսալի: Նա հայտնում է, որ հանդիպման ընթացքում Բիսմարկը մտավախություն է հայտնել, թե Ֆրանսիան չի մոռանա Մեդանը, ինչպես չմոռացավ Վաթեռլոոն, և կհարձակվի Գերմանիայի վրա: Իսկ սեպտեմբերի 20-ին ներկայացրել է իր պայմանները, ըստ որոնց՝ պրուսացիք պիտի տիրեն Ստրասբուրգին, Տուրին և Ֆալսբուրգին: Բիսմարկը պահանջել է նաև, որ Ստրասբուրգի գորքը անձնատուր լինի: Այդ ժամանակ ես «գործութիւնս հատած վեր կացայ և հրաժարական տուի կոմս Բիսմարքին», - գրում է Ժյուլ Ֆավրը և եզրափակում. «Ես որոնում էի խաղաղութիւն, բայց հանդիպեցայ անդրդուելի կամքի, որ ձգտում էր դեպի աշխարհակալութիւն» [17]:

Թերթի հրապարակումը հավաստի է: Սեպտեմբերի 18-ին Բիսմարկը հանդիպեց Ֆավրի հետ Շատո դը Ֆերիեում և պահանջեց Ֆրանսիայի սահմանամերձ հատվածը, ներառյալ Ստրասբուրգը, Էլզասը ու Մոզել դեպարտամենտի մեծ մասը Լոթարինգիայում՝ մայրաքաղաք Մեցով: Սեպտեմբերի 21-ին Ժյուլ Ֆավրը Բիսմարկին գրեց նրա պայմանները մերժելու մասին:

Թերթը, ուսումնասիրելով Փարիզից իրեն հասած լուրերը, հաղորդում է, որ մայրաքաղաքում եղած մի պաշարը կբավականացնի մինչև դեկտեմբեր, «աղած միս էլ կայ հինգ շաբաթվան համար», ապա հավելում է, որ Ազգային պաշտպանության կառավարությունը Բորդոյից «ամեն օր Փարիզ է խրկում մի օդապարիկ իր հրամաններով ու կարգադրութիւններով» [18]:

1871թ. տարեսկզբի համարում թերթը հավաստի հաղորդում է տալիս պաշարված մայրաքաղաքից «Փարիզից եղաւ զօրեղ յարձակումն, որ պրուսացիք 'ի դերն հանեցին» [21]:

1871թ. հունվարի 19-ին, իսկապես, ֆրանսիացիները կատարեցին շրջափակումը ճեղքելու վերջին փորձը, որն ավարտվեց լիակատար ձախողմամբ և ավելի քան 4 հազար զոհով:

Թերթը հաղորդում է Լոնդոնից ստացված լուրերը, համաձայն որոնց՝ Փարիզը «անձնատուր է եղաւ»: Ապա հայտնում է Վերսալից եկած հավաստի տեղեկությունները, ըստ որոնց՝ «Ժիւլ Ֆավրը և այլ անձինք զինադադարման դաշն կապեցին, որ վերաբերում է բոլոր Ֆրանսիային: Այստեղ լսվում են թմբուկների և ամբոխի ձայներ» [22]:

Տեղեկատվությունը հավաստի է. հունվարի 28-ին կողմերի միջև զինադադար կնքվեց 21 օրով, իսկ սննդամթերքի և վառելիքի պաշարների սպառումից հետո Փարիզի կայագորը կապիտուլյացիայի ենթարկվեց:

Ռազմական գործողություններին զուգընթաց ոչ պակաս նշանակալի իրադարձություններ էին տեղի ունենում նաև թիկունքում, որոնք չեն վրիպել թերթի աչքից: Մասնավորապես, նայելով Վերսալից հասած լուրերին՝ թերթը պատմում է, որ Վիլիելմ թագավորը հունվարի 18-ից կայսերական տիտղոս ընդունեց և ուղերձ հղեց ժողովրդին, որում նշում էր, որ այդ օրը անմոռանալի է իր համար, որովհետև գերմանական ազգի «քաջութիւնն ու տոկունութիւնն շտապեցրին Գերմանիայի միութիւնը» [22]:

Տեղեկությունը հավաստի է. 1871թ. հունվարի 18-ին Վերսալի հայելապատ դահլիճում հայտարարվեց Գերմանական կայսրության ստեղծման մասին: Միավորված Գերմանական կայսրության ստեղծումը փոխեց ուժերի դասավորվածությունը Եվրոպայում: Գերմանիան դարձավ հիմնական տերությունը մայրցամաքային Եվրոպայում՝ ունենալով ամենապրոֆեսիոնալ բանակը:

Վերջում թերթը ներկայացնում է Վերսալից հասած պաշտոնական լուրերը, որոնց համաձայն՝ «խաղաղութեան նախընթաց պայմանները ստորագրուած են»: Տրվում են Էլզասը (բացի Բելֆորից), Լոթարինգիայի գերմանական մասը և Մեցը: Վճարվում է հինգ միլիարդ ֆրանկ, իսկ «մինչև այս գումարի լրի վճարումը Ֆրանսիայի մի քանի մասերը բռնաձ կունենան գերմանացիք» [23]:

Ինչպես պատերազմի ընթացքի, այնպես էլ դրա ավարտի մասին հաղորդումներում «Մեղու Հայաստանին» չի վրիպում: Խաղաղության վերջնական պայմանագիրը ստորագրվեց 1871թ. մայիսի 10-ին Ֆրանկֆուրտում: Ֆրանսիան կորցրեց Էլզասն ու Լոթարինգիան, ինչպես նաև պարտավորվեց վճարել 5 միլիարդ ֆրանկ փոխհատուցում: Մինչև

փոխհատուցման վճարումը գերմանական զորքերը մնալու էին Ֆրանսիայում, իսկ Ֆրանսիան պարտավոր էր հոգալ դրանց պահման ծախսերը:

Եզրակացություն: Այսպիսով, Պրուսիան պատերազմից դուրս եկավ որպես գերտերություն՝ ստեղծելով միասնական Գերմանական կայսրություն: Եվրոպայում փոխվեց ուժերի դասավորությունը, ինչը, բնական է, ապագայում ծնելու էր նոր հակամարտություններ: Եվրոպան սկսեց բաժանվել երկու հակադիր ճամբարների, որոնք իրենց վերջնական ձևը ստացան 20-րդ դարի առաջին տասնամյակում: Ինչ վերաբերվում է «Մեղու Հայաստանի» թերթին, ապա այն ամենայն մանրամասնությամբ իր ընթերցողին ներկայացրեց այս հակամարտությունը՝ հնարավորինս ցուցաբերելով օբյեկտիվություն, ինչի ապացույցը իր համարներից մեկում անգլիական «Times» լրագրի հասցեին հանդիմանությունն է, թե այն «կողմնակցութիւն ունի դէպի ֆրանսիացիները»:

ОТЗЫВ ФРАНКО-ПРУССКОЙ ВОЙНЫ В ГАЗЕТЕ “МЕГУ АЯСТАНИ”

Айрапетян М. Р.

Во второй половине XIXв. Пруссия стремилась объединить все немецкие земли в свои владения. Франция в свою очередь пыталась исключить создание единой и сильной Германии. Соперничество привело к франко-прусской войне, которая закончилась возрастанием роли Пруссии в Европе. Армяно-тифлисская клерикально-консервативная газета “Мегу Аястани” подробно и объективно отразила тему.

Ключевые слова: война, император, конфликт, Эльзас, Лотарингия, договор.

THE REACTION OF THE FRANCO-PRUSSIAN WAR IN “MEGHU ARMENIA” NEWSPAPER

Hayrapetyan M. R.

In the second half of the 19th century, Prussia sought to unite all German lands under his rule. France, in turn, tried to exclude the creation of a united and strong Germany. This competition led to the Franco-Prussian War in 1870, which ended with an unprecedented increase in the role of Prussia in Europe. Tiflis-Armenian conservative weekly ‘Meghu Armenia’ has addressed the topic in detail and objectively.

Keywords: war, emperor, conflict, Elzas, Lotharingen, contract.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Власов Н. А. Прусский блицкриг против Франции. М., 1870 г., стр. 58.
2. Мольтке Г. Ф. История германо-французской войны 1870-1871 гг., М. 1937, стр. 275-276.
3. Свечин А. А. Франко-германская война 1870-1871 гг., М. 1928, т. II, стр. 154.
4. Тарле Е. В. История дипломатии, М., 1959, т. II стр. 743-744.
5. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1870, 4 հուլիս, թիվ 17:
6. «Մեղու Հայաստանի», 1870թ., 11 հուլիս, թիվ 18:
7. «Մեղու Հայաստանի», 1870թ., 18 հուլիս, թիվ 19:
8. «Մեղու Հայաստանի», 1870թ., 25 հուլիս, թիվ 20:
9. «Մեղու Հայաստանի», 1870թ., 1 օգոստոս, թիվ 21:
10. «Մեղու Հայաստանի», 1870թ., 8 օգոստոս, թիվ 22:
11. «Մեղու Հայաստանի», 1870թ., 13 օգոստոս, թիվ 23:
12. «Մեղու Հայաստանի», 1870թ., 22 օգոստոս, թիվ 24:
13. «Մեղու Հայաստանի», 1870թ., 29 օգոստոս, թիվ 25:
14. «Մեղու Հայաստանի», 1870թ., 12 սեպտեմբեր, թիվ 27:
15. «Մեղու Հայաստանի», 1870թ., 19 սեպտեմբեր, թիվ 28:
16. «Մեղու Հայաստանի», 1870թ., 28 սեպտեմբեր, թիվ 29:
17. «Մեղու Հայաստանի», 1870թ., 3 հոկտեմբեր, թիվ 30:
18. «Մեղու Հայաստանի», 1870թ., 17 հոկտեմբեր, թիվ 32:
19. «Մեղու Հայաստանի», 1870թ., 24 հոկտեմբեր, թիվ 33:
20. «Մեղու Հայաստանի», 1870թ., 31 հոկտեմբեր, թիվ 34:
21. «Մեղու Հայաստանի», 1871թ., 16 հունվար, թիվ 2:
22. «Մեղու Հայաստանի», 1871թ., 30 հունվար, թիվ 4:
23. «Մեղու Հայաստանի», 1871թ., 20 փետրվար, թիվ 7:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Հայրապետյան Մ. Ռ. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ՎՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Պատմություն

Էլ. փոստ՝ meline.hayrapetyan.2000@gmail.com

Գիտական ղեկավար՝ Մովսիսյան Ֆ., պատմ. գիտ. դոկ., պրոֆեսոր

Ստացվել է՝ 10.11.2022
Գրախոսվել է՝ 15.12.2022

**«ԿԱՌԼՈՍՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԱՐՁԱԳԱՆՔԸ «ԵՎՐՈՊԱ»
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ
Զիլավյան Գ. Գ.**

1846թ. կառլոսականները Կատալոնիայում ապստամբություն բարձրացրին, երբ կոմս Մոնտեմոլինը իրեն հռչակեց Իսպանիայի թագավոր Կառլոս VI և իր կողմնակիցներին կոչ արեց զինվել: Այդպես սկսվեց իսպանական գահակալման համար նոր պատերազմ, որը պատմագրության մեջ հայտնի է «կառլոսյան երկրորդ պատերազմ» և «Ռ. Կաբրերայի ապստամբություն» անուններով: Այս իրադարձությունը աննկատ չի մնացել «Եվրոպա» պարբերականի ուշադրությունից: Իսպանիայի ներքաղաքական վիճակին անդրադարձած հայ պարբերականը բավականին մանրամասն է ներկայացնում ծագած հերթական ապստամբությունը՝ երբեմն կատարելով որոշ դեպքերի վերլուծություն ու եզրահանգում: Իսպանիայի խրթին ու խառնակ իրադարձությունները պարբերականը լուսաբանում է՝ օգտվելով պաշտոնական, կիսապաշտոնական ու անկախ լրագրերի տեղեկատվությունից: «Եվրոպա»-ի լրատվությունը «կառլոսյան երկրորդ պատերազմի» մասին, ընդհանուր առմամբ, հավաստի է և օբյեկտիվ:

Բանալի բռներ. Իսպանիա, կառլոսականներ, Իզաբելլա II, ապստամբություն, «կառլոսյան երկրորդ պատերազմ», Ռ. Կաբրերա:

Նախաբան: 1846թ. Իսպանիայում կառլոսականները ակտիվացան, երբ հոկտեմբերի 10-ին Իզաբելլա II-ը ամուսնացավ իր հորեղբորորդու՝ դոն Ֆրանսիսկոյի հետ: Այս ամուսնությունը ոչնչացրեց դոն Կառլոսի իշխանության օրինական հասանելիության ծրագրերը, քանզի նրա որդին՝ կոմս դե Մոնտեմոլինը չամուսնացավ Իզաբելլայի հետ և չէր կարող գահակալել: 1846թ. կառլոսականները Կատալոնիայում ապստամբություն բարձրացրին, երբ կոմս Մոնտեմոլինը իրեն հռչակեց Իսպանիայի թագավոր Կառլոս VI և իր կողմնակիցներին կոչ արեց զինվել: Այդպես սկսվեց իսպանական գահակալման համար նոր պատերազմ, որը եվրոպական պատմագրության մեջ հայտնի է որպես «կառլոսյան երկրորդ պատերազմ» (1846–1848թթ.):

Կառլոսյան բանակը թեպետ բազմամարդ չէր և հիմնականում տեղային կռիվներ էր մղում, այնուամենայնիվ կառավարական 42.000

բանակը երկու տարի շարունակ չէր կարողանում կոտրել ապստամբների դիմադրությունը [1]:

Նպատակ և արդիականություն: Ներկայացնել «Եվրոպա» պարբերականում «կառլոսյան երկրորդ պատերազմի» արձագանքը, ցույց տալ թերթի վերաբերմունքը: Թեման արդիական է այնքանով, որ այն այսօր էլ գտնվում է պատմաբանների ուշադրության կենտրոնում:

Հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը: 1846-1848թթ. ընթացած իսպանական գահակալման համար պայքարին բացի «Եվրոպա»-ից, անդրադարձել են այլ արևմտահայ թերթեր՝ «Ազգասեր», «Արշալույս արարատյան», «Հայաստան», այս թեման իրենց աշխատություններում ներկայացրել են շատ ուսումնասիրողներ՝ *История Испании. От войны за испанское наследство до начала XXI века. Ред. колл. О. В. Волосюк и др, История XIX века. Под ред. Лависса и Рамбо: Բայց «Եվրոպա» պարբերականի դիրքորոշումը «կառլոսյան երկրորդ պատերազմի» վերաբերյալ ուսումնասիրված և մեկնաբանված չէ:*

Իսպանիայի ներքաղաքական վիճակին անդրադարձած «Եվրոպա» պարբերականը պատմում է, որ 1847թ. մարտին Իզաբելլա թագուհու դեմ մահափորձ կատարվեց: Պարբերականի տեղեկություններով՝ թագուհու վրա կրակող Դե լա Ռիվան ձերբակալվել է: Դատարանում հարցաքննությունից պարզվել է, որ Իսպանիայում տարածված գաղտնի ընկերություն է գործում, որի նպատակն է տապալել միապետական կառավարությունը և վերացնել քրիստոնեական կրոնը: «Աս չար ընկերութեան գլուխը եղեր է թագաւորին հայրը և թագուհոյն հօրեղբայր տոն Ֆրանչեսգոյ տէ Բաւլա» [2]: «Եվրոպա»-ն 1847թ. հունիսի 13-ին Փարիզից ստացած լրագրերով հայտնում է, որ «Կատալոնիայի լուրերը շատ ձախորդ են»: Ժերոնա գավառի բնակչության մեջ «սաստիկ ապստամբութեան հոգի մը կը տեսնուի»: Ըստ պարբերականի՝ Ֆիկուերասում կա ընդհանուր ապստամբության վախ: Անգամ Բարսելոնայում դոն Կառլոսի կողմնակիցներ են նկատվում, որոնք կապ ունեն դրսի ապստամբների հետ: Գեներալ Մանուել Պավիայի հրամանով 12 հոգի ձերբակալվել ու բանտարկվել են, բայց դոն Կառլոսի կողմնակիցներին չեն վախեցնում մյուս «ապստամբների ողորմելի վիճակը», որոնք ներկայումս «անանկ յանդգներ են», որ Իզաբելլա թագուհու գործին մի քանի տեղ ծանր պարտության են մատնել: «Եվրոպա»-ի գնահատմամբ բոլոր գյուղացիները կառուսականների կողմնակիցներն են, որոնց գործակալներն ամենուրեք մարդկանց զրգում են՝ մատնացույց անելով նրանց թշվառ վիճակը: Ըստ

պարբերականի՝ սրանից բացի ապստամբելու «ուրիշ գրգիռներ կան»՝ ապրուստի ու վաստակի պակասությունը, սաստիկ երաշտի պատճառով բերքի սակավությունը, տուրքերի ծանրությունը: Պարբերականը հարց է բարձրացնում, թե Կատալոնիայում գտնվող թագավորական 40 հազար զորքը, եթե կառլոսականների 2 հազար կողմնակիցների «անկարգութիւնները հիմա կարող չէ խափանել», ապա ի՞նչ կլինի իշխանությունների հետ «երբ որ բոլոր բազմութիւնը ոտք ելլելու ըլլայ» [3]: «Եվրոպա»-ն գրում է, որ կոմս Մոնտեմոլինի կողմնակիցները որոշ ժամանակ անց հայտնվելու են Իսպանիայում: Նրանցից յուրաքանչյուրը գնալու է իր ծանոթ գավառը և այնտեղ ոտքի է հանելու բնակչությանը [4]: 1847թ. հունիսի 19-ին «Եվրոպա»-ն հայտնում է Մոնտեբրեյի լեռներում 80 մոնտեմոլինականների և թագավորական զորքի բախման մասին, որը, կորուստներ տալով, նահանջել է [5]: «Եվրոպա»-ն, ըստ Մադրիդից ստացած լուրերի, տեղեկացնում է, որ կոմս Մոնտեմոլինի կողմնակիցները Բուրգոս գավառում ապստամբության նախապատրաստություններ են տեսնում, որոնց առաջնորդում է գնդապետ Էլ Էստուդիանտեն: Կատալոնիայի Ֆենելլոսա քաղաքում դավադրություն է բացահայտվել, որի մասնակիցները մտադրություն են ունեցել թունավորել քաղաքում գտնվող զինվորներին: Հունիսի 22-ին Կատալոնիայում թագուհու զորքը բախվել է 250 կառլոսականների հետ, որոնցից 21-ը սպանվել են, մեկը գերի է ընկել, իսկ թագուհու զորքը տվել է 7 սպանված և 14 վիրավոր [6]: Պրուսական «Ընդհանուր լրագրի» տեղեկություններով՝ «Եվրոպա»-ն գրում է, որ կառլոսական Էստուդիանտե դե Վիլասուրի հրամանատարության տակ գտնվող փոքրիկ գնդերի վրա հարձակվել են թագուհու զորքերը, բայց չեն կարողացել մեծ վնաս պատճառել: Ըստ պարբերականի՝ ապստամբական նախապատրաստություններ են ընթանում նաև Բուրգոս, Վալենսիա քաղաքներում: Հունիսի 29-ի լուրերը ծանուցում են, որ կառլոսական զենեքալ Արրոյոն միավորվել է գնդապետ Էլ Էստուդիանտեսի հետ, որոնք ունեն 110 հեծյալ: 1847թ. հուլիսի 6-ի գիշերը երկու գունդ հետևակ և զորագունդ հեծելազոր Ֆիգուերասից շարժվել է կառլոսականների գնդերի վրա: Թեպետ Կատալոնիայում 24 հազար թագավորական զորք է կուտակված, բայց այն բավարար չէ բոլոր կողմերը պաշտպանելու համար: Կառլոսականները հույս ունեն հուլիսի 15-ին իրականացվող զինվորագրման ժամանակ երիտասարդների մեծ մասին իրենց կողմը գրավելու: «Եվրոպա»-ն գրում է, որ հուլիսի 2-ին իր բանակով Մոնբլանում գտնվող զենեքալ Մանուել Պավիան Տարրակա

գավառի բնակիչներին ոգևորում է: Գեներալ Ս. Պավլիան, հուլիսի 2-ին իր լրտեսներից տեղեկանալով, որ կառլոսականները հավաքվել են Մոնթբլանի մոտակայքում, շտապեց ժամ առաջ նրանց մոտ գնալ ու փակել ճանապարհը: Կառլոսականների գնդերն ամենուրեք ավերածություններ են պատճառում, հրդեհում, սպառնում կառավարության անդամներին: Հուլիսի 12-ին Նավարրայից և Բասկոնիայի գավառներից եկած նամակները հայտնում են, որ մոնտեմոլինականները նոր խորհուրդ ունեն, իսկ նրանց միաբանության նոր կենտրոնը Պամպլոնան է: Չորքի համար նախատեսված գումարը գտնվում է Բայոնում, որտեղ պատրաստ են կռիվ սկսելու [7]: Օգոստոսի 3-ին Կատալոնիայի սահմանին՝ Վետրետասի կողմերը, տեղի ունեցավ կռիվ, որի մասին «Եվրոպա»-ն վերապատմում է պրուսական «Ընդհանուր լրագիր» թերթից: Թերթը գրում է, որ կառլոսականների հրամանատար դոն Մանուել Հերրարան, որին սխալմամբ դոն Էրրերոն են անվանում, այդ կռվում գերի ընկավ: Չորս հարյուր կառլոսականներ դուրս են եկել թագավորական զորքի դեմ: Նրանց հրամանատարը Վալենսիայի գնդի սպաներից դոն Ֆրանչեսկո դե Ցապալան էր: Սարագոսայի բնակչությունը վախենում է, որ կառլոսական զեներալ Էլ Սարրատուրը մոտ օրերս կարող է նորից Իսպանիա մտնել: «Եվրոպա»-ն հայտնում է, որ իրականում այս մարդը վաղուց մահացել է: Մեկ ուրիշ կառլոսական, ում Սասարա են անվանում, մոտ օրերս փախել է Սարագոսա: Սասարան ժամանակին զեներալ Ռամոն Կարրերայի հրամանատարության տակ է կռվել և «իր արիության համար զարլիսդներուն մեջ մեծ անուն ունի»: [8] «Եվրոպան» պատմում է, որ օգոստոսի 21-ին Վինկենտիոսի կողմերում կառլոսական մի գունդ երևաց, որը Կառլոս VI-ի անունից ժողովրդին հորդորեց ոտքի ելնել: Այլ վայրերում էլ կառլոսականների զինված գնդեր հայտնվեցին, որոնցից մեկը Լա Մելմայում պարտություն կրեց ու ցրվեց: Այժմ թագավորական զորքի թիվն այստեղ ավելացել է 9 հազարով և հասել 30 հազարի [9]: Պրուսական թղթակիցները հաղորդում են, որ թագավորական զորքերի և կառլոսականների միջև Պերկա գյուղի մոտ սաստիկ կռիվ է եղել: Կառլոսականները մեկ այլ տեղ հանկարծակի հարձակվել են թագավորական զորքի վրա և սպանել 200 հոգու: «Եվրոպա»-ի պատմելով՝ կառլոսականները գնալով հզորանում են, և վախ կա, որ Իսպանիայի մեջ քաղաքական կռիվը նորից կսկսվի [10]: Կատալոնիայում տիրող վիճակի կապակցությամբ «Եվրոպա»-ն գրում է, որ կառլոսականների պայքարն ավարտվելու վրա է: Պարբերականը

այդպես ենթադրում է՝ ելնելով գեներալ Մ. Պավիայի ունեցած հաջողություններից, ով, ստացված լուրերով, կառուսականներին ամեն տեղ ցրել ու ջախջախել է: Գեներալը կարգադրել է բանտարկել կամ մահվան դատապարտել բոլոր այն կառուսականներին, ում ձեռքին զենք կտեսնեն [11]:

1848թ. ֆրանսիական հեղափոխության ազդեցության տակ իսպանական քաղաքականության մեջ ակտիվացան ռեպրեսիվ միտումները: Մարտին Իսպանիայում ներքաղաքական վիճակը կրկին լարվեց կորտեսների ցրումից հետո: Դա պատճառ դարձավ մարտի 26-ին Մադրիդում ապստամբության բռնկման համար, որն ընդգրկեց նաև Բարսելոնը, Սարագոսսան, Սևիլիան և այլ քաղաքներ: Այս իրադարձությունները չվրիպեցին «Եվրոպա» պարբերականի ուշադրությունից: Մարտի 27-ին Մադրիդում ապստամբություն սկսվեց, որի մասին կառավարությունը գիտեր ու անհրաժեշտ նախապատրաստություններ էր տեսել: Մարտի 27-ի օրը «հանդարտութեամբ ու խաղաղ անցավ», բայց երեկոյան զինված գյուղացիները խմբերով մտան մայրաքաղաքի հրապարակները: Նրանք բացականչում էին՝ կեցցե՛ ազատությունը, կեցցե՛ սահմանադրությունը, կեցցե՛ հանրապետությունը, կեցցե՛ Կառլոս Հինգերորդը: Կառավարությունը ապստամբների դեմ զորք դուրս բերեց: Ապստամբները համախմբեցին իրենց ուժերը և Պուերտա դել Սոլում հարձակվեցին զինվորների վրա, բայց հարկադրված նահանջեցին, պատնեշներ կառուցեցին և կռվեցին զորքի դեմ: Զինվորները պատնեշները գրավեցին ու «ապստամբները վորնտեցին»: «Եվրոպա»-ն բավական հավաստի է ներկայացնում մարտի 26-ի ապստամբությունը Մադրիդում, որը գլխավորում էր գնդապետ Գանդարան: Ապստամբները Սուրբ Հերոնիմոսի ճանապարհի վրա բախվեցին զինվորների հետ և տվեցին 18 սպանված: Երեկոյան ժամը 9-ին դե լա Չեպատա հրապարակում ժողովուրդը կրկին ընդհարվեց զինվորների հետ: Երկու կողմից շատերը վիրավորվեցին և մահացան, բայց ի վերջո զինվորները հաղթեցին: Ապստամբներից 300 հոգի բռնվեցին ու «ապստամբութեան գլխավորները գրեթե ամենն այլ ձեռք ինկան»: Ապստամբների նպատակը հայտնի չէ: Ըստ պարբերականի՝ ոմանք ասում են, որ ապստամբության նպատակը չի եղել կառավարությունը փոխելը, այլ «քաղաքը աւար առնուլ»: Մադրիդի զորքերի գլխավոր հրամանատարը քաղաքը պաշարողական վիճակի մեջ հայտարարեց ու գյուղացիներին զգուշացրեց զենքը հանձնել և խոստացավ զենք ունեցողներին հանձնել զինվորական դատարանին:

Ապստամբները հույս ունեին, որ «գորքեն շատերը իրենց կողմը կ'անցնին, բայց խաբուեցան» [12]: «Եվրոպա»-ն նկատում է, որ Մադրիդում վիճակը միանգամից չկայունացավ: Մադրիդի «խաղաղությունը նորեն վրդովեր է կառավարության անխոհեմ՝ հրամանովը», որը ուստիկանության միջոցով տեղի համալսարանը փակել է և ուսանողների մուտքն արգելել: Բարսելոնայում նույնպես «խռովություն մը ելեր է: Համալսարանին մէջ կեցցէ հասարակապետութիւն կանչել սկսեր են»: Գեներալ Մ. Պավիան կարգադրել է զենք պատրաստելը, նորոգելը կամ վաճառելն արգելել [13]: «Եվրոպա»-ն հավաստի է ներկայացնում 1848թ. ապրիլի 2-ի Մադրիդի համալսարանում և Սան Կառլոս քոլեջում ուսանողական ընդվզումը, որ գորքը ճնշեց, ինչպես նաև մարտի 29-ի ապստամբությունը Բարսելոնայում, Վալենսիայում և այլ քաղաքներում: 1848թ. մայիսի 7-ին Մադրիդում հակակառավարական ապստամբություն սկսվեց, որը, «Եվրոպա»-ի պատմելով, նախաձեռնեց բանակը: Պարբերականի հավաստի հաղորդմամբ մայիսի 7-ի երեկոյան Եսբանա գնդի երկու ջոկատներ «իրենց գորանոցին մէջ ապստամբեցան, պաշտոնակալներուն ձեռքէն զենքերն առին» և գնացին Մադրիդի Մեծ հրապարակը: Առավոտյան ժամը 5-ին հրապարակ մտնող երկու փողոցները լցվեցին կառավարական զորքերով: Ապստամբ զինվորները լուրջ դիմադրություն ցույց տվեցին, բայց շատ կորուստներ ունեցան և հարկադրված եղան անձնատուր լինել: Պարբերականի կարծիքով ապստամբությունը հաջող վախճան չունեցավ, որովհետև զինվորները սկզբում վանկարկում էին «կեցցէ՛ թագուհին», «կորչեն պաշտոնյաները»՝ հույս ունենալով ժողովրդին իրենց կողմը գրավել: Բայց պայքարի ընթացքում, երբ նրանք սկսեցին բացականչել «կեցցէ՛ ազատությունը, կեցցէ՛ հանրապետությունը», «ժողովրդեան աչքը բացուեցաւ, ու սկսան, Աս չէ, աս չէ, դէպ ի տուն, դէպ ի տուն կանչել, ու ցրուիլ»: Ապստամբ զինվորները մնացին մենակ և ինքնակամ հանձնվեցին, շատերն էլ հեռացան [14]: 1848թ. մայիսի 13-ին Սևիլիայում բռնկվեց զինվորական ապստամբություն, որի կազմակերպիչը զեներալ Խոսե Պորտալն էր: Ըստ «Եվրոպա»-ի՝ այդ օրը Գվադալախարայի գնդի ջոկերից մեկն ապստամբեց և «կեցցէ՛ հանրապետությունը» բացականչություններով՝ անցնում էր Սևիլիայի մոտով: Շուտով այս գունդը հետ դարձավ ու հարձակվեց քաղաքագլխի պալատի վրա, բայց «վոնտուեցաւ ու պարտաւորեցաւ քաղքէն դուրս ելլել»: «Եվրոպա»-ն գտնում է, որ Իսպանիայում նորից «քաղաքական պատերազմը գրգռելու նշաններ

կերևան»: Դոն Կառլոսի «քաջ զօրապետ» գեներալ Ռամոն Կաբրերան մտել է Իսպանիա Պլա դե Սալմասի կողմից: Գեներալ Ռ. Կաբրերան կոչ է արել ուռքի ելնել և ամենքին ցույց տալ, որ «մեր դժբախտ հայրենիքը ուրիշ եղանակաւ չազատիր, բայց եթէ Կարլոս Զ-ին թագաւորութեամբը»: Իսպանական թերթերի լրատվությամբ «Եվրոպա»-ն գրում է, որ Ռ. Կաբրերան Իսպանիա մտնելիս իր տրամադրության տակ ուներ ընդամենը 25 հեծյալ, որոնք կառլոսյան բանակի նախկին զինվորականներ են, երբ նրա՝ Իսպանիա մտնելու լուրը Կատալոնիա հասավ, «ժողովրդեան մէջ շատ ձայն հանեց, ու շրջակայ տեղուանքը շատ վախի մէջ ինկան»: Այլ լուրերով նա 250 հետևկային և 20 հեծյալ ունի իր տրամադրության տակ, բայց ինչպես երևում է, «յուսացածին չափ մեծ ընդունելութիւն չգտաւ» [15]: «Եվրոպա»-ի տեղեկություններով օգոստոսի 26-ին կառլոսականներ Ֆորգատելի և Առնավի գլխավորությամբ մտել են Կաստելանի գավառը, գրավել Լուչենա քաղաքը, որը նախկինում կառլոսականների դեմ ամուր պատնէշ էր: Սեպտեմբերի 3-ին Մադրիդից ստացված պաշտոնական լուրերով Կատալոնիայում գտնվում են 5-6 հազար կառլոսականներ: Սեպտեմբերի 1-ին Մադրիդից 3 հազար զինվոր է ուղարկվել Կատալոնիա, բայց, ինչպես երևում է, այստեղ «դժուարաւ ապստամբները պիտի նուաճեն» [16]: «Եվրոպա»-ն հաղորդում է, որ կառլոսականները 200 հոգով հարձակվել են թագավորական 800 զորքի վրա, նրանց զորապետին՝ Մանցանոյին, բռնել և սպանել: «Ասով Գարլիստները նորէն սիրտ առին, ու օրէ օր շատանալու վրայ ըլլալով՝ Գադալունիայի զօրքը 20,000ի չափ պիտ'որ աւելցուի» [17]: Ապրիլի 14-ին պատմում են, գրում է «Եվրոպա»-ն, որ կառլոսականները տարբեր վայրերում պարտություն են կրել: «Եվրոպա»-ն, ըստ Մադրիդից ստացած պաշտոնական լուրերի, ապրիլի 30-ին հայտնում է, որ Ռ. Կաբրերան, ով թագուհու զորքին պարտվելու պատճառով Գադիա էր փախել, ձերբակալված է, «եւ ասով Գադալունիայի ապստամբութիւնը լմընցած ըլլայ» [18]: Բայց այլ աղբյուրները հայտնում են, որ նա Ֆրանսիայի սահմանն անցել է գումար ձեռք բերելու և ապստամբությունը շարունակելու նպատակով, որտեղ և ձերբակալվել է [19]: «Եվրոպան» հայտնում է, որ 1849թ. օգոստոսին Իզաբելլա թագուհին պարտություն կրած կառլոսականներին ներում շնորհելու ժամկետը երկարացրել է 20 օրով: Կառլոսականների ղեկավարներից մոտ 50 հոգի իրենց հպատակությունը հայտնեցին թագուհուն, որը նրանց զինվորական կոչումները նորից հաստատեց:

Այսպիսով, հուլիսի 9-ին ավարտվեց կառույցային երկրորդ պատերազմը, ու համընդհանուր ներում շնորհվեց պատերազմի մեջ ներքաշված բոլոր մարդկանց [20]: «Եվրոպա» պարբերականը չի ներկայացնում «կառույցային երկրորդ պատերազմի» ձախողման պատճառները՝ արձագանքելով կառուսականների պարտությանը կցկտուր տեղեկությամբ:

Եզրակացություն: XIX դարի երկրորդ կեսի իսպանական իրադարձությունները արձագանք են գտել «Եվրոպա» պարբերականի էջերում: Հայ պարբերական մամուլի համարներում, մասնավորապես, տեղ են գտել «կառույցային երկրորդ պատերազմի» ճշգրիտ լուսաբանումները: Պարբերականը ոչ միայն անկողմնակալ ու մանրամասն ներկայացնում է 1846-1848թթ. դեպքերը, այլև կատարում որոշ իրադարձությունների վերլուծություն: Վիեննայի Միխայրյան միաբանության կողմից տպագրվող «Եվրոպա» պարբերականի խմբագիրներն ու լրագրողները, որոնք եվրոպական երկրներում միապետական կարգերի պահպանման կողմնակիցներ էին, քաջ գիտակցելով, թե ինչի համար է մղվում պատերազմը, հանդես չեն գալիս պայքարող կողմերից որևէ մեկի քննադատի կամ պաշտպանի դերում՝ պահպանելով անաչառություն:

РЕАКЦИЯ НА «ВТОРУЮ КАРЛИСТСКУЮ ВОЙНУ» В ПЕРИОДИЧЕСКОМ ИЗДАНИИ «ЕВРОПА»

Джилавян Г. Г.

В 1846г. карлисты восстали в Каталонии, когда граф Монтемолин провозгласил себя королем Испании Карлосом VI и призвал своих сторонников к оружию. Так началась новая война за испанский престол, вошедшая в историографию как «вторая карлистская война» и «восстание Кабреры». Это событие не осталось незамеченным периодическим изданием «Европа». Армянское издание, упоминая внутривосточное положение Испании, достаточно подробно представляет возникшее очередное восстание, иногда анализируя и заключая некоторые события. Периодическое издание освещает замысловатые и беспорядочные события в Испании, используя сведения из официальных, полуофициальных и независимых газет. Сведения в «Европе» о «второй карлистской войне» в целом достоверно и объективно.

Ключевые слова: Испания, карлисты, Изабелла II, восстание, «вторая карлистская война», Р. Кабрера.

THE RESPONSE "EUROPE" PERIODICAL TO THE "SECOND CARLIST WAR"

Jilavyan G. G.

The carlists of 1846 revolted in Catalonia when Count Montemolin proclaimed himself King Carlos VI of Spain and called his supporters to arms. Thus began a new war for the Spanish throne, which is known in historiography as "Second Carlist War" and "R. Cabrera Rebellion". This event did not go unnoticed by the "Europe" periodical. The Armenian periodical, referring to the internal political situation of Spain, presents in detail the next rebellion that arose, sometimes analyzing and concluding some cases. The periodical covers the complex and confused events of Spain, using information from official, semi-official and independent newspapers. The coverage of "Europe" periodical about "Second Carlist War" is generally reliable and objective.

Keywords: Spain, carlists, Isabella II, rebellion, "Second Carlist War", R. Cabrera.

ՓՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. История Испании. т. 2. От войны за испанское наследство до начала XXI века. М., Изд.-во Индрик, 2014, с. 314:
2. «Եվրոպա», 1847, 20 հուլիսի, թիվ 4, Վիեննա, սպ. Միլիթարյան, էջ 15:
3. «Եվրոպա», 1847, 6 հուլիսի, թիվ 2, էջ 7:
4. «Եվրոպա», 1847, 6 հուլիսի, թիվ 2, էջ 7:
5. «Եվրոպա», 1847, 13 հուլիսի, թիվ 3, էջ 11:
6. «Եվրոպա», 1847, 20 հուլիսի, թիվ 4, էջ 15:
7. «Եվրոպա», 1847, 3 օգոստոսի, թիվ 6, էջ 23:
8. «Եվրոպա», 1847, 31 օգոստոսի, թիվ 10, էջ 38:
9. «Եվրոպա», 1847, 14 սեպտեմբերի, թիվ 12, էջ 46:
10. «Եվրոպա», 1847, 7 դեկտեմբերի, թիվ 24, էջ 95:
11. «Եվրոպա», 1848, 11 հունվարի, թիվ 2, էջ 6-7:
12. «Եվրոպա», 1848, 18 ապրիլի, թիվ 16, էջ 67-68:
13. «Եվրոպա», 1848, 25 ապրիլի, թիվ 17, էջ 77:
14. «Եվրոպա», 1848, 23 մայիսի, թիվ 21, էջ 91, 30 մայիսի, թիվ 22, էջ 96:
15. «Եվրոպա», 1848, 25 հուլիսի, թիվ 30, էջ 130:

16. «Եվրոպա», 1848, 26 սեպտեմբերի, թիվ 39, էջ 165:
17. «Եվրոպա», 1848, 19 դեկտեմբերի, թիվ 51, էջ 211:
18. «Եվրոպա», 1849, 29 մայիսի, թիվ 22, էջ 87:
19. «Եվրոպա», 1849, 5 հունիսի, թիվ 23, էջ 92:
20. История XIX века. Под ред. Лависса и Рамбо. М., Изд.-во Государственное социально-экономическое издание, 1938, т. 5, с. 353.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Զիլայան Գ. Գ. - մագիստրատուրա 2-րդ կուրս
ՎՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Պատմություն
Էլ. փոստ՝ gay13.00@mail.ru

Գիտական ղեկավար՝ Մովսիսյան Ֆ., պատմ. գիտ. դոկ., պրոֆեսոր

Ստացվել է՝ 07.11.2022
Գրախոսվել է՝ 09.12.2022

**ԹԱԼԻՇԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ
Մարգարյան Շ. Գ.**

Ուսումնասիրության նպատակն է՝ ներկայացնել՝ ինչ մակարդակի վրա է գտնվում թալիշների ազգային գիտակցությունը, նրանց ներքին խնդիրները, ինչպես նաև ուսումնասիրել թալիշների ծագումնաբանությունը, նրանց հանդեպ կատարվող բռնությունները և նրանց ներկայիս կարգավիճակը Ադրբեջանում: Ադրբեջանի Հանրապետությունը վարել է և շարունակում է վարել կոշտ քաղաքականություն իր տարածքում բնակվող փոքրամասնությունների նկատմամբ: Մարդու իրավունքի բազմաթիվ խախտումները վկայում են այդ փաստը: Դրա վառ օրինակն է թալիշների նկատմամբ տասնամյակներ շարունակ իրականացվող բռնությունները:

Բանալի բառեր. թալիշներ, ծագումնաբանություն, լեզու, Ադրբեջան:

Նախաբան: Ադրբեջանի Հանրապետությունը վարել է և շարունակում է վարել կոշտ քաղաքականություն իր տարածքում բնակվող փոքրամասնությունների նկատմամբ: Մարդու իրավունքի բազմաթիվ խախտումները վկայում են այդ փաստը: Դրա վառ օրինակն է թալիշների նկատմամբ տասնամյակներ շարունակ իրականացվող բռնությունները: Ադրբեջանի իշխանությունների հիմնական նպատակն է՝ վերացնել թալիշների ազգային գիտակցությունը, որը հետագայում կնպաստի թալիշների «ադրբեջանացմանը»: Ընտրված **թեմայի արդիականությունը** կօգնի մեզ ավելի լավ ընկալել Ադրբեջանի ներքաղաքական կյանքը և դրա խոցելի մասերը:

Աշխատանքի նպատակն է՝ հասկանալ՝ ինչ մակարդակի վրա է գտնվում թալիշների ազգային գիտակցությունը, նրանց ներքին խնդիրները, ինչպես նաև ուսումնասիրել թալիշների ծագումնաբանությունը, նրանց հանդեպ կատարվող բռնությունները և նրանց ներկայիս կարգավիճակը Ադրբեջանում:

Թալիշների ծագումնաբանությունը, էթնիկ գիտակցությունը և ներկա կարգավիճակը: Ուսումնասիրության նպատակն է՝ ներկայացնել՝ ինչ մակարդակի վրա է գտնվում թալիշների ազգային գիտակցությունը, նրանց ներքին խնդիրները, ինչպես նաև ուսումնասիրել թալիշների

ծագումնաբանությունը, նրանց հանդեպ կատարվող բռնությունները և նրանց ներկայիս կարգավիճակը Ադրբեջանում: Թալիշներն իրանական հնագույն ժողովուրդներից են, որոնք բնակվում են Ադրբեջանի հարավարևելյան Իրանին սահմանամերձ կասպիական շրջաններում (Լենքորան, Լերիկ, Մասալին, Աստարին, Յարդմիլին), նաև Բաքվում և հարակից շրջաններում, ինչպես նաև Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում: Ադրբեջանի թալիշները շիադավան են, իսկ Իրանի թալիշները՝ սուննիադավան, նաև սուֆիական նակշբանդի ուղղության հետևորդներ: Թալիշների հետ կապված կնճռոտ հարցերից մեկն այդ ժողովրդի թվաքանակի մասին տարաբնույթ տվյալներն են: Համաձայն 1999թ. Ադրբեջանում անցկացված մարդահամարի՝ նրանց թիվը 76.800 է, սակայն կան նաև այլ տվյալներ, որոնք ժողովրդագրական բարձր ցուցանիշ ունեցող թալիշների իրական թիվը համարում են 200.000-ից 500.000-ը: Նույն խնդիրը բնորոշ է Իրանի թալիշներին, որտեղ, ըստ պաշտոնական տվյալների, բնակվում են 112.000, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ ընդհուպ մինչև կես միլիոն թալիշներ: Որոշել ժողովրդի գենետիկական արմատները կամ էթնոգենեզը նշանակում է բացահայտել այն էթնիկ միջավայրը, որը ծնել է այս ժողովրդին և սահմանագատել նրա տարածական և ժամանակային շրջանակը: Թալիշների դեպքում էթնոգենետիկ հետազոտությունների հիմնական աղբյուրը ժողովրդի ինքնանունն է, այսինքն՝ թալիշ (**Ṭāliš, Tāleš, Talyš, Tolyš**) [3. Г. С. Асатрян: 5]: Թալիշ մտավորականները և պատմաբանները միաձայն նշում են քադուսներին (**Cadusii, Kadusii**)՝ որպես թալիշների ենթադրյալ նախնիների: Նրանց արմատները հստակեցնելու համապարփակ ցանկությունը և թալիշների հստակ հարաբերակցությունը քադուսների հետ ազգային մակարդակում նույնիսկ հանգեցրին թալիշների ազգային ինքնագիտակցության մեջ որոշակի գաղափարական տարրի ի հայտ գալուն: Քադուսը նույնպես սովորական արական անուն է դարձել: Թալիշներն ապրում են Աստարայում, Լենքորանում, Լերիկում և Մասալիի շրջանի հարավարևելյան հատվածում: Թալիշները եզդիների, քրդերի, մազենդարացիների և գիլանիների հետ միասին Մեդիա բնակեցված հին իրանախոս ցեղերի ժառանգներն են [2. Евстратов: 44]: Ի տարբերություն Հայաստանում իրանական փոքրամասնությունների՝ Ադրբեջանում իրանցի փոքրամասնությունները գործնականում չունեն ազգային ինքնություն, որը տարբերում է նրանց Ադրբեջանի տիտղոսակիր ազգից: Նրանք ունեն մահմեդական անուն-ազգանուններ, խոսում են հիմնականում

թուրքերեն (ադրբեջաներեն): Մշակութային և լեզվական ինքնության պահպանմանն ուղղված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ցանկացած գործունեություն Ադրբեջանի իշխանությունները գնահատում են որպես անջատողականություն: Օրինակ՝ տարրական դասարաններում մայրենի լեզվի դասավանդման որոշակի սահմանափակումներ կան. դասագրքերի սակավություն, մայրենի լեզուն դասավանդող ուսուցիչներն ավելի ցածր են վարձատրվում, քան մյուս ուսուցիչները: Ադրբեջանի իշխանությունների քաղաքականության մի մասն է կազմում ազգային փոքրամասնությունների պատմության խեղաթյուրված ներկայացումը, նրանց պատմամշակութային ժառանգության յուրացումը: Թալիշների ազգային շարժման առաջնորդներից Ֆախրադդին Աբուգոդայի կարծիքով՝ Ադրբեջանում թյուրքական ցեղերի հետ դարերով ապրելը թալիշների և թուրքերի մտածելակերպը դարձրեց նույնը և հանգեցրեց նրան, որ թալիշներն իրենց թալիշ չեն համարում, այլ ասում են, որ նրանք ադրբեջանցի են: Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ թալիշները, ի տարբերություն եզդիների և որոշ թաթերի, ովքեր ապրում են հայերի հետ, չեն զգում Ադրբեջանի հետ այն մտերմությունը, ինչ եզդիները զգում են Հայաստանի հետ: Առաջինը 1919-ին էր, երբ թալիշներն ապստամբեցին մուսավաթական Ադրբեջանի դեմ և հռչակեցին Խորհրդային Մուղանի Հանրապետությունը, որը երեք ամսվա կյանք ունեցավ: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո թալիշաբնակ հյուսիսային շրջանները հայտնվեցին Խորհրդային Ադրբեջանի կազմում՝ վերջնականորեն բաժանելով Իրանի և Ադրբեջանի թալիշներին [2. Евсратов: 18]: Ընդհուպ մինչև 1930-ականների վերջերը Ադրբեջանում թալիշների ազգային իրավունքները որոշակիորեն պաշտպանվում էին. նրանք սեփական լեզվով կրթություն ստանալու հնարավորություն ունեին: Ոչ թուրքական տարրի, այդ թվում՝ թալիշների նկատմամբ կիրառվող կոշտ քաղաքականության արդյունքում թալիշերենը սկսեց աստիճանաբար դուրս մղվել՝ հոգուտ ադրբեջաներենի: Վտանգվեց նաև թալիշական ինքնության գաղափարը: Թալիշական ազգային զարթոնքի հարցում մեծ նշանակություն ունեցավ 1993թ. հունիսին թալիշ մի խումբ ազգայնական գործիչների կողմից Ադրբեջանի կազմում Թալիշ-Մուղանական Ինքնավար Հանրապետության հռչակումը [5. Asatrian: 25], որը նույնպես շատ կարճ կյանք ունեցավ՝ գոյատևելով մինչև օգոստոս ամիսը: Թալիշական էթնոսի և թալիշական ազգային խնդիրների գոյության փաստն Ադրբեջանում այլևս փակուղի մտավ: Տասնամյակների ընթացքում

իրականացված հետևողական քայլերի արդյունքում թալիշական շրջանակներում ուսուցման և հաղորդակցության հիմնական լեզուն դարձավ ադրբեջաներենը: Թալիշերենը պահպանեց իր նշանակությունը հիմնականում առանձին գյուղական շրջաններում: Հատկանշական է, որ Ադրբեջանում թալիշերենով հրատարակություններ գրեթե չկան, հազվադեպ դարձած թալիշական մամուլը և գրականությունը հիմնականում հրատարակվում են ադրբեջաներենով: Գոյություն ունի թալիշերենով հեռարձակվող 15 րոպե տևողությամբ ռադիոէթեր: Պատահական չէ, որ Ադրբեջանի պատմության դասագրքերում թալիշների մասին չի խոսվում: Թալիշների նկատմամբ խտրականության մեկ այլ ապացույց է այն փաստը, որ թալիշաբնակ շրջաններում պաշտոնավարում են ոչ թե թալիշներ, այլ տարբեր շրջաններից, հատկապես Նախիջևանից ժամանած մարդիկ: Առանձին տեսակետների համաձայն, չնայած վարչակարգի դիմակայությանը, թալիշական ազգային շարժումն իր մեջ ինքնակազմակերպվելու ուժ երբևէ կգտնի, անշուշտ, եթե դա այլևս ժամանակավրեպ չլինի: Հատկանշական է, որ թե՛ սփյուռքում և թե՛ Ադրբեջանում բնակվող թալիշների շրջանում տիրապետող են հիմնականում երկու կողմնորոշումներ՝ ռուսամետությունն ու իրանամետությունը: Կան նաև բացառապես սեփական ժողովրդի ուժերին ապավինող շրջանակներ, իսկ մարդու իրավունքների պաշտպանության հարցում Արևմուտքի աջակցության ակնկալիքներն այլևս սպառել են իրենց: Ամեն պարագայում, թալիշական սփյուռքը միակ ասպարեզն է ազգային զարթոնքի համար: Ինչ վերաբերում է թալիշական շրջաններին, ապա դրանք գրեթե զերծ են Իրանի կրոնական ազդեցությունից, իսլամական արմատական գաղափարախոսություններից, չնայած իսլամի նկատմամբ կա հետաքրքրության աճ: Տեղի հոգևորականները ենթարկվում են Ալլահշյուքյուր Փաշազադեին [7. Д.Бабаєв, 11], չնայած իրենց կրոնական կենտրոնը համարում են Իրանը: Հատկանշական է, որ Ադրբեջանի իշխանությունների մոտեցումները թալիշական խնդիրների նկատմամբ ժամանակի ընթացքում նորանոր՝ նաև անսպասելի դրսևորումներ են ձեռք բերում: Ասվածի ապացույցն է 2007թ. փետրվարին թալիշ երկու հայտնի մտավորականների բանտարկությունը՝ Իրանի օգտին լրտեսություն անելու մեղադրանքով: Նրանցից մեկը Թալիշական մշակութային կենտրոնի տնօրեն, «Թոլիշի սյադո» (Թալիշների ձայն) [1. Геворգян: 34] թերթի խմբագիր, թալիշագետ Նովրուզալի Մամեդովն է, մյուսը՝ նույն կենտրոնի քարտուղար,

արևելագետ-իրանագետ Էլման Գուլիևը: Պետությանը դավաճանելու մեղադրանքով Ն. Մամեդովն ազատազրկվել է տասը, իսկ Է. Գուլիևը՝ վեց տարով: Հետաքրքիր է, որ վերջիններս մշտապես աչքի են ընկել իշխանության նկատմամբ լոյալ վերաբերմունքով [4. Измайлова: 26]: Թե՛ թալիշներին և թե՛ Ադրբեջանի էթնիկ այլ փոքրամասնությունների առնչվող խնդիրները կարևոր գործոն են Ռուսաստանի համար՝ Ադրբեջանի վրա ճնշումներ քանակելու տեսանկյունից: Հատկանշական է, որ Ռուսաստանում են ապաստան գտել և գտնում թալիշական ազգային շարժման բազմաթիվ գործիչներ, այստեղ կան թալիշ աշխատանքային էմիգրանտներ, և, վերջապես, թալիշական սփյուռք [4. Измайлова: 34]: Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանն ըստ էության դարձել է թալիշական շարժման ինտելեկտուալ և տեղեկատվական հովանոցը, այն հրապարակայնորեն չի արձագանքում թալիշական խնդիրներին: Այս հանգամանքը շատ ցավազին է ընդունվում թալիշների կողմից, որոնց կարծիքով՝ Ռուսաստանը պատմականորեն պատասխանատվություն ունի թալիշական խնդիրների նկատմամբ: Թալիշական շարժման հեռանկարները մշուշոտ են: Տեսականորեն թալիշական ազգային շարժումը, դաշնակիցներ և անհրաժեշտ ռեսուրսներ ձեռք բերելու պարագայում, կարող է աշխուժանալ: Թալիշ առանձին գործիչներ հեռանկարում չեն բացառում նաև զինված պայքարի հնարավորությունը: Էթնիկ փոքրամասնությունների խնդիրներն Ադրբեջանի ամենացավոտ և երկիրը խոցելի դարձնող հարցերից են, որոնք շարունակում են գոյություն ունենալ ժամանակ առ ժամանակ ընդունելով դրսևորման նորանոր ձևեր: Միննույն ժամանակ թալիշների օրինակը մեկ անգամ ևս ի ցույց է դնում, որ էթնիկ փոքրամասնություններն Ադրբեջանում հեռանկար չունեն:

Թալիշների և հայերի փոխհարաբերությունները: Բացառապես Հայաստանի շնորհիվ է, որ թալիշները որոշակի հնարավորություններ են ստացել աջակցելու իրենց ազգային ինքնությանը: 2005 թվականին Երևանում կազմակերպվել է գիտաժողով՝ նվիրված թալիշագիտությանը: Այնտեղ ելույթ են ունեցել նաև թալիշների ներկայացուցիչները: Իսկ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյանի խմբագրած «Թալիշ ժողովրդի մշակույթին ներածություն» աշխատության հրատարակությունը դարձավ հայ իրանագիտության նոր ձեռքբերում: 2013թ.-ի սեպտեմբերի 24-ին տեղի ունեցավ հանդիպում Թալիշ-Մուղանյան հանրապետության նախագահ Ալաքրամ Գումմատովի հետ: Ալաքրամ Գումմատովը նշեց. «Ես երախտապարտ

եմ հայ ժողովրդին նման հնարավորության համար: Միգուցե հիմա թալիշների մի մասը չգիտակցի՝ ինչու եմ այստեղ և ինչ եմ ասում, բայց ժամանակի ընթացքում կհասկանա: Թալիշ-Մուղանյան հանրապետության կորստի ժամանակ էլ նրանք չգիտակցեցին, միայն հիմա են ընդունում, թե ինչ մեծ բան ենք կորցրել: Գիտե՞ք՝ Ադրբեջանում բնակվող թալիշն ուզում է աշխատանքի ընդունվելիս դիմումը լրացնել իր մայրենի լեզվով, սակայն նրան չեն թողնում: Նույնիսկ Լանքոնում՝ իմ ծննդավայրում, ցուցանակի վրա գրված է ադրբեջաներեն «Լենքորան»: Եվ հետաքրքիր է, որ ադրբեջանցիները մեզ ոչնչացնում են, ապա ասում են՝ եկե՛ք լինենք եղբայրներ: Մեզ ասում են՝ թալիշերեն խոսե՛ք, ապագա չեք ունենա: Բայց մեզ ոչ ոք չի կանգնեցնի: Մենք արդեն ունենք ինքնագիտակցություն: Ժամանակին սխալվել ենք, չենք հասկացել, կովել ու գոհվել ենք Ադրբեջանի համար՝ այն համարելով մեր հայրենիքը: Մեր հայրենիքը Թալիշստանն է: Սակայն գիտենք, որ մեզ համար որևէ մեկը երբևէ ոչինչ չի անի, հենց այնպես ոչ մի բան չի տրվելու: Ավելի քան 200 տարի միայն դուք՝ հայերդ էք մեծ գործ անում թալիշների համար, մենք Երևանում ենք հույսի նշույլ տեսնում: «Թալիշստանի ձայնի» շնորհիվ ես վերհիշում եմ լեզուն, մեր գրականությունը, դա մեծ գործ է մեզ համար: Այնուամենայնիվ, ես նաև գիտակցում եմ, որ իմ այսօրվա խոսքերն ու այստեղ ներկայությունը խնդիրներ ու հետապնդումներ առաջ կբերեն թալիշների համար, սակայն համոզված եմ, որ լավ նպատակով եմ այստեղ և հպարտ եմ, որ ձեզ հետ եմ»: Թալիշական շարժման իրական խթանը պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանի նախաձեռնությամբ Շուշիից հեռարձակվող «Թալիշստանի ձայնը» ռադիոյի ստեղծումն էր: Դրան Ադրբեջանում շատ ցավալի արձագանքը դարձավ այս նախագծի հաջողության ցուցանիշը: «Ձայնը» աշխատեց երկու տարի՝ իր տեղը զիջելով «Թալիշստանի ազգային հեռուստատեսությանը», որը ստեղծվել է թալիշ մտավորականների խմբի կողմից՝ Ֆախրադդին Աբուզոդայի գլխավորությամբ: Չլինելով զանգվածային մշակույթի արգասիք՝ այն ավելի շուտ հանդես է գալիս որպես ձեռքով պատրաստված մեքենա: Յուրաքանչյուր թողարկում եզակի է, կրում է որոշակի ուղերձ: Երբ խոսում ենք թալիշական ազգային շարժման մասին, պետք է հիշել, որ չկա առանձին թալիշական կուսակցություն և կազմակերպություն. այստեղ ամեն ինչ կապված է ինքնորոշման և ժողովրդի կամքի հետ: Երկար ժամանակ Ալակրամ Գումմաթզոդան համարվում էր շարժման ճանաչված առաջնորդը, իսկ ֆորմալ ղեկավարումն իրականացնում էր թալիշների ավագանին: Այս ամենի արդյունքում կարող ենք նշել, որ

թալիշները արիական գաղթի արդյունքում իրանացված կասպյան էթնիկական շարունակության մի մասն են: Ադրբեջանի վարած քաղաքականությունը թալիշների, (և ոչ միայն), նկատմամբ ցույց է տալիս հենց Ադրբեջանի ներքաղաքական ամենախոցելի մասը՝ փոքրամասնությունները: Հենց ազգային փոքրամասնությունները կարող են ճնշել Ադրբեջանի ղեկավարությանը: Սակայն դա լուրջ աշխատանք է պահանջում: Թալիշների էթնիկ գիտակցությունը վերելք ապրեց Ֆահրեդդին Աբուզադեի ժամանակ: Սակայն 2020թ. Ֆահրեդդին Աբուզադեին սպանում են Բաքվի բանտերից մեկում: Ըստ բազմաթիվ վկայագրությունների՝ Աբուզադեի մահից հետո թալիշները այսօր գտնվում են հոմերոստազի մեջ: Նրանք ապրում են մեծ ճգնաժամ, մասնավորապես նրանց գաղափարախոսությունը այսօր գտնվում է անորոշության մեջ:

Եզրակացություն: Կատարված հետազոտության արդյունքում պարզեցինք թալիշները արիական գաղթի արդյունքում իրանացված կասպյան էթնիկական շարունակության մի մասն են: Ադրբեջանի վարած քաղաքականությունը թալիշների (և ոչ միայն) նկատմամբ ցույց է տալիս հենց Ադրբեջանի ներքաղաքական ամենախոցելի մասը՝ փոքրամասնությունները: Հենց էթնիկական կազմերը կարող են ճնշել Ադրբեջանի ղեկավարությանը: Թալիշների էթնիկ գիտակցությունը վերելք ապրեց Ֆահրեդդին Աբուզադեի ի հայտ գալով: Նրանք սկսեցին մտածել Ադրբեջանից տարանջատվելու և իրենց պետականությունը ստեղծելու մասին: Դա ֆանտաստիկ երևույթ է: Սակայն 2020թ. Ֆահրեդդին Աբուզադեին սպանում են Բաքվի բանտերից մեկում: Կենթադրեմ, որ դա կապված է 2020թ. 44-օրյա պատերազմի հետ: Քանի որ Ֆահրեդդինը մեծ ազդեցություն ուներ թալիշների շրջանակներում, այս էթնիկ կազմը կարող էր ըմբոստանալ և հավելյալ խնդիրներ առաջացնել Ադրբեջանի համար: Եվս մեկ անգամ համոզվում ենք, որ փոքրամասնությունների նկատմամբ իրականացվում են մարդու իրավունքի խախտումներ: Սա հետապնդում է մեկ նպատակ՝ կոտրել նրանց էթնիկ գիտակցությունը, որպեսզի հեշտությամբ թալիշները «ադրբեջանացվեն»: Դա ավելի է հեշտացել Ֆահրեդդին Աբուզադեի մահից հետո: Թալիշները այսօր գտնվում են հոմերոստազի մեջ: Նրանք ապրում են բուռն ճգնաժամ, մասնավորապես նրանց գաղափարա-խոսությունը այսօր գտնվում է վակուումի մեջ:

ТАЛЫШСКИЙ ФАКТОР С ТОЧКИ ЗРЕНИЯ ФОРМИРОВАНИЯ НАЦИОНАЛЬНОГО САМОСОЗНАНИЯ

Саргсян Ш. Г.

Цель исследования – представить уровень национального самосознания талышей, их внутренние проблемы, а также изучить генеалогию талышей, насилие над ними и их современное положение в Азербайджане. Азербайджанская Республика проводила и продолжает проводить жесткую политику по отношению к меньшинствам, проживающим на ее территории. Об этом свидетельствуют многочисленные нарушения прав человека. Ярким примером тому является многолетнее насилие над талышами.

Ключевые слова: талыш, генеалогия, язык, Азербайджан.

THE TALISH FACTOR FROM THE POINT OF VIEW OF NATIONAL SELF- AWARENESS FORMATION

Sargsyan Sh. G.

The purpose of the research is to present the level of national consciousness of the Talyshes, their internal problems, as well as to study the genealogy of the Talyshes, the violence against them and their current status in Azerbaijan. The Republic of Azerbaijan has conducted and continues to conduct a harsh policy towards the minorities living in its territory. Numerous violations of human rights testify to this fact. A vivid example of this is the decades-long violence against the Talysh people.

Keywords: Talysh, Genealogy, language, Azerbaijan.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Геворгян А. О. Исторический фактор в развитии ирано-армянских отношений. Воронеж. Россия.
2. Евстратов А. Талышское национальное движение: негасимый огонь свободы, 26.12.2016.
3. Асатрян Г. С. Введение в историю и культуру талышского народа, Ереван. 2011.
4. Измайлова А. А. Талыши (Этнокультурные процессы).

5. Asatrian G., Borjian H. Talish and the Talishis (the state of research). Yerevan State University. April 2005.
6. Восприятие мультикультурализма и пропаганда этой модели в Азербайджане, 19.12.2018.
7. Бабаян Д. Азербайджано-карабахский конфликт: этнополитика и безопасность.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մարգարյան Շ. Գ. – բակալավրիատ 3-րդ կուրս

ՀՌՀ, Արևելագիտության ինստիտուտ, Թուրքագիտություն

Էլ. փոստ՝ sargsyan.shushanna@student.rau.am

Գիտական ղեկավար՝ Այվազյան Շ., պատմ. գիտ. թեկն.

Ստացվել է՝ 09.11.2022

Գրախոսվել է՝ 22.12.2022

**ԱՎԳՈՒՍՏՈ ՊԻՆՈՉԵՏ: ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԱԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
Վարդանյան Վ. Ա.**

Հողվածի սահմաններում քննության են առնված Չիլիի պետական և ռազմական գործիչ Ավգուստո Պինոչետի կյանքը, նրա իրականացրած քայլերը իշխանության գալու համար, ինչպես նաև նրա տնտեսական բարեփոխումները: Ինչպես Պինոչետն է ասում, առանց նրա գիտության պետության մեջ մի տերև անգամ շարժվել չէր կարող: Հեղաշրջման միջոցով եկավ իշխանության, սակայն հենց ժողովրդի դժգոհությունն էլ ստիպեց նրան թողնել իշխանությունը և հեռանալ:

Բանալի բառեր. հեղաշրջում, բարեփոխումներ, Սալվադոր Ալյենդե, հանրաքվե, դիկտատոր, բռնապետ, Մանտյագո Լա Մոդենա, Չիլի:

Նախաբան: Ավգուստո Պինոչետը չիլիական պետական և ռազմական գործիչ էր, գեներալ-կապիտան, իշխանության գլուխ կանգնեց զինվորական հեղաշրջման արդյունքում՝ ԱՄՆ-ի կառավարության օժանդակությամբ տապալելով նախագահ Սալվադոր Ալյենդեի սոցիալիստական կառավարությունը: Չիլիի բռնապետն էր, զինված ուժերի գերագույն հրամանատարը: Չիլիում տիրում էր բռնապետություն, ոչ ոք առանց կառավարության թույլտվության ոչ մի քայլ անել չէր կարող, և հենց այս շրջանում էր, որ երկրում սկսեց բնակչության թվաքանակը պակասել՝ կապված տիրող դասակարգի քաղաքականությունից:

Նպատակ և արդիականություն: Ուսումնասիրել Ավգուստո Պինոչետի կյանքը, զինվորական կարիերան, նրա կատարած բարեփոխումները տնտեսության մեջ: Արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Պինոչետի կառավարումից այդքան էլ երկար ժամանակ չի անցել, բայց հիմա էլ երկրներ կան, ուր դեռ տիրում է բռնապետական կառավարումը: Ինչպես այն ժամանակ, հիմա ևս ժողովուրդը պարտավոր է ենթարկվել տիրող կառավարության կանոններին:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Պինոչետի գործունեության, կատարած բարեփոխումների ուսումնասիրությամբ զբաղվել են ռուսական, իսպանական, հայկական, արևմտյան

ներկայացուցիչները: Խնդրո առարկա հարցին անդրադարձել են ժամանակի լրատվամիջոցները, ամսագրերը, ինչպես նաև առանձին հեղինակներ (Шевелев В. Утро Августо Пиночета, Тарасов А. Хватит врать о Пиночете. Правда о Чили, Кангас С. Чикагские мальчуки и чилийское экономическое чуда Архувная):

20-րդ դարի ամենախիստ քաղաքական գործիչներից մեկը, մարդ, որի կառավարման շրջանը շատերը սարսափով են հիշում: Գեներալ, գլխավոր հրամանատար Ավգուստո Պինոչետը ծնվել է 1915թ. նոյեմբերի 25-ին Չիլիի խոշորագույն քաղաքներից մեկում՝ Վալպարիսոյում: Տասնյոթ տարեկան հասակում սկսել է ռազմական արվեստով զբաղվել: 1930-ականներին նա արդեն իսկ սպայական կոչումներ ուներ: 1948թ. Պինոչետն ընդունվեց հետևակային ակադեմիա, որը ավարտելուց հետո ծառայության անցավ չիլիական բանակում: 1956թ. նա ուղևորվեց Էկվադոր: Մեկ տարի անց նա վերադարձավ Չիլի և շարունակեց ծառայությունը: 1968թ. Պինոչետը ստացավ գեներալի կոչում, ինչպես նաև դարձավ Տագարասա նահանգի նահանգապետ: 1969թ. նրան շնորհվեց բրիգադի գեներալի, իսկ 1971թ.՝ դիվիզիայի գեներալի կոչում [1]:

1970թ. աշնանը Չիլիում ժողովրդավարական ընտրությունների միջոցով իշխանության եկավ սոցիալիստ Սալվադոր Ալլենդեն: Պինոչետը, որը Ալլենդեի վաղեմի ընկերն էր, նոր իշխանության մեջ բարձր ռազմական պաշտոններ սկսեց զբաղեցնել: Մասնավորապես 1972թ. նա ցամաքային զորքերի հրամանատարն էր: Մեկ տարի անց Պինոչետը կարողացավ իր պաշտոնից հեռացնել բանակի հրամանատար Կառլ Պրատսին: Հետագայում Պրատսն իր հուշերում գրում էր, որ իր հեռանալը ռազմական հեղաշրջման նախօրյակին դավաճանական քայլ էր: Ալլենդեի քաղաքականության հետևանքով չիլիական տնտեսությունը վտանգի եզրին հայտնվեց [2]:

1973թ. սեպտեմբերի 11-ին Չիլիի մայրաքաղաք Սանտյագոյի Լա Մոդենա նախագահական պալատը շրջափակվեց ռազմական մեքենաներով և սկսեց ուժեղացնել ուղղաթիռներից: Ընդամենը մի քանի ժամվա ընթացքում զինուժերի ղեկավարները նախագահական պալատը զավթեցին և ինքնահռչակ խունտան գեներալ Ավգուստո Պինոչետի գլխավորությամբ սահմանեց արտակարգ դրություն: Այն հայտարարեց վեց կուսակցությունից բաղկացած ղեկավարող ժողովրդական միասնություն կոալիցիան անօրինական ու արձակեց պառլամենտը: Ժողովրդավարական եղանակով ընտրված նախագահ Սալվադոր Ալլենդեն հասցրել էր իր վերջին ուղերձը հղել ժողովրդին, որում պնդում

էր, որ իր հավատարմությունը Չիլիի ժողովրդին նա վկայելու է իր կյանքով և հավատ էր տարածում ժողովրդի շրջանում: Այլենդէին չհասցրին ձերբակալել: Նա արդեն ինքնասպան էր եղել [3]: Պինոչետը ընդամենը ամիսներ առաջ էր ստանձնել բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը՝ փոխարինելով սահմանադրությունը պաշտպանող գեներալ Պրաթսին, որը հրաժարական էր տվել: Ձևավորվեց զինվորականների խումբ, որի կազմում էին Պինոչետը, Խոսե Մերինոն, գեներալ Գուստավո Լի Գուսմանը և գեներալ Սեզան Մենդուլան: Հեղաշրջումից կարճ ժամանակ անց Պինոչետը հայտարարեց, որ զինված ուժերը հավատարիմ են մնացել իր մասնագիտական պարտքին, և միայն երկրում տիրող իրավիճակն է ստիպել նրանց իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Եվ հենց հանգստություն ձեռք բերվի, և տնտեսությունը դուրս բերվի այս ծանր վիճակից, բանակը կվերադառնա զորանոց: Գեներալը նույնիսկ վերջնաժամկետ է սահմանել այդ նպատակների իրականացման համար մոտ քսան տարի, որից հետո Չիլին կվերադառնա ժողովրդավարության: 1974թ. ամռանն ընդունվեց օրենք, որով Պինոչետը հռչակվեց իշխանության գերագույն կրողը: Նա օժտված էր լայն լիազորություններով՝ ներառյալ միանձնյա կառավարումը, ցանկացած օրենք հաստատելու կամ չեղյալ հայտարարելու, դատավորներ նշանակելու և ազատելու իրավունք: Նրա իշխանությունը չէր սահմանափակվում ո՛չ խորհրդարանի, ո՛չ էլ քաղաքական կուսակցությունների կողմից [4]: 1973թ. սեպտեմբերի 21-ին, նախագահի հրամանագրի համաձայն, Չիլիի Ազգային կոնգրեսը լուծարվեց: Պինոչետը հայտարարեց. «Մեր բոլոր թշնամիներից գլխավորն ու ամենավտանգավորը կոմունիստական կուսակցությունն է: Մենք պետք է քանդենք այն հիմա, մինչդեռ այն վերակազմավորվում է ամբողջ երկրում: Եթե մեզ չհաջողվի, նա մեզ վաղ թե ուշ կկործանի»: Քաղաքացիական դատարաններին փոխարինելու համար ստեղծվեցին ռազմական տրիբունալներ, ստեղծվեցին խոշտանգումների գաղտնի կենտրոններ և մի քանի համակենտրոնացման ճամբարներ քաղաքատարկյալների համար: Իրականացվել են ռեժիմի ամենավտանգավոր հակառակորդների մահապատիժները Սանտյագո մարզադաշտում: «Չիլին տերերի երկիր է, ոչ թե պրոլետարների», - չէր դադարում կրկնել Պինոչետը: Նրա շուրջը ձևավորվեց չիլիացի տնտեսագետների խումբ, որոնցից շատերը սովորել էին Չիկագոյում: 1978թ. հունվարին նա անցկացրեց հանրաքվե և ստացավ ձայների 75%-ը: Դիտորդները դա անվանեցին մեծ քաղաքական հաղթանակ Պինոչետի համար, որի

քարոզչությունը հմտորեն շահագործում էր չիլիացիների հակամերիկյան աջակցությունը, նրանց հավատարմությունը այնպիսի արժեքների, ինչպիսիք են ազգի արժանապատվությունը և ինքնիշխանությունը [5]:

1978թ. Չիլիի խոշորագույն՝ Չուկիկամատա պղնձի հանքում աշխատավորները բողոք բարձրացրին աշխատավարձերի բարձրացման պահանջով: Սակայն շուտով նրանց բողոքը լռեցվեց ռազմական բռնությամբ: Հանքը շրջափակվեց բանակայիններով, գործադուլի կազմակերպիչները հայտարարվեցին կոմունիստներ և չեզոքացվեցին: Համաշխարհային ֆեդերացիայի կողմից չիլիական ապրանքների բոյկոտի սպառնալիքի տակ՝ խունտան գնաց զիջումների և թույլատրեց արհմիությունների գործունեությունը, թեև շատ խիստ պայմաններով, օրինակ՝ երեսուն օրվա գործադուլից հետո աշխատողներին կարելի էր փոխարինել, իսկ վաթսուն օրից ավելի գործադուլը համարժեք էր լինելու աշխատանքից դուրս գալուն [6]:

1983թ. Աշխատավորների ազգային կոմիտեի ղեկավար դարձած Դոդոլֆո Սեգելի գլխավորությամբ հայտարարված գործադուլից չորս օր անաջ հանքերը շրջափակվեցին: Փողոցային գործողությունների բռնի ճնշումը ստիպեց աշխատավորներին, քաղաքացիական խմբերին և արդեն ներգրավված քաղաքական կուսակցություններին վերանայել իրենց ռազմավարությունը: Պինոչետը փորձեց մեղմացնել ժողովրդական բողոքը՝ երկխոսության պատրանք ստեղծելով և նշանակելով ներքին գործերի նախարարի, որը պետք է բանակցեր Դաշինքի հետ: Իրականում թավշյա ձեռնոցի տակ երկաթյա բռունցքն էր. բանակցությունների մասին խոսելու հաջորդ ցույցերը ցրեց ոչ թե ոստիկանությունը, այլ բանակը, որի արդյունքում զոհվեց 26 ցուցարար [7]:

1980թ. օգոստոսին սահմանադրության նախագծի շուրջ անցկացվեց հանրաքվե: Կողմ՝ ձայների 67%-ը, դեմ՝ 30%-ը: 1981թ. մարտից սահմանադրությունն ուժի մեջ մտավ: Պինոչետը առանց ընտրության հռչակվեց նախագահ ութ տարի ժամկետով՝ ևս ութ տարի վերընտրվելու իրավունքով: Սակայն կան կարծիքներ, որ այս և նախորդ հանրաքվեները կեղծված են եղել, քանի որ շատ վայրերում ընտրողների թիվը գերազանցել է բնակչության թվին: Պինոչետը լիովին ներդրել էր ազատ շուկայական քաղաքականությունը, վերադարձրել էր ազգայնացված ընկերությունները նախկին բաժնետերերին և վաճառել էր բոլոր պետական ձեռնարկությունները՝ ներգրավելով այդքան ցանկալի արտաքին ներդրումներ, վերադարձրել էր հողային ռեֆորմի

արդյունքում խոշոր հողատերերից փոխհատուցմամբ վերցված և վերաբաշխված հողերը նախկին խոշոր կալվածատերերին: Բնակարանային բարեփոխումների արդյունքում մայրաքաղաք Սանտյագոյի հատակագիծը փոխվեց, ստեղծվեցին ծայրամասային թաղամասեր, որտեղ վերաբնակեցվեցին աղքատ խավի մարդիկ՝ ստեղծելով հարուստ և միջին խավին պատկանող «կենտրոնական վակուում»: Տեղի ունեցավ կապիտալի և հարստության աննախադեպ կենտրոնացում մի քանի մասնավոր ընկերությունների ձեռքում: Առաջին տասը տարիները թողեցին տնտեսական «բումի» տպավորություն, սակայն ազատ շուկայական հարաբերությունները ներխուժել էին ոչ միայն տնտեսական ոլորտ, այլև սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության և մշակութային ոլորտներ: Պետական հիվանդանոցների մեծ մասը մասնավորեցվեց, խոշորագույն համալսարանները զրկվեցին պետական ֆինանսավորումից: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի համատեքստում Չիլիի ազատ շուկայական տնտեսությունը, որը մեծապես կախված էր համաշխարհային շուկայից, նույնպես տուժեց. սնանկացան ոչ միայն փոքր ու միջին բազմաթիվ ձեռնարկություններ [8]: Գործազուրկների մակարդակը 1983թ. հասավ պաշտոնապես 30 տոկոսի: Աղքատության մակարդակը նույնպես սկսեց բարձրանալ, ինչն իր ազդեցությունը ունեցավ նաև հասարակության քաղաքական ակտիվացման վրա: Չիլիի ժողովուրդը կարծես արթնացավ լեթարգիկ քնից: Վերակտիվացան նաև կուսակցությունները, այդ թվում՝ ընդհատակ անցած ձախակական ուժերը: Պինոչետի տարիներին երկիրը հարկադրաբար լքել է շուրջ 1 միլիոն մարդ, մեծամասնությունը՝ ձախակական հայացքների տեր [9]:

Չիլիի հանրությունը գիտակցում էր, որ պարտիզանական զինված պայքարով հնարավոր չէր վերականգնել սահմանադրական կարգը: Փողոցային ցույցերը նույնպես արդյունավետ չէին: Պինոչետը կարողանում էր դրանք բռնությամբ ցրել և պառակտել ցուցարարներին: Պինոչետն անդրդվելի էր: Նրա հեգեմոնիան ավելի ու ավելի էր զորեղանում հատկապես ընդդիմության շրջանում զինված պայքարի, իր դեմ մահափորձի, ոստիկանական ուժերի վրա հարձակումների համատեքստում: Պինոչետը նման միջավայրում իրեն զգում էր ինչպես «ձուկը ջրում», սա նրան առիթ էր տալիս գործի դնել բանակը, սահմանել պարեկային ժամեր, սահմանափակել քաղաքացիների իրավունքները, բարձրացնել սեփական հեղինակությունը որպես «երկիրը ծայրահեղ հեղափոխականների և ահաբեկիչների քառսից» ազատող փրկիչ [10]:

Քաղաքական համախմբման հարցում մեծ դեր կատարեց նաև կաթոլիկ եկեղեցին, որը թեև Սալվադոր Ալյենդեի սոցիալիստական կառավարության խիստ քննադատն էր, սակայն չէր կարող հանդուրժել Պինոչետի ռեպրեսիվ իշխանությունն ու վայրագությունները: Լինելով միակ հաստատությունը, որը Պինոչետն ի վիճակի չէր ոչնչացնել, կաթոլիկ եկեղեցին իր հովանու ներքո պաշտպանում էր հալածյալներին: Մեծ դեր կատարեցին կանանց կազմակերպությունները, որոնք սկզբում զբաղվում էին սոցիալական և մարդու իրավունքների խնդիրներով, այնուհետև սկսեցին առաջ քաշել կոնկրետ կանանց իրավունքների հարցեր: Մինչև 1986թ. Չիլիի հանրությունը համախմբվել էր և պատրաստ էր մղել ժողովրդավարության վերականգնման սոցիալական շարժումը [11]:

1986թ. սեպտեմբերի 7-ին «Մանուել Ռոդրիգեսի անվան հայրենասիրական ճակատը» կազմակերպության կողմից մահափորձ իրականացվեց Պինոչետի նկատմամբ: Դրա մասնակիցները իրենց պատրաստվածության դասընթացներն անցել էին Մոսկվայում՝ Չիլիի կոմունիստական կուսակցության ղեկավարների անվտանգությունն ապահովելու ծրագրի շրջանակներում: Սակայն զենքը խափանված էր: Սկզբում նոնակները չկրակեցին, սակայն երկրորդ փորձից հետո նոնակը կոտրեց ավտոմեքենայի ապակին, բայց չպայթեց: Այդ հարձակման ընթացքում զոհվեց գեներալի հինգ թիկնապահ: Հետագայում Պինոչետն ասել էր, որ Աստված է փրկել իրեն, որպեսզի նա կարողանա կրկին շարունակել պայքարը հանուն հայրենիքի: Չիլիի կուսակցական և քաղաքացիական ուժերը գիտակցում էին, որ ասիմետրիկ այդ պայքարում խաղի կանոնները վերահսկում էր դիկտատորը, ուստի պետք է փնտրեին այդ ասիմետրիան հաղթահարելու ուղիներ: Ընտրացուցակներ չկային, խունտան 1987թ. ընդունեց օրենքներ՝ ի պատրաստություն հանրաքվեի: Հայտարարվեց ընտրողների ցուցակագրումը: Խունտայի ընդունած օրենքները հատուկ բյուրոկրատական դժվարություններ էին նախատեսում և ապախրախուսում ցուցակագրումը: Արագ գրանցվում էին Պինոչետին աջակցողները, իսկ հատկապես աղքատ խավի համար ընտրական ցուցակներում ներգրավվելը խիստ դժվար էր՝ քվեարկողի քարտ ստանալու համար պահանջվող ֆինանսական և ժամանակային ռեսուրսների պատճառով: Խունտան նաև ընդունեց նախագահական հանրաքվեին հաջորդող խորհրդարանական ընտրություններ անցկացնելու և կուսակցություններին օրինականացնելու վերաբերյալ

օրենքներ՝ կրկին խիստ սահմանափակումներով: Նախ, ընտրությունների համար կուսակցությունները գրանցելու ժամկետները շատ սեղմ էին, կուսակցության անդամությունը պետք է փաստվեր հանրայնացված անուն-ազգանուններով և հասցեներով: Խիստ ռեպրեսիվ դիկտատուրայում մարդիկ պարզապես չունեին նման քաջություն, բացի այդ, շարունակում էր գործել դասակարգային պայքարի մասին հիշատակող կուսակցությունների գրանցման արգելքը [12]:

Համակարգի ներսում խաղի կանոններից դուրս աշխատելու առաջին ուղին դա էր՝ փոխել ընտրացուցակների հետ կապված Պինոչետի պլանները: Ընդամենը մեկ տարվա ընթացքում կամավորները դռնեդուռ այցելությունների միջոցով կարողացան ապահովել, որ ընտրացուցակներում ընդգրկվի ևս 4 միլիոն չիլիացի: Քվեարկելու իրավունք ունեցող բնակչության 90% արդեն ընտրացուցակներում էր: Համակարգի ներսում խաղի կանոններից դուրս աշխատելու մյուս ուղին խունտայի ընդունած ընտրական կիսաազատ նոր կանոնակարգերից օգտվելն էր, համաձայն որոնց՝ քվեարկությունը բաց էր, իսկ կուսակցությունների ներկայացուցիչներին թույլատրվում էր դիտարկել ընտրությունները: Պինոչետի կեղծած նախորդ երկու ընտրություններում նման ազատություններ չկային: Ուստի կուսակցական և քաղաքացիական ուժերը համախմբվեցին և ապահովեցին ընտրատարածքների 10 տոկոսի դիտարկում, ինչը ենթադրում էր 22.000 ընտրատարածքից բաց եղանակով նետվող քվեների տեղում ամփոփում և փոխանցում Մանտյագոյում գտնվող կենտրոնին: Սա քվեների հաշվարկման այլընտրանքային համակարգ էր, որը վիճակագրական ճշգրտության սկզբունքով էր մշակվել, որպեսզի ապահովի իրենց հաշվարկների ճշմարտացիությունը: Վերջապես մեծ դիտարկում ունեցավ հեռուստատեսությունը, որը մինչև այդ գտնվում էր վարչախմբի լիակատար վերահսկողության ներքո, սակայն ձևական ազատություն ցույց տալու նպատակով Պինոչետը թույլատրել էր հանրաքվեին նախորդող մեկ ամսվա ընթացքում 15-ական րոպե տրամադրել հանրաքվեին կողմ կամ դեմ քվեարկելու օգտին: Պինոչետը կարծում էր, թե իր գովքն անող պետական գովազդների կողքին ժողովրդական շարժման գովազդները չէին կարող ազդեցություն ունենալ, մասնավորապես որ դրանք պետք է գրաքննվեին նախքան հեռարձակվելը: Այս հարցում նույնպես նա սխալվում էր. ժողովրդական շարժումը կարողացել էր ներգրավել հատուկ մասնագետների, որոնք ազդեցիկ կերպով ներկայացնում էին այն պայծառ և ազատ ապագան, որը սպասվում էր

Չիլիին առանց Պինոչետի: Այլընտրանքային այս տեսլականը նույնպես տրամադրում էր կոլեկտիվ գործողության: Հանրաքվեն նշանակված էր 1988թ. հոկտեմբերի 5-ին: Օրեր առաջ Պինոչետը հազարավոր բանակայինների հրահանգել էր դուրս գալ փողոցներ: Բացի ահի մթնոլորտ ստեղծելուց, նա պլանավորում էր սադրել բախումներ, որի արդյունքում զինուժը պիտի միջամտեր, արդյունքում՝ քաղաքացիական վերահսկողություն հնարավոր չէր լինելու իրականացնել, քառասյին իրավիճակում Պինոչետը հռչակելու էր սեփական հաղթանակը: Այս ամենը կանխելու նպատակով Մոնիկա Հիմենեզը տեղեկացրեց օտարերկրյա դեսպանություններին, որ ընտրությունների արդյունքները վարչախումբը կարող է փորձել գողանալ՝ արտակարգ դրություն հրահրելով և ռազմական միջամտությամբ: Միացյալ Նահանգների պետդեսպարտամենտը հաղորդագրություն ուղարկեց Չիլիի արտաքին գործերի նախարարություն, որ նման սցենարի դեպքում իրենք չէին ճանաչի հանրաքվեի արդյունքները [13]:

Հանրաքվեի օրը 22.000 ընտրատարածքներում ընթացող զուգահեռ հաշվարկի արդյունքները պարբերաբար ուղարկվում էին Սանտյագո, համակարգչային ծրագրի միջոցով դրանք ամբողջացվում էին և հաղորդվում միակ կիսաազատ հեռուստաալիքի՝ կաթոլիկ եկեղեցու հեռուստաալիքով: Ակնհայտ էր, որ «ոչը» գերազանցում էր: Երեկոյան Պինոչետը հրահանգեց ոստիկանությանը ճնշել քաղաքի փողոցներում տոնական տրամադրությունները՝ նախադրյալներ ստեղծելով հանրաքվեի արդյունքները խեղաթյուրելու համար: Ոստիկանությունը հրաժարվեց դա անել: Մինչ այդ իր սեփական հեռուստաալիքով հանրաքվեի արդյունքների մասին կարճատև հաղորդում տրվեց. Ժողովուրդը «ընտրել է» Պինոչետին, որին հաջորդեց ամերիկյան սերիալների ցուցադրությունը: Կաթոլիկ եկեղեցու հեռուստաալիքով հաղորդվում էր ճիշտ հակառակը [14]: Չայրացած Պինոչետը արագ ստորագրեց կառավարությունը ցրելու հրամանագիր: Նա այնուհետև իր մոտ հրավիրեց խունտայի մյուս երեք գեներալներին: Նախագահական պալատի ճանապարհին լրագրողների հարցին գեներալներից մեկն ընդունեց, որ «ոչի» քվեները գերազանցում են: Պինոչետը պահանջեց զինուժի մոբիլիզացում, ինչին գեներալները ընդդիմացան: Այնուհետև պահանջեց, որ նրանք հայտարարություն ստորագրեն, որ փոխանցում են որոշումների կայացման ողջ լիազորությունը միայն իրեն: Սա կատաղեցրեց Պինոչետի գործընկերներին: Գեներալներից մեկը Պինոչետի աչքի առաջ պատռեց հայտարարությունների տեքստը:

Պինդչետը մնացել էր միայնակ: Թեև Պինդչետը շարունակեց ևս մեկ տարի ղեկավարել բանակը, նրա գերիշխամությունը քայքայվել էր: չիլիում պատրաստվում էին ժողովրդավարական ընտրությունների, դեռևս պետք է հաղթահարել 1980թ. դրական սահմանադրությունը: Երկրում զանգվածային բռնություններն ու ռեպրեսիաները դադարել էին: Այնուամենայնիվ, Պինդչետի անկումից հետո նրա ներդրած տնտեսական համակարգը չփոխվեց, երկրի կատավարումը ստանձնած կենտրոնամետ և աջական ուժերը շարունակեցին ազատ շուկայական տնտեսության քաղաքականությունը [15]:

Եզրահանգում: Ուսումնասիրելով 20-րդ դարի ամենասարսափելի բռնապետերից մեկի՝ Ավգուստո Պինդչետի գործունեությունը՝ պետք է փաստել, որ նա ռազմական հեղաշրջման շնորհիվ եկավ իշխանության Չիլիում և ռազմական ամենասարսափելի ռեժիմը հաստատեց երկրում:

Նրա կառավարման շրջանը շատերը սարսափով են հիշում. մարդ, որի կառավարման շրջանում Սանտյագոյի մարզադաշտերում գնդակահարվում էին այլախոհները կամ էլ անհետ կորչում համակենտրոնացման ճամբարներում: Նրա կառավարման շրջանում պետության պլանային տնտեսությունը վերակազմավորվեց և դրվեց շուկայական հարաբերությունների նորացման ճանապարհին:

Պինդչետը փորձում էր, ինչպես ինքն է նշում, Չիլին դարձնել տերերի երկիր, ոչ թե պրոլետարների: Նրա կատարած բարեփոխումները հանգեցրին կենսաթոշակային համակարգի փոփոխության, որը վճարովի համակարգից վերածվեց կուտակայինի: Պինդչետի իշխանության գալուց հետո օրենք ընդունվեց այն մասին, որ այնուհետև ինքն է իշխանության բարձրագույն կրողն ու օժտված է անսահմանափակ լիազորություններով, և հաճախ նշում էր, որ Չիլիում անգամ մի տերև չի շարժվի, եթե ինքը չկամենա:

Պինդչետը ստեղծեց գաղտնի ոստիկանություն, որը գաղտնի հայտնաբերում էր քաղաքական ընդդիմադիրներին և ոչնչացնում: Նրա կատարած փոփոխությունները տնտեսական ոլորտում սկզբում առաջընթաց գրանցեցին: Տնտեսական ցուցանիշը աճում էր, սակայն քաղաքական տեռորի պայմաններում: Այնուհետև, երբ երկիրը հայտնվեց տնտեսական ճգնաժամի մեջ, սկսեց աճել գործազուրկների թիվը, երկրում սկսվեց դժգոհության ալիք բարձրանալ, իսկ առաջին լուրջ ընդվզումը Չիլիական հանքավայրերում էր: Երբ սկսվեցին գործադուլները, բանվորներին սկսեց միանալ ժողովուրդը և փողոց դուրս գալ փորձելով այդպես հասկացնել իշխող կառավարությանը իր

դժգոհությունը: Սրան կառավարությունը պատասխանեց ուժով, որը ուղեկցվում էր ձերբակալություններով և զոհերով: Ադրատության մակարդակը ևս սկսեց բարձրանալ, ինչն էլ իր ազդեցությունը ունեցավ հասարակության ակտիվության վրա: Վերակտիվացան նաև կուսակցությունները և կանգնեցին ժողովրդի կողքին:

Պետք է նշենք, որ Պինոչետի կառավարման շրջանում տնտեսության մեջ որոշակի դրական տեղաշարժեր եղան, բարեփոխումները երկիրը զարգացման տարան, բայց սրան զուգահեռ երկրում տիրող բռնությունները, ժողովրդի մոտ տիրող վախը Պինոչետի իշխանությանը տարավ տապալման:

АВГУСТО ПИНОЧЕТ НА ПУТИ К ВЛАСТИ

Варданын В. А.

В рамках статьи рассматривается жизнь государственного и военного деятеля Чили-Августо Пиночета, его действия, чтобы прийти к власти, а также его экономические преобразования. Как говорит Пиночет, без его ведома даже один лист в государстве не может пошевелиться. С помощью революции он пришел к власти, но именно недовольство народа заставило его оставить всё и уйти.

Ключевые слова: Революция, преобразования, Сальвадор Альенде, референдум, диктатор Сантьяго ла модена Чили.

AUGUSTO PINOCHET: ON THE WAY OF COMING TO POWER

Vardanyan V. A.

The study considers the life of the Chilean political and military figure Augusto Pinochet, his carried out operations for coming to power, as well as his economic reformations. As Pinochet mentioned “Not a single leaf moves in this country if I’m not the one moving it”. By means of revolution he came to power but because of the population’s complaint he abdicated the authority and left.

Keywords: revolution, reformations, Salvador Allende, referendum, dictator, tyrant, Santiago la Modena, Chile.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <https://www.britannica.com> (համացանցից դուրս է բերվել 21.09.2022):
2. Шевелев В., Утро Августо Пиночета. Правда о Чили. Архивная копия от 12 апреля 2006. Стр. 17-18.
3. <https://www.globalsecurity.org> (Համացանցից դուրս է բերվել 14.09.2022)
4. Шевелев В., Утро Августо Пиночета. Правда о Чили. Архивная копия от 12 апреля 2006. Стр. 20-21:
5. <https://hetq.am/hy/article> (Համացանցից դուրս է բերվել 22.09.2022)
6. <https://www.azatutyun.am> (Համացանցից դուրս է բերվել 25.09.2022)
7. Тарасов А., Хватит врать о Пиночете Правда о Чили, копия от 12 апреля 2006. стр. 36-37:
8. Тарасов А., Хватит врать о Пиночете Правда о Чили, копия от 12 апреля 2006. стр. 38-39:
9. <https://en.m.wikipedia.org> (Համացանցից դուրս է բերվել 26.09.2022)
10. <https://www.amnesty.org> (Համացանցից դուրս է բերվել 28.09.2022)
11. Кангас С., Чикагские мальчики и чилийское экономическое чудо. Архивная копия от 12 апреля 2006. стр. 33-34:
12. Bawden John R., The Pinochet Generation: The Chilean Military in the Twentieth Century 2021 P.163-164:
13. Bawden John R., The Pinochet Generation: The Chilean Military in the Twentieth Century 2021 P.167-168:
14. Bawden John R., The Pinochet Generation: The Chilean Military in the Twentieth Century 2021 P.169-172:
15. Тарасов А., Хватит врать о Пиночете Правда о Чили, копия от 12 апреля 2006 ст. 40-42:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Վարդանյան Վ. Ա. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ՎՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Պատմություն

Էլ. փոստ՝ varduhi.vardanyan29@mail.ru

Գիտական ղեկավար՝ Աղաջանյան Ս., պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 19.12.2022

К ВОПРОСУ О КУРДСКОМ ДВИЖЕНИИ В СОВРЕМЕННОЙ ТУРЦИИ И ЕГО ПЕРСПЕКТИВАХ В РЕГИОНЕ

Гаспарян А. Э.

В данном исследовании затронуты аспекты, касающиеся происхождения “курдского вопроса”, его дальнейшего развития в русле национального движения, истории сопротивлений курдов турецкому государству и перспективы курдского движения. Изучение процессов, происходящих внутри Турции, дает глубокое представление о военно-политических событиях на Ближнем Востоке и позволяет сделать адекватные ситуации выводы.

Ключевые слова: Курдское Национальное Движение, Рабочая Партия Курдистана (РПК), Турция.

Введение. Ближний Восток известен как один из крупнейших регионов мира, населенный древними народами, полный внутренними разногласиями, межконфессиональными конфликтами и борьбой за независимость. Причина этих конфликтов – стремление на право самоопределения. Идея «нация», возникшая вместе с современностью, неуклонно распространяется среди этнических групп, которые ищут свою идентичность в контексте вышеуказанного. Нация является политической и социальной организацией с устойчивым самосознанием. Именно самосознание играет ключевую роль в борьбе за независимость. Примерами являются курды, являющиеся этнической группой на Ближнем Востоке без государства.

Курдский народ происходит от иранского этноса, но они не рассматривались как отдельная этническая группа на Ближнем Востоке. Сегодня курды широко известны под несколькими именами. В Турции курдов обычно называют «горными турками». Курды борются в том числе и против этого.

В течение нескольких десятков лет курды смогли создать не только устойчивую почву для последующего развития, но и автономную территорию на севере Сирии. Все это обусловлено несколькими факторами.

1. Наличие идеологии.
2. Милитаризованное общество

Использованная литература. В ходе изучения были использованы материалы из книги В. Никитина «Курды», научные исследования ведущих специалистов в данной области, статьи и медиаресурсы, позволяющие сформулировать разностороннее и глубокое представление о данной проблематике.

Цель исследования: проанализировать истоки происхождения «курдского вопроса», его дальнейшее развитие в русле национального движения, историю сопротивлений курдов современной Турции и перспективы курдского движения в регионе.

Актуальность исследования: изучение процессов, происходящих внутри Турции, поможет нам установить логику развития событий в курдско-турецких отношениях и сделать прогнозы.

1. Происхождение «курдского вопроса». Ближний Восток наполнен страстями зарождающегося национализма, религиозного рвения, этнических конфликтов и внешнего вмешательства, а также более приземленной борьбы за землю и ресурсы. По мере приближения Ближнего Востока к 1990-м годам этнические и религиозные националисты, преданные национально-освободительным движениям, начали более активную деятельность.

Трагический опыт курдов на Ближнем Востоке представляет собой классический пример отрицания национального самоопределения после распада Османской империи [6].

В настоящее время (так сложилось за тысячелетия) племена курдов представляют собой совокупность (своеобразный конгломерат) многочисленных и зачастую антропологически разнородных этносов (выявлен весьма смешанный характер этнического типа курдов, а также и наложение множества религиозных учений).

Можно констатировать, что (современный) курдский этнос, в основе которого находится автохтонный субстрат, в процессе своей консолидации и интеграции, занявший несколько тысяч лет, избрал в себя преимущественно индоарийские (главным образом, иранские, особенно, мидийские), а также семитские (ассирийские, арамейские, позже арабские) элементы. Короче говоря, курдский этнос, как и все другие современные этносы-нации нашей планеты, является продуктом синтеза самых разнообразных этнических элементов, которые образовались в процессе исторического развития, начавшегося в незапамятные времена [2].

Говорят курды на курдском языке, который относится к индоевропейской группе языков, к его иранской ветви. В настоящее время курды пользуются несколькими алфавитами: в большей части Ирака и Ирана применяется арабский алфавит, а в Сирии, в Турции и некоторых частях Иракского Курдистана – латинский.

Курды жили в «Курдистане» как независимые эмираты с начала XVI века до середины XIX века на основании договора между курдами и османами, а именно между Идрисом-Битлисом от имени курдских племен и османского султана Селима I. Курды воевали вместе с османами против Сефевидов Ирана и взамен они жили в Курдистане в 333 году под властью османов как относительно независимые эмираты, начиная с Чалдырской войны 1514 года и заканчивая основанием «Курдистанского Государства (эялет)» в 1847 г.. [5]

Курдская знать начинает склоняться в сторону сепаратизма в середине 19 века, во время ослабления Османской Империи. С этого времени, то есть со второй половины 19 века, начинается важный период борьбы курдского народа за свою независимость против Турции и Ирана. К этому времени и относится возникновение на Ближнем и Среднем Востоке курдского вопроса.

2. Создание курдского национального движения. Курдистан – «страна курдов» – не помечен ни на одной географической карте. Под этим названием имеют в виду территорию компактного расселения курдов в квадрате приграничных районов Ирана, Ирака, Турции и Сирии. Суть курдского вопроса – отсутствие независимости и разобщенность курдского народа. В битве за Ближний и Средний Восток западные силы систематически пытались и пытаются использовать национальные чаяния курдского народа в своих корыстных интересах. Однако курдское национальное движение становится важным фактором в антиимпериалистической борьбе народов Ближнего и Среднего Востока за мир и социальный прогресс.

По мере усиления проникновения иностранного капитала в Турцию и Иран империалистические державы пытаются превратить курдское национальное движение в орудие для своего давления на эти страны с целью получения определенных политических и экономических выгод. Более того, после победы Октябрьской революции западные державы в своих попытках ослабить МОЛОДУЮ Советскую республику определенную ставку делали и на курдов, которые, согласно их планам,

должны были просачиваться на территорию Закавказских республик и вызвать там беспорядки. За это курдам была обещана «независимость». Речь шла в данном случае о создании буферного «Курдского государства» под протекторатом Англии, с тем чтобы в НУЖНЫЙ момент иметь готовый военно-стратегический плацдарм против Советской России. Однако этим планам не суждено было осуществиться. Широкие массы курдского населения не встали под реакционные знамена прозападных руководителей [1].

После Первой мировой войны у курдов появилась надежда получить независимость, однако предварительные Севрские соглашения были перечеркнуты в Лозанне в 1923 году. Турция потеряла Южный и Юго-Западный Курдистан, вошедшие в состав Ирака и Сирии - сферы влияния Англии и Франции.

Окончание Второй мировой войны привело к обострению международной обстановки в Передней Азии, где вполне ожидаемо встал на повестку дня вопрос о независимости курдов и создании государства Курдистан – так называемый курдский вопрос.

1960-е гг. стали периодом новой волны курдского самосознания. Курдская молодёжь начала открывать для себя курдский национализм. Уже в середине 1960-х гг. в восточных вилайетах проходило множество митингов с требованиями сецессии: курдская интеллигенция обращалась в различные международные организации с целью обязать Турцию соблюдать права курдов.

Таким образом, в этот период особую значимость приобрела классовая идеология, а не националистическая. Под воздействием националистической идеологии сформировалось два течения: первое – национальные курдские элиты, создававшие свои партии, не опираясь на идеологию левого лагеря (Картал, лидеры ДПТК); второе направление представляли курды, которые видели курдский национализм в качестве этапа объединения «прогрессивных сил в регионе», призванного стать началом формирования интернационального рабочего движения. На Курдистан возлагалась миссионерская задача по мобилизации всех левых сил региона. Из таких движений вышли будущие руководители Рабочей партии Курдистана (Абдулла Оджалан, Джемиль Байик, Кесире Йылдырым). Партия Абдуллы Оджалана (Рабочая партия Курдистана или РПК) была создана 27 ноября 1978 г..

В самом начале важнейшими задачами РПК было: разрушение родового строя, упразднение рабства женщин и, наконец, создание независимого от Турции Курдистана. Таким образом, РПК формировала свою структуру на основе трилогии: «Партия», «Фронт», «Армия».

В это время, в 1980г., в Турции произошел военный переворот, который руководил генерал Эврен. Ситуация между курдами и турками накалялась все больше. Было запрещено разговаривать и использовать курдский язык, называть детей курдскими именами, а также турки в это время централизовали все силы на ослабление курдской общины. Для этого были созданы сельские стражи из курдов, которые были против революционных действий РПК. В сложившейся ситуации в 1982г. было решено начать партизанскую войну против Турции, которая в последующем примет всенародный характер. 15 августа в 1984г. После двух военных наступлений партизан началась полномасштабная война. С 1984-1988г. было проведено свыше 1100 военных операций курдскими партизанами. Турция несла большие потери. Ситуацию подогревали США в 1991г. операцией в Ираке. Оборот оружия в регионе стал колоссальным. Неся огромные потери, Анкара решает пойти на хитрость. В 1991г. власти Турции решают разрешить курдский язык в быту. Курдские движения легализуются. Все это было сделано для того, чтобы взять передышку и ослабить внимание врага. В 1995г. Анкара решается на проведение самой масштабной операции за пределами страны. Операция «Сталь» началась в марте. Но как бы большим ни был ее размах, Турция не смогла уничтожить боевой потенциал РПК. Между тем, РПК воевали не только с турецкими силовиками, но и с иракскими курдами. Вооруженное противостояние продолжалось до конца 90-х гг. За это время с обеих сторон погибло более 20 тыс. человек.

Западные силы, в лице Америки, не хотели усиления курдов, так как именно в это время совместно с Турцией и Азербайджаном, они строили нефтяную дорогу Баку-Джейхан, которая в случае победы курдов проходила бы через территории последних.

После ареста в феврале 1999 г. А. Оджалан, приговоренный турецким судом к смертной казни, призвал своих сторонников к прекращению боевых действий и переходу к решению курдского вопроса мирными, политическими методами. Из-за давления ЕС и ЕСПЧ Эрдоган отменил смертную казнь, и сейчас лидер РПК находится на острове в заключении. Во время своего заключения Оджалан пришел к идее

демократической революции. Отказ от марксизма стал причиной глубокого идеологического кризиса РПК.

В феврале 2000 г. собрался VII чрезвычайный съезд РПК, на котором было принято согласованное решение принять предложение А. Оджалана. Однако со стороны турецкого правительства адекватных шагов предпринято не было. Его курс репрессивной политики по отношению к курдам остался прежним. В настоящее время в Турции живет около 2-ух миллионов курдов, которые говорят на курдском языке. Курды в Турции сегодня требуют провозглашения единого и независимого государства – Курдистан, который объединит все территории, населенные курдами. Сегодня курдский вопрос – один из ключевых в обсуждениях дальнейшего пути евроинтеграции Турции. Требования Европы предоставить курдскому народу автономность и права, соответствующие европейским стандартам, пока остаются нереализованными. Эти обстоятельства во многом объясняют причину, почему турки не любят курдов.

Новая страница курдской истории открывается в 2003г., когда США начали кампанию против Ирака с целью завоевания нефти последнего. В то время иракские курды не поддерживали Ирак в борьбе против США. Исходя из этого Запад установил плотные контакты с демократической партией иракского Курдистана, дав ей разрешение на создание полноценной автономной области на севере страны. Таким образом, они стали плацдармом для США на Ближнем Востоке, которые были профинансированы Западом и против Ирака, и против РПК. В это время активизируется РПК. В 2005г. начались военные соприкосновения. Стоит отметить и то, что женщины тоже принимали активное участие в боевых действиях. И Турция, и партизаны несли огромные потери. Эрдоган вынужден был остановить военные действия и начать переговоры с Оджаланом. В 2012г. начались переговоры и закончились мирным договором. Со стороны Турции было принято 2 пункта.

1. Политическая амнистия
2. Внесение в турецкую конституцию тезис о существовании курдов

Со стороны курдов был принят 1 пункт:

1. РПК должна вывести партизанские отряды с турецких территорий
РПК вывела свои отряды, в то время как турки лишь оттягивали момент выполнения своей части договора.

С 2013 по 2015гг. со стороны курдов было озвучено множество раз, что должен наступить новый этап урегулирования этого конфликта. Начиная с 2015г. противостояние продолжается.

Заключение. В ходе изучения данной темы мы пришли к следующим умозаключениям:

курды в настоящее время расселены в Турции, Сирии, Иране и Ираке. Государства, как такового у них нет, между тем они являются самой большой этнической группой на Ближнем Востоке.

Это расселение влияет не только на их самосознание, но и на то, за чьи интересы они выступают в регионе. Примером могут являться иракские курды, которые сотрудничают с Турцией против РПК. Иракские курды сумели создать автономную область в этой зоне, и им ни к чему поддерживать РПК за то же самое. В случае укрепления позиций Оджалана, последние помечут также и территории иракских курдов и захотят расширить свою сферу влияния и на них тоже. Поэтому курды Ирака позволяют туркам атаковать через свои территории РПК.

Когда мы говорим о Турции, мы должны отметить также и США. Ведь интересы Запада в регионе представляет Турция, являясь также и союзником по НАТО. То есть, и для Штатов не выгодно усиление курдов. Если они будут поддерживать курдов, то они потеряют союзника на Южном Кавказе. В последние годы Турция отделилась от влияния США, и называть Турцию союзником немного спорно, так как турецкие власти стали вести свой собственный вектор политики в регионе, и это не может не волновать Запад. Курды являются сдерживающим механизмом для США против Турции. США как не могут отказаться от курдов, так и не поддерживать их.

У курдов есть потенциальный союзник на Южном Кавказе в лице Азербайджана, так как у власти Азербайджана стоит семья с курдскими корнями. Но происходит обратный процесс. Вместо того, чтобы поддерживать свой народ в борьбе за самоопределение и независимость, Азербайджан все больше укрепляет отношения с Турцией. Потенциал у курдского движения немалый. Но они смогут создать свою государственность лишь тогда, когда исчезнут межэтнические вопросы.

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԳԻԱՅՈՒՄ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՌԱՆԿԱՐԿՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ
Գասպարյան Ա. Է.**

Այս թեմայի ուսումնասիրության ընթացքում հետազոտվել են «քրդական հարցի» ծագումը, դրա հետագա զարգացումը ազգային շարժման տեսքով, քրդերի դիմադրությունը ժամանակակից Թուրքիայի դեմ և քրդական շարժման հեռանկարները տարածաշրջանում: Թուրքիայի ներսում տեղի ունեցող գործընթացների ուսումնասիրությունը կօգնի մեզ բավական խոր պատկերացում կազմել Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական իրադարձությունների վերաբերյալ:

Բանալի բառեր. Քրդական ազգային շարժում, Քրդական բանվորական կուսակցությունը (ԲԲԴ), Թուրքիա:

**TO THE PROBLEM OF KURDISH MOVEMENT IN MODERN TURKEY
AND ITS PERSPECTIVES IN THE REGION**

Gasparyan A. E.

The paper touches upon the aspects related to the origin of the “Kurdish question”, its further development in line with the national movement, the history of the resistance of the Kurds against modern Turkey and the prospects for the Kurdish movement in the region. The study of the processes taking place inside Turkey will help us to formulate a fairly deep understanding of the military-political events in the Middle East.

Keywords: Kurdish National Movement, Kurdistan Workers' Party (PKK), Turkey.

ЛИТЕРАТУРА

Книги

1. В. Никитин Курды. Издательство «Прогресс». Москва. 1964. 249 с.
2. NecatKESKİNNationalistic Senses and Kurdish Politics in the Last Century. NubiharAcademi. 2017. 80 p.

Статьи и журналы

3. Бижан А. Н. Курдский вопрос и изучение истории курдов в Советской России (1920–1980-е годы). Воронежский государственный университет. 10 апреля 2020 г. -С. 62-64.

4. Галиакбарова Н. М. Курды в рамках этностатусной системы Турции в республиканский период. Екатеринбург. 2015. –С. 102.
5. Михаил Зильберман О курдах, езидах и архаичности их корней и верований. 2019.
6. Charles G. MacDonald The Kurds. Journal of Political Science. November 1991.Vol. 19. p. 122-139.

Сведения об авторе и научном руководителе

Гаспарян А. Э. – бакалавриат 3-ий курс

РАУ, Институт Востоковедения, Тюркология

Эл. почта: anna.gasparyan@rau.am

***Научный руководитель:** Евстратов А., канд. ист. наук.*

Поступила 10.11.2022

Прошла рецензию 07.12.2022

ՀՆԴԿԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
Բարինյան Ս. Ռ.

Իսլամը Հնդկաստան ներթափանցեց VII դարի վերջին, թեև հարկ է նշել, որ Արաբական թերակղզու և Հնդկաստանի միջև ծովային առևտրային կապ կար դեռ շատ վաղուց: Հնդկաստան ներթափանցած առաջին մահմեդականները հենց առևտրականներն էին, ինչպես նաև քարոզիչները. վերջիններիս գլխավոր նպատակը նոր հավատքի տարածումն էր: Մահմեդականները դարերի ընթացքում հաստատվում էին Հնդկաստանի նվաճված տարածքում, իսկ տեղի բնակչությունը դանդաղ, բայց, այնուամենայնիվ, ընդունում էր իսլամը՝ այս շրջանն առանձնացնելով իր մշակութային առանձնահատկություններով: Ըստ էության՝ տրված էր հնդկական և իսլամական մշակույթների միախառնման, սինթեզի գործընթացի մեկնարկը: Այսպես, հենց այս սինթեզված մշակույթի գրական վառ ներկայացուցիչն է Կաբիրը, որը հանդիսանում է հինդուիստական «Բհակտի» և մահմեդական «Մուֆի» կրոնական բարեփոխիչ շարժումների կապող օղակ:

Զեկույցը փորձ է հնդկական իսլամի ու նրա առանձնահատկությունների ուսումնասիրության ու դրանից բխող աշխարհաքաղաքական հանգամանքների քննության՝ կատարված աղբյուրագիտական ու կրոնագիտական՝ կազուալ մեթոդների համադրմամբ:

Բանալի բառեր. Հնդկաստան, հինդուիզմ, իսլամ, կայսրություն, սուֆիզմ:

Իսլամը Հնդկաստան ներթափանցեց VII դարի վերջին [1. Бочарникова: 11], թեև հարկ է նշել, որ Արաբական թերակղզու և Հնդկաստանի միջև ծովային առևտրային կապ կար դեռ շատ վաղուց: Հնդկաստան ներթափանցած առաջին մահմեդականները հենց առևտրականներն էին, ինչպես նաև քարոզիչները. վերջիններիս գլխավոր նպատակը նոր հավատքի տարածումն էր: Արդեն 8-րդ դարում սանսկրիտով գրված մի շարք տեքստեր թարգմանվում էին արաբերեն [1. Бочарникова: 11]: Շնորհիվ ծովային առևտրի իսլամը տարածվում էր Հնդկաստանում: Համաձայն լեգենդի՝ Հնդկաստանում առաջին մզկիթը՝ Չերաման Ջուման, 629 թվականին կառուցել է (դեռևս Մուհամմեդի

կենդանության օրոք) առաջին հնդիկ մահմեդականը՝ Չերաման Պեումալը [1. Бочарникова: 12]: Արաբական խալիֆայությանը 642 թվականին հաջողվեց գրավել Իրանը, և արաբներն անմիջապես մոտեցան Հնդկաստանի սահմաններին: Խալիֆայությունը 17-ամյա Մուհամմադ իբն Կասիմին ուղարկեց՝ Սինդի նահանգը վերահսկողության տակ վերցնելու [1. Бочарникова: 12-13]: 17-ամյա զորավարն անարգել մտավ Սինդի, մի շարք քաղաքներում նրան դիմադրություն էլ ցույց չսովեցին: Սակայն Սինդիի ռաջա Դահիրը զորք հավաքեց և դուրս եկավ մարտնչելու, ինչն էլ ավարտվեց մահմեդականների վստահ հաղթանակով: Հաղթանակից հետո գրավյալ տարածքներում արաբները զբաղվում էին թալանով, իսկ տեղական բնակչությանը ստրկացնում էին, փորձում էին բռնի կերպով կրոնափոխ անել նրանց [1. Бочарникова: 16]: Երիտասարդ առաջնորդը շարունակում է իր արշավանքը՝ այս անգամ ուղղություն վերցնելով հարավից դեպի հյուսիս [1. Бочарникова: 13]: Հասկանալով, որ թալանի, ստրկացման և բռնի կերպով կրոնափոխության ռազմավարությունը ի վերջո կբերի ապստամբության, գրավելով Մուլտանը, Մուհամմադ իբն Կասիմը չվարվեց նույն կերպ այնտեղ, փոխարենը չքանդեց տեղական հինդուիստական տաճարը, այլ միայն հարկ սահմանեց հինդուների, քրիստոնյաների, հրեաների և զրադաշտականների վրա՝ կոչելով նրանց «գրքի մարդիկ» [1. Бочарникова: 13-14]:

Ստրուկներին, որոնք ընդունում էին իսլամ, արաբները ստիպված էին բաց թողնել, քանզի մարգարեն ինքն էր քարոզում մարդկանց հավասարություն և բաց էր թողնում նրանց:

Արաբներին հաջողվել էր գրավել Սինդիը, Մուլտանը, ինչպես նաև պատմական Փենջաբ նահանգի հարավը, սակայն նրանք չշարժվեցին դեպի արևելք, քանի որ խալիֆայության տարածքը շատ մեծ էր, և վերահսկելը դժվար էր [1. Бочарникова: 14]: Գրավված տարածքներում իսլամ ընդունողների թիվը մեծ չէր: Հիմնականում նոր հավատն ընդունում էին ցածր վառնաներին պատկանող մարդիկ՝ շատ դեպքերում պարզապես հարկերից խուսափելու համար:

Գրավելով Սինդիը, արաբները չստիպեցին բնակչությանը կրոնափոխ լինել, ավելին՝ նրանք երաշխավորում էին բնակչության անվտանգությունը: Այնտեղ սկսեցին գործել որոշ մահմեդական օրենքներ, և, ի վերջո, հաջողվեց բնակչության մի հատվածին դարձնել իսլամադավան:

Մահմեդականներին հաջողվեց արագ գրավել Սինդի նահանգը, և այն միացվեց Արաբական խալիֆայությանը: Այստեղ մտցվեցին մահմեդական հողային կանոնակարգեր, մահմեդական իրավունքներ, ինչպես նաև հարկեր և տուրքեր սահմանվեցին ոչ մահմեդականների վրա: Չնայած այն բանին, որ նվաճողները հիմնականում խուսափում էին բռնի կրոնափոխ անել տեղի բնակչությանը, այնուամենայնիվ նրանց հիմնական մասը դարձավ իսլամադավան [1. Бочарникова: 15]: Մահմեդականները հաստատվում էին Հնդկաստանի նվաճված տարածքում, իսկ տեղի բնակչությունը դանդաղ, բայց, այնուամենայնիվ, ընդունում էր իսլամը՝ այս շրջանն առանձնացնելով իր մշակութային առանձնահատկություններով: Ըստ էության՝ տրված էր հնդկական և իսլամական մշակութային միախառնման, սինթեզի գործընթացը [1. Бочарникова: 16]:

XI-XIII դարերում Խաչակրաց և Մոնղոլական արշավանքների հետևանքով Արաբական խալիֆայությունը կործանվեց, իսկ Հնդկաստանի հյուսիսային շրջանները, որոնք արդեն նոր մշակութային գոտի էին համարվում, սկսեցին ենթարկվել մեկ այլ մահմեդական նվաճողի՝ թյուրքական արքայատոհմից Մահմուդ Ղազնևու հարձակումներին: Ղազնևուն հաջողվեց գրավել Փենջաբն ու Սինդիը, իսկ Լահոր և Մուլտան քաղաքները դարձան ադմինիստրատիվ կենտրոններ, որտեղ ապրում էին սուֆիներ, պոետներ, գիտնականներ և այլն [1. Бочарникова: 17]:

Ղազնևու հաջորդները չկարողացան պահել նրա ստեղծած կայսրությունը և արդեն XII դարի վերջին այդ կայսրության արևելյան շրջաններն անցան թյուրքական արքայատոհմից մեկ այլ ներկայացուցչի՝ Մուհամմադ Ղուրիի վերահսկողության տակ: Նա Լահորը հռչակեց իր կայսրության մայրաքաղաք և շարժվեց դեպի հարավ՝ գրավելով Սինդիը և Բելուջիստանը, իսկ ավելի ուշ՝ Ռաջաստհանը և Դելին [Бочарникова: 17]: Մուհամմադը ստիպված էր հեռանալ Հնդկաստանից և որպես իր փոխարինող Հնդկաստանում է թողնում իր ծառա Քութուբ-ուդ-դին Այբեկին: 1206 թվականին Այբեկը հիմնադրեց Հնդկաստանի տարածքում առաջին խոշոր իսլամական պետությունը՝ Դելիի սուլթանությունը [1. Бочарникова: 17]:

Հարկ է նշել, որ մահմեդական նվաճողների մեծ մասը չփորձեց բռնի կրոնափոխ անել հնդիկներին: Իսլամը դանդաղ տարածվում էր Հնդկական թերակղզում՝ շնորհիվ սուֆի քարոզիչների ջանքերի: Մահմեդականները և հինդուները խաղաղ ապրում էին կողք կողքի,

ավելին՝ նույնիսկ միմյանց հետ ընտանիքներ էին կազմում, ինչի վառ ապացույցն է այն, որ Դելիի սուլթան Ալա ադ-դին Խիլջին ամուսնացավ հինդու կնոջ հետ: Համաձայն աղբյուրների՝ նա իր որդիներին նույնպես ամուսնացնում էր հինդու արքայադուստրերի հետ [1. Бочарникова: 18]:

Դելիի սուլթանության շրջանում տեղի ունեցավ հնդ-իսլամական մշակույթի ծնունդը, որը հիմնված էր պարսկական, թուրքական և հնդկական գրական և գեղարվեստական ավանդույթների վրա, ինչն էլ նպաստեց գրականության, մշակութային կյանքի, արվեստի և գիտության զարգացմանը:

Հենց այս սինթեզված մշակույթի գրական վառ ներկայացուցիչն է Կաբիրը, որը հանդիսանում է հինդուիստական «Բհակտի» և մահմեդական «Սուֆի» կրոնական բարեփոխիչ շարժումների կապող օղակ [2. Brosalina: 43]: Համաձայն լեգենդի՝ Կաբիրը ծնվել է 1440 թվականին բրահմանական ընտանիքում: Նրա մայրը նրան թողել է դրսում և հեռացել: Կաբիրին գտել է մի մահմեդական ջուլհակ, և նա մեծացել է հենց այդ ջուլհակների ընտանիքում: Կաբիրն իր ստեղծագործություններում փորձել է ցույց տալ մարդու՝ Աստծուն անմնացորդ և անձնուրաց նվիրման կարևորությունը, ներկայացրել է մարդու տգիտության և մեղսավոր էության դատը ողբը, որն էլ տանում է բաժանման սիրելի Աստծուց, բայց միննույն ժամանակ նա այս ամենն ուղղում է վերացական, ոչ անձնավորված Աստծուն: Ըստ Կաբիրի՝ կյանքի ընթացքում ազատագրման (մոկշա) վիճակին կարելի է հասնել յոգայի ճգնավորության միջոցով, որը մարդուն հնարավորություն է տալիս գիտակցել իր անձի մեջ աստվածային էությունը և միաձուլվել դրա հետ: Կաբիրի գաղափարները, ըստ էության, արտացոլում են Բհակտի և Նատհա վարդապետությունների և սուֆիզմի կրոնական սինթեզի գործընթացը: Սուֆիական աշխարհայացքի ազդեցության և քարոզների արդյունքում պոետի ստեղծագործություններում ակնհայտ է դառնում որոշ առանձնահատուկ փիլիսոփայական գաղափարների առկայությունը: Իր ստեղծագործություններում նա ընդգծում էր Աստծո միասնությունը բոլոր հավատացյալների համար՝ անկախ նրանից, թե որ կրոնն են նրանք դավանում (հինդուիզմ թե իսլամ), քննադատում էր կրոնական վեճերի ցանկացած դրսևորում և իր քարոզներն ուղղում էր ինչպես հինդուներին, այնպես էլ մահմեդականներին: Նա դեմ էր հասարակության ցանկացած շերտավորման [2. Brosalina: 44]: Կաբիրի ստեղծագործություններից շատերը տեղ են գտել սիկիսերի սուրբ գրքում՝

Աղի Գրանտիում [2. Brosalina: 46]: Կաբիրին իրենց սուրբն են համարում ն՝ հինդուները, ն՝ մահմեդականները:

1526 թվականին՝ Դելիի սուլթանության անկումից հետո, Հնդկաստանի հյուսիսում իշխող դարձան թյուրքական ծագում ունեցող մեկ այլ արքայատոհմի՝ Մեծ մողոլների կայսրության ներկայացուցիչները [1. Бочарникова: 19]: Մողոլներն իսլամադավան էին, սակայն նրանց կառավարման շրջանում՝ մինչև Աուրանգզեբի գահ բարձրանալը, կրոնական հալածանքներ կամ նույնիսկ հարկեր չեն եղել հինդուների նկատմամբ, իսկ ավելի ուշ Փենջաբում տեղի ունեցած բախումները սիկիների հետ ավելի շատ քաղաքական դրդապատճառ ունեին, քան կրոնական [1. Бочарникова: 19]: Աուրանգզեբը գահ բարձրանալուց հետո հարկեր սահմանեց ոչ մահմեդականների համար, որպեսզի բավարարի իր ռազմական պահանջները: Նրա մահվանից հետո տարբեր ներքին և արտաքին գործոնների հետևանքով Մեծ մողոլների կայսրությունն անկում ապրեց:

Ամփոփելով Հնդկաստանում գոյություն ունեցած մահմեդական թագավորությունների և կայսրությունների պատմության հակիրճ նկարագիրը՝ կարելի է եզրակացնել, որ մահմեդական կառավարիչները խուսափել են բռնի ուժով կրոնափոխ անելուց կամ առհասարակ ճնշում, բռնություն գործադրելուց տեղի բնակչության հանդեպ: Նրանք փորձում էին լավ հարաբերություններ պահպանել բարձր խավերի ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ հնդկական հոգևոր համայնքի՝ բրահմանների հետ: Թերևս սա է պատճառը, որ Հնդկաստանում մահմեդականներին ընդունեցին շատ հանգիստ և որևէ դիմադրություն ցույց չտվեցին նրանց, իսկ ցածր խավերի շատ մարդիկ (հիմնականում՝ անթույլատրելիները) ընդունեցին նոր հավատքը [1. Бочарникова: 19]:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ հնդկական իսլամը և ուղղափառ իսլամը, ըստ երևույթին, պետք է լինեն տարբեր: Դեոբանդի և Բարելվի կրոնական շարժումների միջև կոնֆլիկտը Հնդկական թերակղզում պատմականորեն պարզ պատկերացումներ է տալիս Հարվային Ասիայում ազգային իսլամի մասին: Դեոբանդի իսլամը ծագել է 1866 թվականին՝ ի պատասխան Հնդկաստանում բրիտանական կառավարման՝ ձգտելով ցուցադրել սուֆիական ավանդույթն ու վարդապետությունը՝ որպես իրավաբանական նորմերին համապատասխան երևույթ: Դեոբանդիականները հոգևոր միասնության են ձգտում Ալլահի հետ, սակայն Ղուրանի և Հադիսի վրա նրանց կենտրոնացումը ստիպում է նրանց դատապարտել ժողովրդական սովո-

րույթները, հատկապես սուֆիական սրբերի պաշտամունքը դարգահներում և Մուհամմեդի ծննդյան տոնակատարությունը [3. Elliott: 65]:

Վերոնշյալածին զուգահեռ ստեղծվեց նաև Բարելվի իսլամը՝ ի հակադրություն/ի պատասխան Դեոբանդի շարժման և ի պաշտպանություն ազգային իսլամական ավանդույթների: Բարելվիականներն իրենք իրենց անվանում են *Ահլ-ի Սուննայթ վա Ջամա'այթ (Ahl-I Sunnat va Jama'at)* (Սուննահի համայնքի հավաք) և համարում, որ իրենք են ճշմարիտ սուննիները՝ ի տարբերություն դեոբանդիականների: «Բարելվի» եզրույթը կապված է Ահմադ Ռիզա Խանի հետ, ով ապրում էր Ուտտար-Պրադեշ նահանգի Բարելիլի քաղաքում: Նա դեոբանդիական հոգևորականներին հրապարակայնորեն անվանում էր *kafir* (անհավատներ), ինչի հետևանքով էլ սկսվեց ֆեթվա¹-պատերազմ երկու շարժումների միջև, որտեղ կողմերը մեղադրում են միմյանց [3. Elliott: 66]:

Խանը հազարավոր ֆեթվաներ է գրել: Դրանցից ամենահայտնին Մուհամմեդի՝ անտեսանելիի մասին առեղծվածային գիտելիքի մասին էր, որը ներառում էր նաև գիտելիքներ ապագայի մասին: Խանի համար Մեդինայում գտնվող Մուհամմեդի դամբարանը համարվում էր աշխարհի ամենասուրբ վայրը՝ շրջանցելով նույնիսկ Մեքքայի Քա'աբան (*Ka'aba*): Նրա կարծիքով՝ Ալլահի և Մուհամմեդի միջև որևէ միջնորդ չի եղել, քանի որ Մուհամմեդը կատարյալ է եղել: Նա հավատում էր, որ Մուհամմեդը լույսից է, չունի ստվեր և նույնիսկ գերեզմանից կարող է օգնել նրանց, ում որ կամենա: Մի անգամ Մեդինա այցի ժամանակ Խանը մեկ ամիս մնացել է Մուհամմեդի դամբարանում՝ փորձելով գտնել, զգալ նրա հոգևոր ներկայությունը: Խանի վարդապետությունը շատ ազդեցիկ է հատկապես Հնդկաստանի հյուսիսում: Նա կարծում էր, որ մահմեդականները պետք է հետևեն մարդու և Աստծո միջև միջնորդների հիերարխիային, որտեղ առաջինը Մուհամմեդն է, երկրորդը՝ Աբդ ալ-Ղադր Գիլանին (Ղադիրի սուֆիական ուղղության հիմնադիր), և երրորդը՝ իրենց սուֆի փիրը (միստիկ ազգային իսլամի հոգևոր առաջնորդ) [3. Elliott: 66-67]:

Անհրաժեշտ է առանձնացնել նաև Հարավային Ասիայի ազգային իսլամական մի քանի կարևոր ծեսեր և ավանդույթներ: Դրանցից են նա'թ (*na't*) (երգեր՝ նվիրված Մուհամմեդին) երգելը, խնդրել միջնորդություն

¹Օսնոթագրություն - Ֆեթվա (արաբերեն՝ որոշում, եզրահանգում), մահմեդական կրոնական-իրավաբանական համակարգում նշանակում է հոգևոր բարձրագույն անձի վճիռ՝ իսլամի սկզբունքներին որևէ գործողության, փաստի կամ երևույթի համապատասխանության մասին:

սրբերի դամբարաններում, սրբապատկերների օգտագործումը: Իրոք, իսլամական ազգային ծեսերն ու ավանդույթները բաժանաբար գիծ են կազմել հյուսիսհնդկական իսլամում [3. Elliott: 68]:

Նա՛թ երգելը բացատրվում է Բարելվիի *հազիր-օ-նազիր hazir-o-nazir* անվամբ վարդապետությամբ, որտեղ ասվում է. «Մարգարեն ներկա է իր հոգևոր ներկայությամբ որպես մաքուր լույս (նուր-ի Մուհամմադի) և կարող է միջնորդ լինել մահմեդականների և Աստծո միջև»: Նա՛թ երգելն ապահովում է հատուկ հարաբերություններ մարգարեի հետ և խնդրում է նրա միջնորդական ներկայությունը: Որոշ երգողներ նա՛թ երգելով դիմում են նաև սուֆիական սրբերին: Երբեմն այս ծեսը ուղեկցվում է պարով և մարիխուանայի օգտագործմամբ՝ հոգևոր վիճակի հասնելու համար: Եվ այս ամենն արվում է Ալլահի հետ հարաբերություններն ավելի լավացնելու նպատակով [3. Elliott: 68]:

Չարգահներն այն համալիրներն են, որտեղ գտնվում են սուֆիական սրբերի *մազհարները* (գերեզմանները): Մեծ Չարգահներում կան կենդանի փիրեր, ովքեր ուսուցանում են մուրիդներին (աշակերտներին): Փիրի-մուրիդի հարաբերությունների մեջ մտնելը ենթադրում է ձեռնադրության ծես, որի ժամանակ մուրիդը խոստանում է լինել հնազանդ, իսկ փիրը հոգևոր բարաքատ² է տալիս մուրիդին: Կատեղելություն մի փիրի մասին, ով ձեռնադրել է իր աշակերտին՝ սեղմելով իր մատը նրանց կրծքի մեջ: Այդ ժամանակ նվիրյալը լցվում է Աստծով և իրապես լսում է Ալլահի ձայնն իր մարմնի ներսում: Հնդիկ սուֆի Ջոն Սուբհանը, ով դարձել էր դեպի Քրիստոս, Հարավային Ասիայում առանձնացրել էր 543 Չարգահներ՝ ցույց տալով այդ սրբավայրերի տարածվածությունն ամենուր: Մահացած սուֆիների մասին կան լեգենդներ, ըստ որոնց՝ նրանք կարողանում են անել այնպիսի անհավանական բաներ, ինչպիսիք են տելեպորտացիան³, ջրի վրայով քայլելը կամ թռչելը: Քրիստոնյաները, սիկիերը, հինդուները և այլք հաճախ գնում են Չարգահներ՝ բարկատի համար: Փիրերը և այլ մահմեդական սրբեր ապրում են Չարգահներում և պատրաստում են կախարդական թալիսմաններ, հանում են դներին և մարգարեություններ են անում այցելուների համար [3. Elliott: 69]:

² Ծանոթագրություն - արաբ. ^٤بر: Նշանակում է աստվածային օրհնանք, բարեկեցություն, տնտեսական բարօրություն:

³ Ծանոթագրություն - տելեպորտացիան նյութի կամ էներգիայի ենթադրական փոխանցում է մի կետից մյուսը՝ առանց հատելու դրանց միջև ձևավորված ֆիզիկական տարածությունը:

Սրբապատկերները հիմնականում ներկայացնում են սուֆի սրբերին, շիա առաջնորդներին կամ Մուհամմեդի մասունքները:

Սրբապատկերները ավանդաբար գնվում են որպես դեպի դարգահ ուխտագնացության հուշանվերներ՝ այն ակնկալիքով, որ այցելած վայրի կամ կերպարի որոշակի խարիզմա կամ օրհնություն կշարունակի մնալ այն պատկերող պաստառում:

Թե՛ դեոբանդականների, թե՛ բարելվիների մեջ տարածված է Ղուրանի և Կա'աբայի նկարները, ինչպես նաև Ղուրանի որոշ հատվածների արաբերեն գեղագրությունը [3. Elliott: 70]:

Անհրաժեշտ է առանձնացնել նաև հինդուների և մահմեդականների միջև կոնֆլիկտները Հնդկաստանում: Դրանցից մեկը տեղի է ունեցել XX դարի վերջին:

Ուտտար-Պրադեշ նահանգի Այոդիյա քաղաքում կա XVI դարում կառուցված մի մզկիթ՝ Բաբուրի մզկիթը, որի ներսում է գտնվում Ռամջանամաբհումի (բառացի՝ հող, որտեղ ծնվել է Ռամը (Վեդայական ավանդույթում համարվում է Վիշնու սսծտո 7-րդ ավատարը)) տաճարը: Այս մզկիթը կառուցել է Մեծ մողոլների կայսր Բաբուրի գորավարներից մեկը, իսկ հինդուները պնդում են, որ հենց այս տաճարում է ծնվել Ռամը: XIX դարում տեղի են ունեցել բախումներ կողմերի միջև՝ տաճարին տիրելու համար: Բրիտանական իշխանություններն առաջարկել էին գնալ կոմպրոմիսի, ըստ որի՝ մահմեդականները կարող էին ադոթել մզկիթի ներսում, իսկ հինդուները՝ տաճարի դրսում կառուցված հարթակի վրա [4. Юрлов, Юрлова: 399]:

Անկախությունից հետո՝ 1949 թվականին, պաշտոնյաներից մեկի թույլտվությամբ հինդուները գիշերով տաճարի ներսում գաղտնի կերպով դնում են Ռամի արձանը, իսկ առավոտյան հավատացյալ հինդուները դա համարում են հրաշք և մեկնաբանում հետևյալ կերպ. «Ռամը պահանջում է վերադարձնել իր ծննդավայրը»: Վարչապետ Ներուն, տեղեկանալով կատարվածի մասին, անմիջապես նամակ է ուղարկում նահանգապետին և պահանջում անհապաղ ձեռնարկել քայլեր՝ վատ հետևանքներից խուսափելու համար: Այս դեպքում խնդիրը լուծվում է հետևյալ կերպ. հինդուների համար փակվում է տաճարի մուտքը, սակայն տարվա մեջ մեկ օր՝ դեկտեմբեր ամսին, հինդուներն ունեն իրավունք գալու և ադոթելու այդ տաճարում [4. Юрлов, Юрлова: 399]:

1980-ականների սկզբներին այս խնդիրը նորից առաջ եկավ: 1984 թվականին Վիշվա հինդու պարիշադ կազմակերպությունը լայնածավալ

քարոզարշավ սկսեց՝ կոչ անելով «ազատագրել Ռամի ծննդավայրը»: Սկսվեցին զանգվածային ցույցեր տաճարի ազատագրման համար, շատ հեղինակավոր հոգևորականներ արձագանքեցին այս ամենին: Տեղական փաստաբանը դիմեց դատարան՝ պահանջելով բացել Ռամի տաճարի դռները հինդուների համար: Տեղական դատարանը բավարարեց փաստաբանի պահանջը: 1986 թվականի փետրվարի 1-ին տաճարի դռները բացվեցին հինդուների համար [4. Юрлов, Юрлова: 399]:

1989 թվականի փետրվարի 1-ին մոտ 100 հազար հինդու հոգևորականներ հավաքվել էին Յամունա, Գանգա և Սարասվատի գետերի միախառնման վայրում՝ տոնելու Կումբի մելա տոնը: Այստեղ նրանք հայտարարեցին, որ նույն թվականի նոյեմբերի 10-ին կդրվի Ռամի տաճարի հիմնաքարը: Հունիսին Բհարատիյա ջանտա պարտի կուսակցությունը որոշեց դիմել կառավարությանը՝ տաճարը հինդուներին հանձնելու խնդրանքով: Նրանց համոզմամբ դա պետք է տեղի ունենար կա՛մ մահմեդականների հետ համաձայնության միջոցով, կա՛մ համապատասխան օրենքի ընդունմամբ: Նրանք պնդում էին, որ միլիոնավոր հինդուների զգացմունքները պետք է հարգել: Սակայն կառավարությունը չգնաց նման քայլի: Ժամանակի քաղաքական գործիչներից Լալ Կրիշնա Ադվանին գրել է. «Մենք առավել անհանգստացած ենք մի քանի մահմեդական կազմակերպությունների՝ հինդուների արդարացի պահանջի նկատմամբ թշնամական վերաբերմունքից»: Ըստ երևույթին՝ նա մատնանշում էր այն փաստը, որ Բարուրի մզկիթի համահնդկական կոմիտեն փորձում էր մոբիլիզացնել մահմեդականներին «Իսլամը վտանգի մեջ է» կարգախոսով [4. Юрлов, Юрлова: 400]:

Նման լարված իրավիճակն ազդեց Հնդկաստանի հյուսիսային նահանգների վրա: Այսպես, 1989 թվականի նոյեմբերին Բհագալպուր քաղաքում բախումներ սկսվեցին հինդուների և մահմեդական համայնքի միջև, ինչի արդյունքում հարյուրավոր մահմեդականներ սպանվեցին [4. Юрлов, Юрлова: 400]:

Գալով իշխանության՝ Չանդրաշեկհարը փորձեց այս խնդիրը լուծել կողմերի միջև բանակցությունների ճանապարհով, ինչն էլ պսակվեց անհաջողությամբ: ՎՀՊ-ը պնդում էր, որ Ռամի՝ Այոդիայում ծնվելուն հավատում են միլիոնավոր հինդուներ: Գլխավոր հարցն այն է, թե արդյոք Բարուրի մզկիթը կառուցվե՞լ է այն վայրում, որտեղ եղել է Ռամի տաճարը, թե՞ ոչ: Մյուս կողմից՝ ԲՄՀԿ-ն պնդում էր, որ Ռամայանան (հնդկական էպոս) մի՛ֆ է, այլ ոչ թե պատմական փաստ, և չկա որևէ

ապացույց այն մասին, որ տաճարը եղել է հենց այդ տեղում [4. Юрлов, Юрлова: 457]:

1991 թվականին կայացած ՏԻՄ ընտրություններում Ուտտար-Պրադեշ նահանգում հաղթեց աջ-պահպանողական Բհարատիյա ջանտա պարտի կուսակցությունը, ինչն էլ դարձավ հետագայում տեղի ունեցած իրադարձությունների անկյունաքարը: Նահանգի գլխավոր նախարար դարձավ կուսակցության առաջնորդներից մեկը՝ Կայյան Մինգիր: 1991 թվականի հոկտեմբերին կուսակցությունը Բարուրի մզկիթի հարևանությամբ հողատարածք գնեց [4. Юрлов, Юрлова: 459]:

ԲՋՊ-ի աջակցությամբ հինդուիստական կրոնական կազմակերպությունները մեծացրին ճնշումը կառավարության նկատմամբ՝ պահանջելով լուծել խնդիրն իրենց օգտին: 1992 թվականի նոյեմբերի 28-ին Բարձրագույն դատարանը թույլ տվեց խորհրդանշական ուխտագնացություն կազմակերպել ուխտավորների համար, բայց միայն նահանգի կառավարության երաշխավորմամբ և պատասխանատվությամբ: Որոշվեց դեկտեմբերի 6-10-ն անցկացնել կամավորների երկրպագություն, անցկացնել տաճարում [4. Юрлов, Юрлова: 459]:

Մտահոգված ստեղծված իրավիճակով՝ կառավարությունը 20 հազար կիսազինված զորամիավորումներ ուղարկեց Այոդիյա:

Դեկտեմբերի 6-ի առավոտյան տաճարի մոտ էին հավաքվել 100 հազարից ավել կամավորներ, ովքեր եկել էին երկրպագելու Ռամին: Ուխտավորների մի ստվար զանգված սկսում է քանդել մզկիթը: Մինչև երեկո մզկիթն այլևս կանգուն չէր: Ավելին, մեկ գիշերվա ընթացքում հինդուները կառուցել էին ժամանակավոր տաճար և ծեսեր էին կատարում: Տաճարի քանդման ժամանակ զոհվեց 6 մարդ, 50-ը վիրավորվեցին, սակայն այսքանով իրավիճակը չհանդարտվեց: Հաջորդ ամիսների ընթացքում այս և Հնդկաստանի այլ նահանգներում սկսվեցին զանգվածային բախումներ, ինչի հետևանքով զոհվեց 2000 մարդ: Գուջարատում զոհվեց 246, Ուտտար-Պրադեշում՝ 201, Մադիյա-Պրադեշում՝ 120, Ասսամում՝ 100, Կարնատակայում՝ 60 մարդ: Բոմբեյ (Մումբայ) քաղաքում մահմեդականներն ավերեցին հինդուիստական տաճար, հինդուների խանութներ և այլն, ինչի արդյունքում զոհվեց մոտ 60 մարդ [4. Юрлов, Юрлова: 459]:

Այս իրադարձություններն ունեցան անդառնալի հետևանքներ թե՛ հինդուների, թե՛ մահմեդական համայնքի համար:

Հայաստանում անցկացված՝ Հայաստանի հնդկական համայնքի էթնոսոցիոլոգիական հետազոտության ընթացքում հարցման են

ենթարկվել Հնդկաստանի 40 քաղաքացիներ, որոնց մեջ կային ինչպես հինդուներ, այնպես էլ մահմեդականներ, Ջայնիզմի հետևորդներ և այլն: Հատկանշական է, որ թե՛ հինդուների, թե՛ մահմեդականների մեջ կային մարդիկ, ովքեր պնդում էին, որ Հնդկաստանում այժմ կան ճնշումներ մահմեդականների վրա, որոնք արտահայտվում են հասարակական վատ վերաբերմունքով, հիջաբ կրելու և տավարի միս ուտելու արգելքով և շատ այլ երևույթներով (5. Բարինյան: 14):

Որպես ամփոփում այս աշխատանքի՝ կարելի է եզրակացնել, որ չնայած հնդիկների՝ իսլամի՝ Հնդկաստան մտնելուն դրական արձագանին և նրանցից շատերի կողմից իսլամի ընդունմանը, ինչպես նաև Հնդկաստանում մի քանի հարյուրամյակի ընթացքում մահմեդականների կառավարմանը, որի ժամանակ մեծ հաշվով հինդուներն ու մահմեդականները կողք կողքի ապրել են առանց էական խնդիրների, բրիտանացիների գալուց հետո իրավիճակը լարվում է, և սկսվում է հինդու-մահմեդական հակամարտությունը, որն էլ ավելի է սրվում Պակիստան պետության ստեղծմամբ: Այսօր էլ ակտուալ է այս խնդիրը, քանի որ մինչ օրս էլ կան այս ճնշումները մահմեդականների վրա, ինչպես նաև՝ երբեմն բախումները հինդուների և մահմեդական համայնքի միջև, որոնք ունեն կարիք խորքային ուսումնասիրության:

ИСТОРИЧЕСКИЙ ВЗГЛЯД НА ОСОБЕННОСТИ ИНДИЙСКОГО ИСЛАМА

Баринян С. Р.

Ислам проник в Индию в конце VII века, хотя морская торговая связь между Индией и Аравийским полуостровом существовала еще с древних времен. Первыми мусульманами в Индии были торговцы и проповедники, главной целью которых было распространение новой религии. На протяжении веков мусульмане поселились на завоеванной территории Индии, а местное население медленно, но, тем не менее, принимала ислам, выделяя этот регион своими культурными особенностями. По сути, было дано начало процессу слияния и синтеза индийской и исламской культур. Таким образом, ярким литературным представителем этой синтезированной культуры является Кабир, который играет роль связующего звена между «Бхакти» (индийское) и «Суфи» (мусульманское) религиозно-реформаторскими движениями.

Этот доклад – попытка исследовать Индийский ислам и его особенности, а также изучить вытекающие из этого геополитические обстоятельства путем сопоставления методов источниковедения и религиоведения.

Ключевые слова: Индия, индуизм, ислам, империя, суфизм.

A HISTORICAL OVERVIEW OF THE CHARACTERISTICS OF INDIAN ISLAM

Barinyan S. R.

Islam entered India at the end of the 7th century, although maritime trade links between India and the Arabian Peninsula have existed since ancient times. The first Muslims in India were traders and preachers, whose main target was to spread the new religion. Over the centuries, Muslims settled in the conquered territory of India, and the local population slowly, but eventually converted to Islam, highlighting this region with its cultural characteristics. In fact, the process of fusion and synthesis of Indian and Islamic cultures was initiated. Thus, Kabir is the vivid literary representative of this synthesized culture, who is the link between the Hindu “Bhakti” and the Muslim “Sufi” religious reform movements.

This article is an attempt to study Indian Islam and its characteristics and to examine the geopolitical circumstances arising from it, made by combining source studies-based and religious studies-based methods.

Keywords: India, Hinduism, Islam, empire, Sufism.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бочарникова Я. В., История индо - мусульманского конфликта в XX-XXI вв. Санкт – Петербург: 2021. 137 с.
2. Brosalina E. K., Erman V. G., Kokova Yu. G., Tsvetkova S. O., Chelnokova A. V., Soboleva D. V., Kostina E. A., Streltsova L. A., Donchenko S. S., Studies in the History of Indian Literatures (X-XX centuries). St Petersburg. St Petersburg University Press. 2014.
3. Elliott D. B., Engaging South Asian folk and Muslims in the core missionary task by developing indigenous, cross-cultural missionary teams. Kansas City, Missouri. 2021, 294.

4. Юрлов Ф. Н., Юрлова Е. С., История Индии. XX век. Москва: ИВ РАН. 2010. 910 с.
5. Բարինյան Ս. Ռ. Հայաստանի հնդկական համայնքը. Էթնոսոցիոլոգիական հետազոտություն: Երևան: 2022: 30:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Բարինյան Ս. Ռ. – բակալավրիատ 4-րդ կուրս

ՀՌՀ, Արևելագիտության ինստիտուտ, Հնդկագիտություն

Էլ. փոստ՝ sergey.barinian@student.rau.am

Գիտական ղեկավար՝ Հակոբյան Հ., պատմ. գիտ. թեկն.

Ստացվել է՝ 08.11.2022

Գրախոսվել է՝ 06.12.2022

**ԱԽԱՂՑԻԱՅԻ 1918Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ
Մաթևոսյան Հ. Գ.**

Ախալցխայի գավառի 1918 թվականի ինքնապաշտպանությունը մեր պատմության սակավ ուսումնասիրված բնագավառներից մեկն է: Խորհրդային շրջանում հայ պատմաբանների համար հատկապես հասու չէր այդ շրջանի ուսումնասիրումը: Ախալցխայի 1918թ. ինքնապաշտպանական մարտերը մեր պատմության փայլուն էջերից են, թեկուզ հենց նրա համար, որ մինչև վերջ, օգտագործելով զինական ուժը, պայքարում էին թուրքական ակնհայտորեն լավ զինված հրոսակների դեմ՝ գտնվելով աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում:

Բանալի բառեր. Ախալցխայի ինքնապաշտպանություն, մարտեր, թուրքեր, Զորի Զորյան, Օմար Էֆենդի, գավառ:

Ախալցխայի գավառի 1918թ. ինքնապաշտպանությունը մեր պատմության սակավ ուսումնասիրված բնագավառներից մեկն է: Խորհրդային շրջանում հայ պատմաբանների համար հատկապես հասու չէր այդ շրջանի ուսումնասիրումը: 19-րդ դարի երկրորդ կեսին Անդրկովկասի, այդ թվում Ախալքալաքի և Ախալցխայի վերաբերյալ ասպարեզ եկան խոր գիտական աշխատանքներ: 19-րդ դարի վերջին Ախալքալաքի ու Ախալցխայի վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություններ կատարեց մեծանուն հայ ազգագրագետ Երվանդ Լալայանը:

1919թ.-ին, ի պատասխան Անդրկովկասում վիճելի տարածքների վերաբերյալ տարբեր հեղինակների հրատարակած աշխատություններում տեղ գտած սխալ մեկնաբանությունների, Լեոն հանդես եկավ «Մահմանավեճեր» գրքույկով:

Հոդվածի նպատակն է ցույց տալ, թե աշխարհաքաղաքական ինչ բարդ պայմաններում էր փորձում ինքնապաշտպանություն իրականացնել Ախալցխայի հայ բնակչությունը: Հոդվածն արդիական է այնքանով, որ հատկապես ներկա իրավիճակում, երբ ՀՀ-ի հարևան որոշ պետություններ տարածքային հավակնություններ են դրսևորում մեր պատմական հողերի նկատմամբ, ցույց տալ, որ Ախալցխան ևս հայկական է, և թե հայերն այնտեղ ինչ հերոսական ինքնապաշտպանություն են իրականացրել 1918թ.-ին:

Արտակարգ ծանրացավ երկրամասի հայերի վիճակը, երբ ռուսական բանակը Երզնկայի զինադադարի կնքումից հետո թողեց Կովկասյան ռազմաճակատի հսկայական զիծը և սկսեց հեռանալ: Ճիշտ է, Թուրքիայի հետ 1917-ի դեկտեմբերի 5-ին կնքվել էր Երզնկայի զինադադարը, բայց այն ոչ մի երաշխիք չէր տալիս, որ Թուրքիան չի իրականացնի իր հեռանկարային պլանները՝ պանթուրքիզմը, որի ճանապարհին ընկած էին Հայաստանն ու Վրաստանը:

1917-ի դեկտեմբերի 27-ին՝ վաղ առավոտյան, Ախալցխայում լուր տարածվեց, որ քաղաքը պաշարված է 15 հազար զինված տեղացի թուրքերի կողմից: Պաշարման ճշտությունը պարզելուց հետո քաղաքի բնակիչներն անմիջապես կազմակերպեցին ինքնապաշտպանության գվարդիա և հմուտ, փորձված հրամանատարների ղեկավարությամբ դիրքեր գրավեցին քաղաքի մերձակայքում:

Առավոտյան ժամը 10-ին քաղաքի ռեստորաններից մեկում տեղի ունեցան քաղաքի ներկայացուցիչների՝ քաղաքագլուխ Ջորի Ջորյանի՝ գլխավորությամբ և քաղաքը շրջապատող ամբոխի պարագլուխների՝ Օմար Էֆենդու, Սարվարբեգ Աթաբեգովի միջև բանակցություններ: Թուրքերն այդ ընթացքում քաղաքի ղեկավարներին ներկայացրին հետևյալ պահանջները.

1. Քանի որ հնարավոր է քաղաքի ռուսական կայազորի հեռանալը, իրենց հանձնեն բերդը (որտեղ տեղավորված էր կայազորը), այնտեղ եղած զենքն ու զինամթերքը:
2. Թույլ տան իրենց մտնելու քաղաք, որովհետև ինչպես Ախալցխայի գավառը, այնպես էլ Ախալցխա քաղաքը պատկանում են գավառի մուսուլմաններին. Ախալցխայի գավառում պետք է ստեղծվի թուրքական կանտոն (ինքնավարություն)...

Դեկտեմբերի 27-ին՝ ժամը 13-ին, բանակցությունները շարունակվեցին Ջինվորական խորհրդի սրահում, որտեղ բեկերը համառորեն կրկնում էին իրենց պահանջները:

Ախալցխայի քաղաքագլուխ Ջ. Ջորյանը քաղաքային վարչության անունից պատասխանեց, որ գավառի թուրքական ինքնավարության հարցը կարող է լուծել միայն Կովկասյան կոմիսարիատը, իսկ ինչ վերաբերում է զինված թուրքերի՝ քաղաք մտնելուն, ապա այդ բանը քաղաքի բնակչությունն ու ղեկավարությունը երբեք թույլ չեն տա:

Երեկոյան Ջորի Ջորյանը հեռագրում է Թիֆլիս՝ Կովկասյան կոմիսարիատին՝ ներկայացնելով Ախալցխայի ծանր կացությունը, և օգնություն է խնդրում: Երեկոյան՝ ժամը 18:00-ին, տեղի ունեցած

միտինգից հետո ժ. 7-ին լուր ստացվեց, որ Ախալքալաքի ճանապարհի վրա սպանված է երկու թուրք... Դեկտեմբերի 28-ի կեսօրին տեղի ունեցած առաջին հայ-թուրքական ընդհարման ժամանակ փոխհրաձգությունից սպանված այդ երկու թուրքը հետագայում բեկերի կողմից դարձան շահարկման միջոց:

Դեկտեմբերի 29-ի երեկոյան Ախալցխա հասան Անդրկովկասյան կոմիսարիատի ներկայացուցիչները: Տեղ հասնելուն պես նրանք զինվորական խորհրդի շենքում ժողով գումարեցին՝ զինվորական, բանվորական և գյուղացիական խորհուրդների, կուսակցությունների և քաղաքի ներկայացուցիչների մասնկացությամբ:

Ճիշտ է, քաղաքի պաշարումը վերացվել էր, սակայն թուրք զինյալները զենքը վայր չէին դրել և տենդորեն շարունակում էին գորավարժություններն ու զինվելը: Նրանք Ածղուրի մոտ փակել էին Ախալցխա-Բորժոմի ճանապարհը և դրանով կտրել Թիֆլիսի երկրամասի սրտի հետ կապող գլխավոր զարկերակը, Ասպինձայի մոտ փակել էին Ախալցխայի գավառը՝ Մեսխեթը, և առանձնապես Ախալցխա քաղաքը ավանդաբար հացով և այլ սննդամթերքներով մատակարարող Ախալքալաքի գավառի (Չավախքի) հետ կապող մայրուղին, փակել էին Աբասթումանի ճանապարհը... Այս կետերում հարյուրավոր զինված թուրքեր խուզարկում էին քրիստոնյա անցորդներին (հայ, վրացի, ռուս և այլք), իսկում նրանց զենքը, թալանում, վիրավորում նրանց կրոնական, ազգային ու մարդկային արժանապատվությունը:

Ահա քաղաքում և գավառում ստեղծված այս արտակարգ ծանր ու դժվարին իրադրությունից էլք գտնելու համար քաղաքագլուխ Չորի Չորյանի նախաձեռնությամբ հունվարի 12-ին տեղի ունեցավ միջկուսակցական ժողով, որին մասնակցեցին նաև բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդների ներկայացուցիչները: Ժողովը տեղի ունեցավ Չ. Չորյանի նախագահությամբ: Չ. Չորյանը հրապարակեց քաղաքի և գավառի թուրք բնակչության ներկայացուցիչների կարծիքը դեկտեմբերյան իրադարձությունների մասին, որոնք առավոտյան իր մոտ դատապարտել էին իրենց ցեղակիցների արարքը:

Ժողովականները ցանկություն հայտնեցին հեռացող ռուս զինվորներին փոխարինել նրա կազմավորվող զորամասերի (հայկական և վրացական) զինվորներով:

Ինքնապաշտպանությունը բոլոր կուսակցությունների ու խավերի համար դարձել էր սրբազան գործ: Միջկուսակցական հակասութ-

յուններն ազգի համար բախտորոշ նշանակություն ունեցող այս հարցում վերացել էին: Ազգի շահերը բարձր էին ամեն ինչից...

Շրջապատման հետևանքով կենտրոնից ուղարկված սննդամթերքը տեղ չէր հասնում, կամ հասնում էր աննշան մասը: Պարենավորման կոմիտեն հոգ էր տանում քաղաքում եղած սննդամթերքը ճիշտ բաշխելու համար՝ նկատի ունենալով երկարատև պաշարման հնարավորությունը և ընդհանրապես կարգավորելու քաղաքի պարենավորման գործը:

Ահա այդ ուղղությամբ կատարած քայլերից մեկն էլ ազգամիջյան խորհրդի ժողովն էր, որի առաջին նիստը սկսվեց 1918-ի հունվարի 15-ին:

Ազգամիջյան խորհրդի երկրորդ նիստը, որ տեղի ունեցավ հունվարի 17-ին, նվիրված էր համագումարի նախապատրաստմանը: Որոշվեց մեկ ամսվա ընթացքում նախապատրաստվել և համագումարն անցկացնել Ախալցխայում: Ընտրվեց կազմկոմիտե, որի մեջ մտնում էին յուրաքանչյուր ազգից երեք ներկայացուցիչ:

Էրզրումի գրավումը թուրքական բանակի կողմից ավելի համարձակ դարձրեց Անդրկովկասի թուրքերին: Թուրքերին համակել էր անպատժելիության զգացումը, որի հետևանքը եղավ Ածղուրի մարտի 6-ի սպանդը:

Ռազմաճակատում մեր զորքերի անհաջողությունները, թիկունքում տեղական թուրքերի լյտիություններն ու սպառնալիքները ստիպում էին Ախալցխայի գավառի հայերին ու վրացիներին բավարար քանակով զենք ձեռք բերել: Շաբաթներ առաջ Թիֆլիսում հայթայթված մեծ քանակությամբ զենքն ու զինամթերքը բերվել էր Բորժումի, սակայն այն չէին համարձակվում հասցնել Ախալցխա, որովհետև Ածղուրում թուրքերը կիսլեին: Երկարատև պաշարման հետևանքով այդ ռազմամթերքի անհրաժեշտությունն օրավուր մեծանում էր, իսկ փոխադրելը՝ դժվարանում (գրեթե անհնար էր):

Զինվորական շտաբը քաղաքը հայտարարեց պաշարողական դրության մեջ:

Տեղի էին ունենում ռազմական գործողություններ մի կողմից հայկական և վրացական զորամասերի, հայ և վրացի զինված գյուղացիների և մյուս կողմից՝ թուրքերի մեծաքանակ ռազմական ուժերի միջև: Ռազմական գործողությունները տեղի էին ունենում շուրջ 30 վերստ տարածության վրա:

Այս անգամ հայերն ու վրացիները, լավ նախապատրաստված լինելով սույն և նման այլ միջադեպերի, քան դեկտեմբերյան օրերին, արժանի հակահարված հասցրին թշնամուն և թույլ չտվեցին նրան

մոտենալու քաղաքին: Թուրքերը չկարողացան գրավել ոչ մի հայկական և վրացական գյուղ:

Միայն հայկական և վրացական գյուղերի զինված ուժերի, քաղաքի ինքնապաշտպանության զվարդիայի, հայկական և վրացական գումարտակների հզոր հակահարվածները ստիպեցին թուրքերին՝ հետ քաշելու իրենց զինված ուժերը:

Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որը 1918-ի մարտի 3-ին (հ. տ. փետրվարի 18-ին) կնքվեց մի կողմից՝ բուլղարական Ռուսաստանի և մյուս կողմից՝ Գերմանիայի և իր դաշնակիցների միջև, չընդունվեց Անդրկովկասյան սեյմի կողմից, որովհետև Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնելու Կարսը, Արդահանը և Բաթումը... Վերականգնվելու էր 1877-ի ռուս-թուրքական սահմանը: Հրաժարվելով պայմանագիրը ճանաչելուց՝ Անդրկովկասյան սեյմը հայտարարեց, որ ինքը պատվավոր հաշտություն է կնքելու Թուրքիայի հետ: Մարտի 1-ին (14-ին) Տրապիզոնում Անդրկովկասյան սեյմի և Թուրքիայի միջև սկսվեցին բանակցություններ: Այս հաշտության բանակցություններին ներկայացած սեյմի պատվիրակության ղեկավարն էր Ա. Չխենկելին: Հայ պատվիրակներն էին սեյմի անդամներ Հ. Քաջագունին և Ալ. Խատիսյանը: Պատմաբան Լեոն մասնակցում էր որպես խորհրդական:

Թուրքական պատվիրակությունը մերժեց Սեյմի այն պահանջը, որով Անդրկովկասի և Թուրքիայի միջև պետք է վերականգնվեին նախապատերազմյան սահմանները, և Արևմտյան Հայաստանը ինքնավարություն ստանար: Թուրքերը սեյմի պատվիրակությանը ներկայացրին վերջնագիր, որով պահանջում էին, որ 48 ժամում Անդրկովկասյան սեյմը ճանաչի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, և Անդրկովկասը դառնա անկախ պետություն...[2]:

Սեյմի պատվիրակությունը հետ կանչվեց և ապրիլի 1(14)-ին վերադարձավ Թիֆլիս...[3]:

Երբ Անդրկովկասյան սեյմը զգաց, որ սպառվեցին բոլոր քաղաքական միջոցները, հռչակեց մանիֆեստ՝ ուղղված Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին:

Սեյմը մանիֆեստում միասնության կոչ է անում Անդրկովկասի ժողովուրդներին և առաջարկում դադարեցնել ազգամիջյան վեճերը, թշնամանքն ու պառակտումը: Արդյոք ձեռնտու էր այդ անդրկովկասյան թուրքերին, որոնք դեպի քրիստոնյաները, առանձնապես դեպի հայերը, լցված էին ատելությամբ:

Տեղական թուրքերը շարունակում էին հարվածը հայերի և վրացիների թիկունքից: Ախալցխան դրա կիզակետն էր:

Աբասթումանում թուրքերը ապրիլի սկզբներին այնտեղ մնացած 15 հայերի նկատմամբ նորից էին սկսել իրենց բռնությունները և թույլ չէին տալիս այնտեղից տեղափոխվել Ախալցխա: Այս մասին Տեր-Սամուելյանը հեռագրում է Ջորջանին, իսկ վերջինս հեռագրում է սեյմին՝ խնդրելով օգնություն: Ապրիլի 11-ին Ջ. Ջորջանի ջանքերով Աբասթումանի 15 հայերից 13-ը, ազատվելով դժոխային պայմաններից, եկան Ախալցխա, իսկ 2-ը կամովին մնացին այնտեղ:

Թուրքական կանոնավոր բանակների դեմ կանգնած միակ իրական ուժը հայ կամավորական կորպուսն էր: Հայերը չնայած կռվում էին հերոսաբար, բայց իրենց հնարավորության սահմաններից ավել անել չէին կարող, հատկապես որ Անդրկովկասյան կառավարության մենշևիկ պարագլուխները փաստորեն դավաճանում էին հայերին (հենց Կարսի հանձնումը առանց դիմադրության): Թուրք-անդրկովկասյան պատերազմը փաստորեն, ինչպես գրում է Հր. Լ. Սիմոնյանը, վերածվել էր թուրք-հայկական պատերազմի [2]:

Հայերը, ինչպես մենք արդեն տեսանք, միաժամանակ կռվում էին թիկունքից հարվածող անդրկովկասյան թուրքերի դեմ՝ համարյա ամբողջ Անդրկովկասով մեկ:

Եզրահանգում: Այսպիսով, թուրքերի մուտքը դեպի Անդրկովկաս կանխվեց շնորհիվ Ջորի Ջորջանի: Հայ ժողովրդի պատմության այս հերոսական և ողբերգական էջերը պետք է դաս լինեն այսօրվա և ապագա սերունդների համար:

Ախալցխայի հերոսական ինքնապաշտպանությունը ցույց տվեց, որ ազգը կռվելով և միաժամանակ խելացի քաղաքականություն վարելով է գոյատևում:

УРОКИ САМООБОРОНЫ АХАЛЦИХЕ В 1918 ГОДУ

Матевосян Г. Г.

Самооборона Ахалцихской губернии в 1918 году - одна из малоизученных областей нашей истории. В советский период изучение этого периода не особенно созрело для армянских историков. Бои и самооборона Ахалцихе в 1918 году - одна из ярких страниц нашей истории, хотя бы потому, что, до конца используя военную силу, они вели

борьбу с явно хорошо вооруженными турецкими головорезами, находясь в сложном геополитическом положении.

Ключевые слова: Ахалцихская самооборона, бои, турки, Зорий Зорян, Омар Эфенди, провинция.

SELF-DEFENSE LESSONS OF AKHALTSKHA IN 1918

Matevosyan H. G.

The self-defense of Akhaltskha province in 1918 is one of the rarely studied areas of our history. During the Soviet period, the study of that period was not particularly ripe for Armenian historians. The self-defense battles of Akhaltskha in 1918 are one of the brilliant pages of our history, if only because until the end, using military force, they were fighting against the obviously well-armed Turkish thugs, being in a difficult geopolitical situation.

Keywords: Akhaltskha's self-defense, battles, Turks, Zori Zoryan, Omar Efendi, province.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միմոնյան Հր. Անդրանիկի ժամանակը: Գիրք Ա-Բ: Երևան: 1996: Էջ 125:
2. Հայ ժողովրդի պատմություն Ն. 1: 1970: Էջ 30-31:
3. Մելքոնյան Ա. Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդում: Երևան: 2003: 500 էջ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մաթևոսյան Հ. Գ. - մագիստրատուրա I-ին կուրս

Գործիսի պետական համալսարան, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, Պատմություն

Էլ. փոստ՝ hranushmatevosyan161@gmail.com

Գիտական ղեկավար՝ Շարունց Գ., ասիստենտ

Ստացվել է՝ 21.11.2022

Գրախոսվել է՝ 12.12.2022

**ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՇՈՒՇԻՈՒՄ 1917 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ԸՍՏ «ՓԱՅԼԱԿ» ԹԵՐԹԻ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ)
Վարդանյան Ա. Կ.**

Շուշիում 1915-1917թթ. հրատարակվել է «Փայլակ» թերթը, որի մի շարք հոդվածներում անդրադարձներ կան Շուշիում ընթացող կրթամշակութային կյանքին, տեղի ունեցող փոփոխություններին: Աշխատանքում ներկայացված է 1917թ. հրատարակված հոդվածները, որտեղ բազմաթիվ համարներ լուսաբանում են կրթամշակութային կյանքը, բացահայտում, թե ինչպես էր կազմակերպվում կրթական աշխատանքները, արդյոք աշխարհաքաղաքական փոփոխությունները՝ 1917թ. սկսած, իրենց ազդեցությունն ունեցել են այս տարածաշրջանում:

Բանալի բառեր. «Փայլակ» թերթ, Շուշի, կրթություն, 1917թ. հեղափոխություն, դեմոկրատիա:

Նախաբան: Ռուսաստանում 1917թ. փետրվարյան հեղափոխությունը և Ռոմանովների 300-ամյա իշխանության տապալումը մեծ ազդեցություն թողեց կայսրության ժողովուրդների պատմական ընթացքի վրա: Հեղափոխությունից հետո Ռուսաստանը քայլեր իրականացրեց դեպի ժողովրդավարություն՝ ազատություններ տալով մամուլին, վերջ դնելով գրաքննությանը և սահմանելով բազմաթիվ քաղաքացիական ազատություններ: Ռուսական իրականության համար սա աննախադեպ իրադարձություն էր: Այս հեղափոխությունը խոր ազդեցություն թողեց Ռուսաստանի ժողովուրդների կրթամշակութային կյանքի վրա և հանգեցրեց լուսավորության տարածմանն ու հասարակությանը խավարամտության կապանքներից դուրս բերմանը:

Հայ պարբերական մամուլի նշանավոր օրգաններից է 1915-1917թթ. Շուշիում հրատարակված «Փայլակ» թերթը: Թերթի խմբագիր-հրատարակիչը եղել է Լևոն Վարդապետյանը, 1917թ. հունիսյան համարները խմբագրել է Խաչիկ Սամվելյանը: Տպագրվել էր Մելքում Բաբաջանյանի, ապա՝ Բագրատ Տեր-Սահակյանցի տպարաններում: Թերթը լուսաբանել է ՌՄԴԲԿ Շուշիի բյուրոյի աշխատանքները և պրոպագանդել սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական գաղափարախոսությունը [1,107]:

Ուսումնասիրելով թերթը՝ կարողանում ենք վեր հանել այդ ժամանակաշրջանում Շուշիում կազմակերպված կրթական գործընթացը և առաջ եկած խնդիրները, որոնք ազդեցություն էին թողնում կրթության ընդհանուր որակի վրա: Թեմայի արդիականությունը պայմանավորված էր նրանով, որ նյութն ուսումնասիրելով և վերլուծելով՝ կարող ենք համեմատություն դնել այս ժամանակաշրջանի հետ, թե ինչպես էր կազմակերպվում կրթական աշխատանքը: Այստեղ ներկայացվում էին նաև Շուշիում ապրող այլ ազգություններ, մասնավորապես թուրք, թաթար բնակչությունը, որոնք ոչ այնքան մեծ ուշադրություն էին դրսևորում կրթության նկատմամբ:

Թերթի համարներից մեկում, որը վերնագրված է «Լուսավորության սպասավորները և նրանց աշխատանքի գնահատումը», ներկայացնում են գյուղում կազմակերպվող կրթական կյանքը և ուսուցիչներին, որոնք, ինչպես ներկայացվում էր թերթում, հյուծվում էին և կատարում ամենաձանր աշխատանքը՝ կրթել և պայքարել խավարի դեմ ու տարածել լույս գյուղական միջավայրում: Սակայն, ինչպես նշվում է, ուսուցիչն իր հյուծիչ աշխատանքի համար չէր գնահատվում և վարձատրվում էր ամենաչնչին լումաներով, ինչն էլ հիասթափություն էր առաջացնում դեպի նվիրական աշխատանքը, որն էլ իր բացասական ազդեցությունն էր թողնում կրթական մակարդակի վրա: Հրավիրվող գյուղական տարբեր ժողովներում բարձրացվում էին ուսուցիչների խնդիրները, թե ինչու ուսուցիչները իրենց աշխատանքի դիմաց չեն ստանում իրենց հասանելիք գումարը, և հիմնականում այս խնդիրը պատճառաբանվում էր, որ գյուղերը դատարկված են, և հնարավոր չէ բարձրացումներ իրականացնել, բայց ուսուցիչներին թողնելը ներկա ծանր իրավիճակի մեջ նույնպես անթույլատրելի է: Համարներում նաև փաստերով ու թվերով ներկայացված է, թե քանի դպրոց է գործում քաղաքում ու գյուղերում, և որքան աշակերտներ էին սովորում: Այս փաստերը արժեքավոր տեղեկություններ են: Դրանց միջոցով կարող ենք պարզել, թե ինչպիսի ուշադրություն էր տրվում կրթական կյանքին, արդյո՞ք այն բավարար էր, ու նաև թերթի առանձին համարներում ներկայացվում է, թե դպրոցներն ինչ խնդրի առաջ են կանգնած: Դրանով նաև ակնկալվում էր բարերարների օգնությունը սևեռել դեպի դպրոցաշինություն: Առանձին համարում ներկայացվում է Խանքենդ (ներկայիս Ստեփանակերտ քաղաքը) գյուղը, թե քանի դպրոց է գործում այստեղ: Ներկայացված փաստերի համաձայն՝ Խանքենդ գյուղում 1898թ. պետական դպրոցը ունեցել է 100-ից ավել աշակերտ, որը այն

Ժամանակվա համար մեծ թիվ էր [2,2]: Հետաքրքրականն այն է, որ գյուղի բնակչությունը իր վերջին լուսան էր ուղղում դեպի դպրոց, և սա բացահայտում է, թե որքանով էր բնակչությունը արժևորում իր կյանքում դպրոցի դերը: Պարբերականի առանձին համարներ նվիրված են դպրոցների անմխիթար վիճակին ու սպասվելիք օգնությանը:

«Դպրոցի գումարները ցրված են» համարում ներկայացվում են Խնուշինակ գյուղը և այդտեղ գործող դպրոցը, որը գտնվում էր աննախանձելի վիճակում և չուներ բավարար ռեսուրսներ նոր ուսուցիչներ հրավիրելու համար, և, ինչպես նկատում ենք, դպրոցի վիճակը բարելավելու հարցերով տոգորված էր գյուղի բնակչությունը, որն իր սուղ նյութական միջոցներն ուղղում էր դպրոցաշինությանը: Մակայն այս անմխիթար իրավիճակը տևում է շատ կարճ, քանի որ, շնորհիվ համագյուղացիների կատարած ներդրումների, դպրոցը սկսում է նորից վերականգնվել [2, 4]: Առանձին համարներում անդրադարձ է կատարվում դպրոցում տեղի ունեցող ապօրինություններին, ուսուցիչների կատարած աշխատանքներում տեղ գտած բացթողումներին ու առկա խնդիրներին, որոնք պահանջում էին արագ լուծումներ:

Թերթում ներկայացվում է հին և նոր կարգերի միջև խուլ ու բացահայտ պայքարը. հետզհետե տապալվում է հին կյանքը, և թարմ հոսանքը մուտք է գործում բոլոր ոլորտները, որից հատկապես կարևորվում էր դպրոցը, որի միջոցով պետք է դաստիարակվեին և հանդես գային իսկական քաղաքացիներ: Նշվում է, որ դպրոցները գոյատևում էին նվիրատվությունների հաշվին, ունեին սուղ միջոցներ, և հասկանալի էր, որ այդպիսի պայմաններում չէին կարող իրենց ամբողջական նպատակին հստակ հասնել, քանի որ չկար պետական աջակցություն: Թերթի համարում խոսվում էր այն մասին, թե դպրոցը արդյո՞ք պետք էր մնար հոգևորականության ազդեցության ներքո, թե՞ պետական վերահսկողության տակ պետք է անցներ [2,1]: Այս խնդրի շուրջ հրապարակային քննարկումն արդեն իսկ խոսում է այն մասին, որ, այո՛, հին կարգերը տապալվում են, քանի որ Անդրկովկասի հայկական իրականության մեջ դպրոցն առավելապես գտնվել է հոգևորականության վերահսկողության ներքո, և մի շարք սահմանափակումներ էին դրվել դպրոցի առաջ, ինչպիսին բնագիտական առարկաների նկատմամբ արգելքները, և հիմնականում դպրոցում առաջնակարգ դեր էր տրվում կրոնական առարկաների խորացված ուսումնասիրմանը:

«Ղարաբաղի ուսուցչական միությունը» հոդվածում ներկայացվում են Շուշիում կայացած ուսուցչական ժողովի մանրամասնությունները, և

Թե ինչ հարցեր պետք է քննարկվեն ժողովում: Նաև նշվում է, որ հրավիրված ուսուցչական ժողովին մասնակցել են Ջանգեզուր գավառից ժամանած ուսուցիչներ: Ժողովում քննարկվել են ուսուցչական միություն ստեղծելու, այդ միության հիմնական նպատակները սահմանելու և գործունեության ոլորտի հստակեցման հիմնախնդիրները [2,3]: Այս համարից կարող ենք մեկ կարևոր տեղեկատվություն քաղել, որ այս ժամանակաշրջանում կրթության դերը շատ բարձր է եղել հասարակության մեջ, և անընդհատ հրավիրվել են ժողովներ, քննարկումներ, սեմինարներ, որին մասնակցել են տարբեր վայրերից ժամանած ուսուցիչներ: Եթե ավելի խոր մտածենք, ապա կհասկանանք, որ այդ ժողովների հրավիրման հիմնական իմաստը եղել է այն, որ հնարավորություն է ընձեռվել համագործակցություն ձեռք բերել ուսուցիչների միջև և փորձել միմյանց միջև փորձի փոխանակում իրականացնել, ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք առկա են դպրոցում, և միասնական քննարկումների միջոցով լուծում գտնել կրթական գործի արդյունավետ կազմակերպումը խոչընդոտող խնդիրներին:

Մայիսի 8-ին և 9-ին Շուշիում տեղի ունեցան ուսուցիչների միության համագումարի նիստերը՝ Խ. Սամուելյանի նախագահությամբ և Ն. Շահնազարյանի քարտուղարությամբ: Համագումարին մասնակցում էին 53 հայ, ռուս և թուրք ուսուցիչներ Շուշի քաղաքի և գյուղերի դպրոցներից: Ներկայացված փաստարկը խոսում է այն մասին, որ ինչպես հայ, այնպես էլ թուրք, ռուս և այլ ազգերի ներկայացուցիչները փորձում էին միասնական քննարկումների միջոցով բարելավել կրթական համակարգը՝ այդ ուղղությամբ գործուն քայլեր իրականացնելով: Համագումարում դրված օրակարգային հարցերը պետք է քննարկվեին և արագ լուծում ստանային: Հիմնական խնդիրներն էին՝ միության կազմակերպումը, կանոնադրությունը, վարչության ընտրությունը, Կովկասյան ուսուցչական համագումարի պատգամավորի ընտրության հարցերը: Համագումարի ընթացքում ներկայացվեց կանոնադրությունը, որը մշակվել ու խմբագրվել էր առանձին մասնաժողովի կողմից, որի մեջ ներառված էին նաև համառուսական և Մոսկվայի ուսուցչական ժողովներում ընդունված կանոնադրությունների սկզբունքներն ու էական կետերը: Կանոնադրությունը կոչված էր կարգավորելու ոլորտում առկա խնդիրները: Այն ընդունվեց միաձայն, որից հետո ժողովն անցավ վարչության անդամների ընտրության գործին՝ առաջարկելով 7 անդամներից 5-ը ընտրել Շուշի քաղաքի

ուսուցիչներից, իսկ 2-ը՝ գավառական ուսուցիչներից: Կատարված ընտրության արդյունքում վարչականներ դարձան Խ. Սամուելյանը, Ռ. Շահնազարյանը, Ի. Բազդորսկին, Կուլինը, Ռ. Տեր-Գասպարյանը, Բարոյայանը և Հայրիյանը: Այսպես ավարտվեց առաջին նիստը, իսկ արդեն երկրորդ նիստում բացառապես քննարկման էր դրված այն հարցը, թե ովքեր պետք է մասնակցեն Թիֆլիսում կայանալիք ուսուցչական համագումարին [2, 3]:

Մայիսի 11-12-ին Թիֆլիսում կայանալիք հայ ուսուցչական համագումարին մասնակցելու հարցի վերաբերյալ երկու անգամ տեղի են ունենում քննարկումներ, որին մասնակցում են տարբեր վայրերից հրավիրված ուսուցիչներ: Սակայն, ինչպես ներկայացվում էր թերթում, հայ ուսուցիչների մեծամասնությունը հետաքրքրություն չցուցաբերեց այդ համագումարի նկատմամբ: Ասվածը հաստատվում է այն փաստով, որ այդ ժողովներին մասնակցություն էր ունեցել 20-30 ուսուցիչ, այն դեպքում, երբ Շուշիում պաշտոնավորող ուսուցիչների թվաքանակը 50-ից ավել էր, որն էլ բացահայտում է, թե ինչպիսին էր հետաքրքրությունը այդ ժողովի նկատմամբ: Առաջին հրավիրված ժողովում քննարկվում էր, թե արդյոք պետք է մասնակցել այդ համագումարին, և ներկա գտնվողների մեծամասնությունը կողմ քվեարկեց, որից հետո որոշվեց Թիֆլիս ներկայացուցիչներ ուղարկել: Եվ հիմնական խնդիրը, որը առաջացավ ու վիճաբանության հանգեցրեց, կապված էր ներկայացուցիչների ընտրության հարցի հետ, թե ովքեր պետք է մասնակցեն: Առաջարկ եղավ, որ դպրոցները բաժանեն ըստ առանձին կատեգորիաների, որի հիման վրա էլ կուղարկվեն ներկայացուցիչների: Սակայն այս առաջարկը բացասական տրամադրություններ առաջ բերեց և մասնակիցների կողմից չընդունվեց: Արդեն հրավիրված երկրորդ ժողովում մասնակիցների թիվն ակնհայտորեն ավելացավ, գրեթե միաձայն ընդունվեցին որոշումներ, և գաղտնի քվեարկության արդյունքում համարյա միաձայն պատգամավոր ներկայացուցիչ ընտրվեց Ալեքսանդր Ծատուրյանը: Ուսուցիչներն իրենց ֆինասական միջոցները ուղղեցին, որպեսզի կարողանան կազմակերպել պատգամավոր ներկայացուցչի գործուղումը դեպի Թիֆլիս, քանզի այս համագումարին մասնակցելը կարևոր նշանակություն էր ունենալու Շուշիի դպրոցների հետագա վերաշինության և զարթոնքի համար [2, 3]:

«Գյուղի հասարակական կյանքից» հողվածում ներկայացվում են գյուղերում գործող ծխական դպրոցները և աշակերտների մասնակցությամբ կազմակերպված ցերեկույթը, որին ներկա էր գյուղի

բնակիչների մեծ մասը: Այս միջոցառումը մեծ հանդիսությամբ ընդունեցին հանդիսականները և խրախուսեցին նաև աշակերտներին ու իրենց մաղթանքները հնչեցրին՝ բարձրաձայն արտահայտվելով, թե ինչ կարևոր նշանակություն ունի դպրոցը, որի վեհ նպատակներից մեկը սերունդ կրթելն է: Նույն օրը տեղի ունեցավ նաև երեկույթ, որտեղ երեխաները կազմակերպել էին մի փոքրիկ խաղ-դերակատարում, որտեղ խաղացին «Միկիշի հարսանիքը», «Խոլերա» պիեսները, որից հետո նաև մի փոքրիկ վարձավճար ստացան: Եվ այսպիսի հանդիսությունները շարունակական բնույթ սկսեցին կրել ու հաճախ կազմակերպվել, որին մարդիկ փորձում էին ներկա գտնվել ու իրենց ժամանցը կազմակերպել: Հատկապես այսպիսի երեկույթներ կազմակերպվում էին տոներին ընդառաջ, և մինչ այդ տոների սկսվելը դպրոցների աշակերտներն ու ուսուցիչներն արդեն պատրաստվում էին դրանց [2, 4]: Ներկայացված տեղեկությունն ընդգծում է, որ ակտիվ ձևով գործում էին դպրոցական խորհուրդները, որոնք կազմակերպում էին միջոցառումներ, ցերեկույթներ՝ նվիրված տարբեր տոների, և հանդես էին գալիս ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայ հեղինակների ստեղծագործություններով:

Եզրահանգում: Այսպիսով, պարզ է դառնում մեկ կարևոր փաստ, որ 1917թ. փետրվարյան հեղափոխությունը Ռուսական կայսրության ժողովուրդների համար ունեցավ պատմական կարևոր նշանակություն: Այն նոր ուղի բացեց դեպի ժողովրդավարական ազատություններ, որը վարակիչ ազդեցություն ունեցավ (այդ թվում՝ Անդրկովկասում): Այս հեղափոխությունը տապալեց ցարիզմը և հնարավորություն տվեց զարկ տալ կրթամաշակութային կյանքի զարգացմանը և լուսավորության տարածմանը կայսրության ծայրագավառներում՝ այդ թվում Շուշիում: «Փայլակ» թերթի համարների ուսումնասիրությունից պարզ երևում է, որ 1917թ. գարնանից սկսած՝ Շուշիում վերափոխվում էր կրթամաշակութային կյանքը: Այս առումով կարևոր ուշադրություն էր սևեռվում դեպի դպրոցը: Դրա դրսևորումներից էր զանազան համագումարների, ժողովների հրավիրումը, որին մասնակցում էին տարբեր վայրերից ժամանած ուսուցիչներ: Փաստորեն «Փայլակ» թերթում հրատարակված հոդվածներն ուշագրավ աղբյուրներ են 1917թ. փետրվարից Շուշիի կրթամաշակութային կյանքի ուսումնասիրման համար. դրանք տեղեկություններ են պարունակում կրթական կյանքի կազմակերպմանը ուղղված ջանքերի, դպրոցական գործի կազմակերպման, մշակութային միջոցառումների մասին:

УЧЕБНАЯ ЖИЗНЬ ШУШИ ПОСЛЕ ФЕВРАЛЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА (ПО ПУБЛИКАЦИЯМ "ПАЙЛАКА")

Варданыан А. К.

В газете "Пайлак", выходящей в Шуши в 1915-1917 годах, было опубликовано несколько статей, касающихся образовательной и культурной жизни Шуши и ее изменений. В работе представлены статьи, опубликованные в 1917 г. Они охватывают образовательную, культурную жизнь, показывают, как организована академическая работа, оказали ли геополитические изменения 1917 года свое влияние на регион.

Ключевые слова: Газета "Пайлак", Шуши, образование, 1917г., революция, демократия.

EDUCATIONAL LIFE OF SHUSHI AFTER THE FEBRUARY REVOLUTION OF 1917 (ACCORDING TO "PAYLAK'S" NEWSPAPER)

Vardanyan A. K.

In the "Paylak" newspaper, launched in Shushi in 1915-1917, several articles were published referring to the educational and cultural life in Shushi and its changes. The paper presents the articles that have been published since 1917 coverings the educational and cultural life and revealing the academic work by elucidating the geopolitical changes of 1917 impacton the region.

Keywords: "Paylak" newspaper, Shushi, education, 1917 revolution, democracy.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980 թթ.), կազմող՝ Ս. Բաբլոյան: Երևան: 1986:
2. «Փայլակ», Շուշի, 1917, № 13, № 14, № 27, № 22, № 32:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Վարդանյան Ա. Կ. - մագիստրատուրա 1-ին կուրս

Գորիսի պետական համալսարան, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ,
Պատմություն

Էլ. փոստ՝ vardanyan.lina97@gmail.com

Գիտական ղեկավար՝ Սուքիասյան Հ., պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 19.11.2022

Գրախոսվել է՝ 09.12.2022

**ՏԵՂ ԳՅՈՒՂԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՏԵՍՏՆԵՐԸ ԵՎ ԽՄԻՉՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ
Լալարեկյան Ա. Կ.**

Տեղ գյուղը հայտնի է իր ավանդական ուտեստներով, որոնք տարբերվում են իրենց բազմազանությամբ և յուրահատկությամբ: Ճիշտ է, ներկայումս այդ ուտեստները չեն օգտագործվում այնպիսի հաճախականությամբ, ինչ նախկինում, սակայն պահպանում են իրենց յուրահատկությունը: Հիմնականում ավանդական ուտեստները պատրաստվում են այն ընտանիքներում, որտեղ ապրում են պապն ու տատը, սովորույթի համաձայն դրանք պատրաստվում են կիրակի օրերին, որպեսզի տան բոլոր անդամները, թոռները, ծոռները, հարազատները, հարևանները ներկա գտնվեն, ու այդ օրը վերածվում է մի մեծ տոնախմբության, որով կարծես տան մեծերը ցանկանում են իրենց ավանդական արժեքները փոխանցել սերունդներին:

Բանալի բառեր. լավաշ, թոնիր, խաշիլ, ածիկ, խաշ, մուգուկ, արաղ, թոռաճաշ, կաթով ճաշ, մատաղ:

Նախաբան: Որպես աղբյուր՝ օգտագործել են Տեղի գյուղացիների կենդանի խոսքը, ուշադրության կենտրոնում են եղել հիմնականում տարեցները, ուլքեր, հիշելով իրենց կյանքից դրվագներ, ինչու չէ, նաև իրենց նախատատերի պատմածները, պատրաստած ավանդական ուտեստները, մեծ քանակությամբ տեղեկություններ են հաղորդել, որը որոշ ժամանակ հետո գուցե հասանելի չլինի ներկա սերունդներին, քանի որ ներկայումս գյուղում ավանդական ճաշատեսակները զգալի փոփոխությունների են ենթարկվում կամ էլ օգտագործվում են ոչ հաճախ: Ու բանահավաքչական աշխատանք չիրականացնելու, նյութը գրի չառնելու դեպքում կորստյան են մատնվելու այն ավանդական արժեքները, որոնք գոյություն ունեն: Նպատակն է սույն հոդվածով վեր հանել ու Տեղ գյուղի պատմությունը հարստացնել ազգագրական նյութերով, որի մի մասն են կազմում նաև ավանդական ուտեստները, դրանց պատրաստման ձևերը, այն սովորույթները, որ գոյություն են ունեցել, հավատալիքները, որոնք կապված են եղել այդ ուտեստների հետ, համախմբվածությունը, միասնականությունը ցանկացած գործողություն իրականացնելիս:

Նախքան ավանդական ուտեստներին անցնելը տեղացիների համար ամենակարևորը հացն է, սեղանը պետք է առատ լինի հացով և արադով (օղի): Տեղ գյուղում մարդիկ շատ հյուրասեր են, և տարածված է «տըղըցեք հացավ ժողովուրդ են» արտահայտությունը: Գյուղացիները ասում են. «Տենց տոն չկա վեր նիմըտես ու հաց օտելի չհրավիրեն» (այդպիսի տուն չկա, որ մտնես ու հաց ուտելու չհրավիրեն): Հացի նկատմամբ մեծ հարգանք կա, հացը չի կարելի դեն նետել, որի դեպքում աստված կբարկանա ու հաջորդ տարին առատ բերք չի լինի, կամ էլ եթե դրսում են ու չեն կերել, հացը համբուրում են ու դնում քարին: Հաց ուտելը ավելի լայն իմաստ ունի. լինի նախաճաշին, ճաշին, ընթրիքին, կանչում են «եկաք հաց օտենք» (եկեք հաց ուտելու), ու դա չի նշանանակում, որ սեղանին միայն հաց է դրված. սեղանին լինում են նաև տարբեր ճաշատեսակներ:

Հաց թխելը Տեղ գյուղում մի մեծ արարողություն է: Տան մեծ տիկինը հարսների հետ վաղ առավոտյան վեր է կենում՝ հացի խմորը հունցելու, խմորը հունցում մի մեծ տաշտում ու սպասում՝ մինչև խմորը հասունանա, ու դրանից հետո ծհանով (կարճ ծայրով, կեռացրած կոթով առարկա) խմորը կտրում են, պուլում (գնդեր սարքում) ու շարում գետնին գցված «մեզարին» (բրդից պատրաստված կտոր) ու սպասում, մինչև գնդված խմորը ավելի լավ գա, խմորը գալուց հետո ասում են՝ պուլը թողալա (գունդը հասունացել է): Ու այդ ընթացքում տան տղամարդը վառում է թոնիրը. օգտագործել են ծղոտ, իսկ ավելի թեժ լինելու համար՝ փայտ: Երբ ամեն ինչ պատրաստ է հացը թխելու համար, երեխաներին ուղարկում էին օգնողներին կանչելու, ու եթե օգնողներից մեկը մի քանի րոպե ուշանում էր, տան մեծ տիկինը բարկացած ասում էր. «Երիշտ կտրվի, հա, տո մի պան կանի վեր սերտտ կրմրի, քշանա ասում ենք ուրուգունն ա կամ, ուրուգունը ասում ենք քշանա յա կամ» (արագ շարժվիր, հա, մի բան կանի, որ սիրտդ կարմրի, առավոտը ասում ենք, երեկոյան է գալիս, երեկոյան ասում ենք, առավոտյան է գալիս): Թոնիրում հացը մենակ չէին կարող թխել, մեկ կամ երկու հոգի գնդերը «ետ են ըրալ», այսինքն՝ գրտնակել են ու փոխանցել հացթուխին. սկզբից լավաշն են թխել, քանի որ կրակը ավելի թեժ է լինում: Հացթուխը հացը կպցնում է թոնրի պատին ու դրանից հետո մեկ հոգի էլ հացը հանում է. ամենաբարդ աշխատանքը հաց հանողինն է, որովհետև անընդհատ պիտի նայի, տեսնի, թե երբ է հանելու ժամանակը, միևնույն ժամանակ պատասխանատու գործ է, որ հանկարծ հացը չայրվի կամ էլ ընկնի թոնիրը: Հացը հանելուց հետո էլ մեկ ուրիշը դասավորում է հացը՝

գետնին փռված մեզարին: Հիմնականում սովորույթ է եղել, որ հարսները կամ ջահել աղջիկները պետք է գնդերը բերեն, իսկ մնացած գործերով զբաղվել են տարեց կանայք: Մինչ այս քայլերը կատարվում են, երեխաները սպասում են, թե երբ պիտի 7-րդ լավաշն էլ թխվի, որ նոր ուտեն թարմ թխված լավաշը, ասում են, եթե չի լրացել 7-րդը ու կերել են, ապա դա վատ նշան է, հացթուխի ամուսինը մահանալու է: Մի քիչ թխելուց հետո հացթուխը երեխաներին ձայն է տալիս. «Սունդուն պացրրաք, վեր կուն օնենք» (թոնրի ակը բացեք, որ կրակը թեժանա), տաքանալուց հետո «սունդուն փակում են»՝ հացը չայրելու համար, ու հացը շարունակում են թխել: Հացը ավարտելուց հետո թոնրում թխում էին պաղած, որը առանց խորիզ էր, իր մեջ պարունակում էր այլուր, շաքարավազ, մածուն, ապա հարսները սեղան են դնում թոնիրում: Ու օգնողներին դատարկաձեռն չէին ուղարկում, տալիս էին լավաշ, պաղած: Ոչ բոլորը կարող էին հացը թխել թոնիրում, շատերը շաջի վրա թխում էին «չալաքի» (անխմոր լավաշ հաց) [1]:

Տեղ գյուղում ավանդական ուտեստները հիմնականում պատրաստվում էին ցորենից. այդպիսի ուտեստ է «խաշիլը», որի ստացումը նույնպես բարդ գործընթաց է: Սկզբից ցորենը լվացել են ու լավ չորացրել, մաքրել ավելորդ գարու հատիկներից, ապա աղանձ են արել շաջի(երկաթե, կլոր, առանց կոթ, ներսից մի քիչ փոս ընկած, կլոր թավա) վրա ու անընդհատ խառնել, որպեսզի շատ չայրվի ցորենը: Պատրաստված աղանձը բաժանում էին հարևաններին, որպեսզի հաջորդ տարի էլ բերքը առատ լինի, աղանձի մեջ ավելացնում էին նաև դդմի կորիզներ: Աղանձն անելուց հետո քարե արքանքով սկսել են աղալ, որը շատ դժվար աշխատանք է: Արկանքը իրենից ներկայացնում է 2 կլոր, տափակ, տաշած քարեր, որոնք դրված են իրար վրա: Քարերի կենտրոնում անցք է բացված, ներքևի քարի անցքի մեջ ձող է մտցված: Դրա մեջ լցնում են աղանձը, որի ձողին հարմարեցնելով դնում են մյուս քարը, որի եզրին բռնակ կա, ու բռնակից բռնելով՝ սկսում են արագ պտտեցնել վերևի քարը, որի անցքի միջից քիչ-քիչ լցնում են աղանձը, ինչի արդյունքում հացահատիկը մանրացվում, աղվում է, ապա դուրս գալիս երկու քարերի արանքից: Աղանձը արկանքով աղելու ընթացքում ասում են.

Աղի արկանք, մաղի արկանք,
Քեզանում կա իլա հարգանք:

Աղացած ցորենը առանձնացնում են, մանրից պատրաստում են պուտ, որը պատրաստում են քաղցրաջրից, խառնում են իրար ու

փոքրիկ գնդիկներ են պատրաստում, մեծից էլ պատրաստում են խաշիլ: Աղացած ցորենը լցնում են տաք ջրի մեջ և սկսում են եփել, մինչ այդ խոր ավսենների մեջ լցնում են թան: Թանի ստացումը նույնպես բարդ գործընթաց է. մածունը լավ եփում են, եփելուց հետո լցնում քսակը, քամում ու «պուլուրում», այսինքն՝ գնդեր սարքում, դնում են արևի տակ, որ չորանա: Չորանալուց հետո հարում են չորաթանը ու ստանում են թան: Այս աշխատանքները անելու ընթացքում երգում են.

Խնեցի-խնեցի, հարեցի,
Յուղս պարտքս տվեցի,
Թանավ տոնս պեցի:

Խաշիլը եփելուց հետո լցնում են խոր ավսենների մեջ, խաշիլի մեջտեղը անցք են բացում ու լցնում սոխարած յուղ: Խաշիլ ուտելու հատուկ ձև կա. նախ հանգիստ են ուտում, չեն խառնում իրար, շերտ-շերտ վերցնում են, թաթախում թանի մեջ, ավելացնում սոխառած յուղ [2]:

Ցորենից պատրաստում են ածիկ: Այն ստանալու համար լվանում են ցորենը, շարում տախտակին, դնում մութ տեղ, առավոտից երեկո ջուր են ցանում վրան, որ ծլի. երբ ծիլը հասնում է 5սմ-ի, սկսում են փայտե թակով թակել, ջուրը դուրս է գցում, լցնում են թասիկների մեջ և ձեռքերով սկսում են խառնել, ջուրը լցնում վրան ու մաղով քամում, մի քիչ սև ալյուր ավելացնում: Ստացվածը սկսում են եփել առավոտից մինչև երեկո, մինչև որ ածիկը թանձրանում է ու գրեթե կարմրում, որը ջեմի նման է: Ածիկը գաղտնի չեն ուտում, ամենաքիչը 7 տան պետք է բաժանեին: Տեղցիները ասում են. «Ածիկը շատ մարդի տոն էր չի օնում» (ածիկը շատ մարկանց տուն չի ընդունում), այսինքն՝ տուն կա, որ ածիկ են պատրաստում այդ տարի, իրենց տնից մարդ է մահանում: Ածիկը պատրաստում են հունվար-փետրվար ամիսներին: Եկեղեցին Մեծ պասի առաջին շաբաթը ածիկը բաժանում է ժողովրդին:

Ավանդական ուտեստներից է «մուզուկով» (ավելուկով) ճաշը: Ավելուկը քաղում են արտերից, «լուսում» (հյուսում), կախում տանիքից՝ չորացնելու համար, ու պահում ձմռանը, սովորաբար այն պատրաստում են ցուրտ օրերին: Մուզուկով ճաշ պատրաստելու համար կտրտում են հյուսած ավելուկը, մի լավ լվանում ու ջրի մեջ եփում: Եփելուց հետո մուզուկի մի մասը տապակում են, մյուս մասն էլ ջրալի են թողնում ու մեջը հաց են ավելացնում: Երբ փողոցում մեկը մուզուկով ճաշ էր ուզում եփել, հարևաններին նախապես տեղյակ էին պահում, հարևաններից ամեն մեկը մի բուքուն (հաց) էին վերցնում, գնում, ավելացնում ջրալիի մեջ ու տաք-տաք ուտում:

Տեղյոցները սովորույթ են ունեցել խաշ գցել: Պահել են շատ անասուններ, մորթը սկսել են սեպտեմբեր ամսից, ու երբ անասունը մորթել են, ոչ միայն միսն են օգտագործել, այլև ոսկորները, ոտքերը: Ոտքերը լավ մաքրել են, մի քանի անգամ լավ լվացել, կտրտել, գցել ջուրը, ջուրը փոխել, ու նախ մի անգամ եփել են, որ արյունը դուրս գցի, նորից փոխել ջուրը, եփել այնքան, որ կաթի գույն ստանա, ապա մեծ ոսկորները առանձնացրել են, կաթնաջուրը քամել, որ ոչ մի ոսկոր չմնա: Խաշը դրել են օջախին երեկոյան ուշ ժամի ու դրսի դուռը ծածկած են պահել: Ասում են, թե մի չար անցորդ կանցնի փողոցով ու խաշի մեջ շատ աղ կամ քար կլցնի, ու առավոտյան բոլորի մոտ խայտառակ կդառնան: Խաշը սկսում են ուտել վաղ առավոտյան, որին ներկա են լինում ընտանիքի անդամները, բարեկամները, հարևանները, ու եթե ինչ-որ մեկին մոռանում էին հրավիրել, նեղանում էին ու ասում. «Լսալ եմ մինակ-մինակ խաշ ես քիցալ» (Լսել եմ, մենակ-մենակ խաշ ես գցել): Խաշ ուտելուց անպայման պետք է սեղանին լինի չորացրած լավաշ, օղի, սխտոր, թթուներ, բողկ [3]:

Շփոտը պատրաստում են սև այլուրից, սառը ջրի մեջ կոկում են, դնում են օջախի վրա, կամաց-կամաց խառնում, այնքան եփում, որ թանձրանա, լցնում են ափսեները, ավելացնում սոխարած, շաքարավազ:

Կաթով ճաշ պատրաստում են կաթով և բրնձով, ըստ ավանդույթի, երբ Տեղ գյուղում անձրև չի եկել, 7 տնից կաթ ու բրնձ են վերցրել ու փողոցում սկսել են եփել:

Տեղ գյուղում սովորույթ է եղել արու գառան մսից մատաղ անելը: Արել են տարվա բոլոր ամիսներին, բացի մայիս ամսից: Մատաղը սովորաբար արել են, երբ մարդ հիվանդ է լինում կամ որևէ անհաջողության է հանդիպում: Արու գառը տարել են Սոփ եղծի, որի շուրջը 7 անգամ պտտել են, այդ ընթացքում ոչ ոք չպետք է խոսի, և հենց եկեղեցու բակում էլ վիզը կտրել են. այն պետք է կտրեր չամուսնացած երիտասարդը: Երբ գառան վիզը կտրում են, արյունը քսում են նրա ճակատին, ում անունով մատաղը արված է: Մատաղի միսը եփում են առանց աղի, բաժանում 7 տան, սովորաբար նրանց են տալիս, ում հետ չեն խոսում կամ էլ նեղացած են: Մատաղ բաժանելիս, եթե որևէ մեկը դուրս է գալիս բաժանողի առջևից, ապա նրան էլ են տալիս:

Թոռաճաշը պատրաստելու համար պղնձե դազանի (կաթսա) առաջին շերտում խոզի միսն են շարում, մյուս շերտում՝ հաճարից պատրաստված կուրկուտը, ու այդպես շարունակ, գլխին ավելացնում 1

բաժակ ջուր ու սկսում են լավ եփել: Թոռաճաշը պատրաստել են նաև հարսանիքի ժամանակ, հիմնականում հյուրասիրել են մակարներին:

Տեղիների սեղանին անպակաս էին թթուները՝ տրկաթերի (հայտնի է նաև ճրդթթու անվամբ), կաղամբի, կանաչ, կարմիր պոմիդորի: Տրկաթերի աղորած ստանալու համար նախ թները քանդում են, մաքրում, լվանում, եռացրած ջրի մեջ խաշում, թողնում 5 րոպե, հանում ու դասավորում կլինկորի վրա, որ սառի: Սառելուց հետո դասավորել են տակառի (լինում է փայտից, երկաթից) մեջ, որը նախքան օգտագործելը ձյութել են, ապա ավելացրել սխտոր, տաքդեղ, սամիթի տերևներ, ջուր, աղ: Կարմիր պոմիդորը փայտե պոչկայում շարել են, աղը լցրել, օգտագործել են ձմռանը ճաշերի մեջ որպես տոմատ [4]:

Տեղ գյուղում արաղ(օղի) պատրաստել են թթից, խաղողից, սալորից, ցորենից: Առանց արաղի ոչ մի հարսանիք չի եղել, մակարները հարսի տուն իրենց հետ տարել են անպայման արաղ և միս: Մրգերը քաղում են, թողնում, որ մի լավ քացախի, ռեզինե երկարաճիտ կոշիկներ են հագնում, որը նախատեսված է հատուկ դրա համար, ու սկսում ճզմել: Լցնում պոչկեն, մի քանի օրից ջուրը պոչկի երեսն է անում, լուցկին մոտեցնում են, եթե վառում է, ուրեմն քաշելու ժամանակն է: Այդ ընթացքը տևում է 10-15 օր: Օղին քաշում են ջեջից՝ մզած խաղողի մնացորդներից: Արաղի զավոդը բերում են ու սկսում քաշել: «Զավոդը» օղի քաշելու սարքավորումն է, որն ունի շատ պարզ կառուցվածք: Օջախի կրակի վրա դնում են կոնաձև դազան, որի վրա դնում են կիսակլոր պղնձե թաղար, ամրացնում են հորիզոնական խողովակը՝ լուլան: Լուլան ամրացվում է նովին: Այստեղ շարունակ հոսող ջուրը սառեցնում է գոլորշիները, և արդեն պատրաստի արաղը լուլայի ծայրից կաթում է ներքևում դրված ամանի մեջ: Տեղիները սովորաբար արաղը քաշել են բաղերի մոտ գտնվող «ղաբում»: Քրրրտակի առաջը պատած, արաղ քաշելու զավոդի դրած տեղը կոչվել է դաբ: Ղաբի շուրջբոլորը թթենու և խախողի ծառեր են եղել, և միանգամից տղամարդիկ ամիսներով մնացել են բաղերում ու արաղը քաշել: Սկզբից թուրն են քաշել, հետո՝ խաղողը: Եվ այս բարդ աշխատանքը կատարելուց հետո լողացել, հանգստացել են բաղի մոտակայքում գտնվող շռանում [5]:

Եզրակացություն: Գյուղատնտեսությունը հազարամյակներ շարունակ եղել է Հայաստանի բնակչության հիմնական զբաղմունքն ու ապրուստի միջոցը: Հայերը հնուց ի վեր վարել են նստակյաց կյանք, զբաղվել հողագործությամբ և անասնապահությամբ: Որպես սնունդ

օգտագործվել են հողագործությունից, անասնապահությունից ստացված արտադրանքը:

Այսպիսով, հաստատվում են այն նախնական կարծիքները, որ Տեղ գյուղում ավանդական ուտեստները հիմնականում պատրաստվել են հողագործական՝ հաց, խաշիլ, ածիկ, մուգուկ, շփոտ, անասնապահական՝ խաշ, թան, թոռաճաշ, կաթով ճաշ, արտադրանքից:

ТРАДИЦИОННЫЕ БЛЮДА И НАПИТКИ КАК ПРОЯВЛЕНИЕ МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ СЕЛА ТЕХ

Лалабекян А. К.

Село Тех знаменито своими традиционными блюдами, которые отличаются разнообразием и особенностью. Правда, сейчас эти блюда не готовят так часто, как в былые времена, но свою особенность они сохранили. В основном традиционные блюда готовят в тех семьях, где живут люди старшего поколения. Обычно они готовят такие блюда в воскресные дни, чтобы все члены семьи, все внуки, правнуки, родственники, соседи имели возможность присутствовать на застолье, и этот день превращается в празднество. Таким образом старшее поколение как бы передаёт потомкам свои традиционные ценности.

Ключевые слова: лаваш, тонир, хашил, ацик, хаш, музук, водка, торначаш, молочная каша, матах.

THE TRADITIONAL DISHES AND DRINKS OF VILLAGE TEGH AS MANIFESTATIONS OF MATERIAL CULTURE

Lalabekyan A. K.

The village Tegah is famous for its traditional dishes, which are distinguished by their variety and uniqueness. It is true that currently these dishes are not used as often as before, but they retain their uniqueness. Basically, traditional dishes are prepared in the families where grandparents live or the family is extended. According to custom, those dishes are prepared on Sundays so that all the members of the house, grandchildren, great-grandchildren, relatives, neighbors are present, and that day turns into a big celebration, with which it seems that the elders of the house want to pass on their traditional values to the generations.

Keywords: lavash, tonir, khashil, malt, khash, muzuk, vodka, torachash, meal with milk, matagh.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 14.07.22թ., պատմող՝ Անուշ Լալաբեկյան՝ ծնված 1954թ. նոյեմբերի 8, ամուսնացած՝ 1972թ. սեպտեմբերի 15, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
2. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 15.07.22թ., պատմող՝ Լիդա Գալստյան՝ ծնված 1939թ. հոկտեմբերի 5, ամուսնացած՝ 1957թ. դեկտեմբերի 21, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
3. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 16.07.22թ., պատմող՝ Ռայա Բաբայան՝ ծնված 1940թ. մարտի 30, ամուսնացած՝ 1958թ. դեկտեմբերի 14, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
4. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 17.07.22թ., պատմող՝ Ռիմա Ավետյան՝ ծնված 1943թ. հունվարի 25, ամուսնացած՝ 1959թ. հոկտեմբեր, ծննդավայր՝ Տեղ գյուղ:
5. Նյութը գրի է առնվել անմիջական պատմողից, 18.07.22թ., պատմող՝ Հրաչիկ Իսունց՝ ծնված 1948թ. նոյեմբերի 24, ամուսնացած՝ 1972թ. հուլիսի 14, ծննդավայր՝ Տեղ գյուղ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Լալաբեկյան Ա. Գ. – բակալավրիատ 3-րդ կուրս

Գորիսի պետական համալսարան, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, Պատմություն

Էլ. փոստ՝ astx-2002@mail.ru

Գիտական ղեկավար՝ Շարունց Գ., սպիստենտ

Ստացվել է՝ 15.11.2022
Գրախոսվել է՝ 14.12.2022

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
Սարգսյան Ա. Կ.**

Քաղաքացիական անձանց պաշտպանության հարցը միջազգային մարդասիրական իրավունքի կարևորագույն հիմնախնդիրներից է: Հաճախ պատերազմող կողմերը գործում են խաղաղ բնակիչների պաշտպանության նորմերի բացարձակ անտեսումով: Խաղաղ բնակչության պաշտպանության բարելավումը պահանջում է միջազգային հանրության ավելի ինտեգրված ջանքեր՝ ոչ միայն վնասը կանխելու, այլև հումանիտար մարտահրավերներին արմատական լուծումներ տալու համար: Սույն աշխատությունը անդրադառնում է քաղաքացիական անձանց պաշտպանության ոլորտում գործող իրավական կարգավորումներին և քննում դրանց կիրառման հետ կապված գործնականում առաջացող խնդիրները:

Բանալի բառեր. քաղաքացիական անձ, զինված ընդհարում, իրավախախտում, պաշտպանություն, կոնվենցիա:

Ներածություն: Գիտատեխնիկական միջոցների զարգացումը ստեղծեց ինչպես նոր տիպի զինատեսակներ, այնպես էլ հանգեցրեց պատերազմները վարելու նոր մեթոդների ու միջոցների ձևավորմանը: Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության 1949թ. Ժնևի կոնվենցիայի ընդունումից ավելի քան 70 տարի անց աշխարհում տեղի ունեցող զինված հակամարտություններում շարունակում է աճել խաղաղ բնակչության շրջանում զոհերի թիվը: Այդ իսկ պատճառով միջազգային մարդասիրական իրավունքը պաշտպանում է քաղաքացիական անձանց և կատարելագործվելով պետք է ուժեղացնի նրանց պաշտպանությունը՝ մեղմելով զինված ընդհարումների հետևանքները: Միջազգային մարդասիրական իրավունքը (այսուհետև՝ ՄՄԻ) զինված ընդհարումների ժամանակ մարդասիրական նկատառումներով պաշտպանում է այն անձանց, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են անմիջական մասնակցություն ունենալ ռազմական գործողություններին, ինչպես նաև սահմանափակում է պատերազմելու մեթոդներն ու միջոցները: Ժնևի 4-րդ կոնվենցիան վերաբերում է պատերազմի ժամանակ քաղաքացիական

բնակչությանն ու նրանց իրավունքների պաշտպանությանը: Կոնվենցիայի դրույթների հիմնական մասը վերաբերում է պաշտպանվող անձանց կարգավիճակին և նրանց վերաբերմունքին, հակամարտող կողմերից մեկի տարածքում օտարերկրացիների և օկուպացված տարածքում քաղաքացիական անձանց վիճակի տարբերությանը: Այն հստակեցնում է օկուպացիոն տերության պարտավորությունները խաղաղ բնակչության նկատմամբ և պարունակում է մանրամասն դրույթներ օկուպացված տարածքի բնակչությանը տրամադրվող մարդասիրական օգնության վերաբերյալ: Այն նաև նախատեսում է հատուկ կանոններ քաղաքացիական ներկալվածների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ: Կարևոր է պարզաբանել, թե միջազգային մարդասիրական իրավունքի համաձայն որոնք են քաղաքացիական անձինք: Ձինված ընդհարման մեջ գտնվող կողմերի զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք (բացի բժշկական և հոգևոր անձնակազմերից) կոմբատանտներ են, այսինքն՝ ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն ունեցող անձինք [1]: Քաղաքացիական անձ է համարվում ցանկացած անձ, որը չի մտնում զինված ուժերի կազմի մեջ (քաղաքացիներ, օտարերկրացիներ, ապատրիդներ, լրագրողներ, բժշկական անձնակազմ, զինված ուժերում մասնակցությունը դադարեցրած անձ և այլն): 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի 4 կոնվենցիաները և դրանց հիմքում ընկած լրացուցիչ արձանագրությունները հիմնված են միջազգային մարդասիրական իրավունքի վրա, որը կարգավորում է զինված հակամարտությունների անցկացումը և փորձում է մեղմել դրանց հետևանքները: Վերոնշյալ փաստաթղթերը պաշտպանում են նրանց, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցել ռազմական գործողություններին: Հատկանշական է նաև այն փաստը, որ բոլոր չորս կոնվենցիաների 3-րդ հոդվածները նույնն են, և դրանք սահմանում են, որ բոլոր անձինք, ովքեր չեն մասնակցում ռազմական գործողություններին, ներառյալ այն անձինք, ովքեր դադարել են մասնակցել հիվանդության, վիրավորվելու, ձերբակալվելու կամ ցանկացած այլ պատճառով, պետք է առանց որևէ խտրականության օգտվեն մարդասիրական վերաբերմունքից [2]:

Միջազգային մարդասիրական իրավունքում քաղաքացիական բնակչությանը տրվում է ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ պաշտպանություն: Ընդհանուր պաշտպանությունը տրամադրվում է յուրաքանչյուր անձի՝ անկախ սեռից, տարիքից, մաշկի գույնից, ռասայից, կրոնից և այլն, իսկ հատուկ պաշտպանությունը կապված է

կամ այդ անձանց բարձր խոցելիությամբ (կանայք, երեխաներ), կամ բացատրվում է նրանց բարձր դերով քաղաքացիական բնակչության օգնության ցուցաբերման և մարտական գործողությունների ժամանակ նրանց գոյության պահպանման գործում (բժշկական հիմնարկների անձնակազմը, հումանիտար ընկերությունները և այլն):

Ժնևի կոնվենցիայի 1-ին լրացուցիչ արձանագրության 48-րդ, 51-րդ, 52-րդ և 54-րդ հոդվածները պաշտպանում են քաղաքացիական բնակչության կյանքն ու քաղաքացիական օբյեկտները, ինչպես նաև քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտները, իսկ 6-րդ գլուխը սահմանում է քաղաքացիական պաշտպանությունը, ընդհանուր պաշտպանությունը, քաղաքացիական պաշտպանությունը գրավյալ տարածքներում, չեզոք կամ ընդհարման կողմ չհանդիսացող պետությունների քաղաքացիական պաշտպանությունը և այլն [3]: Վերոնշյալ 48-րդ, 51-րդ, 52-րդ հոդվածները, ինչպես նաև սովորույթային կանոնների 14-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածները, իրենց մեջ պարունակում են միջազգային մարդասիրական իրավունքի տարբերակման ու համաչափության սկզբունքները [4], որոնց էությունը կայանում է նրանում, որ ընդհարման մեջ գտնվող կողմերը պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությանը կոմբատանտներից, իսկ քաղաքացիական օբյեկտները՝ ռազմականից: Ըստ համաչափության ու ռազմական անհրաժեշտության սկզբունքի՝ քաղաքացիական օբյեկտները, որտեղ կարող է լինել նաև քաղաքացիական բնակչություն, կարող են թիրախավորվել միայն այն ժամանակ, երբ դրանց մասնակի ոչնչացումը կամ չեզոքացումը տվյալ պահին կտա բացահայտ ռազմական առավելություն: Մակայն կարևոր է ընդգծել, որ եթե կասկած է առաջանում բացահայտ ռազմական առավելություն ստանալու վերաբերյալ, ապա օբյեկտը պետք է համարվի քաղաքացիական ու չպիտի թիրախավորվի: Նույն սկզբունքը գործում է նաև տարբերակման սկզբունքի կիրառման դեպքում: Եթե մինչև թիրախավորելը կասկած է առաջանում և հստակ չի ստացվում տարբերակել՝ քաղաքացիական անձինք են, թե զինվորական անձնակազմ կամ քաղաքացիական օբյեկտներ են, թե ռազմական, ապա ենթադրվում է, որ քաղաքացիական օբյեկտ կամ քաղաքացիական անձինք են:

Ըստ Ժնևի կոնվենցիայի 1-ին լրացուցիչ արձանագրության 57-րդ հոդվածի՝ հարձակումից առաջ պետք է կիրառել նախազգուշական միջոցներ՝ 1)անել հնարավոր ամեն ինչ՝ համոզվելու, որ հարձակման օբյեկտը ռազմական է, 2)հարձակման մեթոդներն ու միջոցները ընտրելիս

ձեռնարկել ամեն ինչ, որպեսզի վնաս չհասցվի քաղաքացիական բնակչությանը, իսկ պատահական վնաս հասցնելու դեպքում դրանք հասցնել նվազագույնի, 3)կատարել նախնական արդյունավետ զգուշացում և այլն: Վերոնշյալ հոդվածի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես քաղաքացիական բնակչության ու քաղաքացիական օբյեկտների թիրախավորումը թույլատրող դրույթ [5]: Հոդվածը հստակորեն սահմանում է այն բոլոր դրույթները, որոնք պետք է պահպանվեն զինված ընդհարման մասնակիցների կողմից: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ թվարկված հոդվածները պաշտպանում են ինչպես քաղաքացիական բնակչությանը, այսպես էլ քաղաքացիական օբյեկտները հարձակումներից:

Ժնևի կոնվենցիայի 1-ին լրացուցիչ արձանագրության 79-րդ հոդվածը սահմանում է, որ լրագրողները զինված ընդհարման շրջանում մասնագիտական գործունեություն իրականացնելիս նույնպես համարվում են քաղաքացիական անձինք [6]: Սա շատ կարևոր է, քանի որ տարբեր երկրներից լրագրողները կարող են գործուղվել զինված ընդհարման շրջաններ ու իրականացնել մասնագիտական պարտականությունները, նրանց դիտարկումը որպես քաղաքացիական անձինք ճիշտ է, որովհետև նրանք փաստացի չեն մասնակցում ընդհարմանը, ու նրանց կյանքի համար սա երաշխիք է հանդիսանում: Ժնևի կոնվենցիայի 1-ին լրացուցիչ արձանագրության 72-րդ հոդվածը պաշտպանում է նաև ապատրիդներին(քաղաքացիություն չունեցող անձինք) ու փախստականներին՝ հղում կատարելով 4-րդ կոնվենցիայի 1-ին և 3-րդ մասերին, իսկ նույն լրացուցիչ արձանագրության 76-րդ և 77-րդ հոդվածները՝ կանանց ու երեխաներին [7]: Այսինքն՝ փախստականներն ու ապատրիդները ևս համարվում են քաղաքացիական անձինք ու ենթակա չեն հարձակման: ՄՄԻ-ը նշում է քաղաքացիական անձանց մեջ հատուկ խմբեր, ինչպիսիք են կանայք, որոնք պաշտպանված են սեռական բռնությունից, և երեխաներ, որոնց հատուկ կարիքները պետք է հաշվի առնվեն: Այստեղ, ըստ բաժինների ու հոդվածների, սահմանվել է ներկայվածների կարգավիճակը, նրանց պաշտպանությունը, նրանց տրամադրվող անվճար բժշկական օգնությունը, սնունդը և հագուստը, հիգիենան, նրանց կրոնական գործունեության ապահովումը, ժամանցը, ուսումը, սպորտը, ինչպես նաև նրանց ազատումը, հայրենադարձումը և հոսպիտալացումը չեզոք երկրում: Ընդ որում՝ պետք է նշել, որ ներկայվածները լիովին պահպանում են իրենց քաղաքացիական իրավունակությունը և

իրականացնում դրանցից բխող իրավունքներն այնքանով, որքանով դա համատեղելի է նրանց կարգավիճակի հետ:

1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի 1-ին կոնվենցիայի 19-րդ, 4-րդ կոնվենցիայի 18-րդ և 21-րդ, 1-ին լրացուցիչ արձանագրության 12-րդ, 15-րդ և 21-րդ հոդվածները պաշտպանում են բուժհիմնարկները և բուժապասարկում իրականացնող մոբիլ միավորները, քաղաքացիական հիվանդանոցները, որոնք կազմակերպված են վիրավորներին և հիվանդներին, թույլերին խնամելու և ծննդօգնության նպատակով, ինչպես նաև քաղաքացիական բժշկական և հոգևոր անձնակազմին [8]: Հենց այս հոդվածներով էլ նշված կատեգորիաները որևէ հանգամանքներում չպետք է լինեն հարձակման օբյեկտ: Ավելին, հենց նրանք են իրականացնում հումանիտար գործունեություն, հետևաբար նրանց պաշտպանությունը ավելի քան կարևոր է: Ժնևի կոնվենցիայի 2-րդ լրացուցիչ արձանագրության 13-րդ, 14-րդ և 17-րդ հոդվածները նույնպես վերաբերում են քաղաքացիական բնակչությանը [9]: Փաստորեն այս հոդվածները ևս պաշտպանում են քաղաքացիական բնակչությանը, և նրանք օգտվում են նախատեսված պաշտպանությունից այնքան ժամանակ, քանի դեռ զինված գործողություններին անմիջական մասնակցություն չեն ունենում: Այստեղ նույնպես մատնանշվում է, որ սովորապես պատերազմելու մեթոդ օգտագործելն անթույլատրելի է: Քաղաքացիական անձինք չեն կարող հարկադրվել թողնելու իրենց սեփական տարածքը ընդհարման պատճառով:

Պետք է նշել, որ քաղաքացիական անձանց պաշտպանությունը պետք է լինի առաջնային, քանի որ վերջերս ավելի են շատացել զինված ընդհարումներն ու դրանց վարման իրավախախտ մեթոդները՝ հատկապես մեր տարածաշրջանում: Քաղաքացիական բնակչությունը ոչ մի կերպ չպետք է ենթարկվի խոշտանգման, դաժան ու նվաստացնող վերաբերմունքի և պետք է պաշտպանվի բոլոր տեսակի բռնություններից: Հարկ է նշել, որ քաղաքացիական բնակչության պաշտպանության իրականացումը ՄՄԻ-ում կապված է մարդու իրավունքների միջազգային իրավունքի հետ: Մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր նախատեսում են, որ պատերազմի, արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների մի մասը կարող է սահմանափակվել, բայց դրանցում նախատեսվում են նաև այն իրավունքները, որոնք ոչ մի պարագայում սահմանափակման ենթակա չեն՝ կյանքի իրավունքը, անձնական անձեռնմխելիության, խոշտանգումների արգելքը և այլն:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև սովորույթային նորմերին ու այն դատական նախադեպերին, որոնք ևս սահմանում են քաղաքացիական անձանց պաշտպանությունը: Քաղաքացիական բնակչության սահմանումը տալիս է 5-րդ սովորույթային նորմը [10], ըստ որի՝ քաղաքացիական անձինք այն անձինք են, ովքեր զինված ուժերի անդամ չեն: Քաղաքացիական բնակչությունը բաղկացած է բոլոր այն անձանցից, ովքեր քաղաքացիական անձինք են: Իսկ Բլաշկիչի գործով 2000 թվականին իր որոշման մեջ նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալը քաղաքացիական անձանց սահմանեց որպես «անձեր, ովքեր չեն հանդիսանում կամ այլևս չեն հանդիսանում զինված ուժերի անդամներ» [11]:

Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ժամանակ տեղի են ունեցել ՄՄԻ բազմաթիվ խախտումներ: Պատերազմի առաջին օրվանից համատարած հրթիռակոծման և ուժեղացող է ենթարկվել 150 հազար բնակչություն ունեցող Արցախի Հանրապետությունը: Մինչև պատերազմի ավարտը հայկական կողմից սպանվել է 50 և վիրավորվել 148 քաղաքացիական անձ: Ադրբեջանը թիրախավորել է նաև Շուշիի Մշակույթի պալատը, Ստեփանակերտի էլեկտրական ցանցի շենքը, էլեկտրական ենթակայանները: Մինչև նոյեմբերի 9-ը առնվազն 71 դպրոց և 14 մանկապարտեզ վնասվել են հրթիռակոծման հետևանքով: Դրանք չհաշված՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակավայրերի դպրոցական տարիքի 23,978 և նախադպրոցական տարիքի 4,036 երեխաներ զրկվել են կրթության իրավունքից [112]: Մինչև 2021թ. սեպտեմբերի 27-ը Ադրբեջանի կողմից սպանվել են 80 խաղաղ բնակիչներ, որոնցից 38-ը սպանվել են գերության ժամանակ: Սրանք անհերքելի փաստեր են, որոնք արձանագրվել են Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից, սակայն կան նաև քաղաքացիական անձանց սպանության վերաբերյալ այլ տեղեկություններ, որոնք դեռ հաստատված չեն [13]: Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանի կողմից թիրախավորվել են ինչպես քաղաքացիական անձինք, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ ու լրագրողներ: Ադրբեջանի կողմից խախտվել են միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով նախատեսված դրույթները: Հիմնականում բնակչության թիրախավորումները եղել են դիտավորյալ, քանի որ ռազմական օբյեկտները եղել են բնակավայրերից շատ հեռու, իսկ Ադրբեջանը օգտագործել է ճշգրիտ խոցման զինատեսակներ: Միջազգային մարդասիրական սկզբունքների

տեսնանկյունից՝ թիրախավորված օբյեկտների խոցման ժամանակ Ադրբեջանը չի պահպանել համաչափության ու տարբերակման սկզբունքը, իսկ նախազգուշացման սկզբունքը չի կիրառվել ռազմական գործողությունների ժամանակ:

Եզրահանգում: ՄՄԻ-ի կիրառումը զինված ընդհարումների ժամանակ առավել արդյունավետ է, քանի որ այն հատուկ ուղղված է մարդու իրավունքների խախտումների սահմանափակմանը: Պետք է ընդգծել, որ այդ արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ 1949թ. Ժնևի 4 կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները վավերացված են միջազգային հանրության առավել լայն շրջանակների կողմից, քան մարդու իրավունքների վերաբերյալ այլ պայմանագրերի մեծամասնությունը. մոտ 194 երկիր վավերացրել է Ժնևի կոնվենցիաները [14]: Սակայն դա փաստացի երաշխիք չէ, որ վավերացնող կողմերը խստագույնս կպահպանեն նախատեսված նորմերը: Պատերազմներն անխուսափելի են, այդ իսկ պատճառով միջազգային մարդասիրական իրավունքը պետք է գործի ավելի ուժեղ ու արդյունավետ՝ սահմանափակելով պատերազմելու մեթոդներն ու միջոցները: Ժնևի կոնվենցիաները և պատերազմի օրենքները չեն դադարեցնի խախտումները պատերազմի դաշտում, բայց երբ գործում է միջազգային մարդասիրական իրավունքը, խաղաղ բնակիչները զգալիորեն ավելի քիչ են տուժում:

ՄՄԻ ոլորտում գործող կարգավորումները ուսումնասիրելուց հետո կարող ենք եզրակացնել, որ խախտումները տեղի են ունենում ոչ թե այն պատճառով, որ իրավակարգավորումները թերի են, այլ այդ նորմերի կատարման ցանկության բացակայության պատճառով: Հաշվի առնելով վերոնշյալը՝ քաղաքացիական անձանց պաշտպանության համար միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումները կանխելու և հետագայում դրանց համար արգելքներ սահմանելու համար անհրաժեշտ է.

1. միջազգային իրավական համակարգում քաղաքացիական անձանց պաշտպանությունը սահմանող նորմերի պահանջները գործնականում կիրառելու ավելի արդյունավետ մեխանիզմներ մշակել,
2. քաղաքացիական անձանց պաշտպանությունը կարգավորող նորմերի կիրառման համար հատուկ իրավական վերահսկողություն սահմանել՝ պայմանագրերը, կոնվենցիաները և այլ միջազգային փաստաթղթերը վավերացրած երկրների կողմից

դրանք պարտադիր կերպով և առանց որևէ խտրականության իրականացնելու համար:

ЮРИДИЧЕСКИЙ ПРОЦЕСС ЗАЩИТЫ ГРАЖДАНСКИХ ЛИЦ В СИСТЕМЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

Саргсян А. К.

Проблема защиты гражданских лиц является одним из важнейших вопросов международного гуманитарного права. Зачастую противоборствующие стороны действуют при полном игнорировании норм защиты мирного населения. Улучшение защиты гражданского населения требует более комплексных усилий со стороны международного сообщества не только для предотвращения ущерба, но и для поиска радикальных решений гуманитарных проблем. В статье рассматриваются правовые нормы в сфере гражданской защиты, исследуются вопросы, связанные с их применением на практике.

Ключевые слова: гражданское лицо, вооруженный конфликт, правонарушение, оборона, конвенция.

PROTECTION OF CIVILIANS UNDER INTERNATIONAL HUMANITARIAN LAW

Sargsyan A. K.

The problem of the protection of civilians is one of the most important issues of international humanitarian law. Often, the conflicting parties act in complete disregard of the norms of protecting civilians. The improvement of the legal protection of the civilian population requires more comprehensive efforts from the international community, not only for preventing damage, but also for finding radical solutions to humanitarian problems. The article considers the protection of legal regulation of civil population and the issues related to the application of those regulations in practice.

Keywords: civilian, armed conflict, violation, offense, convention.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաներին կից 1-ին լրացուցիչ արձանագրություն, հոդված 43:

2. ԿԻՄԿ պաշտոնական կայքէջ, <https://www.icrc.org/ru/war-and-law/treaties-customary-law/geneva-conventions>:
3. 1949թ. օգոստոս- 12-ի Ժնևի կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրություն, հոդվածներ՝ 48, 51, 52, 54:
4. ԿԻՄԿ պաշտոնական կայքէջ, սովորույթային ՄՄԻ շտեմարան, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/rus/docs/v1_rul:
5. 1949թ. օգոստոս- 12-ի Ժնևի կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրություն, հոդված 57:
6. 1949թ. օգոստոս- 12-ի Ժնևի կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրություն, հոդված 79:
7. 1949թ. օգոստոս- 12-ի Ժնևի կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրություն, հոդվածներ՝ 72, 76, 77:
8. 1949թ օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաներ ու դրանց լրացուցիչ արձանագրություններ, ք. Երևան 2017թ., էջ 32, 216-219, 318-324:
9. 1949թ. օգոստոս- 12-ի Ժնևի կոնվենցիաների 2-րդ լրացուցիչ արձանագրություն, հոդվածներ՝ 13, 14, 17:
10. База данных по МГП, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/rus/docs/v1_rul_rule5:
11. ICTY, Blaškić case, Judgement (там же, § 751).
12. ԱՀ ՄԻՊ պաշտոնական կայքէջ, <https://www.artsakhombuds.am>:
13. ԱՀ ՄԻՊ միջանկյալ զեկույց Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախի խաղաղ բնակիչների սպանությունների դեպքերի վերաբերյալ, Ստեփանակերտ, 2021թ., <https://artsakhombuds.am/hy/document/785?fbclid=IwAR2j00ZsePKbtszhmX-2ujcjbseZ3-k2ssuVRY-smzFUBm7TOeWFtxEm00>:
14. ԿԻՄԿ պաշտոնական կայքէջ, <https://www.icrc.org/ru/document/zhenevskie-konvencii-osnova-mezhdunarodnogo-gumanitarnogo-prava>:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մարգարյան Ա. Կ. – բակալավրիատ 3-րդ կուրս

ԱրՊՀ, Պատմության և իրավագիտության ֆակուլտետ, Երավագիտություն

Էլ. փոստ՝ caroka@inbox.ru

Գիտական ղեկավար՝ Վարդանյան Զ., իրավ.գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 17.11.2022

Գրախոսվել է՝ 22.12.2022

**ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ
Ապիկյան Ա. Ս.**

Անձի ազատ տեղաշարժի իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Տեղաշարժի ազատությունը չի ենթադրում կամայական ընտրությամբ որևէ երկիր մուտք գործելու ընդհանուր, համընդհանուր իրավունք: Միջազգային նորմերի տեսանկյունից օտարերկրացուն մուտքի իրավունքի տրամադրումը տվյալ երկրի ինքնիշխան իրավունքներից է, և այն օտարերկրացիները, որոնք, տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելով, մուտք են գործում կամ գտնվում (բնակվում) են այնտեղ, համարվում են անօրինական միգրանտներ:

Միգրացիոն գործընթացների կարգավորումը և անօրինական միգրացիայի դեմ պայքարը կարևոր խնդիր է յուրաքանչյուր պետության համար: Գլոբալացման պայմաններում, զարգացած և զարգացող երկրների միջև հսկայական անջրպետի ֆոնին, օրինական միգրացիոն հոսքերն ավելի ու ավելի են վերածվում անօրինականի: Ժամանակակից աշխարհում ինտեգրման զարգացումը կտրուկ ակտիվացնում է միգրացիոն գործընթացները, ինչը պայմանավորված է վերջին տասնամյակում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններով:

Աշխատանքում ներկայացված են անօրինական միգրացիայի կազմակերպման քրեաիրավական բնութագիրը և սահմանազատումը հարակից հանցակազմերից՝ ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի, ինչը վկայում է հետազոտության թեմայի արդիականությունը, ինչպես նաև խնդրո առարկային վերաբերող կրիմինալոգիական որոշ հարցեր:

Բանալի բառեր. միգրացիա, կազմակերպված հանցավորություն, սահմանահատում, միգրանտ, անդրազգային հանցավոր գործունեություն, իմիգրացիա, էմիգրացիա:

Վերջին ժամանակներում անօրինական միգրացիան դարձել է անդրազգային երևույթ և լուրջ մտահոգություն է առաջացնում ողջ աշխարհում: Փաստացի, աշխարհի բոլոր երկրները ներգրավված են միգրացիոն գործընթացների մեջ: Միգրացիոն գործընթացների բարձր

մակարդակը ժամանակակից մարդկային քաղաքակրթության անբաժան մասն է: Միլիոնավոր մարդիկ սահմաններ են հատում կրթության, հանգստի, աշխատանք փնտրելու, տարբեր տեսակի հետապնդումներից փրկվելու, արտակարգ իրավիճակների կամ այլ բազմաթիվ պատճառներով:

Ժամանակակից միջազգային միգրացիան աչքի է ընկնում անօրինական միգրացիայի բարձր մակարդակով: Միգրացիայի միջազգային կազմակերպության տվյալներով՝ ներկայիս գլոբալ գնահատականն այն է, որ 2020 թվականին աշխարհում եղել է շուրջ 281 միլիոն միջազգային միգրանտ [11]: Հաշվի առնելով, որ անօրինական միգրանտները թաքնվում և խուսափում են պատասխանատվությունից, նրանց թիվը կարող է գնահատվել ոչ լիարժեք ճշտությամբ:

Միգրացիայի արդյունավետ կառավարման համակարգի ստեղծումը և զարգացումը կարևոր նշանակություն ունի գլոբալացման պայմաններում՝ դինամիկ և ճկուն աշխարհում դրա դրական ներուժի իրագործման համար: Բուն անօրինական միգրացիան ակտիվ քրեածին գործոն է, որը նպաստում է հանցավորության տարբեր տեսակների դրսևորման:

Ելնելով վերոգրյալից՝ սույն հետազոտության նպատակն անօրինական միգրացիայի քրեաիրավական և կրիմինալոգիական բնութագրերի ուսումնասիրությունն է: Այս նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել անօրինական միգրացիայի կազմակերպումը որպես անդրազգային կազմակերպված հանցավոր գործունեություն,
- մեկնաբանել անօրինական միգրացիայի կազմակերպումը որպես իրավական հիմնախնդիր,
- վերլուծել անօրինական միգրացիայի կազմակերպման քրեաիրավական բնութագիրը ՀՀ-ում,
- սահմանազատել անօրինական միգրացիայի կազմակերպման հանցակազմը հարակից հանցակազմերից:

Սույն հետազոտության նորմատիվ հիմք են հանդիսացել միջազգային իրավական նորմերն ու պայմանագրերը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգիրքը, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքը, «Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենքը, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ

օրենքը, քրեական իրավունքի և քրեաբանության ոլորտի հայրենական և արտասահմանյան գիտական աշխատությունները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ՝ վիճակագրական նյութեր, հաշվետվություններ և այլն:

Միգրացիան անհատների կամ սոցիալական խմբերի կողմից մշտական բնակության վայրի փոփոխության գործընթաց է, որն արտահայտվում է նույն երկրի այլ տարածաշրջան, այլ աշխարհագրական շրջան կամ այլ երկիր տեղափոխմամբ:

Գլոբալացումը, ժողովրդագրական աճը, զարգացող կամ զարգացած երկրների կենսամակարդակների անհավասարությունը, բազմաթիվ այլ գործոններ նպաստում են ամբողջ աշխարհում միգրացիոն գործընթացների անընդհատ աճին: Միգրանտների մեծ մասը հատում է սահմաններն ավելի բարեկեցիկ սոցիալական հնարավորությունների փնտրտուքներում:

Աստիճանաբար միգրացիան ընկալվում է որպես մի խնդիր, որը պահանջում է համընդհանուր մոտեցում և համակարգված արձագանք: Միգրացիայի հետ կապված հիմնահարցերը պետությունները քննարկում են ինչպես երկկողմ համագործակցության մակարդակում, այնպես էլ տարածաշրջանային, իսկ վերջին տարիներին՝ համաշխարհային ասպարեզում:

Միգրացիայի խնդրով զբաղվող մասնագետների կողմից երևույթի վերաբերյալ օգտագործվում են «կանոնավոր (լեգալ, օրինական) միգրացիա» և «անկանոն (անօրինական, անլեգալ) միգրացիա» արտահայտությունները:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը ձևակերպել է անօրինական միգրացիային վերաբերող մի շարք հասկացությունների սահմանումներ [3]: Մասնավորապես

- անկանոն կարգավիճակով միգրանտ (irregular migrant)՝ մուտքի թույլտվություն չունենալու, մուտքի պայմանները խախտելու կամ վիզայի ժամկետը լրանալու հետևանքով տարանցման և հյուրընկալող երկրում իրավական կարգավիճակ չունեցող անձ,
- անօրինական մուտք (illegal entry)՝ սահմանի հատումն առանց ընդունող պետություն օրինական մուտք գործելու համար անհրաժեշտ պահանջների պահպանման,
- չթույլատրված /ապօրինի մուտք/ ընդունում (unauthorized / unlawful entry / admission)՝ սահմանի հատումն առանց ընդունող պետության

օրինական մուտքի համար անհրաժեշտ պահանջների պահպանման,

- անկանոն միգրացիա (irregular migration)՝ տեղաշարժ, որը տեղի է ունենում ուղարկող, տարանցման և ընդունող երկրների նորմատիվ իրավական դրույթների գործողությունից դուրս:

1998թ.-ի Եվրոպական կոնվենցիան ապօրինի փոխադրումները սահմանել է որպես գործողություններ, որոնց նպատակն է ֆինանսական շահ ստանալու համար միտումնավոր օժանդակել օտարերկրացուն՝ մուտք գործել պետության տարածք, ապրել ու աշխատել այնտեղ՝ խախտելով այդ երկրում գործող կանոններն ու պայմանները:

Անօրինական միգրանտի կարգավիճակում կարող են հայտնվել այն օտարերկրացիները, ովքեր՝

1. տվյալ երկիր մուտք են գործել առանց թույլտվության,
2. տվյալ երկիր մուտք են գործել օրինական սկզբունքներով, սակայն՝
 - երկրում գտնվելը չի համապատասխանում մուտքի արտոնագրում նշված նպատակին,
 - ապաստանի հայցի մերժում ստացած անձը շարունակում է մնալ այդ երկրում,
 - մուտքի արտոնագրում նշված ժամկետից կամ օրենքով սահմանված ժամկետից ավելի երկար ժամանակով են գտնվում տվյալ երկրում:

Անօրինական միգրացիայի հետ կապված խնդիրների իրավական կարգավորումը տրվում է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ: Միջազգային փաստաթղթերից կարևորվում են «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Պալերմոյի կոնվենցիան և դրան կից՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ» թիվ 1 և «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» թիվ 2 կամրնտիր արձանագրությունները, ինչպես նաև «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիան, «Միգրացիայի բնագավառում չարաշահումների և աշխատող միգրանտներին հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության ապահովման մասին» թիվ 143 կոնվենցիան, «Անօրինական միգրացիայի դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից

պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը և մի շարք այլ փաստաթղթեր:

Թվարկված միջպետական համաձայնագրերը, միջազգային կոնվենցիաներն ու համաձայնագրերն ուղղված են ոլորտի կարգավորմանը, մարդկանց օրինական տեղաշարժի իրավունքի ապահովմանը և մարդկանց շահագործման և ապօրինի տեղաշարժերի կանխարգելմանը, անօրինական միգրացիայի երևույթի դեմ պատժողականությանը:

Հայաստանի Հանրապետությունում անօրինական միգրացիայի դեմ պայքարի իրավական ակտերից է ՀՀ քրեական օրենսգիրքը: Ընդգրկուն ոլորտին առնչվող ներպետական մյուս ակտերը՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքը, «Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենքը, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, ապաստանին և միգրացիայի ոլորտին առնչվող ՀՀ կառավարության որոշումները և այլն:

Հայաստանի Հանրապետությունը, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան, 2014թ. հունիսի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 329.1 հոդվածով ամրագրեց անօրինական միգրացիայի կազմակերպման հանցավոր բնույթը: 2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը 470-րդ հոդվածում անփոփոխ է թողել 2014թ.-ին սահմանված դիսպոզիցիան, փոփոխվել է միայն սանկցիան: ՀՀ քրեական օրենսգրքի 470-րդ հոդվածն անօրինական միգրացիայի կազմակերպումը բնորոշում է որպես օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) շահադիտական նպատակով կազմակերպելը, որը կատարվել է մուտքի, գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով, և նշված արարքների համար նախատեսում է պատասխանատվություն՝ տուգանք՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ մեկից չորս տարի ժամկետով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը շահադիտական նպատակով

կազմակերպելը, որը կատարվել է ելքի, մուտքի կամ գտնվելու համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ ելքի, մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

Հիշյալ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է ծանրացնող հանգամանքներ՝ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) մարդու կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող պայմաններում կամ
- 3) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Ծանրացնող հանգամանքների վերլուծությանը և կանխարգելիչ միջոցառումներին անդրադարձ կկատարենք մեր հաջորդ հետազոտություններում:

Ստորև անդրադարձ է կատարվում քննարկվող հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի վերլուծությանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 470-րդ հոդվածը զետեղված է ՀՀ քրեական օրենսգրքի 44-րդ՝ «Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները» գլխում: Անօրինական միգրացիայի կազմակերպման ժամանակ, առաջին հերթին, խախտվում են այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են պետական կառավարման մարմինների միգրացիոն գործընթացների կարգավորման ոլորտում օրենսդրորեն կանոնակարգող գործողությունները, ինչը և հանցագործության անմիջական օբյեկտն է [4]:

Նշված հոդվածի դիսպոզիցիան ունի բարդ կառուցվածք և ներառում է երկրնտրելի գործողություններ, որոնցից յուրաքանչյուրի կատարումն առանձին, ինչպես նաև դրանց կատարման ընդհանրությունը կազմում են մեկ ամբողջական, ավարտված հանցագործություն:

ՀՀ մուտք գործելը ցամաքով իրականացվում է դրա պետական սահմանի հատմամբ: Անօրինական մուտքն իրականացվում է ՀՀ պետական սահմանի հատմամբ՝ մուտքի սահմանված կարգի

խախտմամբ կամ մուտքի համար չսահմանված վայրում մուտք գործելու միջոցով: ՀՀ անօրինական մուտքի կազմակերպում է համարվում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց օգնություն ցույց տալու գործողությունները՝ կապված ՀՀ պետական սահմանը հատելու կամ ՀՀ-ով տարանցման նպատակով: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքը չի տալիս ՀՀ պետական սահմանի որոշման ստույգ գիծն ու շրջանակները, և նշված օրենսդրական բացը կարող է բարդություններ առաջացնել հանցագործության որակման ընթացքում:

ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց անօրինական բնակության կազմակերպում են համարվում այն գործողությունները, որոնք ուղղված են ՀՀ տարածքում զբաղվածության, բնակարանի, նյութական միջոցների տրամադրման և այլ միջոցառումներին:

Նշված բոլոր գործողությունները կազմում են մեկ ընդհանուր շղթայի՝ անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ տարրերը:

Անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտն ընդհանուր է, այն է՝ 16 տարին լրացած, ֆիզիկական, մեղսունակ անձը, ով կազմակերպել է անօրինական մուտք կամ անօրինական կեցություն ՀՀ-ում կամ անօրինական տարանցում ՀՀ տարածքով:

Հարկ է նկատել, որ անօրինական միգրացիայի կազմակերպումը հաճախ իրականացվում է կազմակերպված խմբերով, որոնց կազմում ներառվում են նաև հանրային ծառայության ներկայացուցիչներ կամ նրանց հետ կապ ապահովող անձինք, ուստի անօրինական միգրացիայի կազմակերպման որակյալ տեսակի սուբյեկտներ կարող են լինել պաշտոնատար անձինք, ինչպես նաև կազմակերպչական-վարչական կամ վարչատարածքային գործառույթներ իրականացնող անձինք: Քննարկվող հանցագործության կազմակերպիչը կարող է ուղղակիորեն մասնակցել հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը կամ մնալ ստվերում: Անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար բավական է անօրինական միգրացիայի կազմակերպմանն ուղղված որևէ գործողություն:

Սուբյեկտիվ կողմից անօրինական միգրացիայի կազմակերպման բոլոր դրսևորումները բնութագրվում են ուղղակի դիտավորությամբ և հատուկ նպատակով: Հանցագործության սուբյեկտիվ կողմը նախատե-

սում է պարտադիր պայման, այն է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալը:

Անօրինական միզբացիայի կազմակերպումն ունի այլ հանցագործությունների նմանվող հատկանիշներ, ուստի հարկ ենք համարում սահմանազատել անօրինական միզբացիայի կազմակերպումը հարակից հանցակազմերից:

ՀՀ քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու համար: Քննարկվող հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ հոդվածի գործողությունը չի տարածվում թրաֆիքինգից տուժած անձի վրա, ինչպես նաև ապաստան հայցողի վրա, որը, ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրա կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել, առանց ձգձգման դիմում է իրավասու մարմին և մատնանշում իր ապօրինի մուտքի հիմնավոր պատճառը:

Առաջին հայացքից միմյանց նման այս երկու հանցակազմերն ունեն էական տարբերություններ: Նախ՝ հանցագործությունների տարբերությունը համադրվող հանցակազմի օբյեկտիվ կողմն է: Անօրինական միզբացիայի կազմակերպումը բովանդակային առումով բաղկացած է երկու առանձին արարքներից՝

- օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն,
- Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) շահադիտական նպատակով կազմակերպելը, որը կատարվել է մուտքի, գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով կամ մուտքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Իսկ պետական սահմանը ապօրինի հատելու օբյեկտիվ կողմը բնութագրվում է առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով [7]:

Ընդ որում՝ անօրինական միզբացիայի կազմակերպման երկու դրսևորումների դեպքում էլ պարտադիր պայման է հատուկ նպատակի առկայությունը, այն է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ

Ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու նպատակը: Մա ևս հանդիսանում է այս երկու հանցակազմերի տարբերակիչ հատկանիշներից մեկը:

Տարբեր են նաև քննարկվող հանցագործությունների սուբյեկտները: Անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտը անօրինական միգրացիայի կազմակերպիչն է, ով կազմակերպում է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ապօրինի մուտքը ՀՀ կամ ՀՀ տարածքով ապօրինի տարանցումը, ինչպես նաև ՀՀ-ից ապօրինի ելքը, օտարերկրյա պետություն ապօրինի մուտքը, օտարերկրյա պետությունում ապօրինի գտնվելը: Պետական սահմանի ապօրինի հատման դեպքում սուբյեկտ է հանդիսանում հենց այն անձը, ով ինքնուրույն, առանց այլ անձի օգնության, ուղղակի դիտավորությամբ, առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության հատել է ՀՀ պետական սահմանը [7]:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այս երկու հանցակազմերի առկայությունը շփոթության տեղիք չի տա, եթե կիրառվի քրեա-իրավական նորմերի մրցակցությունը և արարքի որակումն իրականացվի դրան համապատասխան:

Անօրինական միգրացիայի կազմակերպումը պետք է սահմանագատել նաև մարդու թրաֆիքինգից կամ շահագործումից:

Քննարկվող հանցակազմերի համեմատական վերլուծությունից հանգում ենք այն հետևության, որ օբյեկտիվ կողմով սրանք տարբերվում են հողվածների դիսպոզիցիաներով: Այստեղ շփոթության տեղիք կարող է տալ միայն թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը բնութագրող երկրնտրելի գործողություններից մեկը՝ մարդկանց տեղափոխումը: Տեղափոխումը կարող է իրականացվել նաև սահմանահատմամբ, բայց, եթե անօրինական միգրացիայի կազմակերպման դեպքում այն հանդիսանում է ինքնին բավարար՝ նպատակին հասնելու համար, ապա մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքում տեղափոխումից հետո իրականացվելու են գործողություններ, որոնք ուղղված են լինելու անձին շահագործելու, անձին շահագործման վիճակի մեջ դնելու կամ շահագործման վիճակում պահելու նպատակով [7]:

Սուբյեկտիվ կողմից մարդկանց առևտուրն անօրինական միգրացիայի կազմակերպումից տարբերվում է հատուկ նպատակի առկայությամբ, այն է շահագործումը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ անօրինական միգրացիայի խնդիրը աշխարհի տարբեր երկրներում արդիականության բարձր

աստիճան ունեցող խնդիր է, և այս համատեքստում տարբեր երկրներ համագործակցում են՝ կանխելու այդ երևույթը: Քննարկվող երևույթի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում հիմնարար նշանակություն ունեն համապատասխան իրավական ակտերը՝ ինչպես միջազգային, այնպես էլ հայրենական:

НЕКОТОРЫЕ УГОЛОВНЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ БОРЬБЫ С ОРГАНИЗАЦИЕЙ НЕЛЕГАЛЬНОЙ МИГРАЦИИ

Асликян А. С.

Право на свободное передвижение человека считается одним из основных прав человека. Свобода передвижения не включает в себя общее, всеобщее право въезжать в любую страну по своему желанию. Согласно международным нормам, предоставление права въезда иностранному гражданину считается одним из суверенных прав данной страны, и те иностранцы, которые с нарушением правил, установленных законодательством данной страны, въезжают или пребывают (проживают) там, считаются нелегальными мигрантами.

Регулирование миграционных процессов и борьба с нелегальными иммигрантами является важным вопросом для каждого государства. В условиях глобализации на фоне огромного разрыва между развитыми и развивающимися странами легальные миграционные потоки все чаще превращаются в нелегальные. Развитие интеграции в современном мире резко активизирует миграционные процессы, что связано с политическими и социально-экономическими изменениями, произошедшими в последнее десятилетие.

В статье представлены уголовно-правовая характеристика организации незаконной миграции и ее разграничение со смежными преступлениями согласно новому Уголовному кодексу РА, а также некоторые криминологические вопросы, связанные с обсуждаемой тематикой.

Ключевые слова: миграция, организованная преступность, пересечение границы, мигрант, транснациональная преступная деятельность, иммиграция, эмиграция.

SOME CRIMINAL AND CRIMINOLOGICAL QUESTIONS OF THE FIGHT AGAINST THE ORGANIZATION OF ILLEGAL MIGRATION

Aslikyan A. S.

The right to free movement of a person is considered one of the fundamental human rights. Freedom of movement does not include a general,

universal right to enter any country at will. According to the accepted international norms, granting the right of entry to a foreign citizen is considered one of the sovereign rights of the given country, and those foreigners who, violating the rules established by the legislation of the given country, enter or stay (reside) there, are considered illegal migrants.

The regulation of migration processes and the fight against illegal immigrants is an important issue for every state. In the conditions of globalization, against the background of the huge gap between developed and developing countries, legal migration flows are increasingly turning into illegal ones. The development of integration in the modern world dramatically activates migration processes, which is due to the political and socio-economic changes that took place in the last decade.

The article presents the criminal-legal characteristics of organizing illegal migration and its distinction from related crimes according to the new Criminal Code of the Republic of Armenia, as well as some criminological issues related to the topic under discussion..

Keywords: migration, organized crime, border crossing, migrant, transnational criminal activity, immigration, emigration.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվ իրավական ակտեր

1. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիային կից՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» ՄԱԿ-ի 2000թ. արձանագրություն:
2. Անօրինական միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիր:
3. Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա:
4. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք:
5. «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենք:
6. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք:

Մասնագիտական գրականություն

7. Թումայան Դ., Հովհաննիսյան Կ. Քրեական իրավունք, Հատուկ մաս. Երևան, 2022թ.:

8. Կարելեովա Հ., Մազմանյան Ա., Երեմյան Ա. «Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն օրենսդրության գնահատում», Երևան, 2007:
9. Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, 2-րդ հրատարակություն, ՄՄԿ, 2013թ.:
10. Байбурина Э. Р. Организация незаконной миграции: уголовно-правовые и криминологические аспекты: автореф. дис. кандидата юридических наук. Челябинск, 2010:

Էլեկտրոնային ռեսուրսներ

11. <https://worldmigrationreport.iom.int/wmr-2022-interactive/>

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Ասլիկյան Ա. Մ. – բակալավրիատ 4-րդ կուրս

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիա, Բրավագիտության ֆակուլտետ, Բրավագիտություն

Էլ. փոստ՝ aniaslikyan1701@gmail.com

Գիտական ղեկավար՝ Բսրայեյյան Գ., իրավ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 19.11.2022

Գրախոսվել է՝ 16.12.2022

**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Անդրեասյան Ս. Հ.**

Սույն հոդվածում ներկայացված է Հայաստանի Հանրապետության՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին ընդունված աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային կարգապահության կանոնները: Աշխատանքային կարգապահությունը ենթադրում է իրենց պարտականությունների անվերապահ կատարում ինչպես աշխատողների, այնպես էլ գործատուների կողմից: Հոդվածում ներկայացված է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատանքային կարգապահության պահպանմանը նպաստող իրավական հատուկ միջոցներ՝ խրախուսանք և կարգապահական պատասխանատվություն կիրառելու կարգը և ձևը: Անրադարձ է կատարվել աշխատանքային հատուկ հաջողություններ գրանցած աշխատողներին պետական պարգևի արժանացնելու կարգին: Հակիրճ ներկայացված է գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը միակողմանի լուծելու կարգը՝ որպես կարգապահական տույժի կիրառում աշխատողի նկատմամբ: Ինչպես նաև ներկայացված է աշխատանքային կարգապահության բնագավառում հատուկ տեղ զբաղեցնող կազմակերպության ներքին կարգապահության կանոնների բովանդակությունը և անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. Աշխատանքային օրենսգիրք, աշխատանքային կարգապահություն, կարգապահական տույժ, խրախուսանք, աշխատանքային պայմանագիր, ներքին կարգապահություն, գործատու, աշխատող:

Նախաբան: Սույն հոդվածում օգտագործվել է գրականություն, որն իր մեջ ընդգրկում է ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի ծրագրի համակարգող Դավիթ Գյուրջյանի հեղինակած «Աշխատանքային իրավահարաբերություններ և օրենսդրություն. խնդիրներ և լուծումներ» հետազոտությունը, Գրիգորյան Ս. Ս., Գրիգորյան Գ. Մ. հեղինակած «Իրավագիտություն» դասագիրքը, քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ

դատարանի 26.12.2013թ.-ի որոշումը, ինչպես նաև համացանցային պաշարներ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ տարիների ընթացքում աշխատանքային օրենսգրքում բազմիցս կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Աշխատանքը մարդու արժանավայել կյանքի միակ և անփոխարինելի պայմանն է, միաժամանակ նրա իրավունքն ու պարտականությունը: Այս իրավունքն իր ամրագրումն է ստացել ինչպես ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, այնպես էլ աշխարհի շատ երկրների սահմանադրություններում. պատճառն այն է, որ աշխատանքի իրավունքը ոչ պակաս կարևոր է, քան մարդու կյանքի իրավունքը, որովհետև եթե չկա կյանք առանց գոյության միջոցների, ապա առանց աշխատանքի չեն կարող լինել գոյության միջոցներ: Ավելին, աշխատանքի իրավունքի իրականացումը և աշխատանքի արդարացի պայմանները կարևոր նշանակություն ունեն հասարակական հարաբերությունների ներդաշնակության և սոցիալական խաղաղության ամրապնդման համար: ՀՀ-ում հաստատված շուկայական հարաբերությունները, իրավակիրառ պրակտիկան, սոցիալ-տնտեսական իրավիճակը վեր են հանում ՀՀ աշխատանքային օրենսդրության մի շարք բացթողումներ և խնդիրներ, որոնք պետք է հաղթահարվեն՝ հաշվի առնելով միջազգային իրավական փաստաթղթերի պահանջները և իրավակիրառ պրակտիկայից բխող հրամայականները:

Հետազոտության նպատակն է՝ ներկայացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային կարգապահության կանոնները, ներքին կարգապահական կանոնները, խրախուսանք և կարգապահական տույժ կիրառելու կարգը և ձևը, ինչպես նաև հաջողություններ գրանցած աշխատողներին պետական պարգևի արժանացնելու կարգը:

Աշխատանքային կարգապահություն: Ցանկացած կոլեկտիվ աշխատանք պահանջում է համաձայնեցված գործողություններ, որոնց համար անհրաժեշտ են պատշաճ կազմակերպում և կառավարում, հստակ աշխատանքային կարգ ու կանոն: Առանց աշխատանքային գործընթացի մասնակիցների որոշակի կարգ ու կանոնի ենթարկվելու, նրանց գործունեության համակարգման, աշխատանքի համաձայնեցման, այսինքն՝ առանց վարքագծի կանոնների պահպանման հնարավոր չէ հասնել այն նպատակներին, հանուն որի կազմակերպվում է աշխատանքային համատեղ գործընթացը:

Աշխատանքային կարգապահության իրավական հասկացությունն ամրապնդված է աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածում, որի համաձայն, աշխատանքային կարգապահությունն ասելով, հասկանում ենք բոլոր աշխատողների պարտադիր ենթարկվելը աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններին:

Կառուցվածքի տեսակետից աշխատանքի կարգապահությունը բաղկացած է արտադրական և տեխնոլոգիական կարգապահությունից:

Արտադրական կարգապահության մեջ է մտնում կազմակերպության հստակ և ռիթմիկ աշխատանքի ապահովումը, աշխատող անձանց հումքով, նյութերով, գործիքներով ապահովելը և այլն: Գործատուն պատասխանատվություն է կրում արտադրական կարգապահության կազմակերպման, իսկ աշխատողը՝ դրա պահպանման համար [1, էջ 293,294]:

Գործատուի հիմնական պարտականությունները ձևակերպված են աշխատանքային օրենսգրքի 217-րդ հոդվածում և կոնկրետացվում են ներքին կարգապահական կանոններում:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են աշխատանքային կարգապահության պահպանմանը նպաստող իրավական հատուկ միջոցներ: Այդպիսի միջոցներ են խրախուսանքներն ու կարգապահական պատասխանատվությունը:

Խրախուսանքը աշխատանքային կարգապահության ապահովման իրավական կարևոր միջոց է: Այն դրական ազդեցություն է ունենում ոչ միայն տվյալ աշխատողի, այլև մյուս աշխատողների վրա, խթան է հանդիսանում աշխատանքային կարգապահության պահպանման հարցում նրանց պարտականությունների կատարման համար: Խրախուսանքը՝ որպես աշխատանքային կարգապահության ապահովման միջոց, աշխատանքում ձեռք բերված հաջողությունների համար աշխատողի նվաճումների հրապարակային ճանաչումն ու դրվատումն է:

Աշխատանքային օրենսդրությունը սահմանում է խրախուսանքի երկու գլխավոր ձևեր՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու և աշխատանքային հատուկ ծառայությունների համար:

Աշխատանքային կարգապահության ապահովման գործում գործատուն օժտված է որոշակի օրենսդրությամբ նախատեսված

գործիքներով. դրանք խրախուսանքի և պատժի միջոցներն են: Խրախուսանքի միջոցները կիրառվում են աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար: Մրանց միջոցով գործատուն խրախուսում է կարգապահ վարքն ու բարեխիղճ աշխատանքը՝ այդպիսով կանխելով աշխատանքային կարգապահության խախտման դեպքերը: Աշխատանքային օրենսգրքի 219. հոդվածի համաձայն՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գործատուն կարող է խրախուսել աշխատողներին: Աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները՝

1. շնորհակալության հայտարարում,
2. միանվագ դրամական պարգևատրում,
3. հուշանվերով պարգևատրում,
4. լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում,
5. կարգապահական տույժի հանում:

Այնուամենայնիվ, միշտ չէ, որ հաջողվում է խրախուսանքի միջոցներով կանխել աշխատանքային կարգապահության խախտումները, ուստի անհրաժեշտություն է առաջանում վերացնելու խախտման հետևանքները, ինչպես նաև խիստ վերաբերմունքով զսպել նման վարքագծի կրկնության ռիսկը: Կուլեկտիվ պայմանագրով կամ կազմակերպության ներքին կարգապահական կանոններով կարող են սահմանվել խրախուսանքի այլ տեսակներ [1, էջ 295]:

Հատուկ աշխատանքային հաջողությունների համար աշխատողները օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող են ներկայացվել պետական պարգևների: Պետական պարգևները սահմանվում են հասարակությանը մատուցած ակնառու և բացառիկ ծառայությունները նշելու համար:

2014թ. հունիսի 21-ին ընդունված ՀՀ պետական պարգևների մասին օրենքի համաձայն՝ պետական պարգևներ են՝ ՀՀ բարձրագույն կոչումը, շքանշանները և մեդալները: ՀՀ պետական պարգևները հիմնվում են օրենքով, սահմանվում են շքանշանների և մեդալների անվանումները, պարգևատրման կարգը, դրանք կրելու կանոնները [4]:

Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: Աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը կարող է ենթարկվել

կարգապահական պատասխանատվության՝ ստանալ կարգապահական տույժ: Կարգապահական տույժի միջոցներն են՝

1. նկատողություն,
2. խիստ նկատողություն,
3. աշխատանքային պայմանագրի լուծում՝ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով,
4. առանձին կատեգորիայի աշխատողների համար օրենքով կարող են սահմանվել նաև կարգապահական այլ տույժեր [6]:

Աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածի հիմքերով՝ աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել գործատուի նախաձեռնությամբ՝ առանց աշխատողին նախապես ծանուցելու [4]:

Սույն հոդվածի ձևակերպմամբ չի հստակեցվում, թե արդյոք գործատուն կարող է առանց կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման լուծել աշխատանքային պայմանագիրը հոդվածում նշված հիմքերով, թե աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել բացառապես որպես կարգապահական տույժի կիրառում, որի պարագայում, սակայն, գործատուն, ի տարբերություն մյուս դեպքերի, ազատված է ծանուցման պարտականությունից:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի կատարման առնչությամբ 2016թ.-ին ՀՀ ազգային զեկույցում ՀՀ Կառավարությունը նշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը իրենց բնույթով կարգապահական են, և ՀՀ աշխատանքային օրենսգրքը չի նախատեսում ծանուցման կարգ՝ այդ հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար [7]:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածը սահմանում է, որ գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու առանց աշխատողին ծանուցելու, այդ թվում՝ օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով: Սույն հոդվածին համապատասխան՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ «Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ [3]: Եթե գործատուի

սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության»: Այս առումով ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածում նշված նորմը կրում է իմպերատիվ բնույթ, որի համաձայն՝ գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է մինչև կարգապահական տույժի կիրառումը, և որ այդ բացատրությունն աշխատողից պետք է պահանջվի մինչև կարգապահական տույժի կիրառումը՝ այդ բացատրությունը տալու համար սահմանելով ողջամիտ ժամկետ [5]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով գործատուների համար սահմանվում է հստակ պահանջ՝ անհատական իրավական ակտում նշել կարգապահական պատասխանատվության ենթարկելու փաստական և իրավական հիմքերը, քանի որ դրանց բացակայության դեպքում իրավական ակտը դատարանի կողմից ճանաչվում է անվավեր: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքով՝ որպես նյութական իրավունքի նորմեր սահմանող օրենքով, անհատական իրավական ակտում փաստական և իրավական հիմքեր նշելու կանոնի բացակայության պայմաններում դատավարական նորմեր սահմանող օրենսդրությամբ դրանց սպացուցման պարտականությունը գործատուի վրա դնելն ու դրանով պայմանավորված նաև անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու հնարավորությունն ախատեսելը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին [2]:

Աշխատանքային կարգապահության բնագավառում հարաբերությունները կարգավորող ընդհանուր և հատուկ նշանակության նորմատիվ ակտերի մեջ հատուկ տեղ են զբաղեցնում կազմակերպության ներքին կարգապահության կանոնները, որոնք իրենից ներկայացնում են գործատուի ներքին իրավական ակտերը: Այն նպատակ է հետապնդում սահմանել տվյալ կազմակերպության կարգ ու կանոնը, ամրապնդել աշխատանքային կարգապահությունը, նպաստել յուրաքանչյուր աշխատողի կողմից աշխատաժամանակի ռացիոնալ օգտագործմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աշխատանքի որակի լավացմանը:

Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները կանոնակարգում են աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական

իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:

Յուրաքանչյուր կազմակերպությունում ներքին կարգապահության կանոնների հիմնական բովանդակությունն են կազմում աշխատանքային պայմանագրի կողմերի որոշակի պարտականությունները:

Եզրահանգում: Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, ներքին կարգապահական կանոնակարգով հստակ սահմնված է՝

- աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման կարգը,
- աշխատողի հիմնական պարտականությունները,
- գործատուի հիմնական պարտականությունները,
- աշխատանքային ժամանակը և դրա օգտագործումը,
- աշխատանքային և արտադրական կարգապահության պահպանումը,
- խրախուսանքի կիրառում՝ որպես աշխատանքային կարգապահության ապահովման իրավական կարևոր միջոց,
- կարգապահական տույժի կիրառումը՝ աշխատանքային կարգապահության կանոնները խախտելու դեպքում:

ТРУДОВОЙ КОДЕКС РА: ОБ УПОРЯДОЧЕНИИ ПРАВОВЫХ ПРОБЛЕМ ТРУДОВОЙ ДИСЦИПЛИНЫ

Андреасян С. А.

В данной статье представлены правила трудовой дисциплины, установленные Трудовым кодексом Республики Армения, принятом от 9 ноября 2004 года. Трудовая дисциплина предполагает безусловное выполнение своих обязанностей как от стороны работников, так и работодателей. В статье представлены порядок и форма применения специальных правовых мер поощрения и дисциплинарной ответственности, способствующих поддержанию трудовой дисциплины, предусмотренных законодательством Республики Армения. Внедрен порядок награждения государственными наградами работников, отличившихся за особые трудовые заслуги. Кратко представлен порядок расторжения трудового договора в одностороннем порядке работодателем

в качестве дисциплинарного взыскания в отношении работника. Также представлены содержание и необходимость правил внутренней дисциплины организаций, занимающих особое место в сфере трудовой дисциплины.

Ключевые слова: трудовой кодекс, трудовая дисциплина, дисциплинарный штраф, поощрение, трудовой договор, внутренняя дисциплина, работодатель, работник.

**THE RA LABOR CODE ON THE REGULATION OF LEGAL ISSUES OF
LABOR DISCIPLINE
Andreasyan S. H.**

The article presents the rules of labor discipline, defined by the Labor Code of the Republic of Armenia, adopted on November 9, 2004. Labor discipline implies the unconditional fulfillment of the duties by both employees and employers. The paper highlights the procedure and form of application of special legal measures, encouragement and disciplinary responsibility, contributing to the maintenance of labor discipline, provided for by the legislation of the Republic of Armenia. A procedure has been introduced for awarding state awards to employees who have distinguished themselves for special labor merits. The procedure for terminating an employment contract unilaterally by the employer as a disciplinary sanction against the employee is briefly presented. The content and necessity of the rules of internal discipline of the organization, which occupy a special place in the field of labor discipline, are also presented.

Keywords: Labor Code, labor discipline, disciplinary fine, encouragement, labor contract, internal discipline, employer, employee.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Ս. Ս., Գրիգորյան Գ. Ս. Իրավագիտություն: Երևան: 2014թ.: 631 էջ:
2. Գյուրջյան Դ. Աշխատանքային իրավահարաբերություններ և օրենսդրություն. խնդիրներ և լուծումներ: Երևան: 2021թ.: 61 էջ:
3. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք՝ ընդունված 07.08.2010թ.-ին:
4. ՀՀ պետական պարգևների մասին օրենքը՝ ընդունված 2014թ. հունիսի 21-ին:

5. ԵԿԴ/2998/02/12 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.12.2013թ.-ի որոշումը:
6. http://archive3.ankakh.com/article/26349/%E2%80%8Bashkhatanqa_yin-kargapahuthyun-mas-2
7. <https://rm.coe.int/12th-national-report-from-armenia/168078ebb0>

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Անդրեասյան Ս. Հ. - մագիստրատուրա 1-ին կուրս

ՇՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Երավագիտություն

Էլ. փոստ՝ sevak_andreasyan@mail.ru

Գիտական ղեկավար՝ Թադևոսյան Ս., իրավ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 19.12.2022

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Կարապետյան Մ. Հ.**

Հոդվածը նվիրված է 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընդունված քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտին: Հոդվածում քննարկվում են քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի տեսական և գործնական կիրառման հիմնախնդիրները:

Նշվում է, որ ինստիտուտի ներդրման միջոցով քաղաքացիների մասնակցությունը օրինաստեղծ գործունեությանը կարող է նպաստել հասարակական կարևոր հարաբերությունների իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանը:

Քանալի բառեր. Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնություն, Օրենսդիր մարմին, Հայաստանի Հանրապետություն, ՀՀ Սահմանադրություն:

Նախաբան: 2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ առաջին անգամ ամրագրվեց քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը: Այն ամրագրվեց որպես ընտրական իրավունք ունեցող որոշակի թվով քաղաքացիների իրավունք՝ նախաձեռնելու օրենսդրական և սահմանադրական փոփոխություններ: Թեման արդիական է, քանզի անդրադարձ է կատարում Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի գործնական կիրառմանը և զարգացման հեռանկարներին:

Թեման ուսումնասիրելիս հիմնական աղբյուր են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ԱԺ **Կանոնակարգ օրենքը և մի շարք այլ նորմատիվ իրավական ակտեր:**

Թեմայի հետազոտման նպատակն է ուսումնասիրել քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի կիրառումը ՀՀ-ում, ինչպես նաև այլ երկրներում և կատարել համեմատաիրավական վերլուծություն:

Հիմնական բովանդակություն: ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք, իսկ Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների որոշակի թվին ընձեռում են Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու նախաձեռնության իրավունք [1]:

Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը ընդունված է աշխարհի շատ երկրներում, ինչպես, օրինակ, Լիտվայում, Լատվիայում, Սլովենիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Պորտուգալիայում, Իտալիայում և այլուր: Լիսաբոնի պայմանագրով քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը որոշակի առանձնահատկություններով ներդրվեց նաև Եվրոպական միությունում: Սակայն Եվրամիության պայմանագրում քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված նախագծի «ճակատագիրը» կախված է Եվրոպական հանձնաժողովից, որը կարող է հավանության արժանացնել այն կամ մերժել: Քիչ չեն նաև այն պետությունները, որտեղ քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը թեև ամրագրված չէ համապետական մակարդակով, սակայն գործում է տեղական մակարդակով, ինչպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներում:

Գործում են օրենքների մշակումը և ընդունումը քաղաքացիների մասնակցության իրականացմանն ուղղված տարբեր ինստիտուտներ. դրանք են՝ օրինագծերի հանրային քննարկումները, պատգամավորների հանդիպումներն ընտրողների հետ: Այդ կառույցները խորհրդարանական ժողովրդավարության դրսևորման ձևեր են, որոնք, սակայն, ինստիտուտին չեն կարող փոխարինել: Ճիշտ է, այս ինստիտուտները կարող են մեծապես նպաստել օրինագծերի սոցիալական արդյունավետության և հասարակական ընդունելության բարձրացմանը, սակայն, ի տարբերություն այս ինստիտուտների, քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության դեպքում հասարակությունն ինքն է որոշում օրինագծի բովանդակությունը, ինչն ավելի լայն հնարավորություններ է ստեղծում դրանում հասարակական շահերի և դիրքորոշման արտացոլման համար: Այս համատեքստում, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական

օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի ներդրումն արդարացված էր և կարող է լրացուցիչ երաշխիք դառնալ ժողովրդաիշխանության հիմքերի ամրապնդման համար:

Ներկայիս ընտրական համակարգերի մեծամասնության, այդ թվում՝ ՀՀ ընտրական համակարգի պայմաններում խորհրդարանում ներկայացված են լինում միայն ընտրական նվազագույն շեմը հաղթահարած քաղաքական ուժերը, իսկ ընտրողների այն մասը, որոնց կողմից քվեարկված քաղաքական ուժերը չեն հաղթահարում ընտրական նվազագույն շեմը, մինչև հաջորդ ընտրությունները զրկվում են ներկայացուցչական մարմնում իրենց պահանջմունքներով և հայացքներով հավուր պատշաճի ներկայացված լինելու հնարավորությունից:

Օրինակ՝ ՀՀ-ում 2018 թվականի դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքներից պարզ է դառնում, որ ընտրական նվազագույն շեմի պատճառով «փոշիացել են» շուրջ 200.000 ընտրողների ձայներ: Նման պայմաններում քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը թույլ կտա հասարակության այդ շերտին, ինչպես նաև խորհրդարանում չներկայացված քաղաքական ուժերին, հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով, որոնք կարտահայտեն հասարակությունում գոյություն ունեցող քաղաքական և գաղափարական հայացքների առավել ամբողջական պատկերը: Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտն օրենսդիր մարմնում իրենց հուզող և օրենսդրական կարգավորում պահանջող հարցերը պարտադիր քննարկման առարկա դարձնելու հնարավորություն կստեղծի նաև այն քաղաքացիների համար, որոնք թեև քվեարկել են խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի օգտին, սակայն իրենց հետաքրքրող հարցերն ընտրված ներկայացուցիչների մոտ այս կամ այն պատճառով մնում են անարձագանք: Ընդ որում, Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն, պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով: Նման պարագայում չի բացառվում տարբերությունը հասարակական պահանջմունքի և դրա՝ պատգամավորի կողմից ընկալման միջև:

Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը թույլ կտա մեղմել նաև այս հնարավոր տարբերությունը: Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի ներդրման դեպքում առաջանում են դրա հետ կապված մի շարք հիմնահարցեր, որոնցից առաջինը դրա իրականացման կարգն է:

Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության իրականացման կարգի հետ կապված բարդությունն այս ինստիտուտի լայնորեն կիրառման հիմնական խոչընդոտներից է: Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու համար անհրաժեշտ ստորագրությունների ավանդական եղանակով հավաքումը, վավերականության ստուգումը և հաստատումը բավական աշխատատար և ծախսատար գործընթաց են: Մինչդեռ, մեր կարծիքով, այս ինստիտուտի կիրառումը կարելի է շատ ավելի պարզեցված և արդյունավետ կազմակերպել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկայիս պայմաններում՝ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի գործնական կիրառման հեռանկարներն առհասարակ քննարկելով էլեկտրոնային ժողովրդավարության զարգացման համատեքստում:

Վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը գրականության մեջ ակտիվացրել է քննարկումներն էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ: Համաձայն էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ ամենաձայրահեղ մոտեցման՝ այն իրենից ներկայացնում է քաղաքացիների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ անմիջականորեն պետական որոշումների կայացում (օրենքների ընդունում, էլեկտրոնային հանրաքվեներ) [8]:

Եթե ուսումնասիրում ենք ժողովրդավարության ակունքները և այն պատճառները, թե ինչու ծագեց ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը, ապա կարելի է ասել, որ այս տեսակետն ունի որոշակի հիմքեր: Օրինակ՝ հին հունական Աթենքում ժողովրդաիշխանությունն ուղղակի էր. ազատ տղամարդիկ հավաքվում էին Ագորայում և անմիջականորեն ընդունում քաղաքական որոշումներ, ձևավորում այլ պետական մարմիններ: Հին հունական քաղաք-պետություններում, որոնց բնակչությունը հաճախ չէր գերազանցում տասը հազարը, դա ֆիզիկապես հնարավոր էր: Պետք է նշել, որ ի սկզբանե ժողովրդավարությունն ասելով հասկացվում էր հենց անմիջական ժողովրդաիշխանությունը: Պատահական չէ, որ ինքնին ժողովրդավարություն ասելով՝ Ջ. Լոկը հասկանում էր այնպիսի կառավարման ձև, երբ քաղաքացիներն ընդունում են օրենքներ և նշանակում գործադիր իշխանության ղեկավարին, իսկ այն դեպքում, երբ ժողովուրդն իր օրենսդիր իշխանությունը փոխանցում էր իր ներկայացուցիչներին, այդպիսի կառավարումը Ջ. Լոկը համարում էր ոչ թե ժողովրդավա-

րություն, այլ օլիգարխիա: Սակայն տարածքով և բնակչությամբ մեծ պետություններում անհնար էր այլևս առաջնորդվել միայն ուղղակի ժողովրդաիշխանության ինստիտուտներով: Պատճառներից մեկը, թերևս, դա էր, որ ծագեցին ներկայացուցչական ժողովրդաիշխանության ինստիտուտները, երբ ողջ բնակչության կամարտահայտությունն անհրաժեշտ է միայն որոշակի պարբերականությամբ, իսկ այդ ընթացքում որոշումներ կայացնում են քաղաքացիների կողմից ընտրված ներկայացուցիչները: Դրա հետ կապված՝ Ժ. Ժ. Ռուսսոն պնդում էր, որ ժողովրդավարությունն անհամատեղելի է ներկայացուցչական ինստիտուտների հետ, քանի որ ժողովրդի բարձրագույն իշխանությունն անօտարելի է և անփոխանցելի: Այդ պատճառով նա կարծում էր, որ ժողովրդավարությունը հնարավոր էր միայն փոքր մասշտաբների դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանում է այս հարցը, քանի որ միաժամանակ քվեարկությանը կարող են մասնակցել միլիոնավոր մարդիկ, առանց տարածքային սահմանափակումների [8]: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը թույլ է տալիս խնայել և՛ ժամանակը, և՛ նյութական միջոցները քաղաքացի-պետություն հարաբերություններում և զգալիորեն խորացնել քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարական ինստիտուտների գործունեությանը, որի դրսևորումներից մեկն էլ կարող է քաղաքացիական նախաձեռնության համար անհրաժեշտ ձայների հավաքումն էլեկտրոնային եղանակով: ՀՀ Սահմանադրությունն ընդամենը մի քանի համառոտ դրույթ է պարունակում քաղաքացիական նախաձեռնության իրականացման ընթացակարգերի մասին: Այդ դրույթներից մեկն էլ Սահմանադրության 204-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված այն նորմն է, ըստ որի՝ քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը [1]: Այս ձևակերպումից կարելի է եզրահանգել, որ Սահմանադրությունը քաղաքացիական նախաձեռնության շրջանակում ստորագրությունների հավաքման հիմնական եղանակ է համարում ավանդական՝ թղթային եղանակը, սակայն Սահմանադրության այս նորմը չի բացառում նաև էլեկտրոնային եղանակով ստորագրությունների հավաքման հնարավորությունը: Ստորագրությունների հավաքման մանրամասն ընթացակարգը սահմանող «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի համաձայն՝ ստորագրությունների

հավաքումն իրականացվում է ստորագրությունների հավաքման ձևաթերթիկների միջոցով՝ տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային եղանակով [1]: Ընդ որում՝ տեղում ստորագրելու դեպքում ձևաթերթիկում լրացվում են ստորագրողի անձնագրային տվյալները, ձևաթերթիկը ստորագրվում և հանձնվում է ստորագրությունների հավաքումն իրականացնող անձին, իսկ էլեկտրոնային եղանակի դեպքում ձևաթերթիկը ստորագրվում է էլեկտրոնային նույնականացման եղանակով: Ըստ Օրենքի՝ տեղում ստորագրությունների հավաքում կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող

- 1) համայնքապետարաններում,
- 2) բազմաբնակավայր համայնքներում՝ նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրերում,
- 3) Երևան քաղաքում՝ վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում,
- 4) մարզպետարաններում. տեղում ստորագրությունների հավաքումն իրականացնում է նախաձեռնող խմբի ներկայացուցիչը՝ համապատասխան հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ, ինչպես նաև իրականացնում են նոտարները՝ նոտարական գրասենյակներում [8]:

Վերոշարադրյալի հետ կապված՝ հարկ ենք համարում անդրադառնալ երկու խնդրի: Առաջին՝ կարծում ենք, որ Օրենքն անհարկի սահմանափակում է նախատեսել, թե որ տարածքներում կարող է իրականացվել ստորագրությունների հավաքումը, ինչպես նաև պարտադիր է համարել ստորագրությունների հավաքմանը համապատասխան հանրային ծառայողի ներկայությունը: Մեր կարծիքով՝ նման սահմանափակումները որևէ կերպ արդարացված չեն և մեծապես խոչընդոտելու են ՀՀ-ում այս ինստիտուտի հետագա կայացմանը: Ընդ որում՝ Օրենքի նախագծի սկզբնական տարբերակում ստորագրությունների հավաքման գործընթացը կարգավորող շատ ավելի ազատական և ճկուն դրույթներ էին նախատեսված, որոնց առկայության դեպքում շատ ավելի հավանական էր այս ինստիտուտի գործնական կիրառման դեպքեր ունենալը, քան Օրենքի ներկայիս խմբագրության դեպքում:

Այսպես, Օրենքի նախագծի սկզբնական տարբերակի համաձայն՝ ստորագրությունների հավաքագրումն իրականացվում էր

ստորագրությունների հավաքագրման ձևաթերթիկների միջոցով տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով: Այսինքն՝ այս դեպքում չէին սահմանվում քաղաքացիների կողմից նախաձեռնությանը միանալու կոնկրետ վայրեր, նոտարական կարգ կամ էլ որևէ հանրային ծառայողի ներկայություն, ինչն անխուսափելիորեն ազդելու է քաղաքացիների կամարտահայտման ազատ դրսևորման վրա: Երկրորդ՝ Օրենքի ներկայիս խմբագրությունն էլեկտրոնային տարբերակով նախաձեռնությանը միանալու եղանակ է համարում բացառապես էլեկտրոնային ստորագրությունների միջոցով նույնականացումը: Ներկայումս ՀՀ բնակչության շատ փոքր մասն ունի նույնականացման քարտեր և էլեկտրոնային ստորագրություններ, հետևաբար շատ քիչ թվով քաղաքացիներ ունեն էլեկտրոնային եղանակով նախաձեռնությանը միանալու գործնական հնարավորություն: Այս դեպքում ևս շատ ավելի ճկուն էր Օրենքի նախագծի սկզբնական տարբերակի կարգավորումը, համաձայն որի՝ էլեկտրոնային եղանակով նախաձեռնությանը միանալու համար քաղաքացին պարզապես ԿՀՀ-ի պաշտոնական կայքից ներբեռնում էր անհատական ձևաթերթիկ, անձամբ լրացնում այն (ձեռագիր), ստորագրում, լուսապատճենում և էլեկտրոնային եղանակով ուղարկում նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստին:

Քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի հետ կապված հաջորդ կարևոր հիմնախնդիրն է նման նախաձեռնությամբ հանդես գալու համար քաղաքացիների անհրաժեշտ նվազագույն թվի սահմանման հարցը: Համաշխարհային պրակտիկայում չկա միասնական մոտեցում այս հարցի վերաբերյալ: Ընդհանուր է միայն այն, որ պահանջվում են բացառապես ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ստորագրությունները, իսկ կոնկրետ թվի որոշման հարցում առկա է երկու մոտեցում՝ բացարձակ թվի նշում (Բելառուս՝ 50000 ընտրող [2], Մոնտենեգրո՝ 6000 ընտրող [3]) կամ ընտրողների ընդհանուր թվի որոշակի տոկոսի (5%՝ Կոստա Ռիկա [4], 3, 2%՝ Դոմինիկյան Հանրապետություն [5]) կամ կոտորակի (1/6՝ Ավստրիա5, 1/10՝ Լատվիա6) սահմանում: Մեր կարծիքով՝ առավել համարժեք պատկեր ստանալու համար հիմնավորված է կոտորակային կամ տոկոսային մեթոդը, քան բացարձակ թվի նշումը: ՀՀ Սահմանադրությունը, սակայն, ամրագրել է բացարձակ թիվ՝ ընտրական իրավունք ունեցող 50.000 քաղաքացի, իսկ հարցը հանրաքվեի դնելու համար՝ ևս 300.000 քաղաքացի [1]: Կարծում ենք, որ

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այս թվերը համաչափ չեն ՀՀ բնակչության թվի հետ, և նման բարձր շեմի սահմանումը գործնականում անիրագործելի է դարձնելու ՀՀ-ում քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի կայացումը: Նման շեմ՝ 50.000 քաղաքացի, սահմանված է, օրինակ, Իտալիայում, որի մշտական բնակչության թիվը շուրջ 60 միլիոն է՝ ի հակադրություն ՀՀ մշտական բնակչության թվին՝ շուրջ 2,9 միլիոն:

Եզրակացություն: Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի ներդրումը Սահմանադրությամբ ամրագրված անմիջական ժողովրդաիշխանության մյուս ինստիտուտների հետ մեկտեղ լրացուցիչ միջոց կարող է դառնալ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդաիշխանության հիմքերի ամրապնդման համար: Միննույն ժամանակ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք ունեցող քաղաքացիների թվի չափազանց բարձր շեմը, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված ստորագրությունների հավաքման բարդացված ընթացակարգերը, առայժմ բացառում են այս ինստիտուտի լայնորեն կիրառման և գործնական խնդիրների լուծման միջոց դառնալու հնարավորությունները՝ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտին հաղորդելով զուտ ձևական բնույթ:

**ИНСТИТУТ ГРАЖДАНСКОЙ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ИНИЦИАТИВЫ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
Карапетян М. Г.**

Статья посвящена принятию в результате конституционных изменений от 6 декабря 2015 года института гражданской законодательной инициативы. В статье рассматриваются проблемы теоретического и практического применения института гражданской законодательной инициативы.

Отмечается, что посредством внедрения института участие граждан в правотворческой деятельности может способствовать повышению эффективности правового регулирования важных общественных отношений.

Ключевые слова: Гражданская законодательная инициатива, Законодательный орган, Республика Армения, Конституция Республики Армения.

INSTITUTE OF CIVIL LEGISLATIVE INITIATIVE IN THE REPUBLIC OF
ARMENIA

Karapetyan M. H.

The article devells upon the study of the civil legislative initiative adopted as a result of the December 6, 2015 constitutional amendments to the institute. The paper discusses the problems of theoretical and practical application of the institute of civil legislative initiative. It is noted that through the introduction of the institute, the participation of citizens in law-making activities can contribute to improving the efficiency of the legal regulation of important public relations.

Keywords: Citizen Legislative Initiative, Legislative Body, Republic of Armenia, Constitution of the Republic of Armenia.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>
2. Բելառուսի Սահմանադրություն, հոդված 99: URL:
<https://www.constituteproject.org/#/>
3. Մոնտենեգրոյի Սահմանադրություն, հոդված 93: URL:
<https://www.constituteproject.org/#/>
4. Կոստա Ռիկայի Սահմանադրություն, հոդված 123: URL:
<https://www.constituteproject.org/#/>
5. Դոմինիկյան Հանրապետության Սահմանադրություն, հոդված 97:
URL: <https://www.constituteproject.org/#/>
6. Ավստրիայի Սահմանադրություն, հոդված 41: URL:
<https://www.constituteproject.org/#/>
7. Լատվիայի Սահմանադրություն, հոդված 65: URL:
<https://www.constituteproject.org/#/>
8. Բաղայան Ս. Օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործումը Հայաստանում: ԵԲ.: 2020: 160 էջ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Կարապետյան Մ. Հ. - մագիստրատուրա 2-րդ կուրս

Գավառի պետական համալսարան, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ,
Իրավագիտություն

Էլ. փոստ՝ mery.karapetyan.88@mail.ru

Գիտական ղեկավար՝ Հակոբյան Ռ., իրավ. գիտ. դոկ., դոցենտ

Ստացվել է՝ 29.11.2022

Գրախոսվել է՝ 22.12.2022

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
Նահապետյան Շ. Վ.**

Հոդվածում ներկայացվում են 1995թ. հուլիսի 5-ի, 2005թ. նոյեմբերի 25-ի և 2015թ. դեկտեմբերի 6-ի Սահմանադրական բարեփոխումները ՀՀ-ում, որոնցով ինչպես բովանդակային, այնպես էլ ծավալային առումով նշանակալից փոփոխություններ են կատարվել Սահմանադրության մեջ: Կատարված ուսումնասիրությունում ներկայացվել և առանձնացվել են սահմանադրության զարգացման հիշյալ փուլերի առավել էական ասպեկտները, դրանց ուղղվածությունը և ակնկալվելիք արդյունքները: Անդրադարձ է կատարվել «մարդակենտրոն» սահմանադրության ստեղծման և պատասխանատու իշխանական համակարգի ստեղծման հիմնախնդիրներին: Վերլուծվել են Սահմանադրական բարեփոխումներով հետապնդվող նպատակները և կատարվել են առաջարկություններ՝ կապված Սահմանադրական բարեփոխումների հետ, որոնք, մեր գնահատմամբ, կարող են հիմք հանդիսանալ երկրի կայուն զարգացումը երաշխավորելու և իրավական, քաղաքական, տնտեսական առաջընթաց ապահովելու համար:

Բանալի բառեր. սահմանադրական բարեփոխումներ, Հայաստանի Հանրապետություն, պետական կառավարման մոդել, ժողովրդավարություն, իրավական մշակույթ, պետական իշխանություն, մարդակենտրոն, իշխանակենտրոն, Ազգային ժողով:

Նախաբան: Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որը սահմանում է մարդու և պետության միջև փոխհարաբերությունների, ինչպես նաև պետական իշխանության կազմակերպման հիմնարար կանոնները: Յուրաքանչյուր ժամանակակից սահմանադրություն ունի երկու առաջնաին խնդիր՝ երաշխավորել մարդու հիմնական իրավունքները և սահմանել ժողովրդավարության ու իրավական պետության պահանջներին համապատասխանող պետական իշխանության մարմինների համակարգ:

Սույն հոդվածում օգտագործվել է գրկանություն, որը իր մեջ ներառում է Դանիելյան Գ.-ի, Այվազյան Վ.-ի, Մանասյան Ա.-ի «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները ՀՀ-ում», Հարությունյան

Գ.-ի, Հարությունյան Դ.-ի, Թովմասյան Հ.-ի և այլ հեղինակների «ՀՀ-ն Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը» (2014թ.), համացանցային պաշարներ և այլ գրականություն Սահմանադրական բարեփոխումների հիմնավորումների մասին:

Հետազոտության նպատակն է ներկայացնել ՀՀ-ում կատարված Սահմանադրական բարեփոխումները, առանձնացնել առավել էական ասպեկտները, դրանց ուղղվածությունը, ակնկալվելիք արդյունքները, վերլուծել Սահմանադրական բարեփոխումներով հետապնդվող նպատակները և ներկայացնել Սահմանադրական բարեփոխումների առաջարկություններ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ իրականությունն անընդհատ փոփոխվում ու զարգանում է, հետևաբար հասարակական հարաբերությունների կարգավորման համար նախատեսված մեխանիզմները, առաջին հերթին Սահմանադրությունը, պետք է ի վիճակի լինեն համարժեքորեն արձագանքելու հասարակական հարաբերությունների հիշյալ առաջընթացին, ինչը ենթադրում է զարգացող հասարակական հարաբերություններին արձագանքելու ու դրանց պայմաններին հարմարվելու ունակություն: Հետևաբար, Սահմանադրությունը զարգանալու, փոփոխությունների ենթարկվելու ունակություն պետք է ունենա, որպեսզի կարողանա հանդես գալ որպես «կենդանի փաստաթուղթ» և լինել հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ:

«Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորումը և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրություն» - Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիր /26 օգոստոսի 1789թ./, հոդված 16:

Սահմանադրություններն ի սկզբանե ստեղծվում են առավել երկար կյանք ունենալու ակնկալիքով: Մակայն հասարակությունն ինքնին հարափոփոխ է, հետևաբար հրամայական է դառնում սահմանադրությունների այնպիսի ճկունությունը, որը նպաստում է հասարակության զարգացմանը: Առաջադիմական սահմանադրությունը պետք է ունենա այնպիսի բովանդակություն, որը մի կողմից հնարավորություն տա ընթացիկ օրենսդրության միջոցով արագ և արդյունավետ արձագանքելու հասարակական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին, իսկ մյուս կողմից՝ թույլ չտա, որ

ընթացիկ օրենսդրությունը նենգափոխի սահմանադրության էությունը [3, 17 էջ]:

Իրավական և ժողովրդավարական պետության կառուցման գործընթացում առանքցքային նշանակություն ունի յուրաքանչյուր պետության առանձնահատկություններին համապատասխանող պետական կառավարման մոդելի ճիշտ ընտրությունը: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ 1991 թվականից սկսած՝ մինչ օրս սահմանադրական փոփոխությունների միջոցով փորձ է արվել ընտրելու պետական կառավարման առավել արդյունավետ մոդել [5, էջ 136]:

ՀՀ Սահմանադրությունն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին՝ համաժողովրդական հանրաքվեով: Այդ հանրաքվեին հաջորդել են երկու ծավալուն սահմանադրական փոփոխություններ, որոնք ընդունվել են 2005թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեներով:

Համակարգային ամբողջականության մեջ վերլուծելով ՀՀ սահմանադրական զարգացումների պատմական ընթացքը, հիմնական առանձնահատկություններն ու առկա հիմնախնդիրները՝ հայեցակարգային մոտեցումների տեսանկյունից անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ հիմնական փուլերը՝ ըստ հայեցակարգի:

Առաջին փուլը, որն ընդգրկում է 1995-2005թթ., սկիզբ է առել 1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրությամբ:

Եթե փորձելու լինենք առանձնացնել սահմանադրականության զարգացման հիշյալ փուլի առավել էական ասպեկտները, դրանց ուղղվածությունը և ակնկալվելիք արդյունքները, ապա հարկ կլինի նկատել, որ Սահմանադրական բարեփոխումների 1-ին փուլն անխուսափելիորեն բախվեց հետևյալ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտության հետ.

- Միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնումն ու ժողովրդավարական կայուն ավանդույթներ ունեցող երկրների հետ հարաբերությունների գրավականը վկայում էր, որ սուսկ անկախ պետականության իրավական հիմքերի վրա բևեռված հիմնական օրենքը չի կարող բավարար գրավական լինել պետության ոչ միայն արտաքին կայուն ու հուսալի, այլև արդյունավետ ներքին քաղաքականության համար:
- Սահմանադրության նորմերում, բնականաբար, արտացոլված էին մարդու որոշակի հիմնարար իրավունքներ և ազատություններ, ամրագրված էին նաև դրանց պաշտպանության իրավական երաշխիքներ, սակայն համարժեք սահմանված չէր դրանց իրավական

արժեքը, մասնավորապես ընդգծված չէր մարդու իրավունքների, ազատությունների և արժանապատվության գերակայությունը [1, էջ 10-12]:

- ՀՀ Սահմանադրությամբ հետևողականորեն իրացված չէր իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Այսպես, հստակ չէին Հանրապետության նախագահի ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում, պատասխանատվության շրջանակները՝ գործադիր իշխանության ոլորտում [2, էջ 19]:
- Ազգային ժողովն ընկալվում էր որպես քաղաքականություն կանխորոշող կառույց, երկրում քաղաքականություն թելադրող հիմնական մարմինը հանդես էր գալիս Հանրապետության նախագահը և կառավարությունը: Կարող ենք արձանագրել, որ Հանրապետության նախագահի լիազորությունների սահմանափակման առնչությամբ մոտեցումները մասամբ թելադրված էին նաև արտաքին, աշխարհաքաղաքական գործոններով: Երկիրը դուրս էր եկել պատերազման վիճակից, կնքվել էր հրադադար, ինչը ենթադրում էր, որ տարածքային խնդիրը ի վերջո կունենա տրամաբանական հանգրվան, և կդադարեցվեն ռազմական գործողությունները:
- Դատական իշխանության անկախության երաշխավորի դերը վերապահվել էր Հանրապետության նախագահին, որը միաժամանակ արդարադատության խորհրդի նախագահն էր: Վերջինիս կազմում անգամ ընդգրկվել էին դատախազներ, որոնք փորձում էին սահմանադրական կառույցն օգտագործել հենց դատավորների ինքնուրույնությունը խոցելի դարձնելու նկատառումով: Ինչ խոսք, այս մտայնությունն արտաքուստ բացատրվում էր դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրներով, սակայն ինքնին հասկանալի էր, որ նշված լծակներն ընդհանուր աղերսներ չունեին կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրների հետ: Հավելենք, որ ինչպես այդ փուլում, այնպես էլ ներկայումս, դեռևս չի ձևավորվել դատական իշխանության համակարգում կոռուպցիայի և այլ իրավախախտումների դեմ պայքարի առանձնահատկությունները համարժեք գիտակցելու իրավակլան մշակույթ:
- Հաջորդ սկզբունքային խնդիրը սահմանադրական արդարադատության ինստիտուտի բարելավման անհրաժեշտությունն էր, հարկ էր վերանայել դատավարության ինչպես սուբյեկտների, այնպես էլ օբյեկտների շրջանակը [1, էջ 13-16]:

1995թ. Սահմանադրությունը «իշխանակենտրոն» սահմանադրություն էր՝ «անձնակենտրոն» իշխանական համակարգով: Այդ սահմանադրության առանցքը ոչ թե մարդն էր՝ իր հիմնական իրավունքներով, այլ Հանրապետության նախագահը՝ իշխանության բոլոր ճյուղերի նկատմամբ իր գերակա դիրքով:

Այդուհանդերձ, սահմանադրաիրավական մեծ ժառանգություն չունեցող և անկախ պետականության կայացման առաջին քայլերն անող Հայաստանում 1995թ. Սահմանադրությունը էական դեր ունեցավ ժողովրդավարության հաստատման, ճգնաժամային իրավիճակներում սահմանադրական ճանապարհով լուծումներ գտնելու, պետական իշխանության ինստիտուտների աստիճանական կայացման, մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրագրման գործում [4, էջ 18-21]:

Երկրորդ փուլն ընդգրկում է 2005 թվականից հետո ընկած ժամանակահատվածը: 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի միջոցով իրականացված սահմանադրական բարեփոխումների միջոցով հնարավոր եղավ այդ փուլի համար ընդունելի հարթությամբ ապահովել համակարգային լուծումներ:

2005թ. սահմանադրական բարեփոխումները պայմանավորված էին ինչպես երկրի ներքին զարգացման հրամայականներով, այնպես էլ 2001թ. Եվրոպայի խորհրդին անդամակցելու արդյունքում ստանձնած պարտավորություններով:

Այդ բարեփոխումները, կարևոր քայլ լինելով հիմնական իրավունքների երաշխավորման և պառլամենտարիզմի զարգացման ճանապարհին, այդուհանդերձ ամբողջականորեն չկարողացան լուծել «մարդակենտրոն» սահմանադրության ստեղծման և պատասխանատու իշխանական համակարգի հիմնախնդիրները:

Կրճատելով Հանրապետության նախագահի լիազորությունները և ավելի շատ իշխանություն վերապահելով Ազգային ժողովին՝ Սահմանադրությունը, այնուամենայնիվ, պահպանեց «կիսանախագահական» կառավարման համակարգը, որը քաղաքական պրակտիկայում հանգում է «գերնախագահական» համակարգի: Լիարժեք չէին նաև անմիջականորեն գործող սահմանադրական իրավունքների երաշխավորման, մարդու իրավունքների սահմանափակումներին և իշխանության հայեցողության սահմանների հստակեցմանը վերաբերող սահմանադրաիրավական լուծումները:

Ըստ Էուրոյան՝ 2005թ. բարեփոխումները չկարողացան ամբողջականորեն լուծել «մարդակենտրոն» Սահմանադրության ստեղծման և հավասարակշռված կառավարման համակարգի հիմնախնդիրները:

Հետագարձ հայացք գցելով անկախ Հայաստանի անցած քառորդարյա ճանապարհին՝ կարելի է արձանագրել, որ 2015թ. սահմանադրական բարեփոխումներն անհրաժեշտ էին երկրի կայուն զարգացումը երաշխավորելու և իրավական, քաղաքական, տնտեսական առաջընթաց ապահովելու համար:

Անկախության ձեռքբերումից հետո՝ ավելի քան երկու տասնամյակ անց, ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով երկիրը դեռ չի հասել այնպիսի հանգրվանի, որ արձանագրվի, որ ժողովրդավարությունը հաստատուն հիմքերի վրա է, մարդու իրավունքները հուսալիորեն պաշտպանված են, արմատավորվել է կառավարման արդյունավետ համակարգ, իսկ դատարաններն անկախ ու անաչառ են [6, էջ 2]:

Եզրահանգում: Այսպիսով՝ ընդհանրացնելով Սահմանադրական բարեփոխումները՝ կարող ենք եզրակացնել, որ այդ բարեփոխումներով հետապնդվող նպատակները հիմնականում հանգում են հետևյալին.

- «մարդակենտրոն» սահմանադրական համակարգի ստեղծում, մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանության էապես նոր մակարդակ
- պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, իշխանության պատասխանատվության մեծացում և իշխանության սահմանափակում իրավունքով,
- երկրում քաղաքական իշխանության գերկենտրոնացվածության հաղթահարում և ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորում,
- Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության և քաղաքական փոքրամասնության միջև քաղաքակիրթ փոխհարաբերությունների հաստատում՝ ի շահ պետության կայուն զարգացման,
- երկրում վստահություն վայելող արդարադատության կայացում և դատարանների անկախության, անաչառության ամրապնդում:

Նշված նպատակները հնարավոր չէին արդյունավետ իրագործել առանց սահմանադրական բարեփոխումների:

Հուսանք, որ սահմանադրական բարեփոխումների ներկայիս գործընթացներն ու այդ հենքով իրականացվող իրավակիրառ գործունեությունն ի գորու կլինեն նպաստելու հայրենական

սահմանադրականության կայացման չափազանց բարդ ճանապարհին ծառայած հիմնախնդիրները ողջամտորեն լուծելու պատասխանատու առաքելությանը:

Առաջարկություններ: Հաշվի առնելով ՀՀ-ում տեղի ունեցող վերջին 2 տարվա իրադարձությունները և հանրապետության ներսում ստեղծված իրավճակը՝ գտնում եմ, որ անհրաժեշտություն է առաջացել վերականգնել մինչև 2003թ. գործող պատժի տեսակը՝ մահապատիժ՝ որոշակի վերապահումներով, հատուկ հանցագործությունների դեպքում: ՀՀ-ն գտնվում է անվտանգային չափազանց նուրբ այնպիսի իրավիճակում, որ մեզ համար այս պահին, մեր գնահատմամբ, բացարձակ անհրաժեշտություն է ձեռնարկել այդ անվտանգության երաշխավորման լրացուցիչ հրատապ այս միջոցը: Նշենք, որ Հայաստանում մահապատիժը վերացվել է 2003 թվականին՝ Եվրոպայի խորհրդին անդամակցելու գործընթացի շրջանակներում, ինչից հետո առավելագույն պատիժը հանրապետությունում ցմահ ազատազրկումն է: Սահմանադրության 24-րդ հոդվածը հռչակում է, որ Հայաստանում ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի: Ընդ որում՝ Մայր օրենքի 76-րդ հոդվածում շեշտվում է, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ անգամ մահապատժի արգելքը չի կարող վերանայվել:

Առաջարկում ենք ամրապնդել «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայում անհրաժեշտ ներդաշնակություն: Սահմանադրական մակարդակում «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» եռամիասնական շղթայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դեռևս երաշխավորված չէ անհրաժեշտ ներդաշնակություն: Մինչդեռ առանց դրա չի կարող ապահովվել նաև գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունների ցանկալի հավասարակշռություն: Վերջինիս բացակայությունը մեծապես վտանգում է երկրի կայուն զարգացումը, պետական իշխանության իրականացման ոլորտում հանգեցնում է ստվերային հարաբերությունների և սուբյեկտիվ հայեցողության շրջանակների վտանգավոր ընդլայնման: Գլխավոր խնդիրն է՝ ստեղծել սահմանադրական երաշխիքներ ունենալու պետության գլխի լիարժեք ինստիտուտ, ուժեղ և հավասարակշռված օրենսդիր ու գործադիր իշխանության մարմիններ, անկախ ու անկողմնակալ դատարան:

ОСНОВЫ КОНСТИТУЦИОННЫХ ПРАВОВЫХ ПРЕОБРАЗОВАНИЙ РА Нагапетян Ш. В.

В статье представлены конституционные реформы РА 1995г. от 5 июля, 25 ноября 2005г. и от 6 декабря 2015г., благодаря которым были внесены существенные изменения в Конституцию как в содержании, так и в объеме. В проведенном исследовании были представлены и выделены наиболее значимые аспекты указанных этапов развития Конституции, их направленность и ожидаемые результаты. Были упомянуты проблемы создания «антропоцентрической» Конституции и создания ответственной государственной системы. Были проанализированы цели, преследуемые конституционными реформами, и даны рекомендации, связанные с конституционными реформами, которые, на наш взгляд, могут стать основой для обеспечения стабильного развития страны и обеспечения правового, политического и экономического прогресса.

Ключевые слова: конституционные реформы, Республика Армения, модель государственного управления, демократия, правовая культура, государственная власть, антропоцентризм, центральная власть, парламент.

LEGAL FOUNDATIONS OF RA CONSTITUTIONAL REFORMS Nahapetyan Sh. V.

The article presents the constitutional reforms of the Republic of Armenia of 1995 on July 5, 2005 on November 25 and 2015 on December 6, thanks to which significant changes were made to the Constitution both in content and in scope. The study presented and highlighted the most significant aspects of these stages of the development of the Constitution, their orientation and expected results. The problems of creating an "anthropocentric" constitution and a responsible state system were mentioned. The goals pursued by the Constitutional Reforms were analyzed and recommendations related to Constitutional reforms were given, which, in our opinion, can become the basis for ensuring the stable development of the country and ensuring legal, political and economic progress.

Keywords: constitutional reforms, Republic of Armenia, model of public administration, democracy, legal culture, state power, anthropocentrism, power orientation, parliament.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դանիելյան Գ. Բ., Այվազյան Վ. Ա., Մանասյան Ա. Ա. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում: Երևան: 2015: 240 էջ:
2. Հարությունյան Գ., Հարությունյան Դ., Թովմասյան Հ., Կուռյան Գ., Մուրադյան Գ., Կոստանյան Գ., Ղազինյան Գ., Դանիելյան Գ., Պողոսյան Վ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Երևան: 2014: 99 էջ:
3. Պողոսյան Վ., Սարգսյան Ն. Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը: Երևան: «Տիգրան Մեծ»: 2016: 448 էջ:
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը: Տեքստը մատչելի է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի կողմից հրատարակված «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» գրքույկում: Երևան: «Տիգրան Մեծ»: 2014: էջ 18-21:
5. <https://paara.am/wp-content/uploads/2012/04/VAHE-BAGHDASARYAN-1.pdf> (08.10.2022)
6. <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf> (08.10.2022)

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Նահապետյան Շ. Վ. - մագիստրատուրա 1-ին կուրս

ՇՊՀ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Իրավագիտություն

Էլ. փոստ՝ shushann01@inbox.ru

Գիտական ղեկավար՝ Թադևոսյան Մ., իրավ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 15.12.2022

**ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐԸ
Կիրակոսյան Ա. Ժ.**

Հոդվածում ներկայացվել է հոգևոր անվտանգության մասին ընդհանուր պատկերացումները: Քննարկվել է երիտասարդների դերը Հայաստանի հոգևոր անվտանգության ապահովման գործում, ինչպես նաև նրանց հոգևոր անվտանգությանը սպառնացող գործոնները: Մասնավորապես անդրադարձել ենք աղանդավորական կազմակերպությունների և տեղեկատվական ցանցերի ազդեցությանը երիտասարդների հոգևոր անվտանգության վրա: Հոդվածում հոգևոր անվտանգությունը դիտարկվել է որպես ազգային անվտանգության հիմք:

Առաջադրված խնդիրների վերլուծման համար օգտվել ենք վիճակագրական, վերլուծության, համադրման, տեսական ընդհանրացման և համեմատաաշխարհագրական գիտական մեթոդներից:

Բանալի բառեր. հոգևոր անվտանգություն, պետություն, հասարակություն, երիտասարդություն, ազգային արժեքներ, կրոն, համացանց, սպառնալիք:

Նախաբան: Սույն հոդվածի մեթոդաբանական գաղափարական հիմք ծառայել է Մարիամ Մարգարյանի և Մարինե Մովսիսյանի «Հոգևոր անվտանգությունը որպես ազգային և քաղաքացիական ինքնության փոխհարաբերությունների գործոն» հոդվածը:

Մեր իրականության մեջ տիրապետող ապարժեք քառսի գլխավոր պատճառներից մեկը անհատի, սոցիալական խմբերի և ողջ հասարակության մեջ հոգևորի ու նյութականի հավասարակշռության խախտումն է: Այսօր համատարած նկատելի է գերնյութականացում, գերսպառողականություն, գերգոեհիկացում և դրա արդյունքում՝ գերպարզունակություն: Այսինքն՝ վտանգված է մեր հոգևոր անվտանգությունը: Ազգային անվտանգության ապահովման կարևորագույն հիմքը հոգևոր անվտանգությունն է, հատկապես մեծ է երիտասարդության դերը վերջինիս ապահովման գործում:

Աշխատանքի նպատակը հայ հասարակության, մասնավորապես հայ երիտասարդի հոգևոր անվտանգության վրա ազդող սպառնա-

լիքների ուսումնասիրությունն ու դրանց հաղթահարման ռազմավարությունն է:

Բովանդակություն: Ժամանակակից Հայաստանի անվտանգության ապահովման կարևոր ուղիներից մեկը հոգևոր անվտանգությունն է: Հոգևորը կորցնելուց հետո քաղաքական անվտանգությունը վտանգի տակ է:

Հոգևոր անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ, ներառում է ազգային ինքնագիտակցությունը՝ արտացոլելով հասարակության կենսագործունեության ավանդույթները, մշակույթը և պատմությունը, հասարակության բարոյաքաղաքական միասնության աստիճանը, ինչպես նաև առանց ազգային ինքնությանը վնաս պատճառելու իր առաջադիմական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեքներ և գաղափարներ ընդունելու կարողությունը [1]:

Հայաստանի պատմության մեջ մեկ անգամ չէ, որ հասարակությունը բախվում է հոգևոր անմիաբանության, սոցիալական արժեքների և հոգևոր մշակույթի ճգնաժամի, ինչը կրկին օրակարգ է դնում հոգևոր անվտանգության ապահովման հարցերը:

Հասարակության հոգևոր վիճակը անհնար է բնութագրել առանց երիտասարդներին որպես սոցիալ-ժողովրդագրական խումբ ուսումնասիրելու: Երիտասարդությունը ներկայացնում է հասարակության ապագան և որոշում ազգի ներուժն ու դրա հետագա զարգացումը:

Հոգևոր անվտանգությունը հասարակական կյանքում անհատների միջև հարաբերությունների համակարգ է, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ստեղծագործ հոգևոր կյանքի և հասարակական, բարոյական առողջ զարգացման համար [2]:

Հասարակության հոգևոր անվտանգությունը ազգային անվտանգության բանալին է, իսկ երիտասարդությունը՝ ազգի շարժիչ ուժը:

Հայ երիտարդությունը մշտապես պայքարել է հանուն իր ազատության և անկախության: Ասվածի ապացույցն են Արցախյան ազատամարտը, 2016թ. Ապրիլյան պատերազմը և Արցախյան 44-օրյա պատերազմը:

Մտահոգիչ է, որ այսօր աճում են հարձակումներն ու սպառնալիքները՝ ուղղված երիտասարդների հոգևոր անվտանգությանը: Մա ազդում է նաև նրանց աշխարհայացքի ձևավորման վրա: Քանզի կառավարել երիտասարդությունը, նշանակում է կառավարել երկրի ապագան:

Ստորև ներկայացնում ենք հայ հասարակության, մասնավորապես՝ հայ երիտասարդի հոգևոր անվտանգության ապահովման ապառնալիքները.

- *հոգևոր արժեքների իմաստագրկում և նյութականի պաշտամունք,*
- *հայրենասիրության, ազգային դաստիարակության անկում,*
- *ազգային արժեքների իմաստագրկում (մոռացության մատնում),*
- *արևմտյան գաղափարների տարածում,*
- *ծայրահեղ նորարարական արժեքների տարածում (այլընտրանքային ընտանիք, դավանանք, անպատասխանատու ազատություն),*
- *աղանդավորական կազմակերպությունների տարածում,*
- *տեղեկատվության շահարկում (ապատեղեկատվություն, մանիպուլյացիա),*
- *ստեղծագործական ներուժի նվազում [3, էջ 85]:*

Արդի աշխարհաքաղաքական պայմաններում հոգևոր անվտանգության մաս կազմող կրոնական գիտակցությունը տարբեր ձևերով է անդրադառնում անհատի և հասարակության կյանքի զարգացման վրա: Այն կարող է լինել և՛ կայունության հիմք, և՛ բարձր բարոյականության և մարդասիրության հենակետ, և՛ միաժամանակ հակամարտության պատճառ [3, էջ 79]:

Պատմության հազարամյա փորձը ցույց է տվել, որ հայոց եկեղեցին մշտապես կանգնած է եղել պետության կողքին, իսկ պետականության կորստի ժամանակ դարձել է հայության ինքնության և ազգապահպանության միակ երաշխիքը:

Հայ հասարակության հոգևոր անվտանգությանը ահագնացող մեծ վտանգներից է կրոնական փոքրամասնությունների, աղանդավորական կազմակերպությունների տարածումը: Դրանց նպատակը մեկն է՝ հային տարանջատել իր եկեղեցուց և պետությունից, մարդուն դարձնել իր ազգային արժեքներից անջատ ատոմ, որին հեշտությամբ կարող են կառավարել իրենց իսկ ցանկալի ուղղությամբ:

Կրոնական կազմակերպությունների տարածմանը նպաստել են ՀՀ սահմանադրությամբ ընդունված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի մասին օրենքը [4]:

Ըստ 2017 թվականի տվյալների՝ ՀՀ-ում պաշտոնապես գրանցված է կրոնական 67 կազմակերպություն, որոնցից 10-ը Հայ առաքելական եկեղեցուն կից գործող կառույցներ են, 6-ը հին՝ ավանդական եկեղեցիների ճյուղերն են, իսկ մնացած 51-ը՝ աղանդավորական: Նշենք

նան, որ, ըստ լրարատվամիջոցների դիտարկման, ևս 60 չգրանցված, բայց գործուն համայնք կա [5]: Իսկ աղանդավորների ընդհանուր թվաքանակը Հայաստանում անցնում է 300-350 հազարից: Թերևս աղանդավորական ոչ մի կառույց որևէ տվյալներ չի տալիս երիտասարդների մասին, բայց ակնառու է նրանց գերակշռությունը աղանդավորական կառույցներում:

Երևանում և ՀՀ մի քանի մարզերում հարցումներ են անցկացրել 8357 մարդու շրջանում՝ պարզելով, որ հարցվածների միայն 56,37%-ն է առաքելական եկեղեցու հետևորդ, կաթոլիկ և ուղղափառ եկեղեցու հետևորդ է 1,95%-ը, «Կյանքի խոսք» աղանդի հետևորդ՝ 24,4%, «Եհովայի վկա» աղանդի հետևորդ՝ 9,8%, հեթանոս է հարցվածների 0,16% և այլն [6]:

Աղանդավորական կառույցները ակտիվացել են հատկապես հետպատերազմյան և հետքովիդյան շրջանում: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ մարդկանց նյարդերը լարված են, հոգեկական վիճակը՝ անկայուն, իսկ հոգեբանորեն ընկճված մարդուն ավելի հեշտ է աղանդավորական շարքերում ներգրավել:

Աղանդավորականների թվաքանակի աճը բացատրվում է նաև բնակչության, հատկապես դեռահասների և երիտասարդների թերկրթվածությամբ և սահմանափակ մտածողությամբ, ազգային ինքնագիտակցության ցածր մակարդակով, կրոնի, պետության և ազգի գոյատևման գաղափարներին մասամբ և բացարձակ անտեղյակությամբ: Երկրորդ գլխավոր պատճառը սոցիալական ծանր կացությունն է, որից օգտվում է աղանդավորական կազմակերպությունների գերակշռող մեծամասնությունը: Աղանդավոր դարձածների մի մասի համար էլ այդ կազմակերպությունները դարձել են փաստացի աշխատատեղեր, որտեղ բավարար գումար են ստանում իրենց ընտանեկան կամ անձնական ծախսերը հոգալու համար:

Աղանդավորական կառույցների մեծ մասը ֆինանսավորվում է Թուրքիայի կողմից՝ բնականաբար երրորդ երկրի միջոցով: Նրանք, առանց բացառության, բացի հոգևոր գործունեությունից զբաղվում են տնտեսական, ֆինանսական և այլ գործունեությամբ, իսկ որոշներն էլ՝ քաղաքականությամբ՝ հովանավորելով այս կամ այն քաղաքական ուժին: Հայաստանում աղանդներն ընդգրկված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Մի՞թե սա ազգային անվտանգության տեսանկյունից դիվերսիա չէ [7]:

Նրանք աշխատում են մեր ինքնության և ազգային եսի ոչնչացման ուղղությամբ, ուստի նրանց գործունեությունը մեծ վտանգ է ներկայացնում ՀՀ ազգային և հոգևոր անվտանգությանը:

Նման համայնապատկերում էլ ավելի է կարևորվում Հայ եկեղեցու դերը: Հայ առաքելական եկեղեցու պառակտումը կքայքայի մեր երկիրը, ինչին էլ ուղղված են աղանդավորական կառույցները: Հայ եկեղեցին հզոր է հայ երիտասարդով: Սա պետք է հուշի, որ այսօր առավել քան երբևէ հայ երիտասարդը պետք է մոտ լինի հայ եկեղեցուն: Մեր եկեղեցին հատկապես վերջին մի քանի տարիներին մեծ ուշադրություն է դարձնում երիտասարդների հոգևոր դաստիարակությանը, ինչի վկայությունն են եկեղեցիներին կից գործող երիտասարդական միություններն ու կենտրոնները, դպրոցներում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցումը, եկեղեցու կողմից իրականացվող ճամբարները և այլ ծրագրեր:

Տեղեկատվական ցանցերի ազդեցությունը հոգևոր անվտանգության վրա: Գաղտնիք չէ, որ այսօր որևէ երկիր ներխուժելու ու կործանելու համար անհրաժեշտ է ոչ թե զենք ու մեծ բանակ, այլ բավական է ներգործել հասարակության գիտակցության մեջ, ներմուծել կեղծ արժեքներ, մանիպուլացնել, քայքայել ազգային և հոգևոր արժեքները, այդ երկրի ժողովրդին կլանել իրենց մենթալիտետին և ազգային արժեքներին խորթ գաղափարներով:

Մրանք գաղափարական զենքեր են՝ պարզ գործիքներ, որոնք ծառայում են իրենց նպատակին և կարող են հեշտությամբ ազգին տանել կործանման:

Այսօր երիտասարդները դարձել են ամենասուր տեղեկատվական-քարոզչական պայքարի առարկա: Երիտասարդության, հոգևորության դեմ ուղղված սպառնալիքի ամենատարածված գործիքը համացանցն է:

Ժամանակակից հասարակությանը այս գործիքը ներկայանում է որպես հիմնական տեղեկատվության աղբյուր, որը ընձեռնում է զանազան հնարավորություններ: Պետք է գիտակցել, որ տեղեկատվական ցանցերը հաճախ կործանարար ազդեցություն ունեն հատկապես երիտասարդության և դեռ չձևավորված անհատի վրա:

Համացանցով ամենից հաճախ տարածվում են կործանարար գաղափարներ, ինչպիսիք են՝ կրոնական ծայրահեղություններ, ահաբեկչական գաղափարներ, ռասիզմ, սադիզմ, թրաֆիքինգ, ապօրինի թմրաշրջանառություն, վիրավորական և պոռնոգրաֆիկ նյութեր, խաղամոլության քարոզ և այլն:

Փաստ է, որ համացանցում տարածված նման գաղափարներն ու տեղեկատվությունը հեշտությամբ ընդունվում և օրինակելի են դառնում երիտասարդների կողմից:

Վերջին տարիներին Հայաստանում ակտիվորեն քարոզվում են վիրտուալ մոլախաղերը: Փողոցում ամեն քայլափոխի կարող ենք հանդիպել բուքմեյքերական ընկերությունների գովազդային ցուցանակներին, հեռուստատեսային ալիքները և ինտերնետ կայքերը լցված են խաղամոլության քարոզներով: Իհարկե, մոլախաղերը միշտ էլ եղել են, բայց այս ամենը սկսեց ահռելի թափով զարգանալ, երբ այն տեղափոխվեց վիրտուալ աշխարհ:

Արդյունքում՝ անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ շահումով խաղերի կշիռը ծառայությունների մեջ գերազանցել է ֆինանսական ոլորտի ծառայությունները [8]:

Մեր կատարած հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ հայաստանյան առաջատար բուքմեյքերական ընկերություններից մեկում օգտատերերից 4500-ը երիրտասարդներ են [9*]:

Իհարկե, արգելափակել համացանցը կամ դրանից խուսափել հնարավոր չէ, քանզի այն դարձել է մեր կենցաղի մի մասը:

Այս և այլ խնդիրներից խուսափելու համար առաջարկվում է ստեղծել համահայկական միասնական տեղեկատվական ցանց, որտեղ ամբողջական տեղեկատվությունը կտրամադրվի հայերեն՝ զերծ ցանկացած տեսակի կործանարար գաղափարներից, ապատեղեկատվությունից և պաշտպանված արտաքին հարձակումներից: Ցանցը պետք է գործարկվի միայն ու միայն հայանպաստ գաղափարներով, ազգային արժեքներով, և որը կնպաստի հոգևոր և ստեղծագործական ներուժի զարգացմանը:

Ուրախությամբ պետք է նշել, որ նման ցանց արդեն իսկ ստեղծվել է. խոսքը Mitani.am-ի մասին է: Այն իրականացնում է նշված գործառույթները: Կայքում տեղ են գտել ազգակենտրոն արժեքավոր նյութեր, տեսանյութեր, հոդվածներ և այլն [10]: Ցանցը այժմ գործարկվում է փակ խմբի կողմից, սակայն շուտով բաց կլինի հայ հասարակությանը:

Եզրակացություն: Հետազոտության ամփոփումը կարելի է ներկայացնել նրբոհիշյալ եզրակացությունների և առաջարկությունների միջոցով.

- Հոգևոր սպառնալիքների դեմ պայքարում հիմնական նպատակ պետք է սահմանվի բնակչության, հատկապես երիտասարդ սերնդի մոտ ազգային արժեքների նկատմամբ առողջ հավատը:
- Հոգևոր անվտանգության ապահովման գործում բացառիկ կարևոր է պետության դերակատարումը: Պետություն-եկեղեցի-երիտասարդություն համագործակցությունը հնարավորություն կտա ոչ միայն պահպանել ավանդական արժեքներն ու մշակութային ժառանգությունները, այլև տանել բնականոն արդիականացման:
- Հոգևոր անվտանգությանը սպառնացող կրոնական կազմակերպությունների առաջխաղացումը կանխելու համար առաջարկվում է օրենսդրական հիմք ձևավորել, որոնք նախ թույլ կտան լուրջ մոնիթորինգի ենթարկել այդ կազմակերպությունների գործունեությունը, իսկ վտանգի փաստման դեպքում հնարավորություն կտան արգելել նրանց գործունեությունը:
- Զանգվածային տեղեկատվական ցանցերի բացասական հետևանքներից խուսափելու ու ազգային գաղափարներով առաջնորդվելու հնարավորություն կարող է ստեղծվել զուտ ազգային տեղեկատվական հարթակի ձևավորմամբ: Նման փորձ առկա է «Մեծ Հայք» տեղեկատվական համակարգում և վերջինիս հարթակում գործող «Միտանիք» ազգային սոցիալական ցանցում:
- Հոգևոր անվտանգության ապահովման համատեքստում հստակ պետք է ամրագրել՝ եթե չհարգենք գոյություն ունեցող ազգային և համամարդկային արժեքները, ապա կկորցնենք անկախ զարգանալու հնարավորությունը:

МОЛОДЕЖЬ И ПРОБЛЕМА ОБЕСПЕЧЕНИЯ ДУХОВНОЙ БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ

Киракосян А. Ж.

В статье представлено общее понимание духовной безопасности. Обсуждалась роль молодежи в обеспечении духовной безопасности Армении, а также факторы, угрожающие ее духовной безопасности. В частности, мы говорили о влиянии сектантских организаций и информационных сетей на духовную безопасность молодежи. В статье духовная безопасность рассматривается как основа национальной безопасности. Для анализа представленных проблем мы использовали

научные методы статистики, анализа, сравнения, теоретического обобщения и сравнительной географии.

Ключевые слова: духовная безопасность, государство, общество, молодежь, национальные ценности, религия, интернет, угроза.

THE YOUTH AND THE PROBLEM OF SUPPORTING SPIRITUAL SECURITY OF ARMENIA

Kirakosyan A. Zh.

Common insights into spiritual security are presented in the article. The paper touches upon the role of the youth in the context of supporting spiritual security, and threats affecting their security. We have reflected on possible negative influence of information networks and sectarian organizations. Within the frame of paper the spiritual security is regarded as the basis of national security.

To analyze the presented problems, we used scientific methods of statistics, analysis, comparison, theoretical generalization and comparative geography.

Keywords: spiritual security, state, society, youth, national values, religion, network, threatening.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Չիլինգարյան Դ. Ս., Երզնկյան Ե. Լ. Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Երևան: 2015: էջ 74:
2. Зеркалов Д. В., Духовная безопасность, Киев, 2012, с. 4.
3. Մարգարյան Մ., Մովսիսյան Մ. Հոգևոր անվտանգությունը որպես ազգային և քաղաքացիաիրավական ինքնության փոխհարաբերությունների գործոն: Էջմիածին: 2021:
4. ՀՀ Սահմանադրություն, Մտքի խղճի և կրոնի ազատության իրավունք
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=82>:
5. ՀՀ-ում կրոնական կազմակերպությունների ցանկ.
https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&url=https://www.gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%2520herakhos-

[new.pdf&ved=2ahUKEwiEtLzd1Pn5AhVgQPEDHW_EAHEQFnoECAwQAQ&usg=AOvVaw0uNOIH5zwo6ocq6lj5lG0:](#)

6. [https://www.aravot.am/2014/01/21/424352/:](https://www.aravot.am/2014/01/21/424352/)
7. [https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Christonya%20Hayastan/krist2014-08-1.pdf:](https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Christonya%20Hayastan/krist2014-08-1.pdf)
8. [https://armenpress.am/arm/news/1091430.html:](https://armenpress.am/arm/news/1091430.html)
9. Տեղեկատվության փակ աղբյուր:
10. [https://kentron.am/am/news/136562:](https://kentron.am/am/news/136562)
11. [https://mitani.am/:](https://mitani.am/)

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Կիրակոսյան Ա. Ժ. – բակալավրիատ 3-րդ կուրս
ՇՊՀ, Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, Զբոսաշրջություն
Էլ. փոստ՝ kirakosyanasya2@gmail.com

Գիտական ղեկավար՝ Ներսիսյան Ա., աշխ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 10.11.2022
Գրախոսվել է՝ 07.12.2022

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿ
Դավթյան Տ. Գ.**

Հոդվածում քննության է առնվում հայ ազգային առաքելության և ժամանակակից քաղաքակրթական ճգնաժամի համատեքստում Հայաստանի դեմ ծառայած մարտահրավերներն ու սպառնալիքները, դրանց հաղթահարման ուղիները: Որպես վերոնշյալ խնդիրների համակարգային և խորքային լուծման բանաձև՝ առաջ է քաշվում Հայաստանի քաղաքական արդիականացման հրամայականը՝ կազմավորելու ու կերտելու հայ ազգային ու Արարչական ինքնությունից բխող և հոգևոր-գաղափարական հիմք ունեցող, ապագայատեսիլ Հայք Ազգային Պետությունը:

Բանալի բառեր. քաղաքակրթական ճգնաժամ, Հայք Ազգային Պետություն, Արդարակարգ, Հոգևոր Սրբազան Էակ, Աշխարհաժողով:

Նախաբան: Այլևս գաղտնիք չէ, որ աշխարհը գտնվում է խոր, համակարգային և համընդգրկուն ճգնաժամի մեջ [10, էջ 2], որի առաջացման ու խորացման պատճառ հանդիսացող համակարգերը ամեն կերպ աշխատում են խորացնել այն՝ կործանելով ազգեր և պետություններ, ինչպես նաև ողջ մարդկության հաշվին, չարորակ ուռուցքի էֆեկտով, պահպանել բացասական ուղղվածություն ունեցող այդ ավերիչ քաղաքակրթության գոյությունը, որտեղ երջանկությունը կայանում է դիմացինի երջանկության հաշվին, իսկ ավելի ճիշտ՝ դիմացինի դժբախտության միջոցով [2]: Իսկ նման համակարգերի կողմից ներդրված քաղաքական և իրավական դաշտն էլ սոսկ լեգիտիմացնում ու «օրինական» կերպով կարողանում է պահել այդպիսի մեխանիզմների գոյությունը:

Բովանդակություն: Ներկա ճգնաժամի առաջացմանն ու խորացմանը նպաստող համակարգերը և դրանց կողմից ուղղորդվող և կառավարվող «պետություններն» ու «կազմակերպությունները» կամ, ճիշտ կլինի ասել, «փակբաժնետիրական» ընկերությունները մակաբուծական-վաշխառուական համակարգերի միջոցով առավելազույնս ձգտել(ում) են իրենց ձեռքում կենտրոնացնել ողջ մարդկության նյութական ռեսուրսները, իսպառ ոչնչացնել աշխարհի

Արարչականությունը և ձևավորել նոր մարդկային ինքնություն՝ միայն որպես ֆիզիկական էակ, առանց էութենական հոգևոր-գաղափարական հիմքի [7]: Ներկայիս ճգնաժամը սկսվում է դեռևս այսպես ընդունված «լուսավորականության» ժամանակաշրջանից, երբ գերիսնդիո դրվեց աղճատելու և ոչնչացնելու մարդ-Աստված կապը՝ իբր գիտական նոր «նվաճումների» և մարդկային «ազատությունների» «հետևանք» և «ձեռքբերում»: Ժամանակին ներդրված աթեիստական մտքերն ու գաղափարները հետևողական կերպով ներթափանցեցին հասարակական կյանքի բոլոր ոլորտներ և ստանալով նոր փիլիսոփայություն և իմաստ՝ սահմանվեցին «մարդը մարդուն գայլ է» սկզբունքով:

Այդպիսի գաղափարները կյանքի են կոչվում մի շարք գործիքներով, այդ թվում՝ ժամանակակից տեխնոլոգիական, տեղեկատվական և տրանսհումանիստական: Այդ գործիքակազմի մաս է նաև պետությունների «հանրապետական» մոդելը, ինչի միջոցով պետություններին ստացվում է դարձնել, այսպես կոչված, խոշոր փակ բաժնետիրական ընկերությանների դուստր ձեռնարկություններ [7]:

Ոլորտի մասնագետների կարծիքով՝ սխալ է կարծել, թե արևմտյան քաղաքականության հետևանքով, երբ փլուզվեց ԽՍՀՄ-ը, նրանց նպատակն էր այդ երկրներին իրական անկախություն շնորհելն ու իրենց հավասար աշխարհաքաղաքական սուբյեկտ դարձնելը: Գերհզոր պետություններին խոչընդոտում է նաև այլ «անկախ» երկրների գոյությունը, որոնց կազմալուծումը, ըստ էության, ավելի հեշտ սցենարներով է հնարավոր իրագործել [7]:

Անկախացումից հետո Հայաստանին պարտադրված պետական մոդելը, ինչպես նաև ավտորիտար, իսկ այնուհետև կեղծ ժողովրդավարական կառավարման համակարգերը մարզինալացրին հայ հասարակությանը՝ օտարացնելով նրան պետությունից [9, էջ 84-101]: Այնինչ ազգային կառավարման մոդելով առաջնորդվելը թույլ կտար ստեղծել կուռ հասարակական համակարգեր՝ ազգ-ընտանիք, ազգ-բանակ, ազգ-պետություն, որոնք կարող էին(են) դիմակայել ժամանակի առաջ քաշած մարտահրավերներին ու սպառնալիքներին [8]:

Այս ամենի համատեքստում պետք է դիտարկել անկախացումից ի վեր, նաև օտար ուժերի միջամտությամբ իրագործված քայլերը, որոնք և հանգեցրին Հայաստանի երրորդ հանրապետության քայքայմանը:

Հետանկախացման տարիներից սկսած՝ Հայաստանը գտնվում էր(է) ոչ միայն լոկալ, այլև քաղաքակրթական պատերազմի մեջ, որն իր էությամբ արդարության պակասի և դրա վերականգնման ու

հաստատման անհրաժեշտության պատերազմ է [8]: Բայց Հայաստանում քաղաքականությունը սահմանափակվում և սպառվում էր(է) ընդամենը երկու ուղղություններում՝ ներքին և արտաքին, այնինչ քաղաքականությունը բազմաշերտ է, և կա աշխարհաքաղաքականություն, գլոբալ քաղաքականություն, այս ամենից անդին՝ հոգևոր քաղաքականություն, և շատ դեպքերում մեզանում չուսումնասիրված և անճանաչելի մետաքաղաքականություն [8]:

Պետությունը որպես նպատակ դառնալուց հետո չդարձավ միջոց՝ հետագա ազգային առաքելության իրականացման համար: Հայոց Յեղասպանության ճանաչման և դատապարտմանն ուղղված քայլերը թերի էին և նույնիսկ՝ ոչ բավարար: Արցախյան հարցի շուրջ վարած քաղաքականությունը նույնպես սխալ էր: Իր էությանը ու բնույթով պարզ խնդիրը միտումնավոր կերպով բարդացվեց [13, էջ 279]: Նախ անհասկանալի և արհեստական կերպով տարանջատվեցին նույն ազգին պատկանող զավակները՝ հայաստանցի և դարաբաղցի, սխալ ձևակերպվեց Արցախի կարգավիճակը, այն կարծես մայր Հայաստանի մաս չէր և նրա հետ ոչ մի առնչություն չուներ: Արցախյան խնդիրը դիտարկվեց սուսկ 1988թ.-ից սկիզբ առած շարժում, այնինչ խնդիրը պետք էր(է) դիտարկել դեռևս 1920թ.-ից: 1994թ.-ի զինադադարից հետո պարզ էր, որ Ադրբեյջանը ժամանակն օգտագործելու է հոգուտ իրեն և պատրաստվելու է հետագա պատերազմի, որն անշուշտ եղավ, իսկ Հայաստանն այդ ընթացքում ոչ միայն չէր պատրաստվում պատերազմի և հզորանում, ինչն էլ կարող էր լծակ հանդիսանալ պատերազմի չլինելու, այլև հույս էր դրել ինչ-որ «կառույցների» (փակ բաժնետիրական ընկերությունների) վրա, որոնք ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության միմյանց հակասող սկզբունքներով փորձում էին այս հարցը ձգձգել ու լուծել հոգուտ իրենց շահերի [8]:

Հայաստանի ներքին քաղաքականության հիմքը դրվեց թալանի համակարգի ներդրմամբ, կառուցվում էին հիմնականում խաղատներ, հյուրանոցներ ու հանրախանութներ՝ խթանելով միայն հանքարդյունաբերության, առևտրի ու սպասարկաման ոլորտները, չէր մտածվում արտադրության, արդյունաբերության, հատկապես ռազմարդյունաբերության զարգացման մասին, և ողջ ազգային հարստությունը հոսում էր(է) անհատների գրպանը: Առավել գերադասվեց սեփական շահը, քան ազգային: Անհրաժեշտ չափով ջանք չներդրվեց, որպեսզի սեփական անձից առավել սիրվի սեփական երկիրը: Փոխարենը քայլեր ձեռնարկվեցին նվիրվելու արծաթասիրությանը և նյութապաշտությանը [8]:

Ազգային ինքնությունից հեռացում, ազգային համընդհանուր գաղափար-նպատակի բացակայություն. չհասկացվեց, թե ինչ է ազգը, և որն է նրա առաքելությունը, գոեհիկացնելով և սանձարձակացնելով ազատությունն ու անկախությունը՝ իմաստազրկվեցին դրանց բովանդակությունն ու էությունը, որոնց տիրապետելու համար հոգևոր գիտելիք էր(է) պետք [8]: Փորձվեց ձևավորել հայի նոր ինքնություն, որը հիմնված էր արևմտյան կեղծ արժեքների վրա, և ազգայինից լրիվ տարբերվող էությունը դարձավ «ազգային», իսկ իրական ազգայինը՝ օտար և անցանկալի: Արևմտյան արժեքները իդեալականացվեցին ու բացարձակացվեցին՝ առաջացնելով դրանք ուղղակի պատճենելու ձգտում [1]: Ապազգային քարոզչական համակարգի հենց առաջին թիրախում հայտնվեցին ազգային ավանդական արժեքները՝ հայ ընտանիքը, հայոց բանակն ու Հայ Առաքելական եկեղեցին, և այդ քարոզչական մեքենայի մաս են դարձրել(նում) հենց հայ ազգի գավակներին, որոնց դեռևս փոքր հասակից սնում և թունավորում են այդ «գաղափարներով», որը հետևողական կերպով շարունակվում է:

Անկախացումից հետո հայ հանրությանը սնել են օտարամուտ ու կեղծ գաղափարներով՝ ժողովրդավարություն, «ազատություն», «քաղաքակիրթ» աշխարհ, միջազգային հանրություն, կանանց և երեխաների իրավունքներ, ընտանեկան նոր օրենսգրքեր և կոնվենցիաներ, ֆեմինիզմ, գենդերական հավասարություն և այլն [7]: Հետևողականորեն թուլացվել և վարկաբեկվել է հայ պետականության հիմք հանդիսացող հայ ավանդական ընտանիքը՝ տղամարդու՝ ընտանիքի հոր գլխավորության և կնոջ՝ ընտանիքի մոր նվիրապաշտական կարգավիճակի ու նրանց դերակատարությունների նենգափոխմամբ ու խեղաթյուրմամբ [12]: Հետևողական կերպով նվազել(ում) է Հայաստանում ծնելիության մակարդակը, և այն այլևս չի ապահովում անհրաժեշտ դրական ցուցանիշով վերարտադրություն, ինչին նպաստել է նաև հղիության արհեստական ընդհատումների ահռելի քանակությունը (1955-2019թթ.՝ 1 մլն. 800 հզ.) [3]: Արտագաղթը ևս եղել է ի հաշիվ էթնիկ հայերի, իսկ ներգաղթողների մեջ գերակշռում են այլազգիներ՝ հիմնականում հնդիկներ և պակիստանցիներ:

Վերոնշյալ բացասական երևույթները հանգեցրին 2018թ.-ի հեղափոխությանը, որն էլ իր հերթին խոշոր հաշվով ոչինչ չփոխեց, փոշիացրեց համաժողովրդական ալիքը, գեներացված դրական էներգիան չփոխարինվեց հայրենաշինական ստեղծագործականության, տարվեց ապազգային և ազգն ու հասարակությունը պառակտող սևերի

ու սպիտակների բաժանումների, կորոնաթատրոնի դիմակահանդեսի և տուգանքների տենդի, ինչպես նաև անամոթ, անտանելի թրքասիրության, կեղծ ու կործանարար խաղաղասիրության և կապիտուլյացիայի [8]:

Վերը շարադրվածը, որը տեղի ունեցավ մեզ հետ հետանկախության այս անցած երեսուն տարիների ընթացքում, շատ պարզորոշ կուրվագծվի և հասկանալի կլինի, եթե այդ ամենը դիտարկենք որպես նախօրոք գծված սցենար: Դրա վառ օրինակն ու ապացույցը կարելի է կարդալ «Ինչպես փլուզել երկիրը ներսից» գրքում [2]. «Եթե ուզում ես ձևավորել ճշմարտությունը, ապա պետք է վերահսկել լրատվամիջոցները, անհրաժեշտ է խարխլել ազգային արժեքներն ու նրա բարոյական սկզբունքները, ոչնչացնել ցանկացած հզոր հոգևոր հիմք: Ձևավորել ապագա սերունդներին, վերահսկել դասագրքերը, դպրոցները: Աստիճանաբար ուսուցանել այն երեխաներին, որոնք համակրում են ձեր սկզբունքներն ու փիլիսոփայությունը: Խուսափեք դասավանդման ժամանակ երեխաներին տալ հիմնական փաստեր իրենց իսկ պատմությունից և սահմանադրական իրավունքներից: Նրանց պետք է սովորեցնել, որ բարոյական արժեքների հիմքերին հետևելը թուլություն և ստրկություն է, որից պետք է խուսափել՝ հանդիսանալ ազատության: Նրանց նաև պետք է ներշնչել, որ ընդունեն ձե՛ր տեսակետները:

Ձևավորել քաղաքական փիլիսոփայություն՝ ներթափանցելով կառավարություն: Եթե կարողացել եք թափանցել և հասնել երկրի բավականին բարձր պաշտոնական դիրքերի, ապա ամենաբարձր մակարդակներում կարող եք նաև բյուջետային կրճատումների միջոցով թուլացնել այդ երկրի բանակը: Երկրի բանակի համար ավելացրեք ավելորդ սահմանափակումներն ու պարտավորությունները, ստեղծեք զինվորների համար նվաստացնող մթնոլորտ, և դրանով դուք կարող եք բարոյալքել բանակը թե՛ հոգեբանորեն և թե՛ արդյունավետության առումով:

Ապազգայնացնելով հասարակությունը՝ «ջրիկացրեք» նրա մշակույթն ու լեզուն: Անցյալի նրանց ազգային հերոսները պիտի վարկաբեկվեն ու դառնան անկարևոր, նրանց վարքը պիտի քննադատվի, որպեսզի նրանք հասարակության, հատկապես երիտասարդության համար չդառնան հերոսության օրինակներ:

Մշակույթ ստեղծողներն ու ազգային սրբությունները պիտի վարկաբեկվեն: Հարված հասցրեք լեզվին՝ խեղելով այն: Ի վերջո,

ազգայինից հրաժարումը և բազմաբնակարան մշակութային հայեցակարգը հասարակությանը տանում են դեպի մահաբեր թուլացում:

Ձևավորել տնտեսությունը որպես ծախսարար՝ ծախսել, ծախսել և ծախսել, հարկել, հարկել և հարկել. սա պիտի լինի «ներսից փլուզելու» ձեր ծրագիրը:

Այս ամենի հեզնանքը այն է, որ ընդամենը մի քանի սերունդների ընթացքում ձեր կողմից ուսուցանված զանգվածները համոզված կլինեն, որ լուսավոր ապագա կերտելու այս հնարավոր ուղին, որը դուք եք ձևավորել նրանց կործանելու համար, մարդկության համար լավագույն լուսավոր ճանապարհն է, և նրանք միշտ կերազեն նման ուղևորության համար»:

Այս բոլոր ավերիչ գործընթացներն արդեն ծանոթ են, և Հայաստանում ընթանում են՝ ներկայացվելով իբրև «արևմտյան զարգացած երկրների առաջավոր փորձի որդեգրում»: Իսկ հայոց պատմության նենգափոխումն ու խեղաթյուրումը կազմակերպված բնույթ է ստացել և հասել է նրան, որ ներգրավել է հայաստանցի «մասնագետներին»: Ինքնության կորստի առումով անկախացումից հետո եղած տարիներն առավել ավերիչ են եղել, քան նախորդ հազարամյակների բոլոր զավթիչ արշավանքներն ու օտարի լուծը: Ցավոք, այս գործընթացը շարունակվում է՝ այն էլ մեծ արագացումով: Հասկանալի է, որ չլուծված խնդիրները խորանալու և շատանալու միտում ունեն: Հայաստանի դեմ արժեհամակարգային պատերազմ է, և թշնամիների շարքում են նաև պետական պաշտոնյաներ [12]:

Հետանկախացման տարիներից ի վեր թույլ տրված սխալների համար կան իրական պատասխանատուներ: Իսկ այդ սխալների հետևանքը եղավ 2020թ.-ի արցախյան 44-օրյա պատերազմը՝ ազգի զավակների կյանքերի կորուստներով:

Գերզուբալ պրոյեկտները, ինչպես նաև աշխարհում մահմեդական բնակչության թվաքանակի օր օրի ավելացումը լուրջ սպառնալիք են Հայաստանի համար: Մասնավորապես, մինչև 2040-2050 թվականները կանխատեսվում է, որ մեծ թվով քրիստոնյա երկրներ կմահմեդականացվեն, իսկ որոշ երկրների (ինչպես օրինակ ՌԴ-ի) զինված ուժերում առավել մեծ թիվ կկազմեն մահմեդականները [11, էջ 8]: Հետևաբար այլևս ժամանակ չկա սպասելու և պաշտպանվելու ակնկալիքով հույս դնել այս կամ այն հզոր գերտերության վրա: Իսկ ազգային պետության հիմնումը հայ ազգի գոյության միակ գրավականն

է, հակառակ որի՝ չլուծվ(ող)ած ազգային խնդիրները հանգեց(րել)նելու են համազգային ողբի [9, էջ 238-249]:

Յուրաքանչյուր քաղաքակրթություն ժամանակի հոլովությամբ մշակում է սեփական գոյաբանությանը բնորոշ արժեքային համակարգ, համաձայն որի՝ արդիականանում է մարդկանց աշխարհաճանաչողությունը և համակեցությունը, ինչպես նաև սոցիալ-քաղաքական կարգի պահպանման տրամաբանությունը: Այս առումով Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությունը» նոր էջ է մարդու գոյաբանության արժեքային համակարգի և համաշխարհային մշակույթի պատմության մեջ [9, էջ 274-298]: Ժամանակի հոլովությամբ այն մարդուն հնարավորություն է տալիս հավասարաբեք պատասխանելու առկա մարտահրավերներին՝ միաժամանակ ընդարձակելով ինչպես միջմշակութային հարաբերությունների տիրույթները, այնպես էլ արդիականացնելու գոյաբանության կենսագաղափարը: Պարզ ձևակերպումով՝ այդ կենսագաղափարը մեր ժամանակների համար կստացվի այսպես. եթե Նարեկացին, թվարկելով մարդկային սխալներն ու մեղքերը, դրանք վերագրում է իրեն, ապա յուրաքանչյուր մարդ-էակ նույնպես պետք է գիտակցի և ընդունի իր սխալականությունը, Նարեկացու փոխարեն իրեն զգա այդ մեղավոր մարդու կարգավիճակում, ինչպես նաև գիտակցի առանց Արարչի՝ իր անլիարժեքությունը և սեփական փոքրությունն ու ոչնչությունը: Միայն այս ամենի գիտակցումն է մարդուն թույլ տալիս և մղում ձևավորելու նոր մարդկային հարաբերություններ ու աշխարհակարգ, ինչն անշուշտ իրենից ենթադրում է սեփական անձի նվիրում և զոհաբերում՝ հանուն ազգային կյանքի փրկության:

Եվ, ինչպես փորձն է ցույց տվել, միայն ազգային և հոգևոր դաստիարակություն ստացած սերունդներն են կարողացել դիմակայել ժամանակի մարտահրավերներին և առաջ տանել ազգային առաքելությունը՝ հակառակ այն բանի, որ ներկա ժամանակներում կյանքն ապրելու միակ ճիշտ մոդելը ներկայացվում է արևմտյան կյանքի մոդելը՝ հիմնված փողասիրության և անհազ ցանկությամբ բիզնես գաղափարների վրա՝ իբրև կյանքի հաջողության բանաձև:

Հայաստանի քաղաքական արդիականացումը պետք է հիմնված լինի Արարչական հոգևոր-գաղափարական ամուր հիմքի վրա, որը թույլ կտա 3-րդ հազարամյակում դիմագրավել գերզուրբալ մարտահրավերներին ու սպառնալիքներին, այդ թվում իրագործել ազգային

առաքելություն՝ համամարդկային և համամոլորակային ընդգրկունությամբ:

Եթե աշխարհի ներկա կառավարման համակարգերը նախագծել են Արարչի փոխարեն սատանայապաշտների աշխարհը, ապա Հայաստանի պատասխանը պետք է լինի **Աստծո Արքայության** նախագիծը [5, էջ 7], **Հոգևոր Սրբազան Էակի** հայեցակարգը [6], **ազգային պետության** կամ **ազգապետության** հայեցակարգը, որը կարող է ձևակերպվել որպես **արարչակենտրոն քաղաքակրթություն կամ Արարչակրթական նոր կենսափուլ** [5, էջ 1]: Հայաստանը պետք է առաջարկի ապագա **արդար աշխարհակարգ** կամ **Արդարակարգ** [5, էջ 8]: Պետք է նախանշվի հայ ազգի առաքելությունը ներկայացվող ապագա արդար աշխարհակարգի կայացման մեջ՝ Հայաստանի դաշնակիցներով: Պետք է ձևավորվի նոր քաղաքացիական՝ հայրենատիրական սեփականություն և դրա հիման վրա զարգացող նոր տնտեսական հարաբերություններ ու հասարակարգ, որտեղ սեփականության կարևորագույն պոստուլատներն են՝ ազգային հարստությունը՝ ազգային սեփականություն, համայնքային հարստությունը՝ համայնքային սեփականություն, հանրային հարստությունը՝ հանրային սեփականություն, վիրտուալ տարածքում հանրային ինֆորմացիան ու ֆինանսատնտեսական շրջանառությունները, դրանցից առաջացած եկամուտները՝ որպես համընդհանուր սեփականություն, իսկ մոլորակային մասշտաբով՝ համաշխարհային հարստությունը՝ համամարդկային սեփականություն, իսկ բանկային գործը՝ բացառապես պետական կամ ազգապետական մենաշնորհ [7]:

Պետք է կայացվի Հայաստանի սեփական տնտեսվարման հիմնադրամային մոդելը, կառավարման աշխարհաժողովային համակարգը և սրանց տրամաբանությունից բխող ու սպասարկող գիտական, կրթական, իրավական, առողջապահական և ազգային-հասարակական կյանքը կազմակերպող մնացած բոլոր ոլորտները:

Հայոց ազգային պետությունը պետք է ունենա իր սեփական նախագծումները, դրանց իրագործման ժամանակացույցները, դերակատարումներն ու դաշնակիցները: Իսկ մասշտաբայնության առումով այս ամենը պետք է լինի համահայաստանյան, համահայկական և համամոլորակային (համամարդկային):

Ամփոփելով վերոնշյալ ուսումնասիրությունը՝ կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

- Հայաստանում քաղաքական արդիականացումը բնական պահանջ է, որը բխում է մեր ազգային արժեհամակարգից ու ժամանակի աշխարհաքաղաքական իրողություններից:
- Ազգային պետության հիմնումն ու կայացումը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առաջնորդությամբ, ազգային, ապագայատեսիլ ինքնությունից բխող և ճշմարիտ հոգևոր-գաղափարական, մշակութային, տնտեսական ու քաղաքական հիմքով գծային արդիականացման փոխարեն ներկա ճգնաժամից դուրս գալու և ժամանակի մարտահրավերներին դիմակայելու միակ միջոցն է:
- Ազգային պետության հիմնումը հայ ազգի առաքելության իրագործման և հայկական քաղաքակրթության իրացման կարևոր բաղադրիչ է, որը նպատակ դառնալուց հետո պետք է վերածվի միջոցի՝ հետագա՝ համահայաստանյան (պետական), համահայկական (համազգային) և համամարդկային (համամոլորակային) առաքելության իրագործման նպատակով, որը ձևավորվելու է Հոգևոր Սրբազան Էակի հայեցակարգի և նոր ու կենսունակ համակարգի՝ Արդարակարգի հիմքով:

СОЗДАНИЕ НАЦИОНАЛЬНОГО ГОСУДАРСТВА КАК ЦЕЛЬ ПОЛИТИЧЕСКОЙ МОДЕРНИЗАЦИИ

Давтян Т. Г.

В статье рассматриваются призывы и угрозы, стоящие перед Арменией в контексте армянской национальной миссии и современного цивилизационного кризиса, а также пути их преодоления. В качестве формулы системного и глубокого решения вышеупомянутых проблем выдвигается императив политической модернизации Армении – формирование и построение воображаемого Национального Государства Айк – вытекающий из армянской, национальной и творческой идентичности и имеющий духовно-идеологическую основу.

Ключевые слова: цивилизационный кризис, Национальное Государство Айк, Справедливость, Духовное Святое Существо, Всемирная конференция.

THE ESTABLISHMENT OF THE NATION STATE AS A GOAL OF POLITICAL MODERNIZATION

Davtyan T. G.

The article examines the challenges facing Armenia in the context of the Armenian national mission and the modern civilizational crisis and ways to

overcome them. As a formula for a systemic and profound solution to the above-mentioned problems, the imperative of political modernization of Armenia is put forward in order, to form and build a visionary Hayk National State arising from the Armenian, national and creative identity and having a spiritual-ideological basis.

Keywords: civilization crisis, Hayk National State, Justice, Spiritual Sacred Being, World conference.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աջապահյան Մ. Ազգային հավատք և ինքնություն, <https://www.youtube.com/watch?v=82gH5rbB4MQ>, [հասանելի է՝ 15.08.2022թ.]:
2. Գնդապետ Դան Ինչպես փլուզել երկիրը ներսից, <https://nt.am/am/news/243198/>, [հասանելի է՝ 17.07.2022թ.]:
3. Հարեյան Ա. «Ճշմարիտ ճանապարհ» հաղորդաշար, https://youtu.be/nbcdc_Pi854?list=PLf2MyBY6dB1fgQUq6WiHUnp_STHq_1E68, [հասանելի է՝ 21.08.2022թ.]:
4. Մակարյան Է. «Արարչական» հաղորդաշար, 1-ին արար, https://youtu.be/rLZgUfMuDl4?list=PLQTwCZoFpCcxpIX1_EMjeYJKP4jPSi7Ks, [հասանելի է՝ 12.07.2022թ.]:
5. Մակարյան Է. «Արարչական» հաղորդաշար, 2-րդ արար, <https://arjeq.am/wp-content/uploads/2022/02/%D4%B1%D6%80%D5%A1%D6%80%D5%B9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D4%B1%D6%80%D5%A1%D6%80-2-%D6%80%D5%A4.pdf>, [հասանելի է՝ 15.07.2022թ.]:
6. Մակարյան Է. «Արարչական» հաղորդաշար, 6-րդ արար, մաս 2-րդ, <https://www.youtube.com/watch?v=N7vm0zGAx2A>, [հասանելի է՝ 11.08.2022թ.]:
7. Մակարյան Է. «Հայք» հաղորդաշար, մաս 1-ին՝ «Մարդու աստվածը դարձել է փողը, իսկ կառավարիչը՝ բանկային համակարգը», <https://www.youtube.com/watch?v=86-8pMk0vdQ>, [հասանելի է՝ 15.07.2022թ.]:
8. Մակարյան Է. «Հայք» հաղորդաշար, մաս 19-րդ՝ «Հաղթելու ենք Ազգ-Բանակ գաղափարի կենսագործմամբ»,

https://youtu.be/AMMIqqo817Y?list=PLrAp5Q8tHeHdGXDxOzI2EcijH6irg21_w, [հասանելի է՝ 15.07.2022թ.]:

9. Մարգարյան Մ. Մ. Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում: Երևան: «Պետական ծառայություն» հրատարակչություն: 2019: 313 էջ:
10. Ներսիսյան Ա. Հ. Հայկական քաղաքակրթության հայտը նոր աշխարհակարգի հաստատման գործընթացում, www.artsakhlib.am, [հասանելի է՝ 29.07.2022թ.]:
11. Ներսիսյան Ա. Հ. ՀՀ-ին սպառնացող ժողովրդագրական աղետ: Մարտահրավերներ, հեռանկարներ:
12. Ջրբաշյան Գ. Ազգային պետության հիմնումը հայ ազգի գոյության միակ գրավականն է
<https://arjeq.am/%d5%b0%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%a6%d6%80%d5%b8%d6%82%d5%b5%d6%81%d5%b6%d5%a5%d6%80/2018/>, [հասանելի է՝ 19.07.2022թ.]:
13. Վալեսյան Լ. Քաղաքական աշխարհագրություն: Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն: 340 էջ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Դավթյան Տ. Գ. - բակալավրիատ 3-րդ կուրս
ՇՊՀ, Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, Ջրոսաշրջություն
Էլ. փոստ՝ tigrandavtyan5555@gmail.com

Գիտական ղեկավար՝ Ներսիսյան Ա., աշխ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 21.10.2022
Գրախոսվել է՝ 07.12.2022

**«ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԻՐԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
Մարկոսյան Գ. Հ.**

Հոդվածում ներկայացված է ներկա համամարդկային քաղաքակրթական ճգնաժամի արտահայտումը Հայաստանում, դրա զարգացման ընթացքը 5-րդ դարից մինչև մեր օրեր, ճգնաժամի խորացման համար խթան հանդիսացող բացարձակ արևմտականացման բացասական հետևանքները, նախկինում մշակված աշխարհաքաղաքական տեսությունների ու հայեցակարգերի արդիականությունը Նոր Աշխարհակարգի հաստատման պայմաններում: Հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել առաջարկել ճգնաժամի հաղթահարման հնարավոր ուղի, որի բովանդակությունն արտահայտվում է հետևյալում՝ հայրենիքի պաշտպանության և հայ տեսակի պահպանման համար նյութական բարիքների կարևորումից անցումը հայկական հոգևոր արժեքների արդիականացմանը՝ Հոգևոր Հայաստան:

Բանալի բառեր. համամարդկային քաղաքակրթական ճգնաժամ, քաղաքակրթական արդիականացում, ապարժեքություն, ազգային արժեքներ, Հոգևոր Հայաստան:

Գլոբալ քաղաքակրթական ճգնաժամի պայմաններում ձևավորվում է Նոր Աշխարհակարգ, որտեղ պետականությունը պահպանելու և ձուլման չենթարկվելու համար Հայաստանին անհրաժեշտ է քաղաքակրթական արդիականացում:

Այսպիսով, «Հոգևոր Հայաստանի» նպատակն է՝ անցյալը, ներկան և ապագան կամրջելով՝ ապահովել հայկական հոգևոր արժեքների արդիականացում, որով էլ՝ հայապահպանումն ու ազգային պետության հիմնումը:

Հետազոտության շրջանակներում թիրախավորել ենք հետևյալ հետազոտական խնդիրների լուծումը.

- Ժամանակակից քաղաքակրթական ճգնաժամի արմատների հետազոտություն:
- Հոգևոր Հայաստան կենսագաղափարի խրոնոլոգիական մեկնաբանումը հայ պատմագրության և գրականության Մեծերի կողմից:

- Հոգևոր Հայաստանը՝ Նոր աշխարհակարգի հաստատման պայմաններում. Հայաստանի տեղի և դերի ճարտարապետման ուղի:
- Նյութական արժեքներով ու հիմքով հայապահպանման միջոցներից անցում դեպի հոգևոր արժեքներով պահպանման արդյունավետ և գործուն մեխանիզմների բացահայտում:
- Հայկական հոգևոր արժեքների հետ մղման և տիրող ժողովրդավարական խնդիրների միջև եղած կապի հետազոտություն:
- Աշխարհակարգային մոդելների, տեսությունների և հայեցակարգերի վերլուծություն, արդիականություն:
- Կիրառված մեթոդներն են՝ սիներգիզմի սկզբունքները, հասարակական աշխարհագրության մեթոդաբանական դիտակետը:
- Օգտվել ենք կոնկրետ հետևյալ գիտական մեթոդներից՝ վերլուծության, համադրման, համեմատաաշխարհագրական, տեսական ընդհանրացման:

Քաղաքակրթական ճգնաժամն ունի խոր արմատներ. հայ պատմագրության և գրականության էջերի նույնիսկ մակերսային թերթումը կարող է տալ բազմաթիվ ապացույցներ:

Նախ անդրադառնանք Պատմահայր Խորենացուն: Նրա «Պատմություն Հայոց» աշխատությունը եզրափակող «Ողբ»-ում մեծ հայրենասերն ասում էր. «Ողբում են քեզ, Հայոց աշխարհ, ողբում են քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան խորհրդականդ և ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը ... Որովհետև (մեզ) տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս: Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները գորացած. հավատը ծախվում է այստեղի ունայն կյանքի համար: Ասպատակություններ են գալիս անհատում, շատ տեղերի վրա, տները գերվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են արքայրվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ: Աստվածապաշ-

տությունը մոռացված է, դժոխքի ակնկալություն...» [1]: Նկատենք, որ Խորենացին համոզված էր, որ հայոց պետկանության կործանումը 428 թվականին հետևանք էր անարժեքության, նյութապաշտության և եսամոլության:

Տիեզերական Վարդապետ Գրիգոր Նարեկացին մի ամբողջ աշխատություն է նվիրել մարդու հոգու մաքրագործմանը: Ստեղծել է Մարդու ինքնարդիականացման մի այնպիսի կառուցակարգ, որը, դարերի հոլովությամբ քննություն բռնելով, այսօր էլ գերարդիական է իր ոգեղենությամբ, մարդասիրությամբ, սիրո և բարու բարձր արժեքներով: Նարեկացին հայ Վերածննդի գաղափարախոսության կարապետն է և որպես այդպիսին՝ ներկայանում է բարենորոգչական առաքելությամբ[3]:

Նկատենք, որ հայ նոր գրականության ուղենշային դեմքերից մեկը՝ Վահան Տերյանը, ևս անդրադարձել է Հայաստանում քաղաքակրթական ճգնաժամին, ցածրարժեք ու պարզունակ նյութապաշտական մտածելակերպին, երկրի պահպանության հարցում դրա բացասական ազդեցությանը՝ կարևորելով անկապտելի ազգային արժեքները:

1914 թ. կոտորածները, Հայկական հարցի բուռն քննարկումները ոչ միայն երկրի ներսում, այլև միջազգային աստաններում, գրույցները հայ բոլշևիկների հետ, հայության՝ հայերեն չխոսելը, անարժեքության քառուրդ, անհազ նյութապաշտությունը, սրանք բոլորը խթան, ապա և պատճառ են դարձել Տերյանի «Հոգևոր Հայաստան»-ի կերտման համար:

«Չպետք է կամենանք մեր հույսը և ապագան «Նյութական Հայաստանի» գաղափարի վրա հիմնել, այլ պիտի տենչանք ու աշխատենք «Հոգևոր Հայաստանի» համար», հակառակ դեպքում կնամանվենք «մեր տգետ հայ բուրժուային, որ առատ ձեռքերով նվիրում է իր ոսկին դպրոցական շենքեր կառուցելու, առանց երբևիցե մտածելու, թե ինչպիսի, ինչ դպրոց է լինելու այդ շենքի մեջ», - գրում էր Տերյանը [5]:

Մեծ հայրենասերը, Հոգևոր Հայաստան կերտելով, ցանկանում է տեսնել այնպիսի մտավորական էլիտա, որը իրապես գիտակցում էր Հոգևոր Հայաստանի արժեքը, ամբողջությամբ ծանոթ էր մշակութային բոլոր բաղադրիչներին: Ըստ Տերյանի՝ հայ բուրժուազիան և ինտելիգենցիան ապագայնացած են: Նրանց համար գոյություն չունի հայկական մշակույթ: Անտեղյակ են մշակույթի գլխավոր գործոններին՝ լեզվին, գրականությանը, արվեստին, նրանք արհամարհում են այդ ամենը:

Այսօր ևս առկան են բոլոր այն խնդիրները, որոնց Տերյանն անդրադարձել է իր «Հոգևոր Հայաստան» հոդվածում, սակայն ավելի խորն ու տարերային տարբերակով:

Բացարձակ արևմտականացում, մարդը դյուրին կառավարելի բիռոբոտ, «Փոքր ազգ ենք», օտարամոլություն, հայկականության անճանաչություն, անհազ սպառողականություն, ազգային ինքնագիտակցության լռեցում. սրանք բոլորը գոծիքներ են, որոնք ժամանակի ընթացքում ավելի են խորացնում քաղաքակրթական ճգնաժամը և հանգեցնում են պետականության կործանմանը ու ձուլմանը:

Ճգնաժամը հաղթահարելու գլխավոր ուղին «Նյութական Հայաստանից» անցումն է «Հոգևոր Հայաստանին», որով սահմանվելու է Հայկական քաղաքակրթության տեղն ու դերը Նոր Աշխարհակարգում:

Մասնագետների բնորոշմամբ ժամանակակից գործընթացները միտված են «Նոր Աշխարհակարգի» կառուցակազմմանը, որտեղ ամենակարևորը տեսակի և դերի հստակեցումն է: Գալիս է «որակով փոքրերի» ժամանակը:

Մինչև այժմ գիտության և պատմության մեջ ներկայացված բոլոր աշխարհակարգային մոդելներում, տեսություններում և հայեցակարգերում առաջնորդի դերը տրվում է նյութական բարիքներով ավելի ապահովված պետություններին, բոլորում գերակշռում է նյութական հիմքերը: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Շվեդ գիտնական Ռուդոլֆ Չելենը, լինելով ընդգծված գերմանոֆիլ, սոցիոլոգիայում ու քաղաքագիտության մեջ զարգացնում էր գերմանական «օրգանիզմը», ըստ որի՝ պետությունը կենդանի օրգանիզմ է և ենթակա է աճի ու զարգացման կենսաբանական օրենքին: Նա մերժում էր պետության ու հասարակության նկատմամբ մեխանիստական մոտեցումը: Ըստ նրա՝ պետությունները, ինչպես մարդիկ, «զարգացող և մտածող էակներ» են, հետևապես նրանց էությունից է բխում «գոյության պայքարը»:

Հիմնվելով 20-րդ դարի սկզբի Գերմանիայի օրինակի վրա՝ Չելենը հատուկ քննարկման նյութ է դարձնում խոշոր պետությունների ու փոքր պետությունների փոխհարաբերությունների ու նրանց ապագայի խնդիրը: Նա զարգացնում էր այն միտքը, որ փոքր երկրներն իրենց աշխարհագրական դիրքի պատճառով դատապարտված են մեծ տերություններին ենթակա լինելու վիճակին, իսկ վերջիններս, դարձյալ աշխարհագրական ճակատագրի բերումով, «պարտավոր են» միավորել առաջիններին աշխարհագրական ու տնտեսական «խոշոր

համալիրների» մեջ: Այս գաղափարի վրա կառուցվեց այսպես կոչված «Միջին (կենտրոնական) Եվրոպայի հայեցակարգը՝ Գերմանիայի գլխավորությամբ, ըստ որի՝ Եվրոպա պետք է համարվի նաև Մերձավոր արևելքը [4]:

Նախապատերազմյան Գերմանիայում ճանաչում ստացան Կարլ Հաուսհոֆերի «կենսատարածքի» աշխարհաքաղաքական գաղափարները: Ըստ դրանց՝ Առաջին աշխարհամարտից հետո Գերմանիան, զրկվելով գաղութներից և մայր երկրի որոշ մասից, փոքրացրել էր իր կենսատարածքը, այն այլևս բավարար չէր պետության գոյության համար: Հետևություն էր արվում, որ Գերմանիային անհրաժեշտ են նոր տարածքներ, նա պետք է ընդարձակվի մինչև «իրեն հասանելիք» բնական սահմաններն ու կենսատարածքները: Այս գաղափարը տեսական հիմք դարձավ ֆաշիստական Գերմանիայի համար: Այդ իսկ պատճառով աշխարհաքաղաքականությունը նույնացվում էր պատերազմի ու հարձկման հետ:

Ելակետային է համարվում անգլիացի աշխարհագետ Հ. Մաքինդերի առաջ քաշած «Միջներկրի» կամ «Տարածքային միջուկի» տեսությունը: Ըստ Մաքինդերի՝ համաշխարհային պատմությունը պետք է դիտարկել որպես օվկիանոսային ու մայրցամաքային տերությունների հակամարտություն, որտեղ հավասարակշռությունը փոփոխվում է հոգուտ մեկի կամ մյուսի: Այսինքն՝ գերտերությունների միջև անհաշտ պայքար է գնում աշխարհին տիրելու համար: Պայքարող յուրաքանչյուր կողմ հենվում է իր տարածքային միջուկի՝ միջներկրի վրա: Մաքինդերի կարծիքով՝ ժամանակակից աշխարհի ձևավորման սկզբնական փուլում միջներկրի դեր է ունեցել Կենտրոնական Ասիան, որտեղից մոնղոլներն իրենց տիրապետությունն են տարածել Ասիայի և Եվրոպայի վրա [4]:

Աշխարհագրական մեծ հայտնագործություններից հետո վիճակը փոխվել է: Ծովային տրանսպորտի զարգացման շնորհիվ համաշխարհային ուժային կենտրոնը ցամաքից տեղափոխվել էր մերձօվկիանոսային շրջան՝ գլխավորապես Մեծ Բրիտանիա: Մաքինդերը կանխորոշում էր, որ 20-րդ դարում երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման շնորհիվ ուժերի հավասարակշռությունը կփոխվի հոգուտ ցամաքային երկրների, այսինքն՝ մինջներկրի, որտեղից կարելի է վերահսկել ամբողջ աշխարհը: Աշխարհի աշխարհաքաղաքական կառուցվածքի մաքինդերյան մոդելը հանգում էր հետևյալին.

1. Ով կառավարում է Արևելյան Եվրոպան, նա կառավարում է միջներկրի:

2. Ով կառավարում է միջներկիրը, նա կառավարում է համաշխարհային օվկիանոսը:
3. Ով կառավարում է համաշխարհային օվկիանոսը, նա կառավարում է աշխարհը:

Աշխարհաքաղաքական հայեցակարգում հատուկ տեղ ունի ամերիկացի գիտնական Ա. Մեհենի «Ծովային ուժի» հայեցակարգը: Ի տարբերություն այլ հայեցակարգերի՝ Մեհենը կարծում էր, որ երկրի առավելությունը ցամաքային կենտրոնական դիրքը չէ, և «Համաշխարհային տերություն կարող է դառնալ այն պետությունը, որն իշխող դիրք ունի օվկիանոսում: Մասնանշվում էին հնում Կարթագենի, իսկ նոր ժամանակներում՝ Մեծ Բրիտանիայի օրինակները: Անցյալ դարասկզբին Մեհենը ԱՄՆ-ի համար կանխատեսում էր «համամոլորակային ճակատագիր»։ Ամերիկյան պետք է դառնար աշխարհի առաջատար ծովային տերությունը և ուղղորդեր համաշխարհային զարգացում [4]:

Մերժելով Ռատցելի կողմից բնական գործոնի դերի գերազնահատումը՝ Վիդալ դը լա Բլաշը հանգեց «պոսիթիվիզմի» աշխարհաքաղաքական հայեցակարգին: Ըստ դրա՝ պետության զարգացումն ունի երկու բաղադրիչ՝ տարածական և ժամանակային: Եթե տարածականը պայմանավորված է բնական պայմաններով, ապա ժամանակայինը (պատմականը)՝ մարդով, բնակչությամբ, որը «նախաձեռնության կրողն է»: Բնական պայմանները լոկ հնարավորություն են, որոնք կարող են իրողության վերածվել տվյալ տարածքը բնակեցնող մարդկանց միջոցով միայն:

Ամերիկացի Ն. Սփիքմենը առաջ է քաշել «Աղեղի երկրի» հայեցակարգը: Սփիքմենը համաշխարհային ուժային կենտրոնը համարում էր «Աղեղի երկիրը»՝ Եվրասիան եզրավորող հսկայական աղեղը: Վերահսկելով «Աղեղի երկիրը»՝ կարելի չէզոքացնել միջներկրի ազդեցությունը: Արդյունքում առաջացավ ծովային և ցամաքային տերությունների դիմակայության տեսությունը, որ իրականությունից շատ հեռու է:

Չնափոխելով Մաքինդերի վերը նշված բանաձևը՝ Սփիքմենը ձևակերպել է հետևյալ կերպ. «Ով վերահսկում է Աղեղի երկիրը, վերահսկում է Եվրասիան, որոշում է աշխարհի ճակատագիրը» [4]:

Ներկայացված բոլոր հայեցակարգերում և տեսություններում պետականությունը պահպանելու, աշխարհում լուրջ խաղացող լինելու համար պետություններին անհրաժեշտ է իշխանություն ունենալ

համաշխարհային օվկիանոսի, Արևմտյան Եվրոպայի, կամ ընդհանրապես զգալի մակերես կազմող տարածքի վրա կամ ապահովված լինելու տեսություններով:

Սակայն այսօր աշխարհում տիրող քաղաքակրթական, հետհամավարակային ճգնաժամի, համաշխարհայնացման պայմաններում վերը ներկայացված տեսություններն ու հայեցակարգերը կորցնում են իրենց ուժը և արդիականությունը:

Պետք է շեշտենք, որ արդեն համավարակի պայմաններում նկատելի է, որ առավել ակնառու է դառնում Homo sapiens-ի միասնական ճակատագրի միասնական ընկալումը: Դրան զուգահեռ՝ արդեն իսկ պարզ է, որ կուժեղանան նաև տեղայնացման միտումները: Մարդիկ ավելի շատ կձգտեն նույնականանալ սեփական համակեցության տեսակների հետ՝ ընտանիք, ազգ, պետություն: Անհատների ինքնապաշտպանական բնագործ նրանց մղելու է համակեցության տիրույթ (ընտանիք, ազգ, պետություն), որտեղ ավելի պաշտպանված է, ավելի ապահով է, ավելի լիարժեք է [2]:

Այս տրամաբանությամբ կփոփոխվի մարդկանց մշակութային (կրթություն, դաստիարակություն, սոցիալական ինֆորմացիա և այլն) հիմքը: Այն իր հերթին փոփոխության կենթարկի քաղաքական ու տնտեսական կառույցների բնույթը՝ վերջիններս դարձնելով ավելի պատասխանատու, ավելի հավասարակշռված:

Այն պետությունները, որոնք սեփական արժեքային հենքի վրա կձևավորեն համակեցությունների լիարժեքության մոդելներ, նրանք ավելի պաշտպանված կլինեն ճգնաժամերի պայմաններում, հետևաբար ավելի կենսունակ՝ հետճգնաժամային միջակայքերում: Այսինքն՝ հնարավորություն կունենան գլոբալիզացված աշխարհում հավասարակշռել համաշխարհային տիրապետման փորձերը և ըստ այդմ դառնալ համաշխարհային զարգացման կայուն խաղացողներ [2]:

Հետևաբար քաղաքակրթական ճգնաժամը հաղթահարելու, բացարձակ արևմտականացման և համաշխարհայնացման չենթարկվելու, պետականությունը պահպանելու և ձուլման չենթարկվելու համար Նոր Աշխարհում Հայաստանին անհրաժեշտ է քաղաքակրթական արդիականացում, ազգային արժեքների հիման վրա սեփական պետականակերտման մոդելի մշակում:

Ուսումնասիրելով ներկա համամարդկային քաղաքակրթական ճգնաժամի զարգացման ընթացքը Հայաստանում, վեր հանելով դրա

հետևանքներն ու առաջարկելով լուծման ուղին՝ Հոգևոր Հայաստանը, եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Առկա քաղաքակրթական ճգնաժամը մշտապես ունեցել է իր դրսևորումը, սակայն այսօր այն իր ընդգրկմամբ աննախադեպ է՝ համամոլորակային, դա հանգեցրել է ցածրամակարդակ արժեքային համակարգ կրող հասարակության ձևավորման, որը կործանարար հետևանքներ ունի ցանկացած պետության համար:
2. Քաղաքակրթական ճգնաժամի դեմ քայլեր չձեռնարկելու դեպքում այն բերում է խաղաղության խաթարման, պետականության կործանման և ազգի ձուլման:
3. Այսօր ձևավորվում է «Նոր աշխարհ և աշխարհակարգ», որտեղ պետություններին անհրաժեշտ է սեփական մոդելի մշակում, որը հնարավորություն կտա նոր աշխարհաքաղական պայմաններում լինել կայուն խաղացող:
4. Հայաստանի դեպքում քաղաքակրթական ճգնաժամի հաղթահարման ելակետային մոդելներից մեկը կարող է հանդիսանալ ազգային արժեքների արդիականացումը, խոր գիտակցումը, դրա հիման վրա պետականակերտման նախագծի մշակումն ու իրագործումը՝ «Հոգևոր Հայաստանը»:

РЕАЛЬНОСТЬ ЦИВИЛИЗОВАННОГО ПРОЕКТА "ДУХОВНАЯ АРМЕНИЯ"

Маркосян Г. Г.

В статье представлены выражение современного общечеловеческого цивилизационного кризиса в Армении, ход его развития с V века до наших дней, негативные последствия абсолютной вестернизации, являющейся стимулом углубления кризиса, актуальность ранее разработанной геополитической теории и концепции в условиях установления Нового Мирового Порядка. В рамках статьи предпринята попытка предложить возможный путь выхода из кризиса, содержание которого выражается в следующем: переход от важности материальных благ к защите родины и сохранению армянского рода в модернизации армянских духовных ценностей: Духовная Армения.

Ключевые слова: всеобщий цивилизационный кризис, цивилизационная модернизация, неадекватность, национальные ценности, Духовная Армения.

THE REALITY OF THE CIVILIZING PROJECT OF “SPIRITUAL ARMENIA”
Markosyan G. H.

The article examines the expression of present universal political crisis existing in Armenia, the process of development from 5th century to today, the negative consequences of absolute westernization of contributing to crisis, the relevance of previously developed geopolitical theories and concepts in the conditions of the establishment of the New World Order. Within the framework of the research, an attempt was made to propose a possible way to overcome the crisis, the content of which is expressed as follows: the transition from the importance of material goods to the modernization of Armenian spiritual values for the protection of the homeland and the preservation of the Armenian species: Spiritual Armenia.

Keywords: Universal civilizational crisis, civilized modernization, fake values, national values, Spiritual Armenia.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խորենացի Մ. «Հայոց Պատմություն» Երևան: Համալսարանի հրատարակչություն: Երևան: 1981թ.: 426 էջ:
2. «Հայկական Երագ» քաղաքակրթական նախագիծ:
3. Մարգարյան Մ. «Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում», «Պետական ծառայություն» հրատարակչություն: 2019թ.: 313 էջ:
4. Վալեսյան Ա. Վալեսյան Լ. Քաղաքական աշխարհագրություն, ԵՊՀ հրատարակչություն: Երևան: 2009թ.: 336 էջ:
5. Վահան Տերյան Հոգևոր Հայաստան, համառոտ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մարկոսյան Գ. Հ. – բակալավրիատ 4-րդ կուրս

ՇՊՀ, Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, Աշխարհագրություն

Էլ. փոստ՝ gohar.markosyan.01@mail.ru

Գիտական ղեկավար՝ Ներսիսյան Ա., աշխ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 07.12.2022

**ՀԱՅԱՀԱՎԱՔ: ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՆ Ու
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Մեխակյան Ա. Հ.**

Հոդվածում քննարկվել է ՀՀ ժողովրդագրական իրավիճակը՝ ՀՀ բնակչության բնական և մեխանիկական շարժը, արտագաղթը և ներգաղթը, ինչպես նաև դրանց զարգացման միտումներն ու մարտահրավերները: Ստեղծված ժողովրդագրական իրավիճակի համատեքստում քննարկվել է նաև հայրենադարձության անհրաժեշտությունը՝ որպես Հայաստանի ապագայի կառուցման հիմք: Հոդվածում փորձ է կատարվել գնահատել նաև ՀՀ-ում իրականացվող ժողովրդագրական քաղաքականության արդյունավետությունը:

Առաջադրված խնդիրների վերլուծության համար ընտրվել է հասարակական աշխարհագրության մեթոդաբանական բազան:

Եզրակացությունների միջոցով առաջարկվող նոր մոտեցումները կարող են հիմք հանդիսանալ և նպաստել ՀՀ ժողովրդավարական քաղաքականության արդյունավետության բարձրացման համար:

Բանալի բառեր. հասարակական աշխարհագրություն, բնական և մեխանիկական շարժ, արտագաղթ, ներգաղթ, միգրացիոն միջազգային քաղաքականություն:

Նախաբան: Սույն հոդվածի գաղափարական հիմք է ծառայել Արմեն Ներսիսյանի՝ «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական ճգնաժամը: Հաղթահարման հեռանկարները» աշխատությունը:

Յուրաքանչյուր ազգի գոյության և պահպանման առաջին նախապայմանը սեփական տեսակի վերարտադրության ապահովումն է, որը գրեթե բացառապես պայմանավորված է սեփական երկրում ազգի պոպուլյացիայի բնականոն ապահովմամբ: Հետևաբար, ազգային ու քաղաքակրթական ինչպիսի ծրագրեր էլ նախատեսենք, ինչպիսի մեխանիզմներ էլ ճարտարապետենք, թիվ մեկ նախապայմանը մնում է սեփական հայրենիքում սեփական տեսակի լիարժեք վերարտադրության ապահովումը:

Հետազոտության հիմնական նպատակն է՝ նպաստել պատմական հայրենիքի պահպանված տարածքում հայ ժողովրդի լիարժեք աճի շարունակականության ապահովմանը:

Բովանդակություն: Յուրաքանչյուր ազգի գոյության և պահպանման առաջին նախապայմանը սեփական տեսակի վերարտադրությունն է, բայց զուգահեռաբար պետք է նշել, որ տվյալ ազգը պետք է ապրի իր երկրում [1]: Մակայն հայերիս դեպքում պատկերը մի փոքր այլ է: Պետք է անդրադառնալ այն կարևորագույն փաստին հայոց Մեծ եղեռնին, ինչի հետևանքով աշխարհում գոյություն ունեցող տասը միլիոնանոց հայ ժողովրդից այսօր ՀՀ-ում ապրում է միայն 2 միլիոն 961 հազար մարդ (2022 թ. հունվարի 1-ի դրությամբ): Իսկ այս ամենը խոսում է ն՝ հոգևոր, ն՝ ֆիզիկական անվտանգության առկա խնդիրների մասին: Վերը նշվածը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է մշակել այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի ՀՀ-ում ծնելիության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև արդիական է այնպիսի ճշգրիտ ռազմավարության մշակումը, որն էլ իր հերթին կնպաստի հայրենադարձությանը: Այլապես առկա իրավիճակը գնալով սրվում է, հետևաբար սպառնում է վերածվել մեծ աղետի, իսկ դա արտահայտվելու է սեփական երկրում ազգային փոքրամասնության վերածվելու տխուր հեռանկարով [1, էջ 5]:

Վերոնշյալ գործոններն էլ արտահայտում են տվյալ հետազոտության արդիականությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակից ելնելով՝ առաջադրվել և լուծվել են ներքոհիշյալ խնդիրները.

- Վերլուծել ՀՀ ժողովրդագրական իրավիճակն արտահայտող վիճակագրական տվյալները:
- Դիտարկվել են ՀՀ ժողովրդագրական ճգնաժամային իրավիճակի պորացման աղետալի հետևանքները:
- Քննարկվել են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմներ:
- Հիմնավորվել է հայրենադարձության անհրաժեշտությունը՝ որպես ստեղծված ճգնաժամի հաղթահարման գրեթե միակ ուղի:

Հայաստանի Հանրապետությունում առկա ժողովրդագրական իրավիճակը, մասնագետների բնորոշմամբ, ճգնաժամային է, ինչը պայմանավորված է թե՛ բնական, թե՛ մեխանիկական շարժի խիստ բացասական միտումներով:

Հայաստանի Հանրապետության առկա ժողովրդագրական իրավիճակը առավել ճշգրիտ և պատկերավոր ներկայացնելու համար անհրաժեշտ է հստակորեն առանձնացնել երկու շերտ բնակչության բնական շարժ (ծնելիություն և մահացություն) և բնակչության

մեխանիկական շարժ (արտագաղթ և ներգաղթ): Այսօրվա իրականության մեջ թե՛ առաջին, թե՛ երկրորդ շերտերը ցայտուն կերպով կապված են միմյանց հետ, ուստի անհրաժեշտ է այս երկու շերտերը դիտարկել մեկ համատեքստում:

Դեռ Բագրատունյաց ժամանակաշրջանից սկսած՝ հայ ժողովրդի մոտ դրսևորվեց արտագաղթը: Այն ուներ իր սուբյեկտիվ պատճառները՝ սեփական երկրում վտանգի զգացում, բռնաճնշումների աճ, հետագայում նաև տնտեսական խնդիրների առաջացում: Վերոնշյալ գործոնները չէին կարող չանդրադառնալ ծնելիության վրա [2]:

Այսօր ՀՀ-ում ապրում է 2 միլիոն 963 հազար մարդ 2022թ.-ի հունվարի դրությամբ [3]: Հետևյալ փաստերը վկայում են նաև այն մասին, որ Հայաստանը աշխարհի երկրների մեջ բնակչության թվով զբաղեցնում է 138-րդ տեղը: Պատկերը տխուր է հատկապես հարևան երկրների հետ համեմատած: Թուրքիային և Իրանին զիջում է մոտավորապես 30 անգամ, Ադրբեջանին՝ 2.7 անգամ և Վրաստանին՝ 1.5 անգամ [4]: Ակնհայտ է, որ նման հսկայական տարբերությունների դեպքում պատկերը ապագայում ավելի վատ է լինելու: Ուստի մեր հիմնական նպատակներից է ճշգրիտ ռազմավարությունների և ծրագրերի մշակումը, որոնք կապահովեն ներգաղթ և դրան զուգահեռ՝ ծնելիության աճ: Ուսումնասիրելով գիտական հետազոտությունների արդյունքները՝ ակնհայտ է դառնում հետևյալ կարևորագույն փաստը՝ որպեսզի ազգը կարողանա հարատևել, անհրաժեշտ է սերնդափոխություն 25 տարին մեկ: Այդ դեպքում յուրաքանչյուր ընտանիքին բաժին պետք է ընկնի 2 երեխա, այսինքն՝ ծնելիության գործակիցը պետք է հավասար լինի 2.1, բայց հարկ է նշել, որ սա ևս բավական չէ քանի որ 2.1 ցուցանիշով ապահովվում է սոսկ պարզ վերարտադրություն, ինչը ենթադրում է ազգի պարզ գոյություն, բայց ոչ թվի աճ [1, էջ 3]: Հետևաբար ծնելիության գործակցի բարձրացումը խթանող ծրագրերի մշակումը առաջնահերթ խնդիր է: Բայց սրան զուգահեռ՝ անհրաժեշտ է հայրենադարձության հնարավոր ապահովումը, ինչը կարող է բնակչության թիվը բարձրացնել երկու տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունում, իհարկե, եղել են հայրենադարձություններ, նույնիսկ բավականին մեծ հոսքերով: Այդպիսին եղել է 19-րդ դարի մեծ մասը, երբ Արևելյան Հայաստանը անցավ Ռուսաստանի իշխանության տակ, հայերի մեծ ներգաղթ սկսվեց Օսմանյան և Պարսկական կայսրություններից [2]: Հայաստանը դարձել էր այն

ապահով հանգրվանը, որտեղ մարդիկ իսկապես կարող էին կառուցել իրենց սեփական ապագան: Հատկանշական է հատկապես 1946-1948 թվականներին տեղի ունեցած ամենամեծ և մասշտաբային ներգաղթը կամ հայրենադարձությունը, որը պատմության մեջ մտել է «Մեծ Ներգաղթ» անունով, որի ժամանակ Հայաստան է վերադարձել 20 հազար 646 ընտանիք կամ 89,750 մարդ [4]: Իհարկե, հայրենադարձության նման մեծ ծավալները տեղի են ունեցել երեք փուլերով, սակայն հատկանշականը այն է, որ հնարավոր է եղել ապահովել մարդկանց՝ նման մեծ մասշտաբի հոսք իրենց հայրենիք: Հայրենադարձության նման հսկայական մասշտաբները, իհարկե, ունեցել են իրենց օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Վերոնշյալ ժամանակահատվածում ծնելիության գործակիցը ևս համեմատաբար ավելի բարձր է եղել, որն էլ իր հերթին նպաստել է բնակչության թվի աճին: Իսկ այսօր իրականում պատկերը միանգամայն այլ է: Վերարտադրության գործակիցը ցածր է, ինչի հետևանքով բնակչության 2/3 -ն է աշխատանքային տարիքի (15-63 տարեկան), և ընդամենը 1/6 -ն է մինչ աշխատանքային տարիքի [1, էջ 8]: Ավելին, ուսումնասիրությունները փաստում են, որ ամեն տարի աշխատանքային տարիք ավելի քիչ մարդ է մտնում: Իսկ տվյալ փաստը վկայում է այն մասին, որ զգացվելու է աշխատուժի կարիք, հետևաբար Հայաստանը ստիպված է լինելու «ներկրել» էժան աշխատուժ, իսկ այս ամենը միանշանակ կնպաստի ծառայությունների որակի վատթարացմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի հասարակության մի շարք պահանջների անբավարարության, այսինքն՝ այս ամենը ևս կարող է խթան հանդիսանալ արտագաղթի ավելացման համար: Իսկ նման իրավիճակը, անշուշտ, խթանելու է ապագայում վերարտադրողական տարիքի բնակչության անընդհատ նվազմանը ևս: Այս փաստերը խոսում են այն մասին, որ մոտ ապագայում ճշգրիտ քայլերի չիրագործման դեպքում Հայաստանի ապագան իսկապես վտանգվելու է, որը ունենալու է սարսափելի հետևանքներ: Ինչ վերաբերում է նաև գյուղական բնակչությանը, որն ավանդույթի ուժով ունենում էր նվազագույնը 3 երեխա, պատկերը այսօր ևս փոխվել է: Ծնելիության մակարդակը այստեղ ևս նվազել է: Այս վերոնշյալ փաստերը վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը ունի տիպիկ ծերացման հատկանիշներ, որի պոտենցիալը գնալով մեծանում է: Նման պայմանների դեպքում Հայաստանը կկանգնի լուրջ աղետի առջև, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է խնդրի հրատապ լուծում: Բայց կարիք

չկա կարծել, թե Հայաստանի տարածքը կդառնա անմարդաբնակ, հակառակը, Հայաստանի դերը իր յուրօրինակ աշխարհագրական դիրքի շնորհիվ էլ ավելի բարձրանալու է, որի պատճառը իր յուրահատուկ կամրջող դիրքն է, ունի նաև բնական կարևորագույն պաշարներ, որոնք աշխարհի շատ երկրներին գրեթե հասանելի չեն. քաղցրահամ ջրի հսկայական պաշարները [1 էջ 7]: Այս ամենը գործոններ են, որոնք նպաստելու են միգրացիոն հոսքերի անընդհատ աճին: Իսկ մեր պետության թիվ մեկ խնդիրն է հայրենադարձության ապահովումը, այլապես մենք միազգ (98,1% հայ) պետությունից կվերածվենք ազգային փոքրամասնության: Միանշանակ պետք է հաշվի առնել, որ մեր հարևան երկրների բնակչությունները ՀՀ-ի բնակչությանը գերազանցում են բազմակի անգամներ, ինչը արդեն իսկ իր հերթին պոտենցիալ վտանգ է ներկայացնում Հայաստանի համար: Հայահավաքի և հայրենադարձության անհրաժեշտությունը իսկապես ամեն օր էլ ավելի կարևոր և արդիական է դառնալու: Մեր կարևորագույն խնդիրն է գիտակցել, որ մեր երկիրը գտնվում է պատերազմական իրավիճակում, իսկ սա իսկապես սպառնալիք է մեր երկրի համար: Յուրաքանչյուր երկրի հիմքը բանակն է: Հնարավոր չէ երբեք՝ երկիրը գոյություն ունենա առանց բանակի, զինվորն է երկրի իսկական պաշտպանը, հայ զինվորն է մեր կյանքի «երաշխավորը»: Ուստի պետք է գիտակցել, որ ծնելիության նման պայմանների դեպքում աղջիկների թիվը կարող է գերազանցել տղաների թվին: Ցավալի է, բայց կարող է լինել այնպես, որ զորքի թիվը չբավականցնի երկրի պաշտպանության համար, իսկ այս ամենը կարող է ստիպել օտար ազգի ներկայացուցիչների ծառայության հայտագրման: Մակայն, ինչպես հետազոտությունները ցույց են տվել, եվրոպական և ոչ միայն եվրոպական երկրների փորձը, որոնց բանակը հենված է այլ ազգի ներկայացուցիչների վրա, պաշտպանությունը այդքան էլ լիարժեք չէ: Ուստի պետությունը ամուր է սեփական երկրի բնակչության և հատկապես՝ երիտասարդության կայունության շնորհիվ: Մրանք այն փաստերն են, որոնք իսկապես հորդորում են մեծ ուշադրություն դարձնել հայահավաքին ու հայրենադարձությանը: Հայրենադարձության չիրագործումը ունենալու է իր հստակ բացասական հետևանքները՝

- բնակչության թվի ոչ դրական տեղաշարժ,
- բանակում հայ զինվորների թվի նվազում,
- սեփական երկրում ազգային փոքրամասնության վերածվելու մեծ վտանգ:

Մրանք այն բացասական միտումներն են, որոնք պարզել ենք հետազոտությունն իրականացնելու արդյունքում:

Ներկայումս մեր երկիրը գտնվում է ծանր կացության մեջ, որը ունի իր օբյեկտիվ պատճառները՝ «COVID-19-ը» և 2020 թվականի սեպտեմբերի 27-ի Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը, հասարական կյանքը գրեթե կայուն չէ, բայց ամենը ժամանակի խնդիր է:

Իհարկե, հայրենադարձության որոշում կայացնելը իսկապես դժվար է օտար երկրում ապրող հայի համար, ով ապահովված է նյութականով, սակայն տեղին է մեջ բերել հայ մեծանուն հերոս Նժդեհի խոսքերը. «Հայրենիքից դուրս, հայրենիքից գատ ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները»: Այս խոսքերը պետք է իսկապես արդիական դառնան օտար երկրում գտնվող հայերի համար, որովհետև Հայաստանը իսկապես Նժդեհի ասած սուրբ հայրենիքն է: Հայրենիքն է հնարավորություն տալիս մարդուն զգալ իրեն լիարժեք ազատ: Օտար երկրում ապրող անձին, ով արդեն նյութական մեծ կարողություններ ունի, հայրենիքին կապող օղակը հոգևոր աշխարհին է ու եկեղեցին: Եկեղեցու դերը ինչես նախկինում, այնպես էլ հիմա մեծ է, մեծ արժեք են ներկայացնում խաչն ու կրոնը, եկեղեցին այն կապող ուժն է, որը իսկապես ունակ է հային միավորել սեփական հայրենիքում: Եկեղեցու շարժիչ ուժը ինքնին կրոնն է, հայերիս համար քրիստոնեությունը ու խաչը իսկապես մեծ արժեքներ են, հայերը արտերկրում հայեցիության պահպանման համար կառուցել են եկեղեցի, դպրոց, հետո նոր՝ տուն. սրանք իսկապես ապացուցված են: Այդպես է եղել ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Լիբանանում և այլուր: Առաջին երկուսը, իսկապես, բարձրագույն արժեքներ են: Հայը հայ է, երբ պահում է իր քրիստոնյա կրոնը, իսկ դպրոցը հայեցիության ապացույցն է: Մրանք, իսկապես, անգնահատելի արժեքներ են: Հայրենադարձության հիմքը պետք է լինի հոգևորը, ազգային ինքնագիտակցումը և սերունդներին հայ պահելու հրամայականը: Հայրենադարձությունը միանշանակ ունենալու է իր դրական ազդեցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա:

Իհարկե, առաջիկա տասը տարիներին մեծ հայրենադարձության իրականացումը իրատեսական չէ նույնիսկ շատ մեծ ջանքերի՝ իրագործման դեպքում [2]: Այսպիսով, մեր պետության խնդիրն է կենտրոնանալ Մփյուռքի այն հատվածի վրա, որը իսկապես ցանկություն ունի վերադառնալ հայրենիք: Վերադառնալ ոչ այնքան բարեկեցության մեծ հեռանկարներով, որքան սեփական երկրում որպես հայ ապրելու և այն որպես այդպիսին հետագա սերունդներին թողնելու

մեծ հեռանկարով: Իհարկե, նրանց վերադարձը չի բացառվում, որ կարող է ուղեկցվել որոշակի դժվարություններով, բայց դա, իհարկե, ժամանակավոր բնույթ կարող է կրել:

Եզրակացություն: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ դրանք կարող ենք ներկայացնել ներքոհիշյալ եզրակացությունների և առաջարկությունների տեսքով.

- Հայաստանում ստեղծված ժողովրդագրական իրավիճակը ճգնաժամային է, որի միտումների պահպանման դեպքում այն կարող է վերածվել անդառնալի ժողովրդագրական աղետի:
- Արմատապես պետք է բարելավվի ժողովրդագրական քաղաքականությունը՝ բնական աճի խրախուսման գործուն մեխանիզմների ռեալ ներդրմամբ:
- Ստեղծված ճգնաժամից դուրս գալու գրեթե այլընտրանք չունեցող էլքը կազմակերպված հայրենադարձության՝ հայահավքության ապահովումն է, որի համար անհրաժեշտ է՝
 - ✓ Հայաստանում ազգային-հոգևոր դաշտի հզորացում՝ որպես հայրենադարձության անհրաժեշտ հիմք,
 - ✓ հայրենադարձության պահանջի ձևավորում՝ թե՛ սփյուռքում և թե՛ հայրենիքում,
 - ✓ հայրենադարձության հստակ ռազամավարության մշակում և հանրայանացում,
 - ✓ հայրենադարձությունը հայտարարել Հայաստանի զարգացման գերակա ուղղություն:
 - ✓ Հայաստան-Արցախ համամիասնության համար հայահավաքը դարձնել ազգային առաջնահերթ ծրագիր:

АРМЯНСКОЕ СОБРАНИЕ. ПРИНУЖДЕНИЕ И ВОЗМОЖНОСТИ РЕПАТРИАЦИИ

Мехакян А. А.

В статье рассмотрена демографическая ситуация РА: естественное и механическое движение населения РА, эмиграция и иммиграция, а также тенденции и проблемы их развития. В контексте создавшейся демографической ситуации обсуждалась также необходимость репатриации как основы построения будущего Армении. В статье предпринята попытка оценить эффективность реализуемой в РА демографической политики. Для анализа представленных проблем была выбрана методологическая база социальной географии. Новые подходы,

предложенные в выводах, могут явиться основой и способствовать эффективности демократической политики Республики Армения.

Ключевые слова: социальная география, естественное и механическое движение, эмиграция, иммиграция, международная миграционная политика.

**ARMENIAN GATHERING. COMPULSION AND POSSIBILITIES OF
REPATRIATION
Mekhakyan A. H.**

The democratic situation of the Republic of Armenia, the natural and mechanical movement of the RA population, immigration and emigration, but also the tendency of its development and challenges are discussed in this article. The demographic situation turns into demographic disaster in case of inattention, the most important thing is repatriation which is essential for the future of Armenia. In this article a great deal of effort is made for the evaluation of the demographic policy carried out in Armenia. The methodological basis of social geography is chosen for analyzing the presented problems. New approaches summed up and suggested in conclusions can become a basis and contribute to the fulfillment of demographic policy in Armenia.

Keywords: social geography, natural and mechanical movement, immigration, emigration, international policy of migration.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ներսիսյան Ա. Հայաստանը աշխարհաքաղաքական մեծ իսադատախտակում: Վանաձոր: 2013: 331 էջ, 2:
2. <https://mediamax.am/am/column/121318/>
3. Հայաստանի վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/am/>:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2022:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մեխակյան Ա. Հ. - բակալավրիատ 3-րդ կուրս
ՇՊՀ, Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, Սերվիս
էլ. փոստ anjelamekhakyan@yahoo.com

Գիտական ղեկավար՝ Ներսիսյան Ա., աշխ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 21.10.2022
Գրախոսվել է՝ 08.12.2022

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ
Աբրահամյան Մ. Մ.**

Աշխատանքում ներկայացնում ենք մեր ինքնուրույն աշխատանքը: Այն իրականացրել ենք «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացի «Գնահատման սանդղակներ» թեմայի գործնական դասերի ուսումնասիրած մեթոդիկայով: Ստեղծել ենք «Միավորային գնահատման սանդղակ բանավոր հարցման համար», ինչը տվյալ թեմայից կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքի գնահատման բաղադրիչներից մեկն է:

Բանայի բառեր. գնահատման սանդղակ, միավորային գնահատման բաղադրիչ, ինքնուրույն աշխատանք, վերջնարդյունք:

Հետանկախացման տարիների հանրակրթական շարունակական բարեփոխումները կրթության կազմակերպման մեջ անընդհատ նոր պահանջներ են առաջադրում ուսուցիչներին: Մակայն այդ պահանջների իրականացումը մանկավարժներ կրթող բուհերում միաժամանակ չի իրականացվում, ինչը լուրջ մարտահրավեր է բուհի շրջանավարտի համար՝ մասնագիտական գործունեությունը արդյունավետ սկսելու համար: «...կարծում ենք, որ անհրաժեշտություն կա մանկավարժական բուհերում վերանայելու մանկավարժամեթոդական դասընթացների ծրագրերը՝ ներառելով կրթական փոփոխություններով առաջադրված և ժամանակի մարտահրավեր ներկայացնող տեսական ու գործնական գիտելիքներ, հմտություններ ձևավորող թեմաներ: Դա հնարավորություն կտա բարձրացնելու մասնագիտական կրթություն ստացող շրջանավարտի տեղեկացվածությունն ու գործնական հմտությունների մակարդակը և հիմք կհանդիսանա սկսնակ ուսուցչի պրակտիկ գործունեության ընթացքում ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների կատարելագործման համար», - առաջարկում է Ն. Ադամյանը [1, էջ 7]:

Այս աշխատանքում ներկայացնում ենք ՇՊՀ-ի կենսաբանության բաժնում բակալավրի կրթական ծրագրով իմ ուսումնառությունից մի դրվագ: Մեր կողմից ընտրվել է «Կենսաբանության դասավանդման

մեթոդիկա» դասընթացի շրջանակում ուսումնասիրվող «Գնահատման սանդղակներ» թեմայի համար նախատեսված մի քանի գործնական դասերից մեկի ուսումնառության գնահատվող վերջնարդյունքը՝ «Միավորային գնահատման սանդղակ բանավոր հարցման համար» ինքնուրույն աշխատանքը:

Գնահատման սանդղակը (սյունակաշար կամ ռուբրիկ) կապ է ստեղծում գնահատման չափանիշների և դրանցից յուրաքանչյուրի որակական ցուցանիշների միջև՝ ներկայացնելով բոլոր չափանիշների վերաբերյալ 1-10 միավորներին բավարարող համեմատական, կառուցողական, չափելի, իրատեսական պահանջներ: Սանդղակի միջոցով հստակեցվում կամ պարզաբանվում են ուսուցիչների և աշակերտների ակնկալիքները: Սանդղակն օգնում է աշակերտին հասկանալու գնահատականի իմաստը, քանի որ հստակ պատկերացում է տալիս տվյալ գնահատականի համար պահանջվող աշխատանքի մակարդակի մասին, մատնանշում է թերություններ, որոնք կարելի է վերացնել, օգնում է աշակերտին իր աշխատանքը բարելավելու միջոցներ փնտրել [3]:

Համառոտ ներկայացնում ենք թեմայի ուսուցման և ուսումնառության կազմակերպման մեթոդիկան:

1. «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացի ծրագրային «Միավորային գնահատում» ենթաթեմայի «Միավորային գնահատման սանդղակները որպես գիտելիքի ստուգման գործիք» բաժինը ուսումնասիրում ենք 2 տեսական և 4 գործնական դասերով: Տեսական նյութի ուսումնասիրման ժամանակ ծանոթանում ենք արդի հանրակրթական համակարգի միավորային գնահատման բաղադրիչներին, տարբեր բարդության առաջադրանքների գնահատման սկզբունքներին, կենսաբանության ուսումնական գործունեության կազմակերպման տարբեր ձևերի գնահատման առանձնահատկություններին, գնահատման սանդղակներ ստեղծելու համար չափանիշներ, և դրանցից յուրաքանչյուրից սովորողի նվաճումները 4-10 միավորներով գնահատելու պահանջներ (ցուցանիշներ) ձևակերպելու սկզբունքներին:
2. Տեսական նյութի ուսումնասիրությունից հետո հանձնարարվում է հաջորդող գործնական դասի համար նախատեսված միավորային բաղադրիչի համար գնահատման սանդղակ կազմելու առաջադրանքը (անհատական, զույգերով կամ խմբային): Առաջին գործնական աշխատանքի կատարմանն օժանդակելու համար տվյալ

բաղադրիչի գնահատման չափանիշները ընտրվում են լսարանային քննարկման արդյունքում բոլորի համաձայնությամբ և դասախոսի ուղղորդմամբ, իսկ գնահատման յուրաքանչյուր միավորի ցուցանիշների ներկայացումը մնում է որպես տնային ինքնուրույն աշխատանք: Գնահատման այլ բաղադրիչների վերաբերյալ սանդղակներ ստեղծելու հաջորդ գործնականների համար գնահատման չափանիշների ընտրությունը ևս ուսանողների կողմից կատարվում է ինքնուրույն, իսկ բոլորի կողմից ընդունելի վերջնական տարբերակն ընտրվում է ինքնուրույն աշխատանքների քննարկման արդյունքում:

3. Առաջին գործնական դասի համար դասախոսի կողմից ուղղորդվում է նաև բոլորի համաձայնությամբ նույն թեմայի ընտրություն կատարելը՝ ինքնուրույն աշխատանքների քննարկման արդյունավետության համար:
4. Յուրաքանչյուր գործնական դասի ժամանակ քննարկվում են ուսանողների ինքնուրույն աշխատանքները, լրացումներ և ուղղորդումներ են ներկայացվում համակուրսեցիների և դասախոսի կողմից: Որպես նոր հանձնարարություն՝ տրվում է տվյալ օրվա քննակված աշխատանքը խմբագրելն ու լրամշակելը և նոր հանձնարարության կատարումը:
5. Լրամշակված ու խմբագրած յուրաքանչյուր ինքնուրույն աշխատանք ուսանողի համար տվյալ թեմայի վերջնարդյունքի գնահատման բաղադրիչ է:
6. Դասախոսի կողմից ուսանողներին է տրամադրվում նաև գործնական ինքնուրույն աշխատանքի գնահատման հետևյալ չափանիշներն ու համապատասխան կշիռները. 1) Առաջադրանքի կատարում-0,5; 2) քննարկումներին մասնակցություն-0,2; 3) աշխատանքի թերությունների ընկալում և խմբագրման հմտություններ-0,3 [2; էջ 15]:

Այժմ կներկայացնենք մեր ինքնուրույն աշխատանքը 2021-2022 ուստարվա 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի «Մրտի կառուցվածքը, աշխատանքը, ինքնավարությունը և կարգավորումը» թեմայից բանավոր հարցման գնահատման սանդղակի ստեղծման վերաբերյալ:

Բանավոր հարցման գնահատման չափանիշներ

1. Տեսական նյութի վերարտադրություն-30%:
2. Կարողություն-հմտություններ (առաջադրանքների կատարում)-70%:

Բանավոր հարցման 4-9 միավորային ցուցանիշներ (պահանջներ)

4 միավոր- «բավարար»

1. Մեխանիկորեն վերարտադրում է նյութի բոլոր հիմնական հասկացությունները իրենց սահմանումներով:
2. Դժվարանում է տալ բացատրություններ:
3. Կազմում է մեխանիկական հիշողություն պահանջող թեստային առաջադրանքներ (մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ, լրացնել բաց թողնված բառը և այլն):
4. Լուծում է մեկ քայլով, պարզ, ձևանմուշային խնդիրներ (օր.՝ սրտի բոլորաշրջանի կամ արյան բջիջների թիվը հաշվելու վերաբերյալ) որոշակի աջակցությամբ:

5 միավոր –«միջին»

1. Վերարտադրում է ամբողջ նյութը տրամաբանական հաջորդականությամբ, դասագրքային բառերով:
2. Ոչ էական սխալներով կարողանում է հասկանալի բացատրել հիմնական հասկացություններն ու երևույթները:
3. Դժվարանում է վերլուծություններ անել:
4. Ընդունակ է որոշակի հուշումների արդյունքում ուղղել թույլ տված սխալները:
5. Կազմում է երկու-երեք տիպի թեստային առաջադրանքներ՝ գրքային արտահայտություններով:
6. Լուծում է մի քանի քայլով դասագրքային խնդիրներ՝ մասնակի աջակցությամբ:

6 միավոր – «միջինից բարձր»

1. Վերարտադրում է ամբողջ նյութը տրամաբանական հաջորդականությամբ, սեփական բառապաշարով:
2. Կարողանում է ոչ ամբողջական վերլուծություններ անել դասագրքային հարցերի շուրջ:
3. Ընդունակ է թեթև հուշումով ուղղել սխալները:
4. Թերի է ինքնուրույնությունը բարդ հարցադրումներին պատասխանելու, վերլուծություն կատարելու ժամանակ:
5. Կազմում է տրամաբանություն և վերլուծություն պահանջող թեստային որոշ տիպի առաջադրանքներ՝ սեփական շարադրանքով:
6. Լուծում է մի քանի քայլով լուծվող դասագրքային խնդիրներ՝ աննշան հուշումներով:

7 միավոր – «լավ»

1. Վերարտադրում է ամբողջ նյութը տրամաբանական հաջորդականությամբ, հիմնավորում է կառուցվածքային ու ֆունկցիոնալ, պատճառահետևանքային կապերը՝ ոչ էական թերություններով:
2. Կարողանում է կատարել համեմատական վերլուծություններ՝ աննշան աջակցությամբ, օգտագործել միջառարկայական կապեր:
3. Կազմում է կառուցվածքային և գործառնական, պատճառահետևանքային կապերը բացահայտող թեստային առաջադրանքներ՝ ոչ էական թերություններով:
4. Լուծում է 1-2-րդ բարդության շտեմարանային խնդիրներ՝ առանց աջակցության, 3-րդ բարդության խնդիրների լուծման մեջ ունի աջակցության կարիք:

8 միավոր – «շատ լավ»

1. Վերարտադրում է ամբողջ նյութը տրամաբանական հաջորդականությամբ, հիմնավորում է կառուցվածքային ու գործառնական, պատճառահետևանքային կապերը՝ համեմատական վերլուծություններով՝ ոչ էական թերություններով:
2. Կարողանում է ստեղծել ներ և միջառարկայական կապեր, աննշան թերություններով բացատրել երևույթները այդ կապերի շնորհիվ:
3. Կազմում է կառուցվածքային և գործառնական, պատճառահետևանքային, ներ և միջառարկայական կապերը բացահայտող թեստային առաջադրանքներ՝ առանց թերությունների:
4. Լուծում է 3-րդ բարդության շտեմարանային և անձանոթ խնդիրներ՝ որոշակի աջակցությամբ:

9 միավոր – «գերազանց»

1. Վերարտադրում է ամբողջ նյութը տրամաբանական հաջորդականությամբ, առանց թերությունների հիմնավորում է կառուցվածքային ու գործառնությային, պատճառահետևանքային կապերը՝ համեմատական վերլուծություններով, հիմնավորումներով:
2. Կարողանում է երևույթը բացատրել ինտեգրացված, միջառարկայական կապերով:
3. Կազմում է ներառարկայական և միջառարկայական կապերը բացահայտող թեստային առաջադրանքներ:

4. Լուծում է բարդ շտեմարանային, անձանոթ խնդիրներ՝ առանց աջակցության¹ [2; էջ՝ 59-61]:

Գնահատման սանդղակների ստեղծման, ինչպես նաև այլ՝ «Կենսաբանության դասավանդման մեթոդիկայի» ուսումնառության արդյունքում ձեռք բերած գործնական հմտությունները հաջողությամբ կիրառել ենք 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակում հիմնական դպրոցում անցկացրած մանկավարժական պրակտիկայի ընթացքում՝ ուսուցման կազմակերպման առաջին մկրտության ժամանակ:

Եզրակացություն.

1. Գնահատման սանդղակներ անհրաժեշտ է ունենալ ուսումնական գործունեության բոլոր ձևերի (գրավոր, գործնական, ինքնուրույն, նախագծային աշխատանքներ և այլ) համար:
2. Ցանկալի է սանդղակներ ստեղծել սովորողների ներգրավմամբ, ինչը սովորողի համար կհստակեցնի գնահատման պահանջները և կմեծացնի նրանց պատասխանատվությունը ուսումնառության նկատմամբ:
3. Ճիշտ և աստիճանական բարդացված պահանջներով սանդղակի ստեղծումը կօգնի սովորողին հասկանալու իր ձեռքբերումների մակարդակը, թերությունները և դրանք վերացնելու, բարելավելու միջոցներ գտնել:
4. Գնահատման սանդղակների կիրառումը մեծացնում է գնահատման օբյեկտիվությունը, նպաստում ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների առողջացմանը, աշխատանքային փոխվստահության մթնոլորտի ապահովմանը:
5. Մասնագիտական կրթական ծրագրերում «Գնահատման սանդղակներ» թեմայի ուսուցումը հիմք կլինի ուսանողների հմտությունների ձևավորման և հետագայում մասնագիտական արդյունավետ գործունեություն ծավալելու համար:

¹ 1-3 և 10 միավորները սանդղակում չեն ընդգրկվել: 1-3-ը չեն համարվում միավորային գնահատականներ, իսկ 10 միավորը անվանվում է «Բացառիկ», ինչը սովորողից պահանջում է ծրագրային իմացությունից ու չափորոշային նվազագույն պահանջներից բարձր հմտություն-կարողունակություններ (օրինակ՝ բնութագրում է միջազգային օլիմպիական աշակերտների):

СОБСТВЕННЫЕ ПРАКТИЧЕСКИЕ РАБОТЫ СТУДЕНТОВ КАК СРЕДСТВО ОБЕСПЕЧЕНИЯ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ РЕЗУЛЬТАТОВ

Абрамян М. М.

Статья представляет нашу самостоятельную работу. Мы реализовали ее методику изучения на практических занятиях темы «Оценочные шкалы» курса «Методика преподавания биологии». Мы создали «Балльную шкалу оценки устного опроса», которая является одной из составляющих оценки конечного результата, предусмотренного образовательной программой по заданной теме.

Ключевые слова: шкала оценивания, оценивающий компонент, самостоятельная работа, конечный результат.

STUDENTS' PRACTICAL INDIVIDUAL PAPER OF AS A MEANS OF ENSURING THE FINAL OUTCOMES OF EDUCATION

Abrahamyan M. M.

The paper considers our individual paper. We conducted it according to the methodology studied in practical classes on the topic “Evaluation Scales” in the framework of “Biology Teaching Methodology” course. We have created an “assessment scale for an oral survey”, which is one of the components of the evaluation of the final outcome provided by the educational program on the given topic.

Keywords: evaluation scale, the score evaluation component, individual paper, final outcome.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղամյան Ն. Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ // «Էդիթ Պրինտ»: Երևան; 2018: 264 էջ: 16,5 տպ. Մամուլ:
2. Աղամյան Ն. Բուհերում «Դասավանդման մեթոդիկա» դասընթացի գործնական դասերի մեթոդական ուղեցույց: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Պրակ 1: Ընդհանրական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ձեռագիր //ՇՊՀ Գիտխորհրդի կողմից թույլատրված է տպագրության: 2022թ.:

3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշներ:
Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ //«Անտարես»
հրատարակչություն: Երևան: 2006թ.: 124 էջ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Աբրահամյան Մ. Մ. – բակալավրիատ 4-րդ կուրս

ՇՊՀ, Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, Կենսաբանություն

Էլ. փոստ՝ meryabrahamyannn@gmail.com

Գիտական ղեկավար՝ Աղամյան Ն., կենս. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 30.01.2023

**ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ
Սարգսյան Ե. Ա.**

Հոդվածում ներկայացված է գրականության ոգևորող ու դաստիարակող նշանակությունը հայ հասարակությունում՝ ներկայացնելով գրականությունը որպես հայապահպան կարևոր օղակ: Աշխատանքը իրականացնելիս շեշտը մեծապես դրվել է սոցիոլոգիական մեթոդներին: Կատարվել է սոցիոլոգիական հետազոտություն՝ հիմք ընդունելով տեսական և կիրառական ուսումնասիրության արդյունքները:

Բանալի բառեր. գրականություն, դաստիարակել, մշակութային արժեք, ոգեշնչել, հետազոտություն, հասարակություն, մշակույթ:

Հոդվածի արդիականությունը պայամանավորված է այն հանգամանքով, որ գրականությունը մեր ազգային մշակութային արժեքներից մեկն է, ոչ միայն հայրենի հողում, այնպես էլ օտարության մեջ, որն օգնում է պահպանել մեր ազգային ինքնաճանաչումը: Գրականությունը մշակութային արժեք է, և մեր գրական գոհարների տարբեր լեզուներով թարգմանությունները օգնում են օտարների կողմից հայ մարդու ու հայոց երկրի, նրա հոգևոր ու ազգային արժեքների ճանաչմանն ու ընկալմանը: Հայ գրականությունը գեղարվեստական վավերաթուղթ է: Մենք գրականությամբ ենք վերականգնում մեր անցյալի բազում իրողություններ, հայ մարդու մտածողության, գործունեության ու վարքի շատ հատկանիշներ: Գրականությունը և նրան տրված արժևորումները էական նշանակություն ունեն ոչ միայն ժամանակակիցների, այլև գալիք սերունդների համար: Մերօրյա իրականության մեջ գրականությունը ազգային կյանքի ու հայ մարդու ձևավորողը, ոգեշնչողն ու դաստիարակիչն է, հայ մարդու բարոյական, հոգևոր-մշակութային նկարագրի կերտողը: Այդ իսկ պատճառով իրականացվել է թեմայի համապարփակ սոցիոլոգիական ուսումնասիրություն, որը հանդիսանում է գիտական նորույթ: Հոդվածում նպատակին հասնելու համար օգտվել ենք Գ. Ջոհրայի մեջբերումներից, ապա թեմայի ուսումնասիրության հիմք են ծառայել Գրականության տեսության արդի խնդիրները, Ժ. Քալանթարյանի և Հ. Էդոյանի

համատեղ մեկնաբանումը, ինչպես նաև ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում՝ սոցիոլոգիական մեկնաբանմամբ, հետազոտության հիմք են հանդիսացել Կրավչենկոյի և Կյուրեղյանի աշխատությունները:

Հողվածի նպատակն է՝ ուսումնասիրել Շիրակի մարզում բնակիչների կարծիքը հայ հասարակության մեջ գրականության դաստիարակիչ նշանակության վերաբերյալ:

Հողվածի խնդիրներն են՝

- ուսումնասիրել հայ հասարակությունում գրականության նշանակությունը,
- բացահայտել գրականության վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը,
- ուսումնասիրել գրականության վերաբերյալ առկա տեսական գրականությունը:

«...Հայ եկեղեցույն մեջ մկրտութիւնը եւ կնունքը միմիայն ջուրով չըլլար. երբեմն հուրով ու սուրով ալ կը կատարուի. նահատակուած երեխաներուն մկրտութիւնը այսպէս է: Նոր սերունդին գրականութիւնը ճիշդ այս դրոշմը, այս կնիքը կը կրէ իր վրան. ամեն ինչ տառապանք է հոն. ամեն ինչ տառապանք է բողոք: Հայկական ջարդերու ականատես գրականութիւնն է. միտքերը՝ մռայլ, բառերը դաշոյնի պէս փայլատակոյ, մահահոտ եւ արիւնաներկ գրականութիւն հայկական ճակատագրին պէս» (Գր. Զոհրապ) [1]:

Հայ գրականությունն աշխարհի հնագույն մշակութային վավերաթղթերից է: Հայ գրականությունը անցել է ազգային գրականության զարգացման բոլոր փուլերը և մարդկությանը տվել է անփոխարինելի գոհարներ: Մեփական գրերը հայ գրականությանը հաղորդել են նաև ուրույն զարգացման հնարավորություն և անկրկնելիություն [5, էջ 127]:

Քանակական հետազոտություն

Ընտրանքային համախմբության որոշում

Սոցիոլոգիական հետազոտության օբյեկտն են հանդիսանում ՀՀ՝ 16 տարեկանից բարձր քաղաքացիները:

Հարցման թեման է հանդիսանում՝

«Գրականության դաստիարակչական նշանակությունը հասարակության կյանքում»:

Հարցմանը մասնակցել է 153 հոգի:

Վարկածներ

1. Ենթադրվում է, որ գրականությունը շատերի համար մշակութային արժեք է և ոգևորող անսպառ աղբյուր:
2. Ենթադրվում է, որ գրականության և ժողովրդի ճակատագրի միջև մեծ կապ կա և հայ հասարակությունում կարևոր նշանակություն ունի:
3. Ենթադրվում է, որ քաղաքացիների՝ գրականությունից տեղեկացվածությունը գտնվում է միջին մակարդակում:

Քանակական ուսումնասիրության արդյունքները

Աղյուսակ 1.

Գյուղաբնակ	Քաղաքաբնակ
68 44,4%	85 55,6%

Աղյուսակ 2.

Իգական	Արական
139 90,8%	14 9,2%

Հարցվողներից բարձր ցուցանիշ են կազմում 16-22 տարեկան անձինք:

Աղյուսակ 3.

Բարձրագույն	Միջին մասնագիտական	Միջնակարգ (թերի միջնակարգ)	Հետբուհական
76 49,8 %	38 24,8 %	37 24,1%	2 1,3%

Աղյուսակ 4.

Ուսանող	Աշխատող	Աշխատող և ուսանող
84 54,9 %	47 30,7%	22 14,3 %

Այն հարցին, թե ինչ է Ձեզ համար գրականությունը, ստացված պատասխանները ամփոփելով, կարող ենք ասել՝ գրականությունը մեր մտածողության հարստացման միջոցն է: Գրականությունը հոգևոր, ֆիզիկական հանգստություն ու ներդաշնակություն է, հոգևոր կյանքի անբաժան մաս, հայ հասարակության մեծագույն արժեք և մշակույթի կրող:

Այն հարցին, թե ինչպիսի կապ կա գրականության և ժողովրդի ճակատագրի միջև, մեծամասնությունը պատասխանել է՝ այն ամենը, ինչ տեղի է ունենում ժողովրդի կյանքում, արտացոլվում է գրականության մեջ, և եթե ազգի ներկայացուցիչներն անտեղյակ են գրականությունից, այդ ազգը դատապարտվում է կործանման:

Հարցվողների 151-ը (98,7%) գրականությունը համարում են մշակութային խոշոր գանձ, 2-ը (1,3%)՝ ոչ:

Հարցին, թե ինչպիսի դեր ունի գրականությունը հայ հասարակությունում, պատկերը հետևյալն էր. գրականությունը օգնում է ճանաչել մեզ և պահպանել մեր ինքնությունը: Չիմանալ մի շարք կարևոր ստեղծագործություններ և հայտնի գրողների՝ ցույց է տալիս անտարբերությունը հայ գրականության հանդեպ: Ներկայումս մեր հասարակության մեջ գրականությունը ունի երկրորդական դեր, քանի որ սերունդների մոտ գրի ու գրականության հանդեպ հետաքրքրությունը գնալով նվազում է: Ցավոք սրտի, մեր օրերում հասարակության շատ փոքր մասն է հետաքրքրված գրականությամբ՝ չնայած մեր կյանքում ունեցած իր կարևոր դերին:

«Արդյոք գրականությունը համարում եք ոգեշնչման աղբյուր և ինչպիսի՞ն է այն դարձնում Ձեզ» հարցին ստացել ենք հետևյալ պատասխանները, ըստ որի՝ հարցվածների 52%-ը կարծում է, որ հայ գրականությունը ոգեշնչման անսպառ աղբյուր է և օգնում է դառնալ գիտակ, խելացի, գրագետ, ազգային արժեքները գնահատող, տեղեկացված, երագող, հայրենասեր, գրականությունը օգնում է մեզ պահպանել հայի անկոտրում ոգին:

«Դաստիարակվում եք արդյոք գրական երկով, եթե այո, ինչպիսի՞ դաստիարակություն էք ստացել այդ երկերով» հարցին հարցվողներից 83-ը (54,2) նշել են, որ դաստիարակվում են գրական երկով, 18-ը (18,8)՝ ոչ, իսկ մնացած տոկոսներն են կազմում «մասամբ», «չգիտեմ» պատասխանները: Թե ինչպիսիսի դաստիարակություն են ստացել գրական երկերով, ստացանք հետևյալ պատկերը՝ լինել Աստվածավախ, պահպանել մարդկային արժեքները և լինել հայրենասեր, մշակութային, գաղափարական, կրոնական արժեքների կրող:

Որակական հետազոտության արդյունքները: Հոդվածի շրջանակներում իրականացվել է որակական սոցիոլոգիական հետազոտություն՝ ազատ հարցազրույցի տեսքով:

Հարցին, թե *ինչ է Ձեզ համար գրականությունը*, հարցվողները նշել են հետևյալը՝ գրականությունը ինձ համար հենց կյանքն է՝ իր բոլոր կողմերով, վայրէջքներով ու վերելքներով:

Հարցին՝ *ինչպիսի կապ կա գրականության և ժողովրդի ճակատագրի միջև*, հարցվողները նշել են՝ այսօր, նորովի թերթելով մեր գրական ստեղծագործությունները, գերբնական կապ ենք տեսնում

գրականության ու մեր ժողովրդի ճակատագրի միջև, հատկապես պատերազմի թոհուրոհում:

«Արդյո՞ք գրականությունը մշակութային խոշոր գանձ է» հարցին ստացանք հետևյալ պատասխանը՝ միանշանակ այդպես է, քանի որ գրական գործերի հիման վրա են կերտվում մշակութային փառահեղ ներկայացումները՝ թատրոնը, կինոն:

Ամփոփելով, թե *ինչպիսի դեր ունի գրականությունը հայ հասարակությունում*, հարցվողները նշել են՝ գրականությունը կարծես սիրո լեզու լինի, որ սովորեցնում է մեզ սիրելու արվեստը:

Եզրահանգում: Այսպիսով, ելնելով քանակական և որակական հետազոտության արդյունքներից՝ եկանք այն եզրահանգման, որ՝

- Գրականությունը մեր կյանքի կարևորագույն արժեքներից մեկն է և մեծ դեր ունի հայ հասարակությունում, այն մեր մտածողության հարստացման միջոցն է, մեր պատմության խոսուն վկան:
- Գրականությունը ներկայիս ժամանակաշրջանում ազգապահպանման խորհրդանիշներից մեկն է, մեր մշակույթի բաղկացուցիչ մասը, առանց որի մենք չենք կարող պահպանել մեր ազգային ինքնությունը:
- Այն, ինչ տեղի է ունենում հայ ժողովրդի կյանքում, արտացոլված է գրականության մեջ, և եթե ազգի ներկայացուցիչներն անտեղյակ են գրականությունից, այդ ազգը դատապարտված է կործանման:

Ելնելով կատարված ուսումնասիրության արդյունքներից՝ կատարվել են մի քանի առաջարկություններ:

- Որպեսզի հայ հասարակությունում գրականությունից տեղեկացվածության մակարդակը ավելի բարձր լինի, պետք է շատ ուշադրություն դարձնել դպրոցներում «գրականություն» առարկայի ուսուցմանը:
- Երեխաների մեջ սերմանել մշակույթի հանդեպ հետաքրքրություն և սեր՝ կազմակերպելով այցելություններ թանգարաններ, ինչպես նաև առաջարկում ենք դպրոցականների համար այցելությունները դարձնել անվճար՝ այդպիսով խթանելով դպրոցականներին շատ այցելել թանգարաններ և ավելի մոտ լինել արվեստին ու մշակույթին:
- Փոքր տարիքից երեխաներին սովորեցնել շատ կարդալ, քանի որ հաղթող է այն ազգը, որն ունի խելացի և բանիմաց երիտասարդներ:
- Եվ, ի վերջո, սերմանել ՀԱՅԲԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ:

ВОСПИТАТЕЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ ЛЮБВИ К ЧТЕНИЮ В ЖИЗНИ ОБЩЕСТВА

Саргсян Е. А.

В статье представлено вдохновляющее и воспитательное значение литературы в армянском обществе, представлена литература как важное звено в арменоведении.

При выполнении работы акцент был положен в значительной степени на социологические методы, реализовавшие социологическое исследование на основе теоретических исследований.

Ключевые слова: литература, образование, культурная ценность, вдохновение, исследование, общество, культура.

THE EDUCATIONAL IMPORTANCE OF READING IN THE LIFE OF SOCIETY

Sargsyan E. A.

The article presents the inspiring and pedagogical significance of literature in the Armenian society, presenting literature as an important chain in Armenian studies.

During the work the emphasis was placed largely on sociological methods. We have implemented sociological research based on theoretical research.

Keywords: literature, to educate, cultural value, to inspire, research, society, culture.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զոհրապ Գր. Երկերի ժողովածու, «Զանգակ»: Երևան: 2004: էջ 241:
2. Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում (Սոցիոլոգիական հիմնահարցեր), «Ճարտարագետ»: 2003: Երևան: 172 էջ:
3. Կրավչենկո Ա. Ի. Սոցիոլոգիա: «Զանգակ» հրատարակչություն: Երևան: 2004թ.: 386 էջ:
4. Կյուրեղյան Է. Ա. Կիրառական սոցիոլոգիա: «Ճարտարագետ» հրատարակչություն: Երևան: 2006թ.: 201 էջ:

5. Քալանթարյան Ժ., Էդոյան Հ. Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ: ԵՊՀ հրատարակչություն: Երևան: 2016թ.: 330 էջ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մարգարյան Ե. Ա. – բակալավրիատ 4-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Սոցիոլոգիա

Էլ. փոստ՝ yeransargsyan@gmail.com

Գիտական ղեկավար՝ *Հովհաննիսյան Օ., բան. գիտ. թեկն., դոցենտ*

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 02.02.2023

**ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԵՎ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՎ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈւՂԻՆԵՐԸ
Գալստյան Ա. Լ.**

Սույն հետազոտական աշխատանքի իրականացման որոշումը բխում է երկու կետերից. առաջինը թեմայի արդիականությունն է, երկրորդը՝ այն փաստը, թե ինչպես է հասարակության մեծամասնության կողմից ընկալվում այն: Թեմայի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ ժամանակակից քաղաքակրթության մեջ հատուկ կարիքներ ունեցող մարդկանց դերը էլ ավելի է բարձրանում, և մարդիկ սովորում են ժամանակի հետ դիմացինին ընդունել որպես իրավահավասար անհատ՝ անկախ նրա ֆիզիկական ու մտավոր կարողություններից, սոցիալական, ռասայական ու կրոնական պատկանելիությունից: Ներառական կրթությունը ինքնին արդի է, քանի որ այն՝ որպես կրթական նորարարական և իրավահավասար համակարգ, ամբողջ աշխարհում ունի ոչ ավել քան 100 տարվա պատմություն, իսկ Հայաստանում ոչ ավել քան 30 տարվա պատմություն, ուստի այն դեռ պետք է անցնի զարգացման բավականին երկար ճանապարհ:

2014թ.-ին հաստատվեց համընդհանուր ՆԿ-ն համակարգի լիարժեք ներդրմանն ուղղված ծրագիրը, որի համաձայն՝ ՆԿ մասին օրենքը դառնալու էր հանրակրթության օրենքի մի մասը՝ ըստ այդմ հանրակրթական համակարգը նախապատրաստելով համընդհանուր ներառականությանը, որը պլանավորված էր կյանքի կոչել մինչև 2022թ., ինչը մինչ օրս չի իրականացվել: Միննույն ժամանակ թեմայի կարևորությունը գիտակցում են, քանի որ անձնական կյանքիս և մասնագիտությանս բերումով միշտ առնչվում են ներառականության խնդրին: Ինքս էլ արդեն 30 տարի է՝ ունեմ մանկական ուղեղային կատված (ՄՈՒԿ): Ի հավելումն դրա՝ ծնվել և բնակվում եմ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, որը առաջիններից մեկն է ՀՀ տարածքում հաշմանդամություն ունեցող անձանց քանակով, ինչպես նաև մարզում նկատվել է թվի զգալի աճ՝ կապված ՄՈՒԿ-ի ախտորոշման հետ:

Բանալի բառեր. ներառում, կրթություն, ներառող, միջավայր, հարմարեցում, խնդիրներ, խոչընդոտ, վերաբերմունք:

Հողվածի նպատակն է ուսումնասիրել համընդհանուր ներառական կրթության ներդրման միջավայրային և վերաբերմունքի խոչընդոտները Շիրակի մարզում և առաջարկել հնարավոր լուծումներ կամ առաջարկներ, որոնք կօգնեն մեզ հետագայում լիարժեք ներառող միջավայրի ստեղծման գործում ինչպես մարզում, այնպես էլ ՀՀ-ում:

Հետազոտական մեթոդներից կիրառվել են դիտման և զրույցի մեթոդները:

Իրականացրել ենք հետազոտություն Գյումրիի և հարակից համայնքների ութ դպրոցներում՝ Գյումրու թիվ 8, թիվ 29, թիվ 28, թիվ 7, թիվ 11, Աշոցքի միջնակարգ դպրոց, Մարալիկի թիվ 2 հիմնական և Արթիկի թիվ 2 միջնակարգ:

Դիտման հիմնական առարկա ընտրել էինք միջավայրի հարմարեցվածության ուսումնասիրումը և հատուկ կարիքներ ունեցող երեխաների դասապրոցեսին ներգրավվածության ուսումնասիրումը:

Ընդհանուր դիտման արդյունքում կարող ենք ասել, որ Գյումրիում ներառական կրթական համակարգը ճիշտ հիմքեր ունի միայն Գյումրու թիվ 29 հիմնական դպրոցում, քանի որ դպրոցում առկա էր տարրական միջավայրային հարմարեցվածությունը, առկա էր թեքահարթակ ինչպես դպրոցի մուտքի մոտ, այնպես էլ ներսում՝ դեպի երկրորդ հարկ և ապաստարան տեղափոխման համար, առկա էր դասասենյակների ճիշտ կահավորում, ինչը նպաստում է հատուկ կարիքներ ունեցող երեխաների դասապրոցեսի ներգրավմանը և ինքնուրույնության ձևավորմանը: Դպրոցում առկա էր նաև սանհանգույցի հարմարեցում, ինչը, ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ներառական կրթական համակարգը ընդունելու կարևոր տարր է:

Իրականացրել ենք զրույցի մեթոդը նույն դպրոցում սովորող հատուկ կարիքներ ունեցող երեք երեխաների հետ: Նրանք ունեին հենաշարժողական համակարգի, խոսքի և մոտորիկայի հետ կապված խնդիրներ, սակայն զրույցի ընթացքում նշեցին, որ դպրոցում իրենց շատ լավ են զգում, ներգրավվում են դասապրոցեսին, ունեն դպրոցում շատ ընկերներ, ինչը շատ կարևորվում է ներառական կրթության հայեցակարգում և համարվում է հատուկ կարիքներ ունեցող երեխաների սոցիալականացման հիմք:

Միջին վերաբերմունք և հարմարեցվածություն էր առկա Գյումրու թիվ 7, թիվ 11 և թիվ 28 դպրոցներում: Առկա է միջավայրի միջին հարմարեցվածություն, հատուկ սանհանգույց, երեխաները դասապրոցեսին ներգրավվում են, սակայն ոչ լրիվ:

Ներառական կրթության ունիվերսալ դիզայնի շատ վատ օրինակ առկա էր Աշոցքի միջնակարգ դպրոցում. բացակայում էր տարրական հարմարեցվածությունը, թեև դպրոցում առկա էր թեքահարթակ, սակայն այն կառուցվել էր դպրոցի հետնամասում, ինչը նոր կառուցված դպրոցի համար ճարտարապետական շատ մեծ սխալ էր: Իսկ երեխաների ներգրավումը դասապրոցեսին այնքան էլ ակտիվ չէր:

Իսկ Գյումրու թիվ 8 դպրոցում շենքային պայմանները շատ վատն էին, քանի որ այն, լինելով սովետական դպրոց, որևէ կոսմետիկ փոփոխության չի ենթարկվել, սակայն շատ բարձր էր երեխաների ներգրավումը դասապրոցեսին:

Արթիկի և Մարալիկի դպրոցներում փորձում էին գտնել այլընտրանքային տարբերակներ առկա խնդիրների լուծման համար. այն դասարաններին, ուր սովորում էին հատուկ կարիքներ ունեցող երեխաները, դասասենյակներ էին հատկացվում առաջին հարկում, երեխաներին փորձում էին ներգրավել դասապրոցեսին, իսկ դասընկերների վերաբերմունքը դրական էր:

Մեր կատարած հետազոտությունը թույլ տվեց գալ հետևյալ եզրահանգման, որ տվյալ պահին Շիրակի մարզում համընդհանուր ներառական կրթության ներդրման միջավայրայի և վերաբերմունքի հիմնական խոչընդոտները հետևյալն են՝ ներառական կրթության վերաբերյալ ոչ ճիշտ և սահմանափակ գիտելիքներ, մանկավարժների կողմից սխալ մոտեցում կրթական մեթոդին, դպրոցների ոչ ճիշտ կահավորում, որի արդյունքում հատուկ կաքրիները ընդգծվում են:

Միջավայրային խոչընդոտներ: Խոսելով միջավայրային խոչընդոտների մասին՝ հարկ է նշել, որ դրանք առաջանում են ոչ միայն ամբողջ ուսումնառության ընթացքում՝ մանկապարտեզից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ, այլ նաև դրանց հասնելու ամբողջ ճանապարհին: Շատ դեպքերում ֆիզիկական մատչելիությունը բարելավելու համար շենքերն արդիական տեխնոլոգիաներով ձևափոխվում են: Ստացված արդյունքները միշտ չէ, որ գոհացուցիչ են: Միջավայրային խոչընդոտներից մի քանիսն ունեն հիմքային նշանակություն ներառական կրթության ներդրման գործում: Հետազոտության ընդացքում ընդգծվել են առավել կարևորները:

- Թեքահարթակների բացակայություն կամ դրանց չափորոշիչների խախտում, որը վտանգավոր է դարձնում վերջիններիս շահագործումը:

- Թեքահարթակների մասնակի կամ ամբողջական բացակայությունը հաստատությունների ներսում, վերելակների կամ այլ օժանդակող մեխանիզմների բացակայությունը հարկերի միջև տեղաշարժվելու համար: ԿԱՊԿՈւ երեխաների դասընկերները երեխային ձեռքերի վրա են տեղափոխում երկրորդ հարկ: Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխայի և նրան օգնել ցանկացողի համար սա բավականին վտանգավոր քայլ է, և կարող է լուրջ վնաս հասցնել երեխաների առողջությանը:
- Սանհանգույցների հարմարեցվածություն բացակայություն:
- Մննդի կազմակերպման վայրի հարմարեցվածության բացակայություն:
- Սպորտդահլիճի հարմարեցվածության և մասնագետ-ուսուցչի բացակայություն, ով կարող է պարապել ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ:
- Գրադարանի հարմարեցվածության բացակայություն:
- Դասասենյակների և այլ սենյակների դռների համապատասխան լայնքի բացակայություն:

Ներառական կրթությունը ոչ թե հատուկ կարիքներ ունեցող անհատի հարմարեցումն է միջավայրին, այլ միջավայրի հարմարեցումը՝ անհատին [2 էջ 21]: Սակայն Շիրակի մարզում ունենք տվյալ մոտեցման հակառակ մոտեցումը: Հիմնվելով իմ մասնագիտական պրակտիկայի վրա՝ բազմիցս տարբեր դպրոցներում նկատել եմ ամենափոքր տարրական հարմարեցվածության բացակայություն: Օր.՝ մի շարք դպրոցներում հատուկ կարիքներ ունեցող երեխաների դասարաններին դասասենյակ են հատկացրել դպրոցի ոչ թե առաջին, այլ երկրորդ հարկում, ինչը ստեղծել է հավելյալ բարդություններ երեխաների տեղափոխման համար:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար առաջարկում ենք սահուն և փուլային կերպով կոսմետիկ և հիմնանորոգումների միջոցով անցում կատարել միջավայրի համընդհանուր ձևավորման չափանիշներին:

«Համընդհանուր ձևավորում» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Ռոն Մեյսը՝ նկարագրելու համար բոլորի՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի շինություններ կառուցելու գաղափարախոսությունը: Հայտնի են նրա հետևյալ խոսքերը. «Համընդհանուր ձևավորումը արտադրանքի և միջավայրերի նախագծում է բոլոր մարդկանց օգտագործման համար՝ հնարավորինս բացառելով հետագա հարմարեցման կամ փոփոխությունների

անհրաժեշտությունը»։ Մեյսը անվասայլակով էր տեղաշարժվում և անվերջ խնդրում էր, որ շենքերում ապահովվի ֆիզիկական մատչելիությունը։ Ի վերջո նա առաջարկեց շենքերը նախագծելիս հաշվի առնել մատչելիության հանգամանքը՝ խնայելով ժամանակ, գումար և բարելավելով բոլորի կյանքը։ Լայն իմաստով, ճարտարապետական համընդհանուր ձևավորման նպատակն է ապահովել անխտիր բոլոր շինությունների մատչելիությունը բոլորի համար։

Օրինակ՝ համընդհանուր ձևավորման մոտեցումներից է՝

- Ճամփեզրերի կտրվածքները, որոնք ստեղծվել են սայլակով տեղաշարժվողների համար, բայց անհրաժեշտ են անվասայլակներ օգտագործողներին, մանկասայլակով երեխայի հետ զբոսնող ծնողներին, հեծանվորդներին և այլոց։ [5, էջ 12]

Դասավանդման խոչընդոտները։ Խոսելով դասավանդման խոչընդոտներից՝ չենք կարող չանդրադառնալ նյութատեխնիկական ռեսուրսներով հագեցվածությանը, քանի որ բացակայում են **քրայան գրքեր և աուդիո գրքեր տեսողական և լսողական խնդրներ ունեցող անձանց համար**։ Ինչպես նաև չենք կարող չնշել մանկավարժների կողմից ուսուցման ոչ ճիշտ մեթոդների ընտրությունը։

Այս խնդրի լուծման համար տարբերակներից ամենահուսալին կլինի ուսումնառության համընդհանուր ձևավորումը, որը 2000-ականների սկզբին համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխեց կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձևավորում (ՈւՀԶ)։ Այդ պրակտիկան լայն տարածում գտավ ներառման կրթության համատեքստում՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին։ Դեյվիդ Ռոզը և Անն Մեյերը (2005) ՈւՀԶ-ն նկարագրել են որպես տեղեկատվությունը աշակերտներին ներկայացնելու, նրանց սովորածը ստուգելու և դասապրոցեսում ներգրավելու բազմազան միջոցների ամբողջություն [5, էջ 13]։

Մասնագիտական ռեսուրսներ։ Նախ և առաջ չկան կամ սակավաթիվ են այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են՝ ընդհանուր կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ և նրանց աշխատանքի նկարագրությունը։ Մյուս կողմից՝ գրեթե գոյություն չունի հատուկ մանկավարժի և ուսուցչի օգնականի մոդելը։

Ուսուցիչների վերապատրաստում և հետադարձ կապի մեխանիզմներ։ Օրենքով սահմանված կարգով դպրոցին ՆԴ

կարգավիճակ շնորհելուց առաջ բազմամասնագիտական և ուսուցչական անձնակազմը պետք է վերապատրաստվի: Այս մասով խնդիրը առաջին հայացքից գտնվում է բավարար մակարդակի վրա, քանի որ պարբերաբար տարվում են վերապատրաստման աշխատանքներ պետական և հասարակական կազմակերպությունների մակարդակով, ինչպիսին է Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագիրը, որի շրջանակներում մեր թիմը կազմակերպել է վերապատրաստման բազմաթիվ դասընթացներ՝ ներառող կրթության և վերաբերմունքի փոփոխության թեմաներով: Մակայն կարիք կա ավելի խոր մասնագիտական վերապատրաստումների, որոնց արդյունքում մանկավարժը գաղափար կկազմի առանձին խնդիրների մասին, որոնք կարող է ունենալ անձը, որի հետ իրենք տանում են համապատասխան կրթական աշխատանք:

Մտածելակերպի խոչընդոտներ. այս խոչընդոտները առաջանում են մի քանի պաճառներից ելնելով՝

- ներառական կրթության մասին ոչ բավարար գիտելիքներ ունենալու,
- կարծրատիպային և սահմանափակ մտածողության,
- հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հնարավորությունների վերաբերյալ սխալ ենթադրությունների:

Որպես լուծում՝ առաջին հերթին հարկավոր է ազատվել կարծրատիպային մտածողությունից և հասկանալ, որ բոլորս հավասար ենք ու ունենք հավասար իրավունքներ և օրենքով սահմանված պարտականություններ:

Իսկ որպես գործնական քայլ՝ առաջարկում ենք նախ և առաջ ձեռքագատվել բուլինգի և պիտակավորման պատճառ հանդիսացող պետական մակարդակով ընդունված եզրույթների գործածումից դրանք փոխարինելով իմաստով համարժեք, բայց նման շահարկումների առիթ չհանդիսացող բառերով, օրինակ՝ «ներառական կրթություն» եզրույթը փոխարինել «ներառող կրթություն» եզրույթով: Այն թույլ կտա խուսափել այնպիսի խոտան արտահայտություններից, ինչպիսիք են ներառականներ, ներառականի երեխա, ներառականները, ներառականների դասարան և այլն, որոնք պարբերաբար դասապրոցեսի ընթացքում օգտագործվում են մանկավարժների կողմից: Արդյունքում մենք կունենանք հետևյալը՝ ներառող կրթություն, ներառող կամ ներառվողների դասարան և

այլն: Իսկ այն դեպքում, երբ որևէ մեկը հաշմանդամություն ունցող երեխային հարցնի, թե դու այն ներառող դասարանից ես, նա կհաստատի: Ներառական կրթության խտրականությունը կարող ենք դիտարկել հենց «Ներառական կրթություն» հասկացությունից. եթե այն բառացի արմատական վերլուծության ենթարկենք, ապա «ական» մասնիկը հայերենի մեջ առավել հաճախ օգտագործվում է պատկանելիություն ցույց տալու համար, իսկ հատուկ կարիքներ ունեցող անձը որևէ առանձին խմբի չի պատկանում, այլ համարվում է հասարակության լիարժեք անդամ, այսինքն՝ հետևություն. ներառող կրթությունը արտադրանք չէ և չի պատկանում որևէ մեկին: «Ներառող» տարբերակի դեպքում մենք ցույց ենք տալիս հատկանիշ ու գործողություն, ինչը առավել հարիր է կրթությանը: Այս քայլով մենք լուծում կտանք թե՛ կարծրատիպային արտահայտության և թե՛ նրա նույնականացմանը հիվանդության հետ: Արդյունքում կձեռքբազատվենք դրա բաշմանշանակ հոլովածներից, որը հնարավորություն կստեղծի մեզ ազատվելու թե՛ վերաբերմունքային և թե՛ հոգեբանական մի շարք խոչընդոտներից:

Ելնելով վերոնշյալ խնդիրներից՝ հաշմանդամություն ունեցող անձը ամեն օր բախվում է բազմաթիվ խնդիրների, որոնց իրականում չպետք է բախվեր ՀՀ-քաղաքացին, քանի որ դա հանդիսանում է ՀՀ Սամանադրական իրավունքների խախտում: Նշեմ հոդվածներից մի քանիսը:

Հոդված 3.1 Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունը իր իրավունքների և ազատությունների անբաժանելի հիմքն է:

Հոդված 27.1 Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել:

Հոդված 28.1 Բոլորը հավասար են օրենքի առջև:

Հոդված 29., Հոդված 38.1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով:

Ելնելով վերոնշյալ հոդվածներից՝ հարկավոր է մեկընդմիջտ ազատվել այն կարծրատիպային մտածելակերպից, որ հաշմանդամություն ունեցող անձանց կրթությունը պետք է կազմակերպվի հատուկ դպրոցներում կամ ուսումնական հաստատություններում: Եվ այն փաստը, որ ներառող կրթությունն ու միջավայրը ոչ այլ ինչ է, քան մարդու սամանադրական իրավունք, և դրա խախտումը հանցանք է,

հնարվորություն կտա մեզ ավելի մանրամասն ու հետևողական զբաղվել տվյալ խնդրով:

Այս խնդիրները առկա են ուսումնական ցանկացած օղակում՝ նախակրթարանից մինչև համալսարան: Իր առաջնային դերն ունի նաև վերաբերմունքի փոփոխությանն ուղղված այն ջանքերը, որոնք տարվում են ՀՀ-ում՝ մասնավորապես Շիրակի մարզում: Դրանք նպատակ ունեն կրթական ոլորտում հասնել այն արդյունքին, որ բոլորս հավասար ենք: «Երբ բոլորս ներառված ենք, բոլորս հաղթում ենք», սակայն միայն վերաբերմունքը բավարար չէ խնդրի լուծման համար: Կարող եմ բերել իմ սեփական օրինակը և նմանատիպ մի շարք օրինակներ, երբ երեխան անցնում է իր բոլոր կրթական փուլերով ու հասնում մագիստրատուրայի ուսուցման աստիճանի, որի համար ես անսահման շնորհակալ եմ իմ ուսուցիչներին, ովքեր ինձ տնային պայմաններում դարձրին զրաճանաչ: Իմ ուսումնարանի վարպետներին և, իհարկե, ՇՊՀ-ի իմ դասախոսներին, որտեղ ես ոչ մի բոլոր անգամ չեմ զգացել ոչ մի խտրականություն: Միշտ զգացել եմ անսահման սեր ու ջերմություն: Սակայն պետք է հիշել մի բան, որ երբ մի մասի մոտ ստացվում է հաղթահարել միջավայրային խոչընդոտները և հասնել հաջողության, դա դեռ չի նշանակում, որ միջավայրի խնդիրները կարևոր և առանցքային չեն:

**ПРЕПЯТСТВИЯ В ОБРАЩЕНИИ И ПОДХОДУ ОБРАЗОВАНИЯ ВО
ВКЛАДЕ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ В ШИРАКСКОЙ
ОБЛАСТИ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ**

Галстян А. Л.

Решение о проведении данной исследовательской работы вытекает из двух пунктов: во-первых, актуальности темы, во-вторых, из того, как она воспринимается большинством общества. Актуальность темы определяется тем, что роль людей с особыми потребностями в современной цивилизации еще более возрастает, и люди учатся воспринимать другого человека как равноправную личность, независимо от своих физических и умственных способностей, социальной, расовой и религиозной принадлежности. Инклюзивное образование само по себе является современным, потому что оно имеет не более 100 лет истории как инновационной и равноправной образовательной системы во всем

мире, а в Армении – не более 30 лет истории, так что ему еще предстоит пройти долгий путь развития.

В 2014 году утверждена программа, направленная на полное внедрение универсальной системы НИС, согласно которой закон о НП станет частью закона об общем образовании, тем самым подготовив систему общего образования ко всеобщей инклюзивности, которую планировалось реализовать к 2022 году, что до сих пор не реализовано. В то же время осознание важности темы, непосредственное ежедневное столкновение с темой в плане работы и профессиональной деятельности в связи с тем, что у меня детский церебральный паралич (ДЦП) уже 30 лет с 1 года. Кроме того, я родился и живу в городе Гюмри Ширакской области, который является одним из первых на территории РА по количеству людей с инвалидностью, и в области наблюдается значительный рост числа людей с инвалидностью.

Ключевые слова: инклюзив, образование, инклюзивность, среда, адаптация, проблемы, препятствие, отношение.

ENVIRONMENTAL INVESTMENT AND ATTITUDE BARRIERS IN THE CONTEXT OF INCLUSIVE EDUCATION IN SHIRAK REGION

Galstyan A. L.

The decision to carry out this research derives from two points: first, the topicality of the theme, and second, the way it is perceived by the majority of the society. The topicality of the theme is also determined by the role of people with special needs in modern civilization. People learn to accept the other person as an equal individual, regardless of their physical and mental abilities, social, racial and religious affiliation. Inclusive education itself is modern; it has a history of no more than 100 years as an innovative and equal educational system all over the world, and no more than 30 years of history in Armenia, so it still has a long way to go.

At the same time, the selection of the topic is directly connected with my personal life and professional perspectives. I have had cerebral palsy (CI) for 30 years since I was 1 year old. I was born and live in the city of Gyumri, Shirak region, which is one of the first in the RA territory in terms of the number of people with disabilities, as well as in the region, a significant increase in the number of people with disabilities was observed.

In 2014, the program aimed at the full implementation of the universal NIC system was approved. According to the program, the law on PN would become a part of the general education law, thus preparing the general education system for universal inclusion, which was planned to be implemented by 2022 (it has not been implemented until now).

Keywords: inclusion, education, inclusive, environment, adaptation, problems, barrier, attitude.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բուրթ Թոնի, Աինսքոու Մել, (2019). Ներառման ինդեքս: Ներառական արժեքների հիման վրա դպրոցի զարգացման ուղեցույց: «Հայկական Կարիտաս» ԲՀԿ: Գյումրի: 296 էջ:
 2. Ներառական կրթության ռազմավարություն. Դասագիրք. -երկրորդ 610 հրատարակություն: Եր.: «Աստղիկ»: 2020: 312 էջ:
 3. Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինետոթայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Խ. Արոլյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ 2019թ.: 250 էջ:
 4. Ахметова Д. З., Нигматов З. Г., Челнокова Т. А. и др. / Ахметова Д. З. “Педагогика и психология инклюзивного образования”: учебное пособие. – Казань: Познание, 2013. – 204 с.
 5. Дебра Лич. “Прикладной анализ поведения”. Методики инклюзии учащихся с РАС. – М.: "Оперант", 2015. – 176 с.
- Համացանցային պաշարներ**
6. ՀՀ սամանադրություն 8-10-2022թ. Ժ.12:30
<http://www.parliament.am/parliament.php?id=constitution>

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Գալստյան Ա. Լ. - մագիստրատուրա 1-ին կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Հոգեբանություն

Էլ. փոստ՝ arthur.galstyan.91@mail.ru

Գիտական ղեկավար՝ Պապոյան Ա.

Ստացվել է՝ 16.11.2022

Գրախոսվել է՝ 26.02.2023

**ՉԵՏՏՐԱՎՄԱՏԻՎ ՍԹՐԵՄՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵԼՈՂԻՆԵՐԸ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ
ՏԱՐԿՈՂ ՀՈԳԵԲԱՆԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ
Հովհաննիսյան Ե. Ս.**

Պատերազմն ու հակամարտությունը համընդհանուր տրավմատիկ իրողություններ են: Հոգեբանական տրավմաները կարող են կյանքի բոլոր փուլերում իրենց ազդեցությունն ունենալ: Այսպիսի իրավիճակներում մարդուն թվում է, թե կյանքն ու ժամանակը կանգ են առել, որևէ ելք չկա, վերահսկողությունը կորել է: Տրավմատիկ իրողությունը յուրաքանչյուր անձի համար իր առանձնահատուկ նշանակությամբ է հանդես գալիս. մեկի համար կարող է լինել հարազատի մահը, մյուսի համար՝ տան կամ հայրենիքի կորուստը, մեկ ուրիշի համար՝ տարածքային փոփոխությունները:

Հայ հասարակության համար պատերազմի «վերքերը» դեռ շատ խորն են, ժամանակ առ ժամանակ տեղեկատվական լրահոսի պատճառով մարդկանց մոտ կրկին դրսևորվում են տագնապայնության բարձր մակարդակ և խուճապայնություն: Մարդիկ ամեն կերպ փորձում են կենտրոնանալ անձնական և ազգային ռեսուրսների վրա: Պատերազմն ամբողջովին արտակարգ իրավիճակ է, լրիվ նոր և կազմաքանդող իրադրություն: Թվում է, թե տեղեկատվական հոսքի պայմաններում է միայն մարդու մոտ խոր արտահայտում գտնում անհանգստությունը, մինչդեռ տեղեկատվության բացակայությունը նույնպես սթրեսաձին գործոն է և բերում է բարձր տագնապայնության առաջացման: Արցախյան քառասունչորսօրյա պատերազմը նպաստեց մասնագիտական ուսումնասիրությունների և աշխատանքների իրականացման լայնամասշտաբ վերականգնմանը պատերազմական սթրեսային ռեակցիաների հանդեպ, ուսումնասիրությունները տարածվեցին տարբեր ուղղություններով՝ պատերազմական ներքո, մարտական ներքո, պատերազմական հոգնածություն, հետտրավմատիկ սթրեսային խանգարում:

Բանալի բառեր. հոգեբանական, սթրես, հետտրավմատիկ վերականգնողական, խուճապ, պատերազմ, տագնապ:

Մույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել հետտրավմատիկ սթրեսային խանգարման ազդեցությունը հակամարտությունից տուժած անձանց և նրանց ընտանիքների վրա:

Հետազոտական մեթոդներից կիրառվել են՝ «Դեպրեսիայի մակարդակի գնահատման» մեթոդիկա (Ա. Բեկ), «Անհանգստության և դեպրեսիայի ախտորոշման» սանդղակ, «Հետտրավմատիկ սթրեսային խանգարումների (PTSD) ախտորոշում. PCL-5» մեթոդները:

«Տրավմա» բառը ծագել է անտիկ հունարենից (traumatismos) և նշանակում է վնասվածք: «Տրավմա» եզրույթը բնորոշում էր հյուսվածքի կամ օրգանի ամբողջականության խախտումը արտաքին միջավայրի ազդեցությամբ: Հոգեկան ախտաբանության մեջ այս եզրույթը նշանակում է հոգեկան ցնցում (շոկ), որն առաջացնում է խախտումներ հոգեկանի ներսում: Փորձը ցույց է տալիս, որ հանկարծակի և լրջորեն սպառնալից իրավիճակներին անհատների 75%-ը պատասխանում է պարզ ադապտիվ սթրեսի հակազդմամբ, մինչդեռ կոնստիտուցիոնալ ավելի փխրուն անձինք՝ 25%-ը, խոցելի իրավիճակին տալիս են տևական սթրեսի հակազդում՝ դրսևորելով ոչ ադապտիվ և հոգեկանի վրա տևական բացասական հետևանքներ թողնող խանգարումներ: Առաջինները իրադարձությունը չեն վերապրել որպես ցնցում, մյուսները դա որպես ցնցում են վերապրել [1]: «Հոգեկան տրավմա» հասկացությունն առաջին անգամ մասնագիտական գրականության մեջ ներկայացվել է XIXդ. վերջում:

Կոլեկտիվ տրավմաներ: Ըստ սահմանման՝ տրավման անհատական է: Եվ հավաքական պատահարների կամ աղետների դեպքում հաճախ հակված ենք մտածելու, որ գործ ունենք բազմաթիվ անհատական տրավմաների համակցման հետ, որ յուրաքանչյուր անձ տրավմա հարուցող իրադրությունը վերապրում է անհատական ձևով: Բայց, այնուամենայնիվ, այդ պայմաններում բոլոր վերապրողները կամ զոհերն ապրում են որոշ առումով ընդհանուր արտաքին բովանդակություններ՝ դիակների սարսափելի տեսարաններ, վիրավորվածներ, ավերածություններ և այլն, այսինքն՝ հանդիպում են սովորական խաղաղ գոյության և առկա մղձավանջային իրականության սուր հակադրման: Կարևոր է նաև իր սեփական կամ դիմացինի հոգեկան տառապանքի հետ առճակատվելը, ինչպես նաև իրավիճակի ծայրահեղ լրջության գիտակցումը:

Հետտրավմատիկ սթրեսային խանգարման պատճառները և ախտորոշումը: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումը (ՀՏՄ) «Հիվանդությունների միջազգային դասակարգման» մեջ դասվում է սթրեսի հետ ասոցացված խանգարումների շարքին, իսկ «Հոգեկան խանգարումների դիագնոստիկական և վիճակագրական ուղեցույց»-ում՝ Տրավմա և սթրեսով պայմանավորված խանգարումների շարքին: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումն (այսուհետ՝ ՀՏՄ) առաջանում է որպես մնացորդային կամ երկարաձգված հակազդում տրավմատիկ, սթրեսային իրադարձությանը կամ իրավիճակին: ՀՏՄ-ն կարող է զարգանալ պատերազմական և ահաբեկչական գործողությունների մասնակից և ականատես, աղետներից տուժած, դժբախտ պատահարների մասնակից կամ ականատես, ֆիզիկական և/կամ սեռական բռնության ենթարկված անձանց մոտ: ՀՏՄ-ի բնորոշ առանձնահատկություններից են տրավմայի շարունակական վերապրումը՝ կաշուն հիշողությունների, մղձավանջների տեսքով, հարազատներից և ազգականներից օտարացվածությունը, անհեղոնիան: Սովորաբար ՀՏՄ-ով անձը վախենում և խուսափում է այն ամենից, ինչը կարող է հիշեցնել իրեն տրավմատիկ իրադարձության կամ իրավիճակի մասին: Երբեմն կարող է ունենալ վախի կամ խուճապի գրոհներ և ազդեցիկ պոռթկումներ: Նշված ախտանշանների հետ մեկտեղ դրսևորվում են նաև տագնապ և դեպրեսիա, ինքնավնասման և ինքնասպանության մտքեր, ալկոհոլի և թմրանյութերի չարաշահում [2]: ՀՏՄ տերմինը առաջացել է 1980 թվականին, երբ Ամերիկյան հոգեբուժական միությունը DSM-ում ներառվեց սուր հուզական և ֆիզիկական սթրեսի հանդեպ ռեակցիաները [3]: ՀՏՄ-ի մասին պատկերացումները հիմնված են Հ. Սելյեի ադապտացիոն սինդրոմի, Գորովիցի հետտրավմատիկ սթրեսային խանգարման պատասխանի փուլերի, Նեյտրալնդի ապրելու սինդրոմի, Կրիստալի մասսայական տրավմայի աշխատությունների վրա: Այդ երևույթները մանրամասնորեն սկսեցին ուսումնասիրվել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ քնի խանգարումներ, գիշերային մղձավանջներ, դեպրեսիա, հիպերտրոֆիկ հուզական ռեակցիաներ, բարձր գրգռականություն: ՀՏՄ-ի լայն ուսումնասիրություններ սկսվեցին ԱՄՆ-ում 1960-1970թթ.՝ կապված Վիետնամական պատերազմի հետևանքների վերացման հետ: Հետագա հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ խանգարումները բնորոշ են ոչ միայն պատերազմի վետերանների, այլև տարբեր աղետներ տեսած անձանց համար: ՀՏՄ-ն ոչ այնքան ֆիզիոլոգիական, որքան

հոգեբանական երևույթ է [2]: Նրանք հոգեկան տառապանքների մեջ են ընկնում՝ համոզված, որ կարող էին ինչ-որ մեկին փրկել: Այս հոգեվիճակները պատճառ են դառնում դեպրեսիայի համար: Շատ կարևոր է մխիթարանքը: Մասնագետները հիվանդությունը բուժում են հոգեթերապիայի և դեղորայքաբուժության համատեղությամբ: Ցավոք, հաճախ դեղերից կախվածություն է առաջանում, այդ իսկ պատճառով շատ ավելի արդյունավետ է հոգեթերապիան՝ անհատական և խմբային: Այն օգնում է վերականգնել հոգեկան գործընթացները՝ ընկալում, հիշողություն, ուշադրություն, մտածողություն, երևակայություն: Հոգեթերապևտը, պարզելով, թե ինչ գործոններ են խնամառուներին (պացիենտ) խուճապի մատնում, նվազագույնի է հասցնում դրանց հանդեպ նրանց զգայունակությունը, ինչպես նաև օգնում է նրանց տիրապետել ինքնակառավարման մեթոդներին: Նման դեպքերում ավելի արդյունավետ է խմբային հոգեթերապիան, որի ընթացքում աշխատանք է տարվում նմանատիպ խնդիրներով մի շարք խնամառուների (պացիենտ) հետ: Այս պարագայում, բացի հոգեթերապևտից, իրար օգնում են նաև մասնակիցները: Սա օգնում է հաղթահարել միայնակության զգացումը, օտարացումը հասարակությունից, ձևավորվում է կյանքի և շրջապատողների հանդեպ նոր հայացք և դրական վերաբերմունք սեփական անձի հանդեպ [4]: Հիմնական ախտանշանները.

1. Կրկնվող, ոչ կամաձին և կաչուն սթրեսաձին հիշողություններ տրավմատիկ իրադարձությունների մասին, որոնք պատահել են անձի հետ, կամ որոնց ականատես է եղել անձը:
2. Կրկնվող սթրեսաձին երազատեսություններ անցյալում տեղի ունեցած տրավմատիկ իրադարձությունների մասին:
3. Դիստրեսիայի հակազդումներ (օրինակ՝ հանկարծակի առաջացող մտապատկերներ), որոնց ժամանակ անձն այնպես է իրեն զգում և պահում, կարծես տրավմատիկ իրադարձությունը կրկնվում է:
4. Ինտենսիվ կամ երկարատև հոգեբանական դիսթրես՝ տրավմատիկ իրադարձությունը հիշեցնող կամ մարմնավորող իրերի կամ իրավիճակների հետ առնչվելիս:
5. Ակնհայտ ֆիզիոլոգիական հակազդումներ՝ տրավմատիկ իրադարձությունը հիշեցնող կամ մարմնավորող իրերի կամ իրավիճակների հետ առնչվելիս:
6. Կայուն խուսափում տրավմատիկ իրադարձությունների մասին հիշեցնող ազդակներից: Ճանաչողական գործառույթների և

տրամադրության բացասական փոփոխություններ, որոնք դրսևորվում են տրավմատիկ իրադարձության կարևոր ասպեկտները վերհիշելու անկարողությամբ:

7. Մեփական անձի կամ այլոց, աշխարհի վերաբերյալ կայուն և չափազանցված գնահատականների առկայություն (օրինակ՝ «ես վատն եմ», «ոչ ոքի չարժե վստահել», «այս աշխարհը շատ վտանգավոր վայր է»):
8. Տրավմատիկ իրադարձության պատճառների և հետևանքների վերաբերյալ կայուն, աղճատված պատկերացումների առկայություն, կայուն բացասական հուզական վիճակի առկայություն (օրինակ՝ վախ, սարսափ, մեղավորության զգացում, գայրույթ, ամոթ), մարդկանցից օտարացման զգացողություն, դրական հույզեր, ապրելու անկարողություն:
9. Գրգռվածություն և նյարդայնություն:
10. Քնի խանգարումներ:
11. Գերզգոնություն:
12. Ապակառուցողական վերաբերմունք սեփական անձի նկատմամբ:
13. Կենտրոնացման խնդիրներ:
14. Դեպերսոնալիզացիա կամ դերեալիզացիա:

Հատկանշական է, որ կլինիկական ախտանիշները, որպես կանոն, դրսևորվում են տրավմատիկ իրադարձությունից հետո որոշակի թաքնված ժամանակահատվածից հետո (3-ից 18 շաբաթ) և պահպանվում են բավականին երկար ժամանակ (ամիսներ, տարիներ և հաճախ տասնամյակներ): Տասնիններորդ դարի կեսերին իրականացվեց առաջին համապարփակ ուսումնասիրությունը, որը ցույց տվեց ռազմական գործողությունների նախկին շատ մասնակիցների մոտ աճող գրգռվածությունը, անցյալի դժվար հիշողությունների վրա ամրագրվածությունը, իրականությունից փախչելու միտումը և անվերահսկելի ագրեսիայի նախատրամադրվածությունը: Տասնիններորդ դարի վերջին նման ախտանշաններ նկարագրվեցին երկաթուղային վթարից փրկված հիվանդների մոտ, ինչի արդյունքում հոգեբուժական պրակտիկայում մտցվեց «տրավմատիկ ներոզ» տերմինը: Գերմանացի բժիշկները առաջին համաշխարհային պատերազմի մարտական գործողությունների մասնակիցների բուժման ժամանակ պարզել են, որ տրավմատիկ ներոզի կլինիկական նշանները տարիների ընթացքում չեն թուլանում, այլ սրվում են: Այսօր հետտրավմատիկ

սթրեսային խանգարումը հինգ ամենատարածված հոգեբանական պաթոլոգիաներից մեկն է: Հայտնի է, որ հետտրավմատիկ սթրեսը, որը ֆիզիոլոգիական պատասխան է գերուժեղ վնասվածքին, միշտ չէ, որ վերածվում է պաթոլոգիական վիճակի: Շատ բան կախված է ծայրահեղ իրավիճակում անձի ներգրավվածության աստիճանից, օրինակ՝ վկա, ակտիվ մասնակից, տուժող (այդ թվում՝ ծանր վնասվածք ստացածները):

Հակամարտության արդյունքում առաջացած հետտրավմատիկ սթրեսային խանգարման բուժման հոգեբանական մեխանիզմները: ՀՏՄԽ հոգեթերապիան կարող է իրականացվել կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի հիմնական կոգնիտիվ և վարքային տեխնիկաներով, որոնց միջոցով վեր են հանվում դիսֆունկցիոնալ/խորքային պատկերացումները և վիճարկվում, ինչպես նաև խուսափողականությունների գծով իրականացվում է բացահայտման թերապիա և վարքային գիտափորձ ըստ անհրաժեշտության: Սակայն առաջնային կամ զուգահեռ նշանակություն ունեն նաև տրավմատիկ փորձի երկարաձգված էքսպոզիցիան կամ բացահայտումը, կոգնիտիվ մշակումը և գրավոր բացահայտման թերապիան և ինքնավստահության և պաշտպանվածության զգացումի ամրապնդումը: Առավելագույն արդյունքի հնարավոր է հասնել կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի և աչքերի շարժումներով դեսենսիտիզացիա և վերամշակում մեթոդը համադրելով: Սակայն, ի տարբերություն կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի, սա ինքնուրույն իրականացնել հնարավոր չէ: Այս նպատակի համար անհրաժեշտ է ընտրել հոգեկան առողջության ոլորտի մասնագետի, ով տիրապետում է մեթոդին: Հոգեթերապիայի թե՛ սկզբնական և թե՛ հաջորդող փուլերում կարող են կիրառվել ռելաքսացիայի, հողակցման և գիտակցվածության զանազան տեխնիկաներ [14]: Պատերազմը և ռազմական գործողություններն արտակարգ իրավիճակների շարքում առանձնահատուկ տեղում են գտնվում իրենց բացարձակ դեստրուկտիվ և սթրեսածին բազմատեսակ կողմերով՝ մահ և տառապանք, զոհեր և կորուստներ, սոցիալական և բժշկական ինստիտուտների կազմալուծում, առաջնային կարիքների բավարարման կտրուկ բարդացում, ընտանիքների կազմաքանդում, սով և հիվանդություններ, տեղահանում և արտագաղթ, աղքատություն և անհուսություն և այլն:

Ելնելով ուսումնասիրվող թեմայի հետ առնչվող մասնագիտական գրականության հիմնական տեսական մոտեցումներից՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին: Ժամանակակից հասարակությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը, տեխնածին

աղետները, միկրո և մակրո-սոցիալական հակամարտությունները ու պատերազմները հանգեցրել են նրան, որ մարդկանց մոտ աճում է հետտրավմատիկ սթրեսային խանգարումների դրսևորումների թիվը: Այն կարող է զարգանալ պատերազմական և ահաբեկչական գործողությունների մասնակից և ականատես, աղետներից տուժած, դժբախտ պատահարների մասնակից կամ ականատես, ֆիզիկական և/կամ սեռական բռնության ենթարկված անձանց մոտ: Հետտրավմատիկ սթրեսային խանգարման բնորոշ դրսևորումներից են տրավմայի շարունակական վերապրումը՝ կպչուն հիշողությունների, մղձավանջների տեսքով, հարազատներից և ազգականներից օտարացվածությունը, մեկուսացումը, շփման սահմանափակումը: ՀՏՄ-ն բնորոշվում է հոգեկան, վարքային և ֆիզիոլոգիական մի շարք խանգարումներով: Այն ուղեկցվում է դեպրեսիայով, վախի զգացումով, գերգրգռվածությամբ և ազրեսիվությամբ, պատասխանատվության զգացումի բացակայությամբ, հիշողության վատթարացմամբ և գիտակցության մթազնումով, հարազատների նկատմամբ անտարբերությամբ և ընտանիքում ու աշխատանքում ցուցաբերած անպարտաճանաչությամբ: ՀՏՄ-ն կարող է լինել քրոնիկ և բերել մարդու կարողությունների կամ ունակությունների կտրուկ անկում, որը բացասաբար է ազդում ինչպես այդ մարդու, այնպես էլ այլ մարդկանց հետ նրա փոխհարաբերությունների, շփումների և ընտանեկան կյանքի վրա: ՀՏՄ-ի ժամանակ կարող են զարգանալ նաև այլ վիճակներ, օրինակ՝ դեպրեսիա կամ թմրամիջոցների օգտագործում (որպես հոգեկան վերապրումները «բուժելու» փորձ: Մեր կողմից իրականացրած փորձարարական հետազոտության շնորհիվ հանգեցինք հետևյալ եզրակացություններին, որ յուրաքանչյուր անձի և ընտանիքի հետ տարվող հոգեբանավերականգնողական աշխատանքը պետք է լինի համապատասխան առկա իրավիճակին, անհրաժեշտ է դրսևորել մասնագիտական ճկունություն մոտեցումների ընտրման գործում: Հոգեբանի անհրաժեշտ մոտեցումը տրավմայի ենթարկված անձանց հետ աշխատելիս ենթադրում է. այցելուին արժևորել, ցույց տալ, որ կա մեկը, որ իրենց կարող է ուղեկցել իրենց ծանր ապրումների ժամանակ, որ կա մեկը, որ պատրաստ է լսել ցանկացած զրույց: Տրավմատիկ իրողությունից անմիջապես հետո անձինք չեն դիմում աջակցության, օրինակ՝ պատերազմից անմիջապես հետո բոլորին անհանգստացնում է համընդհանուր գոյատևման հարցը, մինչդեռ հակամարտությունից երկու կամ երեք տարի անց, երբ շոկը, համընդհանուր գոյատևման խնդիրը վերացված կլինեն, մասնագի-

տական աջակցությունը կդառնա էլ ավելի արդիական և անհրաժեշտ: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պատերազմական իրողություններից հետո շատերի մոտ առաջացել է հետորավատիկ սթրեսային խանգարում, որը դրսևորվում է քնի խանգարումներով, ախորժակի կորստով, մղձավանջներով, տրավմատիկ իրավիճակի մասին վերհուշերով, հիշողություններով, հոգնածությամբ, հաղորդակցման սահմափակմամբ, առկա էին նաև հոգեւտմատիկ դրսևորումներ՝ մարմնի թուլություն, ուժասպառություն, գլխացավեր, առիթմիաներ և այլն: Տրավմատիկ իրողության հաղթահարումը դյուրին գործընթաց չէ. այն պահանջում է ջանքեր, ժամանակ, ներգրավվածություն, ապրումակցում և հստությունների պաշար:

ПУТИ ПРЕОДОЛЕНИЯ ПОСТТРАВМАТИЧЕСКОГО СТРЕССА В ПСИХОЛОГО-РЕАБИЛИТАЦИОННОЙ РАБОТЕ С ЛИЦАМИ И СЕМЬЯМИ, ПОСТРАДАВШИМИ В ЗОНЕ БОЕВЫХ ДЕЙСТВИЙ

Ованнисян Э. С.

Война и военные конфликты – это общая травмоопасная реальность. Перенесённые психологические травмы могут иметь своё влияние затем на всех этапах жизни человека. В таких ситуациях человеку кажется, что жизнь и время остановились, что нет никакого выхода, что потерян контроль.

Травматическая реальность для каждого человека может проявляться по-разному: для одного это может быть смерть родного человека, для другого – потеря дома, родины, земли.

Для армянского общества раны войны ещё очень глубоки, да и неутешительные информационные новости время от времени вновь и вновь вызывают у людей высокий уровень тревоги и паники. Люди пытаются сосредоточиться на личных и национальных ресурсах. Война – это всецело чрезвычайная ситуация, это абсолютно новая и абсолютно разрушительная реальность. Может показаться, что тревогу может вызвать только новый информационный поток, тогда как на деле отсутствие информации тоже является фактором стресса, вызывающим высокий уровень паники.

Сорокачетырёхдневная война в Арцахе вновь вызвала необходимость масштабного восстановления фронта профессиональных работ и изучения военных стрессовых реакций; исследования проводились по различным

направлениям: военный невроз, боевой невроз, усталость от войны, посттравматическое стрессовое расстройство.

Ключевые слова: психологический стресс, посттравматическая реабилитация, паника, война, тревога.

**WAYS TO OVERCOME POST-TRAUMATIC STRESS
WITH PERSONS AND FAMILIES AFFECTED BY THE CONFLICT
ONGOING PSYCHOLOGICAL REHABILITATION WORK**

Hovhannisyan E. S.

War and conflict are universally traumatic realities. Psychological traumas can affect all stages of life. In such situations, it seems to people that life and time have stopped, there is no way out, control has been lost. Traumatic reality has its own special meaning for each person, for one it can be the death of a relative, for another the loss of a home or homeland, for another territorial changes.

For the Armenian society, the "wounds" of the war are still very deep, from time to time, due to the informational news, people again show a high level of anxiety and panic. People are trying to focus on personal and national resources. The war is a completely emergency situation, a completely new and disruptive situation. It seems that only in the conditions of the information flow, is anxiety deeply expressed in a person, while the lack of information is also a fear-generating factor and leads to the emergence of high anxiety. The forty-four-day of Artsakh war contributed to the large-scale restoration of professional studies and work on war stress reactions, studies spread in different directions: war neurosis, combat neurosis, war fatigue, post-traumatic stress disorders.

Keywords: psychological, stress, post- traumatic rehabilitation, panic, war, anxiety.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաապարյան Խ. Բժշկական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան: 2016: էջ 112-120:
2. Кассиль Г. Н. Внутренняя среда организма. М. Наука. 1978.
3. Кокс Т. Стресс. М. Медицина. 1981.

4. Медведев В. И. Физиология трудовой деятельности (основы современной физиологии) / В. И. Медведев. СПб., 1993. – 552.
5. <https://armanbegoyan.com/hy/2020/10/23/post-traumatic-stress-disorder/> Էլեկտրոնային ռեսուրս, հասանելի է (11.10.22):

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Հովհաննիսյան Ե. Ս. - մագիստրատուրա 1-ին կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Հոգեբանություն

Էլ. փոստ՝ elenahovhannisyanyan18@gmail.com

Գիտական ղեկավար՝ Սահակյան Վ., հոգ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 16.11.2022

Գրախոսվել է՝ 05.02.2023

**ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Գրիգորյան Մ. Ա.

*Հայրենապաշտութեան՝ մարդկային առաքինությունների
այդ աստուածային մօր համար,
Պէտք է ջահ բարձրացնել մեր հոգիների մէջ, մեր դպրոցներում,
մեր ընտանեկան յարկի տակ,
մեր գաղթականական վրանների տակ
Ամէն տեղ, ուր կ'ապրի, կը շնչի հայ մարդը:
Գ. Նժդեհ*

Հաշվի առնելով ժամանակակից ռազմաքաղաքական զարգացումներով բացատրվող մարտահրավերները՝ այսօր ավելի քան երբևէ անհրաժեշտ ենք համարում առանձնակի ուշադրության արժանացնել ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրը, քանի որ մեր հասարակության մէջ «հայրենասիրության ճգնաժամը» հանգեցրել է ինչպէս երիտասարդների, այնպէս էլ նրանց ծնողների շրջանում պարտադիր զինվորական ծառայության նկատմամբ ոչ ադեկվատ վերաբերմունքի: Հիրավի, յուրաքանչյուր ընտանիք, ծնող, լինելով հայ և ապրելով Հայաստանում, պէտք է պահպանի իր ազգային ինքնությունը, ազգային արժեքներով դաստիարակի իր զավակներին, որ հայ լինելու և մնալու պատիվը երբեք չկորցնի պատանին:

Բանալի բառեր. հայրենասիրության ճգնաժամ, նախազորակոչային տարիք, ռազմահայրենասիրական դաստիարակություն, հետպատերազմյան իրականություն, ազգային ինքնություն:

Հայրենասեր, վտանգի պահին զենքը ձեռքին՝ երկիրը պաշտպանելու պատրաստ պատանիների դաստիարակությունը բարդ գործընթաց է, որը չի կարող իրականացվել սոսկ կոչով կամ հրահանգով և սահմանափակվել միայն մեկ սերնդով: Իսկ դա նշանակում է, որ այդ գործընթացը պէտք է լինի ոչ միայն պաշտպանական կառույցների, այլև կրթության, մշակույթի, ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում: Ռազմահայրենասիրական դաստիարակության առջև դրված նպատակ-

ների իրագործման համար անհրաժեշտ է հասնել ներքոնշյալ խնդիրների լուծմանը՝ նախագորակոչային տարիքի անձանց ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետ իրականացման համար համապատասխան պայմանների ապահովում, երիտասարդների զգացմունքային ոլորտում և գիտակցության մեջ հայրենասիրական արժեքների, հայացքների և համոզմունքների հաստատում, Հայաստանի Հանրապետության պատմության, մշակույթի հանդեպ հարգանքի ձևավորում, պետական գիտակցության բարձրացում՝ հատկապես ռազմական ոլորտի գծով, ռազմահայրենասիրական դաստիարակության նոր, առավել արդյունավետ համակարգի մշակում, որը հնարավորություն կտա ապահովելու երիտասարդության մոտ հայրենիքի հանդեպ հավատարմության զարգացման օպտիմալ պայմաններ, հասարակությանը և պետությանը ծառայելու պատրաստակամություն, ռազմահայրենասիրական դաստիարակության ամբողջական համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովող մեխանիզմի ստեղծում [1]: Ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման հարցում կարևոր նշանակություն ունի նախագորակոչային տարիքի անձանց մասնակցությունը զորակոչված ազգականների երդման արարողություններին: Ռազմահայրենասիրական դաստիարակության հարցում կարևոր նշանակություն ունեն պատանու հոգեբանական առանձնահատկությունները: Պատանեկության փուլի կարևորությունն ու առանձնահատուկ տեղը պայմանավորված է նրանով, որ չափահասի և դեռահասի միջև հաստատված և մանկության տարիքին հատուկ հարաբերությունները հենց այստեղ են փոխարինվում այնպիսի փոխհարաբերություններով, որոնք հատուկ են չափահաս մարդկանց շփման պրոցեսներին: Ռազմահայրենասիրական դաստիարակությանը հետպատերազմյան Հայաստանում պետք է ավելի ու ավելի մեծ ուշադրություն դարձնել: Ռազմահայրենասիրական դաստիարակության բացակայությունը լուրջ սպառնալիք է մեր հայրենիքի համար: Խնդիր, որն արդիական է ոչ միայն կրթության և պաշտպանության համակարգի համար, այլև իր արդիականությունն է պահպանում հասարակական զարգացումների ընթացքում [2]: Հետպատերազմյան դպրոցում պետք է ավելացնել նախնական զինվորական պատրաստության ժամերը, դրանք դարձնել առավել հետաքրքիր ու գործնական, կազմակերպել էքսկուրսիաներ դեպի զորամասեր, աշակերտներին ծանոթացնել բանակի առօրյային: Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը երկրի

անվտանգության ապահովման տարրերից մեկն է: Պետք է նախազորակոչային տարիքի անձանց մեջ ռազմահայրենասիրություն սերմանել՝ սկսած դեռևս վաղ տարիքից, և ապա այն ամրապնդել դպրոցական հասակում: Երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունեն ազգային պետականության խորհրդանիշների՝ դրոշի, օրհներգի, զինանշանի նկատմամբ հարգանքը, աշխարհասփյուռ հայություն ունենալու պայմաններում ազգային պետականության գաղափարի շուրջ համախմբումը, այն բանի գիտակցումը, որ մեր երկիրը աշխարհի այլ պետությունների ընտանիքի համահավասար անդամ է [3]: Որպեսզի երիտասարդությունը ոչ միայն պարզապես հաղորդակցվի իր ազգի պատմությանն ու մշակութային արժեքներին, այլև պատրաստ լինի զենքը ձեռքին պաշտպանելու հայրենիքը, անհրաժեշտ է հատկապես նախազորակոչային տարիքի պատանիներին տալ նախնական ռազմական գիտելիքներ և զորային փորձ: Մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը պայմանավորված է նաև բարոյական դաստիարակությամբ: Մանուկ հասակից՝ դեռ ընտանիքում, ձևավորվում են այն հիմնական բարոյական հատկանիշները (ազնվություն, արդարամտություն, բարություն, պարկեշտություն, քաջություն, հավատարմություն, բնկերասիրություն և այլն), որոնք հետագայում վերաճում են բարոյական նորմերի ու արժեքների: Երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունը սերտորեն կապված է նրա հոգեբանական դաստիարակության հետ: Վաղվա զինվորը պետք է մեծանա քաջ, համարձակ, ունենա բարձր բարոյականային հատկանիշներ, չընկրկի դժվարությունների առջև, չվախենա խոչընդոտներից, հավատա իր ուժերին, լինի բարի և ընկերասեր [4]: Այսպիսով՝ նախազորակոչայինների մոտ ռազմահայրենասիրության դաստիարակումը պետք է սկսվի դեռևս մաղ մանկության շրջանից և շարունակվի դպրոցում՝ ճիշտ կարգավորված և նպատակամետ ծրագրերի, մեթոդների շնորհիվ: Ընտանիքում ծնողների վերաբերմունքը հայրենիքի, բանակի, մեր սահմանների վերաբերյալ պետք է լինի այնպիսին, որ երեխայի մեջ սերմանվի հայրենասիրության գաղափարը: Եվ ամենակարևորը, որ յուրաքանչյուր հայ պատանի իր ինքնագիտակցության մեջ, հոգու խորքում, իր ազգային ինքնության դիտանկյունից պետք է հասնի այն գաղափարախոսության յուրացմանը, որ **հայր չի պարտվել, և հայ զինվորը դեռ կհաստ թողած անելիքներ ունի ու երբեք չի հանձնվի:**

ВОЕННО-ПАТРИОТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ –
ГЛАВНАЯ ПРОБЛЕМА ПОСЛЕВОЕННОЙ АРМЕНИИ

Григорян М. А.

Учитывая современные военно-политические вызовы, объясняемые событиями, как никогда, мы считаем необходимым уделить особое внимание военно-патриотическому воспитанию. Однако «кризис патриотизма» в нашем обществе привел как среди молодежи, так и среди их родителей, к неадекватному отношению к обязательной военной службе.

Воистину, каждая семья, каждый армянин, будучи родителем, живущий в Армении, должен сохранить свою национальную самобытность, воспитать своих детей национальным ценностям, чтобы честь быть и оставаться армянином никогда не была потеряна.

Ключевые слова: призывной возраст, воспитание, национальная идентичность, послевоенный кризис патриотизма, военно-патриотическая реальность.

THE PROBLEM OF MILITARY-PATRIOTIC EDUCATION IN POST-WAR
ARMENIA

Grigoryan M. A.

Taking into account the challenges explained by modern military and political developments, today more than ever we consider it necessary to pay special attention to the issue of patriotic military education. As the depression of patriotism in our society has led to an inadequate attitude towards compulsory military service among both young people and their parents, every family being an Armenian and living in Armenia must preserve their national identity, national values and educate their generations, so that they never lose the honour of being and remaining Armenian.

Keywords: depression of patriotism, pre-conscription age, military-patriotic education, post-war, reality, national identity.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթանեսյան Ա., Շարարյան Ա., Ավետիսյան Վ. Ձեռնարկ ՀՀ զինված ուժերի անձնակազմի համար: Երևան: 2012թ.: 181 էջ:

2. Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները: Հանրապետական գիտաժողովի նյութեր: Եր.: «Աստղիկ»: 2013թ.: 276 էջ:
3. Քոուփլենդ Ն. Հոգեբանությունը և զինվորը: Եր.: «Լուսակն» հրատ.: 2007թ.: 143 էջ:
4. Кузнецова Л. Э. Формирование психологической готовности юношей к прохождению обязательной военной службы в ВС РФ с точки зрения ресурсного подхода. М.: 2002г., 56 с.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Գրիգորյան Մ. Ա. – բակալավրիատ 3-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Հոգեբանություն

էլ. փոստ՝ mariamgrigoryan152002@gmail.com

Գիտական ղեկավար՝ Թադևոսյան Ա., հոգ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 17.11.2022

Գրախոսվել է՝ 05.02.2023

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԴԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ
Պողոսյան Է. Ե.**

Մեր հոդվածում տեղ են գտել երեխաների հետ կիրառվող հմտություններն ու առանձնահատկությունները, ինչպիսի միջոցներ կիրառել, որպեսզի հաջողված արդյունք գրանցվի, քանի որ մեր աշխատանքի կիզակետում են երեխաները՝ ամենազգայուն ու ամենաանպաշտպան էակները, որոնց հետ աշխատելիս պիտի հնարավորինս հմուտ և զգուշավոր լինել:

Բանալի բառեր. սոցիալական մշակույթ, հանդուրժողականություն, խտրականության բացառում, կարծրատիպերի կոտրում, իրավունք, պաշտպանություն, անվտանգություն, ապահովություն, ինքնազարգացում, դաստիարակություն, աջակցություն:

Հոդվածի նպատակը: Առաջարկել մասնագիտական գրագետ աջակցություն երեխաների հետ աշխատելիս:

Թեմայի արդիականությունը: Բոլորիս էլ հայտնի է այն միտքը, որ մանկությունը յուրաքանչյուրիս կյանքի կարևորագույն և անբաժան փուլն է, և այդ փուլը պիտի հիմք հանդիսանա ապագային, այն ապագային, որը պիտի կերտվի հաստատուն և կայուն, իսկ դրա համար անհրաժեշտ է ճիշտ պահին ու ժամանակին բոլոր հարցերին ու եղած խնդիրներին հստակ լուծում տալ և բավարարել պահանջմունքները:

Երեխաների պահանջմունքների անբավարարության մասն են եղել համավարակը և պատերազմական իրողությունների հետքը: Դրանցով պայմանավորված՝ ոտնահարվեցին կրթության, անվտանգության, ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունքները:

Նորույթի հիմնավորումը: Մեր հոդվածում ներկայացված է մասնագիտական նորարար գործիքակազմ, որի կիրառումը երեխաների հետ աշխատելիս մասնագետին հնարավորություն կտա հասնել ցանկալի արդյունքի:

Գրականության վերլուծություն: Հոդվածը գրելիս ուսումնասիրել ենք հետևյալ ձեռնարկները: Սոցիալական աշխատանքի վերապատրաստման դասընթացի նյութեր նախակրթարանի աշխատակիցների համար: Սոցիալական աշխատանքի ձեռնարկ ուսուցիչների համար: Սոցիալական աշխատանքի հիմունքները: Սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչները: Սոցիալական մանկավարժություն, բուհական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն /2017թ./: Средства массовой информации и права ребенка. Справочник для журналистов, составленный самими журналистами. Разработано MediaWise для ЮНИСЕФ; Второе издание 2005г. при сотрудничестве с Региональным Представительством ЮНИСЕФ По странам Центральной и Восточной Европы и СНГ MediaWise&UNICEF; 2005г.: Ինչպես նաև ուսումնասիրել ենք ՀՀ Օրենքը երեխայի իրավունքի մասին, Երեխաների իրավունքի պաշտպանության 2022թ.-ի տարեկան ծրագիրը և ՀՀ Օրենքը Սոցիալական աշխատանքի մասին, 2018թ.:

Երեխաները միանգամից և հեշտությամբ են համակերպվում երջանկության հետ, քանի որ իրենց էությամբ նրանք իրենք են ուրախություն և երջանկություն... Վ. Հյուզո

Երեխան իր ընտանիքի և համայնքի մի մասն է: Ցանկացած երեխա ունի ընտանեկան խնամք ստանալու իրավունք: Երեխային հասուն հաստատություն տեղավորելը պետք է ամենաձայրահեղ քայլը լինի: Եվ ոչ մի դեպքում երեխաների համար նախատեսված հասուն հաստատությունները չպետք է խոշոր և լքված անկյուն հիշեցնեն: Հաստատություններում երեխաների տեղավորումը, նույնիսկ լավագույն մտադրությունների դեպքում, խոչընդոտում է նրանց մտավոր, ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացումը: Որքան ավելի վաղ հասակում է երեխան տեղավորվել նման կարգի հաստատություններում և որքան ավելի երկար ժամանակ է այնտեղ գտնվել, այնքան ավելի մեծ է նրան հասցվող վնասի չափը: Լավագույն դեպքում հաստատություններում գտնվող երեխաները գրկվում են իրենց ներուժը զարգացնելու հնարավորություններից, վատագույն դեպքում՝ իրենց ամենահիմնարար իրավունքներից: Թեև երեխայի՝ ընտանիքից բաժանումը երբեմն միակ տարբերակն է, այնուամենայնիվ բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, թե որքան դժվար է պետության համար հանդես գալ «լավ ծնողի» դերում: Չկրթված կամ անտուն մարդկանց, հանցագործություն կատարած կամ հակասոցիալական

վարք դրսևորած անձանց, մարմնավաճառությամբ զբաղվողների, անչափահաս տարիքում հղիության դեպքերի, գործազրկության և աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալներում գերակշռում են հասարակության այն անդամները, ովքեր զրկված են եղել ընտանեկան խնամքից: Հաշվի առնելով հաստատության բացասական ազդեցությունը և ընտանիքում խնամքի կազմակերպման անհնարիությունը՝ ընդգծում են սոցիալական աշխատանքի ծառայության անհրաժեշտությունը՝ որպես մասնագիտական միջամտություն: Վերը թվարկված ռիսկերը կանխելու և կյանքի նորմալ զարգացումը ապահովելու համար մասնագետները պետք է հոգ տանեն, որպեսզի բավարարվեն երեխաների էմոցիոնալ պահանջմունքերը, որոնք են՝ սիրո և անվտանգության, նոր փորձի, գովասանքի և գնահատման, պատասխանատվության պահանջմունքները:

Այս պահանջմունքները պետք է բավարարված լինեն երեխայի կյանքի հենց սկզբից, որպեսզի օգնեն նրան չափահաս մարդ դառնալու համար: Անշուշտ, հասունության տարբեր փուլերում դրանց կարևորությունը փոխվում է, ինչպես նաև փոխվում է դրանց բավարարելու միջոցները: Հիմնական պահանջմունքներն են.¹

1. Միրո և անվտանգության պահանջմունքը: Սա ամենակարևորն է, քանի որ հիմք է հետագա փոխհարաբերությունների համար /ընտանիքի, ընկերների, գործընկերների հետ և այլն/: Սրանից է կախված անձի առողջ զարգացումը, հոգատարության ընդունակության առաջացումը, ինչպես նաև այն, որ անհատը ժամանակի ընթացքում դառնա սիրող և հոգատար ծնող: Այս պահանջմունքը պետք է երեխայի մոտ բավարարված լինի կյանքի առաջին իսկ օրից, որի բավարարմանը պետք է նպաստի նախ՝ մայրը, հետո՝ հայրը, այնուհետև՝ միկրոշրջապատը: Ծանոթ միջավայրի նկատմամբ անվտանգության զարգացումը նպաստում է, որ երեխայի մոտ ձևավորվի վստահության զգացում, և որ երեխան համարի իրեն անհատական և անկրկնելի էակ:

2. Նոր փորձի պահանջմունք: Միայն այս պահանջմունքի ադեկվատ բավարարման դեպքում մանկության շրջանում երեխայի մոտ ունակությունները կզարգանան ճիշտ ձևով: Ինչպես սնունդն է անհրաժեշտ ֆիզիկական աճի համար, այնպես էլ նոր փորձն է

¹Սոցիալական աշխատանք /վերապատրաստման դասընթացի նյութեր նախակրթարանի աշխատակիցների համար/, Գյումրի-2018թ., էջ 45:

կարևոր մտավոր զարգացման համար: Երեխաները նոր փորձ են ձեռք բերում խաղի միջոցով կամ սովորելու ընթացքում: Սովորելու համար կարևոր են ոչ միայն երեխայի ընդունակությունները, այլ նաև շրջապատը: Ընտանիքում առկա էմոցիոնալ և մշակութային եղանակը, ինչպես նաև ծնողների ներգրավումը և ձգտումը կարող են նպաստել երեխայի սովորելուն կամ էլ սահմանափակել նրա ընդունակությունները: Խաղը բավարարում է նոր փորձի պահանջմունքին երկու ձևով. այն թույլ է տալիս երեխային ճանաչել աշխարհը և ապահովում այն միջոցները, որոնք ղեկավարվում են և լուծում կոնֆլիկտային էմոցիաները՝ թույլ տալով երևակայությանը՝ հաղթահարելու իրականությունը և տրամաբանությունը: Երեխայի ինտելեկտուալ զարգացման համար կարևոր է նաև խոսքը, բայց պետք է նրա հետ ոչ միայն խոսել ակտուալ հասկանալի և բովանդակալի: Խոսքն օգնում է մտածել, ինչպես նաև օգնում է շփման կայացմանը: Դպրոց հաճախելը նույնպես հանդիսանում է նոր փորձ: Երեխայի առաջընթացը կախված է ուսուցչից՝ նրա հետ հարաբերություններից, նրա համոզմունքներից: Հետաքրքրությունների ընդլայնումը և նոր գաղափարների ընկալումը վարակիչ են, և այստեղ ուսուցիչը մեծ դեր ունի, որպեսզի երեխայի մոտ առաջացնի հետաքրքրություն և սեր նորի նկատմամբ:

3. Գովասանքի և գնահատման պահանջ: Չափահաս դառնալու համար պետք է շատ բան սովորել էմոցիոնալ, սոցիալական և ինտելեկտուալ ոլորտում: Երեխան հասնում է դրան այն մարդկանց շնորհիվ, ովքեր հոգ են տանում նրա մասին, որոնցից էլ պահանջվում է գովասանք և գնահատում: Ուսուցիչները ևս մեծ դեր են խաղում այս պահանջմունքը բավարարելու համար նաև այն պարզ պատճառով, որ երեխան օրվա մեծ մասը անցկացնում է դպրոցում: Մանկավարժները պետք է գիտակցեն, որ յուրաքանչյուր երեխա ունի թաքնված պոտենցիալ, որը պետք է բացահայտել, և չպետք է ամեն մի անհաջողություն դիտել որպես կարողությունների սահմանափակում:

4. Պատասխանատվության պահանջմունք: Այս պահանջմունքը բավարարարելու համար երեխան պետք է ունենա սեփական անկախությունը, նաև երեխան պետք է լինի ազատ սնվելիս, լվացվելիս, որպեսզի նա լինի պատասխանատու այդ գործի համար: Նրա զարգացման հետ զուգահեռ պատասխանատվությունը պետք է մեծանա՝ տալով ազատություն իր գործերում: Իսկ հետագայում, դառնալով չափահաս, պետք է լինի պատասխանատու նաև այլ

մարդկանց նկատմամբ: Երեխային ազատություն տալ չի նշանակում, որ ծնողները չպետք է հայտնեն սեփական տեսակետը, մատների արանքով նայեն այն ամենին, ինչը երեխան անում է: Այլ, ընդհակառակը, երեխաները վերահսկողության և ուղղորդման կարիք ունեն: Ծնողները պարտավոր են սովորեցնել՝ ինչն է թույլատրելի, և ինչը՝ ոչ, հնարավոր վտանգավոր հետևանքներից խուսափել, ուրիշների ցանկությամբ չառաջնորդվել: Ծնողները նոր փորձի յուրացումը պետք է դեկավարեն, որը պետք է նաև հետզհետե մարի: Պետք է լինի համաչափություն նոր տեղեկություն հաղորդելու և խորհրդի միջև, մի կողմից պետք է ազատ որոշում կայացնելու հնարավորություն տալ, միաժամանակ պետք է պատրաստակամ լինեն օգնելու և միջամտելու, եթե դրա կարիքը կա:

Սոցիալական աշխատողներն իրենց պրակտիկայում /փորձաշրջան/ կենտրոնանում են ոչ թե ընդհանրապես երեխաների, այլ հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի վրա:

Մանկության պաշտպանությունը ընդհանուր առմամբ դրված է պետության և հասարակության վրա, կանոնակարգվում է օրենքներով և երաշխավորվում է գործող սոցիալական համակարգերի մեխանիզմներով:

Հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխան ունի պետության և նրա համապատասխան մարմինների կողմից պաշտպանության, խնամքի, դաստիարակության և օգնության իրավունք: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են նման երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ որդեգրման, խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու և խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան մանկատներում տեղավորելու միջոցով:

Խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնվում երեխայի դաստիարակության հաջորդականության ապահովումը, մայրենի լեզուն, տարիքը, սեռը և այլն:

Երեխայի որդեգրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Ելնելով երեխայի, նրա օրինական ներկայացուցիչների շահերից՝ պետությունը և նրա համապատասխան մարմինները երեխայի կենսապայմանների, առողջական վիճակի գնահատումը կատարում են

գաղտնի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Երեխան 16 տարին լրանալուց հետո ունի ինքնուրույն ապրելու իրավունք՝ բավարար կենսապայմանների, պետության և նրա համապատասխան մարմինների կողմից նյութական օգնության և որոշակի պայմանների ստեղծման դեպքում²:

Սոցիալական ծառայություններ երեխաների հետ: Սոցիալական աշխատանքում շատ կարևոր է նաև ապահովել հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաներին /ՀՊԿՈՒԵ/ ուղղված արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացումը, մշակել քաղաքականություն, գործակալությունների չափորոշիչներ և ուղենիշներ, որոնք պաշտպանում են ՀՊԿՈՒԵ-ի իրավունքները, մշակել և իրագործել օրենքներ այդ ուղղությամբ, ապահովել վարչական, առողջապահական և կրթական վերահսկողություն այս խմբի նկատմամբ: Ընդհանուր առմամբ՝ ՀՊԿՈՒԵ-ի խնդիրը Հայաստանում համարվում է համեմատաբար նոր երևույթ: Իրականում այս խնդիրն ահագնացող է դարձել միայն վերջերս՝ հետխորհրդային շրջանում: Սակայն Խորհրդային Հայաստանում հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների խնդրի «բացակայությունը» բավականին արհեստական էր: Այս խնդիրը կանխելու նպատակով, որը հակասում էր խորհրդային սոցիալական «երջանիկ մանկություն» գաղափարին, Խորհրդային պետությունը երեխաների համար հաստատեց գիշերօթիկ հաստատությունների մի համակարգ (մանկատներից, որբանոցներից ու գիշերօթիկ դպրոցներից սկսած մինչև ուղղիչ դպրոցներ, դաստիարակչական գաղութներ և խիստ ռեժիմի ուղղիչ տներ): Սակայն իրենց երեխաների համար կարիքների բավարարման և իրավունքների իրականացման առումով սրանք լավագույն լուծումը չէին, քանի որ հաստատություններում երեխաների մոտ չբավարարված էին մնում մի շարք պահանջմունքներ: Բացի այդ՝ հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների խնդիրներն այնքան էլ մշակութային նկատելի չէին հասարակությունում՝ պայմանավորված մշակութային առանձնահատկություններով, քանի որ երեխան արժևորված էր և նրան խնամում էին ընտանիքում: Անցած տասը տարիների ընթացքում հանրապետության տնտեսության կենտրոնացված պլանային համակարգից ազատ շուկայական հարաբերությունների անցման գործընթացը բերեց տնտեսության անկման, հետևաբար՝ բնակչության կենսամակարդակի

խիստ իջեցման, աղքատության խորացման, դրա տարածվածության, սրության մեծացման և հասարակության բևեռացման:

Իսկ վիճակն էլ ավելի է դժվարանում՝ կապված համապատասխան ինստիտուտների և սոցիալական ծառայությունների բացակայության հետ: Մինչ այսօր շարունակում է գործել դեռ Խորհրդային Միությունից մեզ մնացած՝ երեխաների համար նախատեսված անարդյունավետ ինստիտուցիոնալացված համակարգը: Այդ ծառայությունները կարելի է դասակարգել այսպես.

- ✓ ընտանեկան սոցիալական ծառայություններ,
- ✓ վնասը կանխող ծառայություններ,
- ✓ այլ սոցիալական ծառայություններ:

Որքան էլ կարևորենք երեխաների խնամքով զբաղվող հաստատություններում արհեստավարժ մասնագետների ներկայությունը և նրանց մասնագիտական միջամտությունը, երեխայի ընթացիկ և հետագա զարգացման համար, միևնույնն է, հաստատությունը չի կարող փոխարինել ընտանիքին, իսկ պետության համար դժվար է հանդես գալ որպես լավ ծնող:

Երեխաների հետ սոցիալական աշխատանքի էությունը կարելի է ներկայացնել հետևյալ կետերով.

1. Խորհրդատվություն, որի նպատակն է երեխայի հոգեվիճակի թեթևացումը: Օրինակ՝ հաճախ ամուսնալուծության գործընթացում ծնողները, ծանրաբեռնված լինելով սեփական խնդիրներով, մոռանում են երեխայի մասին, որն այդ ժամանակահատվածում հատկապես կարիք ունի մեկի, որի հետ կարողանար կիսվել իր ապրումներով, ստանալ որևէ տեղեկություն և այլն: Այդ դերը իր վրա կարող է վերցնել սոցիալական աշխատողը, որն աշխատելով ամբողջ ընտանիքի հետ՝ պարտավոր է օգնել նաև երեխային:

2. Խնդրի լուծմանն ուղղված հնարավոր գործնական քայլերի իրագործում՝ ներառյալ ֆինանսական ռեսուրսների փնտրումը: Այսինքն՝ պաշտպանել խորհրդատուին պետական հիմնարկությունների և մասնավոր կազմակերպությունների առջև:

3. Վերահսկում, այսինքն՝ աշխատելով երեխայի հետ (անկախ նրանից, թե որտեղ՝ դպրոցում, ընտանիքում, մանկատանը, հիվանդանոցում, գաղութում և այլն)՝ սոցիալական աշխատողը պարտավոր է հետևել երեխային և նրա շրջապատին՝ երեխային վնասելու գործընթացը ժամանակին նախազգուշացնելու կամ կանխելու նպատակով:

Եվ այսպիսի մասնագիտական աշխատանքի նպատակներն էլ հետևյալն են.³

1. Սոցիալական դեպք վարողները պետք է կարողանան աշխատել երեխայի՝ որպես յուրահատուկ այցելուի և նրա ծնողների կամ ընտանիքի այլ անդամների հետ, ինչպես նաև պետք է կարողանան զարգացնել տրամաբանորեն կապակցված և «փորփրոդ» հարցեր ձևակերպելու իրենց հմտությունները, որպեսզի առավել ամբողջական տեղեկություններ հավաքեն երեխայի և նրա ընտանիքի մասին, որքանով այդ տեղեկություններն առնչվում են առկա հիմնախնդիրներին, արգելքներին և ուժեղ կողմերին:

2. Սոցիալական դեպք վարողները պետք է կարողանան գնահատել այցելուի, նրա ընտանիքի և միկրոմիջավայրի այլ անդամների ուժեղ կողմերը և դրանք օգտագործել հիմնախնդիրները լուծելու և արգելքները վերացնելու նպատակով:

3. Սոցիալական դեպք վարողները պետք է կարողանան անհրաժեշտության դեպքում ընտանիքի յուրաքանչյուր անդամի ներգրավել երկխոսության մեջ, որը կնպաստի առկա և անհայտ հիմնախնդիրների հետ կապված զգացմունքների և պահանջմունքների բացահայտմանը:

4. Սոցիալական դեպք վարողները պետք է կարողանան ձևակերպել այնպիսի հարցեր, որոնց օգնությամբ ստացված տեղեկությունը նպաստի լիարժեք և ճշգրիտ գնահատմանը, որտեղ գնահատումը դիտվում է որպես շարունակական գործընթաց:

Անշուշտ, պակաս կարևոր չէ սոցիալական աշխատանքը երեխաների ծնողների հետ: Ծնողները պետք է իմանան, որ.⁴

- Իրենց երեխայի ընդունակությունները բացառիկ են:
- Երեխաները չպետք է դառնան ընտանիքի համար ամեն ինչ:
- Ծնողական «կույր» սիրո պայմաններում վտանգվում է երեխայի հաջող սոցիալականացման գործընթացը:
- Ընտանիքում կոնֆլիկտները երեխաների մոտ առաջացնում են խիստ ճնշվածություն:
- Երեխայի անձնային ռեսուրսները (ինչ-որ առումներով) նույնպես կարող են սահմանափակ լինել:

³ Սոցիալական աշխատանքի ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2016թ., էջ 36:

⁴ Հարությունյան Ն., Ղազարյան Ա., Ղուկասյան Լ. Սոցիալական մանկավարժություն, բուհական ձեռնարկ, ԵՊՀ, 2017, էջ 305:

- Երեխաներն ունեն ոչ սովորական վարքագիծ. շատ հաճախ անհանդուրժող են, արագ փոխվում է նրանց տրամադրությունը:
- Անհրաժեշտ է հետևել նրանց տարիքային զարգացման կենսաբանական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին:

Եզրահանգում: Երեխաների պաշտպանության հիմնահարցերի լուծման քաղաքականության հիմնական ուղղվածության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում երեխաների խնամքը, կրթությունը և պաշտպանությունն իրականացնող հաստատությունների գործունեության բարելավումը՝ հաշվի առնելով մանկատներում, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման անհրաժեշտության խնդիրը: ՀՀ-ում երեխաների խնամքի և պաշտպանության ապահովումն իրականացվում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Հայաստանում երեխաների պաշտպանությունը բազմաթիվ մարտահրավերների առջև է կանգնած, քանի որ երկրում երեխաների իրավիճակը խնդրահարույց է: Իրական խնդիրները ներառում են աղքատության ու գործազրկության, ինչպես նաև միգրացիայի բարձր մակարդակ՝ կնոջ կողմից ղեկավարվող ընտանիքների քանակի աճով, երեխաների խնամքի լիարժեք համակարգի և այլընտրանքային խնամքի ծառայությունների բացակայություն, խնամքի հաստատություններում մեծ թվով երեխաների առկայություն, քաղաքացիական թույլ հասարակություն և այլն: Երեխաները՝ որպես հասարակության առավել խոցելի խումբ, տառապում են այս հանգամանքների պատճառով:

Երեխայի հետ աշխատելիս անհրաժեշտ է հիշել, որ երեխաների հետ սոցիալական աշխատանքը զբաղեցնում է հատուկ տեղ, քանի որ այստեղ սոցիալական աշխատողը գործ ունի դեռ ոչ հասուն, զարգացման և անհատի կայացման գործընթացում գտնվող, անպաշտպան և խոցելի էակի հետ:

Ի տարբերություն մեծահասակների՝ երեխան ոչ միշտ կարող է գիտակցել, որ ինքն ունի այս կամ այն խնդիրը, իսկ եթե նույնիսկ անհանգստություն է զգում, ապա շատ հաճախ չի հասկանում դրա պատճառները կամ չի կարողանում այն ձևակերպել, հետևաբար հաճախ չգիտի՝ ում դիմել մասնագիտական օգնություն ստանալու համար:

Երեխաները մեր ապագայի կերտողներն են. հեռանկարային ապագա կերտելու համար հարկավոր է վերաձևավորել նրանց ներկան:

ПРОФЕССИОНАЛЬНЫЕ СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ И ПРИОРИТЕТЫ В СОЦИАЛЬНОЙ РАБОТЕ С ДЕТЬМИ

Погосян Э. Е.

В нашей статье нашли место навыки и характеристики, применяемые при работе с детьми, использование средств для достижения успешного результата, так как в центре нашей работы дети - самые чувствительные и самые незащищенные существа, с которыми нужно быть максимально умелым и осторожным.

Ключевые слова: социальная культура, толерантность, исключение дискриминации, ломка стереотипов, право, защита, безопасность, защищенность, саморазвитие, воспитание, поддержка.

MODERN PROFESSIONAL APPROACHES AND PRIORITIES IN THE SOCIAL WORK WITH CHILDREN

Pogosyan E. E.

The paper examines skills and peculiarities required for child care: what kind of practical skills are needed to achieve successful results. Children are the most sensitive and defenseless segment of the population, with whom you need to work very skillfully and carefully.

Keywords: social culture, tolerance, exclusion of discrimination, break the stereotypes, rights, protection, security, safety, self-development, upbringing, support.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Անցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենք, 2018թ., <https://www.e-draft.am/projects/1027/about>:
2. Երեխաների իրավունքի պաշտպանության 2022թ.-ի տարեկան ծրագիր: <https://www.e-gov.am/gov-decrees/item/37020/>
3. ՀՀ Օրենքը երեխայի իրավունքի մասին <https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115>:

4. Սոցիալական աշխատանք /վերապատրաստման դասընթացի նյութեր նախակրթարանի աշխատակիցների համար/: Գյումրի: 2018թ.: Էջ 120:
5. Սոցիալական աշխատանքի ձեռնարկ ուսուցիչների համար: Երևան: 2016թ.: Էջ 75:
6. Սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչներ, մշակվել է «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիայի նախաձեռնությամբ՝ Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ: Երևան: 2015թ.: Էջ 58:
7. Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ. Սոցիալական մանկավարժություն, բուհական ձեռնարկ: ԵՊՀ հրատարակչություն: 2017թ.: Էջ 338:
8. СРЕДСТВА МАССОВОЙ ИНФОРМАЦИИ И ПРАВА РЕБЕНКА. Справочник для журналистов, составленный самими журналистами. Разработано MediaWise для ЮНИСЕФ; Второе издание 2005г. при сотрудничестве с Региональным Представительством ЮНИСЕФ по странам Центральной и Восточной Европы и СНГ MediaWise&UNICEF; 2005 г.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Պողոսյան Է. Ե. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Սոցիալական աշխատանք

Էլ. փոստ՝ ella-poghosyan@mail.ru

Գիտական ղեկավար՝ Խաղունովա Ա.

Ստացվել է՝ 20.10.2022

Գրախոսվել է՝ 20.01.2023

**ԵՐԵՒԱՅԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՆԴՈՐՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ
ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ
Մուրադյան Ն. Հ.**

Մույն հոդվածում անդրադարձել ենք պատերազմին՝ իբրև աղետաբեր երևույթի, իբրև արտակարգ իրավիճակի, որը բնականաբար չէր կարող չհայտնվել հոգեբանների տեսադաշտում և չառաջացնել տարբեր մոտեցումներ ու մեկնումներ, ինչպես նաև ներկայացրել ենք այն, թե ինչ է կատարվում երեխաների հոգեկանում, ինչպես են արձագանքում մեծերի խնդիրներին կամ եթե նույնիսկ լռում են, ապա ինչպիսի հոգեբանական ազդեցություններ կարող են դրսևորվել: Հետևաբար առաջարկել ենք այն ամեն հնարավոր լուծումները և խորհուրդները, որոնք կփորձեն պահպանել երեխաների հոգեկան աշխարհը հոգեբանական վնասվածքներից:

Բանալի բառեր. արտակարգ իրավիճակ, պատերազմ, հոգեբանական առաջին օգնություն, հոգեբանական վնասվածք, երեխայի հոգեկան աշխարհ:

Այսօր առավել քան երբևէ հիմնախնդիրն արդիական է, քանի որ պատերազմը, լինելով խաղաղության հակառակ կողմում, առաջին հերթին խաթարում է անձի հոգեկան կայունությունը: Իր տխուր հետևանքներն է թողնում տարբեր տարիքի անհատների հոգեբանության վրա: Պատերազմական իրավիճակում, ինչպես նաև հետպատերազմյան իրականության մեջ, փոքր ու մեծ խնդիրներ չկան, քանի որ ցանկացած արտակարգ իրավիճակի հետևանքով ծագող ճգնաժամերը գրեթե միշտ նույնն են լինում. գալիս են անսպասելի, փոխում մարդկանց կյանքի բնականոն հունը, և, որպես կանոն, մարդիկ պատրաստ չեն դրանց:

Այսինքն՝ խոսքը գնում է պատերազմական իրավիճակում հոգեկան առողջության պահպանման կամ հոգեբանական բարեկեցության ապահովման մասին: Նախ մեկնաբանենք, թե ինչ է իրենից ներկայացնում հոգեբանական բարեկեցությունը.

«Հոգեբանական բարեկեցությունը անձի հոգեվիճակների ինտեգրալ ցուցանիշն է, որն ապահովում է հոգեկան գործընթացների և գործառույթների ներքին համաձայնեցվածությունը, ինչպես նաև ներքին

հավասարակշռության և անձի ամբողջականության պահպանումը» [2]: Հոգեբանական բարեկեցության հիմնական ցուցանիշներն են երջանկության զգացումը և սեփական կյանքից բավարարվածությունը: Իսկ արտակարգ իրավիճակի՝ պատերազմի կիզակետում հայտնված երեխաները մեծահասակներից ոչ պակաս կարիք ունեն անհապաղ սոցիալ-հոգեբանական աջակցության: Քանի որ, ինչպես արդեն նշել էինք, պատերազմը և ռազմական գործողություններն իրենց բացարձակ դեստրուկտիվ և սթրեսածին բազմատեսակ կողմերով հանդերձ (մահ և տառապանք, զոհեր և կորուստներ, սոցիալական և բժշկական ինստիտուտների կազմալուծում, առաջնային կարիքների բավարարման կտրուկ բարդացում, ընտանիքների կազմաքանդում, սով և հիվանդություններ, տեղահանում և արտագաղթ, աղքատություն և անհուսություն և այլն) գտնվում են արտակարգ իրավիճակների առաջին տեղում: Եվ նման իրավիճակներում գոյատևող երեխաներն առավելապես խոցելի են և անպաշտպան, քանի որ նրանց հոգեկան պաշտպանությունը չափազանց փխրուն է, նրանք չունեն ինքնուրույնության բավարար աստիճան և կախված են մեծահասակների որոշումներից:

Ամեննին էլ գաղտնիք չէ, որ մարդն իր հոգեբանական ամբողջ պատկերով ի հայտ է գալիս հատկապես արտակարգ իրավիճակներում, ինքնադրսևորվում, դառնում բացառապես յուրօրինակ անհատակա- նություն: Իսկ ի՞նչը կարող է լինել առավել ծայրահեղ իրավիճակ, քան պատերազմը: Դա, անշուշտ, միայն մարտադաշտում զոհված կամ խեղված զինվորը չէ, ոչ էլ ամբողջ կյանքում նրան անհույս սպասող հարազատը. դա մարդ արարածն է՝ իր ներքին ու արտաքին աշխարհով, իր ուրույն հոգեվիճակով և չանհետացած սպիներով: Ֆիզիկական առումով պատերազմը գուցե առավել դյուրըմբռնելի է և հանգուցալուծվող, քանի որ կա տեսանելի և իրական թշնամի, որին պետք է վերացնել՝ ապահովագրելու համար սեփական կյանքը, հայրենիքում խաղաղ ապրելու իրավունքը: Իսկ ինչպե՞ս կարելի է մարտնչել անտեսանելի թշնամու՝ հոգեկան անասելի տառապանքի, մեկուսացվածության, աշխարհում սեփական անկյան անարդյունավետ փնտրտուքների դեմ, որը նույն այդ պատերազմի թողած դառը մրուրն է: Մարդը ստիպված է ապրել և հոգում անթեղել ներքին «պատերազմը», որը հիասթափության, փշրված երազանքների ցավալի ծնունդն է:

Այս համատեքստում առավել կարևոր է հասկանալ, որ նման իրավիճակում ամեն ինչ դառնում է ամենակարևոր, հատկապես, երբ խոսքը վերաբերում է երեխաներին: Մասնավորապես, երբ գործ ունենք այնպիսի երեխաների հետ, ովքեր տրավմաներ են ապրել, որոնք կարող են խնդրահարույց լինել նրանց ապագայի համար: Ուստի անհրաժեշտ է տրամադրել հոգեբանական առաջին օգնություն:

Հոգեբանական առաջին օգնությունը մարդասիրական աջակցություն է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդուն [5]: Ցանկացած մեկը, ով հայտնվել է դիսթրեսի մեջ, կարող է հոգեբանական առաջին օգնության կարիք ունենալ: Պետք է առաջնահերթություն տալ այն մարդկանց, ովքեր ունեն կյանքին սպառնացող ծանր վնասվածքներ, հոգեկան անկայուն վիճակ, ինքնավնասման սպառնալիք, ուրիշներին վնասելու սպառնալիք: Ճգնաժամային իրավիճակներում մարդկանց որոշ խմբեր ունեն առանձնահատուկ ուշադրության կարիք: Կախված իրավիճակից՝ ռիսկային խմբերի մեջ կարող են լինել երեխաները և դեռահասները:

Աղետներից, պատահարներից հետո կարևորագույն խնդիրներից մեկը մարդկանց ակտիվ կյանք վերադարձնելն է, նոր ստեղծված պայմաններին նրանց հարմարումը, ընդհանուր և հոգեկան առողջության վերականգնումը և ամրապնդումը:

Ճգնաժամային իրավիճակը անհնարինության իրադրությունն է:

Հոգեբանական ճգնաժամը իրենից ներկայացնում է հակամարտություն ստեղծված պայմանների հետ, որոնք անձի նկատմամբ առաջադրում են առավելագույն պահանջներ: Հոգեբանական ճգնաժամը անձի ներքին հուզական հաշվեկշռի խախտում է, որը հանդես է գալիս արտաքին և ներքին սպառնալիքի ազդեցության տակ [1, էջ 27]:

Հոգեբանական վնասվածքը կյանքի եղելություն է, որն առնչվում է մարդու գոյության էական, նշանակալի կողմերին՝ բերելով հոգեբանական խոր, բացասական ապրումների [1, էջ 27]: Կյանքի նկատմամբ վտանգի տևական սպառնալիքները, հարգատների, հասարակական դիրքի, պաշտոնի, առողջության կորուստը, ընտանեկան անհաջողությունները, ապրելակերպի վատթարացումը, արտակարգ պայմանների տևականությունը և այլ պատճառներ կարող են առաջացնել նյարդային համակարգի գործառության խանգարումներ: Այդ գործում իրենց մասնակցությունն են ունենում սոմատիկ հիվանդությունները, դրանցից հետո առաջացած մնացորդային վիճակները՝ անքնությունը,

տարբեր պատճառներով արյան կորուստը, ֆիզիկական, հոգեկան հյուծվածությունը և այլն:

Դրանք համարվում են պսիխոգենիաներ (հոգեծին հիվանդություն), որոնք համապատասխան վերականգնողական աշխատանքների կազմակերպման դեպքում ամբողջությամբ վերանում են [2]:

Հոգեբանական տրավման (հին հունարենից թարգմանաբար նշանակում է վերք) կյանքի բացառիկ սթրեսային և արտասովոր փորձ է, որն առաջ է բերում ֆիզիկական և հոգեբանական խոր դրսևորումների լայն շրջանակ: Ի տարբերություն սթրեսի՝ հոգետրավման միշտ ունի ուժեղ բացասական իմաստ [3,4]:

Շատերը կարծում են, թե երեխաները սթրեսներ չեն տանում, անհոգ կյանքով են ապրում, այնինչ փոքր հասակում երեխաներն ավելի քիչ հնարավորություններ և կարողություններ ունեն սթրեսին դիմակայելու համար, քան հասուն մարդիկ: Իսկ թե ինչ է կատարվում երեխաների հոգեկանում, ինչպես են արձագանքում մեծերի խնդիրներին, կամ եթե նույնիսկ լռում են, ապա ինչպիսի հոգեբանական ազդեցություններ կարող են դրսևորվել: Նրանց արձագանքը սթրեսներին խիստ տարբերվում է, մենք հաճախ չենք տեղեկացնում նրանց իրականում կատարվող իրադարձություններին, սակայն պետք է երեխայի հետ լինել առավել անկեղծ: Ցանկացած բնույթի անորոշություն կարող է հանդիսանալ սթրեսի աղբյուր: Նրանց արձագանքը սթրեսին կարող է լինել վարքի փոփոխմամբ, էմոցիոնալ ոլորտի փոփոխմամբ, քնի, սննդի փոփոխմամբ, հնարավոր է՝ ունենա դիմադրողականության անկում: Երեխան կարող է ազդեցիվություն ցուցաբերել, ակտիվ լինել կամ անկառավարելի, գերակտիվ կարող է լինել: Հնարավոր է՝ խուսափի շփումից: Առավելապես այս օրերին ծնողները բախվում են երեխաներին «պատերազմ» երևույթն ու դրա վտանգները բացատրելու մարտահրավերին: Երեխայի մոտ կարող են ծագել բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանները պետք է հնչեն հենց ծնողների կողմից:

Ահա այն հիմնական գործուն կանոնները, որոնց վրա, ըստ հոգեբանների, անհրաժեշտ է կենտրոնանալ այս փուլում, և այն խորհուրդները, որոնք կօգնեն խուսափել վերը նշված տարաբնույթ խնդիրներից:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե ռազմական գործողությունները ոչ մի կերպ չեն կարող ազդել առաջնագծից հեռու ապրող այն երեխաների բնականոն գործունեության և կյանքի վրա, ովքեր կրակոցներ չեն լսում և պայթյուններ չեն տեսնում: Սակայն

ծնողները, մտահոգ լինելով ռազմական դրությամբ և իրադարձություններով, գտնվելով նյարդային վիճակում և տեղեկատվություն ստանալու ակնկալիքով անընդհատ կախված լինելով հեռախոսներից և տարբեր գաջեթներից, կարող են ոչ պատշաճ կերպով արձագանքել երեխաների գործողություններին և հարցերին՝ միաժամանակ վնասելով երեխայի հոգեվիճակը:

Ուրեմն այսպես, պետք է հասկանալ, որ այս ժամանակահատվածում երեխաներն ունեն անհանգստության զգացում: Անհանգստությունը զգացվում է ամենուր, հեռուստացույցն ու ինտերնետը լցված են դրանով, այն հնչում է մարդկանց ձայներում և արտացոլվում է նրանց գործողություններում, ամբողջ հասարակությունն է անհանգստացած: Ամենավատն այն է, երբ անհանգստություն փոխանցողները հանդիսանում են ծնողները՝ այն մարդիկ, ովքեր պետք է անվտանգության զգացում ներշնչեն երեխային: Նրանք նրա միակ հենարանն են և եթե հավասարակշռված ու վստահ չեն երևում, ապա դա կարող է իսկապես տրավմատիկ լինել երեխայի համար: Կարելի է և անհրաժեշտ է երեխային բացատրել երկրում ստեղծված իրավիճակը՝ միևնույն ժամանակ առանց խուճապ և տագնապ առաջացնելու: Ծնողների խնդիրն է էլ ավելի նեգատիվ երանգ չավելացնել հասարակության կողմից եկող ինֆորմացիային [6]:

Մյուս խնդիրը վախերի առկայությունն է: Ի սկզբանե խոսքը գնում է ինչ-որ կոնկրետ բանի վախի մասին. վաղը ռմբակոծություն կսկսվի, սնունդ չի լինի, ինչ-որ մեկը կսպանվի: Այնուհետև վախը ֆիքսվում է և պահպանվում է, նույնիսկ երբ վտանգը վերանում է: Այն փոխում է ֆոկուսը և տեղափոխվում կյանքի այլ բնագավառներ: Ֆիքսված վախը դառնում է կյանքի արգելակ և չի թողնում հասնել հաջողության: Բոլոր ջանքերը ծախսվում են ոչ թե ինքնաիրացման հասնելու, այլ ինչ-որ վախ շրջանցելու վրա: Ամենատիպիկ և տրավմատիկ վախերից է մտերիմներին կորցնելու վախը, ինչը կարող է հանգեցնել տարբեր հիվանդությունների [6]:

Ստորև կանդրադառնանք այն մտահոգիչ հարցերին ու համապատասխանաբար տրվող պատասխաններին, որոնք ուղղակիորեն առնչվում են պատերազմական իրավիճակին:

Նշենք, որ 2020թ. 44-օրյա Արցախյան պատերազմի արդյունքում Արցախից տեղահանված և ՇՊՀ-ի հյուրատանը տեղավորված ընտանիքների, նրանց երեխաների համար ՇՊՀ-ի Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոսական

կազմը և ուսանողները կազմակերպեցին և իրականացրին համապատասխան սոցիալ-հոգեբանական աշխատանքներ, որի ընթացքում արձանագրել ենք հոգեբանական տրավմատիկ իրողություններին տրվող տարբեր տարիքի երեխաների հուզական և վարքային հակազդումների, հոգեվիճակների և դրանց ախտաբանական դրսևորումների նկարագրությունը: Ինչպես նաև մշակել և առաջարկել ենք նման բարդ իրավիճակներում հայտնված երեխաներին աջակցող մեծահասակների արձագանքման առավել արդյունավետ ռազմավարություններ և եղանակներ, որոնցից մի քանիսն էլ կներկայացնենք ստորև:

- **Պե՞տք է արդյոք խուսափել պատերազմի մասին խոսակցություններից:**

Եթե երեխան հարցեր է տալիս, պետք է պատասխանել, սակայն առանց վախեցնող մանրամասների: Նման խոսակցությունների առանցքային հաղորդագրությունն է. «Դու պաշտպանված ես, մենք միշտ քեզ հետ ենք»: Այս ամենը անհրաժեշտ է ասել մեծ վստահությամբ: Երեխային խաբելու փորձերը ոչ մի լավ բանի չեն հանգեցնի: Դերասանություն անելն անօգուտ է: Երեխայի հոգեկան վիճակը պաշտպանելու միակ միջոցը նրա շուրջ այնպիսի միջավայր ստեղծելն է, որտեղ բացակայում են անհանգստությունը, վախերը ու խուճապը:

- **Ինչպե՞ս երեխային մատուցել ռազմական թեմայով տեղեկատվությունը, օրինակ՝ բացատրել, որ հայրը կամ մեկ այլ հարազատ մեկնում է ռազմադաշտ:**

Երբ երկիրը գտնվում է բարդ իրավիճակում, և երեխան ակամայից տարատեսակ տեղեկատվություն է ստանում, հարկավոր են պարզաբանումներ: Շատ կարևոր է մեծահասակի հետ տեղեկատվության փոխանակումը:

Հայրիկի, հարազատի մարտադաշտ մեկնելու մասին ինֆորմացիան կարելի է նուրբ ձևով հաղորդել, այլապես՝ անորոշությունն առավել կմեծացնի տազնապը: Մայրիկը կարող է ասել՝ չափազանց կարևոր է երկրի պաշտպանությունը, որն իրականացնում են սահմանին կանգնած հայրիկներն ու եղբայրները: Դե, իսկ մենք էլ այստեղ պետք է մեր առաջադրանքները լավագույն կերպով իրականացնենք: Հավելում ենք՝ դու դասերդ լավ սովորիր, ես էլ գործերս կկատարեմ նույն ոգով: Սա էլ է պաշտանության ու հզորացման էական նախապայման:

- Երբ երեխան համացանցում դաժան տեսարաններով լուսանկարներ նկատի: Ինչպե՞ս վարվել այդ դեպքում:

Դրանից խուսափելու համար պետք է սահմանափակել երեխայի մուտքը համացանց: Բացասական բնույթի նկարներ տեսնելու դեպքում կարելի է նրան ասել, որ դրանք հիմնականում ֆոտոշոփի օգնությամբ են արված: Մա սկզբում անհրաժեշտ է՝ նրան մեծ չափաբաժնով բացասական ինֆորմացիայից հեռու պահելու համար [6]:

- Ինչպե՞ս վարվել, երբ երեխայի մոտ նկատվում են վախեր: Հաղթահարման ինչպիսի՞ տարրերակներ կան:

Երեխան բարդ իրավիճակում կարող է ունենալ վախեր՝ անհանգստության զգացումից մինչև տագնապ: Այս ամենում կարևոր դեր ունեն մեծահասակներն իրենց մոտեցումներով: Եթե մեծահասակի մոտ առկա է տագնապ, ապա նրա խոսքում, գործողության մեջ այն հաստատ դրսևորվում է: Ուստի նա իր հուզական ոլորտը կարգավորելու համար պետք է նախ սեփական մտքում զարգացնի հավատը դրականի նկատմամբ [6]:

Հաջորդ քայլը խոսելն է երեխայի հետ, որպեսզի նա պատմի իր վախերի մասին, կարողանա արտահայտվել: Գլխավորը՝ լսված լինելն է մեծահասակի կողմից առանց ընդհատվելու:

- Ի՞նչ կարող է ասել ծնողը երեխային, որը կլինի ն՝ հուսադրող, ն՝ ոգևորիչ:

Կա՞նք, պիտի՞ լինենք ու դեռ շատանա՞նք ոգով է հարկավոր խոսել ու ապրել օրը: Երեխան ընդօրինակում է այդ վարքագիծը:

Այսպիսով, անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել երեխաներին և հնարավորինս նրբանկատ լինել նրանց զգայուն հոգեկան աշխարհի հետ: Երեխաները արագ են զգում և արձագանքում վտանգին, ուստի թույլ չտանք դեռ մանուկ հասակից դառնալ հոգեբանական վնասվածքների և սթրեսների կրող: Մանկական տրավմաները հիմք են հանդիսանում հետագա կյանքի կայացման և ձևավորման հարցում. որքան ուշադրի լինենք, այնքան կօգնենք երեխաներին դժարությունների հաղթահարման գործում:

СОХРАНЕНИЕ ПСИХИЧЕСКОГО СПОКОЙСТВИЯ РЕБЁНКА В УСЛОВИЯХ ВОЙНЫ

Мурадян Н. О.

В данной статье мы рассмотрели войну как катастрофическое явление, как чрезвычайную ситуацию, которая, естественно, не могла не

оказаться в поле зрения психологов и вызвать различные подходы и отступления. Мы также представили то, что происходит в психике детей, как они реагируют на проблемы взрослых, или даже если молчат, то какие психологические эффекты могут проявляться. Следовательно, мы предложили все возможные решения и советы, которые постараются уберечь психику детей от психологических травм.

Ключевые слова: чрезвычайная ситуация, война, первая психологическая помощь, психологическая травма, психический мир ребенка.

PRESERVING CHILDREN'S MENTAL HARMONY IN A STATE OF WAR

Muradyan N. H.

In this article, we consider war as a catastrophic phenomenon, as an emergency situation and it could not escape from the view of psychologists and did not cause various approaches and departures. We also presented what is happening in the psyche of children, how they react to adult problems, or even if they are silent, what psychological effects can be manifested. Therefore, we have presented all kinds of advice and solutions that will help protect the psyche of children from psychological trauma.

Keywords: emergency situation, war, psychological first aid, psychological trauma, the mental world of the child.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Խ. և այլ համահեղինակներ Բժշկական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան: 341 էջ:
2. Գասպարյան Խ., Եղիյան Մ., Հովսեփյան Թ. Հոգեկան առողջությունը և մարդու իրավունքները: Երևան: 2010:
3. Մկրտումյան Մ. Պ. Ծրագիր Արտակարգ իրավիճակների հոգեբանության/ Առարկայական ծրագիր: Երևանի պետական համալս. հրատ.: 2005: 52 էջ:
4. Խանամիրյան Ի. Ռ., Գևորգյան Դ. Է. Երեխան և հոգետրավման. Աջակցող ձեռնարկ մեծահասակների համար. Երևան: ԵՊՀ հրատ.: 2017: 70 էջ:

5. Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները (2013). Հոգեկան առողջության հայկական հանդես, հանրապետական գիտաժողովի նյութեր: Մայիսի 23-24, Երևան: «Աստղիկ»: 2013: 276 էջ:
6. Бреслов Г. М. - Психология стресса, М. 2004. 541с.
7. Reyes G., Elhai Jon D., Ford Julian D. (2008), The Encyclopedia of Psychological Trauma, John Wiley & Sons.
8. <https://www.unicef.org/armenia/%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6-%D6%85%D5%A3%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6>
9. <https://www.lalunz.com/blog/paterazmi-erekhaner-inchpes-cnoghner-karogh-en-pashtpanel-irenc-erekhayi-hogekan-vichaky-razmakan-ira-vichaki-streseric%D6%89>

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մուրադյան Ն. Հ. – բակալավրիատ 3-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Հոգեբանություն

էլ. փոստ՝ nyura.muradyan.2002@mail.ru

Գիտական ղեկավար՝ Թադևոսյան Ա., հոգ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 29.11.2022
Գրախոսվել է՝ 25.01.2023

**ՈւՍՈՒՄՆԱԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ
ՄՊԱՍՈՒՄՆԵՐԻ ԷՆՈՑՈՒՆԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Թորոսյան Մ. Ա.**

Սույն հոդվածում, անդրադառնալով առաջին կուրսեցիների սպասումների բնույթին, ներկայացրել ենք դրանց տարատեսակները, նրանց իսկ ունեցած ազդեցությունը ուսանողի՝ նոր դերի ու կարգավիճակի ընդունման, միջանձնային հարաբերությունների ձևավորման, կյանքի իմաստի որոնման, ինքնաճանաչման և վարքի ռազմավարությունների մշակման, սեփական ներուժի գնահատման գործում:

Բանալի բառեր. առաջին կուրսեցի, սոցիալական սպասումներ, կենսական հեռանկար, սեփական ներուժ, սոցիալական դեր, կարգավիճակ:

Մարդկային կյանքը լի է տարաբնույթ սպասումներով, այլ կերպ ասած՝ սպասումների հերթափոխ է, որոնց միջոցով մենք ապրում և գործում ենք, հաստատում միջանձնային հարաբերություններ, առաջադրում ենք նպատակներ և փորձում հասնել դրանց: Մպասումները մեզ ուղեկցում են կյանքի տարբեր փուլերում, իրականության ընկալման տարբեր ասպեկտներում:

Սպասումները կամ էկսպեկտացիաները (անգլերեն expectation-սպասում, ակնկալում) կայուն և միևնույն ժամանակ էլ չափազանց փոփոխական հասկացություններ են: Կայուն են այնքանով, որ հենվում են անձի պահանջմունքների, նպատակների ու արժեհամակարգի վրա, իսկ փոփոխական են, որովհետև դրանց ձևավորման կարևոր բաղադրիչ են համարվում իրավիճակը և պայմանները:

Ինչպես նշել է էկզիստենցիալ փիլիսոփայության և հոգեբանության հիմնադիրներից Մ. Բուբերը, միջանձնային հարաբերությունների ընթացքում կարևոր է գիտակցել դիմացինի ներքին աշխարհը. այս հայեցողական գործունեությունը մեկ այլ անձի նկատմամբ հանդիսանում է մարդկանց միջև հասուն հարաբերությունների ցուցանիշ: Վստահությունը դեպի ուրիշը իր սպասումներով

փոխադարձող անձի նկատմամբ բացում է նոր փորձ և նոր աշխարհ [1, էջ 119]:

Իսկ, ըստ Մ. Վեբերի, փոխադարձ սպասումների համակարգը կարող է տեղիք տալ անհանգստության և անորոշություն: Այսպիսի երևույթները կարող են առաջանալ հասարակական, սոցիալական ցնցումների կամ փոքր խմբերում առաջացող խնդիրների պատճառով, անհատի՝ մեկ այլ անձի հետ շփվելու ժամանակ: Նման իրավիճակները կարող են ապակայունացնել սոցիալական վիճակը և բացառել այն առավելությունները, որոնք նպաստում են դժվարությունների հաղթահարմանը [2, էջ 120]:

Ա. Վ. Պետրովսկին և Մ. Գ. Յարոշևսկին, իսկ նրանցից հետո՝ Ս. Յու. Գոլովինը, տալիս են «Սոցիալական սպասում» եզրույթի իրենց մեկնաբանությունը՝ որպես «Էկսպեկտացիաներ-սպասումների կամ պահանջումների համակարգ, որը վերաբերում է անհատի սոցիալական դերերին, իրենից ներկայացնում է սոցիալական սանկցիաների տարատեսակներ, խմբում հարաբերությունների և փոխազդեցությունների համակարգի պարզեցում» [3, էջ 457] :

Սպասումներն ունեն երկակի բնույթ. նախ յուրաքանչյուր անհատ ունի կյանքի այս կամ այն ոլորտի և առանձին անհատների, խմբերի նկատմամբ սպասումների իր ուրույն համակարգը, և իրենց հերթին էլ շրջապատող մարդիկ ունեն տվյալ անհատից միայն նրան բնորոշ սպասումների համակազմ:

Ընդունվելով բուհ՝ ուսանողը ձեռք է բերում նոր, որակապես այլ կարգավիճակ և դեր: Մասնագիտություն ընտրելը, բուհ ընդունվելը պատանիների առջև նոր խնդիրների ծագման պատճառ են դառնում: Պատանին մտնում է զարգացման նոր սոցիալական իրավիճակ, որին բնորոշ է ուսումնական գործունեությունը, համակուրսեցիների և դասախոսների հետ որակապես նոր փոխհարաբերությունները, ուղղվածությունը դեպի ապագան:


Մանկավարժական փոխհարաբերությունները «դասախոս-ուսանող» համակարգում իրենից ներկայացնում է սուբյեկտների փոխադարձ ազդեցության համակարգ՝ ընդգրկելով համատեղ գործունեություն, որը հիմնված է մասնագիտական կրթության ընդհանուր նպատակների վրա: Այս փոխհարաբերությունները դասախոսի և ուսանողի միջև ազդում են ապագա մասնագետի արժեհամակարգի ձևավորման վրա, ինչպիսին են մարդը, մասնագիտությունը, ճշմարտությունը, կրթությունը և այլն [4, էջ 1]:

Դասախոս-ուսանող փոխհարաբերությունները դիտվում են որպես շարունակական երկխոսություն, որի ընթացքում նրանք հետևում են, ըմբռնում մեկը մյուսի մտադրությունները և արձագանքում են դրանց [4, էջ 2]:

Յուրաքանչյուր հարաբերություն, լինի դա ուսանող-դասախոս կամ միջանձնային և միջխմբային այլ հարաբերություն, կարող են ճիշտ կառուցված ու արդյունավետ լինել միայն կողմերի՝ սպասումների, իրավունքների ու պարտականությունների հստակ պատկերացումների, դրանց իրականացման սահմանների և մեխանիզմների շնորհիվ, որոնցով ղեկավարվելով՝ նրանք կարգավորում և ղեկավարում են սեփական վարքագիծը, ակտիվությունը և ուրիշի վարքը և գործունեությունը:

Վերը նշված հայեցակետերի գործնականում դրսևորման ուսումնասիրության նպատակով մենք իրականացրել ենք հետազոտություն՝ փորձելով բացահայտել առաջին կուրսեցիների մոտ առկա սպասումների բնույթը, ուղղվածությունը: Պետք է նշենք, որ հետազոտությունն անցկացվել է նախապես մշակված հարցաթերթիկի և գրույցի մեթոդներով: Հետազոտության մասնակից ուսանողների թվակազմը եղել է 31 ուսանող /միայն առաջին կուրսեցի/:

Ստորև գծապատկեր 1-ի տեսքով կներկայացնենք հետազոտվողների պատասխանների հիմնական նկարագիրը:



Գծապատկեր 1.

Այսպիսով, ինչպես տեսնում ենք գծապատկերից, հետազոտվողների 59%-ն ունի դրական սպասումներ՝ կապված բարձրագույն կրթություն ստանալու հետ, սիրելի մասնագիտության մեջ ավելի կատարելագործվելու, մասնագիտությամբ աշխատելու, զարգացնելու

իրենց հմտությունները և այլն: 27%-ի դեպքում չկան ցայտուն, արտահայտված սպասումներ, 10%-ի մոտ նկատվել է տագնապայնության որոշակի աստիճան՝ պայմանավորված դասախոս-ուսանող փոխհարաբերությունների կառուցման անհրաժեշտությամբ, ինչպես նաև սեփական դերի հանդեպ անվստահություն: Եվ, վերջապես, 5%-ի մոտ առկա է քողված և բացահայտ սպասումների միջև կոնֆլիկտ, որը դրսևորվել է նեգատիվիզմով, հուսահատվածությամբ, մասնագիտության սխալ ընտրության հիմնավորմամբ և այլն:

Հաշվի առնելով մասնագիտական ինքնաճանաչումը, ինքնազարգացումը, համակուրսեցիների հետ արդյունավետ փոխհարաբերությունների կառուցումը, բուհական համակարգին հարմարումը՝ մենք նպատակահարմար ենք գտնում ունենալ «ՈՎ ԵՄ ԵՄ» խորագրով աշխատանքային օրագիր, որը բաժանված կլինի համապատասխան բաժինների՝ «Ես և իմ խումբը», «Ես և իմ ապագա մասնագիտությունը», «Ես և իմ ուսումնական գործընթացը»: Պետք է նշենք, որ ուսանողը օրագրում պետք է համապատասխան համեմատություն անցկացնի իր անձնային պոտենցիալ սպասումների, կենսական հեռանկարների սպասումների և միջանձնային սպասումների միջև: Այլ կերպ ասած՝ բավական է պատասխանել հետևյալ երեք հարցերին. ինչպիսին եմ ես, ինչպիսին կուզենամ լինել և ինչ կարող եմ անել իմ ուզածին հասնելու համար: Այս ամենի արդյունքում, իրավամբ, կբարձրանա ուսանողի պատասխանատվությունը, կգրանցի անձնային և մասնագիտական աճ և այլն:

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ СУЩНОСТИ ОЖИДАНИЙ ПЕРВОКУРСНИКОВ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ

Торосян М. А.

В данной статье, затрагивая характеры ожиданий первокурсников, мы представили их разновидности, их же влияние на принятие студентом новой роли и статуса, формирование межличностных отношений, поиск смысла жизни, разработку стратегий самопознания и поведения, оценку собственного потенциала.

Ключевые слова: первокурсник, социальные ожидания, жизненная перспектива, собственный потенциал, социальная роль, статус.

THE ESSENCE AND FEATURES OF FIRST-YEAR STUDENTS'
ANTICIPATIONS AND SPECIFICITIES IN THE CONTEXT OF LEARNING
PROCESS

Torosyan M. A.

The article touches upon the nature of the first-year students' anticipations, their varieties and influence on the student's acceptance of a new role and status, the formation of interpersonal relationships, the search for the meaning of life, the development of strategies for self-knowledge and behavior, the assessment of their own potential.

Keywords: freshman, social anticipations, life perspective, self potential, social role, status.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Карина О. В., Киселева М. А., Шустова Н. Е. Концептуальное обоснование авторского опросника «Личностные экспектации» (ЛИЭКС) ©2010 Стр. 119.
2. Карина О. В., Динамика проявления экспектаций в подростковом и юношеском возрасте., Стр. 120.
3. Петровский А. В., Ярошевский М. Г. Психология. Словарь. Под общ. ред. - 2-ое изд. - М.: Политиздат, 1990., Стр. 457.
4. Шитова Т. Ф. Взаимодействие преподавателей и студентов в вузе. Екатеринбург. 1990. Стр. 164.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Թորոսյան Մ. Ա. - բակալավրիատ 3-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Հոգեբանություն

էլ. փոստ՝ maga.torosyan@bk.ru

Գիտական ղեկավար՝ Թադևոսյան Ա., հոգ. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 16.11.2022

Գրախոսվել է՝ 05.02.2023

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ Ու ՁԱԽՈՂՈՒՄՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԻՋԻՆ
ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ
Մարգարյան Ռ. Ժ.**

Հոդվածում ուսումնասիրվում է ժամանակակից կրթական հաստատությունների ձախողումները և ձեռքբերումները: Կրթությունը մարդու մտավոր զարգացածության, գիտելիքների, կարողությունների, հմտությունների և ճանաչողական ընդունակությունների յուրացման մակարդակն է: Քանակական և որակական հարցումների միջոցով իրականացվել է Շիրակի մարզի ժամանակակից կրթական հաստատությունների ձեռքբերումների և ձախողումների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն:

Բանալի բառեր. ձախողում, ձեռքբերում, հանրային կարծիքի ուսումնասիրություն, կրթական հաստատություն:

Նախաբան: Կրթությունն ունի պատմական բնույթ. հասարակական կյանքի զարգացմանը համապատասխան՝ այն բարդանում է: Եթե տասնամյակներ և դարեր առաջ ընդամենը գրել-կարդալ իմացող մարդը կարող էր համարվել կրթված մարդ, ապա այսօր կրթվածությունը ենթադրում է գիտելիքների հիմունքների տիրապետում, ինքնուրույնաբար գիտելիքների ձեռքբերման կարողություններ և այլն: Մասնագիտական գործունեության որոշակի բնագավառներում արդյունավետ աշխատելու համար հատուկ գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետելու մակարդակ ապահովող կրթությունը հենց մասնագիտական կրթությունն է:

Կրթությունն ունենալ նշանակում է լինել ավելի զարգացած և կատարելագործված մարդ: Միաժամանակ, կրթությունը ենթադրում է նաև լավ դաստիարակություն, վարքի կատարելություն և այլն: Թեև կրթությունը հիմնականում մտավոր զարգացման բնութագիր է, սակայն ակնարկում է նաև մարդու դաստիարակությունը, նշանակում է՝ կրթությունը ուսուցման և դաստիարակության արդյունք է:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կրթությունը բոլոր ժամանակներում եղել և մնում է

կարևոր արժեք մարդու կյանքում: Ուստի կախված մարդու կարիքներից՝ այն ենթակա է փոփոխության: Ինչպես նաև կրթությունը հնարավորություն է տալիս մարդուն գիտակցելու իր առաքելությունը, իր տեղը հասարակության կյանքում:

Հողվածի նպատակն է ուսումնասիրել Շիրակի մարզում միջին և ավագ դպրոցների կրթական համակարգի բարեփոխումները, ինչպես նաև բացահայտել կրթական համակարգում առկա խնդիրները: Հողվածում առաջադրվել են մի շարք խնդիրներ՝ նպատակին հասնելու և վերլուծություններ կատարելու համար:

- Վեր հանել Շիրակի մարզում միջին և ավագ դպրոցների կրթական համակարգերի ձախողումները և ձեռքբերումները:
- Ուսումնասիրել ժամանակակից կրթության ներկայիս վիճակը:
- Իրականացնել սոցիոլոգիական հարցում՝ մասնագետների հետ հասկանալու համար՝ որոնք են կրթական համակարգի դրական ու բացասական կողմերը:
- Վերլուծել ու համակարգել ունեցած տվյալները:

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Կրթությունը կարևորվում է որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների՝ ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդավարական հասարակության զարգացման, գիտելիքահեն տնտեսության զարգացման լուծման առանցքային գործոններից մեկը:

Հայաստանում կրթության ոլորտի բարեփոխումները սկսվել են իրականացվել ՀՀ-ի անկախության հռչակումից հետո տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում: Ավելի քան տասը տարվա ընթացքում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար: Այդուհանդերձ, կրթության համակարգում դեռևս առկա են խնդիրներ, որոնցով պայմանավորված՝ այն դեռ իր առաքելությունը լիարժեք և ամբողջական չի իրականացնում, մինչդեռ առաջ են եկել նոր մարտահրավերներ, և դրանց հաղթահարմամբ է պայմանավորված

կրթության ապագան: Միաժամանակ թե՛ հասարակության գիտակցության, թե՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը շարունակում է մնալ գերակայությունների շարքում որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին ու ունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը [1, էջ 65]:

Կրթական բարեփոխումների համատեքստում այսօր շեշտը դրվում է թե՛ կրթության, թե՛ ինքնակրթության, ինքնազարգացման ու ինքնակատարելագործման վրա: Ուստի դպրոցը պետք է կարողանա դառնալ սովորողների ինքնազարգացող, ինքնակատարելագործվող համայնք, ինչը կնպաստի երեխաների զարգացնող կրթության համար համապատասխան միջավայրի ստեղծմանը: Աշակերտն աշխատում է լայն տեղեկատվական դաշտում, տեղեկատվության տարբեր տեսակետների հետ, որի արդյունքում ձևավորվում է սեփական տեսակետը:

ՀՀ կրթության համակարգն ունի շատ բարդ կառուցվածք, որը վերջին տարիներին կրել է քանակական և որակական փոփոխություններ: ՀՀ կրթության համակարգի կարևորագույն բաղադրամասը հանրակրթական դպրոցն է, որտեղ պատանիները ու երիտասարդները ստանում են միջնակարգ կրթություն: Այս իրավունքը ամրագրված է ՀՀ սահմանադրության 35-րդ հոդվածում. «Յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք» [3, էջ 5]:

Միջնակարգ ուսուցումը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: 1996-ից գործում է Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական հաստատության օրինակելի կանոնադրությունը, ըստ որի՝ հանրակրթական հաստատությունը (միջնակարգ հանրակրթական դպրոցը) կրթական համակարգի կարևորագույն բաղադրամասն է, որն իրականացվում է տարրական, հիմնական և միջնակարգ կրթության պետական ծրագրեր, որոնց նպատակն է ձևավորել սովորողների անձը, նրանց նախապատրաստել աշխատանքի [4, էջ 52]:

Միջնակարգ հանրակրթական դպրոցներում աստիճանաբար արմատավորվում է անհատականացված ուսուցումը: Ելնելով աշակերտների անհատական և հոգեբանական առանձնահատկություններից և նրանց ուսումնական ռեալ հնարավորություններից՝

դպրոցներում գործում են ֆակուլտատիվ պարապմունքներ, ուր դպրոցականները խորացնում են իրենց իմացական կարողությունները: Մեր հանրապետությունում գործում են թեքումով դպրոցներ, խորացված ուսուցմամբ դասարաններ: Նշված դպրոցներում աշակերտները համապատասխան ծրագրերով ուսումնասիրում են թեքումով ուսումնական առարկան, յուրացնում գիտական գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ և միաժամանակ ուսումնասիրում ուսումնական պլանով միջնակարգ դպրոցի համար նախատեսված ուսումնական բոլոր առարկաները [2, էջ 95]:

Ժամանակակից շրջանում, երբ ամբողջ աշխարհում մեծ առաջընթաց ու թափ կա գիտությունների և տեխնիկայի ասպարեզներում, գիտական տեղեկատվության մեջ ճիշտ կողմնորոշվելու համար յուրաքանչյուր գրագետ մարդ պարտավոր է անընդհատ համալրել իր գիտելիքները, ընդլայնել մտահորիզոնը, քայլել ժամանակին համընթաց, կատարելագործել իր մասնագիտությունը: Այդ ամենը կարելի է իրագործել նաև ինքնակրթության, ինքնուսուցման միջոցով:

Իրականացված սոցիոլոգիական հարցման նպատակն է ուսումնասիրել այսօրվա կրթական համակարգի դրական և բացասական կողմերը, ինչպես նաև բացահայտել տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ հասարակության տեղեկատվության աստիճանը: Հարցման մասնակիցների գերակշիռ մաս է կազմում իգական սեռը՝ 67,7%-ով, իսկ արական սեռը՝ 32,3%-ով: Հարցմանը մասնակցել են տարբեր տարիքային խմբեր: Ինչ վերաբերում է կրթությանը, ապա պետք է նշենք, որ մասնակիցների կեսից ավելին, այսինքն՝ 60%-ը, ունի բարձրագույն կրթություն, քիչ տոկոս են կազմում միջնակարգ (26,7%) և թերի բարձրագույն (13,3%) կրթություն ունեցողները: Նշենք, որ 54,8%-ը սովորում է, 22,6%-ը և՛ սովորում է, և՛ աշխատում է, իսկ 19,4%-ը միայն աշխատում է: Այն հարցին, թե «գո՞հ եք Ձեր ստացած միջնակարգ կրթությունից», ստացանք հետևյալ պատասխանները. պարզվեց, որ հարցվողների մեծ մասը՝ 77,4%-ը, գոհ է իր ստացած կրթությունից, իսկ մնացած 22,6%-ը գոհ չէ իր միջնակարգ կրթությունից:

Այն հարցին, որ «Խնդրում ենք, 1-ից 10-ը բալային համակարգի միջոցով գնահատել այսօրվա կրթական համակարգը», ստացանք հետևյալ արդյունքները. հարցվողներից ոչ մեկը չէր գնահատել 10-ը, սակայն 5-9-ը միջակայքը գրեթե հավասար տոկոսներ են կազմում, իսկ 2-4-ը ընկած միջակայքը շատ քչերն էին նշել: Պարզվեց, որ հարցվողների

մեծամասնությունը դրական է գնահատում այսօրվա կրթական համակարգը:

Այն հարցին, թե «ի՞նչ բարեփոխումներ կկատարեք միջնակարգ կրթության բարելավման համար», ստացվել ենք հետևյալ արդյունքները.

- Թեմաները կփոփոխեինք ավելի հեշտ, անգլերենի և ռուսերենի քերականության դասաժամերը կհամապատասխանեցնեինք հայերենին, որպեսզի երեխան նախ իմանա իր լեզվի քերականությունը, հետո՝ օտար լեզվինը:
- Ծրագրային չափորոշիչներում ուսուցչի՝ փոփոխություններ կատարելու ազատություն:
- Դպրոց կընդունեինք երիտասարդ կադրերի, որոնք ուսուցումը կանցկացնեին առավել ժամանակակից մեթոդներով ու եղանակով:
- Ավելի կարևորելով՝ կբարձրացնեինք ուսուցչի աշխատավարձը:
- Նախ կհանեիք 12-ամյա կրթությունը, քանի որ, կարծում են, պարզապես ժամանակի կորուստ է, և որևէ նոր բան երեխաները չեն սովորում այդ երկու տարիների ընթացքում, այնուհետև զրքերում ներառված նյութերը կդարձնեինք ավելի մատչելի, որպեսզի երեխաները կարողանան հեշտ ըմբռնել նյութը:
- Հետաքրքիր մեթոդներով կփորձեինք անցկացնել դասերը և այլն:

Այն հարցին, թե «ինչպե՞ս եք գնահատում այսօրվա կրթական համակարգը», ստացել ենք հետևյալ պատասխանները.

- Այսօրվա կրթական համակարգը, համեմատած նախորդ տարիների, բնականաբար գրանցել է առաջընթաց, բայց և կարիք ունի որոշակի փոփոխությունների. դրանք հիմնականում վերաբերում են թեմաներին, դասագրքային որոշակի կառուցվածքին, չափորոշիչներին և այլն (*իզական սեռ, 40 տարեկան, ավագ դպրոց*):
- Կրթական համակարգը բավական վատ վիճակում է այսօր (*արական սեռ, 25 տարեկան, ավագ դպրոց*):
- Այսօրվա կրթական համակարգը գնահատում են բարձր, (*իզական սեռ, 27 տարեկան, միջնակարգ դպրոց*):

Այն հարցին, թե «որո՞նք են կրթական համակարգի դրական և բացասական կողմերը», ստացել ենք հետևյալ պատասխանները.

- Դրական կողմերից նշվել է այն, որ կրթական համակարգը ապահովում է ուսումնառության անհատականությունը, տալիս է բոլոր առարկաներից համաչափ գիտելիքներ: Իսկ բացասական

կողմը այն է, որ մատուցման ձևերի, նյութի ծավալների մեջ ունենք խնդիրներ, որոնք վերանայելու կարիք ունեն:

- Կրթական համակարգի դրական կողմերից նշենք, որ ավելի շատ ազատություններ է տալիս աշակերտին, իսկ բացասականը շատ-շատ է, նաև անհավասարության դրսևորումները դաբոցում:

Այն հարցին, թե «ի՞նչ կրթական բարեփոխումների կարիք է զգում այսօրվա դպրոցը», ստացել ենք հետևյալ պատասխանները.

- Հարցվողները կարծում են, որ այսօրվա դպրոցը շատ բարեփոխումների կարիք է զգում, և ամենակարևորը համարում են այն, որ երեխաները կարևորեն բոլոր առարկաները, քանի որ երեխաները ինչ մասնագիտություն որ ընտրում են, կենտրոնանում են միայն այդ մասնագիտությանը վերաբերող առարկաներին: Բայց պետք է ուշադրություն դարձնել բոլոր առարկաներին:
- Շեշտը դրվել է ավելի շատ «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաների վրա, որպեսզի երեխաները ավելի խորապես ճանաչեն գիր գրականությունը և պատմությունը, որպեսզի երբևիցե չհեռանան արմատներից (*արական սեռ, 36 տարեկան, միջնակարգ դպրոց*):
- Հարցվողներ. կարելի է հազեցնել սովորողների զբաղվածությունը գործնական աշխատանքներով, որոնք կնպաստեն դասվանդված ակադեմիական գիտելիքի առավել համակողմանի ընկալմանը (*իգական սեռ, 35 տարեկան, ավագ դպրոց*):

Այն հարցին, թե «ինչպե՞ս էք վերաբերվում կրկնուսույցներին, Դուք զբաղվո՞ւմ եք կրկնուսությամբ»: Հարցվողների կարծիքով, եթե դպրոցը կարողանա փոխանցել բավարար գիտելիքներ, ապա կրկնուսույցների կարիք չի լինի: Հարցվողներից 4-ն են զբաղվում կրկնուսուցմամբ:

Եզրահանգում: Ուսումնասիրելով ժամանակակից կրթական հաստատությունների ձեռքբերումներն ու ձախողումները Շիրակի մարզի միջին և ավագ դպրոցների օրինակով՝ եկանք հետևյալ եզրակացությունների.

1. Ժամանակակից կրթական համակարգի գերխնդիրն է բարձրացնել կրթության որակը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և սովորողներին իրենց ձգտումներին ու ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

2. Կրթական համակարգը, լինելով հասարակության կյանքի և պետական կառուցվածքի կարևորագույն տարր, պետք է ուղղված լինի մի շարք ռազմավարական խնդիրների լուծմանը, որոնցից են կրթական համակարգի կատարելագործումը, կրթական ծառայությունների որակի ապահովման համակարգի զարգացումը, կրթական ոլորտում տնտեսական մեխանիզմների կատարելագործումը:
3. Ժամանակակից կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները, համեմատած նախորդ տարիների, գրանցել է բավականին մեծ առաջընթաց՝ չնայած նրան, որ կրթական համակարգում միշտ էլ նկատվում է փոփոխությունների կարիք:
4. Կրթությունը ավագ դպրոցում արդյունավետ չի գործում, այն ունի հիմքային բարեփոխումների կարիք:

Ամփոփելով սոցիոլոգիական հարցումների արդյունքները՝ կարող ենք կատարել մի քանի առաջարկություններ.

- Առաջարկում ենք ԿԳՄՍ նախարարությանը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈւ) երեխաների համար ստեղծել համապատասխան պայմաններ՝ դպրոց ընդունելու համար (օրինակ՝ միջավայրի համապատասխանեցում):
- Առաջարկում ենք գրքերում ներառված նյութերը ավելի մատչելի դարձնել դպրոցականների համար:
- Առաջարկում ենք վերանայել գնահատման ձևերը և հանել գնահատման միավորային տարբերակը:
- Առաջարկում ենք նաև կրթության 12-ամյա համակարգը վերափոխել 10-ամյա կրթական համակարգի:

ДОСТИЖЕНИЯ И НЕУДАЧИ СОВРЕМЕННЫХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЙ НА ПРИМЕРЕ СРЕДНИХ И ВЫСШИХ ШКОЛ ШИРАКСКОЙ ОБЛАСТИ

Саргсян Р. Дж.

В статье рассматриваются неудачи и достижения современных образовательных учреждений. Образование – это уровень интеллектуального развития человека, знаний, умений, навыков и познавательных способностей. Путем количественных и качественных опросов проведено изучение общественного мнения о достижениях и неудачах современных образовательных учреждений Ширакской области.

Ключевые слова: неудача, достижение, опрос, общественное мнение, образовательное учреждение.

“MODERN EDUCATIONAL INSTITUTION’S ACHIEVEMENTS AND FAILURES WITH THE EXAMPLE OF SHIRAK REGION’S SECONDARY AND HIGH SCHOOL”

Sargsyan R. Zh.

The article considers achievements and new challenges in the area of education. Education is the act of acquiring knowledge, skills and cognitive abilities by preparing oneself intellectually for mature life. Through quantitative and qualitative surveys, a study of public opinion on the achievements and failures of modern educational institutions in Shirak region was carried out.

Keywords: failure, achievement, public opinion research, educational institution.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յ. Ա., Սահակյան Ա. Ս. Մանկավարժություն, հրատ. Երևան: 2005: 230 էջ:
2. Ղույումյան Գ. Ե. Մանկավարժություն, «Զանգակ» հրատարակչություն: Երևան: 2005: 463 էջ:
3. ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր: 2011: Երևան: էջ 5:
4. Зубова Л. В. и др. Антропологические основания образования. /Оренбург. 1998. –С. 52.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մարգարյան Ռ. Ժ. – բակալավրիատ 4-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Սոցիոլոգիա

Էլ. փոստ՝ rimasargsyan06@mail.ru

Գիտական ղեկավար՝ Բաղդասարյան Լ.

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 03.02.2023

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՏՐՈՆԻ ԴԵՐՈ ՀԱՅ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԶ
(ԳՅՈՒՄՐՈՒ ԳՈՐԾՈՂ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)
Պետրոսյան Բ. Հ.**

Թատրոնը արվեստի ճյուղ է, որտեղ արտահայտման հիմնական միջոցը դերասանն է: Թատրոնի գլխավոր առանձնակատկությունը նրա գրական հիմքն է, այն ամենաազդեցիկ միջոցն է, որը կարող է ներգործել մարդու վրա և հասցնել ինքնամաքրման՝ կատարսիսի: Հողվածում ուսումնասիրվում է ժամանակակից թատրոնի դերը հայ հասարակության մեջ (Գյումրու գործող թատրոնների օրինակով): Քանակական և որակական հարցումների միջոցով փորձել ենք հասկանալ տեղի բնակչության հետաքրքրվածության մակարդակը դեպի թատրոն, թատրոնի ազդեցությունը հասարակության կրթվածության և զարգացածության վրա, իրականացրել ենք հանրային կարծիքի ուսումնասիրություն:

Բանալի բառեր. թատրոն, հայ թատրոն, մշակույթ, հասարակություն, արվեստ, ժամանակակից ներկայացումներ:

Նախաբան: Թատրոնն արվեստի տեսակ է, որն արտահայտվում է հասարակության առջև դերասանի խաղով պայմանավորված բեմական գործողությամբ: Թատերական ներկայացումը գրական երկի և բեմական գործողության համադրությամբ ստեղծվող իրականություն է: Թատրոնն առաջացել է Դիոնիսոսին նվիրված առասպելների բեմադրություններից, իսկ հայկական թատրոնը՝ ստրկատիրական համայնական կարգերի ժամանակ Գիսանե և Անահիտ աստվածուհիներին նվիրված ծիսակատարություններից: Հայկական պրոֆեսիոնալ թատրոնն առաջացել է հելլենիստական դարաշրջանի հայկական միապետություններում ողբերգությունից և ժողովրդական կատակերգությունից [4]: Ուսումնասիրության նպատակն է հասկանալ ներկայիս ժամանակակից թատրոնի առանձնահատկությունը, և թե որքանով է այն ազդում հանդիսատեսի կրթվածության, զարգացածության և մտահորիզոնի վրա, որի պարզաբանումը կներկայացնենք Գյումրու գործող թատրոնների օրինակով: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է հատկապես վերջին ժամանակաշրջանում հեռուստատեսության,

համացանցի և նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ, որը նվազեցրեց մարդկանց հետաքրքրվածությունը դեպի թատրոն: Մակայն հիմա երիտասարդների կողմից նկատվում է հետաքրքրության մեծ ալիք, որը նրանց տալիս է բարձր գեղագիտական և բարոյահոգեբանական ընկալումներ, ճաշակ և ինքնաճանաչվելու հնարավորություն: Հողվածում առանձնացրել ենք մի շարք խնդիրներ՝ նպատակին հասնելու և վերլուծություններ կատարելու համար.

- ✓ Ուսումնասիրել ժամանակակից թատրոնի դերն ու առանձնահատկությունները:
- ✓ Հասկանալ բնակչության հետաքրքրվածության մակարդակը (Գյումրու գործող թատրոնների օրինակով):
- ✓ Ուսումնասիրել ժամանակակից թատերական ներկայացումների թեմաները և խաղացանկը:
- ✓ Երիտասարդների հոսքը թատրոն ակտիվացել է: Հասկանալ, թե ինչով է պայմանավորված այդ դրական միտումը:
- ✓ Անցկացնել սոցիոլոգիական հետազոտություն:

Ժամանակակից փիլիսոփայական միտքն անընդհատ կյանքը համեմատում է թատրոնի հետ, համարում, որ ինչ-ինչ վերին-անհայտ ուժերի կողմից նախապես գրված սցենար է, և պիտի կատարվի այն, ինչը գրված է: Այսինքն՝ մարդը սկզբից ևեթ դատապարտված է իրեն հատկացված դերը խաղալու՝ չգիտակցելով այդ մասին: Այս գաղափարի սկիզբը թերևս դրեցին ճակատագրապաշտները, ովքեր մարդուն խամաճիկ էին համարում, ինչից էլ ածանցվեցին էրզիստենցիալիզմի և աբսուրդի որոշ դրույթներ [2]:

Հայ ժամանակակից դրամատիկական երկերում հանդիպում են իրական տեղանքներ ու իրական մարդկանց անուններ. այսպիսի փորձերը թատրոնը կյանքին կամ ավելի շուտ մեր իրականությանը մոտեցնելուն են միտված [3]: Մա է հաստատում նաև գրականագետ Ժենյա Քալանթարյանի այն միտքը, թե այս շրջանում նկատելի է երկու հակադիր միտում: Մի դեպքում վերանում է կյանքի ու թատրոնի սահմանագիծը, և թատրոնն ընկալվում է իբրև կյանքի ուղղակի շարունակություն, մյուս դեպքում կյանքը համարվում է թատրոն, և դերասանները գիտակցում են, որ խաղում են, ռեժիսորները սովորական կերպարների են վերածվում, հեղինակները դառնում են գործող անձինք և այլն [1]:

Մշակութային քաղաք Գյումրիում, այն ժամանակ՝ Ալեքսանդրապոլում, գրական-գեղարվեստական կյանքի աշխուժաց-

մանը զուգահեռ, հասարակական միջավայրի թելադրանքով 1865թ. սկզբնավորվեց թատրոնը: Թատերախումբը 1865 թվականի մայիսի 23-ին հանդիսատեսին ներկայացրեց իր անդրանիկ բեմադրությունը՝ Հ. Կարինյանի «Շուշանիկ» պատմական ողբերգությունը: Եթե սկզբնական շրջանում բեմադրվում էին պատմական ողբերգություններ և ֆրանսիական մելոդրամաներ, հետագայում արդեն թատերախումբը, մշակելով իր խաղացանկը, անդրադարձավ նաև ժամանակակից կյանքի գեղարվեստական արտահայտմանը: Այդ գործում շրջադարձային եղավ Գ. Սունդուկյանի դրամատուրգիան: Ալեքսյուլի թատերական կյանքի աշխուժացման խոսուն վկայությունը եղավ 1912-ին Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրությունը: Գյումրու թատրոնի հետ կապված են այնպիսի անուններ, ինչպիսիք են՝ Վարդան Աճեմյան, Մհեր Մկրտչյան (Ֆրունզիկ), Ալբերտ Մկրտչյան, Արզո Արզումանյան, Արտավազ Փաշայան, Ժաննա Թովմասյան, Արուս Ազնաուրյան, Նինա Բոխյան և ուրիշներ [5]:


Պարզելու համար, թե ինչ դեր ունի թատրոնը և ինչ ազդեցություն է թողնում տեղի բնակչության վրա, իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն Գյումրի քաղաքում: Հարցմանը մասնակցել են 15-ից 35 տարեկան 40 քաղաքացիներ: Հարցման ենթարկվածների 86,5%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, 13,5%-ը՝ արական:

Առանձնացրել ենք տարիքային մի քանի խումբ, որը շատ պայմանական է, քանի որ Հայաստանի երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգով՝ երիտասարդներ են համարվում 16-30 տարեկան անձինք, բայց, ինչպես տեսնում եք, մենք պայմանականորեն նշել ենք մինչև 35 տարեկան ՀՀ քաղաքացիներ, քանի որ որոշոկի միջազգային չափանիշներով՝ երիտասարդ կարող է համարվել մինչև 35 տարեկան անձը:

Մեր ստացած պատասխաններից երևում է, որ հարցման ենթարկվածների 35,1%-ը 15-ից 20 տարեկան է, 29,7%-ը՝ 21-ից 25 տարեկան, 16,2%-ը՝ 26-ից 30 տարեկան, և 18,9%-ը՝ 30 և բարձր տարիքի է: Հաշվի առնելով, որ վերլուծության համար կարևոր էր հետազոտության ենթարկվածների կրթական մակարդակը, հարցումն անցկացվել է միջնակարգ, բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեցողների հետ, արդյունքում ստացել ենք հետևյալ պատասխանները. հարցման ենթարկվածների 64,9%-ը ունի բարձրագույն կրթություն, 16,2%-ը՝ թերի բարձրագույն, միջնակարգ կրթություն ունի 16,2%-ը: Հաշվի առնելով հեռուստատեսության, համացանցի և

նորագույն տեխնոլոգիաների զարգացումը՝ նկատի ենք ունեցել թատրոնի հնարավոր ոչ բավարար հանդիսատես ունենալը, քանակական հարցման ժամանակ փորձել ենք պարզել, թե ինչ հաճախականությամբ են հարցման ենթարկված անձինք հաճախում թատրոն՝ թատերական ներկայացումներ դիտելու, ստացել ենք հետևյալ պատասխանները. 75,7%-ը հիմնականում այցելում է տարին 1-2 անգամ, և ընդհանրապես չի հաճախում 8,1%-ը: Մեր հետազոտության խնդիրներից մեկն էր ուսումնասիրել ժամանակակից ներկայացումների խաղացանկը և մարդկանց հետաքրքրությունը այդ ամենի շուրջ, և այն հարցին, թե «որքանո՞վ է հետաքրքրում Ձեզ թատրոնի հրապարակած խաղացանկը», ստացել ենք հետևյալ պատասխանները. 43,2%-ը հետաքրքրվում է խաղացանկով, 37,8%-ը բավականին հետաքրքրված է, և 18,9%-ը, ավելի շատ, չի հետաքրքրվում:


Մեր հարցման նպատակներից էր հասկանալ, թե ինչպես է գնահատում տեղի բանկչությունը Գյումրու գործող թատրոնների բեմադրությունները, բեմադրությունների թեմաները, և խնդրել ենք 10 բալային սանդղակի միջոցով գնահատել այն: Արդյունքում ստացել ենք հետևյալ պատասխանները. 36,1%-ը գնահատել է 10, 33,3%-ը գնահատել է 9, 11,1%-ը գնահատել է 8 միավոր, 5,6%-ը գնահատել է 7, 11,1%-ը գնահատել է 6, 2,8%-ը գնահատել է 5 միավոր:



Գծապատկեր 1. 0-10 բալային սանդղակի միջոցով ինչպե՞ս կգնահատեք Գյումրու գործող թատրոնների բեմադրությունները:

Մեզ հետաքրքրում էր, թե հարցվողները որքանով են ծանոթ տեղի դերասանական կազմին: Ստացել ենք հետևյալ պատասխանները. 43,2%ը բավականին ծանոթ է, 37,8%-ը ծանոթ չէ, 10,8%-ը ծանոթ է, և 8,1-ը նշել է պատասխանի այլ տարբերակ: Խնդրել ենք նաև 10 բալային

սանդղակի միջոցով գնահատել Գյումրու գործող թատրոնի դերասանական կազմի խաղը և ստացել ենք հետևյալ պատասխանները. 36,1%-ը գնահատել է 10 միավոր, 25%-ը՝ 9, 25%-ը՝ 8, 11,1%-ը՝ 7 և 2,8%-ը՝ 6 միավոր:



Գծապատկեր 2. Որքանով եք ծանոթ տեղի դերասանական կազմին:

Այն հարցին, թե «ըստ Ձեզ՝ ինչ ազդեցություն են թողնում թատրոնը, ժամանակակից թատերական ներկայացումները տեղի հասարակության կրթության և զարգացածության վրա», ստացել ենք հետևյալ պատասխանները՝ 65,7%-ը նշել է շատ լավ, 31,4%-ը նշել է լավ: Եվ այն հարցին, թե «Գյումրու մշակույթում ի՞նչ դեր ունի թատրոնը», ստացել ենք հետևյալ պատասխանները. 61,1%-ը նշել է, որ շատ մեծ դեր ունի տեղի և հայաստանյան մշակութային կյանքում, քանի որ այստեղ են իրենց շնորհիվ ի ցույց դրել այնպիսի անվանի դերասաններ, ինչպիսիք են Վարդան Աճեմյանը, Մհեր Մկրտչյանը (Ֆրունզիկ), Ալբերտ Մկրտչյանը, Արզո Արզումանյանը, Արտավազ Փաշայանը և ուրիշներ: Արդյունքում 36,1%-ը նշել է, որ Գյումրու մշակույթը սկսվում է հենց թատրոնից: Այստեղից պարզ է դառնում, որ հարցվողները շատ բարձր են գնահատում թատերական արվեստը:

Տեղի թատրոնների դերասանների հետ անցկացրած որակական հետազոտության արդյունքներն ամփոփելով՝ կարող ենք ասել, որ թատրոնը դառնում է կենսական պահանջ, դառնում է ինքնադրսևորվելու, ինքնահաստատվելու, ինքնաճանաչվելու վայր: Մեր քաղաքը ինքն է ծնել թատրոնը: Թատրոն երևույթը եղել է շատ վաղուց, բայց Գյումրու թատրոնը ծնել է հենց քաղաքը, պահանջարկը եղել է հենց քաղաքի մարդկանցից:

Մեզ ճիշտ խաղացանկային քաղաքականություն է հարկավոր, քանի որ անպայման ուշադրություն պետք է դարձնենք պատանի հանդիսատեսին, որովհետև վաղը նա մեր արդեն լուրջ և ավելի հասուն հանդիսատեսն է: Մենք չենք կարող մեր ժամանակից դուրս գնալ, ուզենք թե չուզենք ժամանակի ոգին թատրոնը իր մեջ կրում է, որովհետև թատրոնը կենդանի օրգանիզմ է, ինքը ապրում է տվյալ ժամանակաշրջանի մեջ, ինքը տառապում է նույն ցավերի մեջ, ինչ հասարակությունը, ինչ մարդը, բայց բոլոր ժամանակներում էլ թատրոնը իր մեջ կրել է դա: Մշակույթը թերևս միակ ճշմարիտ պատմիչն է, այս դեպքում՝ թատրոնը, քանի որ նայելով թատրոնի խաղացանկին՝ կտեսնենք, թե տվյալ ժամանակաշրջանում ինչ է տեղի ունեցել:

Այսպիսով, ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել.

- ✓ Թատրոնը կա և մնում է մարդկանց կողմից սիրված վայրերից մեկը: Թատրոնը հնարավորություն է տալիս ձեռք բերել գեղագիտական ընկալումներ, բարձր ճաշակ: Թատրոնը բավականին մանրակրկիտ աշխատանք է տանում այդ ուղղությամբ՝ թեկուզ զարգացման որոշակի մակարդակի հասցնելով և նպատակ ունենալով ամեն անգամ այդ զարգացման նշաձողը ավելի բարձրացնելու: Պարբերաբար թատրոն այցելությունները զարգացնում են հաղորդակցվելու, մեր զգացմունքներն ու հույզերն արտահայտելու կարողությունը:
- ✓ Գյումրին ու գյումրեցիները սիրում են թատրոնը, Գյումրու թատրոնի հանդիսատեսը, գյումրեցի հանդիսատեսը պահանջկոտ հանդիսատես է, և այն, ինչ որ արվեստից հեռու է, չի ընդունվում գյումրեցու կողմից, հետևաբար, բեմը փորձում է ներկայացնել այնպիսի ստեղծագործություններ, որոնք հավուր պատշաճի կլինեն: Թատրոնը պետք է և օգնում է հանդիսատեսին պատկերացնել կյանքի խնդիրները տարբեր տեսանկյուններից՝ ցույց տալով ստեղծված իրավիճակից դուրս գալու բոլոր հնարավոր ուղիները:
- ✓ Մերունդներ կրթելու համար պետք է ունենալ ճիշտ խաղացանկային քաղաքականություն, քանի որ թատրոնի հիմնական խնդիրն է դառնում հանդիսատեսի հուզումն ու զգայական վակուումը:

Առաջարկություններ.

- Առաջարկում ենք թատրոնի աշխատանքային կազմին անցկացնել տեղեկատվական աշխատանքներ, այցելել կրթական հաստատություններ, որպեսզի երիտասարդներն ավելի մոտիվացված լինեն:
- Առաջարկում ենք երիտասարդներին ցուցաբերել հետաքրքրվածություն դեպի արվեստ, թատրոն և թատերական ներկայացումներ:
- Առաջարկում ենք ԿԳՄՍ նախարարությանը որոշակի քաղաքականություն մշակել հայաստանյան մշակութային կյանքն ավելի հետաքրքիր դարձնելու և օտարերկրացիների մոտ հետաքրքրվածությունը բարձրացնելու համար:
- Առաջարկում ենք քաղաքի հյուրերին անպայման այցելել Գյումրու պետական դրամատիկական թատրոն, քանի որ այդտեղից է սկսվում Գյումրու մշակույթը:
- Առաջարկում ենք պետությանը, մասնավորապես՝ ԿԳՄՍ նախարարությանը, ուշադրություն դարձնել դերասանների վարձատրությանը, քանի որ իրենց կատարած աշխատանքի դիմաց շատ քիչ աշխատավարձ են ստանում:

РОЛЬ СОВРЕМЕННОГО ТЕАТРА В АРМЯНСКОМ ОБЩЕСТВЕ (НА ПРИМЕРЕ ТЕАТРОВ, ДЕЙСТВУЮЩИХ В ГЮМРИ)

Петросян Б. О.

Театр – это отрасль искусства, где основным средством выражения является актер. Главной особенностью театра является его литературная основа, и это самое действенное средство, которое способно воздействовать на человека и привести к самоочищению, катарсису. В статье изучается роль современного театра среди армянского населения (на примере действующих в Гюмри театров). Путем количественного и качественного опроса попытались понять уровень заинтересованности местного населения к театру, его воздействие на образованность и развитие общества, провели изучение общественного мнения.

Ключевые слова: театр, армянский театр, культура, общество, искусство, современные представления.

“THE ROLE OF THE CONTEMPORARY THEATER IN THE ARMENIAN SOCIETY”

(BASED ON THEATERS OPERATING IN GYUMRI)

Petrosyan B. H.

Theater is a branch of art where the actor is the main performer with expressive skills and knowledge. The key feature of the theater is its literary basis; it is the most famous means that can affect a person and lead to self-purification catharsis. The article examines the role of modern theater in the Armenian society (on the example of theaters operating in Gyumri). Through quantitative surveys (public opinion survey), we have tried to understand the level of public interest in theater.

Keywords: theater, Armenian theater, culture, society, art, modern performances.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանեսյան Ա. Արդիի հայ դրամատուրգիա: 1991-2008. գլուխ երրորդ. Բ) Կյանք-թատրոն հարաբերությունները:
2. Զեյթունցյան Պ. Ծնվել է ու մահացել. Դրամա: Երևան: 1995: 231 էջ:
3. Քալանթարյան Ժ. Ուրվագծեր արդիի հայ գրականության: Երևան: 2006: 151 էջ:
4. Гоян Г. «2000 лет Армянского театра. Том первый: театр древней Армении». Государственное издательство «Искусство». Москва. 1952.
5. Գյումրու Թատերական գրադարան
<https://gyumritheatre.am/site/chronicle>

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Պետրոսյան Բ. Հ. - բակալավրիատ 4-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Սոցիոլոգիա
էլ. փոստ՝ bellpetrosyan21@gmail.com

Գիտական ղեկավար՝ Բաղդասարյան Լ.

Ստացվել է՝ 10.11.2022

Գրախոսվել է՝ 06.02.2023

**ԱՐՏԱՔԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԴՐԱՆՔ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ Ու
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ
ՈւՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ
Քոչարյան Բ. Ս.**

Հոդվածի ուսումնասիրության կենտրոնում արտաքին միգրացիայի պատճառների ուսումնասիրությունն է Հայաստանի Հանրապետությունում: Քանակական և որակական հարցումների միջոցով իրականացվել է ՀՀ բնակչության արտաքին միգրացիայի և դրանք ծնող պատճառների ու հետևանքների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն:

Բանալի բառեր. միգրացիա, արտաքին միգրացիա, արտագաղթ, ՀՀ բնակչություն, հանրային կարծիքի ուսումնասիրություն, պատճառներ:

Նախաբան: Յուրաքանչյուր երկրի բնակչության թվաքանակը փոխվում է ոչ միայն բնական շարժի (սերնդափոխություն), այլև մեխանիկական շարժի՝ միգրացիայի (գաղթերի) շնորհիվ: Բնակչության (աշխատուժի) միգրացիան իրենից ներկայացնում է մարդկանց տեղաշարժը, որի արդյունքում վերջիններս հատում են որոշակի տարածքների սահմաններ՝ նպատակ ունենալով կամ փոխել մշտական բնակչության վայրը, կամ հետագայում վերադառնալ դրան: Միգրացիաները կարևոր դեր են կատարել մարդկության պատմության մեջ. նրանց հետ են կապված բնակեցման, հողի տնտեսական յուրացման, արտադրողական ուժերի զարգացման, ռասաների, ժողովուրդների ու լեզուների կազմավորման և աշխարհով մեկ տարածման գործընթացները: ՀՀ բնակչության արտաքին միգրացիայի ուսումնասիրությունը, արտաքին միգրացիայի տեսակները ծնող պատճառները ու հետևանքները, մեկնման նպատակները, ինչպես նաև միգրացիոն տեղաշարժերի արդի վիճակը ներկայումս համարվում է կարևոր հիմնահարց: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է հատկապես վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունից բնակչության տարերային արտագաղթի, ոչ օրինական աշխատանքային միգրացիայի աճող տեմպով, որը ծնում է բազմաթիվ սպառնալիքներ, այդ թվում՝ որակյալ աշխատանքային

ռեսուրսների կորուստ, ժողովրդագրական վիճակի վատթարացում, ազգային անվտանգության խաթարում՝ կապված սահմանամերձ բնակավայրերից բնակչության աննախադեպ արտագաղթի հետ: Հոդվածում առանձնացրել ենք մի շարք խնդիրներ՝ նպատակին հասնելու և վերլուծություններ կատարելու համար.

- ՀՀ միգրացիոն հոսքերի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների ուսումնասիրություն՝ սեռ, տարիք, կրթություն, ժամանման երկիր և այլն:
- Հայաստանից միգրանտի մեկնումը պայմանավորող գործոնները, մեկնման երկրում միգրանտների կարգավիճակի, զբաղմունքի, գործունեության ոլորտի և այլնի պարզաբանում:
- Վերհանել արտաքին միգրացիայի պատճառները ՀՀ-ում:
- Հասկանալ արտաքին միգրացիայի հետևանքները ՀՀ-ում և Շիրակի մարզում:
- Արտաքին միգրացիայի նպատակների վերլուծություն՝ մշտական բնակություն, աշխատանք և այլն:
- Բացահայտել արտաքին միգրացիայի դրական և բացասական կողմերը:
- Անցկացնել սոցիոլոգիական հետազոտություն ՀՀ աշխատանքային միգրանտների և միգրացիայի ոլորտի մասնագետի հետ:

Հայաստանի Հանրապետությունն ունի միգրացիայի երկարատև պատմություն: Պատմության ամբողջ ընթացքում հայերը հաճախակի են բռնել գաղթի ճանապարհը, որը հանգեցրել է սփյուռքի բազմաթիվ ու բազմազան գաղթօջախների գոյացմանը ամբողջ աշխարհում: Թեպետ միգրացիայի տեսակներն ու ձևերը ժամանակի ընթացքում փոփոխվում են, բայց վերջին տասնամյակներին բնորոշ են սեզոնային աշխատանքային միգրացիայի մեծ արտահոսքեր [1]: Վիճակագրական տվյալները փաստում են, որ արտագաղթը Հայաստանում ոչ միայն չի նվազում, այլ նաև տարեցտարի ավելանում է արտագաղթել ցանկացողների թիվը: Ըստ Վիճակագրական կոմիտեի 2022թ.-ի հունվարի 1-ի տվյալների՝ 2021թ.-ին Հայաստանից ավելի շատ քաղաքացի է մեկնել, քան ժամանել, Հայաստանի անձնագրով մեկնողների ու ժամանողների տարբերությունը անցած տարի գերազանցել է 73 հազարը: Սա ամենաբացասական ցուցանիշն է՝ անցած տասը տարվա ընթացքում [4]: Բնակչության միգրացիայի տեսական ուսումնասիրությունը սկսվել է դեռևս երկու դար առաջ՝ անգլիացի

գիտնական Է. Ռավենշտայնի կողմից: Միգրացիա նշանակում է «տեղաշարժ»: Միգրացիան կարող է լինել երկու տեսակի՝ ներազգային, այսինքն՝ տեղափոխություն տվյալ երկրի սահմանների ներսում, և միջազգային, որի արդյունքում մարդիկ հատում են երկրի պետական սահմանները [2]: Է. Ռավենշտայնն այդ գործընթացը դիտարկում էր որպես «մարդու բնակության վայրի մշտական կամ ժամանակավոր փոփոխություն», «անդադար գործընթաց», որը պայմանավորված է հետևյալ գործոնների հիմնական խմբերի փոխազդեցությամբ՝ միգրանտի բնակության երկիր, տեղաշարժի փուլ, ներգաղթի երկիր, անձի նախասիրությունների համակարգ և այլն [3]: Ըստ Լ. Լ. Ռիբակովսկու տեսակետի՝ արտաքին միգրացիան մի երկրի տարածքից մեկ այլ երկրում բնակչության վերաբնակեցումն է [2]:

Ներկայումս արտագաղթը ՀՀ-ում շարունակվում է. այն դարձել է սովորական երևույթ: Այս համատեքստում արված վերլուծությունները և հարցումները մասնավորապես փաստում են, որ մշտապես արտագաղթողների գենդերային կառուցվածքը նույնն է, տղամարդիկ գերակշռում են: Գործազրկությունը բարձր է և՛ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում, հայրենիքում աշխատանք ունեցողները և չունեցողները հակված են դիմելու միգրացիայի:

Հարցումն իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում: Հարցմանը մասնակցել է 120 հարցվող: Նշենք նաև, որ հարցվողների մեծ մասը Գյումրի քաղաքից է: Հարցվողների գերակշիռ մասը՝ 31,8%-ը, ունեցել է միջին մասնագիտական կրթություն, 15%-ը՝ բարձրագույն կրթություն: Հարցվողների մեծամասնությունը կանայք են:

Արտաքին միգրացիայի վերաբերյալ հարցվողների տեղեկացվածությունը պարզելու նպատակով առաջադրվել է մի քանի հարց: Հարցված բնակչության 89,2%-ի կարծիքով արտաքին միգրացիան այն մարդկանց տեղաշարժն է, ովքեր արտագաղթում են մի երկրից մյուսը, իսկ 10,8%-ը նշել է, որ արտաքին միգրացիան այն մարդկանց տեղաշարժն է, ովքեր արտագաղթում են նույն երկրի կամ տարածաշրջանի ներսում: Բնակչության շրջանում արտաքին միգրացիայի տեսակներից հայտնի է աշխատանքային միգրացիան (80%), հաջորդիվ նշել են ընտանիքի և կրթության միգրացիա: Այսինքն՝ հարցվողների մեծամասնությունը ունի գաղափար արտաքին միգրացիայի վերաբերյալ, բայց կա որոշակի խումբ, ովքեր անտեղյակ են արտաքին միգրացիայից, իսկ արտաքին միգրացիայի տեսակներից տեղյակ են ընդամենը 3-ից՝ աշխատանքային, կրթական և ընտանիքի

միգրացիայից, այսինքն՝ այն տեսակներից, որոնք ունեն լայն տարածում: Հայաստանից միգրանտի մեկնումը պայմանավորող գործոններից հարցվողները նշել են հետևյալը՝

- Աշխատանքի բացակայությունն է (աշխատանք չգտնելը, չկարողանալը):
- Մասնագիտական աշխատանքի բացակայությունը, և Հայաստանում զարգացման հեռանկարների բացակայությունը:
- Բարձր աշխատավարձ:
- Բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարիությունը:
- Անցանկալի բարոյահոգեբանական մթնոլորտը:

Այսպիսով, դիտարկելով ստացած տվյալները՝ պարզ է դառնում, որ Հայաստանից միգրանտի մեկնումը պայմանավորող գործոնները բազմաթիվ են, բայց գլխավոր գործոնը եղել և մնում է սոցիալ-տնտեսականը՝ աշխատանքի բացակայությունը, աշխատանք չգտնելը և աշխատել չկարողանալը: Սոցիալական խնդիրները լուծելու համար մարդը ստիպված լքում է իր երկիրը, քանի որ իր երկրում չկա կամ չի կարող գտնել աշխատանք՝ բարձր աշխատավարձով, և այս խնդիրը ներկայումս արդիական է: Բնակչության կարծիքով արտաքին միգրացիայի հետևանքները բացասական են.

- Արտաքին միգրացիան կհանգեցնի երկրից բնակչության արտահոսքի, երկիրը կարող է հասցնել ճգնաժամի, կան գյուղեր, որտեղ բնակիչները գտնվում են արտերկրում, այդ գյուղերը մնացել են դատարկ ու անմշակ՝ չնայած այն բանի, որ գյուղերում ավելի շատ է աշխատանքը: Կան միգրանտներ, ովքեր արտերկրում ընտանիք են կազմում և այլևս չեն վերադառնում կամ ուղղակի թողնում են իրենց ընտանիքը:
- Երիտասարդության արտահոսքի հետևանքով երկիրը կունենա ծերացող հասարակություն, տեղի կունենա «ուղեղի» արտահոսք, որը բացասական կանդրադառնա երկրի զարգացման վրա:

Շատ քչերի կարծիքով արտաքին միգրացիան կարող է զարգացման համար շատ դրական ուժ լինել: Հարցվողները նաև նշեցին արտաքին միգրացիայի դրական և բացասական կողմերը.

- *Դրական կողմերն են.* արտագաղթը կարող է ստեղծել աշխատանքի համար արժեքավոր հնարավորություններ և եկամուտ գոյացնել թե՛ միգրանտի, թե՛ փոխանցումների տեսքով ուղարկող երկրի համար:

Այն կարող է խթանել մասնագիտական աճը, նոր հմտությունների և գիտելիքի ձեռքբերումը: Փոխանցումների միջոցով կարելի է վճարել կրթության, բուժապասարկման և այլնի համար, որոնք նախկինում անմատչելի էին: Տնային տնտեսության անդամի աշխատելը այլ երկրում կարող է օգնել տնային տնտեսությանը՝ ստեղծելու կամ ընդլայնելու սեփական բիզնեսները կամ թեթևացնել իր երկրում ունեցած պարտքերը: Միգրանտները կատարում են նաև «սոցիալական փոխանցումներ»՝ նոր արժեքների, գաղափարների և գործելակերպի տեսքով, ինչը կարող է բարելավել հասարակությունը կամ բիզնեսները: Արտաքին միգրացիայի շնորհիվ մարդիկ կարող են նորարարություններ բերել իրենց երկիր, օրինակ՝ այլ ազգի մշակույթ և գիտություն:

➤ *Բացասական կողմերն են.* աշխատանքի նպատակով արտագաղթը կարող է լուրջ հետևանքներ ունենալ հասարակությունների համար: Այն կարող է նպաստել բնակչության քչանալուն, ինչը նվազեցնում է ապրանքների և ծառայությունների պահանջարկը և վնաս հասցնում տեղական տնտեսություններին և բիզնեսներին, հասարակությունից տանել առավել արտադրողական անդամներին, ինչը կրճատում է հարկային եկամուտները և հանրային ծառայություններում ու ենթակառուցվածքներում ներդրում կատարելու հնարավորությունները, կարող է նաև հանգեցնել ընտանիքի բաժանմանը՝ հնարավոր բացասական, զգացական և սոցիալական հետևանքներով: Միգրանտները գուցե չունեն ճանապարհորդելու այնքան էլ դրական փորձ, արտաքսվել կամ վտարվել են նշանակետային երկրից, երբ, օրինակ, կորցրել են աշխատանքը, անօրինական են աշխատել կամ եղել են անկանոն միգրանտ: Վերադարձից հետո նրանք կարող են հայտնվել տնտեսական և/կամ սոցիալական դժվարին վիճակում: Մասնակիցները նշում են, որ արտաքին միգրացիան իրենով բացասական է՝ երկիր լքելը, կարոտը երկրի և ընտանիքի նկատմամբ, բնակչության արտահոսքը և հետ չվերադառնալը:

Բնակչության զգալի մասը՝ 76,7%-ը, մտածել է արտաքին միգրացիայի դիմելու մասին, իսկ 23,3%-ը՝ ոչ: Ինչու «Ոչ» հարցին, հարցվողները նշել են, որ որևէ պատճառ չունեն արտաքին միգրացիայի դիմելու, չեն ուզում լքել երկիրը կամ չեն կարող ապրել այլ երկրում՝ ընտանիքից և հարազատներից հեռու: Մեկնելու դեպքում արտերկրում կմնան 1-2 տարի կամ 3-5 տարի: Հիմնականում նախընտրում են մեկնել Ռուսաստանի Դաշնություն կամ եվրոպական երկրներ: Ըստ հարցման

ՀՀ-ից արտաքին միգրացիայի դիմում են տարբեր նպատակներով՝ աշխատելու նպատակով, հանգստանալու նպատակով, սովորելու նպատակով, ապրելու (մշտական կամ ժամանակավոր), իրենց ընտանիքին միանալու նպատակով:

Թեև արտաքին միգրացիան, ըստ հարցվողների, բացասական երևույթ է և ունի բացասական հետևանքներ, բայց հետազոտությունից պարզ է դառնում, որ մարդիկ, ելնելով որոշակի հանգամանքներից (կարիքից ելնելով), դիմում են արտաքին միգրացիայի: Արտաքին միգրացիայի դիմելու պատճառները տարբեր են. հայտնի փաստ է, որ Հայաստանից մեկնող միգրանտների ճնշող մեծամասնությունը տղամարդիկ են. մեր կատարած հետազոտությունում նույնպես տղամարդիկ են:

Միգրանտի գործունեության ոլորտը արտերկրում տղամարդկանց դեպքում շինարարությունն է և տրանսպորտը: Շինարարության և տրանսպորտի մասնագետի պարագայում միգրացիոն բարձր ակտիվությունը պայմանավորված է մեկնման երկրներում, հատկապես Ռուսաստանում, հմուտ աշխատուժի նկատմամբ պահանջարկի առանձնահատկություններով: Թեև այդ մասնագետների մեծ մասի նկատմամբ պահանջարկը Հայաստանի աշխատաշուկայում վերջերս մեծացել է, նրանց արտերկիր մեկնելու որոշումը հիմնականում պայմանավորվել է արտերկրում աշխատանքի ավելի բարվոք պայմաններով (հատկապես աշխատավարձերի ավելի բարձր մակարդակով):

Ըստ հարցվողների՝ արտաքին միգրացիայի ժամանակ միգրանտը արտերկրում կանգնում է հետևյալ խնդիրների/դժվարությունների առաջ

- լեզվի վատ իմացության խնդիր,
- մտածելակերպի խիստ տարբերություն, ինչը դժվար համակերպման ու ընտելացման պատճառ է դառնում,
- բնակավայրի հետ կապված խնդիրներ,
- փաստաթղթերի հետ կապված խնդիրներ,
- աշխատանք չգտնելու խնդիր,
- ազգային, ռասայական և կրոնական խտրականության, ադապտացիայի հետ կապված խնդիր ու ֆինանսական խնդիր,
- ինտեգրման խնդիր,
- անձնական անվտանգության խնդիր, կենցաղային պայմանների ու սննդի հետ կապված խնդիր:

Մասնակիցների կարծիքով արտաքին միգրացիան կարող է կանխել ՀՀ-ում աշխատատեղերի ստեղծումը և աշխատավաճի մի փոքր ավելացումը, ինչպես նաև որակյալ կրթության ապահովումը՝ երիտասարդների արտագաղթը կանխելու համար:

Ըստ ոլորտի մասնագետի՝ ՀՀ-ից արտաքին միգրացիայի դիմում են հիմնականում աշխատելու նպատակով: Արտաքին միգրացիայի գլխավոր պատճառ համարվում է գործազրկությունը: Արտաքին միգրացիան՝ մասնավորապես աշխատանքային միգրացիան, ունի զարգացնող նշանակություն, քանի որ տեղի է ունենում քաղաքակրթությունների երկխոսություն: Միգրացիան իր բացասական կողմերի հետ մեկտեղ՝ ժողովրդագրական հիմնախնդիրներ, միգրանտների մարդկային զարգացման հիմնախնդիրներ, միգրանտների շահագործում և նրանց իրավունքների խախտում, առողջապահական խնդիրներ, ունի նաև դրական կողմեր: Դրանցից կարելի է նշել դրամական փոխանցումները և մշակութային ու սոցիալական կապիտալը, որը նրանք ձեռք են բերում դրսում:

Այսպիսով, ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ.

- Մշտապես արտագաղթողների գենդերային կառուցվածքը նույնն է, տղամարդիկ գերակշռում են: Կրթության մակարդակը որևէ ազդեցություն չունի արտաքին միգրացիայի վրա, շատ դեպքերում կրթությունը չի համապատասխանում աշխատանքի մակարդակին կամ տեսակին արտերկրում: Քանակական և որակական հետազոտությունները հիմք ընձեռեցին նորից պնդելու, որ ՀՀ-ում միգրացիայի տարածված տեսակը արտաքին աշխատանքային միգրացիան է, իսկ արտաքին միգրացիայի դիմելու հիմնական նպատակը բարձր վարձատրությունն է և հայրենիքում աշխատանքի բացակայությունը:
- Գործազրկությունը բարձր է և՛ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում, հայրենիքում աշխատանք ունեցողները և չունեցողները հակված են դիմելու միգրացիայի: Ռուսաստանը գտնվում է պոտենցիալ միգրացիայի հավանական երկրների ցանկի գագաթին: Ռուսաստանի՝ որպես միգրացիոն ուղղության ժողովրդակա- նությունը կարելի է բացատրել երկիր մուտք գործելու հեշտությամբ, տեղի լեզվին տիրապետելով:

Հայաստանի Հանրապետության միգրացիոն իրավիճակի բարելավման առաջնահերթ քայլերը կարող են լինել.

- Միգրացիոն քաղաքականության կողմնորոշիչների հստակեցում և դրանց հետևողական արտացոլում ընդունվող օրենքների, ծրագրերի, որոշումների մեջ:
- Ստեղծել մի գործադիր մարմին, որ լիազորված կլինի անդրադարձառնալու ժողովրդագրական բոլոր հիմնահարցերին և պատասխանատու կլինի դրանց լուծմանը վերաբերող պետական մոտեցումների առաջարկման և մշակման, համապատասխան միջոցառումների կենսագործման համակարգման ու ընթացքի վերահսկման համար:
- Առաջարկում ենք պետությանը միգրանտների հետադարձը խրախուսելու համար կարևորել միգրանտներին թարմ տեղեկություններ տրամադրելը երկրում առաջացող նոր հնարավորությունների մասին:

ИЗУЧЕНИЕ ОБЩЕСТВЕННОГО МНЕНИЯ О ЗАРУБЕЖНЫХ МИГРАЦИЯХ, ИХ ПРИЧИНАХ И ПОСЛЕДСТВИЯХ

Кочарян К. С.

В основе исследования статьи лежит изучение причин внешней миграции в Республике Армения. Путем количественного и качественного опроса было проведено изучение общественного мнения населения РА о внешней миграции, а также причин и последствий.

Ключевые слова: миграция, внешняя миграция, эмиграция, население РА, изучение общественного мнения, причины.

A STUDY OF PUBLIC OPINION ON EXTERNAL MIGRATION AND ITS CAUSES AND CONSEQUENCES

Kocharyan Q. S.

The article focuses on the study of the cause of external migration in the Republic of Armenia. Through quantitative and qualitative surveys, a study of the public opinion on the external migration of the RA population and the causes and consequences of it was carried out.

Keywords: migration, external migration, emigration, RA population, public opinion research, causes.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթոյան Կ. Լ. Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները ՀՀ-ում: Երևան: 2015: 303 էջ:
2. Գալստյան Մ. Վ. Աշխատանքային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ում: Երևան: 169 էջ:
3. Рыбаковский Л. Л., Миграция населения: прогнозы, факторы, политика, М. Наука. 1987. 480 с.
4. Armstat.am Ժողովրդագրական իրավիճակ: <https://bit.ly/3Tq2XJn>, 16.10.2022:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Քոչարյան Ք. Մ. – բակալավրիատ 4-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Սոցիոլոգիա
Էլ. փոստ christinaqocharyan639@gmail.com

Գիտական ղեկավար՝ Բաղդասարյան Լ.

Ստացվել է՝ 07.11.2022
Գրախոսվել է՝ 06.02.2023

ԽԱՂԻ ԴԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ
Մկրտչյան Թ. Ա.

Այսօր արդիական և կարևոր նշանակություն ունի ուսումնական գործընթացում տարբեր մեթոդների ու միջոցների կիրառումը, որն էլ աշակերտներին հնարավորություն է տալիս ինքնակատարելագործվել, ինքնահաստատվել, զարգանալ: Զգայական հարմարավետ մթնոլորտի ստեղծումը դասարանում յուրաքանչյուրի համար, անկախ նրա կարողությունների ձևավորվածության մակարդակից, առաջնահերթ կարևորության և արդիական խնդիրներից է, որով մեծապես պայմանավորված է հետագա ուսուցման ողջ հաջողությունը, քանի որ այն ստեղծում է բարենպաստ պայմաններ՝ դպրոցում սովորելու դրական դրդապատճառների ձևավորման համար: Այս խնդիրների արդյունավետ լուծման միջոց են հանդիսանում դիդակտիկ խաղերը: Կրտսեր դպրոցում, վեց տարեկանների հետ աշխատելիս դիդակտիկական խաղը ուսումնական խնդրի իրականացման միջոց է, ուսումնական գործընթացի կազմակերպման ձև: Խաղը կարելի է դիտարկել և՛ որպես ուսուցման մեթոդ, և՛ որպես ուսուցման ձև, և՛ որպես ինքնուրույն գործունեություն, և՛ որպես երեխայի անհատականության համակողմանի զարգացման միջոց:

Բանալի բառեր. խաղ, մայրենի լեզու, կրտսեր դպրոց, ուսուցում, խաղային տեխնոլոգիաներ, լեզվական խաղեր, խոսքի զարգացում, դիդակտիկ խաղեր:

Սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում առանցքային դեր ունի մայրենին: Մայրենի լեզվի դասաժամերին լուծվում են տարրական դպրոցի համար խիստ ընդհանրական խնդիրներ, որոնցից են ուշադրության և հիշողության, մտածողության և կապակցված խոսքի միաժամանակյա, անընդհատ և ներդաշնակ զարգացումը: Խաչատուր Աբովյանը նշում է, որ տարրական ուսուցումն անպայման պետք է խաղային տեխնոլոգիայի կիրառմամբ տարվի՝ դրա հետ կապելով ազգի առանձնահատկությունները, մշակույթին հաղորդակից լինելու հնարավորությունը [4]:

Մայրենի լեզվի տարրական դասընթացում կարևորելով գործնական կերպով մայրենի լեզվի ուսուցումը՝ Ղ. Աղայանը մեծ ուշադրություն է դարձրել նաև ընթերցանության բնագրերի ընտրությանը՝ մեծ տեղ տալով «Ժողովրդավարական տաղանդի բարիքներին»՝ հեքիաթին ու ոտանավորին, որոնք կատարվում են դերային խաղերի շնորհիվ և ուսումնական գործընթացը դարձնում ավելի հաճելի և արդյունավետ [2]:

Հայ մեծանուն բանաստեղծ և մանկագիր Թումանյանը ևս անդրադարձ է կատարել խաղային գործունեությանը՝ ասելով. «Խաղը մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա ուրախությունը: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում է՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու» [2]:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցում մայրենիի դասերին, հիմնավորել դրանց իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանները:

Հոդվածի թեման արդիական է և ժամանակի պահանջ, քանի որ խաղը գործունեության տեսակ է, որն ուղղված է սոցիալական փորձի վերստեղծմանն ու յուրացմանը, որում զարգանում և բարելավվում է վարքի ինքնակառավարումը: Դասի խաղային ձևի ընթացքում ուսուցիչն օգտագործում է խաղային տեխնիկաներ և իրավիճակներ՝ ուսումնական գործունեությունը ստորադասելով խաղի կանոններին, ներմուծելով մրցակցային տարր, դասի դիդակտիկ նպատակը դնում է խաղային խնդրի տեսքով և օգտագործում ուսումնական նյութը որպես միջոց խաղի ժամանակ:

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է աշակերտների լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքների նախնական հաղորդակցմանը: Այսօր անառարկելիորեն ընդունվում է այն մոտեցումը, որ տարրական դպրոցը միայն գիտելիքների ձեռքբերման օղակ չէ. գիտելիքն ուսուցման այս փուլում դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Այսինքն՝ տարրական դպրոցում պետք է կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը, այլ դրանց՝ երեխաների կարիքներին համապատասխանությունը, նրանց կողմից յուրացման ձևերը, դրանց

գործածման արդյունավետությունը, հետագա ուսումնական գործունեության ընթացքում դրանց անհրաժեշտությունը և երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանելիությունը: Այս խնդիրների իրականացումը պահանջում է, որ ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները համապատասխանեցվեն կրտսեր դպրոցականների՝ ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին:

Սովորողների զարգացման գործում մեծ դեր ունի մայրենին: Մայրենի լեզվի ուսուցումը վերառարկայական բնույթ և ուղղվածություն ունի. այսինքն՝ հիմնական շեշտը դրվում է ոչ թե հայոց լեզվի հնչյունաբանության, քերականական կազմի որոշակի, հաջորդական և համակարգված ուսուցման, այլ դրանց ընդհանուր, կարելի է ասել՝ միաժամանակյա ուսումնասիրության վրա: Տարրական դպրոցում մայրենին դառնում է կրթական գործի և ուսումնառության մի օղակը, որի նպատակը ևս անձի բազմաբնույթ մտածողության, նրա հոգևոր ոլորտի ներդաշնակ զարգացումն է:

Տարրական դպրոցում խաղը՝ որպես ուսուցման ձև, նշանակալի տեղ է զբաղեցնում: Դպրոցականների խաղալու ցանկությունը անհրաժեշտ է ուղղել դեպի կրթական խնդիրների լուծում: Խաղը կարող է դառնալ դաստիարակման միջոց, եթե այն ամբողջությամբ ներառվի մանկավարժական գործընթացում: Այն դասերը, որտեղ կիրառվում են խաղային տեխնոլոգիաներ, դառնում են ավելի արդյունավետ, բարձրանում է կրթության և դաստիարակության որակը, քանի որ խաղային գործընթացը գրավում է ամբողջ դասարանի ուշադրությունը: Սկզբում երեխաներին հետաքրքրում է սոսկ խաղը, իսկ հետո այն նյութը, առանց որի չի կարողանում մասնակցել խաղին [1]:

Խաղի կիրառումը մայրենիի դասերին սկսվում է գրաճանաչության շրջանից: Մայրենի լեզվի ուսուցման առաջին կարևոր փուլը՝ տառուսուցումը, ուղեկցվում է խաղային տեխնոլոգիայի կիրառմամբ, որն էլ համարվում է գրավոր խոսքի զարգացմանը նպաստող կենդանի ու արդյունավետ մեթոդ: Ուսուցման առաջին տարվա առաջին օրերից սովորողը սկսում է տառեր, բառեր մուտքագրել իր խոսքում՝ այն ներդաշնակելով խաղային տեխնոլոգիայի կիրառման հետ: Համակարգիչը, էլեկտրոնային գրատախտակը, ուսումնական խաղերը հնարավորություն են տալիս առանց արհեստական ու պայմանական բաժանումների փոխկապակցել գրաճանաչության նախաայբբենական, այբբենական և հետայբբենական փուլերը: Երեխան նկարում-պատմում

է, միաժամանակ՝ երգում-վանկատում, մուտքագրում-ընթերցում: Երեխան պատմում է այն ամենի մասին, ինչն իրեն հետաքրքիր է, ինչն իրեն հուզում է: Պատմում է իր, ընտանիքի, հարազատների, տան մասին՝ ցուցադրելով լուսանկարները, դիտում ընկերոջ ցուցադրած լուսանկարների շարքը և տալիս իրեն հետաքրքրող հարցը, այդ շարքից առանձնացնում որոշակի նկարներ, կոնկրետացնում խոսքը, ապա նկարագրում, բնութագրում, բացատրում, մեկնաբանում: Այս ամենը նա շատ հաճախ կատարում է անգիտակցաբար, քանի որ կատարում է խաղերի միջոցով [2]:

Ներկայացնենք խաղերի մի քանի տեսակներ, որոնք կարող են կիրառվել տարբեր դասերի ընթացքում, դասի տարբեր փուլերում:

Օրինակ՝ նախալսողական շրջանի խաղերից են՝ «Մենք նախադասության անդամներ ենք», «Բնակեցրու՛ կենդանիներին», «Հավաքի՛ր ծաղիկները» և այլն: Այս խաղերը նպատակ ունեն զարգացնելու հնչյունները լսելու և տարբերակելու կարողությունը, վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը [2]:

Ներկայացնենք «Մենք նախադասության բառեր ենք» խաղը:

Խաղի ընթացքը: Երեխաների կազմած նախադասություններից մեկի բառերը «բաժանվում են» երեխաներին: Ամեն մեկը դառնում է նախադասության մեկ բառը: Հանձնարարվում է, որ յուրաքանչյուրը լավ մտապահի իր բառը: Երեխաները կանգնում են այնպիսի հաջորդականությամբ, որ երբ յուրաքանչյուրը իր բառն արտասանում է, դասարանը կրկնում է նախադասությունը ամբողջությամբ: Այնուհետև երեխաների տեղերը փոխվում են՝ բառը նույնը պահելով: Նորից յուրաքանչյուրն ասում է իր բառը: Դասարանը կրկնում է և եզրակացնում, որ անիմաստ բան ստացվեց, քանի որ ասվածը նախադասություն չէր:

Այս խաղը նպաստում է աշակերտների մեջ ուսումնական գործունեության կարևոր բաղադրիչների՝ սեփական գործողությունների վերահսկման կարողության մշակմանը, միաժամանակ ամրապնդում է նաև նախադասության մասին գիտելիքները: Գրաձանաչության ուսուցման ինչպես նախալսողական, այնպես էլ այբբենական շրջանում կարևորվում է երեխաների հնչյունային լսողության զարգացումը: Հնչյունային լսողությունը զարգացնող խաղերից են՝ «Այն ո՞վ է կանչում», «Թռչունն ու իր ձագերը», «Զանգակներ», «Գուշակի՛ր հանելուկը», «Մենք որոնում ենք իրար», «Կենդանաբանական այգում», «Գտի՛ր գծապատկերը» և այլն: Այս խաղերը զարգացնում են երեխաների

հնչյունային լսողությունը, ուշադրությունը, կատարելագործում են լսելու կարողությունը, թուլացնում երեխաների հոգնածությունը և հաղորդում թարմություն ամբողջ դասարանին [2]:

Ներկայացնենք այս խաղերից մեկը՝ «Գտի՛ր գծապատկերը» խաղը:

Խաղի նպատակը: Զարգացնել երեխաների տեսողական ընկալումը, հնչյունային լսողությունը, բառերը հնչյունային վերլուծության ենթարկելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ: Տարբեր բառերի գծապատկերներ, դրանց համապատասխան առարկաների նկարներ:

Խաղի ընթացքը: Դասարանը բաժանվում է փոքր խմբերի: Յուրաքանչյուր խմբի առջև դրվում են երեխաներին հայտնի բառերի գծապատկերներ:

Առաջադրանք: Ուսուցչուհին ցույց է տալիս տարբեր առարկաների նկարներ և տալիս հանձնարարություն:

-Ուշադի՛ր դիտեք ձեր առջև դրված գծապատկերները և այս նկարը: Ո՞ր խմբի մոտ է այս նկարի գծապատկերը: Եթե երեխաները դժվարանում են, կարելի է առարկայի անվանումը նախօրոք ենթարկել հնչյունավանկային վերլուծության:

Կրտսեր դպրոցական տարիքում ուսուցման գործընթացում կարևորվում են դիդակտիկ խաղերը, որոնք օգնում են երեխայի ինքնահաստատմանը: Նման խաղերի ժամանակ զարգանում է ոչ միայն համառությունը, աշխատասիրությունը, ճարպկությունը, արագ կողմնորոշվելու, կանխատեսելու կարողությունը, այլև բարձրակարգ մտածողության բոլոր բաղադրամասերը [1]:

Դիդակտիկ խաղերից են՝ «Ցատկոտենք և բառը բաժանենք վանկերի», «Խոսքի մասեր», «Խանութ», «Անվանի՛ր բառն անհրաժեշտ հնչյուններով», «Ի՞նչ է քո անունը», «Ասա՛ այլ կերպ», «Լուտո», «Ավարտի՛ր բառերը», «Գտի՛ր սխալը» և այլն:

Այս խաղերը նպատակ ունեն լուծելու ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական մի շարք խնդիրներ: Նման խաղերը երեխաներին սովորեցնում են տարբերակել հնչյունները, բառը հնչյունային վերլուծության ենթարկել, զարգացնում են կամաձին ուշադրությունը [4]:

Ներկայացնենք այդ խաղերից մեկը՝ «Խոսքի մասեր» խաղը:

«Խոսքի մասեր» խաղին կարող են մասնակցել 30 աշակերտ: Կազմվում են խմբեր՝ յուրաքանչյուր խմբում 10 աշակերտ: Խմբային աշխատանքի ժամանակ օգտագործվում է կարմիր, կանաչ, դեղին տերևներ և պաստառ, որի վրա պատկերված է մի հսկա ծառ՝ իր

ճյուղերով: Բարձրաձայն ընթերցում ենք սովորողներին արդեն ծանոթ նյութը: Ուսուցիչը բացատրում է խաղի կանոնները, և խմբերից յուրաքանչյուրը ընտրում է մի խոսքի մաս: Աշակերտները բնագրից ընտրում են խոսքի մասերն ու գրում տերևների վրա: Ով ավարտում է այդ աշխատանքը, մոտենում և ծառի ճյուղին է փակցնում իր տերևները: Վերջում խմբերից յուրաքանչյուրը ստուգում է մյուսի աշխատանքը: Հաղթում է այն խումբը, որը անսխալ է կատարել առաջադրանքը: Արդյունքում ստացվում է մի ծառ, որի տերևները խորհրդանշում են աշակերտներին: Խաղի շնորհիվ լուծվում են դաստիարակչական, կազմակերպչական և ուսումնական մի շարք խնդիրներ:

Գրաճանաչության ուսուցման տարբեր շրջաններում կարևորվում է մատների նրբաշարժումների զարգացումը, մատների վարժանքը, որը զարգացնում է երեխայի ձեռքի մկանները, ձևավորվում է ուշադրությունը: Մատների շարժումներից ստացված շարժողական ազդակները խթանում են երեխաների խոսքի, մտածողության զարգացումը, երեխայի ձեռքն ու մատները նախապատրաստում գրուսուցմանը: Մատնային վարժությունները և խաղերը նաև հաղորդում են դրական լիցքեր, բարձրացնում երեխաների տրամադրությունը [2]:

Մատների նրբաշարժումների զարգացման վարժություններից են՝ «Փոքրիկ ալիք», «Մրջնաբույն», «Դելֆին», «Լապտերիկ» և այլն [2]:

Այբբենական շրջանում կիրառելի խաղերից են՝ «Բառաշղթա», «Փոստատարը նամակ բերեց», «Ամբողջացրու՛ բառը», «Փոխի՛ր մեկ տառը», «Բառափոխուկ», «Ասա՛ այլ բառով», «Լոտո», «Ի՞նչ է քո անունը», «Անվանի՛ր բառն անհրաժեշտ հնչյուններով» և այլն: Այս խաղերը նպատակ ունեն զարգացնել երեխաների բառապաշարը, մշակել վերլուծելու կարողությունը, զարգացնել մտքի սրությունը, երեխաների մոտ ձևավորել նրբանկատություն:

Ներկայացնենք «Ամբողջացրու՛ բառը» խաղը:

Խաղի նպատակը: Սովորեցնել բառը վանկերի ճիշտ բաժանել, զարգացնել երեխաների բառապաշարը, դաստիարակել ուշիմություն, մտքի սրություն, մշակել վերլուծելու և համադրելու կարողություն:

Խաղի ընթացքը: Ուսուցչուհին վանկատելով ասում է երեխաներին ծանոթ բառերի առաջին վանկը (վանկերը), երեխաները պիտի ամբողջացնեն բառը: Օրինակ՝ նա – պաա- ..., օ – դա -, և այլն: Կրտսեր դպրոցական տարիքում մեծ տեղ են զբաղեցնում նաև դերային խաղերը, որոնք կարելի է դիտարկել որպես կրտսեր դպրոցականին

դեպի ինքնադաստիարակության մղող գործոն: Դերային խաղը մյուս խաղերի նկատմամբ ունի առավելություն: Երբ սովորողը ներկայացնում է մի որևէ կերպար, ազատ ինքնադրսևորվում է խաղալով տվյալ կերպարը: Նման պարագայում առավել կիրառելի են ռոդարիական հնարները, որոնք թույլ են տալիս չսահմանափակել միտքը և կիրառել թե՛ սովորական, թե՛ անսովոր բոլոր գաղափարները՝ նպատակին հասնելու համար: Կրտսեր դպրոցականի աճող օրգանիզմն ակտիվ շարժումներ է պահանջում, այդ պատճառով էլ կրտսեր դպրոցական տարիքում, հատկապես առաջին դասարանում, կարևորվում են նաև շարժուն խաղերի, ֆիզկուլտդարձների կազմակերպումը: Շարժողական խաղերն ազդում են նաև անձնային որակների ձևավորման վրա, զարգանում և ամրակայվում է կամքը, համարձակությունը, կողմնորոշումը և ըմբռնումը [1]:

Եզրահանգում: Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ խաղի նշանակությունը չի կարելի գնահատել միայն ժամանցային հնարավորություններով:

Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները տարրական դասարաններում: Խաղը նպաստում է երեխայի շփման, հաղորդակցման ունակությունների զարգացմանը, կամային վարքի ձևավորմանը, կամային հիշողության զարգացմանը: Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում, երեխային հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները: Խաղը դառնում է սովորողների ճանաչողական ունակությունների ակտիվացման միջոցներից մեկը, ձևավորում է մտավոր գործունեություն ծավալելու պահանջմունք, կատարելագործում է ուսումնական գործունեության ծավալման համար անհրաժեշտ հոգեբանական և ֆիզիոլոգիական պահանջմունքները, նպաստում է սովորողների մտավոր և ֆիզիկական զարգացմանը, խթանում է երեխաների արժեքային համակարգի ամրապնդմանը:

РОЛЬ ИГРЫ В МЛАДШЕЙ ШКОЛЕ НА УРОКАХ РОДНОГО ЯЗЫКА

Мкртчян Т. А.

Сегодня очень важно в процессе обучения использовать разные методы, что дает возможность учащимся самоусовершенствоваться, самоутвердиться, развиваться. Создание чувственной обстановки для

каждого учащегося, вне зависимости от его способностей – одна из важнейших задач. С этой задачей непосредственно связана удача в дальнейшем учебном процессе, так как она создаёт благоприятные условия, чтобы проявить положительные способности к учебному процессу. Эффективными способами решения этих задач являются дидактические игры. В младшей школе, в работе с шестилетками, дидактическая игра является основным средством реализации учебного процесса. Игра может рассматриваться как метод обучения, как средство обучения, как самостоятельная деятельность, как средство всестороннего развития личности ребёнка.

Ключевые слова: игра, родной язык, младшая школа, обучение, игровые технологии, языковые игры, развитие речи, дидактические игры.

THE ROLE OF GAMES IN JUNIOR SCHOOL IN MOTHER TONGUE LESSONS

Mkrtchyan T. A.

The use of different methods and means in the educational process is of urgent importance today, which enables students to self-improve, reside and develop. Creating an emotionally comfortable atmosphere in the classroom for everyone, regardless of their level of competence, is a top priority, which greatly contributes to the success of all further learning, as it creates favorable conditions for the development of positive motivations for school. Didactic games are an effective solution to these problems. In elementary school, when working with six-year-olds, didactic game is a means of accomplishing an educational task, a way of organizing the educational process. Games can be considered as a method of learning, as a form of learning, both as an independent activity and as a means of comprehensive development of the child's personality.

Keywords: game, mother tongue, primary school, education, game technology, language games, speech development, didactic games.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրքերի օրինակներ.

1. Գյուլամիրյան Ջ. Խաղալով սովորենք: Երևան: 2009: 80 էջ:
2. Գյուլամիրյան Ջ. Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա: Երևան: 2009: 349 էջ:

3. Վարդույան Ս. և ուրիշներ Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Երևան: 2005: 409 էջ:
4. Տեր-Գրիգորյան Ա. Հայոց լեզվի մեթոդիկա: «Լույս»: Երևան: 1980: 563 էջ:

Ամսագրեր/պարբերականների օրինակներ.

1. Սարիբեկյան Զ. Խաղը՝ որպես ուսուցման կազմակերպման ձև: «Նախաշավիղ 4» 2017: էջ 12:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մկրտչյան Թ. Ա. – բակալավրիատ 4-րդ կուրս

Գավառի պետական համալսարան, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

Էլ. փոստ՝ taguhi.mkrtchyan.2000@mail.ru

Գիտական ղեկավար՝ Ղազարյան Օ.

*Ստացվել է՝ 10.11.2022
Գրախոսվել է՝ 03.02.2023*

**ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ
Ավետիսյան Ա. Խ.**

Խոսքի զարգացման մեթոդիկան այսօր նոր մակարդակ է ձեռք բերել: Այն ուսուցչից պահանջում է ավելի շատ գիտելիքներ և կարողություններ: Բանն այն է, որ խոսքի զարգացման ժամանակակից մեթոդիկայի վրա էական ազդեցություն են թողել վերջին տասնամյակում բուռն զարգացում ապրող առանձին տեսություններ, գիտական ուղղություններ, որոնք սերտորեն առնչվում են տարրական դասարաններում մայրենիի դասավանդման մեթոդիկային: Տարրական դպրոցում սովորողների խոսքի զարգացումը մայրենիի ուսուցման կարևոր և արդիական խնդիրներից է: Մարդու ներդաշնակ զարգացման գործում իր անգնահատելի տեղն ունի կապակցված խոսքի ուսուցումը, որը հատկապես տարրական դպրոցում աշակերտի հոգևոր, մտածական ոլորտներից չի առանձնանում: Կանոնավոր ձևավորված և զարգացած խոսքը երեխային հասկանալու և նրա հետ աշխատելու հնարավորություն է ընձեռում, ուսուցման գործընթացում երեխային օգնում է արագորեն ընկալել իրեն տրված հրահանգները և դրանց համապատասխան գործողություններ կատարել, ինչպես նաև ամուր հիմք է դառնում միջին կամ հիմնական դպրոցում աշակերտի հետագա ուսումնառության համար:

Բանալի բառեր. խոսք, զարգացում, բանավոր խոսք, գրավոր խոսք, կապակցված խոսք, նկարագրական խոսք, պատմողական խոսք, գնահատող խոսք, հայոց լեզվի մեթոդիկա:

Թեման արդիական է այնքանով, որ արդի կրթական համակարգում սովորողների խոսքի զարգացումը առաջնային խնդիրներից մեկն է: Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է սկսել հենց տարրական դպրոցից, որտեղից և արվում են աշակերտի ուսուցման մեջ ներգրավվելու առաջին քայլերը: Հետազոտության նյութ ընտրելով «Սովորողների խոսքի զարգացումը տարրական դպրոցում մայրենիի դասերին» թեման՝ մեր առջև խնդիր ենք դրել դիտարկել կրտսեր դպրոցում կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ

տարվող աշխատանքները, բացահայտել առկա դժվարություններն ու դրանք ծնող պատճառները, գտնել դժվարությունների հաղթահարման արդյունավետ ուղիներ: Աշակերտի խոսքը ձևավորվում է տանը, դպրոցում և հասարակական միջավայրում: Գաղտնիք չէ, որ շրջապատից հաճախ երեխայի խոսք են թափանցում գրական լեզվում չընդունված բառեր և արտահայտություններ, և դպրոցում չի հաջողվում հղկել դրանք: Տանը, դպրոցում, ամենուրեք անհրաժեշտ է հետևողական ու կազմակերպված աշխատանք տանել երեխայի խոսքի զարգացման ուղղությամբ: Չպետք է մոռանալ, որ երեխայի լեզվական գիտելիքներով է պայմանավորված նաև մյուս առարկաների հաջող ուսումնասիրումը [4]: Նշանավոր լեզվաբան և մանկավարժ Արարատ Ղարիբյանը կարծում է, որ «խոսք կառուցելու համար անհրաժեշտ է ոչ միայն գիտություն, այլ նաև վարժվածություն»: Այնուհետև նշում է, որ խոսք կառուցելու հիմքը հարուստ բառապաշարն է, և բառապաշարի հարստացման աղբյուր համարում է բացատրական և գրական ընթերցանությունը, լրացուցիչ, հատկապես գեղարվեստական ընթերցանությունը, ինչպես նաև այլ առարկաների ուսուցման ընթացքում հանդիպող անծանոթ բառերի բացատրության և ուսուցման գործընթացը [3]: Գոյություն ունեն խոսքի դրսևորման ձևեր: Բանավոր խոսքը հնչյունային է, այն բնութագրվում է արտահայտչական որոշակի միջոցներով: Գրավոր խոսքը գրաֆիկական տեսքով տեղեկատվությունն է (տառերի օգնությամբ) և հենվում է բանավոր խոսքի վրա [2]: Ա. Բահաթրյանը նշում է, որ սովորողները պետք է պատմեն կամ վերարտադրեն կարդացածը, ուսուցչից լսածը: Կրտսեր դպրոցում Բահաթրյանը կարևորում է ուսուցչի հարցեր առաջադրելու վարպետությունը [1]: Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագիրը կարևորում են աշակերտների խոսքի զարգացումը՝ մասնավորապես հաղորդակցական կարողությունների ձևավորման խնդիրների տեղի և դերի որոշման հարցում: «Մայրենի» առարկայի նպատակն առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացումն է, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը: Երեխայի մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացման հարցում, դաստիարակչական խնդիրների լուծման գործում անգնահատելի նշանակություն և դեր ունեն խոսքի ուսուցման և զարգացման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքները: Անձի ընդհանուր զարգացմանը և խոսքի ձևավորմանն ու մշակմանը միտված ուսուցման միջոցների գործընթացները չեն առանձնանում, ընդհակառակը, դրանք փոխադրված են:

մտածողության զարգացման գործընթացը պայմանավորված է խոսքի զարգացման գործընթացով:

Սովորաբար սովորողների խոսքի մասին դատում են ըստ նրանց՝ դպրոցում կամ ուսուցչի հանձնարարությամբ գրած շարադրանքների: Մարդկանց հետ բնական շփման և հաղորդակցման ընթացքում աշակերտի դրսևորած խոսքը գրեթե ուսումնասիրված չէ: Միայն վերջին ժամանակներս են փորձեր արվում բնութագրելու սովորողների բանավոր և գրավոր խոսքի կամ ինքնուրույն պատումների բաղադրիչները: Այս հարցում կարևոր դեր են խաղում հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշչով և ծրագրերով առաջադրվող պահանջները, որոնցով ցանկացած քերականական կամ գրական նյութի ուսումնասիրություն հետապնդում է հիմնականում սովորողի կապակցված խոսքի ուսուցման և զարգացման նպատակ:

Մայրենի լեզվի դասավանդման ընթացքում մեծ տեղ են զբաղեցնում գրույցները: Սակայն շատ քիչ է ուշադրություն դարձվում բնագրի վրա կատարվող աշխատանքներին, մասնավորապես տեքստի հուզական կողմին: Գերակշռում են ընթերցանության գործընթացին ուղղված աշխատանքները, և բնագրի շուրջ տարվող վերլուծական, համադրական աշխատանքներին փոքր-ինչ քիչ է տեղ հատկացվում: Այս դասերը երեխաների մտավոր և բազմակողմանի զարգացման համար քիչ նպաստավոր են: Հետազոտություն իրականացնելու համար կազմել ենք հարցաթերթ, որի միջոցով պարզել ենք հետազոտությանը մասնակցած ուսուցիչների կիրառած մեթոդները սովորողների կապակցված խոսքի հարստացման ուղղությամբ: Հետազոտությանը մասնակցած ուսուցիչների կեսից ավելին աշակերտների բառապաշարի հարստացման և կապակցված խոսքի մշակման, դատողական և գնահատող խոսք կառուցելու կարողության մշակման ուղղությամբ աշխատանքները համապատասխան արդյունավետությամբ չի կատարում: Հարցման արդյունքում պարզվեց, որ ուսուցիչների մեծամասնությունը կիրառում են պասիվ մեթոդներ, կարևորում են խոսքի երկու տեսակն էլ, դժվարություններ հիմնականում հանդիպում են առաջին և երկրորդ դասարաններում: Խոսքի զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքում ուսուցիչների կողմից հիմնականում կիրառելի են դերային խաղերը, բեմականացումները, զվարճալի և շարժուն խաղերը, երկխոսությունները, շատ քիչ դեպքերում նաև այլ աշխատանքներ:

1-4-րդ դասարանների գրավոր աշխատանքների տետրերի ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ առաջին դասարանում սովորողների թույլ տված սխալները տարաբնույթ են: Արտագրությունների դեպքում հիմնականում բաց են թողնվում տառեր կամ բառի վերջին տառերը չեն գրվում: Թելադրությունների մեջ կատարում են թե՛ ուղղագրական, թե՛ կետադրական սխալներ: Առաջին դասարանում փոխադրություններ գրեթե չեն հանձնարարվում, բայց հիմնականում երեխաների նկարագրական խոսքն այնքան էլ տվյալ տարիքին համապատասխան մակարդակի վրա չէ: Երկրորդ և երրորդ դասարաններում արտագրությունները հիմնականում անսխալ են, հազվադեպ հանդիպում են անուշադրության սխալներ: Թելադրության դեպքում կան և՛ կետադրական, և՛ ուղղագրական սխալներ, իսկ փոխադրության և շարադրության դեպքում հիմնական սխալները կապված են մտքերի ոչ ճիշտ և հաջորդական շարադրման հետ:

Չորրորդ դասարանում արտագրությունները գրվում են անթերի, թելադրություններում հանդիպում են հիմնականում ուղղագրական, կետադրական և տողադարձի հետ կապված սխալներ: Փոխադրությունները այս դասարանում գրվում են հիմնականում կազմված պլանին համապատասխան, իսկ շարադրություններում հանդիպում են կետադրական, ուղղագրական և մտքի շարադրման հետ կապված սխալներ: Սովորողների մոտ ստեղծագործական աշխատանք կատարելու հմտությունները դեռևս բավականաչափ զարգացած չեն:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց նաև, որ եթե ուղղագրության և կետադրության հետ կապված սխալների դեպքում ուսուցչի կողմից կատարվում են բացատրական, շտկողական աշխատանքներ, ապա մտքերը ճիշտ շարադրելու, կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորման ուղղությամբ աշխատանքներ գրեթե չեն տարվում: Գրավոր աշխատանքների տետրերի ուսումնասիրությունը և հետազոտության ընթացքում իրականացրած դասալսումները ցույց տվեցին, որ խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացնելիս հիմնական դժվարությունները կապվում են բարբառների ազդեցության հետ, ինչպես նաև խոսքի զարգացման աշխատանքների արդյունավետությանը խանգարում է սովորողների բառապաշարի պասիվությունը:

Ցավոք, գրեթե ոչ ոք տեղ չի հատկացնում ուսումնառության գործընթացում աշակերտի գործուն մասնակցությանը կամ անհատական, գույգերով և խմբային ուսումնական գործունեության

նկարագրությանը, դասարանում և դասարանից դուրս նրա կատարած աշխատանքին, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և սրանցով պայմանավորված՝ խոսքի ուսուցման հիմնախնդրին:

Սովորողների խոսքային երևակայության զարգացման մակարդակը պարզելու նպատակով հետազոտական աշխատանք ենք իրականացրել 4-րդ դասարանի 27 աշակերտների շրջանում և պարզել, որ խոսքային երևակայության մակարդակը բարձր է 5 աշակերտի մոտ, միջին մակարդակի վրա է գտնվում 7 աշակերտի մոտ, ցածր մակարդակի վրա է գտնվում 12, իսկ շատ ցածր մակարդակի վրա՝ 3 աշակերտի մոտ:

Սովորողների իմացական գործողությունների զարգացման մակարդակը պարզելու նպատակով իրականացված հետազոտությանը մասկանցել է նույն՝ 4-րդ դասարանի 27 աշակերտից 23-ը, որոնցից մտածողության և երևակայության բարձր մակարդակ ունեն 2, միջինից բարձր՝ 5, միջին՝ 10, միջինից ցածր՝ 4, իսկ ցածր մակարդակ՝ 2 աշակերտ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ տարրական դպրոցում սովորողների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները բավարար արդյունավետ չեն, որովհետև գրավոր աշխատանքներում ուղղագրական և կետադրական շտկողական աշխատանքներից բացի աշխատանք չի տարվում մտքի ձևակերպման ուղղությամբ: Խնդիրն ակնհայտ է դառնում աշակերտների բանավոր խոսքում տվյալ տարիքային առանձնահատկություններին համապատասխան բանավոր ոչ ճիշտ խոսք կառուցելու ժամանակ: Նկատենք նաև, որ այն առավել ակնառու է մարզերում ապրող աշակերտների մոտ՝ բարբառների ազդեցության հետևանքով: Մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ, չնայած այն բանին, որ փորձարարական դասարանների աշակերտների գերակշիռ մեծամասնությունը ցուցաբերում է գերազանց առաջադիմություն մայրենի առարկայից, սակայն բավարար չափով ձևավորված չէ խոսքային երևակայությունը կամ իմացական գործընթացների մակարդակը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել դասվարների, ուսանողների կողմից մայրենիի դասերի ընթացքում՝ նպաստելով կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

РАЗВИТИЕ СВЯЗНОЙ РЕЧИ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ НА УРОКАХ РОДНОГО ЯЗЫКА

Аветисян А. Х.

Методика развития речи сегодня приобрела новый уровень. Она требует от учителя больше знаний и умений. Дело в том, что на современную методику развития речи оказали существенное влияние в последние десятилетия быстро развивающиеся отдельные теории, научные направления, которые тесно связаны с методикой преподавания родного языка. В начальной школе методика развития речи-одна из современных и важнейших задач изучения родного языка. В деле гармоничного развития человека имеет неоценимое место изучение связной речи, которая, особенно в начальной школе, неотделима от психологической и мыслительной сферы ученика. Правильно сформированная и развитая речь даёт возможность понимать ребёнка и работать с ним, в процессе обучения помогает ребёнку быстро понимать данные инструкции и действовать соответственно им, а также становится крепкой основой для дальнейшего обучения в средней или старшей школе.

Ключевые слова: речь, развитие, устная речь, письменная речь, связная речь, описательная речь, повествовательная речь, оценочная речь, методика армянского языка.

DEVELOPMENT OF COHERENT SPEECH IN PRIMARY SCHOOL LESSONS IN MOTHER LANGUAGE TEACHING

Avetisyan A. Kh.

Speech development methodology has reached a new level today. It requires more knowledge and skills from the teacher. The fact is that the modern method of speech development has been significantly influenced by separate theories and scientific directions have been rapidly developing in the last decade, which are closely related to the methodology of teaching the mother language in elementary grades. In the elementary school, the development of pupil's speech is one of the most important issues of mother tongue teaching. The teaching of connected speech has an invaluable place in the harmonious development of a person, which cannot be separated from the pupil's spiritual and mental spheres, especially in the elementary school.

Regularly formed and developed speech enables to understand the child to work with him, in the process of learning helps the child to quickly understand the instructions given to him quickly, to act accordingly, as well as it becomes a stable foundation for further learning for pupils in middle and primary school.

Keywords: speech, development, oral speech, written speech, related speech, descriptive speech, narrative speech, evaluative speech, methodology of the Armenian language.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան Թ. Կ. Խոսքի ուսուցումը միջին դպրոցում: «Էդիտ Պրինտ» հրատ.: Երևան: 2012: 190 էջ:
2. Գյուլամիրյան Ջ. Հ. Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա: «Զանգակ» հրատ.: Երևան: 2015: 315 էջ:
3. Մանուկյան Ա. Ս. Խոսքի զարգացման մեթոդիկա: «Լույս» հրատ.: Երևան: 1976: 347 էջ:
4. Տեր-Գրիգորյան Ա. Հայոց լեզվի մեթոդիկա: Երևան: 1980: 564 էջ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Ալետիսյան Ա. Խ. - բակալավրիատ 4-րդ կուրս

Գավառի պետական համալսարան, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, Տարրական մանակավարժություն և մեթոդիկա

Էլ. փոստ՝ anikavetisyan@gmail.com

Գիտական ղեկավար՝ Ղազարյան Օ.

*Ստացվել է՝ 10.11.2022
Գրախոսվել է՝ 03.02.2023*

**ԾԵՐԱՆՈՑԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ՀԱՅԱՑՔ ՆԵՐՄԻՑ
Հովհաննիսյան Դ. Հ.**

Այս աշխատանքում ներկայացվում է ծերանոցի ընդհանուր բնութագիրը, փորձ է արվել ուսումնասիրելու ծերանոցի ընկալումն ու ծերանոցի նկատմամբ մոտեցումները հենց խնամյալների կողմից: Փորձել ենք հասկանալ՝ ովքեր են տեղափոխվում ծերանոց, ինչ նախադրյալներ կան դրա համար, և թե ինչ վիճակագրություն կա այս իմաստով:

Բանալի բառեր. ծերանոց, տուն-ինտերնատ, տարեց, լքված տարեցներ, միայնակ ծերեր:

«Ծերանոցի ընկալումը. հայացք ներսից» աշխատանքում փորձ է արվել հասկանալ, թե ինչպես են խնամյալները ընկալում ծերանոցը, ինչ հանգամանքներում են հայտնվում ծերանոցում, և ինչ վիճակագրություն կա այս իմաստով: Աշխատանքն արդիական է, քանի որ վերջին շրջանում ծերանոցներն ավելի պահանջված են դառնում, մեծանում է խնամյալների թիվը այն դեպքում, երբ տարեցների շուրջ 60%-ն ունի ժառանգներ: Մյուս կողմից էլ Հայաստանը հայտնվել է ծերացող հասարակությունների վերին շեմին: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կանխատեսումները վկայում են, որ Հայաստանում 2050թ.-ին 65-ից բարձր տարիք ունեցողները կկազմեն բնակչության 22-23%-ը [29]: Աշխատանքն արդիական է նաև գիտական տեսանկյունից, քանի որ այս թեման՝ որպես ինքնուրույն ու համալիր հիմնահարց, մինչև օրս անուշադրության է մատնված եղել: Հայ գիտական գրականության մեջ այս թեմային առնչվող նյութերի սակավության պայմաններում անգնահատելի կարևորություն է ստանում սովետական գերոնտոլոգ Հայրիյանի «Գերոնտոլոգիայի սոցիալական ասպեկտները» գիրքը, որը, սակայն, միննույն է, անուղղակիորեն ու քիչ է շոշափում բուն ծերանոցների խնդիրը: Եվ սա տրամաբանական է, քանի որ ծերանոցները հանրայնացում են ձեռք բերել հենց անկախության տարիներին: Պայմանավորված նոր համավարակի առկայությամբ՝ դաշտային աշխատանքները, որոնք պետք է իրականացվեին

ծերանոցներում, տեղափոխվեցին օնլայն հարթակ: Արդյունքում իրականացվեցին այլընտրանքային դաշտային աշխատանքներ՝ համացանցում առկա և այս աշխատանքին համապատասխանող նյութերի միջոցով: Այս իմաստով թեմայի ուսումնասիրության համար կարևորագույն դեր են կատարել սոցապ նախարարության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ Անահիտ Գևորգյանի հարցազրույցները, լրագրողական բնույթի աուդիովիզուալ նյութերն ու հոդվածները:

Յուրաքանչյուր հասարակություն ունի ծերության ընկալման իր առանձնահատկությունները: Ժամանակագրական ծերության տեսանկյունից (ծնված օրվանից անհատի ապրած տարիները), միջազգային դասակարգման համաձայն, տարեց են համարվում 65 տարին լրացած մարդիկ: Տարեցությունը բազմաչափ երևույթ է: Այն ամենաբազմաշերտն է՝ համեմատած մյուս տարիքային խմբերի [5, էջ 5-6]: Այս աշխատանքի համատեքստում մեզ հետաքրքրում է ծերության սոցիալական (ընտանիքում, շրջապատում ու հասարակության մեջ անհատի դերի ու հարաբերությունների փոփոխությունը) և հոգեբանական (հուզականության, անհատականության, աղապտիվ կարողությունների փոփոխություն) առանձնահատկությունները: Հայաստանում ծերության և ծերերի մասին ընկալումները խիստ փոփոխություններ են կրել ավանդական, նույնիսկ ուշ սովետական շրջանից ի վեր: Այս ընկալումների փոփոխություններն էլ իրենց հերթին փաստորեն կարողացան ազդել ծերանոցների պահանջվածության վրա: Ասենք «մրցակցող պարտավորությունները» [4, էջ 585], սոցիալական բարոյալքվածությունը, անկախ կենցաղավարման ձգտումը և մի շարք այլ պատճառներ նպաստում են ծերանոցների հանրայնացմանը: Այժմ պետական ինտերնատներում խնամվողների 60 տոկոսից ավելին ունի զավակներ, իսկ մի մասն էլ՝ բնակարան [31]: Ըստ Հայրիյանի՝ սովետական և նույնիսկ ուշ սովետական շրջանում էլ Հայաստանում, հատկապես գյուղական շրջաններում, տարեցների՝ ծերանոցում հայտնվելը հազվադեպ բացառություններ էին, իսկ շատ հայաբնակներ էլ չեն իմացել դրանց գոյության մասին [1, էջ 69-70]:

Ինտերնատներում հայտնվում են ամենատարբեր պատճառներով: Սրանից կախված՝ տարբեր է նաև հենց խնամյալների՝ ծերանոցի մասին ընկալումները: Շատ տարեցներ իրենց միայնակ են զգում ծերանոցում, մյուսներն էլ միայնությունից խուսափելով են հայտնվում այստեղ: Առաջին դեպքում սրանք այն մարդիկ են, ովքեր ուենցել են ընտանիք, ընկերներ և ծերանոցի նոր միջավայրին ոչ մի կերպ չեն հարմարվում և

ունենում են, այսպես ասած, «միայնակության զգացում ամբոխի մեջ» [6, էջ 2-7]: Իսկ մյուս դեպքում սրանք մարդիկ են, ովքեր չունեն հարազատներ, լքված են, և ծերանոցը նրանց համար դառնում է ապաստարան:

Առաջին խմբի մարդիկ հայտնվում են այստեղ անգամ բարեկամներ ունենալու դեպքում էլ, առավել հաճախ ինքնակամ և ծերանոցում իրենց զգում են շատ ավելի լավ, քան բարեկամի տանը: Խնամյալներից մեկը նշում է, որ գոհ է ծերանոցում հայտնվելու իր ընտրությունից, քանի որ իրեն ավելորդ էր զգում իր բարեկամի տանը [26]: Մյուս խնամյալն էլ, որ կրկին ինքնակամ է եկել ծերանոց, նշում է, որ «վնասատու սկեսուր» չլինելու համար է եկել այստեղ: Քիչ չեն նաև այն տարեցները, ովքեր այստեղ հայտնվում են ինքնակամ, իրենց երեխաների կամքին հակառակ՝ հրաժարվելով ապրել արտասահմանում: Մեկը պատմում է, որ աղջիկն ու տղան ապահով կյանք են վարում արտասահմանում, բայց ինքը որոշել է ապրել իր երկրում [10]: Մեկ այլ տարեց էլ նշում է, որ փորձել է ապրել Ֆրանսիայում՝ աղջկա մոտ, բայց չի հարմարվել ու վերադարձել է Հայաստան [15]: Կա նաև հարցի մյուս կողմը. խնամյալներից մեկը հայտնվել է ինտերնատում այն պատճառով, որ ընտանիքը Ռուսաստանում է, այստեղ էլ բարեկամներ չունի, իսկ Ռուսաստան մուտքն էլ արգելված է, ուստի ստիպված եկել է ինտերնատ [7]:

Կան դեպքեր, երբ ծերանոցում հայտնված տարեցները իրենց թոշակի, հավաքած գումարի միջոցով օգնում են իրենց ժառանգներին: Խնամյալներից մեկը, ում ժամանակին աքսորել էին Ալթայի երկրամաս, նշում է, որ գումար է հավաքում արտասահմանում կրթություն ստացող թոռան ուսման վարձը վճարելու համար:

Մյուս տարեցն էլ, որ ունի երկու զավակ ու պատկառելի տարիք, նշում է, թե երկու տղաները թոշակառու են, բայց դեռ ինքն է օգնում վերջիններիս: Այստեղ բախվում ենք մեկ այլ խնդրի, որ տարեցները, գտնվելով իրենց համար նախատեսված սոցիալական օժանդակության հաստատությունում, դեռ իրենք են օգնում իրենց ժառանգներին: Տարեցներից մի քանիսը պատմում են, որ նույնիսկ ամեն ամսվա վերջում ծերանոցում հերթ է գոյանում. երեխաները գալիս են ծնողների թոշակը տանելու [18]:

Ցավոք, քիչ չեն դեպքերը, երբ տարեցները հայտնվում են ծերանոցում իրենց բարեկամների պարտադրանքով և կորցնում են կապը վերջիններիս հետ:

Խնամյալներից մեկը պնդում է, որ ոչ մի դեպքում չի կարող դժգոհել ծերանոցից, քանի որ իր երեխաները իրեն լքել են, և այստեղ ուրիշներն են իր մասին հոգում [30]:

Մյուսն էլ նշում է, որ մոտ երեք տարի է, ինչ ծերանոցում է, իսկ աղջիկը իրեն չի այցելել, չի գանգել [14]:

Այս համատեքստում ավելորդ չի լինի հիշատակել այն փաստը, որ հաճախ հարազատներն անգամ տարեցի հուղարկավորությանը չեն գալիս, և այն կազմակերպվում է պետության կողմից: *Վերջին հինգ տարիներին ընդհանուր տիպի 3 տուն-ինտերնատներում մահացել և պետական միջոցներով թաղվել է 183 մարդ [28]:*

Հաճախ էլ տարեցներն իրենք են փորձում արդարացնել զավակների՝ իրենց ծերանոցում չայցելելու հանգամանքը: Տարեցներից մեկը պնդում է, որ հավանաբար տղան գումար չունի և չի կարողանում իրեն այցելել, իսկ ինքն էլ չի կարող ստիպել տղային, որ գա [17]: Տեղին է հիշատակել տարեցների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ Ա. Գևորգյանի խոսքերը, ով պնդում է, թե խնամյալներն իրենց աշխատունակ ժառանգներից ալիմենտ պահանջելու իրավունք ունեն, բայց չեն պահանջում՝ մեկնաբանելով, թե դա հայերի մենթալիտետի արդյունքն է [9]:

Ինտերնատներից մեկի փոխտնօրենն էլ նշեց, որ տարեցների մեծ մասը ունի զավակներ, բայց հաճախ հենց նրանց կողմից խաբվելով են կորցնում տունը և հայտնվում ծերանոցում [16]:

Մեկ այլ խնամյալ էլ, ով մինչ ինտերնատ տեղափոխվելը ակտիվ կյանք է վարել, նշում է, որ տղան ամաչում է ընկերական շրջապատի պարսավանքներից, չի այցելում հորը, իսկ վերջինիս ներուժը ծերանոցում չի օգտագործվում այնպես, ինչպես հարկն է [18]:

Փաստ է նաև, որ ծերանոցում կա զբաղմունքի ապահովման խնդիր: Ըստ Հայրիյանի՝ տարեցների ներդաշնակ կյանքի համար անհրաժեշտ է նրանց ներգրավել սոցիալական ակտիվ կյանքի մեջ: Տարեց մարդիկ ունեն բավականաչափ էներգիա և մտային հնարավորություններ, որոնք ճիշտ չեն գնահատվում [1, էջ 91]: Իսկ ըստ Ֆրոմի՝ ծերերին «անգործ» թողնելը կարող է նրանց սպառողից վերածել գերսպառողի [3, էջ 160-168]: Տարեցի կողմից սեփական ակտիվության, ինքնագործունեության սահմանափակման կանխատեսումը հավանաբար կարող է պատճառ հանդիսանալ, որ վերջիններս հրաժարվեն ծերանոցից: Որոշ տարեցներ խոնավ ու ցուրտ վազոն-տնակները չեն լքում և կտրականապես հրաժարվում են ծերանոց տեղափոխվելու մտքից: Տարեցներից մեկն այս

մոտեցումն ունի. «Ես էստեղ կմեռնեմ, բայց ծերանոց չեմ գնա» [13]: Տեղին է հիշատակել այն փաստը, որ տարեց հասակում ադապտացիոն մեխանիզմները թուլանում են, և ինտերնատ տեղադափոխվելու դեպքում շատ տարեցներ հայտնվում են սթրեսային վիճակում: Մյուս կողմից էլ տարեցը ենթարկվում է հաջորդական սթրեսների մի քանի պատճառով ևս. իրեն հարազատ ու ծանոթ միջավայրը փոխարինվել է մեկ այլ՝ անծանոթ միջավայրով, այն էլ անվերադարձ, և տարեցը կորցրել է իր ունեցած սոցիալական կապերը [2, էջ 21]:

Հաջորդ խումբը ծերանոցում ամուսնացած մարդիկ են, որոնք տեսանելիորեն քիչ չեն: Վերջիններս հիմնականում կայուն-դրական տրամադրվածություն ունեն, և վերախմաստավորել են իրենց կյանքը, ինչպես իրենք են նշում:

Խնամյալները մեկը, ով ինտերնատում է ամուսնացել, նշում է, թե ունի չորս զավակ, բայց երբեք իրեն երջանիկ չի զգացել, մինչև չի հանդիպել ամուսնուն, ում հետ ծանոթացել է ինտերնատում [27]: Մեկ այլ խնամյալ էլ, ով ևս ծերանոցում է ամուսնացել, նշում է, որ ծերանոցն իր համար «ընտանիք» է, իսկ վերջինիս կնոջ համար՝ «հորական տուն»:

Ինտերնատում ամուսնանալը կամ համատեղ ապրելը մեկ այլ դրական կողմ էլ ունի: Եթե մինչ այդ խնամյալները ապրում էին մինչև վեց հոգու համար նախատեսված սենյակներում, համատեղ ապրելու դեպքում զույգին տրամադրում են մեկ սենյակ:

Ծերանոցում ոչ միայն ամուսնանում են, այլ նաև ամուսիններ են գալիս թոշակի անցնելուց հետո: Տվյալ դեպքում ամուսնու՝ ծերանոցում հայտնվելուց մի քանի տարի հետո է միայն կինը կարողացել տեղափոխվել ամուսնու մոտ՝ ծերանոց [20]: Վերջինս նշում է, որ կարևոր չէ՝ ծերանոցում են, թե իրենց տանը, կարևորը՝ ամուսիններով անբաժան են [25]:

Գրանցվեց նաև մեկ դեպք, երբ ամուսնությունը խնամյալի կյանքում առաջինն էր: Վերջինս նշում է, որ ողջ կյանքի երազանքը իրականություն դարձավ ինտերնատում, իսկ ամուսինն էլ՝ հավելում, որ այն, ինչ կորցրել է կյանքում, գտավ ծերանոցում [8]:

Հաճախ ինտերնատում հայտնվելը խնամյալի կյանքում առաջին շրջադարձային իրողությունը չէ: Ինտերնատներում հայտնվում են նաև Բաքվից եկած փախստականները, ովքեր միայնակ են կամ ունեն կացարանի խնդիր, նախկին մանկատան սաները՝ արդեն ծեր տարիքում, տարիներ առաջ՝ նաև պատերազմի մասնակիցները և ստալինյան բռնաճնշումների զոհերը՝ աքսորյալները, խարդախության

պատճառով տունը կորցրածները և պարզապես միայնակ տարեցները: Այլընտրանքային դաշտային աշխատանքների ժամանակ գրանցվեց ընդամենը մեկ դեպք, երբ ծերանոցում հայտնվել է նաև էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ՝ տվյալ դեպքում ազգությամբ ուղի [21]:

Այսպիսով, Բաքվի փախստականներից մեկը նշում է, որ ընտանիք ունենալու դեպքում այստեղ չէր հայտնվի, իսկ մյուս փախստականն էլ բացառիկ դրական մոտեցում ունի և նշում է, որ եթե նույնիսկ քաղաքի կենտրոնում իրեն տուն տան, միևնույն է, ծերանոցը չի լքի [22]: Տարեցներից մյուսն էլ, ով մանկատանն է ապրել և այստեղ հայտնվել էր տունը խարդախությամբ կորցնելու պատճառով, ծերանոցը նույնակա-նացնում է մանկատան հետ՝ նշելով, որ կարծես մանկատանից մանկատուն ընկած լինի [19]:

Միայնակ տարեցներից մեկը նշում է, որ ծերանոց է եկել, որովհետև մենակ է մնացել, եկել է ծերանոց, որ խոսելու ընկեր ունենա, մեկ ուրիշն էլ նշեց, որ ոչ մեկը չունի և ծերանոցում կազմակերպվող միջոցառումները նրա համար միակ ուրախության աղբյուրն են: Մյուս միայնակ տարեցն էլ նշում է, որ եթե [ծերանոցի] անկյունն իրենն է, ուրեմն իր տունն է:

Հետաքրքիր է, որ տուն-ինտերնատներում իրար են գտնում նաև նույն դավանանքի մարդիկ: Մասնավորապես ինտերնատներից մեկում կան «հիսունականների» և Եհովայի վկաների խմբեր: Նրանք միասին կիսում են նույն սենյակները՝ իրենց ցանկությամբ [24]: Կան ծերանոցում հայտնվելու նաև ինքնատիպ պատմություններ: Ասենք խնամյալներց մեկը պնդում է, որ այստեղ է հայտնվել իր ընկերական շրջապատից ազատվելու համար. չի ուզում վերադառնալ այդ շրջապատ, և իրեն դուր է գալիս մենակյաց կյանքը [7]:

Դժվար չէ կռահել, որ տարեցի կողմից ծերանոցի ընկալումը խիստ կապված է նաև տարեցի նախատրամադրվածության, բնավորության հետ: Մի շարք դեպքերի կողքին, որտեղ ծերանոցը հանդես է գալիս վայր, որտեղ կարող են կյանքը վերախմաստավորել, ամուսնանալ, խուսափել միայնությունից կամ էլ գալ մենակյաց կյանքի հետևից: Կան խնամյալներ, որոնք պնդում են, որ «ձանձրանում են», «ժամանակ են սպանում», «միապաղաղ կյանք են վարում» [11], և այս դեպքերը ևս հիշատակության են արժանի:

Տարեցներից մեկի խոսքերն էլ լավագույնս արտահայտում են ծերանոցում հայտնվելուց առաջ ու հետո վերջինիս ունեցած

ընկալումների տարբերությունը. «Ասացվածք կա. սատանան այնքան սարսափելի չէ, որքան նրա անունն է: Ես ծերանոցի մասին այլ կարծիք ունեի, բայց որ եկա էստեղ, իմ կարծիքը փոխվեց: Ես զգացի, որ հոգատար, լավ վերաբերմունք են ցույց տալիս մարդ արարածի նկատմամբ» [23]:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ ամեն դեպքում ինամյալների կողմից ծերանոցի ընկալման ամենատարբեր, հակադիր մոտեցումները կան՝ «հորական տնից» մինչև «որբանոց»: Դժվար չէ կռահել, որ ծերանոցի ընկալման վրա ազդում են ոչ միայն այստեղ հայտնվելու պատճառները, այլ նաև անձնային առանձնահատկությունները, նախապաշարմունքներն ու տրամադրվածությունը:

Հայաստանյան ծերանոցները համեմատաբար ավելի շատ ուշադրության են արժանացել վերջին մի քանի տարվա ընթացքում: Ասվածի ապացույցն է սոցիալական նախաձեռնություններում ինտերնատների տարեցների ակտիվ ներգրավվումը, «Տարմանի» Նորքի ինտերնատի թատերախմբի գործունեությունը, նախագահի՝ 2020 թվականի ամանորյա ուղերձը, երբ ՀՀ նախագահը հատուկ շնորհավորական ուղերձ հղեց «միայնակ կամ ծերանոցներում ապրող մեր հայրենակիցներին» [12]: Մա, ի դեպ, ամանորյա ուղերձների պատմության մեջ առաջին ու միակ հիշատակությունն է մինչ օրս:

Բայց, միևնույն է, մարդիկ այստեղ «կարոտ են մնում» երիտասարդների հետ շփմանը, և ծերանոցներում, այսպես կոչված, «վարդագույն ներարկումների» [32] կարիք կա: Կարծում եմ՝ նպատակային և փոխշահավետ կլինեք հայաստանյան պայմաններում կիրառել «ծերանոց-ուսանողական հանրակացարան» [33] կամ «ծերանոց-մանկապարտեզ» [34] ձևաչափերը: Անհրաժեշտ է հաճախակի այցեր կազմակերպել տարբեր սերունդների միջև: Միջսերնդային հաղորդակցության մոդելը կիրառվում է արևմուտքում և շահավետ է մասնակից բոլոր կողմերի համար: Արդյունքում տարեցներն իրենց անտեսված չեն զգում, երիտասարդներն էլ ընդլայնում են իրենց մտահորիզոնը: Մյուս կողմից էլ՝ տարեցները ունեն զբաղվածություն ապահովելու խնդիր: Նրանք ունեն ներուժ, որը ճիշտ չի օգտագործվում: ՀՀ պետական տուն-ինտերնատներում կարելի է ներդնել տարեցների զբաղվածությունն ապահովելու համար նախատեսված տարբեր գործունեություններ, որոնք ինքնաբավությունն ու զբաղվածությունն ապահովելուց զատ կարող են եկամտի աղբյուր հանդիսանալ նաև ինտերնատի համար: Ասենք ձեռագործություն, մասնագիտական

հմտություններ՝ առկայության դեպքում, տարեցների հմտություններին ու հնարավորություններին հարմարեցված աշխատանքներ: Սրանով տարեցները կարող են ինչ-որ չափով թոթափել տուն-ինտերնատների ծախսերի բեռը կամ այդ ռեսուրսներն օգտագործել ինտերնատում և ինտերնատից դուրս իրենց համար տարբեր թերապիաներ, զբաղմունքներ, էքսկուրսիաներ կազմակերպելու համար:

ВОСПРИЯТИЕ ДОМОВ ПРЕСТАРЕЛЫХ: ВЗГЛЯД ИЗНУТРИ

Оганнисян Д. Г.

В данной работе представлена общая характеристика дома престарелых, сделана попытка изучить восприятие дома престарелых и подходы в отношении дома престарелых со стороны самих проживающих. Мы попытались разобраться, кто переезжает в дом престарелых, каковы предпосылки для этого и какова в этом смысле статистика.

Ключевые слова: дом престарелых, дом-интернат, престарелые, брошенные старики, одинокие старики.

PERCEPTION OF NURSING HOMES: AN INSIDE LOOK

Hovhannisyan D. H.

The paper presents the general characteristics of the nursing home; an attempt is made to study the residents' perceptions and approaches of nursing homes. We tried to comprehend who are the people settling in nursing homes, what prerequisites are that and the state of statistics in this sense.

Keywords: nursing homes, care facility, elderly, abandoned elderly, lonely elderly.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Айриян А., Социальные аспекты геронтологии. Ер., «Айастан». 1989. С. 175.
2. Дементьева Н., Методологические аспекты социально-психологической адаптации лиц пожилого возраста в стационарных учреждениях социального обслуживания // Психология зрелости и старения. М., 1998. С. 51.

3. Фромм Э., Психологические проблемы старения// О неповиновении и другие эссе. М., АСТ. 2018, С. 188.
4. Brandt M., Intergenerational help and care in Europe// European sociological review. 2009. №5. 36 p.
5. Hooyman R. N., Aging matters, Washington university, 2015, 512 p.
6. Ruths S., Residents' perceptions of their own sadness - a qualitative study in Norwegian nursing homes. Bergen, 2015. 7 p.
7. «Աղջիկս իմացավ, որ ծերանոցում եմ, հեռախոսը ձեռքից ընկավ» տուն ինտերնատի «բնակիչները», 1inTV, <https://www.youtube.com/watch?v=N7IjHTgekOw&t=401s>, 16.10.2022.
8. Այն, ինչ կորցրի ծերանոցում, գտա կյանքում, Panorama.am, <https://www.panorama.am/am/news/2017/09/30/ամուսնություն-տարեց%252F1842957>, 16.10.2022.
9. Ամոթալի՞ է երկրում ունենալ ծերանոց, A1+, <https://a1plus.am/hy/article/153824>, 16.10.2022:
10. Այցելություն Արմավյան քաղաքի «Նարեկ» մեծահասակների տուն, Shoghakat.am, <https://www.shoghakat.am/am/telecasts/1103>, 13.03.2023:
11. Անակնկալ Երևանի թիվ 1 ծերանոցի բնակիչների համար, 1tv.am, <https://www.1tv.am/hy/video/Անակնկալ-Երևանի-թիվ-1-ծերանոցի-բնակիչների-համար/122068>, 17.10.2022:
12. Արմեն Սարգսյանի ամանորյա ուղերձը, YouTube.com, https://www.youtube.com/watch?v=xU16g_mP3DQ, 13.03.2023:
13. Բազմաթիվ միայնակ տարեցներ ծերերի տուն-ինտերնատի անունն անգամ լսել չեն ցանկանում, Shirakcentre.am, http://shirakcentre.org/hy/grum_en_anotevannery/index.html, 13.03.2023:
14. Երկու տարի է, այստեղ եմ, A1+, <https://a1plus.am/hy/article/106745>, 16.10.2022:
15. Ինչպես են ապրում Նորքի տուն-ինտերնատի բնակիչները , yn.am, <https://yn.am/?p=49930&l=am>, 13.03.2023:
16. Ծերանոց, MediaLAB, <https://medialab.am/219885/>, 17.10.2022:
17. Ծերանոցի բնակիչները, Azatutyun.am, <https://www.azatutyun.am/a/24625185.html>, 13.03.2023:
18. Ծերերն ամենամոտն են երկնքին, Hetq.am, <https://hetq.am/hy/article/25682>, 13.03.2023:

19. Ղազարյան Դ., Ընդհանուր տիպի տուն-ինտերնատներում խնամվող տարեցների 34%-ը ժառանգներ ունի, Hetq.am, <https://hetq.am/hy/article/75773>, 13.03.2023:
20. Մեկ օր ծերանոցում, Gov.am, <https://www.gov.am/am/hraparakum/page/37/>, 13.03.2023:
21. Մուսուլման հսկիչները չէին օգտվում ջրի ծորակից, որտեղից օգտվում էին հայերը, Aravot.am, <https://www.aravot.am/2016/03/05/664000/>, 13.03.2023:
22. Նորքի տարեցների տուն-ինտերնատ. նոր կյանքի վե՞րջ, թե՞ սկիզբ, News.am, <https://news.am/arm/news/526213.html>, 13.03.2023:
23. Նորքի տուն-ինտերնատում պատրաստվում են Ամանորին, Armlink.am, <https://hy.armlink.am/category/zhivaya-lenta-novosti-armeniya>, 13.03.2023:
24. Պատարագ է մատուցվել Գյումրու Տուն-ինտերնատում, Tsayg.am, <http://tsayg.am/mainpage/4258--ls-insls-s-sl.html>, 13.03.2023:
25. Սարգսյան Գ., Նորքի տուն-ինտերնատի Ամանորը, Armeniasputnik.am, <https://armeniasputnik.am/armenia/20151229/1542057.html>, 13.03.2023:
26. Մեր՝ ծերանոցի պատերի ներսում, Galatv.am, <https://galatv.am/hy/222226/>, 13.03.2023:
27. Մերը տարիք չի ճանաչում, A1plus.am, <https://a1plus.am/hy/article/86947>, 13.03.2023:
28. Սպասումը և սերը, Medialab, <http://oragir.elders.medialab.am.tilda.ws/>, 17.10.2022:
29. Տարեցների վիճակագրական տվյալներ, Mlsa.am, http://www.mlsa.am/?page_id=1308, 09.01.2023:
30. Տունը, որը..., Armeniasputnik.am, <https://armeniasputnik.am/society/20161110/5433538/norq-internat-sargsyan-tikin.html>, 13.03.2023:
31. Տուն-ինտերնատ կրնդունվեն միայն բնակարան, ժառանգ և ընտանիքում աշխատունակ այլ անդամ չունեցողները, Tert.am, <https://www.tert.am/am/news/2020/03/03/past/3225754>, 16.10.2022:
32. Harris D., 3 huge problems with care homes, 1 small solution, TEDx Talks, <https://www.youtube.com/watch?v=bd5yM5VgAMQ&list=WL&index=60&t=3s>, 13.03.2023.

33. Intergenerational programs, Judsonsmartliving.org,
<https://www.judsonsmartliving.org/about/intergenerational-programs/>,
28.01.2020.
34. Seattle seniors' home brings young and old together, Cbc.ca,
<https://www.cbc.ca/news/world/seattle-seniors-home-brings-young-and-old-together-1.3179504>, 28.01.2020.

Տեղեկություններ հերինակի և գիտական ղեկավարի մասին

Հովհաննիսյան Դ. Հ. - մագիստրատուրա 1-ին կուրս

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, Մշակութաբանություն

Էլ. փոստ՝ dianahovhannisyan99@gmail.com

Գիտական ղեկավար՝ Թադևոսյան Ա., արաջատար գիտաշխատող

Ստացվել է՝ 08.11.2022

Գրախոսվել է՝ 20.01.2023

**ԺԱՐԳՈՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
ՈՐՊԵՍ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ
(ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**
Սահակյան Շ. Վ.

Հոդվածում ներկայացվել է երիտասարդության շրջանում ժարգոնային բառերի, արտահայտչամիջոցների գործածությունը՝ վերհանելով և բացահայտելով դրա հոգեբանական դրդապատճառներն ու հետևանքները: Կատարվել է հետազոտական աշխատանք՝ ընդհանրացնելով կյանքի տարբեր ոլորտներում և բնագավառներում ժարգոնատիպ արտահայտությունների գործածականության պատճառները և հետևանքները:

Բանալի բառեր. ժարգոն, երիտասարդ, խումբ, ինքնահաստատում, հասարակություն, հաղորդակցում:

Մերօրյա իրականության մեջ հարափոփոխ արժեքները առիթ են հանդիսանում երիտասարդության շրջանում նաև խոսքային խեղությունների, որոնց համար հիմք է դառնում նաև ժարգոնի տարածումը՝ երիտասարդական շրջանակների կողմից դիտարկելով որպես ինքնահաստատման կարևոր օղակ:

Հոդվածում առաջադիր նպատակին հասնելու համար օգտվել ենք Մալխասեանցի բառարանից, ապա թեմայի ուսումնասիրության հիմք է ծառայել Վվեդենսկայի, Պավլովի և Կաշանայի համատեղ մեկնաբանումը, Սուդզիլովսկիի կողմից առաջարկված ժարգոնի բնութագրական հատկանիշները և Աժեգովայի ու Շվեդովայի սահմանումը: Ընդհանուր առմամբ ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել ինչպես երիտասարդական խմբերը՝ 18-30 տարեկան, այնպես էլ հեռուստատեսությունը և համացանցը:

Աշխատանքի հիմնական նպատակներն են՝

- ուսումնասիրել ժարգոնը՝ որպես երիտասարդական բառապաշարի բաղկացուցիչ տարր,
- դիտարկել ժարգոնի և ինքնագնահատականի հոգեբանական կապը,

- վերհանել ժարգոնի տարածման և օգտագործման դրդապատճառները,
- ժարգոնը դիտարկել որպես լեզվական արատավոր երևույթ:

«Լեզուն մի ժողովրդի հոգին է իր հնչեղ ձևի մեջ: Նա շոշափելի չլինելով հանդերձ՝ շոշափելի է իր լսելիությամբ:»

Վահրամ Փափազյան

Ստեփան Մալխասեանցը «ժարգոն» բառը մեկնաբանում է որպես աղավաղված բարբառ, լեզու, որն իր առանձնահատկություններով մատչելի է որոշ շրջանի մարդկանց, իսկ ուրիշներին անհասկանալի է [1, էջ 142]: Մենք հավելում ենք այն, որ ժարգոնը երիտասարդներին հատուկ «լեզվական հիվանդություն» է: Ժարգոնը սոցիալական խմբի տարանջատելույթն է, որը պարունակում է բազմաթիվ բառեր և արտահայտություններ, որոնք տարբերվում են ընդհանուր լեզվից [4, էջ 177]:

Ժարգոնի առաջացումը կապված է առանձին խմբերի ցանկության հետ՝ հակադրվելու հասարակությանը կամ այլ սոցիալական խմբերի, լեզվական միջոցների օգնությամբ տարբերվելու նրանցից: Ի տարբերություն ընդհանուր հայոց լեզվի գեղեցիկ բառաֆոնդի, որը նախատեսված է մարդկանց միջև լայն հաղորդակցությունը խթանելու համար, ժարգոնը՝ որպես «գաղտնի» լեզու կամ ծածկալեզու, ուղղված է «օտարից» ասվածի իմաստը թաքցնելուն [2, էջ 96-97]:

Ժամանակակից հասարակության մեջ մարդիկ գիտակցաբար կամ ակամա օգտագործում են ժարգոնային տասնյակ բառեր՝ փոխակերպելով մայրենի խոսակցական լեզուն պատմական, մշակութային, քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումների ուժով, ինչպիսիք են՝ դժժալլ, տժժալ, հավայի, լոքշ, թույն, շուխուռ, մանթո, կուռաժիտ և այլն:

Ներկայումս կան ժարգոնների բազմաթիվ դրսևորումներ՝ հանցավոր, սպորտային, լրագրողական, զինվորական, համակարգչային, երիտասարդական և այլն, որոնք օգտագործվում են որոշակի մասնագիտությունների կամ տարիքային խմբերի կողմից՝ նշելու տվյալ խմբերին պատկանելությունը և դյուրին դարձնելու հաղորդակցությունը խմբերի ներսում, օրինակ՝ կուրսի լինել, բիթի, մանթո, չուժոյ, ռաստվել և այլն: Միևնույն ժամանակ չկան առանձին բառերի և արտահայտությունների օգտագործման սահմաններ և արգելքներ, ինչը ժամանակակից ժարգոնին բնորոշ հատկանիշ է: Ժամանակակից

հասարակության մեջ «Ժարգոն» բառը փոխարինվում է ավելի գեղեցիկ «պլենգ» բառով:

Երիտասարդ սերունդը բոլոր ժամանակներում ունի կյանքի մասին իր տեսակետը, աշխարհի մասին իր ըմբռնումները և, անկասկած, լեզվական բնորոշ միջոցները:

«Ժարգոն» հասկացությանը նվիրված աշխատության հեղինակ Գ. Ա. Սուրգիլովսկին նշում է, որ «Ժարգոն» տերմինը սովորաբար միավորում է տարբեր հասկացություններ: Ժարգոնային լեզվի առավել տարբերակիչ հատկանիշներից նա առանձնացնում է՝

1. Ժարգոնը բառարանային երևույթ է:
2. Ժարգոնը վերաբերում է ոչ գրական բառապաշարին:
3. Ժարգոնը բանավոր խոսքին բնորոշ բառապաշար է:
4. Ժարգոնը բառապաշար է, որն ունի զգացմունքային ենթատեքստ:
5. Ժարգոնը բնութագրվում է որոշակի ծանոթ գույնով:
6. Ժարգոն սովորաբար կոչվում են բոլոր տեսակի հումորային, հեգնական և այլ արտահայտություններ [3, էջ 67]:

Ժարգոնային բառերը տարածված են ցանկացած լեզվում: Որպես կանոն՝ ժարգոնները երկար չեն ապրում և լայն կիրառություն չունեն: Բայց երիտասարդների խոսքում նրանք միշտ եղել են, կան ու կլինեն:

Երիտասարդությունը, լինելով ժարգոնի գերակշռող կրողը, այն դարձրել է իր լեզվական մշակույթի տարրը, որը ինքնահաստատվելու համար անհրաժեշտ և կարևոր նաախապայման է: Երիտասարդների մեծամասնությունը ժարգոն սկսում է օգտագործել դեռահասության տարիքից սկսած: Դեռահասները նմանակողներ են: Ընդօրինակելով հասակակիցներին՝ դեռահասը սովորում է ժարգոնային բառեր չմտածելով դրանց իմաստի և նշանակության մասին:

Հոգեբանները փաստում են, որ երիտասարդության տարիքում մարդիկ փորձում են ամեն ինչ արագ անել և ինքնահաստատվել հասարակական տարբեր միջավայրերում:

Այս ոլորտում հարկադրանքն ու ճնշումն աստիճանաբար բերում են բնական դիմադրության, բողոքի, որը դրսևորվում է լեզվական նոր նախասիրությունների առաջացմամբ, «այլընտրանքային» բառապաշարի ստեղծմամբ: Ժարգոնում երիտասարդը շեշտում է իր անկախությունը, փորձում է ապրել սեփական կյանքով, որին մեծահասակները չեն կարող խանգարել:

Դժվարանալով արտահայտել իրենց զգացմունքներն ու հույզերը՝ երիտասարդները ցուցաբերում են ամաչկոտություն: Ժարգոնի կանխամտածված կոպտությունն ու հեզմանքը հաճախ օգտագործվում է այս խնդիրը լուծելու և ինքնահաստատվելու համար:

Երիտասարդների լեզուն ենթադրում է ժարգոնային բառերի անհարկի օգտագործում՝ որպես միջակայք կամ պարզապես բացասական հույզեր արտահայտող նախադասությունները միավորող եղանակներ:

Երիտասարդական ժարգոնին բնորոշ է խաղալու կայուն հակումը, հումորը, ծաղրը, հեզմանքը: Հեզմանքը հենց ժարգոնի բնույթի մեջ է: Կարելի է ասել, որ ժարգոնը պաշտպանական մեխանիզմ է կյանքի տհաճ իրավիճակներից: Նրանք հեռացնում են վախը, փորձառության ողբերգությունը՝ կարծես շեղելով այս գաղափարից, և տանում դեպի նպատակամետ ինքնահաստատում:

Երիտասարդական խմբերի ժարգոնը չնայած շատ ընդհանրություններ ունի, սակայն զգալիորեն տարբերվում է՝ կախված կոնկրետ խմբերի և ենթամշակույթների հետաքրքրություններից, արժեքներից և ապրելակերպից: Հստակորեն դրսևորվում են նաև տարածաշրջանային առանձնահատկությունները երիտասարդական խմբերի մոտ:

Երիտասարդական միջավայրում լիարժեք շփումն անհնար է առանց նրա լեզուն իմանալու: Խոսքն արտացոլում է մեր իրականությունը, որը կապված է կյանքի արագացված տեմպերի, մշակութային կողմնորոշումների և արժեքների փոփոխության հետ: Կյանքի փոփոխությանը համընթաց՝ փոխվում է նաև բառապաշարը, քանի որ յուրաքանչյուր նոր հասկացություն պետք է համապատասխանի իր սահմանմանը, այսինքն՝ բառին:

Ժարգոնի կիրառման մակարդակի բաձրացման ամենանպաստավոր գործոնը հեռուստատեսությունն է: Փոքր տարիքից մենք ստանում ենք ժարգոնային անուղղակի ազդակներ, որոնք դաջվում են մեր հիշողության մեջ: Դեռահասության տարիքում դրանք սկսում են դրսևորվել հատկապես հեռուստաֆիլմերում, երբ գլխավոր հերոսը խոսելիս օգտագործում է ժարգոնային բառեր, իսկ մյուսները հարգում են նրան՝ շնորհիվ իր խոսակցական բառաֆոնդի, իսկ դա մնում է դեռահասի հիշողության մեջ: Օրինակն է «Կոռուպցիա» հեռուստատեսերիալը, որի բառապաշարը արդեն երիտասարդ տարիքում դառնում է խոսակցականի անբաժան մասը:

Հետազոտությունն ամրացնում է այն փաստը, որ երիտասարդների մոտ կարծրատիպ է առաջացել, որ եթե չօգտագործեն ժարգոնային բառեր, իրենք չեն ընդունվի կամ չեն հարգվի: Հասարակության մեջ երիտասարդների մոտ ժարգոնային բառերի օգտագործումն ինքնահաստատման համար հատկապես երևում է սիրային հարաբերություններում, երբ ինքնահաստատման ամենամեծ փորձադաշտը դառնում է աղջիկը:

Ինքնահաստատումն իրենից ներկայացնում է ինքնաբավարարման զգացում, իսկ ներկա պայմաններում ամենահայտնի և արագ ճանապարհը ժարգոնի օգտագործումն է: Ինքնահաստատման բարդությի առաջացման պատճառը գտնելու համար պետք է գնալ մանկություն, գտնել այն բաց պատուհանը, ինչի հետևանքով էլ առաջացել է խնդիրը: Պատճառները շատ են՝ ծնողական սիրո, գուրգուրանքի պակաս, անտեսվածություն, ընտանիքում սիրո ոչ ճիշտ բաշխվածություն և այլն:

Ժարգոնի օգտագործումը, առաջին հերթին, մեծերից բաժանվելու, հասակակիցների հետ «սեփական լեզվով» խոսելու ցանկությունն է: Ոչ ֆորմալ հաղորդակցությունը ենթակա է այնպիսի դրդապատճառների, ինչպիսիք են շփման համար առավել բարենպաստ հոգեբանական պայմանների որոնումը, համակրանքի և կարեկցանքի ակնկալիքը, հայացքներում անկեղծության և միասնության ծարավը, ինքնահաստատման անհրաժեշտությունը: Երիտասարդական խոսքում ժարգոնի կիրառման մեկ այլ պատճառ էլ երիտասարդների ինքնարտահայտման և փոխըմբռնման կարիքն է: Երիտասարդությունը, լինելով ժարգոնի գերակշիռ կրողը, այն դարձնում է երիտասարդական մշակույթի տարր, որը իր հերթին դարձնում է հեղինակավոր և անհրաժեշտ ինքնադրսևորվելու և ինքնահաստատվելու համար: Երիտասարդներին գրավում է ժարգոնը ձայնային, զգացմունքային արտահայտիչ գունավորմամբ:

Թերևս կարող ենք փաստել, որ երիտասարդների արժեհամակարգը այնպես է փոխվել, որ ժարգոնի օգտագործումը դարձել է նորաձև: Ժարգոնը եղել է, կա և կլինի որպես ինքնահաստատման միջոց: Ժարգոնը չի կարելի ոչ արգելել, ոչ վերացնել, այն փոխվում է ժամանակի ընթացքում, որոշ բառեր դուրս են գալիս գործածությունից, մյուսները հայտնվում են, ինչպես ցանկացած այլ լեզվում:

Եզրահանգում: Ժամանակակից աշխարհը սրընթաց զարգացում է ապրում, ինչին համընթաց՝ զարգանում և կատարելագործվում է ժարգոնը: Հասարակության մոտ տեղի են ունենում արժեհամակարգի փոփոխություն, առաջանում են բարդույթներ, բարդույթներից ձերբազատվելու ելքերի որոնում, խմբում դիրք գրավելու ձգտում, լսելի դառնալու անհազ ցանկություն, որի նպատակն է ինքնահաստատումը, զգալ ինքնաբավարարում: Երիտասարդները փնտրում են ամենադյուրին տարբերակը՝ դրանք իրականացնելու համար: Ժարգոնը դարձել է ինքնահաստատման ամենակարճ ճանապարհը, իսկ ժարգոնը այսօր ամենուր է՝ հեռուստատեսությունում, փողոցում, և մենք կամա թե ակամա լսում ենք և որոշակի հանգամանքների բերումով սկսում օգտագործել: Երիտասարդական ժարգոնը դարձել է «լեզվական հիվանդություն», երիտասարդական կյանքի անբաժան մաս՝ որպես կարևոր օղակ ինքնահաստատման համար:

УПОТРЕБЛЕНИЕ ЖАРГОНА В КРУГУ МОЛОДЕЖИ КАК СРЕДСТВА САМОУТВЕРЖДЕНИЯ (КРАТКИЙ АНАЛИЗ)

Саакян Ш. В.

В статье представлено употребление сленговых слов и выражений среди молодежи, выявлены и раскрыты его психологические мотивы и последствия. Проведена исследовательская работа, обобщающая причины и последствия употребления сленговых выражений в разных сферах жизни.

Ключевые слова: сленг, молодой, самоутверждение, общество, группа, общение.

THE USAGE OF JARGONS AMONG THE YOUTH AS A MEANS OF SELF- AFFIRMATION (GENERAL OVERVIEW)

Sahakyan Sh. V.

The article presents the usage of slang words and expressions among young people, revealing and highlighting its psychological motives and consequences. The research was carried out by generalizing the reasons and consequences of slang usage in different spheres of life.

Keywords: slang, young people, self-esteem, society, group, communication.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան. Երևան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն (1944): Էջ 776:
2. Введенская В. А. Русский язык и культура речи: учебное пособие для вузов /Л. А. Введенская, Л. Г. Павлова, Е. Ю. Кашаева. –Изд. 28-е. – Ростов н/Д: Феникс, 2010. – 539 с.
3. Судзиловский Г. А. Сленг – что это такое? Английская просторечная военная лексика / Судзиловский Г. А.. – М.: Воениздат, 1973. – 182 с.
4. Ожегов С. И., Шведова Н. Ю., Толковый словарь русского языка: 80000 слов и фразеологических выражений /Российская академия наук. – 4-е изд., дополненное. – М.: ООО «А ТЕМП», 2013. – 874 с.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մահակյան Շ. Վ. - մագիստրատուրա 1-ին կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Հոգեբանություն

Էլ. փոստ՝ shush.sahakyan2000@gmail.com

Գիտական ղեկավար՝ Հովհաննիսյան Օ., բան. գիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 10.11.2022

Գրախոսվել է՝ 18.01.2023

**ՍՏԱՐՏԱՓ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈւՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈւՄ (2021Թ.)
Մնոյան Է. Ա.**

Աշխարհում նորաստեղծ ձեռնարկությունների թվի աճին և դրանց զարգացմանը զուգահեռ մեծանում է վենչուրային ֆինանսավորման արդիականությունն ու դերը: Վենչուրային կապիտալիստների խնդիրն է՝ ուղղորդել ներդրումները դեպի այն ստարտափներ, որոնց համար չափազանց դժվար է ֆինանսավորում ստանալ՝ վերջիններիս անորոշության և բարձր ռիսկերի պատճառով: Կապիտալիստները հանդես են գալիս որպես միջնորդ բիզնեսի և ներդրողների միջև, ինչը օգնում է նվազագույնի հասցնել տեղեկատվական անհամաչափությունները: Հայաստանը վերջին տարիներին համարվում է ստարտափների զարգացման բարձր ներուժ ունեցող երկիր. չնայած երկրի փոքրաթիվ բնակչությանը՝ հայկական ծագումով արդեն 2 միաեղջյուր կա: Ներկայումս Հայաստանում ավելանում է վենչուրային կապիտալի հիմնադրամների թիվը, սակայն դրանք բախվում են բազմաթիվ խոչընդոտների՝ կապված ինչպես շուկայական հարաբերությունների, այնպես էլ օրենսդրության բացերի հետ: Այս հոդվածում կքննարկվեն ստարտափների ֆինանսավորման ուղիները, ինչպես նաև Հայաստանի ներկա իրավիճակը:

Բանալի բառեր. վենչուրային ֆինանսավորում, ներդրումներ, ստարտափ, վենչուրային հիմնադրամ:

Նախաբան: Վենչուրային ֆինանսավորումը նախատեսված է առաջին հերթին ստարտափների և նոր նախագծերի համար: Վերջիններիս ֆինանսավորման համար ստեղծվել են վենչուրային հիմնադրամներ, որտեղ պրոֆեսիոնալ միջնորդները ներդրումներ են կատարում մեծ ներուժ ունեցող ընկերություններում: Հիմնականում գումարը ներդրվում է տեխնոլոգիական ստարտափներում՝ R&D հիմունքներով: Հարկ է նշել, որ վենչուրային ներդրումները համարվում են բարձր ռիսկային, սակայն այս դեպքում ռիսկը կարելի է արդարացված համարել: Չնայած անհաջողություններին, եթե ստարտափը հաջողի, ապա ներդրողին վերադարձը կարող է հսկայական լինել:


Այնուամենայնիվ, կարևոր է հաշվի առնել, որ վենչուրային կապիտալիստները տարբերվում են բիզնես հրեշտակներից՝ չնայած այն հանգամանքին, որ երկուսն էլ ներդրումներ են կատարում ստարտափներում: Բիզնես հրեշտակների դեպքում ֆինանսավորումն առավել հաճախ տրամադրվում է վաղ փուլի ստարտափներին: Բիզնես հրեշտակների և վենչուրային կապիտալիստների հատկանիշը նրանց ներդրած գումարն է. առաջին դեպքում նրանք օգտագործում են իրենց սեփական միջոցները՝ ի տարբերություն վենչուրային կապիտալիստների, որոնք օգտագործում են անհատ ներդրողների կողմից կուտակած միջոցները ֆոնդերից: Հրեշտակները չեն ձգտում վերահսկել ստարտափները, չնայած նրանք ակտիվ և մանրամասն ստուգում են իրականացում, սակայն ցանկանում են լինել նախագծի մասնակից, նրանց գործունեության կարևոր ասպեկտը խորհրդատվությունն է և աջակցությունը կառավարչական որոշումների կայացման հարցում՝ ձեռնարկատերերի փորձի և հմտությունների բացակայության դեպքում: Մյուս կողմից՝ վենչուրային կապիտալիստները կարող են համեմատաբար մեծ գումարներ ներդնել, քան առաջինները, բայց ի տարբերություն բիզնես հրեշտակների, որոնք, բացի ֆինանսական հեռանկարներից, ունեն նաև սոցիալական պատասխանատվություն, վենչուրային կապիտալիստների համար չափազանց կարևոր է վերադարձնել իրենց ներդրումները: Նրանք իրականացնում են միայն ռազմավարական մոնիտորինգ՝ առաջնայնություն չտալով ծրագրի կառավարման մեջ իրենց մասնակցությանը:

Վենչուրային ֆինանսավորումը ստարտափներում կարող է իրականացվել տարբեր ձևերով. կապիտալիստները կարող են ձեռք բերել այս ստարտափի սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերը: Իհարկե, հետագայում այդ բաժնետոմսերը կարող են վաճառվել բորսայում, ինչպես նաև հնարավոր է ստանալ երկարաժամկետ դիվիդենտ: Որոշ դեպքերում ստարտափների սեփականատերերը կարող են հետագայում հետ գնել բաժնետոմսերը ներդրողներից՝ համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի՝ ստանալով ամբողջական վերահսկողություն նախագծի վրա:

Աշխարհում անկայուն իրավիճակի և Ուկրաինայի կոնֆլիկտի, գնաճային անորոշության և բարձր ռիսկերի պատճառով տեխնոլոգիական ընկերությունների գնահատումները դարձել են ավելի կոշտ, իսկ որոշ IPO (առաջնային հրապարակային տեղաբաշխում) կասեցվել

են: Չնայած դրան, ըստ Forbs-ի՝ անդրադառնալով ներդրումների արագ աճին, դա չի կանգնեցնի այս ոլորտի զարգացումը [1]:

Աշխարհում SS տեխնոլոգիաների աճին զուգընթաց՝ արագորեն աճում է ստարտափների դերն ու նշանակությունը և դրանց ֆինանսավորումը: Վենչուրային ներդրումների ռեկորդային աճը գրանցվել է 2021 թվականին, և այն, ամենայն հավանականությամբ, կլինի շարունակական: Այսպիսով, անցյալ տարի վենչուրային կապիտալի ներդրումների թիվը հասել է 621 մլրդ. դոլարի, ինչը 111%-ով ավելի է, քան մեկ տարի առաջ (2020 թվականին համապատասխան ցուցանիշը կազմել է 294 մլրդ. դոլար, տե՛ս Գծապատկեր 1): Ներդրումների գրեթե կեսն իրականացվել է ԱՄՆ-ում, որից 55%-ն ուղղվել է զարգացման սկզբնական փուլերում գտնվող ստարտափներին [2]:



Գծապատկեր 1. Համաշխարհային ֆինանսավորում տարեկան կտրվածքով:
Աղբյուր՝ CB Insights, State Of Venture 2021 Report, 2022:

2021 թվականին, 2020 թվականի համեմատ, աշխարհում միաեղջյուրների թիվը 569-ից հասել է 959-ի: Այսպիսով, ընդամենը մեկ տարվա ընթացքում վերջիններիս թիվն աճել է 69%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հասուն փուլերում ստարտափներում ներդրումների ավելացմամբ: Միաեղջյուր ստարտափների ցանկում ընդգրկված են նաև հայկական ծագում ունեցող ստարտափները, ինչը էական նշանակություն ունի հայկական էկոհամակարգի զարգացման և հետագա ներդրումներ ներգրավելու համար:

Ըստ IESE Business School-ի՝ վենչուրային և մասնավոր կապիտալի համար երկրի զրավչության առումով առաջին տեղում ԱՄՆ-ն է, երկրորդ տեղում՝ Միացյալ Թագավորությունը, իսկ Հայաստանը 125

երկրների մեջ 90-րդն է: Հարևան երկրները՝ Վրաստանն ու Ադրբեջանը, այս ցուցակում ավելի ցածր են (տե՛ս Աղյուսակ 1) [3]:

Աղյուսակ 1.


Երկրի գրավչության ինդեքս վենչուրային և մասնավոր կապիտալի համար, վարկանիշ 2021:

№	Երկիր	Գնահատական
1	ԱՄՆ	100
2	Մեծ Բրիտանիա	90,3
3	Ճապոնիա	87,4
4	Գերմանիա	87,3
5	Կանադա	87,2
6	Սինգապուր	85
7	Չինաստան	84,7
8	Ավստրալիա	84
9	Հարավային Կորեա	83,8
10	Ֆրանսիա	83,6
18	Նոր Զելանդիա	76,7
90	Հայաստան	32,90
92	Վրաստան	31,70
94	Ադրբեջան	30,30

Աղբյուր՝ Բիզնես-դայրոց IESE, Ալեքսանդր Գրոխ, Գենրիխ Լիխտենշտեյն, Կարստեն Լիզեր և Մարկոս Բիզինգեր, 2021թ.:

Եթե Հայաստանը դիտարկենք առանձին, ապա կտեսնենք, որ չնայած Հայաստանում էկոհամակարգի բարելավմանը, կարելի է ասել, որ բոլոր բնութագրերով Հայաստանը կատարողականով շատ հետ է նույնիսկ ասիական երկրներից (տե՛ս նկար 1): Բացառություն են կազմում հարկային ցուցանիշները և Ներդրողների պաշտպանության և կորպորատիվ կառավարման ինդեքսը, որտեղ Հայաստանը բավականին լավ դիրքերում է: Ինդեքսային խմբերի առանձին մոնիտորինգի արդյունքում ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունը հարկման առումով առավելություն ունի այս երկրների նկատմամբ, մասնավորապես, այս ցուցանիշով ՀՀ-ն 40-րդ տեղում է: Սա վկայում է Հայաստանի Հանրապետությունում բարենպաստ հարկային մթնոլորտի մասին, ինչին նպաստում է «Տեղեկատվական տեխնոլոգիաներին պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ըստ որի՝ սկսնակ ընկերությունները 5 տարով ազատվում են եկամտահարկից և վճարում եկամտային հարկը 10% դրույքաչափով: Հաշվետվությունների

ներկայացման պարզեցման և ավտոմատացման փաստը նպաստում է բարենպաստ հարկային միջավայրի ստեղծմանը: 2023 թվականին նախատեսվում է կատարելագործել այս օրենսդրական ակտը, ինչի կապակցությամբ կավելացվեն արդյունաբերության որոշ ճյուղեր, որոնք նույնպես կկարողանան օգտվել պետության կողմից տրվող արտոնություններից: Ցուցանիշների հաջորդ խումբը, որտեղ Հայաստանն ունի համեմատական առավելություն, «Ներդրողների պաշտպանություն – կորպորատիվ կառավարում» խումբն է, որում Հայաստանը զբաղեցնում է 43-րդ տեղը: Ինդեքսի ամենաթույլ և միևնույն ժամանակ զարգացման զգալի ներուժ ունեցող խումբը «Կապիտալի շուկայի խորություն» խումբն է: Այս խմբի ցուցանիշներն անհրաժեշտ են ցանկացած երկրի ներդրումային գրավչության համար: Վենչուրային կապիտալի համար առավել կարևոր է կապիտալի շուկայի առկայությունը, քանի որ արժեթղթերի շուկան ապահովում է ներդրումների վերադարձը և իրացվելիությունը, իսկ ՀՀ ֆինանսական համակարգը բանկակենտրոն է:



Նկար 1. Վենչուրային և մասնավոր կապիտալի համար երկրի գրավչության ինդեքս:

Աղբյուր՝ Բիզնես-դպրոց IESE, Ալեքսանդր Գրոխ, Գենրիխ Լիխտենշտեյն, Կարստեն Լիզեր և Մարկոս Բիզինգեր, 2021 թ.:

Քաղաքական և տնտեսական կայունությունը չափազանց կարևոր նախապայման է վենչուրային կապիտալի ֆինանսավորման համար: 2020 թվականի 44-օրյա պատերազմից, ինչպես նաև այս տարվա ռազմական գործողություններից հետո Հայաստանում իրավիճակը

մնում է անորոշ, ինչը նվազեցնում է երկրի գրավչությունը օտարերկրյա ներդրումների համար, իսկ Հայաստանի և Ադրբեջանի միջև մշտապես լարված իրավիճակը ուսկային է դարձնում ֆինանսավորման վերադարձը ներդրողների համար: Այսպիսով, երկարաժամկետ կայուն իրավիճակը թույլ կտա ավելի շատ ներդրումներ կատարել ներքին ֆինանսական վիճակը բարելավելու համար:

Համաշխարհային աշխարհաքաղաքական վերակառուցումը նոր հնարավորություններ է բացել Հայաստանի համար՝ զարգացնելու իր էկոհամակարգը: Մեծ թվով օտարերկրյա գործարարներ և աշխատակիցներ իրենց բիզնեսը տեղափոխում են Հայաստան, ինչը կարող է նոր թափ հաղորդել սկսնակ ձեռնարկությունների և ընդհանուր առմամբ S2S ոլորտի զարգացմանը: 2023թ. փետրվարի 1-ի դրությամբ 2022-2023թթ. SS արտոնությունների հավաստագիր է ստացել 1484 ընկերություն, որից 1323-ը՝ օտարերկրյա, այն դեպքում, երբ 2021թ. արտոնություն ստացած 210 ընկերությունից և ոչ մեկը չէր հանդիսանում օտարերկրյա կազմակերպություն [4]: Տարբեր կորպորատիվ կազմակերպություններ և պետական կառույցներ փորձում են առավել բարենպաստ միջավայր ստեղծել այդ կազմակերպությունների աշխատակիցների համար:

Մեկ այլ կարևոր խնդիր է վենչուրային ներդրումները վերահսկող կազմակերպության բացակայությունը: Որոշ ստարտափների համար առաջնահերթությունն ու նպատակը ոչ թե առաջընթացն է, այլ ներդրումներ ներգրավելը: Ներդրողների կողմից վերահսկողության բացակայության դեպքում միջոցները կարող են չարաշահվել՝ արդյունքում չհասնելով ակնկալվող արդյունքին: Լուծումը կարող է լինել Ազգային վենչուրային հիմնադրամի (ԱՎՀ) ստեղծումը, որի ստեղծման վրա աշխատում է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը: Ազգային վենչուրային հիմնադրամն իր գործունեությունը կարող է իրականացնել որպես սովորական վենչուրային հիմնադրամ և որպես «ֆոնդերի հիմնադրամ»՝ օտարերկրյա ֆոնդերի հետ համատեղ ներդրումներ կատարելով համատեղ ներդրման (co-investment) եղանակով: Ներկայումս աշխատանքներ են տարվում այս հիմնադրամի ստեղծման ուղղությամբ [5]:

Համակարգված վենչուրային համակարգի ստեղծումը հարթակ կստեղծի ներդրողների և ստարտափների համար, որոնք տեղեկատվության անհամաչափության և մի շարք այլ խնդիրների պատճառներով չեն կարողացել բիզնես կապեր հաստատել: Այս

հարթակը կնվազեցնի ծախսերը ինչպես ներդրողների, այնպես էլ ստարտափների համար, համընդհանուր համակարգված նորմերը հնարավորություն կտան ավելի օբյեկտիվ և նպատակահարմար ներդրումներ կատարել տնտեսության տարբեր ոլորտներում, իսկ օրենսդրական դաշտի բարելավումը կհեշտացնի տարբեր ոլորտների սկսնակ ձեռնարկությունների կյանքը, ինչը նաև դրականորեն կանդրադառնա ներդրումների և վենչուրային ֆինանսավորման վրա: Ֆինանսների սղության պատճառով Հայաստանում ներդրումները հիմնականում կատարվում են վաղ փուլի ստարտափներում, ուստի ավելի հասուն ստարտափները ստիպված են ներդրումներ ներգրավել դրսից, իսկ օտարերկրյա ներդրումներ ներգրավելն իր հերթին կարող է մեծապես ակտիվանալ այս հարթակի շնորհիվ:

Եզրահանգում: Կարելի է եզրակացնել, որ չնայած մեր երկրի առջև դրված բազմաթիվ դժվարություններին ու խնդիրներին, Հայաստանն ունի վենչուրային էկոհամակարգի, ստարտափների և բարձր տեխնոլոգիաների զարգացման բավականին բարձր ներուժ: Շատ երկրների համար արդյունաբերության վենչուրային ֆինանսավորման զարգացումը դարձել է այդ երկրների տնտեսությունների զարգացման խթան:

АНАЛИЗ СТАРТАП-ЭКОСИСТЕМЫ И ПУТИ РАЗВИТИЯ В РА (2021г.)

Мноян Э. А.

По мере увеличения количества стартапов в мире и их развития возрастает актуальность и роль венчурного финансирования. Задачей венчурных капиталистов является направление инвестиций в те стартапы, которым крайне тяжело получить финансирование из-за неопределенности данного стартапа и высоких рисков. Капиталисты выступают в роли посредника между предприятиями и инвесторами, что помогает минимизировать асимметрию информации. В последние годы Армения считается страной с высоким потенциалом для развития стартапов, имея ввиду, что, несмотря на небольшое население страны, существует уже 2 стартапа-единорога армянского происхождения. В настоящее время количество венчурных фондов в Армении увеличивается, но они сталкиваются со многими препятствиями, связанными как с рыночными отношениями, так и с пробелами в законодательстве. В данной статье

будут рассмотрены пути финансирования стартапов, а также текущая ситуация в Армении.

Ключевые слова: венчурное финансирование, инвестиции, стартап, венчурный фонд.

STARTUP ECOSYSTEM ANALYSIS AND DEVELOPMENT PATHS IN RA (2021)

Мноян Е. А.

The relevance and role of venture financing increases conditioned by the number of startups in the world. The task of venture capitalists is to direct investments in those startups that are extremely difficult to get funding due to the uncertainty of this startup and high risks. Capitalists act as an intermediary between businesses and investors, which helps to minimize information asymmetries. In recent years, Armenia has been considered a country with a high potential for the development of start-ups, meaning that despite the small population of the country, there are already 2 start-up unicorns of Armenian origin. Currently, the number of venture capital funds in Armenia is increasing, but they face many obstacles related to both market relations and gaps in legislation. This article will examine the ways of startup financing, as well as the current situation in Armenia.

Keywords: venture financing, investments, startup, venture fund.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Konrad Alex, Forbs, The World's Best Venture Capital Investors In 2022, 2022.
<https://www.forbes.com/midas/>
2. *CB Insights*, State Of Venture 2021 Report, January 12, 2022,
<https://www.cbinsights.com/research/report/venture-trends-2021/>
3. Грох А., Лихтенштейн Г., Лизер К. и Бизингер М., *Бизнес-школа IESE*, Индекс привлекательности страны для венчурного и частного капитала 2021
<https://blog.iese.edu/vcpeindex/ranking/>
4. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,
<https://hightech.gov.am/wp-content/uploads/2022/12/list.pdf>

5. Аршакян А., В. Армении будет создан Национальный венчурный фонд, 2019 г.
<https://rb.gy/wylbxa>

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մնոյան Է. Ա. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ՀՌՀ, Տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտ, Բիզնես-ինժեներինգ
Էլ. փոստ՝ mnoyanelen@gmail.com

Գիտական ղեկավար՝ Սահակյան Դ., ֆիզմաթ գիտ. թեկն.

Ստացվել է՝ 28.10.2022
Գրախոսվել է՝ 01.02.2023

ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ В СТРАНАХ БЛИЖНЕГО ВОСТОКА

Мнацаканян В. Р.

В XXI веке, в условиях постоянных шоков, периодичность которых стремительно растет (при этом природа этих шоков становится все более разнообразной (от здравоохранительных до экологических), основной целью любого государства должно стать нахождение факторов долгосрочного стабильного экономического развития и поднятия уровня эффективности реагирования государственной политики на возникающие шоки. В этом контексте данное исследование посвящено изучению экономического состояния стран Ближнего Востока, анализируя возможности и перспективы качественной трансформации последних.

Ключевые слова: экономическая трансформация, ВВП, Саудовская Аравия, Турция, Египет, Иран, Ирак, население.

Введение. Исследование состоит из выявления общих тенденций и траектории трансформирования региона, который богат энергоемкими природными ресурсами и находится на пересечении торговых путей Азии и Европы. Также выбраны страны-катализаторы трансформации (Саудовская Аравия и Турция), страна, трансформирующая собственную экономику под воздействием санкций (Иран); одна из стран арабского мира, в которой не доминирует религиозный фактор и которая является одной из развитых стран Африки (Египет), и страна, которую потрясла война, авторитарный режим и присутствие террористических единиц, а также иностранных вооруженных сил, и которая в наши дни смогла преодолеть упомянутые отрицательные факторы и начинает трансформацию своей экономики (Ирак). Трансформация экономик региона не только связана с изменением экономической структуры, но также с преодолением последствий изменения климата.

Анализ общих показателей. Одним из основных показателей экономического состояния страны является уровень валового внутреннего продукта. Исходя из этого, в первую очередь необходимо изучить именно уровни ВВП в странах региона Ближнего Востока. На графике ниже представлены показатели уровня ВВП стран Ближнего Востока (График 1):

как можно заметить, графики всех стран имеют схожие тренды, что говорит о взаимосвязанности экономик региона, что, в свою очередь, приводит к синхронному реагированию при возникновении каких-либо экономических шоков. При этом также важно отметить, что в случае отдельных стран локальные шоки становились первоочередными по отношению к фоновой ситуации в регионе. Так, можно заметить, что в 1990 году Ирак был по объемам ВВП первой страной региона, однако уже в следующем году из-за геополитических процессов был зарегистрирован огромный спад, что сделал Ирак одним из беднейших стран региона. В течение последующих 30 лет последнему удалось вернуться на уровень 1990 года [2]. Также возникают ситуации, когда общие региональные процессы усиливаются в отдельных странах из-за специфических условий: в случае Ливана спад, обусловленный коронавирусной пандемией, произошел во всех странах мира в целом и в регионе Ближнего Востока в частности, усилился из-за трагедии со взрывом в порту города Бейрут.




График 1. Уровень ВВП стран Ближнего Востока, 1960-2020 гг.

Источник: Составлено автором на основе данных Базы данных Всемирного банка, URL: <https://data.worldbank.org/>

В целом страны региона по доле в совокупном ВВП можно разделить на три группы: в первую группу входят Турция и Саудовская Аравия, которые вместе производят более 40% общего ВВП региона. Турция продолжает оставаться лидером региона, однако с 2013 года

регистрируется устойчивый спад в объемах ВВП, что привело к тому, что в 2019 году Саудовская Аравия даже обошла Турцию. Во вторую группу входят Израиль, Египет и Объединенные Арабские Эмираты. Доля этих стран в общем ВВП почти одинакова и в два раза уступает странам первой группы. В целом эти 5 стран производят почти 75 процентов всего ВВП региона. Остальные 25 процентов распределены между странами третьей группы. Важно отметить, что по уровню диверсификации, основным направлениям и уровню инновационности экономик все страны, даже внутри выделенных групп, имеют глубокие различия.

Необходимо также рассмотреть исследуемые страны с точки зрения численности населения (График 2): в этом контексте также явно выделяются три группы стран. В первую группу, с населением свыше восьмидесяти миллионов человек, входят Египет, Турция и Иран. Во вторую группу стран, с количеством населения от двадцати пяти до сорока миллионов человек, входят Ирак, Саудовская Аравия и Йемен. Все остальные страны находятся в третьей группе. Важно отметить, что с 1960 года, хотя и происходили изменения в колебаниях и темпах роста и падения количеств населения стран региона Ближнего Востока, однако кардинальных изменений в общей картине не произошло: страны, имевшие более значительные стартовые показатели, остаются лидерами по данному критерию.




График 2. Численность населения стран Ближнего Востока 1960-2020 гг.

Источник: Составлено автором на основе данных Базы данных Всемирного банка, URL: <https://data.worldbank.org/>

Важно подчеркнуть, что сравнение уровней и распределения ВВП и по-численности населения дают возможность сделать вывод, что во

многих случаях существует ситуация низкой эффективности человеческого капитала, так как многие страны с большим количеством населения не являются лидерами среди тех же стран региона по показателю ВВП, а такие страны, как Израиль со средним показателем населения, лидируют по объемам производства, что свидетельствует о наличии высококвалифицированного человеческого ресурса.

Пути трансформации основных стран Ближнего Востока. Для понимания трансформации региона стоит рассмотреть государственную политику диверсификации экономик и прогнозы международных организаций передовых стран, определяющих мейнстрим – Саудовская Аравия, Иран, Турция, Египет и Ирак.

Саудовская Аравия

В экономике Саудовской Аравии доминирует нефть, и долгосрочный план диверсификации (Vision 2030), реализация которого началась в 2016 году, способствует структурным реформам, направленным на сильный, устойчивый, инклюзивный, более экологический рост, основанный на предоставлении услуг. В соответствии с «Vision 2030» доля частного сектора составит 65% ВВП к 2030 году по сравнению с 40% в настоящее время, а также рынок малых и средних предприятий, которые будут производить 35% объема производства по сравнению с сегодняшними 20% [5]. На мероприятии 2018 года были заключены сделки на сумму 50 миллиардов долларов, при этом Государственный инвестиционный фонд – суверенный фонд благосостояния королевства с 300 миллиардов долларов – инвестировал более 1 миллиарда долларов в стартапы Кремниевой долины. Годом ранее MbS обнародовал планы по строительству Neom, цифрового мегаполиса стоимостью в 500 миллиардов долларов на побережье Красного моря, который будет укомплектован роботами и будет питаться от возобновляемых источников энергии. Фискальный баланс (% от ВВП) на 2022 и 2023 годы будет уменьшаться до -2,2 и -1,7, соответственно, по сравнению с показателем 2018 года (-5,9%) отмечается положительная динамика [6]. Также, принимая во внимание повышение цен на нефть, а также попытки отказа от российской нефти и газа странами ЕС, динамика может быть гораздо более положительной. Рост реального ВВП в постоянных ценах по факторам производства по линии сельского хозяйства остается постоянным на 2022 и 2023 годы на уровне 0,2%, индустрия после отрицательного показателя в 5,3% в 2020 году

показывает рост в 5,4% в 2022 году и значительное замедление в 2023 году в 1,6%, в сфере же услуг наблюдается восстановление после пандемии и показателя роста в -2,5% в 2020 году, 4,4% и 3,2% соответственно в 2022 и 2023 годах [7].

Иран

Для Ирана, находящегося под санкциями со стороны Запада, а также напряженными отношениями с арабскими странами, развитие и трансформация экономики происходит под воздействием внутренних ресурсов, а также за последнее время уже происходит углубление экономических отношений с Китаем. Перебои в торговле с непосредственными соседями, такими, как Афганистан, после краха правительства, также могут подорвать экспорт и еще больше ограничить доступность столь необходимой иностранной валюты. Кроме того, растущие климатические проблемы, приводящие к нехватке воды и энергии, а также высокая инфляция могут еще больше усилить давление на наиболее уязвимые слои населения и усугубить социальные недовольства. Побочные риски включают возможность ослабления санкций, что может существенно повысить экономическую активность, особенно с учетом того, что в течение нескольких лет она работала ниже потенциальной мощности. Важно отметить, что при отсутствии восстановления доходов Ирана от продажи нефти в среднесрочной перспективе новое правительство столкнется с большим бюджетным дефицитом. Ожидается, что ограниченный рост доходов, не связанных с нефтью, из-за медленного восстановления, неопределенных перспектив увеличения доходов от нефти и более высоких расходов на заработную плату и пенсии будут поддерживать дефицит бюджета. Ожидается, что правительство продолжит выпуск облигаций и продажу государственных активов для финансирования дефицита. Более краткосрочные выпуски увеличат риски пролонгации, а монетизация усилит инфляционное давление. Валовой государственный долг тем самым увеличится с 38,5% (соотношение от ВВП) в 2018/19 году до 53,2% в 2022/2023 году и 52,6% в 2023/2024 году, на этом фоне бюджетный дефицит увеличится на 5,1% (% от ВВП) с -1,7 в 2018 году до -6,8 в 2023/24 году. Рост реального ВВП в постоянных ценах по факторам производства будет значительно замедлен по линии промышленности: с 11% – в 2018 году, до 3,5% и 3,4% соответственно в 2022 и 2023 годах. Также положительные изменения наблюдаются в частном и государственном потреблении, валовых

инвестициях в основной капитал, а также экспорте, импорте товаров и услугах.

Египет

Реализацию трансформации по достаточно схожей саудовской политике осуществляет Египет. Проект «Золотой треугольник», (в районе между Кеной, Сафагой и Кусейром) имеет решающее значение для восстановления экономики страны. Проект направлен на создание нового промышленного города путем создания глобальной горнодобывающей, коммерческой, сельскохозяйственной, туристической, промышленной зоны и зоны базовой инфраструктуры. Этот район является самым богатым в Египте полезными ископаемыми, такими, как железо, медь, золото, серебро, гранит и фосфаты, и может похвастаться 75% минеральных ресурсов страны. Это даст возможность использовать фосфаты для производства удобрений, сырье для производства цемента из сланца и известняка, золотую руду и производство бензина из горючего сланца. Проект будет реализован в течение пяти лет. В 2019 году египетский порт Дамиетта подписал меморандум о взаимопонимании с двумя европейскими компаниями – Eurogate и Contship Italia – для разработки крупнейшей логистической системы на Ближнем Востоке. Объем проекта включает контейнерный терминал, железнодорожную ветвь, сухой порт и зону распределения грузов. Общий объем инвестиций составляет около 825 миллионов долларов США для первой фазы. Ожидается, что проект будет завершен к 2022 году, что сделает порт Дамиетта важным связующим звеном для региона Восточного Средиземноморья, откроет иностранные рынки с помощью прямого судоходства и привлечет иностранные инвестиции. Производственный сектор находится в авангарде основных планов правительства Египта по экономическому росту. Недавно расширенный Суэцкий канал и его близость к азиатским, африканским и европейским рынкам, а также ряд соглашений о свободной торговле и особых экономических зонах являются ключевыми элементами, которые делают Египет сильным местом для производства. Промышленность переживает период роста, руководствуясь Стратегией устойчивого развития: Видение Египта до 2030 года и Стратегией развития промышленности и торговли на 2016–2020 годы. Обе инициативы поставили перед производственным сектором амбициозные цели, включая увеличение доли ВВП до 18%, увеличение темпов роста производства до 10% и увеличение экспорта

высокотехнологичной продукции в процентах от египетского промышленного экспорта до 6% к 2030 году. Валовые капитальные инвестиции в росте реального ВВП после падения до 20,9% в 2020 году, до поднятия в 2,5% и 10% соответственно в 2022 и 2023 годах. Также произойдет увеличение экспорта в 9% и 10% в 2022 и 2023 годах, хотя данный показатель в 2018 был 31,6 %. Чистые иностранные инвестиции будут держаться на достаточно стабильном уровне (в % соотношении от ВВП), так, в 2022 году – 1,7% и 2023 году – 1,9%.

Ирак

Перспективы экономики Ирака улучшились с восстановлением мировых рынков нефти, но распространение новых вариантов COVID-19 и проблемы изменения климата являются серьезными препятствиями. Прогнозируется постепенное восстановление экономики на фоне роста цен на нефть и квот на добычу ОПЕК+, которые планируется поэтапно отменить в 2022 году. Доходы от продажи нефти будут основным драйвером роста в среднесрочной перспективе. Прогнозируется, что нефтяной ВВП восстановится, но останется ниже 3% в среднем в 2021–2023 годах из-за воздействия нового варианта COVID-19 Delta, а также нехватки воды и электроэнергии, которая влияет на сельское хозяйство и промышленность [3]. В соответствии с этим сценарием прогнозируется, что в среднесрочной перспективе сальдо бюджета останется с профицитом, что приведет к неуклонному улучшению отношения долга к ВВП. Всплеск бедности постепенно прекратится с восстановлением экономики и массовой вакцинацией. Однако непропорциональное воздействие COVID-19 на бедные и уязвимые группы населения до пандемии и вытекающее из этого неравенство будут ощущаться еще долго. Расходящиеся тенденции между группами и регионами, которые совпадают с существующими этническими и религиозными делениями Ирака, делают ситуацию более опасной и требуют надлежащего планирования на этапе восстановления, в том числе при реализации справедливой программы вакцинации. Экономические перспективы Ирака омрачены значительными негативными рисками, которые требуют ускоренного проведения структурных реформ. К ним относятся: потенциальное снижение цены на нефть, обострение кризиса COVID-19 из-за распространения новых мутаций, ухудшение условий безопасности, усиление шоков, изменения климата и дополнительная макроэкономическая волатильность. Предотвращение или смягчение

последствий негативных рисков зависит от политики будущего правительства и приверженности комплексным реформам. Прогресс в региональной экономической интеграции вместе с улучшением условий безопасности может придать новый импульс росту и диверсификации. Положительная динамика наблюдается в доле государственного долга, который с отметки в 64,5% от ВВП снизится до 47,4% и 42,5% в 2022 и 2023 годах. Бюджетный профицит же даже в 2023 году не достигнет отметки 2018 года, 11% и 3,2% соответственно.

Турция

Ведущей по экономике в регионе является Турция, с ее диверсифицированной экономикой и важным географическим положением. В трансформационном плане осуществляется еще большая диверсифицированность отраслей. Ожидается, что турецкий экспорт перевозимых грузов, промышленного оборудования и транспортного оборудования в ближайшие годы будет оставаться на переднем плане. Вклад экспорта промышленного оборудования и транспортного оборудования в общий рост экспорта увеличится до 33% в период с 2021 по 2030 годы и будет продолжать доминировать во внешней торговле. С другой стороны, по оценкам, с увеличением добычи полезных ископаемых экспорт минеральных продуктов заменит текстиль и древесину и станет четвертым по величине сектором в общем росте экспорта. Это изменение в экспорте Турции произойдет вместе с увеличением экспорта промышленных минеральных продуктов в крупные развивающиеся страны Азии. Европа в период до 2030 года будет основным маршрутом экспорта в Турцию и, как ожидается, будет продолжать приносить доход в размере более половины экспорта. Ожидается, что Ближний Восток и Северная Африка в период с 2021 по 2030 годы останутся вторым по важности регионом экспорта, на который приходится около 20% общих доходов Турции от экспорта товаров. Таким образом, ожидается, что в 2030 году экспорт Турции в страны с наибольшей долей будет приходиться соответственно на Германию, Великобританию, Объединенные Арабские Эмираты, США и Францию.

В 2030 году Турция превысит 10 ГВт солнечной энергии. В настоящее время в Турции установлена энергетическая мощность около 75 ГВт. По оценкам, в 2030 году она составит примерно 150 ГВт. Цель состоит в том, чтобы обеспечить 10 ГВт из них за счет солнечной и 20 ГВт за счет энергии ветра. В 2030 году 50 или 60 процентов энергии в Турции

можно будет получать из возобновляемых источников энергии. В автомобилестроении необходимо адаптироваться к различным разработкам. В настоящее время Турция осуществляет 77% своего экспорта в страны ЕС. За последние несколько лет производственная мощность достигла 2 миллионов единиц. Компания стала крупнейшим производителем легких коммерческих автомобилей в Европе. 14-й в мире и 5-й в Европе производитель автомобилей. Этот потенциал следует сохранить и адаптировать к новым разработкам. В 2030 году 30 процентов автомобилей будут беспилотными. Автомобильные информационные и развлекательные системы, инвестиции в программное обеспечение, считывание больших объемов данных и квалифицированная рабочая сила оператора роботов будут увеличивать значимость. Автомобильная промышленность, лидер экспорта за последние 12 лет – должна стать частью этой трансформации.

Заключение. Учитывая сложную политическую нестабильность, как внутреннюю, так и внешнюю, странам региона удастся осуществлять политику, направленную на трансформацию экономик. В частности, для стран, богатых углеводородом, бюджет которых основывается на доходах данной отрасли, присуще диверсифицирование отраслей экономики, а также инвестиции в разработку технологий альтернативной электроэнергии, сельского хозяйства и становление нового туристического пункта назначения. Турции, у которой достаточно диверсифицированная экономика, предстоит возможность внедрения новых технологий в военную промышленность и обеспечение энергетической безопасности. у Ирана есть возможность развития технологий и экономики посредством взаимодействия с Китаем и ЕАЭС. Стоит отметить, что конечной целью трансформации экономик ведущих стран региона является создание более конкурентоспособных рынков, логистических путей и установление гегемонии над регионом в качестве доминанты. Но не только невозможность увеличения доли экономики по отношению к остальным странам делает проблематичным достижение данной цели, но и достаточно резкие религиозные и политические взгляды. Также в странах Аравийского полуострова, где действует экономическое объединение, происходит трансформация налогового законодательства, принцип торговли и ведение общей монетарной политики, что показывает возможность создания единого экономического аппарата для одной из частей Ближнего Востока.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ
Մնացականյան Վ. Ռ.**

21-րդ դարում՝ մշտական ցնցումների համատեքստում, որոնց հաճախականությունը շարունակաբար մեծանում է (մինչ այդ ցնցումների բնույթը դառնում է ավելի բազմազան՝ առողջապահականից մինչև բնապահպանական), ցանկացած պետության հիմնական նպատակը պետք է լինի երկարաժամկետ կայուն տնտեսական զարգացման և պետության արձագանքման արդյունավետության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ գործոններ գտնելը: Այս համատեքստում այս ուսումնասիրությունը նվիրված է Մերձավոր Արևելքի երկրների տնտեսական վիճակի վերլուծությանը՝ հետազոտելու վերջիններիս տրանսֆորմացման որակական հնարավորություններն ու հեռանկարները:

Բանալի բառեր. տնտեսական տրանսֆորմացում, ՀՆԱ, Սաուդյան Արաբիա, Թուրքիա, Եգիպտոս, Իրան, Իրաք, բնակչություն:

**PROBLEMS AND PROSPECTS OF ECONOMIC TRANSFORMATION IN
THE COUNTRIES OF THE MIDDLE EAST
Mnatsakanyan V. R.**

In the 21st century, in the context of constant shocks, the frequency of which is rapidly accelerating (while the nature of these shocks is becoming more diverse (from health to environmental), the main goal of any state should be to find factors for long-term stable economic development and raise the level of efficiency of the response of the state. In this context, the paper deals with the study of the economic state of the countries of the Middle East, analyzing the possibilities and prospects for a qualitative transformation of the latter.

Keywords: economic transformation, GDP, Saudi Arabia, Turkey, Egypt, Iran, Iraq, population.

ЛИТЕРАТУРА

1. База данных Всемирного банка, URL: <https://data.worldbank.org/>
2. Macro Poverty Outlook: Country-by-country Analysis and Projections for the Developing World, Middle East and North Africa, 2021, URL:

<https://thedocs.worldbank.org/en/doc/65cf93926fdb3ea23b72f277fc249a72-0500042021/related/mpo-mena.pdf>

3. Regional Economic Outlook: Trade-Offs Today for Transformation Tomorrow, Middle East and Central Asia, April, 2021, URL: <https://www.imf.org/en/Publications/REO/MECA/Issues/2021/04/11/regional-economic-outlook-middle-east-central-asia>
4. The GCC in 2020: The Gulf and its People, The Economist Intelligence Unit, URL: <http://graphics.eiu.com/upload/eb/gulf2020part2.pdf>
5. Vision-2030: The National Transformation Program, URL: <https://www.vision2030.gov.sa/v2030/vrps/ntp>
6. Vision-2030: National Industrial Development and Logistics Program Delivery Plan 2021-2025, URL: <https://www.vision2030.gov.sa/v2030/overview/>
7. Asharf Mishrif - Introduction to Economic Diversification in the GCC Region, URL: https://www.researchgate.net/publication/322130167_Introduction_to_Economic_Diversification_in_the_GCC_Region

Сведения об авторе и научном руководителе

Мнацакян В. Р. - магистратура 2-ой курс

РАУ, Институт Экономики и бизнеса, Государственное регулирование экономики

Эл. почта: mnatsakyanvilen@gmail.com

Научный руководитель: Айрапетян В., канд. экон. наук

Поступила 24.10.2022

Прошла рецензию 20.01.2023

**2022 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ՝ ԵԼՆԵԼՈՎ
ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻՑ
Գրիգորյան Ա. Հ.**

Հոդվածի շրջանակներում ուսունմնասիրվել է ՀՀ-ի աշխատուժի շուկայում եղած փոփոխությունները վերջին տարվա ընթացքում, դիտարկվել են ՀՀ-ից միգրացիայի հիմնական պատճառները, ներկայացված են աշխատուժի միգրացիան Հայաստանում, միգրացիայի հիմնական ուղղությունները, ՀՀ-ում աշխատուժի ներգաղթը՝ պայմանավորված Ուկրաինայի պատերազմով և ՌԴ-ի դեմ կիրառվող պատժամիջոցներով, ԵԱՏՄ երկրների, այդ թվում՝ ՀՀ մասնակցությունը աշխատուժի միգրացիային:


Բանալի բառեր. ուղեղների արտահոսք, միգրացիա, դոնոր, ռեցիպիենտ, գործազրկություն:

Աշխատուժի միգրացիան ավելի ցածր սահմանային արտադրողականություն ունեցող երկրներից դեպի զարգացած երկրներ աշխատուժի շարժն է՝ պայմանավորված զարգացած երկրներում ավելի բարենպաստ պայմանների առկայությամբ [1, էջ 14]: Աշխատուժի միգրացիան ունի մեծ ազդեցություն երկրների տնտեսությունների վրա: Ընդ որում, կախված երկրի աշխատուժի դոնոր կամ ռեցեպիենտ լինելուց, այդ ազդեցությունը կարող է լինել դրական կամ բացասական:

Դոնոր երկրները այն երկրներն են, որոնցից տեղի է ունենում աշխատուժի միգրացիա դեպի այլ երկրներ:

Ռեցեպիենտ են համարվում այն երկրները, ուր գնում են մարդիկ աշխատանքի նպատակով:

Ներկայումս աշխարհում ապրում են 281 միլիոն միգրանտ, այս ցուցանիշը կազմում է աշխարհի բնակչության 3.6%-ը, ընդ որում՝ միգրանտների թվով առաջինը ԱՄՆ-ն է, երկրորդը՝ Գերմանիան և երրորդը՝ Սաուդյան Արաբիան, իսկ միգրացիան տեղի է ունենում հիմնականում Հնդկաստանից, Մեքսիկայից, Ռուսաստանից: Ստորև՝ զծապատկեր 1.1և 1.2-ում, ներկայացված են աշխատուժի միջազգային միգրացիայի հիմնական ուղղությունները:




Գծապատկեր 1.1. Թոփ 20 երկրները՝ տված միգրանտների քանակով [2, էջ 13] (մլն.):

Գծապատկեր 1.1-ից կարող ենք տեսնել, որ ամենամեծ քանակությամբ միգրանտներ տալիս են Հնկաստանը, Մեքսիկան, Ռուսաստանը և Չինաստանը. դա պայմանավորված է նաև այդ երկրների մեծ բնակչությամբ, իսկ տոկոսային հարաբերակցությամբ, օրինակ՝ Աֆղանստանից, միգրանտների արտահոսքը ավելի մեծ է:

Գծապատկեր 1.2-ից կարող ենք տեսնել, որ ամենամեծ քանակությամբ միգրանտներ ընդունում են Ամերիկան, Գերմանիան, Սաուդյան Արաբիան և Ռուսաստանը: Կարելի է նկատել, որ Ռուսաստանը թոփ հնգյակի մեջ է գտնվում և՛ միգրանտներ տրամադրող, և՛ ընդունողների մեջ, բայց միգրանտ ավելի շատ ընդունում է, քան տալիս: ԱՄՆ-ն ընդունում է ամենամեծ քանակությամբ միգրանտներ, ինչը պայմանավորված է ԱՄՆ-ի տնտեսական զարգացածության բարձր աստիճանով:

Աշխատուժի միջազգային միգրացիայի ուղղություններն անընդհատ փոփոխվում են՝ կախված երկրների միգրացիոն քաղաքականություններից և աշխարհի տնտեսական ընթացակարգից:



Գծապատկեր 1.2. Թոփ 20 երկրները ընդունած միգրանտների քանակությամբ [2, էջ 6] (մլն.):

Աշխատանքային միգրանտները բաժանվում են հետևյալ խմբերի.

- Վերաբնակիչներ:** Սա մարդկանց այն խումբն է, որոնք տեղափոխվել են այլ երկիր մշտական բնակության համար, հիմնականում տեղափոխվում են զարգացած երկրներ, օգտվում են տարբեր տեղափոխման միջոցներից, օրինակ՝ ընտանիքի հետ վերամիավորման ծրագրից:
- Պայմանագրային աշխատողներ:** Այս խմբին են պատկանում ցածր որակավորում ունեցող աշխատողները, սեզոնային աշխատողները, որոնց տրվում է ժամանակավոր բնակվելու և աշխատելու իրավունք:
- Պրոֆեսիոնալ աշխատողներ:** Սրանք հիմնականում բարձր որակավորում ունեցող և մեծ պահանջարկ վայելող փորձագետներն են, ովքեր կարող են իրենց վարպետության հիմքի վրա հաստատել նաև մշտական բնակություն, կարող են լինել միջազգային կորպորացիաների մասնագետները, ովքեր տեղափոխվում են մի մասնաճյուղից մյուս մասնաճյուղ, գիտական աշխատողներ, ովքեր ճամփորդում են մասնագիտական գիտաժողովներին կամ այլ կրթական միջոցառումներին մասնակցելու նպատակով:

4. **Այաստարան փնտրող մարդիկ (փախստականներ):** Այս խմբին են պատկանում այն մարդիկ, ովքեր իրենց երկիրը լքել են վտանգի պատճառով, օրինակ՝ պատերազմ, քաղաքական, կրոնական կամ այլ դրդապատճառներով հետապնդվող մարդիկ: Նրանք ստանում են փախստականի կարգավիճակ և հիմնականում հաստատում են մշտական բնակություն:
5. **Ապօրինի միգրանտներ:** Օտարերկրյա քաղաքացիներ, ովքեր մուտք են գործել երկիր առանց փաստաթղթերի, անձր հաստատող փաստաթղթի կամ կեղծ փաստաթղթերով, նաև այն անձինք, ովքեր սահմանը հատել են անօրինական ճանապարհներով:

Աշխատուժի միջազգային միգրացիայի ուղղությունները: Չարգացող երկրներից զարգացած երկրներ աշխատուժի միգրացիա, զարգացող երկրների միջև աշխատուժի միգրացիա, զարգացած երկրների միջև աշխատուժի միգրացիա:


ՀՀ միգրացիայի պատճառները: Հայաստանում, անկախության տարիներից սկսած, նկատվում են միգրացիոն հոսքեր և բնակչության նվազում, որոնք բերում են տնտեսական լուրջ հետևանքների: Կարելի է պնդել, որ ՀՀ միգրացիան պայմանավորված է երկրի տնտեսական վիճակի շարունակական վատթարացումով: Քննարկենք երկրից արտագաղթի հիմնական պատճառները:

Հայաստանից միգրացիան պայմանավորված է մի շարք տնտեսական իրադրություններով, որոնցից են երկրի տնտեսական վիճակը, գործազրկության բարձր մակարդակը, առկա աշխատատեղերի ոչ բավարար վարձատրությունը՝ երկրում նորմալ կենսագործունեություն ծավալելու համար, երկրում պատերազմի վտանգի առկայությունը, սոցիալական ապահովվածության ցածր մակարդակը, տարածաշրջանում և արտագաղթի համար հասանելի երկրների գրավիչ պայմանները:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունից բնակչության չղադարող արտագաղթը բացասական է անդրադառնում երկրի տնտեսության վրա՝ բերելով այդ պահին երկրում ապրողների մոտ արտագաղթելու ցանկություն: Ստորև՝ գծապատկեր 2-ում, ներկայացված է ՀՀ սահմանային մուտքերի և ելքերի հաշվեկշռի փոփոխությունների գրաֆիկը 1992-2020թթ.-ին:

Գծապատկեր 2-ին նայելով՝ հասկանում ենք, որ ՀՀ-ում անկախության տարիներից ունեցել ենք մուտքերի և ելքերի մշտական բացասական հաշվեկշիռ, բացառությամբ 2004-2006թթ.-ին և

2018-2020թթ.-ին: Կարելի է հետևություններ անել, որ սա վերջին տարիներին ՀՀ տնտեսության վրա դրական ազդեցություն է ունեցել և կունենա, եթե այս տեմպերը շարունակվեն:



Գծապատկեր 2. ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի և ելքերի հաշվեկշիռը 1992-2020թթ.-ին [7]:

ՀՀ-ում աշխատուժի ներգաղթը՝ պայմանավորված Ուկրաինայի պատերազմով և ՌԴ-ի դեմ կիրառվող տնտեսական սահմանափակումներով, օգուտներ և վնասներ են բերում ՀՀ տնտեսության համար:

Պայմանավորված Ուկրաինայի պատերազմով և Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներով՝ ՌԴ-ից Հայաստան տեղի ունեցավ աշխատուժի արտահոսք՝ չնայած այն բանին, որ միջոտ Հայաստանն է եղել աշխատուժի դոնոր երկիր ՌԴ-ի համար և չի դադարում այդպիսին մնալ:

Ըստ հետազոտությունների՝ Հայաստան ժամանած ՌԴ քաղաքացիների մեծ մասը եկել է այն բանի պատճառով, որ իր երկրում պատժամիջոցների հետևանքով չի կարող կատարել իր աշխատանքը, օրինակ, IT ոլորտի աշխատող ընկերությունների համար ավելի ձեռնտու է իրենց գործունեությունը ծավալել: Հայաստանում, քան ՌԴ-ում, որտեղ պրոցեսորներ մատակարարելն արգելված է, և իրենց գործունեությունը այլևս չեն ծավալում խոշոր IT ընկերությունները (Microsoft, Apple, AMD, Intel), որոնց արտադրանքը խիստ կարևոր է ծրագրավորողների աշխատանքի համար:

Վերջին իրադարձությունների հետևանքով ՀՀ-ում աշխատանքային միգրանտների թվի աճի դրական կողմերն են՝ կապիտալի ներկրումը, երկրում միգրանտների կատարած ծախսերը, որոնք նպաստում են երկրի տնտեսության աճին, ՀՀ-ում նոր բիզնեսների բացվելը, հետևաբար նոր հարկային եկամուտների ստացում

պետության կողմից: ՀՀ-ում աշխատանքային միգրանտների հոսքի բացասական կողմերից է՝ որոշ աշխատատեղերի զբաղեցնումը այդ միգրանտների կողմից: Հետևաբար ՀՀ քաղաքացիների համար աշխատատեղերի նվազեցումը, ՀՀ-ում ապրանքների գների աճը, մասնավորապես անշարժ գույքի վարձակալության և ձեռքբերման գների աճը բացասաբար են անդրադառնում ՀՀ քաղաքացիների վրա:

ՌԴ-ում 2022 թվականի սեպտեմբերի 21-ի մասնավոր մոբիլիզացիայի հայտարարումից հետո Հայաստանում նկատվել է միգրանտների նոր հոսք, որը նույնպես կունենա իր տնտեսական հետևանքները ՀՀ տնտեսության վրա, բայց այլ կերպ, քանի որ տվյալ միգրանտները ոչ թե եկել են աշխատանքային նկատառումներով, այլ ՌԴ-ի մոբիլիզացիային չմասնակցելու և ՌԴ-ում սպասվող նոր պատժամիջոցների և տնտեսական վիճակի վատթարացման հետևանքներից խուսափելու նպատակով: Հետազոտությունները ցույց են տվել, որ այդ միգրանտների մի մասի համար Հայաստանը ծառայում է որպես տրանսֆեր երկիր, որի միջոցով նրանք կարող են տեղափոխվել այլ, այդ թվում՝ եվրոպական երկրներ: Վերջին տարվա ընթացքում ՀՀ դիտարկվում է որպես աշխատուժի և՛ դոնոր, և՛ ռեցիպիենտ երկիր: Այժմ դիտարկենք ՀՀ-ն որպես աշխատուժի դոնոր երկիր:

Հայաստանը իր անակախության տարիներից սկսած՝ եղել է աշխատուժի դոնոր երկիր: 2017թ. դրությամբ Հայաստանից (ըստ ՄԱԿ-ի) արտագաղթել է 951 հազար մարդ, որը կազմել է բնակչության մոտավորապես 32%-ը: Հայաստանից հիմնական արտագաղթի ուղղությունները Ռուսաստանը և ԱՄՆ-ն են: Հայաստանի հիմնական միգրանտների նպատակը արտագնա աշխատանքն է, որը ունի իր դրական և բացասական կողմերը: ՀՀ տնտեսության վրա դրական կողմերը միգրանտները ստացված դրամական տրանսֆերտներն են: Տնային տնտեսությունների համաշխարհային բանկի տվյալներով 2018թ.-ին Հայաստան դրամական փոխանցումների չափը կազմել է 1.87 մլրդ. ԱՄՆ դոլար, որը կազմում է ՀՆԱ-ի 15,5 տոկոսը: Այս գումարային հոսքերի 35%-ը բաժին է ընկնում միգրանտներ ունեցող տնային տնտեսություններին: Այդ փոխանցումները դրական են ազդում երկրի տնտեսության վրա, քանի որ հիմնականում ծախսվում են ՀՀ-ում միգրանտների ընտանիքների բարեկեցության վրա, հետևաբար նաև նպաստում են երկրում գործող բիզնեսների աճին:

ՀՀ աշխատուժի դոնոր հանդիսանալու բացասական կողմերը հանդիսանում են ուղեղների արտահոսքը, որն էլ պաճառ է

գիտատեխնիկական զարգացման տեմպերի նվազեցմանը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանից արտագնա աշխատանքի մեկնող անձինք հիմնականում 18-40 տարեկան, տնտեսապես ակտիվ, միջին կամ աղքատ ֆինանսական վիճակում գտնվող մարդիկ են:


ԵՄՏՄ երկրների, այդ թվում՝ ՀՀ մասնակցությունը աշխատուժի միգրացիային: ԵՄՏՄ երկրների միջև ձևավորված տնտեսական հարաբերությունները բերում են աշխատուժի միգրացիայի աճի: ԵՄՏՄ շրջանակներում աշխատուժի միգրացիայից բոլոր պետությունները ունեն իրենց նպատակները և հետաքրքրությունները, որոնք տարբերվում են միմյանցից: Քննարկենք դրանք առանձին:

Ռուսաստան:

Ռուսաստանը եղել և մնում է ոչ միայն ԵՄՏՄ երկրների, այլ նաև ԱՊՀ երկրներ աշխատուժի գլխավոր ռեցիպիենտ երկիրը, չնայած որ ԵՄՏՄ երկրների քաղաքացիների համար մյուս անդամ երկրներում նույնպես կան պարզեցված պայմաններ աշխատելու համար: Այս ամենը պայմանավորված է նաև նրանով, որ Ռուսաստանում ԱՊՀ երկրների բնակիչների համար ավելի հեշտ է հարմարվելը, քան եվրոպական երկրներում. դա պայմանավորված է հիմնականում լեզվի իմացությամբ և Ռուսաստանում այդ երկրների բնակիչների համայնքների առկայությամբ: ՌԴ տնտեսության մեջ մեծ դեր ունեն միգրանտները, քանի որ նրանք են հիմնականում զբաղվում ցածր որակավորում պահանջող աշխատանքներով, օրինակ՝ ամբողջ շինարարական սեկտորը, որի աշխատողների մեծ մասը միգրանտներ են: ԵՄՏՄ-ն մեծ հնարավորություններ է տալիս անդամ երկրների քաղաքացիներին մյուս անդամ երկրներում աշխատելու համար, որը դրական է ազդում թե՛ դոնոր, թե՛ ռեցեպիենտ երկրների համար: Գծապատկեր 3-ում ներկայացված է ՌԴ-ում ԵՄՏՄ երկրներից աշխատողների քանակը:

Գծապատկեր 3-ում կարող ենք տեսնել, որ ՌԴ ԵՄՏՄ երկրներից մեկնած աշխատողների մեծ մասը բաժին է ընկնում Բելառուսին, որը պայմանավորված է Բելառուսում գործազրկության բարձր մակարդակով, մասնավորապես՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների համար: Գծապատկերում ներկայացված պիկերը պայմանավորված են սեզոնային աշխատանքներ կատարող աշխատողների մուտք ու ելքից, գծապատկերից պարզ է դառնում, որ նման պիկերը ավելի արտահայտված են Բելառուսի և Հայաստանի դեպքում: Հայաստանի

դեպքում պիկերը նույնպես պայամանորված են սեզոնային աշխատողներով:



Գծապատկեր 3. ՌԴ-ում ԵԱՏՄ երկրների աշխատուժի քանակը [3, էջ 75]:

Հայաստան:

Հայաստանը ունի մոտ 200 հազար աշխատանքային միգրանտ ԵԱՏՄ տարածքում, իսկ ամբողջ աշխարհում՝ շուրջ 600 հազար:

Հայաստանը միշտ եղել է աշխատուժի դոնոր երկիր, եթե հաշվի չառնենք 2022 թվականի իրադարձությունները: Հայաստանից աշխատուժի միգրացիայի գլխավոր պատճառներն են զբաղվածության խնդիրը, որը երկար ժամանակ առկա է հայ իրականության մեջ, իսկ առկա աշխատատեղերից քչերն են լավ վարձատրվող, այդ պատճառով էլ քաղաքացիները մեկնում են արտագնա աշխատանքի, հիմնականում՝ շինարարական աշխատանքների, որոնք սեզոնային են, այդ պատճառով էլ ստաբիլ եկամուտ չեն տալիս, սակայն բնակչության մեծ արտահոսքը պայմանավորված է նաև ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ այլ երկրում հաստատվելով և քաղաքացիություն ձեռք բերելով և ընտանիքի մնացած անդամներին իր մոտ տեղափոխելով: ՀՀ տնտեսության վրա դրական է ազդում աշխատուժի միգրացիան՝ դրամական փոխանցումների շնորհիվ:

Բելառուս:

Բելառուսը նույնպես աշխատուժի դոնոր երկիր է: Ըստ հետազոտությունների՝ Բելառուսի աշխատանքային միգրանտների թիվը տատանվում է 600 հազարից մինչև 1 միլիոն, որոնցից 200-300 հազարը աշխատում է Ռուսաստանում: Այս երկրի միգրանտների մեծ մասը բարձր որակավորում ունեցող մասնագետներ են, որն էլ բացասական է անդրադառնում երկրի մտավոր ներուժի վրա, բայց նաև դրական է անդրադառնում, քանի որ երկրում գործազրկությունը նվազում է:

Ղազախստան:

Ղազախստանի օրենսդրական կարգերը թույլ են տալիս ներգրավել ոչ միայն ԵԱՏՄ երկրների քաղաքացիներին, այլ նաև տարածաշրջանի այլ երկրների քաղաքացիներին: Չնայած երկրում աշխատուժի պահանջարկին՝ նա 2017 թվականին սահմանել է քվոտաներ միգրանտների համար, այդ պատճառով 2017 թվականի դրությամբ երկրում եղել է 28,842 միգրանտ, իսկ 2022 թվականի ապրիլի դրությամբ՝ 16 278 միգրանտ: Ղազախստանը նաև զբաղվում է երկրից հեռացած քաղաքացիների հայրենադարձությամբ: 1991-2005 թվականներին Ղազախստան է հետ եկել 953,908 ղազախ: Կարևոր է նշել, որ 2022 թվականի իրադարձությունները, մասնավորապես Ուկրաինայի պատերազմի և ՌԴ-ի դեմ կիրառվող պատժամիջոցների հետևանքով Ղազախստանում նկատվել է միգրանտների հոսք, որը կունենա իր տնտեսական հետևանքները Ղազախստանի տնտեսության վրա:

Ղրղզստան:

Այս երկիրը իր տնտեսական զարգացման ցածր մակարդակի պատճառով հիմնականում հանդիսանում է աշխատուժի դոնոր երկիր: ԵԱՏՄ միանալուց հետո միգրանտների հոսքը մեծացավ դեպի Ռուսաստան և Ղազախստան: Այս երկրի համար շատ մեծ դեր են խաղում դրամական փոխանցումները: Բավական է նշել, որ Ռուսաստանից դրամական փոխանցումները կազմում է այս երկրի ՀՆԱ-ի 32.8%-ը: 2000-2010թթ.-ի ընթացքում, երբ հաստատվեց Ռուսաստանի և Ղրղզստանի միջև քաղաքացիություն ստանալու պարզեցված քաղաքականությունը, Ղրղզստանից տեղի ունեցավ բարձր որակավորում ունեցող քաղաքացիների մեծ արտահոսք, որը բացասական ազդեցություն ունեցավ Ղրղզստանի վրա մասնագետների պակասի պատճառով:

Ամփոփենք կատարված հետազոտությունները: Հայաստանը, լինելով մշտական աշխատուժի դոնոր երկիր, այդ իրականությունից ունեցել է իր շահերը և վնասները, սակայն արդի իրականության մեջ Հայաստանը աշխատուժի ռեցեպիենտ երկիր է հանդես գալիս, որը ևս ունի իր դրական և բացասական հետևանքները ՀՀ տնտեսության վրա: Կարելի է Հայաստանի այս վիճակը դիտարկել որպես յուրահատուկ դեպք, երբ պետությունը հանդիսանում է և՛ աշխատուժի դոնոր, և՛ ռեցեպիենտ երկիր:

Վերլուծություն: Վերոնիշյալ հետազոտություններից հետևում է, որ ՀՀ տնտեսությունը այս պահի դրությամբ և՛ աշխատուժի դոնոր, և՛ ռեցեպիենտ երկիր է, երկրի տնտեսության վրա մեծ ազդեցություն ունի աշխատուժի միգրացիան, Հայաստանի վրա մեծ դեր է ունեցել և ունի շարունակական միգրացիան, 2022 թվականում կատարված փոփոխությունները ՀՀ աշխատուժի միգրացիայում բերել է անշարժ գույքի շուկայում գնաճի, նոր բիզնեսների բացման կամ գործող բիզնեսների Հայաստան տեղափոխման շնորհիվ բյուջեում նոր եկամուտների, տուրիստական քաղաքներում նոր զբոսաշրջիկների հոսքերի և բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի համար մրցակցության բարձրացման, մասնավորապես IT ոլորտում: Հարկավոր է գիտակցել, որ աշխատուժի միգրացիան մեծ վնասներ կարող է բերել այդ պետությանը, հարկավոր է աշխատուժը պահել երկրում և օգտագործել երկրի տնտեսության բարելավման համար: Աշխատուժի միգրացիան կարող է բերել երկրում ուղեղների պակասի, աշխատուժի սղության, նաև մեծ չափերով ներդրումների կորստի, որոնք կատարվել են մասնագետներ ստանալու համար:

ВЛИЯНИЕ СОБЫТИЙ 2022 ГОДА НА ТРУДОВОЙ РЫНОК АРМЕНИИ НА ОСНОВЕ ТРУДОВОЙ МИГРАЦИИ

Григорян А. Г.

В рамках статьи были изучены изменения на рынке труда Армении за последний год, рассмотрены основные причины миграции из Армении, миграция рабочей силы в Армению, основные направления миграции, приток рабочей силы в Армения из-за войны против Украины и принятых санкций против РФ, участие стран ЕАЭС, в том числе РА, в трудовой миграции.

Ключевые слова: утечка мозгов, миграция, донор, реципиент, безработица.

THE IMPACT OF 2022 EVENTS ON THE LABOUR MARKET IN THE
REPUBLIC OF ARMENIA BASED ON THE ANALYSIS OF LABOUR
MIGRATION

Grigoryan A. H.

Within the framework of the article, changes in the labor market of Armenia over the past year were studied, the main reasons for migration from Armenia, the migration of labor to Armenia, the main directions of migration, the influx of labor into Armenia due to the war against Ukraine and the sanctions against the Russian Federation, the participation of countries EAEU, including RA, in labor migration.

Keywords: brain drain, migration, donor, recipient, unemployment.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առոյան Կ. Լ. «Բնակչության միգրացիայի կարգադրման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում»: 2015: Երևան:
2. ՄԱԿ-ի Գլոբալ միգրացիայի շտեմարան, «Միջազգային միգրանտների թիվը. 2017թ.-ի թարմացված տվյալներ»:
3. Eurasian economic union «Facts and figures», 2020, Moscow.
4. Ավագյան Մ. «Աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունները եվրասիական տնտեսական միությունում»: 2019: Երևան:
5. International organisation for migration «World migration report 2022». 2022. Geneva.
6. Batalova Jeanne «Top statistic on global migration and migrants». 2022. Washington.
7. <https://armstat.am/>
8. www.migrationdataportal.org
9. <https://gmdac.iom.int/data-and-resources>
10. <https://migration.am/news/292>
11. shorturl.at/hosW1

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Գրիգորյան Ա. Հ. – բակալավրիատ 1-ին կուրս

ՀՊՏՀ ԳՄ, Ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետ, Հաշվապահական հաշվառում և հարկում

Էլ. փոստ՝ Avaggrigoryan2004@gmail.com

Գիտական ղեկավար՝ Մարգարյան Ա., տնտեսագիտ. թեկն.

Ստացվել է՝ 25.11.2022

Գրախուսվել է՝ 06.02.2023

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ
ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ավագյան Ս. Ս., Հակոբյան Գ. Ա.**

Արդի աշխարհում կարևորվում է տարբեր երկրների տնտեսությունների փոխադարձ կախվածության աճը, որին անմասն չի մնում Հայաստանի Հանրապետության տնտեսությունը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ-ն փոքր և բաց տնտեսական համակարգ ունեցող երկիր է՝ նրա համար մեծ նշանակություն ունեն երկրի տնտեսության շարունակական աճը ապահովող արտաքին հարաբերությունները, դրանց ձևավորմանը նպաստող մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Հետևաբար արտաքին տնտեսական հարաբերություններում էական դեր ունի արտաքին առևտուրը:

Հոդվածում ներկայացվել են արտաքին առևտրի առանձնահատկությունները, ծավալները, կառուցվածքը և 2021-2022թթ. արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքների և երկրների:

Բանալի բառեր. արտաքին տնտեսական կապեր, արտաքին առևտուր, տնտեսական սերտաճում, ուղղակի ներդրումներ, արտաքին պարտք, արտահանում, ներմուծում:

Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից հատկապես մեծ ազդեցություն ունեն տնտեսական աճի արտաքին գործոնները: Տնտեսական աճի տեմպերը և արտաքին առևտրի ծավալները փոխկապակցված են [3]: Նկատենք, որ այս մոտեցմանը առաջինն անդրադարձել են մերկանտիլիստները: Նրանք սահմանեցին արտաքին առևտրի և տնտեսության զարգացման գիտական մեկնաբանությունը: Նրանք, ելնելով տվյալ ժամանակաշրջանի անհրաժեշտությունից, պնդում էին, որ տնտեսական աճի ապահովման համար լավագույն տարբերակը արտահանման խրախուսման և ներմուծման սահմանափակման միջոցով վարվող արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականությունն է [8]: Հետագայում դասական դպրոցի ներկայացուցիչները

հակադարձեցին մերկանտիլիստների գաղափարին՝ պնդելով, որ ազատ առևտուրը առավելագույնս կարող է նպաստել տնտեսության աճին [10]:

Ավելի ուշ մերկանտիլիզմի գաղափարախոսությունը ընդունեցին շատ տնտեսագետներ՝ ասելով, որ՝

- մերկանտիլիզմի գաղափարախոսությունը միանգամայն ընդունելի էր՝ որպես պետության ամրապնդման և հարևան պետությունների թուլացման միջոց, որը տվյալ ժամանակահատվածի հրամայականն էր [7],
- մերկանտիլիստները նախ և առաջ մտահոգված էին կապիտալի կուտակման հիմնախնդրով և արտահանման գերազանցումը ներմուծման նկատմամբ, որ ուղեկցվում է ոսկու ներհոսքով, մեծացում է փողի առաջարկը, ինչը կրճատում է տոկոսադրույքները և դրանով իսկ խթանում ներդրումները ու զբաղվածությունը [9]:

Այս հակամետ կարծիքների արդյունքում յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում՝ ինչպես իրականացնի արտաքին տնտեսական քաղաքականությունը [1]: Ստորև ներկայացվում է ՀՀ-ի արտաքին տնտեսական քաղաքականությանը բնորոշ առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված են ներկայիս տնտեսական վիճակը և զարգացման հեռանկարները:

ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականությունը պամանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով.

- Մինչև ՀՀ անկախացումը Հայաստանը արտաքին տնտեսական կապեր ուներ ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ: Այս տարիներին իրական արտահանումն ու ներմուծումը կատարում էր Խորհրդային Միությունը, որը նշանակում է, որ ՀՀ-ն ինքնուրույն արտաքին առևտուր և արժուրթային գործարքներ չէր իրականացրել:
- Քանզի ԽՍՀՄ-ի գոյության տարիներին Հայաստանը և ԽՍՀՄ կազմում եղած մյուս հանրապետությունները համագործակցելով էին թողարկում ռազմաարդյունաբերական արտադրանքներ և մատակարարում գլխամասային գործարաններ, որոնք կենտրոնացված էին ՌԴ տարածքում, ուստի ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՀՀ-ն չզարգացրեց ռազմաարդյունաբերական արտադրանքների թողարկումը՝ չկարողանալով ստանալ դրանց վերջնական արդյունքները:
- Հաշվի առնելով, որ Հայաստանը խորհրդային տարիներին արտադրանք չէր արտահանում այլ երկրներ, չունեի գիտատեխ-

նիկական ժամակակից պահանջներին համապատասխանող սարքավորումներ և տեխնոլոգիաներ՝ այն չէր առնչվում միջազգային մրցակցությանը, որի պատճառով պատրաստ չէր դիմակայելու դրան [2]:

Չնայած վերը նշված գործոններին՝ ներկայումս ՀՀ տարածաշրջանային տնտեսական ներգրավվածությունը պայմանավորված է աստիճանական զարգացման անհրաժեշտությամբ, որն իր հերթին պետք է լինի նաև կայուն: Նման զարգացումը ապագայում կապահովի Հայաստանի Հանրապետության մրցունակությունը համաշխարհային շուկայում:

Հայաստանը, ինչպես աշխարհի շատ այլ փոքր երկրներ, իր արտաքին տնտեսական կապերը չի կառուցում ուրիշ երկրներում տնտեսական և քաղաքական ազդեցություն ձեռք բերելու համար և գերադասում է ազատ տնտեսական հարաբերությունները: ՀՀ-ն արտաքին տնտեսական կապերում ունի առանձնահատուկ մոտեցումներ, որոնք բխում են երկրի տնտեսության պահանջներից:

Առաջին հերթին ՀՀ-ն ունի սև մետաղների և էներգակիրների ներմուծման կարիք, որը նշանակում է, որ այն պետք է համագործակցի այնպիսի երկրների հետ, որոնք արտադրում են պողպատի գլանվածք, նավթամթերքներ, գազ և քարածուխ: Թվարկվածների հիմնական մատակարարը համարվում է ՌԴ-ն:

Երկրորդ կարևոր կետը համարվում է տարածաշրջանային երկրների հետ տնտեսական սերտաճումը, որը ապահովում է տնտեսական աճ: Տարածաշրջանային համագործակցությունը հետապնդում է երկու նպատակ՝

1. երկրների շահերը ընդգրկող համատեղ ծրագրերի մշակում և իրագործում,
2. ազատ առևտրի, մաքսային միության և միասնական շուկայի ձևավորման համար տնտեսական սերտաճում:

Տնտեսական սերտաճման կարևոր ձևերից է արտասահմանյան երկրների ուղղակի ներդրումները ՀՀ-ում և այլ փոքր երկրներում, որոնք կապիտալի ներհոսքի խիստ կարիք ունեն: Վերջինիս իրականացման համար պահանջվում են հետևյալ պայմանները՝

- կապիտալի բարձր տոկոսադրույք,
- գործարարության իրավական կատարելագործված դաշտ,
- քաղաքական և տարածաշրջանային հակասությունների բացակայություն,

- մարդու իրավական պաշտպանվածություն:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները նշանակալի են այնքանով, որ նպաստում են տնտեսական աճի տեմպերի արագացմանը:

Ստորև ներկայացնում ենք 2020թ. հունվար-սեպտեմբեր և 2021թ. հունվար-սեպտեմբեր ժամանակաշրջանում ուղղակի ներդրումները:

Աղյուսակ 1.

Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2020 և 2021 թվականների հունվար-սեպտեմբեր ամիսներին [5]

	2020 թվական, հունվար-սեպտեմբեր	2021թվական, հունվար-սեպտեմբեր
	Ուղղակի ներդրումներ (մլն դրամ)	Ուղղակի ներդրումներ (մլն դրամ)
Գերմանիա	-1832.6	38 187.2
Բուլղարիա	6 405.0	13 682.1
Միացյալ Թագավորություն	-385.4	3 619.7
Կանադա	1 262.9	1 254.6
Միացյալ Նահանգներ	-1 164.5	1 890.7
Վրաստան	-202.9	-68.0
Իրանի Իսլամական Հանրապետություն	-	19.4
Արաբական Միացյալ Էմիրություններ	-23.3	-246.4
Չինաստան	-30.1	177.8
Ֆրանսիա	539.7	429.6
Ռուսաստանի Դաշնություն	-23 140.2	11 392.5


Հաջորդ հատկանիշը արտաքին մարդասիրական օգնության ցուցաբերումն է, օրինակ՝ 1988թ.-ին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժից հետո տրված մարդասիրական օգնությունը, 1920թ.-ին՝ Covid-19 համավարակի տարածման ժամանակաշրջանում ՀՀ-ին տրված օգնությունը:

Արտաքին տնտեսական կապեր են նաև համարվում ծառայությունների, զբոսաշրջության, Սփյուռքի հայ համայնքների հետ ունեցած կապերը, սակայն դրանք զգալիորեն չեն ազդում տնտեսական կայունության և զարգացման վրա:

Անդրադառնանք տնտեսական կապերի ամրապնդմանը նպաստող երևույթներից ամենամեծ ազդեցությունն ունեցողին՝ արտաքին առևտրին, որին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.


1. Արտաքին առևտուրը մշտապես ցուցաբերել է ընթացիկ հաշվի պակասուրդի միտումներ: 2021թ. արտաքին առևտրի շրջանառությունը կազմել է 881.5 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ արտահանումը՝ 298.6 մլն ԱՄՆ դոլար, ներմուծումը՝ 582.9 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ զուտ արտահանումը կազմել է -284.3 մլն ԱՄՆ դոլար:

Գծապատկերից ակնհայտ է, որ պետական պարտքը տարեցտարի աճում է:




Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը 2011-2021թթ., (մլրդ ԱՄՆ դոլար) [6]:

2. ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքում տեղի են ունենում էական տեղաշարժեր: Արտահանման ընդհանուր ծավալում 2021թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում առաջինը Ռուսաստանն էր (27.3%), այնուհետև՝ Չինաստանը (14.4%), Շվեյցարիան (11.5%), Բուլղարիան (8.7%), Նիդեռլանդները (5.4%): 2022թ. նույն ժամանակահատվածում արտահանման ընդհանուր ծավալում առաջինը Ռուսաստանն է (36.3%), այնուհետև՝ Չինաստանը (8.1%), Արաբական Միացյալ Էմիրությունները (7.9%), Շվեյցարիան (6.3%), Բուլղարիան (6%):



Գծապատկեր 2. Արտահանման ծավալներն ըստ երկրների, տոկոս [5]:


2021թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում ներմուծման ընդհանուր ծավալում առաջինը նորից Ռուսաստանն է (37.4%), այնուհետև՝ Չինաստանը (9.1%), Իրանը (8.4%), Գերմանիան (4.3%), Իտալիան (4.1%): 2022թ. նույն ժամանակահատվածում ներմուծման ընդհանուր ծավալում առաջինը Ռուսաստանն է (34.2%), այնուհետև՝ Չինաստանը (8.7%), Վրաստանը (7.8%), Իրանը (7.2%), Գերմանիան (4.9%):



Գծապատկեր 3. Ներմուծման ծավալները ըստ երկրների, տոկոս [5]:

3. ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը, ըստ հիմնական ապրանքախմբերի, ցույց է տալիս ՀՀ մասնագիտացման ուղղությունը և հանրապետության պահանջարկը ներմուծվող արտադրանքի նկատմամբ: 2021թ. հունվար-օգոստոս ընկած ժամանակահատվածում ՀՀ-ից արտահանվող ապրանքների

շարքում առաջին տեղը զբաղեցնում է հանքահումքային արտադրանքը (36.9%), այնուհետև պատրաստի սննդի արտադրանքի (18.9%), ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի (11.4%), բուսական ծագման արտադրանքի (6.3%), մանածագործական իրերի (6.27%) արտահանումը: Նույն ժամանակահատվածում ներմուծվող ապրանքների շարքում առաջին տեղը զբաղեցնում է հանքահումքային արտադրանքը (18%), մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ (16.5%), քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի (8.7%), պատրաստի սննդի արտադրանքի (8.2%), ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի (7.3%) ներմուծումը:



Գծապատկեր 4. Արտահանման և ներմուծման կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում, տոկոս [5]:

- 2022թ.-ի նույն ժամանակահատվածում արտահանման ծավալներում հանքահումքային արտադրանքի ծավալը աճել է 1.6%-ով, պատրաստի սննդի արտադրանքինը՝ 42.5%-ով, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերինը՝ 38.9%-ով, բուսական ծագման արտադրանքինը՝ 30.3%-ով, մանածագոր-

ծական իրերինը՝ 5%-ով: Ներմուծման ծավալներում հանքնահումքային արտադրանքի ծավալը աճել է 35.7%-ով, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներինը՝ 71.3%-ով, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքինը՝ 42.3%-ով, պատրաստի սննդի արտադրանքինը՝ 21.9%-ով, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերինը՝ 69.3%-ով:

Աշխատանքում ներկայացվեցին ՀՀ արտաքին տնտեսական կապերի ձևավորումը պայմանավորող գործոնները, ՀՀ-ի կողմից դրանց ցուցաբերված մոտեցումները: Հողվածում ներկայացվել է 2011-2021թթ. ՀՀ-ի արտաքին պարտքը, որի աճի պատճառներից է համարվում ներմուծման ծավալների գերակայությունը արտահանման ծավալների նկատմամբ: Ուստի Հայաստանի Հանրապետությունը իր զարգացումը ապահովելու և համաշխարհային շուկայում առաջատար տեղ զբաղեցնելու համար պետք է մշակի այնպիսի ռազմավարություն, որի արդյունքում կկարողանա նվազագույնի հասցնել և լավագույն դեպքում զրոյացնել արտաքին պարտքը, կկարողանա ընդլայնել համագործակցության շրջանակները, կազմակերպել այն ապրանքատեսակների արտադրությունը, որոնք ներմուծվում են:

Անշուշտ, երկրի սահմանափակ շուկան խոչընդոտում է տնտեսական զարգացումը, ՀՀ-ն պետք է ունենա արտաքին շուկաներ՝ հանքնահումքային արտադրանքի, մեքենաների, սարքավորումների և մեխանիզմներինի, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի, պատրաստի սննդի արտադրանքի, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի իրացման համար:

ХАРАКТЕР ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ

Авагян С. С., Акобян Г. А.

В современном мире подчеркивается важность роста взаимозависимости экономик разных стран, к чему экономика РА не остаётся безучастной. Учитывая, что РА – это страна с малой и открытой экономической системой, то для нее большое значение имеют внешние отношения, обеспечивающие непрерывный рост экономики страны, ряд объективных и субъективных факторов, способствующих их

формированию. Поскольку внешняя торговля играет значительную роль во внешнеэкономических связях, в статье представлены её особенности, объёмы, структура и пояснена статистическими данными за 2021-2022 годы доля экспорта и импорта по товарам и странам.

Ключевые слова: внешнеэкономические связи, внешняя торговля, экономическое сращивание, прямые инвестиции, внешний долг, экспорт, импорт.

THE NATURE OF THE FOREIGN ECONOMIC RELATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE FEATURES OF THE DEVELOPMENT OF FOREIGN TRADE

Avagyan S. S., Hakobyan G. A.

In the modern world, the importance of the growth of mutual dependencies of the economies of different countries is emphasized, in which the RA economy does not remain indifferent. Considering that Armenia has a small and open economic system, external relations are of great importance for it, ensuring the continuous growth of the country's economy, a number of objective and subjective factors contributing to their formation. Since foreign trade plays a significant role in foreign economic relations, the article presents its features, volumes, structure and explains with statistical data for 2021-2022 the share of exports and imports by products and countries.

Keywords: foreign economic relations, foreign trade, economic coalescence, direct investment, foreign debt, export, import.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաջանյան Գ. Ա., Թադևոսյան Զ. Ա. Միջազգային տնտեսական հարաբերություններ: Երևան: «Տնտեսագետ» հրատարակչություն: 2008թ.: 296 էջ:
2. Ղուշյան Հ. Բ. Մակրոտնտեսական կարգավորում: Երևան: «Տնտեսագետ» հրատարակչություն: 2002թ.: 478 էջ:
3. Սարգսյան Լ. Ն. Ներդրումների ներգրավման եվ արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: 2019: 319 էջ:
4. armstat.am
5. https://armstat.am/file/article/sv_08_22a_411.pdf (16.10.2022)

6. https://minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/ (15.10.2022)
7. Schmoller Gustav, The Mercantile System and Its Hisstorical Significance, Illustrated Chiefly from Prussian History. 1895. 95 p.
8. Mokyr Joel, Mercantilism, the Enlightenment, and the Industrial Revolution. 2003. 576 p.
9. Keynes J. M.. The General Theory of Employment, Interest, and Money. 1936. 257 p.
10. Krugman/Obstfeld, International Economics. 2003. 736 p.

Տեղեկություններ հեղինակների և գիտական ղեկավարի մասին

Ավագյան Մ. Մ. – բակալավրիատ 2-րդ կուրս

Գավառի պետական համալսարան, Տնտեսագիտական ֆակուլտետ, Ֆինանսներ (ըստ ոլորտի)
Էլ. փոստ՝ avagyansona83@gmail.com

Հակոբյան Գ. Ա. – բակալավրիատ 2-րդ կուրս

Գավառի պետական համալսարան, Տնտեսագիտական ֆակուլտետ, Ֆինանսներ (ըստ ոլորտի)

Գիտական ղեկավար՝ Խաչատրյան Գ., տնտեսագիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 24.10.2022
Գրախոսվել է՝ 20.01.2023

**ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Հովհաննիսյան Ա. Հ.**

Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացմամբ է մեծապես պայմանավորված երկրի տնտեսական զարգացման հետագա ընթացքը: Այս ամենը հաշվի առնելով՝ մեծ նշանակություն է տրվում արդյունավետ ներդրումային քաղաքականության մշակմանը և իրագործմանը: Հոդվածում անդրադարձ է կատարվել միջազգային ներդրումային դաշտում երկրների առաջանցիկ դիրքին, Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր և օտարերկրյա ուղղակի ներդրումներին՝ ըստ տնտեսության տարբեր ճյուղերի և քովիդյան, հետքովիդյան տարիների:

Վերլուծության արդյունքում ներկայացվել են ոլորտի հնարավոր զարգացման միտումները, վեր են հանվել բազմաթիվ և բազմաբնույթ հիմնախնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն:

Բանալի բառեր. տնտեսական աճ, ներդրումային քաղաքականություն, ընդհանուր ներդրում, օտարերկրյա ուղղակի ներդրում, գուտ ներդրում, «բաց դռների» քաղաքականություն, մակրոտնտեսական կայունություն:

Նախաբան: Ներդրումները կարևորագույն դեր են խաղում յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման գործում: Գաղտնիք չէ, որ տնտեսական աճի բարձր ապահովման հիմքը հանդիսանում են հենց ներդրումները: Երկրում ներդրումային արդյունավետ քաղաքականությունը ապահովում է արտադրության, եկամուտների, զբաղվածության մակարդակի աճ, ինչպես նաև աղքատության, գործազրկության մակարդակի նվազում:

Թեմայի արդիականությունը այն է, որ տնտեսական ճգնաժամը, ինչպիսին է կորոնավիրուս համավարակը, իր բացասական ազդեցությունը թողեց ողջ աշխարհի ներդրումային միջավայրի վրա: Այս ոլորտում անմասն չմնաց նաև Հայաստանի Հանրապետությունը, քանի որ երկրի ներսում տնտեսական կայունությունը խախտվել էր նաև 2020 թվականի սեպտեմբերին սկսված արցախ-ադրբեջանական պատերազ-

մի հետևանքով: Ուստի ուսումնասիրության նպատակն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրում առկա հիմնախնդիրների և խոչընդոտների բացահատումը:

Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական, Հայաստանի Հանրապետության կառավարության, էկոնոմիկայի նախարարության կայքերը, ինչպես նաև տնտեսագիտական գրականությունը:

«Ներդրում» հասկացությունը ունի իր էական առանձնահատկությունը՝ ի տարբերություն խնայողության: Քեյնսը հիմնավորել է, որ ներդրումները ֆունկցիոնալ կախվածություն ունեն տոկոսադրույքից, իսկ խնայողությունները՝ տնօրինվող եկամտից [1]: Ուստի կարող ենք արձանագրել, որ ներդրումը հանդիսանում է ռեսուրսների ուղղորդումը հավելյալ արժեքի ստեղծմանը, իսկ ներդրողը՝ ռիսկի կրողը:


Ընդհանուր առմամբ համաճարակի առաջին տարում զգալի հարված ստանալուց հետո միջազգային ներդրումները 2021 թվականին աճել են 70%-ով: Այս առաջընթացի մեծ պատասռը բաժին է ընկել վերականգնվող էներգիային և էներգաարդյունավետությանը:

Համաշխարհային ներդրումների 2022թ.-ի զեկույցը, որը մեկնարկել է Միավորված ազգերի կազմակերպության Առևտրի և զարգացման համաժողովը (UNCTAD), ցույց է տալիս, որ օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈւՆ) 2021 թվականին վերականգնվել են մինչև համաճարակային մակարդակը՝ հասնելով մոտ 1,6 տրիլիոն դոլարի, որում առաջատար 10 տնտեսություններն են եղել ԱՄՆ-ը, Չինաստանը, Հոնկոնգը (Չինաստան), Մինգապուրը, Կանադան, Բրազիլիան, Հնդկաստանը, Հարավային Աֆրիկան, Ռուսաստանը և Մեքսիկան [2]:

Համաշխարհային ներդրումային դաշտում իր ուրույն տեղն է գրավում նաև Հայաստանի Հանրապետության ներդրումային հոսքը:

Հայաստանի տնտեսության իրական հատվածում ընդհանուր օտարերկրյա ներդրումների (ներդրումների բոլոր տեսակներն ու ձևերը) ծավալը 2021 թվականին աճել է 54%-ով (2020թ. 39% անկման դիմաց)՝ հասնելով 2,8 մլրդ. դոլարի: ՕՈւՆ-ի մասնաբաժինը ընդհանուր օտարերկրյա ներդրումներում 2021 թվականին կազմել է 29% (2020 թվականի 26%-ի դիմաց) կամ 798 մլն. դոլար, ինչը 71%-ով գերազանցում է 2020թ.-ին (2020թ. 21% անկման դիմաց): Գծապատկեր 1-ն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ ներդրումների ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, որի

մասնաբաժինը ընդհանուր օտարերկրյա ներդրումների ծավալում 2021 թվականին աճել է 37,4%-ից մինչև 53%, իսկ Գերմանիայի մասնաբաժինը, ընդհակառակը, նվազել է 33,4%-ից մինչև 18,5%: Ընդ որում՝ Ռուսաստանի մասնաբաժինը ընդհանուր ՕՈՆ-ում 75,1%-ից նվազել է մինչև 67,3%, իսկ Գերմանիայի մասնաբաժինը 5%-ից հասել է 12,5%-ի: Կիպրոսի մասնաբաժինը կազմում է ՕՈՆ-ի մոտ 5%-ը, մինչդեռ Նիդեռլանդների և Ֆրանսիայի մասնաբաժինը ՕՈՆ-ում շատ ավելի փոքր է՝ 1,7-1,3%: Հատկանշական է, որ այս ոլորտում ներդրումների տեսանելի հոսք կա Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի կողմից:




Գծապատկեր 1. Օտարերկրյա և ուղղակի ներդրումների պաշարները ըստ երկրների, 2021 թվական, մլն. դրամ [3]:

Հարկ է ընդգծել, որ անցած 5 տարիների ընթացքում օտարերկրյա ուղղակի ներդրումների գուտ հոսքերը (ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերությունը) ունեցել են բավականին վայրիվերումներ՝ կապված երկրում տիրող անկայունությունների հետ:

Ուշագրավ է, որ նշված ցուցանիշը 2017 թվականից մինչև 2020 թվականը ունեցել է նվազման տենդենց՝ 23%-ից հասնելով 12% բացասական նիշի, սակայն 2021 թվականին արդեն իսկ գրանցվել է բավականին մեծ ցուցանիշ՝ 47% աճ: Այս ցուցանիշով մենք ունենք նախաձգնաժամային տարիների նկատմամբ բավականին մեծ աճ:

Անհրաժեշտ է նկատել այն հանգամանքը, թե Հայաստանում ներդրում կատարողներին տնտեսության որ ոլորտն է գրավում: Առաջատար ճյուղերից են համարվում էլեկտրականության, գազի,

գոլորշու և լավորակ օդի մատակարարումը, մետաղական հանքաքարի արդյունահանումը, անշարժ գույքի հետ կապված գործունեությունը, որը հատկապես ավելի ակներև է դարձել այժմյան ռուս-ուկրանիական պատերազմի հետևանքով, ինչպես նաև օդային տրանսպորտը: Նկատելի է այն փաստը, որ հանքագործական արդյունաբերության ոլորտում 2021 թվականին նախորդ տարվա համեմատ գրանցվել է ավելի քան 21 անգամ բարձր ցուցանիշ, իսկ խմիչքների արտադրության ոլորտում քովիդյան, հետքովիդյան տարիներին որևէ էական փոփոխություն չատ չնչին է նկատվել: Հատկանշական է, որ տնտեսության այն ճյուղում, որում ավելի մեծ է ներդրումը, այն ի վերջո ունենում է ավելի լայնամասշտաբ արտադրություն և մեծ հեռանկար արտադրանքի արտահանման: Այս հանգամանքն է հենց հանգեցնում տնտեսության թռիչքային աճի:



Գծապատկեր 2. Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերը 2017-2021 թվականներին [3]:

Այսօր Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվում է «բաց դռների» քաղաքականության, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով [4]:

Աղյուսակ 1.

Օտարերկրյա ներդրումների գուտ հոսքերն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2019-2021 թվականներ [3]

Գործունեության տեսակ	2019, մլն դրամ	2020, մլն դրամ	2021, մլն դրամ
Էլեկտրականության գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	156723.2	2079.9	130485.0
մետաղական հանքաքարի արդյունահանում	1608.4	18861.6	49002.0
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	16420.4	9216.00	20489.3
օդային տրանսպորտ	-574.00	-14857.3	10093.2
խմիչքների արդյունաբերություն	3580.8	3483.7	3400.9
բուսաբուծություն և անասնաբուծություն կոտորողություն	1076.0	229.1	3261.6
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	3850.8	3483.7	3400.9
հանքագործական արդյունաբերություն	8270.1	34.6	723.3
ջրի հավաքում, մշակում և բաշխում	-2615.5	2037.3	-2104.5

Վերոնշյալ տարբեր մոտեցումների շրջանականերում անվիճելի է նաև այն փաստը, որ ոլորտում, չնայած անընդհատ կատարվող բարեփոխումներին, միշտ էլ առկա են առաջընթացը խոչընդոտող գործոններ, որոնք հնարավոր են հասցնել նվազագույն աստիճանի, բայց ոչ հիմնահատակ արմատախիլ լինելուն:



Գծապատկեր 3. Ներդրումներ կատարելու հիմնական խոչընդոտները ՀՀ-ում [6]:

Վերոնշյալ խոչընդոտների շարքում առանձնակի ուշադրություն դարձնենք արտարժույթի կարգավորմանը, որովհետև ներդրումները երկրում հանդիսանում են արտարժույթի ներհոսքի հիմնական աղբյուրներից մեկը: Փոխարժեքի անկանոն տատանումները դարձել են խնդրահարույց, որոնք դրամային հաշվարկների վրա ունենում են բավականին մեծ ազդեցություն:

Անվիճելի է, որ նորարարության նկատմամբ ճկունությունը, կրթված աշխատուժը, հասարակական առողջությունը պարտավոր են համընթաց քայլել նորագույն տեխնոլոգիաների առաջընթացի հետ, որոնք օրեցօր բարելավման կարիք ունեն միաժամանակ ն՝ պետության, ն՝ հասարակության կողմից: Իսկ ինչ վերաբերում է հարկային օրենսդրությանը, քաղաքականության անկայունությանը, սահմանափակող աշխատանքային կանոնակարգերին, ապա այս պարագայում կարգավորիչ ամենամեծ լծակը պետության ձեռքում է:

Վերոգրյալ խնդիրների համաձայն՝ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2021-2026 թվականներին կազմել է հնգամյա ծրագիր, ըստ որի՝ նախատեսվում է տարածաշրջանի երկրներում (մասնավորապես ԱՄԷ, Կատար, Քուվեյթ) գործող ներդրումային հիմնադրամների հետ ակտիվ աշխատանքների իրականացում՝ ներդրողների ներգրավման և ներդրումների խթանման նպատակով: Կատարի ներդրումային մարմինը նախատեսում է իր գործունեությունը հատկապես հանքարդյունաբերության, կրթության, գիտության, զբոսաշրջության ոլորտներում [5]:

Արված ուսումնասիրությունների շրջանակներում նկատվում է այն ցավալի փաստը, որ երբեմն կազմակերպությունները նախընտրում են չնվազեցնել ապրանքների գները և չկատարել նոր ներդրումներ, սակայն արդյունքում նրանք կունենան եկամտային մեծ հոսք ԱԱՀ-ի նվազեցմանը զուգահեռ ապրանքի ինքնարժեքի անհիմն բարձրացման հետևանքով:

Որպես կանոն ներդրումների աճը կապված է բարձր ռիսկայնության հետ. մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը, քաղաքական անկայունությունը կապված են ներդրողների վստահության, ներդրումների իրականացման հակվածության հետ: Նշված գործոնները առանցքային նշանակություն ունեն հատկապես Հայաստանի Հանրապետության համար՝ պայմանավորված նաև հարևան երկրների հետ ունեցած կոնֆլիկտով և պատերազմական իրավիճակով: Իսկ ինչ վերաբերում է Վրաստանին, ապա ներդրումային

դաշտում մրցակցությունը միշտ էլ առկա է՝ բարենպաստ և առաջանցիկ դիրք գրավելու համար հատկապես գործարար միջավայրում:

Բոլոր թվարկված դեպքերում նախընտրելի է համարվում որևէ խթանի իրագործում, որը կնպաստի ներդրումների աճին: Այդպիսի կարող է հանդասանալ հենց ներդրումային գրավչության երաշխիքների ապահովումը: Այս պարագայում պետք է նկատել նաև, որ ներդրումների աճը ունի մի սահման, որից սկսած՝ հանգեցնում է բացասական հետևանքի՝ ինֆլյացիայի, իսկ անբավարարությունը՝ դեֆլյացիայի: Ուստի կարևորվում է լինել ճկուն և պահպանել մակրոտնտեսական հավասարակշռությունը:

Առաջարկություններ: Վերոգրյալ խնդիրներին համապատասխան՝ առաջարկվում է.

- ✓ Պետության գերակա խնդիրը համարել ճշգրտորեն օգտվելը դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունից ապահովելով տնտեսության հավասարակշռություն և բազմակողմանի զարգացում:
- ✓ Երկրի ճանաչելիությունը աշխարհին ներդրումներ կատարելու ուղղությամբ կարևորում է հաճախակի կազմակերպել ներդրումային համաժողովներ, ներդրումային այցեր, ցուցահանդեսներ, ներդրմանն անհրաժեշտ ոլորտի վերաբերյալ հեռանկարային ծրագրեր:
- ✓ Մշտադիտարկում ներդրումային դաշտում պետության կողմից առաջադրված խթանների իրագործման և արդյունավետ ցուցանիշ գրանցելու համար:
- ✓ Պետության կողմից օրենդրական փոփոխություններ, հատկապես գործարար միջավայրում վարչարարական ընթացակարգերի պարզեցում, կանխիկ գործարքների կատարման շրջանակի փոքրացում, սահմանափակում ինքնարժեքի անհիմն բարձրացման դեմ:
- ✓ Կազմել հիմնարար դրույթներով, ներդրողներին շահադրդող և գրավիչ ծրագիր՝ ռազմական ոլորտում ներդրումների մեծ հոսք ապահովելու համար:

Եզրակացություն: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ներդրումների ներգրավման և դրանց համար միջավայրի բարելավման հիմնախնդիրները միշտ եղել են Հայաստանում վարվող տնտեսական քաղաքականության հիմնաքարերից մեկը: Ոլորտում առկա են խթաններ, որոնց արդյունավետությունը դեռևս ցածր մակարդակի վրա է և պահանջում է հաճախակի մշտադիտարկում, որը մակրոտնտեսական

կայունության, տնտեսական զարգացման երկարաժամկետ բարգավաճման և զարգացման նախապայմաններից մեկն է հանդիսանում: Այս ամենը հաշվի առնելով՝ մեծ նշանակություն է տրվում արդյունավետ ներդրումային քաղաքականության մշակմանը և իրագործմանը, որն էլ ուղեկցվում է բազմաթիվ և բազմաբնույթ հիմնախնդիրների առաջացմամբ, որոնք դեռևս լուծման կարիք ունեն:

ОСНОВЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Оганнисян А. У.

Дальнейший ход развития экономики страны во многом определяется эффективной реализацией инвестиционной политики. Учитывая все это, большое значение придается разработке и реализации эффективной инвестиционной политики. В статье говорится о продвижении стран в сфере международных инвестиций, общих и прямых иностранных инвестициях в Республике Армения – соответственно по отраслям экономики – и в ковидные, и постковидные годы.

В результате анализа были представлены тенденции возможного развития отрасли, выделены многочисленные и многоплановые проблемы, которые нуждаются в решении.

Ключевые слова. экономический рост, инвестиционная политика, общий объем инвестиций, прямые иностранные инвестиции, чистые инвестиции, политика «открытых дверей», макроэкономическая стабильность.

THE FUNDAMENTALS OF INCREASING THE EFFICIENCY OF INVESTMENT POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA

Hovhannisyan A. H.

The country's economy is largely determined by the effective implementation of the investment policy the further course of development. Taking all this into account, great importance is attached to the development and implementation of an effective investment policy. The article refers to the progressive position of countries in the international investment field, general

and foreign direct investments in the Republic of Armenia according to different branches of the economy and the covid and post-covid years.

As a result of the analysis, the trends of the possible development of the sector were presented, numerous and multi-faceted problems were highlighted, which need to be solved.

Keywords: economic growth, investment policy, total investment, foreign direct investment, net investment, "open door" policy, macroeconomic stability.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кейнс Дж., Общая теория занятости, процента и денег, М., 2006. 608 с.
2. <https://unctad.org/statistics>- Միավորված ազգերի կազմակերպության Առևտրի և զարգացման համաժողով պաշտոնական կայք [հասանելի է 06.09.2022]:
3. <https://www.armstat.am/am/-> ՀՀ ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական կայք [հասանելի է 06.09.2022]:
4. <https://mineconomy.am/page/96>- ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք [հասանելի է 07.09.2022]:
5. <https://www.gov.am/am/-> ՀՀ կառավարության պաշտոնական կայք [հասանելի է 07.09.2022]:
6. <https://www.weforum.org/reports/>- Համաշխարհային տնտեսական ֆորում պաշտոնական կայք [հասանելի է 07.09.2022]:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Հովհաննիսյան Ա. Հ. – բակալավրիատ 3-րդ կուրս

Գավառի պետական համալսարան, Տնտեսագիտական ֆակուլտետ, Ֆինանսներ (ըստ ոլորտի)

Էլ. փոստ՝ hovhannisyanarega907@mail.ru

Գիտական ղեկավար՝ Խաչատրյան Գ., տնտեսագիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 07.11.2022
Գրախոսվել է՝ 31.01.2023

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
Սարգսյան Ա. Է.**

Պետության երկարաժամկետ և կայուն զարգացում ապահովելու համար կարևոր նախապայման է հանդիսանում վարչատարածքային միավորների համաչափ ու անընդհատյա զարգացումը, որի հիմքում ընկած է տեղական ինքնակառավարման համակարգը՝ օրենսդրորեն սահմանված լիազորությունների շրջանակով: ՏԻ համակարգի գործունեության արդյունավետության գնահատումը ուղիղ համեմատական է լիազորությունների իրացմանը, որն էլ իր հերթին մեծապես կախված է վերջինիս իրականացման համար անհրաժեշտ և համապատասխան ֆինանսական միջոցների առկայությունից: Այս տեսանկյունից կարևորվում է համայնքների ֆինանսական ապահովվածության վերլուծությունը, ինչպես նաև ծախսային հոդվածների դիտարկումը և արդյունավետության գնահատումը: Վերոնշյալը կարևորվում է հատկապես տեղի ունեցած խոշորացման համատեքստում, որի հիմքում ընկած դրդապատճառներից մեկն էր հանդիսանում ֆինանսական միջոցների օպտիմալացումը:

Բանալի բառեր. համայնքային բյուջե, խոշորացում, ֆինանսական ապահովվածություն, համայնքների համաչափ զարգացում, սեփական եկամուտներ, սուբվենցիաներ:

Նախաբան: Արդի պայմաններում պետական կառավարումը երկրներում տեղի է ունենում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի միջոցով: Նկատենք նաև, որ այս համատեքստում նշանակալիության առավել բարձր մակարդակ է ձեռք բերում տեղական ինքնակառավարման համակարգը, որը միաժամանակ նպաստում է պետության՝ որպես ընդհանուր և միասնական կառույցի, լիազորությունների լիակատար իրացմանը, ինչպես նաև ունենալով որոշակի ինքնուրույնություն և մոտ գտնվելով անմիջապես կոնկրետ համայնքի առանձնահատուկ խնդիրներին՝

հնարավորություն է ստանում ավելի արագ ու արդյունավետ արձագանքելու վերջիններիս:

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան՝ ՏԻՄ-երին ամրագրված են մի շարք լիազորություններ, որոնց կատարումը ենթադրում է առաջնային փուլում ֆինանսական միջոցների առկայություն, այնուհետև դրանց նպատակային օգտագործում և արդյունքների գնահատում /2/: Ինչ վերաբերում է համայնքների ֆինանսական մուտքերի և ելքերի գնահատմանը, վերջինս առավել բարձր նշանակալիություն է ձեռք բերում հատկապես տեղի ունեցած խոշորացման համատեքստում: Նկատենք նաև, որ համայնքների խոշորացման հիմնական դրդապատճառներից մեկն է եղել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը, ծախսային հոդվածների ընդլայնումը, որոնք էլ իրենց հերթին պետք է նպաստեն համայնքների տնտեսական զարգացմանը: Հետևաբար խոշորացման գործընթացի համապարփակ գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ է դիտարկել համայնքների եկամուտների ձևավորման աղբյուրները, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունները մինչխոշորացումը և դրանից հետո:

Հիմնական բովանդակություն: Նկատենք, որ մինչ խոշորացումը ՀՀ 926 համայնքներից 48 տոկոսի դեպքում բնակիչների թվաքանակը չի գերազանցել 1000 բնակիչը, ինչը միաժամանակ ենթադրել է, որ անկախ բնակիչների թվաքանակից՝ համայնքը ունեցել է համայնքային աշխատակիցների նվազագույն հաստիքներ, ստացել է պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման դոտացիաներ, որոնք հիմնականում ուղղվել են վարչական ապարատի պահպանման ծախսերին: Ինչպես փաստում է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված տվյալները, 2020 թվականի վերջի դրությամբ բոլոր համայնքների /առանց Երևանի/ հանրագումարային ծախսերի մոտ 1/3-ը ուղղված է եղել աշխատավարձերի վճարմանը /6/: Հարկ ենք համարում նշել նաև, որ տեղական ինքնակառավարման համակարգը իրենից չի ենթադրում սոցիալական խնդիրների, այդ թվում՝ զբաղվածության ապահովում, այլ իրականում գործառության շրջանակային տեսանկյունից լայն շրջանակ ընդգրկող համակարգային մարմին է, որի գործունեությունը պետք է նպաստի համայնքի կայուն զարգացման ապահովմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը:

Ելնելով այն հանգամանքից, որ ֆինանսական միջոցները սահմանափակ են, ուստի ինչպես պետական, այնպես էլ համայնքային մակարդակներում կազմվում են բյուջեներ, որոնք որոշակի ժամանակահատվածի կտրվածքով ներկայացնում են տվյալ կառույցի գործունեության ֆինանսական պլանը: Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի՝ համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը /2/: Այսինքն՝ բյուջեն ցանկացած համայնքի ֆինանսական գլխավոր փաստաթուղթն է, որտեղ ներկայացված են համայնքի քաղաքականությունը, տարեկան գործունեության պլանավորումը, ծախսային հիմնական ուղղությունները: Այն ներառում է տվյալ տարվա համար պլանավորվող ծրագրերը, միջոցառումները, եկամուտների կանխատեսումները և այն ծախսերի նախահաշիվները, որոնք անհրաժեշտ են պլանավորվող ծրագրերն ու միջոցառումները ֆինանսավորելու համար:

Ընդգծենք այն փաստը, որ համայնքի բյուջեի եկամուտների կատարումից է կախված ծախսային հատվածի իրականացումը: Ստորև դիտարկենք ՀՀ-ում 2015 թվականից ի վեր, այսինքն՝ խոշորացման փաստացի իրականացումից հետո համայնքների բյուջեների եկամուտների ընդհանուր շարժընթացը և կառուցվածքային փոփոխությունները:

Աղյուսակ 1.

ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների տեսակները և նրանց տեսակարար կշիռները ընդհանուր եկամուտների մեջ 2017-2021թթ. պարբերաշրջանում, մլն. դրամ /6/

Եկամտատեսակներ	2017		2018		2019	
	Գումար	%	Գումար	%	Գումար	%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	126554,0	100	127474,8	100	144463	100
Այդ թվում՝ 1.հարկեր և տուրքեր	26754,3	21,1	26285,6	20,6	31029,9	21,5
Այդ թվում՝						
1.1 գույքային հարկեր անշարժ գույքից /նաև հողի հարկ/	10103,0	8,0	9478,7	7,4	10541,2	7,3
1.2 գույքային հարկեր փոխադրամիջոցներից	11653,0	9,2	12412,2	9,7	15264,5	10,6
1.3 տեղական տուրքեր	4240,0	3,3	3560,9	2,8	4215,6	2,9
1.4 պետական տուրքեր	758,3	0,6	833,6	0,7	1008,5	0,7
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ	57220,7	45,2	59744,6	46,9	66815,6	46,2

ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐ						
3.ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	42579,0	33,7	41444,6	32,5	46617,9	32,3
Այդ թվում՝ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆին. համար պետ. բյուջեից ստացվող միջոցներ	30389,8	24,0	25339,7	19,9	28248,8	19,6
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	1519,7	1,2	1875,1	1,5	2469,9	1,7


Եկամտատեսակներ	2020		2021	
	Գումար	%	Գումար	%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	156136,6	100	175447,2	100
Այդ թվում՝ 1.հարկեր և տուրքեր	30800,0	19,7	38278,7	21,8
Այդ թվում՝				
1.1 գույքային հարկեր անշարժ գույքից /ևսն հողի հարկ/	9509,7	6,1	12350,4	7,03
1.2 գույքային հարկեր փոխադրամիջոցներից	16639,7	10,7	20450,4	11,7
1.3 տեղական տուրքեր	3942,4	2,5	4356,5	2,5
1.4 պետական տուրքեր	708,2	0,5	1121,4	0,6
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐ	81572,2	52,2	86690,0	49,4
3.ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	43764,4	28,0	50478,4	28,8
Այդ թվում՝ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆին. համար պետ. բյուջեից ստացվող միջոցներ	26573,8	17,0	29848,4	17,0
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	3812,0	2,4	5834,2	3,3

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ում, 2017-2021 թվականների պարբերաշրջանում ՀՀ համայնքների ընդամենը եկամուտները մշտապես դրսևորել են աճի միտում, մասնավորապես 2021 թվականի վերջի դրությամբ ՀՀ համայնքների բյուջեների ընդամենը եկամուտները կազմել են 175447,2 մլն. դրամ, ինչը 19310,6 մլն. դրամով կամ 39 տոկոսով ավելի է նախորդ տարվա համեմատ: Ցուցանիշի աճը պայմանավորված է եղել ներկայացված եկամտատեսակներից բոլորի գծով առանձին դրսևորված աճերով: Հարկեր և տուրքեր բաժնում 2021 թվականին 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմել է 7478,7 մլն. դրամ, տոկոսային արտահայտությամբ՝ 24,2 տոկոս: Քանի որ աճը դրսևորվել է բոլոր եկամտատեսակների դեպքում,

ատանձնակի կարևորություն է ստանում ընդամենը եկամուտների կազմում տեսակարար կշիռների փոփոխությունը: Նկատենք, որ 2021 թվականին, չնայած այն հանգամանքին, որ «Պաշտոնական դրամաշնորհներ» հոդվածում ևս արձանագրվել է աճ դրամային արտահայտությամբ ավելի քան 5087,8 մլն. դրամ, այնուամենայնիվ վերջինիս տեսակարար կշիռը ընդամենը եկամուտների կազմում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 2,8 տոկոսային նիշով:

Համայնքների 2021 թվականի բյուջեների սեփական եկամուտները /ընդամենը եկամուտները, առանց պաշտոնական դրամաշնորհների/ կազմել է 88757,2 մլն. դրամ կամ ընդհանուր եկամուտների կեսից ավելին: Բերված տվյալները ցույց են տալիս, որ չնայած սեփական եկամուտների որոշակի աճին, այնուամենայնիվ մեծ է դեռ համայնքների կախվածությունը պաշտոնական դրամաշնորհներից:

Ստորև դիտարկենք մինչ խոշորացումը և խոշորացումից հետո համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների շարժընթացը 2012-2021 թվականների ընթացքում՝



Գծապատկեր 1.22 համայնքների ընդհանուր եկամուտների շարժընթացը և կառուցվածքային փոփոխությունները 2012-2021 թվականների ընթացքում /4/:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ում, դիտարկվող ժամանակահատվածում համայնքների բյուջեների ընդամենը եկամուտները դրսևորել են աճի միտում, միաժամանակ նույն միտումը արձանագրվել է սեփական եկամուտների կազմում: Նկատենք, որ սեփական եկամուտների տեսակարար կշիռը 2012-2021 թվականների

պարբերաշրջանում գերազանցել է 47 տոկոսը՝ 2016 թվականին գրանցելով ամենաբարձր՝ 57 տոկոս ցուցանիշը: Հավելենք նաև, որ նույն ժամանակահատվածում պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրված սուբվենցիաների ծավալը ևս դրսևորել է աճի միտում, ինչը պայմանավորված է եղել հատկապես համայքների խոշորացմամբ, մասնավորապես վերջինիս շրջանակներում մասնագիտացված միջգերատեսչական նոր հանձնաժողովի ստեղծմամբ: Հանձնաժողովի միջոցով գործարկվում են ոչ միայն պետական բյուջեով նախատեսված սուբվենցիոն ծրագրերը, այլև իրականացվում է լրացուցիչ սոցիալական և տնտեսական ուղղվածություն ունեցող սուբվենցիոն համաֆինանսավորվող ծրագրային հայտերի ֆինանսավորում:

Սուբվենցիոն ծրագրերի իրականացումը ունի առանձնահատուկ նշանակություն համայնքի տնտեսական զարգացման համատեքստում, քանի որ վերջինիս շրջանակներում համայնքներում նոր ծրագրեր են գործարկվում՝ արդյունքում հանգեցնելով նպատակային բարեփոխումների: Որպես հավելում նշենք նաև, որ ներկայացված բացարձակ ցուցանիշները որոշակիորեն կրում են հարաբերական բնույթ, քանի որ ստորև ներկայացված տվյալների հիմքում ընկած է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքը, սակայն սուբվենցիաների վերաբերյալ փաստացի տվյալները ներառում են նաև լրացուցիչ ծրագրային հայտերի ընդունումն ու ֆինանսավորումը: Այս մասին է վկայում նաև 2020 թվականին իրականացված սուբվենցիոն ծրագրերի դրամային ծավալների միջև առկա տարբերությունը, մասնավորապես օրենքով նախատեսված էր 19,09 մլրդ. ՀՀ դրամի շրջանակներում սուբվենցիոն ծրագրերի իրականացում, ներառյալ համայնքային մասնակցությունը, սակայն փաստացի 2021 թվականի դեկտեմբերի 31-ի տվյալներով ցուցանիշը դրամային արտահայտությամբ կազմել է 26,2 մլրդ. ՀՀ դրամ, որից 14,3 մլրդ. դրամ է կազմել պետբյուջեի մասնաբաժինը /6/:

Հիմքում ունենալով իրականացված ուսումնասիրությունները՝ կարող ենք նշել, որ ներկայիս պայմաններում հատկապես, երբ առավել քան երբևէ անհրաժեշտ է ապահովել համայնքների համաչափ զարգացում, մեծ կարևորություն է ձեռք բերում միջբյուջետային փոխանցումների, մասնավորապես սուբվենցիաների տրամադրման համակարգի կատարելագործումը, այդ թվում՝ ընթացիկ-կապիտալ ենթատեսակների տրամադրման օպտիմալ հարաբերակցության ապահովումը: Ինչպես նաև միջբյուջետային փոխանցումների կազմում դոտացիա-սուբվենցիա այնպիսի արդյունավետ հարաբերակցության

սահմանումը, որը միաժամանակ ն' հնարավորություն կընձեռի համայնքներին պահպանելու ֆինանսական անկախության ու ինքնուրույնության որոշակի մակարդակ, ն' կնպաստի պետական կառավարման համակարգին բյուջետային միջոցների առավել նպատակային օգտագործմանը ու գործընթացի իրականացման վերահսկողության մակարդակի բարձրացմանը:

Եզրահանգում: Աշխատանքի շրջանակներում իրականացված վերլուծությունների ու ուսումնասիրությունների արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները.

- Արդի պայմաններում, երբ ՀՀ-ում ընթանում է համայնքների խոշորացման գործընթաց, տեղական ինքնակառավարման մարմինները, գործառույթային ապակենտրոնացման արդյունքում ստանալով առավել լայն լիազորությունների շրջանակ, պետք է ապահովված լինեն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով, ինչպես նաև ունենալով ինքնուրույնության որոշակի մակարդակ՝ պետք է նպաստեն համայնքի ընդհանուր եկամուտների կազմում սեփական եկամուտների տեսակարար կշռի աճին:
- Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել խոշորացման արդյունքում ձևավորված նոր համայնքներում որպես ելակետ լրացուցիչ ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործմանը՝ միաժամանակ բազմաբնակավայր համայնքների դեպքում չանտեսելով հասանելիության ապահովման ցուցիչը համայնքի մյուս բնակավայրերի բնակիչների համար, որը անուղղակի ազդեցություն կունենա միկրոմակարդակում՝ համայնքի, իսկ մակրոմակարդակում՝ երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման վրա:
- Միջբյուջետային փոխանցումների համատեքստում անհրաժեշտ է նվազագույնի հասցնել համայնքի ֆինանսական կախվածության մակարդակը պետական համակարգից, մասնավորապես համայնքներին պետական բյուջեի հատկացումների տեսանկյունից կարևորվում է նպատակային հատկացումների, այն է՝ սուբվենցիաների տրամադրման աճը, որը կնպաստի վերահսկողության գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը, հստակ ուղղվածություն ունեցող կապիտալ ծրագրերի իրականացման ավելացմանը:

**АНАЛИЗ И ХАРАКТЕРИСТИКА ИСТОЧНИКОВ ФОРМИРОВАНИЯ
ДОХОДОВ БЮДЖЕТА СООБЩЕСТВА В УСЛОВИЯХ РАСШИРЕНИЯ
СООБЩЕСТВ
Саргсян А. Э.**

Важной предпосылкой обеспечения долгосрочного и стабильного развития государства является пропорциональное и непрерывное развитие административно-территориальных единиц, в основе которого лежит система местного самоуправления с объемом полномочий, определенных законом. Оценка эффективности системы ИТ прямо пропорциональна реализации полномочий, что, в свою очередь, во многом зависит от наличия необходимых и соответствующих финансовых средств для ее реализации. С этой точки зрения важен анализ финансовой обеспеченности сообществ, а также наблюдение за расходными статьями и оценка эффективности. Вышеизложенное особенно важно в контексте произошедшего расширения.

Ключевые слова: бюджет общины, расширение, финансовая безопасность, пропорциональное развитие общин, собственные доходы, субвенции.

**ANALYSIS AND CHARACTERISTICS OF COMMUNITY BUDGET INCOME
FORMATION SOURCES IN THE CONTEXT OF COMMUNITY
ENLARGEMENT
Sargsyan A. E.**

An important prerequisite for ensuring the long-term and stable development of the state is the proportional and continuous development of administrative territorial units, which is based on the local self-government system with the scope of powers defined by law. The assessment of the efficiency of the IT system is directly proportional to the realization of powers, which in turn largely depends on the availability of necessary and appropriate financial means for its implementation. From this point of view, the analysis of the financial security of the communities is important, as well as the observation of expenditure items and the evaluation of efficiency. The above is especially important in the context of the enlargement that has taken place in RA.

Keywords: community budget, enlargement, financial security, proportional development of communities, own revenues, subsidies.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», 24.05.1997:
2. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 30.05.1996:
3. Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, ՀՀ Կառավարության արձանագրային որոշման 44 հավելված, ընդունված 2011 թվականի նոյեմբերի 10-ին:
4. Հայաստանի Հանրապետության 2012-2021թթ. պետական բյուջեի մասին օրենքներ:
5. <https://www.arlis.am/> -Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ կայքէջ:
6. <http://www.minfin.am> ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք, համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվություններ:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Մարգարյան Ա. Է. - մագիստրատուրա 2-րդ կուրս

Գավառի պետական համալսարան, Տնտեսագիտության ֆակուլտետ, Ֆինանսներ, Դրամաշրջանառություն և վարկ

Էլ. փոստ allasargsyan@bk.ru

Գիտական ղեկավար՝ Խաչատրյան Գ., տնտեսագիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 20.11.2022
Գրախոսվել է՝ 20.01.2023

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Արթահամյան Ռ. Վ.

Սույն աշխատանքում ներկայացված են էլեկտրոնային առևտրի կարևորությունն ու վերջինիս զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում:

Հոդվածը ներառում է Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացման հնարավորությունների, ուժեղ կողմերի առկա սպառնալիքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և հարևան երկրներում 2017-2022թթ. էլեկտրոնային առևտրի արդյունքում ստացված եկամուտների վերաբերյալ տվյալներ:

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի վերաբերյալ պատկերացում կազմելու համար անցկացվել է հարցում՝ պարզելու համար ոլորտում առկա բացթողումներն ու զարգացման հնարավորությունները:

Բանալի բառեր. էլեկտրոնային առևտուր, թվային տնտեսություն, վաճառք, զարգացում, համագործակցություն:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի առանձնահատկությունները, զարգացման հնարավորությունները, համեմատել ՀՀ-ի և հարևան երկրների էլեկտրոնային առևտրից ստացված եկամուտները, ինչպես նաև իրականացնել հարցում, որի նպատակն է բացահայտել ոլորտի առավելություններն ու բացթողումները:

Անշուշտ, ժամանակակից տեղեկատվական դարում օրեցօր աճում են տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Եվ այդ համատեքստում գնալով մեծանում է էլեկտրոնային առևտրի դերն ու կարևորությունը, որը հնարավորություն է տալիս կրճատելու վաճառքի գործընթացում առաջացած ծախսերն ու արագացնելու գործարքների կատարման ժամանակը, որով էլ պայմանավորվում է թեմայի ուսումնասիրման արդիականությունը:

Հայտնի է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների և ֆինանսական գործիքների զարգացմանը զուգընթաց՝ աշխարհում լայն տարածում են գտել էլեկտրոնային և բջջային եղանակով ծառայությունների պատվիրման (մատուցման) և ապրանքների ձեռքբերման (էլեկտրոնային առևտրի) տարբեր դրսևորումները: Անշուշտ, Հայաստանում վերջին տասնամյակում նույնպես նշանակալի քայլեր են կատարվել տեղեկատվական տեխնոլոգիաների և ֆինանսական գործիքների զարգացման ուղղությամբ: Ավելին, դեռևս 2000թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ կառավարության կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերությունը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը [3]:

Նշենք, որ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 15.1-ը սահմանում է այն անհրաժեշտ դրույթները, որոնք էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով առևտուր և (կամ) ծառայություն իրականացնելիս գնորդին պետք է հասանելի լինեն:

Սակայն Հայաստանի Հանրապետությունում ենթակառուցվածքային, մշակութային խնդիրներից բացի, էլեկտրոնային առևտրի հետ կապված առկա է նաև օրենսդրական խնդիր այն իմաստով, որ ՀՀ օրենսդրությունը (քաղաքացիական, հարկային, մաքսային) պատշաճ չի կարգավորում էլեկտրոնային առևտրի հետ կապված իրավահարաբերությունները:

Ընդ որում՝ թերի օրենսդրական կարգավորումը, իսկ երբեմն անգամ կարգավորման բացակայությունը ոչ միայն չի խթանում, այլև խոչընդոտում է քաղաքացիաիրավական շրջանառությունում էլեկտրոնային առևտրի տարածումն ու զարգացումը:

Հավելենք, որ էլեկտրոնային առևտրի զարգացման համար, նախևառաջ, անհրաժեշտ է թվային տնտեսության զարգացման բարենպաստ միջավայր, որը բիզնեսին ու սպառողներին հնարավորություն կտա թվային տեխնոլոգիաների կիրառմամբ նպաստելու մրցունակության մակարդակի բարձրացմանը և տնտեսական աճին:

Ընդ որում՝ թվային տնտեսության զարգացման հիմքում ժամանակակից հեռահաղորդակցության ենթակառուցվածքներն են, ներքին և արտաքին ներդրումների համար բարենպաստ միջավայրը, ինչպես նաև կրթված բնակչությունը, որն ի գործ է ներգրավվելու և նպաստելու տեղեկատվական հասարակության ձևավորմանը:

ՀՀ-ում թվայնացման դրական շարժընթացը նկատելի էր հատկապես «Հայաստանի թվային փոխակերպման օրակարգ 2018-2030թթ.» շրջանակային փաստաթղթում, որտեղ ուրվագծվել են հետևյալ ռազմավարական հեռանկարները.

- ✓ 2018-2020թթ.՝ «Թվային ցատկ» (ենթակառուցվածքների լայնածավալ ներդրման և առկա միջոցների թարմացման շեշտադրում),
- ✓ 2021-2025թթ.՝ «Թվային արագացում» (առավել բարձր արդյունավետություն ապահովելու ուղղությամբ ներդրումներ),
- ✓ 2026-2030թթ.՝ «Թվայնացմամբ պայմանավորված զարգացում» (աճի ապահովման ուղղությամբ նորարարությունների խիստ շեշտադրում) [2]:

Փորձենք SWOT վերլուծության միջոցով բացահայտել մեր երկրում էլեկտրոնային առևտրի զարգացման հնարավորությունները:


Աղյուսակ 1.

SWOT վերլուծություն¹

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Զարգացած S2S ոլորտ	1. Էլեկտրոնային առևտրի կարգավորման օրենսդրաիրավական բազայի անկատարություն
2. Համացանցի հասանելիություն երկրի ողջ տարածքում	2. Էլեկտրոնային առևտրի վիճակագրության համակողմանի հավաքագրման և նույնակա-նացման կառուցակարգերի բացակայություն
3. Բանկային, քարտային փոխանցումների և վճարումների անխափան ու ճկուն համակարգ	3. Ֆինանսական գրագիտության պակաս
	4. Էլեկտրոնային միջավայրում սպառողների իրավունքների ոչ բավարար պաշտպանվածություն
Հնարավորություններ	Սպառնալիքներ
1. Թվային առևտրի ուղիների զարգացում և արտահանման խթանում էլեկտրոնային հարթակների միջոցով	1. Կիրենանվտանգության հարցեր
2. Սպառողների պաշտպանության կառուցակարգերի ստեղծում	2. Բավարար ֆինանսավորման բացակայություն
3. Ստվերային տնտեսության կրճատում	3. Թվային տեխնոլոգիաների ներդրման ուշացման ռիսկ

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից «Էլեկտրոնային առևտուր, հնարավոր ռիսկեր, կորուստներ և զարգացման հնարավորություններ» աշխատության հիման վրա:

Անդրադարձ կատարենք Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրից ստացված եկամուտներին 2017-2022 թվականներին:



Գծապատկեր 1. Էլեկտրոնային առևտրից ստացված եկամուտները 2017-2022 թվականներին (մլն. դրլար):²

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրից ստացված ամենաբարձր եկամուտները գրացվել են 2017 թվականին:

Համեմատություն անցկացնելով հարևան երկրների հետ՝ արձանագրենք, որ էլեկտրոնային առևտրից ստացված եկամուտները Վրաստանում 2022 թվականին կազմել են 156 մլն. դրլար, որը 23 մլն. դրլարով ավելի է, քան ՀՀ-ում:

Հատկապես Թուրքիայում անհամեմատ բարձր են էլեկտրոնային առևտրից ստացված եկամուտները: 2022 թվականին այդ ցուցանիշը կազմում է 21.769 մլն. դրլար:

2022 թվականին Իրանում և Ադրբեջանում էլեկտրոնային առևտրից ստացված եկամուտները կազմում են համապատասխանաբար 4095 և 765 մլն. դրլար [1]:

Statista.com գերմանական պորտալի կողմից կատարված կանխատեսումների համաձայն՝ Հայաստանի համար եկամտի կայուն աճի սկիզբ նախատեսվում է 2022 թվականից:

Նկատենք նաև, որ 2017-2022 թվականներին Հայաստանում էլեկտրոնային առևտրի միջոցով ստացված եկամտի տեսակետից ամենամեծ սպառումը բաժին է ընկնում էլեկտրոնիկային, իսկ

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից statista.com կայքում առկա տվյալների հիման վրա:


ամենաքիչը՝ սնունդին և անձնական խնամքի պարագաներին, որն էլ հավանաբար պայմանավորված է դրանց օգտագործման համար սահմանված ժամկետներով և այլն:

Յուրաքանչյուր ոլորտում արդյունավետ և ճիշտ քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար, բացի տեսական դրույթներից, անհրաժեշտ են փորձառական մոտեցումներ: Նման հնարավորություն են ընձեռում հարցումները:

Հարցումն իրականացվել է առցանց եղանակով, որին մասնակցել են թվով 60 հոգի: Հարցման մասնակիցները Գեղարքունիքի մարզի բնակիչներ են:

Էլեկտրոնային առևտրի վերաբերյալ իրակացված հարցումների արդյունքում արձանագրվել են հետևյալ արդյունքները:


Հարցումներ իրականացվել են հետևյալ տարիքային խմբերում. հարցվածների գերակշիռ մասը 18-30 տարեկաններն են, որոնք կազմում են հարցվածների 81.8%-ը, մինչև 18 տարեկանները կազմում են հարցվածների 2.3%-ը, իսկ 30-ից բարձր տարիքային խումբը՝ 15.9%-ը:



Գծապատկեր 2. Տարիքային խմբեր:³


Այն հարցին, թե որքան հաճախ եք կատարում օնլայն գնումներ, հարցվածների 4.5%-ը պատասխանել է՝ շաբաթը մեկ անգամ, 20.5%-ը՝ երկու շաբաթը մեկ անգամ, 20.5%-ը՝ ամիսը մեկ անգամ, իսկ հարցվածների 54.5%-ը գնումներ կատարում են այլ հաճախականությամբ:

³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից իրականացված հարցումների հիման վրա:



Գծապատկեր 3. Էլեկտրոնային առևտուր կատարելու հաճախականություն⁴:

Իսկ այն հարցին, թե որ էլեկտրոնային խանութներից էք օգտվում, հարցվածների 2.3%-ը պատասխանել է Amazon, 4.5%-ը՝ AliExpress, 45.5%-ը՝ Wildberries, իսկ 47.7%-ը օգտվում է օնլայն այլ խանութներից:



Գծապատկեր 4. Նախընտրելի էլեկտրոնային խանութներ⁵:


Ընդ որում՝ էլեկտրոնային խանութների աշխատանքից գոհունակությունը հետևյալն է. հարցվածների 95.5%-ը գոհ են

⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից իրականացված հարցումների հիման վրա:

⁵ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից իրականացված հարցումների հիման վրա:

խանութների աշխատանքից, իսկ 0.5%-ը՝ ոչ՝ նշելով, որ հաճախ կատարված գնումները հասնում են նշված ժամկետներից ուշ, իսկ որոշ ապրանքների պարագայում չափերը չեն համապատասխանում իրական չափերին, իսկ ապրանքի հետվերադարձ տեղի չի ունենում, ինչը խոսում է սպառողների իրավունքների պաշտպանված չլինելու մասին:

Հարցվածների 38.6%-ի մեկանգամյա գնումը կազմում է մինչև 5000 դրամ, 45.5%-ինը՝ 5000-10.000 դրամ, իսկ 15.9%-ի մեկանգամյան գնումը կազմում է 10.000 դրամից ավելի:



Գծապատկեր 5. Մեկանգամյա գնումների չափերը (հազար դրամ):⁶

Այսպիսով, կատարված հարցումների արդյունքներով էլեկտրոնային խանութներից օգտվողներից քչերն են, որ ունեն դժգոհություններ: Առկա դժգոհությունների վերացման ուղղությամբ անհրաժեշտ է ուժեղացնել համակարգում առկա վերահսկողությունը և, անշուշտ, վերանայել ՀՀ-ում օրենսդրաիրավական բազան, բացի այդ ստեղծել համապարփակ և մանրամասն վիճակագրություն, որը հնարավորություն կտա իրականացնելու էլեկտրոնային առևտրի, դրա տարբեր ասպեկտների, զարգացման միտումների և տնտեսության վրա ունեցած ազդեցության վերլուծություն:

Աշխատանքում իրականացված վերլուծության և հարցման արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- 2017-2022 թվականներին Հայաստանում էլեկտրոնային առևտրի միջոցով ստացված եկամտի տեսակետից ամենամեծ սպառումը

⁶ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից իրականացված հարցումների հիման վրա:

բաժին է ընկնում էլեկտրոնիկային, իսկ ամենաքիչը՝ սնունդին և անձնական խնամքի պարագաներին:

- Հեռահաղորդակցական և համակարգչային ծառայությունների հասանելիության և մատչելիության աճին զուգընթաց՝ հնարավոր է դառնում ավելի շատ ծառայություններ վաճառել և մատուցել հեռավորության վրա:
- ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի զարգացման համար խոցելի կողմեր կարող են լինել ապրանքների և ծառայությունների թվայնացման բացակայությունը, արտահանողների աջակցման կառուցակարգերի բացակայությունը, ֆինանսական գրագիտության պակասը, էլեկտրոնային միջավայրում սպառողների իրավունքների ոչ բավարար պաշտպանվածությունը, օրենսդրաիրավական բազայի անկատարությունը, կանխիկ գործառնությունների գերադասելիությունը, ֆինանսական գրագիտության պակասը և այլն:
- ՀՀ-ում չկա համապարփակ և մանրամասն վիճակագրություն, որը հնարավորություն կտա իրականացնելու էլեկտրոնային առևտրի, դրա տարբեր ասպեկտների, զարգացման միտումների և տնտեսության վրա ունեցած ազդեցության վերլուծություն:
- էլեկտրոնային առևտրի ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի և կիրառական գոյության բացակայության պատճառով էլեկտրոնային առևտրի որոշ ձևեր կարող են սպառնալիքներ առաջացնել:

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ЭЛЕКТРОННОЙ ТОРГОВЛИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (КРАТКИЙ АНАЛИЗ)

Абрамян Р. В.

В данной работе представлена важность электронной коммерции и перспективы ее развития в Республике Армения.

Статья включает возможности развития электронной коммерции в Республике Армения, сильные стороны, существующие угрозы, а также данные о доходах электронной коммерции в Армении и соседних странах за 2017-2022 годы.

Чтобы получить представление об электронной коммерции в Республике Армения, был проведен опрос, чтобы выявить пробелы и возможности развития в этой области.

Ключевые слова: электронная коммерция, цифровая экономика, продажи, развитие, сотрудничество.

PROSPECTS OF E-COMMERCE DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA (GENERAL OVERVIEW)

Abrahamyan R. V.

This work presents the importance of e-commerce and its development prospects in the Republic of Armenia.

The article includes opportunities for the development of e-commerce in the Republic of Armenia, strengths, existing threats, as well as the income data of e-commerce in Armenia and neighboring countries.

In order to gain insight into e-commerce in the Republic of Armenia, a survey was conducted to find out the gaps and opportunities for development in the field.

Keywords: e-commerce, digital economy, sales, development, cooperation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գերմանական պորտալ, <https://www.statista.com/>:
2. ՀՀ կառավարություն, «Հայաստանի թվային փոխակերպման օրակարգ 2018-2030թթ.», <https://www.gov.am/am/>:
3. Փախյան Ա., Էլեկտրոնային առևտուր, հնարավոր ռիսկեր, կորուստներ և զարգացման հնարավորություններ: Երևան: «Տնտեսագետ» հրատարակչություն: 2021: 180 էջ:
4. OECD Publishing. OECD Guide to Measuring the Information Society. 2011. p. 71:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Աբրահամյան Ռ. Վ. – բակալավրիատ 3-րդ կուրս

Գավառի պետական համալսարան, Տնտեսագիտական ֆակուլտետ, Ֆինանսներ (ըստ ոլորտի)

Էլ. փոստ՝ abrahamyanroza531@gmail.com

Գիտական ղեկավար՝ Խաչատրյան Գ., տնտեսագիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 28.11.2022

Գրախոսվել է՝ 23.01.2023

**ԿՐԵԱՏԻՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ PR ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՄ
Աբրահամյան Ն. Մ.**

Ժամանակակից դինամիկ և անկանխատեսելի աշխարհն ավելի հաճախ կազմակերպությունների ղեկավարների առջև դնում է խնդրահարույց առաջադրանքներ, որոնք պահանջում են ինքատիպ մոտեցումներ ու որոշումներ: PR-ի ոլորտը ենթադրում է էլ ավելի ճկունություն և հարմարվողականություն որոշակի իրավիճակին համապատասխան: Որոշումները և հետևողականության գործողությունները կախված են նաև այն հասարակական խմբի առանձնահատկություններից, որոնց PR գործունեությունն ուղղված է կոնկրետ առաջադրանքներից, որոնք առավել արդիական են ընկերության զարգացման համար:

Կրեատիվությունը ներառում է բազմաթիվ պատասխաններ գտնելու ունակություններ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ճիշտ լինել և, ամենակարևորը, իրավիճակ ստեղծել՝ ընտրելով ամենահարմար լուծումները յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակի համար: PR-ի ոլորտում ոչ ստանդարտ լուծումներ են անհրաժեշտ՝ տարբեր փուլերում հաղորդակցային քայլերի պլանավորման և կազմակերպման համար:

Քանալի բառեր. կրեատիվություն, ռիսկ, նորարարություն, ստեղծագործական միտք, քննադատական մտածողություն, տեղեկատվություն, նախապատրաստում, արտադրանք, հաճախորդ, գաղափար:

Նախաբան: 21-րդ դարը պատմության մեջ կարճանագրվի նաև գիտության անչափելի արագ զարգացման դարաշրջան, իսկ մարդու՝ այդ աննախադեպ մտքի թռիչքի որսալը դառնում է գրեթե անհնարին:

Տարբեր ոլորտներում նորարարությունների դարաշրջանում անհնար է կատարել այնպիսի աշխատանք, որը երկար ժամանակ պահանջարկ կունենա և կլինի անգերազանցելի: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտություն է առաջանում հատկապես կառավարիչներին, մենեջերներին և կառավարման ոլորտի այլ անձանց ցուցաբերել ստեղծագործական, կրեատիվ մոտեցում՝ յուրաքանչյուրին իր ոլորտում,

ինչը կապահովի մարդկության առաջընթացը և կյանքի լուծման ուղիների բազմազանությունը:

Ինչպես գիտենք, PR մասնագետի աշխատանքը կախված է ստեղծագործական խնդիրների ամենօրյա լուծման հետ: Նորարարությունների և իրադարձությունների միջև անընդհատ աճող մրցակցության պայմաններում PR մասնագետների կարողունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելը, կազմակերպություններին աջակցելու գործունեությունը սկսում է ավելի ու ավելի կարևոր դեր խաղալ:

Առասպելաժին է այն տեսակետը, որ ստեղծագործ գործունեությունը միայն մի քանի հանճարների մենաշնորհն է: Իրականում կարելի է օգտագործել մի շարք տեխնիկական հնարքներ, որոնք թույլ կտան զարգացնելու մտածողությունը և կիրառել ստեղծագործական մոտեցում տարբեր տեսակի PR խնդիրների լուծման ընթացքում: Բոլոր հաջողված գաղափարները չեն ծնվում ակնթարթորեն, այլ աճում են աշխատանքի ընթացքում մի քանի փոքր գաղափարներից: Հետևաբար, կրեատիվության գաղտնիքը ոչ թե գլոբալ գաղափարներ ստեղծելու հնարամիտ ունակության մեջ է, այլ փոքր գաղափարներ առաջացնելու ունակության մեջ, որոնք հետագայում կարող են համադրվել այնպես, որ ստացվի հիանալի PR նախագիծ:

Կրեատիվություն և ռիսկ: Կրեատիվությունը մարդու ընդունակությունն է՝ ստեղծել, ծնել, գտնել ինքնատիպ լուծումներ՝ շեղվելով ավանդական մտածողությունից:

Կ. Ռոջերսը կրեատիվությունը բնութագրում է որպես խնդրի յուրօրինակ լուծումներ գտնելու ընդունակություն: Կրեատիվության վերաբերյալ չկան ընդհանուր մոտեցումներ: Որոշ դեպքերում այն համարվում է նաև օժտվածություն, քանի որ ոչ բոլոր մարդիկ են ընդունակ կրեատիվ լուծումներ, որոշումներ կայացնելու [1]:

Ըստ հայտնի ամերիկացի հետազոտող Հ. Գեյվինի՝ կրեատիվությունը ոչ ստանդարտ միջոցներով արժեքավոր արդյունքների ստացումն է: Ստեղծարար մարդիկ ոչ միայն կատարում են ինքնատիպ քայլեր, այլև նրանց վարքը նպատակաուղղված է և օգտակար [1]:

Ինչ խոսք, ռիսկի հակվածությունն ուղիղ կապ ունի կրեատիվության հետ: Մարդիկ միշտ վախենում են նորամուծություններից, քանի որ յուրաքանչյուր նոր բան իր մեջ որոշակի անորոշություն է պարունակում: Իսկ տվյալ կազմակերպության ղեկավարները կամ PR

մասնագետները, եթե չեն վախենում նորույթից և շրջապատող մարդկանց հակազդեցությունից, կարելի է ասել, որ նրանք մասնակիորեն ունեն նաև ռիսկի հակվածություն, ինչը կհամարվի տվյալ կազմակերպության կամ ընկերության հաջողություններից մեկը:

Այս առումով կատարվել է հետազոտություն, որն անցկացվել է մի շարք զբոսաշրջային գործակալություններում: Հետազոտության ընթացքում չափվել են թոփ-կառավարիչների կրեատիվության և ռիսկի հակվածության մակարդակը: Հետազոտությունը ցույց է տվել, որ այն մենեջերները, որոնք ունեն կրեատիվության բարձր մակարդակ, ունեն նաև ռիսկի բարձր հակվածություն, այսինքն՝ կրեատիվությունն ուղիղ համեմատական է ռիսկի հակվածության հետ: Կրեատիվությունը հոգեբանական տեսանկյունից դիտարկվում է որպես կարծրատիպերի կազմալուծում: Դա շատ է գնահատվում տարբեր մասնագիտություններում:

Կրեատիվ PR-ի առանձնահատկությունները:

Կրեատիվ PR մեթոդի ըմբռնումը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա [2]

- բաց և քննադատական մտածողություն,
- կրեատիվ գործընթացի ամբողջականություն,
- բաց մտածողության կարողություն,
- քննադատական մտածողության ունակություն,
- կառուցվածքային ուղեղային գրոհ,
- թիրախային խմբի կարողություն,
- իրավասությունների և կրեատիվության մակարդակ:

Բաց և քննադատական մտածողություն: Կրեատիվ գործընթացը հիմնված է բաց և քննադատական մտածողության համադրության վրա: Բաց մտածողության մեջ շեշտը դրվում է հնարավորինս տարբերվող ու յուրօրինակ գաղափարների ակտիվ խրախուսման վրա՝ անկախ դրանց իրականացման հնարավորությունից և փաստարկված լինելուց: Քննադատական մտածողությունը ներառում է մշակված գաղափարների այնպիսի քննարկում, որոնց հիմքում ընկած են խնդրի լուծման գաղափարի ուղղությունը, ժամանակը, բյուջեն և այլն: Մտածողության այս երկու տեսակներն ունեն հետևյալ հատկանիշները [2]:

Բաց մտածողություն

- զգացմունքային և ամբողջովին ներըմբռնողական,
- ամենախենթ գաղափարի իրականացում,
- առավել տարասեռ նոր տարրերի համադրություն,

- անսահմանափակ թույլտվություն:

Քննադատական մտածողություն

- քննադատություն և վերլուծություն,
- գաղափարի գործնական իրականացում,
- ֆունկցիոնալություն, թե արդյոք այդ գաղափարը կաշխատի,
- կենտրոնացում քաղաքական և տնտեսական իրողությունների վրա:

Կրեատիվ գործընթացի ամբողջականություն

Ստեղծագործական գործընթացի ամբողջականությունը կարող է ներկայացվել որպես հինգ հաջորդական փուլերի միասնություն.

- տեղեկատվություն,
- նախապատրաստում,
- պատկերացում,
- ինտեգրում,
- նկարագրում:

Տեղեկատվություն: Ցանկացած ստեղծագործական գործընթաց սկսվում է տեղեկատվությունից: Դա խնդիր է կամ խնդիրներ, որոնք պետք է լուծվեն: Այնուհետև պետք է խնդիրը մասնատել և հավաքել գործին առնչվող լրացուցիչ փաստեր: Որքան լավ կատարվի այս նախապատրաստական աշխատանքը, այնքան մեծ կլինի հավանականությունը մանարամասների բացահայտման գործում: Ամենակարևորը խնդրի առավել հստակ ձևակերպումն է: PR աշխատանքի պրակտիկան վկայում է, որ հստակ սահմանված խնդիրն արդեն կիսով չափ լուծված է: Ընկերության PR գործակալությունների հետ աշխատանքում խնդրի և առաջադրանքի սահմանումը տեղի է ունենում ստեղծագործական համառոտագրի ստեղծման փուլում: Բարձրորակ համառոտագիրն ամբողջությամբ պետք է տա հիմնական հարցերի պատասխանը [4]:

Նախապատրաստում: Սա ամենակարևոր փուլն է, որտեղ ստեղծագործական աշխատանքը տեղի է ունենում անգիտակցական մակարդակով: Այս փուլի էությունն այն է, որ PR նախագծի վերաբերյալ ստանալով ստեղծագործական ամփոփագիր և հավաքելով լրացուցիչ տեղեկատվություն՝ անհրաժեշտ է հետաձգել դրա վրա աշխատանքը մի որոշ ժամանակ և անցում կատարել այլ ընթացիկ խնդիրների: Այդ պահին նախագծի մասին մտածելն ակտիվ գիտակցությունից կտեղափոխվի ենթագիտակցություն, ինչը թույլ կտա գաղափարների շարժն իրականացնել միանգամից մի քանի ուղղություններով՝ գտնելով

նոր հետաքրքիր լուծման ճանապարհներ: Գիտնականները դեռ չեն ուսումնասիրել ենթագիտակցության մանրամասն մեխանիզմը, բայց փորձը ցույց է տվել, որ ամենահետաքրքիր որոշումները հայտնվում են նախագծի վրա աշխատանքի դադարի ժամանակ, օրինակ՝ բացօթյա հանգստի ժամանակ, մեքենայում, գործնական ընթրիքի ժամանակ և այլն [5]:

Մարդու միտքը, համակարգչի հետ միահյուսվելով, ստանում է որոշակի առաջադրանք, իսկ որոշ ժամանակ անց այն կվերամշակվի մարդու ենթագիտակցական տիրույթում և կտա մի շարք գաղափարների իրագործման լուծումներ, ինչը երբեմն կարող է լինել բոլորովին անսպասելի պահի:

Որոշ ուսումնասիրողներ հաստատել են, որ ուղեղը շարունակում է աշխատել ենթագիտակցական մակարդակով նույնիսկ քնած ժամանակ: Նախագծի վերաբերյալ ակտիվ գործունեությունից այլ ընթացիկ առաջադրանքների անցնելու պահին օգնում է ազատվել խնդրից: Այն նմանվում է ցանած սերմին, այսինքն՝ «բողբոջելու» ընթացքը կատարվում է ենթագիտակցության մեջ: Իսկ նախագծի վրա աշխատանքի դադարը կարող է թուլացնել կարծրատիպային մտածողության դերը լուծում գտնելու հարցում: Գործնականում կարելի է ճիշտ օգտագործել նախապատրաստական գործընթացի ազդեցությունը՝ հետևելով նշված դրույթներին.

- Անգամ վերջին րոպեին չհետաձգել հանդիպման նախապատրաստությունը, քանի որ նախօրոք ծանոթանալով խնդրին՝ արդեն հասկանալի է, թե ինչ առաջադրանք է դրված ուղեղի մտածողության համար: Մինչ դուք այլ գործեր եք պլանավորում, նախապատրաստական գործընթացը թույլ կտա ենթագիտակցական մտքին մշակել և վերափոխել տեղեկատվությունը:
- Օգտագործեք հանգստյան օրերի պլանավորման տեխնիկան: Այս ընթացքում, երբ ուղեղը ընդհանրապես չի մտածում աշխատանքի մասին, նրա մեջ հետաքրքիր կրեատիվ գաղափարներ են ծնվում:

Պատկերացում: Մա այն փուլն է, երբ գաղափարները գալիս են ամբողջովին ինքնաբերաբար՝ կարծես երկնքից ընկնելով: Այն տեղեկատվության և նախապատրաստական փուլերի արդյունքն է [6]:

Գաղափարները ոչ մի տեղից չեն գալիս: Մարդը սկզբում ծանոթանում է խնդրին, լրացուցիչ տեղեկություններ է ուսումնասիրում, այնուհետև, կտրվելով նախագծի մասին մտքերից, որոշ ժամանակ անց սկսում է մտածել որոշակի լուծումների շուրջ: Դա տեղի է ունենում, երբ

ենթագիտակցությունն արդեն աշխատել է խնդրի վրա և արտաքին միջավայրի տպավորությունների ազդեցության տակ գիտակցության է բերել մի քանի հնարավոր լուծումներ և նոր գաղափարներ:

Գաղափարներն անցողիկ մտքեր են: Նրանք հայտնվում են ակնթարթորեն և կարող են նաև անհետանալ անմիջապես, ինչպես երազները, որոնք մարդիկ մոռանում են արթնանալուց մի քանի րոպե անց: Հետևաբար, պատկերացման փուլի հիմնական պահանջն այն է, որ PR մասնագետը միշտ պատրաստ լինի այն բանին, որ գաղափարը կարող է հայտնվել, ինչը նշանակում է, որ այն պետք է գրել, ձայնագրել, որպեսզի չկորչի մտքերի արագ հոսքի մեջ:

Հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ենթագիտակցության կողմից նոր գաղափարների ամենաակտիվ արտամղման ժամանակաշրջանը իրականացվում է արթնանալուց հետո կամ քնելուց առաջ՝ առաջին րոպեներին: Ենթադրվում է, որ այս պահին ներքին գրաքննությունն անջատված է՝ կանխելով նոր գաղափարների մուտքը մարդու մտածողության մեջ, հետևաբար անհրաժեշտ է ընտրել մեզ համար գաղափարների ամրագրման այնպիսի միջոց, որից յուրաքանչյուրս չենք բաժանվի անգամ քնած ժամանակ:

Ինտեգրում: Պատկերացման փուլում ծնված գաղափարը, որպես կանոն, երբեք վերջնական արդյունք չի գրանցում կամ վերջնական տեսքի չի լինում: Մամուլի հաղորդագրություն գրելու օրինակով՝ սա այսպիսի տեսք ունի. առավոտյան դուք ուսումնասիրել եք մասնակիորեն (տեղեկատվական փուլ) և անցել այլ ընթացիկ գործերի (նախապատրաստական փուլ): Երբ նոր միտք է ծնվում (պատկերացման փուլ), և դու սկսում ես այն փոխանցել թղթին, որպես կանոն հայտնվում են նոր մտքեր ու գաղափարներ, որոնք լրացնում, երբեմն էլ փոխում են սկզբնական տարբերակը: Մենք կարող եք վերադասավորել պարբերությունները, հանդես գալ տարբեր վերնագրերով և փոխաբերություններով, փոխել մամուլի հաղորդագրության ձևավորումը: Այսպիսով, երբ ենթագիտակցական միտքը գաղափար է առաջարկում գիտակից մտքին (insight), գիտակից միտքը ակտիվորեն ներգրավվում է աշխատանքի մեջ և գաղափարը բերում է իր վերջնական ձևին (ինտեգրում), որը կարող է տարբերվել սկզբնականից:

Պատկերագարդման փուլը ստեղծագործական գործընթացի ամենակարևոր փուլն է, որը որոշում է, թե որ գաղափարներն են իրականացվելու, որոնք նախատեսված են մնալ Word փաստաթղթի կամ Power Point-ի ներկայացման տեսքով: Պատկերագարդման փուլը,

ըստ էության, մեր գաղափարի ներկայացումն է պոտենցիալ հաճախորդին: Տվյալ պահին առաջին պլան է մղվում գաղափարի ներկայացման ձևը, և մի քանի գործոններ սկսում են որոշիչ դեր խաղալ.

- գաղափարի իրագործում,
- ժամանակի կառավարում,
- գաղափարի հարմարեցում հաճախորդին:

Եթե գաղափարի հեղինակը PR գործակալության կրտսեր աշխատակիցն է, ապա հավանականությունը մեծ է, որ այն հաջողություններ չի ունենա, իսկ երբ հեղինակը ստեղծագործական փորձով հարուստ տնօրենն է, ապա հաջողությունը երաշխավորված է: Որպես կանոն՝ գաղափարն իրականացնելու համար անհրաժեշտ է այն վստահել ամենահեղինակավոր ու փորձառու մասնագետներին (բիզնես PR-ում՝ PR գործակալությունների գործընկերներ, ընկերությունների PR բաժնի ղեկավարներ, բիզնեսի սեփականատերեր և այլք): Շուկայական հետազոտության ոլորտում այս մեթոդն իրականացվում է՝ հաճախորդի ներկայացուցիչներին հրավիրելով ֆոկուս խմբեր անցկացնելու:

Ժամանակի կառավարում: Յուրաքանչյուր գաղափար համապատասխանում է որոշակի ժամանակահատվածի: Անհրաժեշտ է հետևել անընդհատ փոփոխվող բիզնես միջավայրին, որպեսզի ժամանակ ունենաք մրցունակ գաղափարներ առաջարկելու և դրանք ժամանակին իրագործելու:

Գաղափարի հարմարեցում հաճախորդին: Ձեր կրեատիվ գործընթացի արտադրանքը հաջողությամբ վաճառելու համար դուք պետք է ձեր գաղափարները հարմարեցնեք հաճախորդների պահանջներին: Որպես կանոն՝ սա ընկերությունում կամ գործակալությունում մեկ կամ մի քանի մարդ է իրականացնում, ովքեր կորոշեն առաջարկվող նախագծի ճակատագիրը և որոնց վրա, իհարկե, պետք է կենտրոնանաք ձեր աշխատանքում: Անհրաժեշտ է հաշվի առնել նրանց մտածելակերպը և անհատականության տեսակը:

Կրեատիվ PR-ի գործառույթներն են.

- նպաստել բրենդի ստեղծմանը, ճանաչմանը, ապրանքանիշի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը,
- ապրանքանիշի նկատմամբ դրական վերաբերմունք և վստահություն ձևավորելը,
- ապրանքի և ընկերության հետ կապերը տեղափոխել հարմարավետ դաշտ:

Կրեատիվ PR ոլորտում առկա հիմնախնդիրներն են.

- կրեատիվ PR - գործունեության առաջադրանքների թյուրիմացության խնդիրը,
- կազմակերպություն - հաճախորդ փոխհարաբերությունը,
- ստեղծագործական PR ուղերձի սխալ ընկալման խնդիրը,
- օբյեկտիվ գնահատման համար ընդհանուր տեխնոլոգիաների բացակայությունը,
- PR գաղափարների և իրադարձությունների ստեղծագործականությունը,
- PR արտադրանքի ստեղծման ժամանակի խիստ կարգավորումը,
- գովազդի զարգացման համար ծառայությունների վճարման խնդիրները:

Եզրակացություն: Այսօր կրեատիվությունը պահանջված է այնքանով, որ կյանքը մեծ արագությամբ առաջ է ընթանում և նրա հետ զուգահեռ քայլելու համար պետք է ճկուն մտածողություն ունենալ: Առաջատար կազմակերպություններում նախընտրություն է տրվում այնպիսի PR մասնագետների, ովքեր կարողանում են համակցել կրեատիվությունը, հաղորդակցությունը, մարդասիրությունը և մասնագիտական գիտելիքները: Նման դեպքերում տվյալ ընկերությունը դառնում է մրցունակ՝ առաջ անցնելով մրցակիցներից: Տվյալ ոլորտը սպասարկող մասնագետը պետք է հասկանա, որ ցանկացած նոր միտք, ապրանք կամ առաջարկ մի օր հնանում է: Այդ իսկ պատճառով նա միշտ մեկ քայլ առաջ պետք է նայի՝ ընդունելով ոչ քարացած որոշումներ, որպեսզի հնարավոր լինի առաջատար դիրքերում պահել տվյալ կազմակերպությունը:

Ընդունված է, որ կրեատիվ մարդիկ հիմնականում օժտված են յուրահատուկ անձնային որակներով: Դա օգնում է նոր որոշումներ կայացնելիս աշխատակազմին տանել իրենց հետևից:

Կրեատիվությունը, ինչպես անձնային ցանկացած որակ, կարելի է զարգացնել և ընդարձակել: Կրեատիվության մակարդակի բարձրացման համար նախ և առաջ անհրաժեշտ է բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծումը: Շատ կարևոր է ապահովել մասնագետների մասնագիտական գիտելիքների, հմտությունների շարունակական զարգացումը, որոնք կնպաստեն մասնագիտական ոլորտում նրանց ինքնաիրացմանը:

Այսպիսով, հիմք ընդունելով կառավարման ոլորտում ընդունված ժամանակակից պահանջները, չափանիշները՝ ընդունելի է և

նպատակահարմար՝ կառավարման ոլորտում գործունեություն ծավալեն ստեղծարար մտածողություն ունեցող կառավարիչներ, ղեկավարներ և մենեջերներ, այսինքն՝ լուրջ հաջողություններ ակնկալելու համար կազմակերպության ղեկավարները պետք է ձգտեն ունենալ հետաքրքիր մտածողություն ունեցող այնպիսի մասնագետներ, որոնք իրենց տարբերվող ու ինքնատիպ մտածողության արդյունքում տվյալ ապրանքանիշի կամ կազմակերպության համար կդառնան բիզնեսի շահույթն ընդարձակող կարևորագույն օղակ:

ПРИМЕНЕНИЕ КРЕАТИВНОГО МЫШЛЕНИЯ И ЕГО ПРЕИМУЩЕСТВО ПРИ ОРГАНИЗАЦИИ РАБОТ СПЕЦИАЛИСТОВ

PR-СФЕРЫ

Абрамян Н. М.

Современный динамичный и непредсказуемый мир все чаще ставит перед руководителями организаций проблемные задачи, требующие нестандартных подходов и решений. Сфера PR предполагает еще большую гибкость и приспособляемость к конкретной ситуации.

Решения и последующие действия также зависят от особенностей общественной группы, PR,-деятельность которой направлена на решение конкретных задач, наиболее актуальных для развития компании.

Креативность включает в себя умение находить несколько ответов, каждый из которых может быть правильным, а главное,- создавать ситуацию, выбирая наиболее подходящие решения для каждой конкретной ситуации.

В сфере PR нужны нестандартные решения для планирования и организации коммуникативных шагов на разных этапах.

Ключевые слова: креативность, риск, инновации, творческое мышление, информация, подготовка, продукт, заказчик, критическое мышление, идея.

IMPLEMENTATION OF CREATIVE THINKING AND ITS ADVANTAGES FOR ORGANIZING PR ACTIVITIES

Abrahamyan N. M.

In the modern dynamic and unpredictable world the leaders of the organizations more and more frequently face problematic tasks that demand

unique approaches and decisions. The sphere of the Public Relations implies even more flexibility and adaptability to the certain situation.

Decisions and the following actions also depend on the peculiarities of the social group, the PR activities of which aim at solving certain tasks that are of current importance for the development of the company.

Creativity includes the ability to find several answers, each being right, and rather to create a situation choosing solutions that are most suitable for each concrete situation.

Public Relations sphere demands non-standard decisions for planning and organizing communicative steps at various stages.

Keywords: creativity, critical thinking, risk, information, innovation, preparation, creative thinking, product, customer, idea.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ильин Е. П., Психология творчества, креативности, одаренности Питер. 2009. 434 с.
2. PR в изменяющемся мире: Региональный аспект: сборник статей/ под ред. Барнаул. Алтайского государственного университета. 2012. 5 с.
3. blog.iteam.ru/kreativnyj-podhod-v-pr/, 21.02.12
4. www.asu.ru/files/documents/00005434.pdf
5. <https://creativepr.org/>, 04.2012
6. <https://paara.am/wp-content/uploads/2012/04/HK-2014-5.pdf>

Տեղեկություններ հեղինակի մասին

Աբրահամյան Ն. Մ. - մազիստրատորա 2-րդ կուրս

ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն, Կրթության կառավարում

Էլ. փոստ՝ abrahamyan-naira@bk.ru

Ստացվել է՝ 07.11.2022

Գրախոսվել է՝ 01.02.2023

**ԳՅՈՒՄՐԵՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԾԱՆՐՈՐԴՆԵՐԸ 2019-2021ԹԹ.
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐԵՐՈՒՄ (ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)
Գովեյան Ա. Ս.**

Աշխատանքում ներկայացվում է Հայաստանում ծանրամարտ մարզաձևի հիմնադրման և դրա աստիճանական զարգացման պատմությունը, ապա մանրակրկիտ լուսաբանվում է գյումրեցի երիտասարդ ծանրորդների մարզական նվաճումները միջազգային մրցաշարերում 2019-2021 թվականներին:

Քանալի բառեր. ծանրամարտ, երիտասարդ, Եվրոպա, աշխարհ, օլիմպիադա, միջազգային, մարզաձև, մրցաշար:

Արդիականությունը: Ծանրամարտ մարզաձևը, ի թիվս այլ մարզաձևերի, Գյումրի քաղաքում առաջատար դիրք է գրավում: Քաղաքում գործող ինչպես մասնագիտական մարզադպրոցներում, այնպես էլ մարզական ընկերություններում գործում են ծանրամարտի խմբեր, որտեղ աշխատում են չորս տասնյակից ավել մարզիչներ, որոնք ունեն շատ բարձր որակավորում, որոնք, չնայած փոքրաթիվ մարզիկ – մարզուհիների, հասնում են լուրջ հաջողությունների, որը դառնում է ուսումնասիրության առարկա:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գյումրեցի երիտասարդ ծանրորդների 2019-2021թթ.-ի միջազգային առաջնությունների արդյունքները, անել համապատասխան եզրահանգումներ և պատրաստվել 2023թ.-ին Երևանում անցկացվող Եվրոպայի առաջնությանը:

Ծանրամարտը՝ որպես մարզաձև, իր առաջին քայլերն է արել Լենինականում դեռևս 1925 թվականին մարզիչ Վ. Ղասաբյանի ղեկավարությամբ: 1926 թվականից մարզիկները սկսեցին մասնակցել ինչպես հանրապետության, այնպես էլ անդրկովկասյան առաջնություններին՝ ցուցաբերելով բարձր արդյունքներ [1]:

1927-1928թթ. Անդրկովկասյան մրցույթներում լավագույն ցուցանիշներով աչքի են ընկել լենինականցի ծանրորդներ Գ. Փարսադանյանը, Գ. Մինասյանը, Խ. Մանդալյանը, որոնք ցույց են տվել ԽՍՀՄ-ում 3-րդ 4-րդ արդյունքները: Այսպես, հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի կայացման ընթացքում Լենինականում ձևավորվեց կայուն կողմնորոշում դեպի ծանրամարտը [1]:

«Ծանրամարտ» մարզաձևը թոնիչքային զարգացում ապրեց հատկապես 70-ական թվականներին, որում իր դրական ազդեցությունը ունեցավ Լենինականի մանկավարժական ինստիտուտում բացված ֆիզիկական դաստիարակության բաժինը, որտեղ պրոֆեսորադասախոսական կազմի մեջ էր նաև Անդրկովկասյան հանրապետությունների սպարտակիադանների հաղթող և ռեկորդակիր, ծանրամարտիկ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Մինասյանը: Նա քաղաքում գործող փորձառու մարզիչների հետ իր ներդրումը ունեցավ աշխարհառջակ ծանրամարտիկներ Վ. Միլիտոսյանի, Յ. Վարդանյանի, Խ. Քյափանակցյանի, Ա. Կարապետյանի, Ա. Միլիթարյանի, Հ. Փիլոսյանի և ուրիշների կայացման գործում, որոնք հետագայում դարձան բարձրակարգ մարզիչներ և ղեկավարեցին ինչպես քաղաքի, այնպես էլ հանրապետության ծանրամարտի հավաքականները [2]:

Լենինականի ծանրորդները այդ թվականներին ԽՍՀՄ հավաքականի կազմում նվաճել են ոչ միայն աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, այլև օլիմպիական խաղերի ոսկին և արծաթը: Այդ տարիներին Լենինականում այս հաջողությունները ընդունվում էին որպես ինքնին հասկանալի, օրինաչափ երևույթ, իսկ մոսկովյան կենտրոնական մամուլում մեր մարզիկների հերթական հաղթանակների առիթով կարելի էր հանդիպել հետևյալ արտահայտությանը. «Դե, իհարկե, նա լենինականցի է» [4]:

Ներկայացնենք նրանց՝ ըստ ժամանակագրական հաջորդականության:

ԽՍՀՄ ծանրամարտի հավաքականի կազմում 1976 թվականին Մոնրեալի օլիմպիական խաղերում Վ. Միլիտոսյանը դարձավ արծաթե մեդալակիր:

Յ. Վարդանյանը 1980թ.-ի Մոսկվայի օլիմպիական խաղերում նվաճեց ոսկին՝ սահմանելով 5 համաշխարհային ռեկորդ: Ի. Միլիտոսյանը 1988թ. Սեուլի օլիմպիական խաղերում նվաճեց արծաթե մեդալը, իսկ 1992թ.-ին Բարսելոնայի օլիմպիական խաղերում դարձավ ոսկե մեդալակիր [5]:

1994թ. նորանկախ Հայաստանի ծանրամարտիկները հաջողությամբ մասնակցում էին ինչպես Եվրոպայի և աշխարհի առաջնություններին, այնպես էլ օլիմպիական խաղերին: Այսպես, նույն թվականին Ս. Չախոյանը դարձավ Ստամբուլի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր: Նույն հաջողությունը 1995 թվականին կրկնեց

Ա.Կարապետյանը Գուանչժոուի աշխարհի առաջնությունում: 2006-2007թթ. աշխարհի առաջնությունների արծաթե և բրոնզե մեդալակիրներ դարձան Մելինե Դալուզյանը, Վ. Տ. Մարտիրոսյանը, Գ. Դավթյանը, Ա. Խաչատրյանը: Բեղմնավոր էր 2008թ.-ի Պեկինի օլիմպիական խաղերը, որտեղ հայ ծանրորդներ Տ. Վ. Մարտիրոսյանը և Տ. Գ. Մարտիրոսյանը նվաճեցին արծաթե, իսկ Գ. Դավթյանը՝ բրոնզե մեդալ: 2009թ.-ին Գյումրու մարզիկները փայլեցին նոր հաջողությամբ: Մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի Նազիկ Ավդալյանը Գոյանգոյում դարձավ աշխարհի հայազգի առաջին կին չեմպիոնը, նույն թվականին Տ.Գ.Մարտիրոսյանը նվաճեց աշխարհի բրոնզե մեդալը: 2010թ.-ից մինչև 2020թ.-ը գյումրեցի ծանրորդներ Տ. Գ. Մարտիրոսյանը, Մ. Դալուզյանը, Գ. Մինասյանը, Վ. Լալայանը դարձել են ինչպես աշխարհի առաջնությունների, այնպես էլ օլիմպիական խաղերի չեմպիոններ և մրցանակակիրներ [7]: Ուրախությամբ պետք է նշել, որ նրանք բոլորն էլ սովորել և ավարտել են Գյումրու մանկավարժական ինստիտուտի ֆիզդաստիարակության բաժինը:

Այսօր Գյումրիում կա 20 օլիմպիական չեմպիոն և մրցանակակիր, որոնցից 15-ը ծանրամարտիկներ են: Ինչպես նախաբանում նշել էինք, 70-80-ական թվականներին գյումրեցի ծանրորդները մարզչական մեծ փորձ էին ձեռք բերել և իրենց փորձը հաղորդել ապագա սաներին, որոնք էլ Գյումրիում մշակված մեթոդներով կարողացան ավելի զարգացնել մարզաձևը և հասնել հաջողությունների: Նրանցից Գյումրու մանկավարժական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ ՀՀ վաստակավոր մարզիչ Ա. Մխիթարյանը 1997 թվականից եղել է ՀՀ ծանրամարտի պատանեկան և երիտասարդական հավաքականների ավագ մարզիչ: 2006 թվականից նշանակվել է ՀՀ ծանրամարտի հավաքականի ավագ մարզիչ: Նա իր մարզչական գործունեության ընթացքում պատրաստել է 34 սպորտի վարպետներ, 12 միջազգային կարգի սպորտի վարպետի կոչումով մարզիկներ: Անձամբ իր մարզած սաները օլիմպիական խաղերում, աշխարհի ու Եվրոպայի տարբեր տարիքային առաջնություններում վաստակել են ավելի քան 120 ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ: Նա մի շարք ուսումնամեթոդական աշխատանքների հեղինակ է:

Այսօր Գյումրիում ծանրամարտի մասնագիտացված մարզադպրոցներում աշխատում են շուրջ 4 տասնյակ բարձրակարգ մարզիչներ, որոնցից 13-ը՝ վաստակավոր մարզիչներ, 10-ը՝ միջազգային կարգի սպորտի վարպետ, իսկ մնացածները՝ սպորտի վարպետներ:

Ուսումնասիրության արդի ժամանակաշրջանում Գյումրիում տեղի է ունենում սպորտային ավանդույթների վերածնունդ, նոր ավանդույթների և նախասիրությունների ձևավորում: Այսպիսով, գյումրեցի մարզիկների համար առաջնային սպորտաձև եղել և մնում է ծանրամարտը: Կարևորվում է այն փաստը, որ 2019-2021թթ. ընկած ժամանակաշրջանում ծանրամարտ մարզաձևում գյումրեցի մարզիկները դարձել են նորաձևության թելադրողներ Հայաստանում և միջազգային մրցահարթակներում:

2019թ. երիտասարդների՝ Եվրոպայի մինչև 20 տարեկանների առաջնությանը, որը անցկացվում էր Ռումինիայում, հավաքականը ներկայացավ 9 հոգանոց թիմով: Նրանցից 5-ը գյումրեցիներ էին, և թիմի նվաճած 14 մեդալներից 9-ը բաժին հասավ գյումրեցիներին [աղ. 1]:

Աղյուսակ 1.

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՔԱՇ. ԿԱՐԳ	ՊՈԿՈՒՄ	ՀՐՈՒՄ	ԸՆԴ	ԳՐԱՎԱԾ ՏԵՂ	ՄԱՐԶԻՉ
ՀԱՐՈՒԹՈՒՆՅԱՆ ՌԱՏԻԿ	81	150	190	340	3	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՂԱՆՅԱՆ ԱՐԱ	89	162	196	358	2	ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԼԱԼԱՅԱՆ ՎԱՐԱԶՂԱՏ	+109	194	230	424	1	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՅԱՇԱ	109	158	200	358		ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Աղյուսակ 2.

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՔԱՇ. ԿԱՐԳ	ՊՈԿՈՒՄ	ՀՐՈՒՄ	ԸՆԴ	ԳՐԱՎԱԾ ՏԵՂ	ՄԱՐԶԻՉ
ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱԿՈԲ	89	165	210	375	1	ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ	109	176	214	390	1	ԵՂՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

2019թ. 20-23 տարեկանների Եվրոպայի առաջնությունը կայացավ Ռումինիայում: Հայաստանը մասնակցեց 7 ծանրորդներով, նրանցից 3-ը գյումրեցիներ էին, որոնք նվաճված 12 մեդալներից 6 ոսկու հեղինակներ դարձան [աղ. 2]:

2019թ. Ֆիջի կղզում կայացած երիտասարդների աշխարհի առաջնությանը Հայաստանից մասնակցեցին 4 ծանրորդ: Նրանց

նվաճած 6 մեղալից 3 ոսկին գյումրեցի Վարազդատ Լալայանին էր [աղ. 3]:

Աղյուսակ 3.

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՔԱՇ. ԿԱՐԳ	ՊՈԿՈՒՄ	ՀՐՈՒՄ	ԸՆԴ	ԳՐԱՎԱԾ ՏԵՂ	ՄԱՐԶԻԶ
ՎԱՐԱԶԴԱՏ ԼԱԼԱՅԱՆ	+109	192	227	419	1	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

2019թ. Ուզբեկստանում կայացած երիտասարդների աշխարհի առաջնությանը Հայաստանի հավաքականը մասնակցեց 5 մարզիկներով, որոնցից 3-ը Գյումրիից էին: Հավաքականի նվաճած 7 մեդալներից ամենաբարձրը գյումրեցի Գարիկ Կարապետյանի 3 ոսկե մեդալներն էին [աղ. 4]

Աղյուսակ 4.

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՔԱՇ. ԿԱՐԳ	ՊՈԿՈՒՄ	ՀՐՈՒՄ	ԸՆԴ	ԳՐԱՎԱԾ ՏԵՂ	ՄԱՐԶԻԶ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՐԻԿ	96	162	193	335	1	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

Ֆինլանդիայում մինչև 20 տարեկանների երիտասարդների Եվրոպայի առաջնությանը Հայաստանը ներկայացավ 7 մարզիկով, ու նվաճեցին 19 մեդալ, որոնցից 7 -ը գյումրեցիներին էր [աղ. 5]:

Աղյուսակ 5.

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՔԱՇ. ԿԱՐԳ	ՊՈԿՈՒՄ	ՀՐՈՒՄ	ԸՆԴ	ԳՐԱՎԱԾ ՏԵՂ	ՄԱՐԶԻԶ
ԶՈԼԱԿՅԱՆ ԳԱՌՆԻԿ	49	100	130	230	1	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՐԻԿ	96	166	190	356	2	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԳԵՎՈՐ	89	145	196	341	3	ՓԻԼՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ

Ֆինլանդիայի նույն մրցաշարի 20-23 տարեկանների Եվրոպայի առաջնությանը, որին Հայաստանը մասնակցեց 6 մարզիկով, նվաճված 14 մեդալներից 6 ոսկին և 2 արծաթը բաժին հասան գյումրեցիներին [աղ. 6]:

Աղյուսակ 6.

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՔԱՇ. ԿԱՐԳ	ՊՈԿՈՒՄ	ՀՐՈՒՄ	ԸՆԴ	ԳՐԱՎԱԾ ՏԵՂ	ՄԱՐԶԻԶ
ՎԱՐԱԶԴԱՏ ԼԱԼԱՅԱՆ	+109	206	241	247	1	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՐՈՒԹՈՒՆՅԱՆ ՌԱՖԻԿ	81	155	190	345	1	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՐԱ ԱՂԱՆՅԱՆ	96	166	197	363	2	ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

2019-2021թթ. Հայաստանի երիտասարդների հավաքականի մարզիկները մասնակցեցին միջազգային 6 մրցաշարերի 38 մարզիկով: Նրանցից 20-ը գյումրեցի էին: 6 մրցաշարերից ընդհանուր հաշվարկով գյումրեցիները նվաճեցին 36 մեդալ, որից 20 ոսկե, 12 արծաթե և 4 բրոնզե [8]:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգում ենք հետևյալ եզրահանգումների:

- ✓ Լենինական-Գյումրին, լինելով մշակույթի քաղաք, միշտ աչքի է ընկել արվեստների, արհեստների, գրականության, թատրոնի, երաժշտության և սպորտի բնագավառում:
- ✓ Սպորտը և ֆիզիկական դաստիարակությունը զարգանում է ոչ թե անկախ, այլ որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մաս՝ շատ դեպքերում ոգեշնչվելով մշակութային վերելքներից, այնպես էլ ոգեշնչելով մշակույթի այլ ոլորտների:
- ✓ Գյումրեցի մարզիկների հաղթանակները միջազգային մրցույթներում իրանում են հիշյալ մարզաձևի զանգվածային դառնալը:

Համոզված ենք, որ Գյումրիում ծանրամարտի ասպարեզում կգրանցվեն առավել բարձր արդյունքներ, եթե քաղաքը ունենա միջազգային չափանիշներին համապատասխան մարզաբազաներ՝ բարձրակարգ մրցաշարեր անցկացնելու համար:

МОЛОДЫЕ ГЮМРИЙСКИЕ ТЯЖЕЛОАТЛЕТЫ В МЕЖДУНАРОДНЫХ СОРЕВНОВАНИЯХ 2019-2021 ГОДОВ

Говелян А. С.

В работе автор рассматривает историю основания и развития тяжелой атлетики в Армении, а также подробно представляет спортивные достижения молодых гюмрийских атлетов на международных соревнованиях в период с 2019-2021 годы.

Ключевые слова: тяжелая атлетика, молодежь, Европа, мир, олимпиада, соревнования, международный.

GYUMRI YOUNG WEIGHTLIFTERS IN INTERNATIONAL
COMPETITIONS BETWEEN 2019-2021 (GENERAL OVERVIEW)

Govelyan A. S.

The article presents the history of the foundation and development of weightlifting in Armenia. The author describes in detail the sport achievements of Gyumri young athletes at international competitions from 2019-2021.

Keywords: weightlifting, young, Europe, world, Olympiad, international, sport, tournament.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մաթևոսյան Ա., Աղանյան Գ. «Լենինականի մարզական ձեռքբերումները /1975-1988թթ./»: Գյումրի: 2017թ: «Էլդորադո»: 2017թ: 65 էջ:
2. Матевосян А. В., Оганесян Р. Г., Пакеджян А. А. Спортивные достижения Лениакана: Традиции и современность 1978-1988гг. “Справочно-методическое пособие”. Ереван. 1990. 56 с.
3. Մխիթարյան Ա. «Հայ պատանի ծանրորդները Եվրոպայի առաջնություններում 1996-2005թթ.»: Գյումրի: 2009: «Դպիր»: 48 էջ:
4. Մաթևոսյան Ա. «Ֆիզիկական կուլտուրայի կազմակերպման հիմնախնդիրները Հայաստանում XX դարում»: Գյումրի: 2008թ.: «Դպիր»: 70 էջ:
5. Ղարազյոզյան Վ. Ծանրամարտ, Երևան, 1999թ.: «Գրական վերնատուն»: Երևան: 650 էջ:
6. Աղաբաբյան Վ., Սահակյան Հ. Մարզական Գյումրի, 1920-1993թ.: «Դպիր»: Գյումրի: 2004թ.: 215 էջ:
7. Армения на летних Олимпийских играх 2020. Википедия https://ru.wikipedia.org/wiki/Армения_на_летних_О..15-10-2022թ.
8. International Weightlifting Federation -<https://iwf.sport> 10-10-2022թ.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Գովելյան Ա. Ս. - մագիստրատուրա 2-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժություն և հոգեբանություն ֆակուլտետ, Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ

Էլ. փոստ՝ fizkult4.1718@gmail.com

Գիտական ղեկավար՝ Մաթևոսյան Ա., պրոֆեսոր

Ստացվել է՝ 21.10.2022

Գրախոսվել է՝ 27.01.2023

**ՏԻԵԶԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ (ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)
Արշակյան Ա. Ս.**

«Ով կառավարում է անցյալը, նա կառավարում է ապագան, ով
կառավարում է ներկան, կառավարում է անցյալը»:

Ջորջ Օրուել

Հոդվածը նվիրված է հայոց հնագույն աշխարհայացքը, նախապատմական և հեթանոսական շրջանի պատմությունը վերականգնելու կարևորությանը, հին հայերի գիտելիքների տիրապետման առանձնահատկություններին: Հնագույն շրջանից սկսած՝ հայերը շատ լավ զգում ու գիտակցում էին, որ ապրում են բնության գրկում և հանդիսանում են նրա մի մասնիկը: Մարդու կենսագործունեությունը, նրա ֆիզիկական գոյությունն իսկ անմիջականորեն կախված էին շրջապատող աշխարհից: Մեր նախնիներն աստիճանաբար սովորեցին դիտարկել և իմաստավորել առանձին երևույթներ երկրի վրա ու երկնքում, ինչը ժամանակի ընթացքում հանգեցրեց աշխարհի մասին անմիջական պատկերացումների (այդ թվում՝ ամբողջական), այսինքն՝ աշխարհայեցության ձևավորմանը, «փորձնական գիտելիքների» աստիճանական կուտակմանը, որոնք անթիվ տարերային դիտարկումների արդյունք էին, և որոնցում արտացոլվում էին բնական երևույթների կրկնողությունն ու որոշակի հաջորդականությունը:

Բանալի բառեր. Ար, հայ, ժայռապատկեր, աշխարհայացք, ծագումնաբանություն, պատկերագրություն, խորհրդաբանություն:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել հայոց հեթանոսական աշխարհայեցությունը, նրա նախադրյալները, նախնադարյան հայերի գիտակցության ձևերը մեզ հասանելի սահմաններում, մանավանդ հնագույն քաղաքակրթությունների պատմությունները մինչ այժմ լի են անհասկանալի և անբացատրելի փաստերով և կեղծիքներով: Թեման արդիական է, քանի որ ներկայիս համաաշխարհայնացման պայմաններում անընդմեջ փորձում են կեղծել և խեղաթյուրել հին ազգերի, հատկապես հայերի պատմությունը և այն մոռացության մատնել: Հոդվածում ներկայացվում է այն վարկածը, որ Հայկական

լեռնաշխարհում ծագած հայկական քաղաքակրթությունը աշխարհում առաջիններից է եղել և հանդիսանում է մնացած շատ քաղաքակրթությունների բնօրրանը:

Խուրի-ուրարտական և հնդեվրոպական ցեղերի բազմաթիվ և բազմաձև փոխազդեցությունների կոնկրետ դրսևորումը եղավ հայկական էթնոսի առաջացումը: Հայկական լեռնաշխարհի խայտաբղետ ցեղային կազմավորումներին պիտի փոխարիներ հայը՝ Հայկական լեռնաշխարհի առաջին իրական ու կայուն ժողովուրդը: Լեզվական, հնագիտական, մշակութային, ազգագրական և առհասարակ պատմական աղբյուրների բազմակողմանի պրպտումները բերում են աներկբա եզրակացության, որ հայ ժողովուրդը սկսել է կազմավորվել Հայկական լեռնաշխարհում դեռևս այն ժամանակաշրջանից, երբ այդ տարածքի վրա և նույնիսկ նրա շուրջը գոյություն չունեին հնդեվրոպական լեզուներով խոսող ցեղեր և ժողովուրդներ [2, էջ 190]: Հայերը (արմենոիդ ռասան) ծագել և զարգացել են ի սկզբանե Հայաստանում՝ Արարատ սարի, Սևանա լճի շուրջը և Հայկական լեռնաշխարհում, Վանա տարածքում, հետո տարածվել են ողջ Կովկասով, Միջագետքով և Փոքր Ասիայով և ամենասկզբից եղել են այդ բոլոր տարածքների միակ բնակիչները մինչև Ք.ա. 4-3-րդ հազարամյակները [14, էջ 5]: Հայկական լեռնաշխարհի տարածքը եղել է քարի դարի մարդու և նրա ծագման ու արագ զարգացման բարենպաստ վայրը: Այդ տարածքում կատարված հնագիտական պեղումները, մասնավորապես ժամանակակից Հայաստանում, հայտնաբերել են քարի դարի մարդու բազմաթիվ բնակավայրեր ու իջևանատեղեր նրա հազարավոր քարե գործիքներով (օբսիդիանից, բազալտից), կավե ամանեղենով, օջախներով, ոսկորներով և այլն:

Պատմաբան Շ. Մկրտչյանը պատմում է, որ Ազոխ գյուղի մոտակայքում մի հսկայական, 3000 քառ. մետր չափերի քարանձավ է պեղվել (մինչև 7 մ խորության)՝ քարի դարի մարդու մեծ իջևանատեղով: Գլխավոր բացահայտումը եղել է քարի դարի մարդու ներքնի ծնոտը. այդ մարդն ապրել է 100-50 հազար տարի առաջ: 1979 թվականին հնագետների միջազգային խումբը նրան անվանել է «Ազոխացի» և համարել «մարդկային քաղաքակրթության հնագույն բնակավայրի նշանավոր հայտնաբերումը» [15, էջ 76]:

Հարկ է նշել, որ հարևան հին ժողովուրդների լեզենդներում առաջին մարդը նույնպես ներկայացված է որպես հայ, օրինակ՝ շումերական առասպելներում առաջին մարդու անունը «ՀԻ» կամ ՀԱՅ է

եղել, այսինքն՝ այնպես, ինչպես մենք մեզ անվանում ենք: Ջրադաշտական կրոնում (Իրան) առաջին մարդու անունը ՀԱՅՈՄԱՐԴ է եղել, այսինքն՝ «հայ-ո-մարդ=սուրբ հայ մարդ» [12, էջ 175], բոլոր այս համընկնումները պատահական չեն:

Կարծում ենք, հայերը իրենց պետության մեջ ապրել են բարության, հավասարության, ազատության և առաջընթացի մթնոլորտում: Դա եղել է երկարատև խաղաղության ժամանակաշրջան՝ մինչև Ք.ա. 3-րդ հազարամյակի կեսերը, երբ նոր ձևավորված Բաբելոնի գործերը Բելի գլխավորությամբ եկան՝ Հայաստանը գրավելու: Դա առաջին մեծ պատերազմն էր աշխարհում, որը տեղի է ունեցել Վանա լճի մոտակայքում: Այս բանակը (հսկաների) ջախջախվեց «ընդոծիներից» և Հայկի սերունդներից կազմավորված հայկական բանակի կողմից Հայկի ղեկավարությամբ (հավանաբար Ք.ա. 2492թ.), երբ Հայկը սպանեց Բելին:


Հայերի կյանքում իբրև բնապաշտական դրսևորում(ինչպես նաև բոլոր կենդանիների և բույսերի համար) կյանքի զարգացման և ուրախության ֆենոմեն եղել է արևը, որը պարզևում էր լույս ու տաքություն, ինչից կախված էր նրանց գոյությունը:

Հայերը դիմում էին արևին (Ար-ին)՝ խնդրելով օգնել, երբ իրենք դժվարության մեջ էին, ու շնորհակալ էին նրան: Նրանք խոսում էին արևի հետ հայերեն, որն առաջին լեզուն էր, Աստծո լեզուն: Արև-Աստված եղել է հայերի հայրը, Ար-Հայր Գլխավոր Աստված, և հայերը նրա զավակներն էին, արիացիները՝ «Ար-յան»=(մարդիկ) Արևի երկրից: Նրանք գիտեին, որ Արևը լույս է տալիս, տաքություն ու կյանք բոլոր մարդկանց, կենդանիներին ու բույսերին, այսինքն՝ Արարիչն է ողջ Երկրի, Գլխավոր Աստվածն է: Նրա լրիվ անունը եղել է «ՄԵԾՆ ՈՒ ԱՐԻ ԱՐ-ՀԱՅՐ ԱՍՏՎԱԾ»: Փաստորեն հայերը միշտ հավատացել են մի Աստծո, Ար-ին [12, էջ 148]: Պատմաբան Լ. Շահինյանը գտնում է, որ հայերի հավատքը՝ Ար-ը, եղել է Երկնքի ու Երկրի Արարիչը, Գլխավոր Աստված և մնացած աստվածների հայրը [10, էջ 4]: Անհրաժեշտ է նշել, որ ավելի ուշ, երբ գիտելիքներ էին կուտակվել աստղերի և համաստեղությունների մասին (գուցե Քարահունջի կառուցման ժամանակից էլ առաջ, մոտ 15-10 հազարամյակ առաջ), հայերը հասկացել էին, որ գոյություն ունի մի ամբողջ տիեզերք, «Աստծո» կոնցեպցիան ընդլայնվել էր՝ տարածվելով ողջ Տիեզերքի վրա: Սա արտահայտված է «Աստված» հին հայերեն բառում, ուր «Աստ»-ը նշանակում է ամենուր, այսինքն՝ Տիեզերք, և «ված»-ը նշանակել է հավանաբար տարածված, սփռված: Այսպիսով, Աստվածը մի էություն է,


որը սփռված է ողջ Տիեզերքում, ամենուրեք է: Արևը Տիեզերքի մի մասն է, Տիեզերքի՝ մեզ ամենամոտ գտնվող և գորեղ ներկայացուցիչը (օբյեկտը):

Բնության պատրաստի ձևերի յուրացումից հետո արտադրող աշխատանքին անցումը զուգորդվում էր մարդու և բնության հարաբերությունների բարդացմամբ, իսկ անմիջապես պատկերացումները՝ ավելի ամբողջական ու համալիր պատկերացմամբ: Աշխարհայացքային առումով հատկապես հետաքրքրական են այն ժայռապատկերները, որոնք արտացոլում են երկնային երևույթների, աստղային երկնքի անմիջական հայեցողության և ընկալման արդյունքները: Նախահայերի պատկերացմամբ՝ արևի աստվածությունը ցերեկային ճանապարհն անցնում է հրե ձիու կամ երկնային ցուլերի միջոցով: Հետագոտողների կարծիքով, եթե ձին և ցուլը արևի մշտական ուղեկիցներն են, ապա թռչունները խորհրդանշում են գարնանային արևը, իսկ առյուծները՝ ամառային [9, էջ 30]:

Նախնադարյան կրոնի ու պաշտամունքի հետ կապված՝ հարյուրավոր իրերի ու առարկաների վրա, մանավանդ ժայռապատկերների կոմպոզիցիաներում, մեր հեռավոր նախնիները փորագրել, քանդակել, գծագրել են բազմապիսի ձևերի ու ոճերի արևի բյուրավոր սկավառակներ, որոնք ցույց են տալիս արևապաշտության անսահմանափակ տարածքն ու հարատևումը: Այդ պաշտամունքի դասական սահմանումը գտնում ենք Եզնիկ Կողբացու մոտ (V դ.). «Եվ այնու կենդանութեամբ, ասեն, ամենայն արարածք զնորա բնութենէն կախեալ կան, որպես ճառագայթք արեգական զանունէն էն կախեալ կան: Եվ ինքն մի է, և բազում, և բազում է, և մի որպես արեգակն մի է և բազում, զի մի անիվ է և բազում ճառագայթք»: Եզնիկի նկարագրած արևանիվը հանդիպում է չորս, ութ, տասը և «բազում» ճառագայթներով, շատ հաճախ խաչաձև միջուկով, ներքին համակենտրոն շրջանակներով, ուղիղ և տերևաձև ճառագայթներով (տե՛ս 1-2), խեցեղենի, մետաղե առարկաների, գոտիների, ժայռապատկերների վրա այնպիսի առատությամբ ու շքեղությամբ, որ արժե նրանց մասին հիշատակել [8, էջ117]:



1.Արևածագի (երկու պահի)
ժայռապատկեր (Ք.ա. 5-րդ հազարամյակ)
(Մյունիք)



2.Արևի պատկերագիր

Բազմաթիվ և բազմաբնույթ նյութերի վերլուծությունը ցույց է տվել, որ հնագույն Հայաստանում տիեզերքն ընկալվում էր որպես ամբողջություն՝ բաղկացած երեք մասերից՝ վերին (երկինք, երկնային ծով), միջին (երկիր) և ստորին (ներքին ծով, այնկողմյա աշխարհ) [16, էջ 128]:

Մեր հեռավոր նախնին այնքան էր հավատում երկրի ու երկնի միասնությանը, որ նույնիսկ աստղերն ու համաստեղությունները նմանեցնում էր զանազան կենդանիների և կոչում նրանց անուններով: Այդպես անհիշելի ժամանակներում առաջացել ու պահպանվել են «Կույս», «Աղեղնավոր», «Երկվորյակներ», «Խոյ», «Ցուլ», «Առյուծ», «Շուն» և այլ անվանումները: Երկրի կլորության նախասկզբնական և մեկընդմիջտ նախնադարյան մարդուն արված կռահումը ապրում էր նրա հետ հազարամյակներ անընդհատ: Թեև այդ տեսությունը իր առաջին գրավոր ձևակերպումը, մեկնաբանություններն ստացավ Ք.ա. VI դարի երկրորդ կեսին՝ Պյութագորասի դպրոցի կողմից, սակայն մարդու մտապատկերի մեջ այդ գաղափարը ծագելու համար պետք չէր սպասել մինչև հույն հանճարեղ գիտնականի ժամանակաշրջանը: Պատահական չէ, որ Հայաստանի ժայռագրերում Երկիրը Երկնքի, Արևի, Լուսնի նման պատկերվում է շրջանաձև գծագրությամբ՝ ներքևից ավելացված մի գծիկով՝ միայն: Տոլոբսի, Վարդաքարի ուշ բրոնզեդարյան դամբարանադաշտերում և այլուր հայտնաբերվել են բրոնզե թիթեղից պատրաստված մեծ մեդալիոններ, որոնք բաղկացած են համակենտրոն շրջաններից և պատկերվում են ցլագլուխ ֆիգուրից, որ Բ. Ե. Թումանյանի ասելով՝ հիշեցնում է աստղագիտության մեջ այժմ օգտագործվող «երկիր» նշանը: Մեդալիոնի համակենտրոն շրջանների թիվը երեքն է, որ հեշտությամբ կարելի է համատեղել երկրի ու նրան շրջապատող ջրի ու մթնոլորտի օղակների հետ [8, էջ 144]:

Հռչակավոր հայ աստղագետ, մաթեմատիկոս և փիլիսոփա Անանիա Շիրակացին իր «Տիեզերագիտություն և ժամանակագրություն» աշխատության մեջ հիշատակում է հայ հնագույն իմաստունների պնդումը, որ Երկիրը կլոր է, և մարդիկ ու կենդանիները ապրում են նրա բոլոր կողմերում [11]: Այս հնագույն գիտելիքի շատ հետաքրքիր հաստատումն է փորագրված ժայռապատկերը Ք.ա. 5-րդ հազարամյակին (տե՛ս 3) Սևանա լճի մոտակայքում [16]:



3. Ժայռապատկեր Սևանա լճի մոտակա լեռներում (մոտ. Ք.ա. 5-րդ հազ.)

Հին Հայաստանի արվեստում բնության հիմնական շարժիչ ուժը մարդն է: Ժայռապատկերները իրենց բնույթով պարզ պատկերացում են տալիս ժամանակի կյանքի մասին:

ՀՀ-ում հնագույն ժայռապատկերը գտնվել է Ջերմուկում, որը հիշեցնում է փիղ կամ մամոնտ (տե՛ս 4-5), հավանաբար բնորոշ վերին պալեոլիթին: Կատարման տեխնիկայով այն նկար է, ոչ թե փորագրություն: Հաջորդ ժամանակաշրջանին են վերաբերում Արագածի քարայրային նկարները՝ որսի տեսարաններ՝ առանց շան (տե՛ս 6) [13, էջ 10]:



4. Մամոնտի կմախք, որը պեղված է Հայաստանում

5. Քարե դարի մարդու նկարած մամոնտը

6. Որսի տեսարան Արագածից (Ջաղաներ)

Հին հայկական աշխարհայեցողության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նաև առասպելական էակները՝ երկգլխանի օձեր, վիշապներ և երևակայական այլ կենդանիներ, որոնք հանդիպում են նաև հայ ժողովրդական բանահյուսության հուշարձաններում: Ժայռապատկերների աստվածությունների շատ ատրիբուտներ և գործառույթներ պահպանվել են հին հայկական աստվածների՝ Վահագնի և Միհրի կերպարներում, Վահագնի և Արտավազդի մասին առասպելներում, ժողովրդական էպոսի հերոսների՝ Սանասարի և Բաղդասարի կերպարներում:

Ըստ ակադեմիկոս Մ. Աբեղյանի՝ հին հայերը մարդկային հոգիները նույնացնում էին համաստեղությունների հետ: Հոգին ընկալվում էր որպես լույս կամ փայլ, որովհետև կենդանի մարդու հոգին նույնականացվում էր ճառագայթող գնդի հետ: Աստղերի հետ էր կապվում նաև մարդու մարմինը, նրա զորությունը: Որպես օրինակ՝ նա բերում է տարածված այն պատկերացումը, որ, երբ հերոսը դժվարին կացության մեջ էր հայտնվում, նրա աստղը սկսում է մարել, իսկ ճակատամարտի ժամանակ նրա աստղը կռվում է հակառակորդի աստղի հետ [1, էջ 238]:

Բրոնզի դարում բացահայտվել են աշխարհի, մասնավորապես աստղային երկնքի քանակական և որակական մի շարք կարևոր օրինաչափություններ.

1. Ժայռապատկերներում երկնային լուսատուները փորագրված են ճշգրիտ դիտումների հիման վրա:

2. Ք.ա. VI-V հազարամյակից սկսած՝ տարբերակվում են ոչ միայն Արևն ու Լուսինը, այլև անզեն աչքով տեսանելի մոլորակները, համաստեղությունները, որոնք Ք.ա. 3-րդ հազարամյակում արտահայտվում են համապատասխան պատկերներով ու նշաններով:

3. Նախահայերի դիցաբանահյուսական գիտակցության մեջ աշխարհի որակական յուրացմանը զուգընթաց արտացոլվել են նաև որոշ կարևորագույն քանակական հարաբերություններ և օրինաչափություններ: Մեր նախնիները, դիտելով երկնային մարմնի շարժումը և բացահայտելով որոշակի օրինաչափություններ, բրոնզի դարում տարբերում էին ծավալի, մեծության, ժամանակի և տարածության չափերը, երկնականարում՝ արևի տարբեր դիրքերը, երկար, կարճ և միջին օրերը, որոշում էին հեռավոր և մերձավոր աստղերի տարբերությունը, տեսանելի մոլորակների ու համաստեղությունների քանակը, լուսատուների դիրքի և ձևի քանակական փոփոխությունները և այլն [8, էջ 188]:

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ աստղային երկնքի մասին նշված պատկերացումները դուրս էին գալիս սոսկ կրոնապաշտամունքային շրջանակներից և կազմում դիտումների վրա հիմնված բնագիտական գիտությունների մի համակարգ, որի էությունը խարսխված էր երկնային լուսատուների շարժման, հետևաբար՝ նաև ժամանակի կատեգորիաների վրա: Տարածությունը և ժամանակը փիլիսոփայական-տիեզերաբանական հիմնական հասկացություններ են, որոնց ընկալման և իմաստավորման հիմքում ընկած էր շարժման կատեգորիայի գիտակցումը: Տարածությունը՝ իբրև տարածականության (երկայնության) ընկալում, նախորդում էր ժամանակի ընկալմանը: Վերջինիս առաջին ձևն էր ցիկլային ժամանակը, ինչը զուգորդվում էր կրկնողության հետ:

Այսպիսով՝ հայկական հնագույն աշխարհայացքում ձևավորվում են մտածողության հիմնական գաղափարներն ու սկզբունքները, իդեալները, որոնք դառնում են ազգային գիտակցության, մասնավորապես՝ պատմական հիշողության սեփականությունը և դարեր շարունակ սնում նաև ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, նպաստում ազգային ինքնագիտակցության ձևավորման գործընթացին: Դրանք առանցքային հավերժական գաղափարներ են, որոնք քաղաքական սինկրետիկ իդեալների և կողմնորոշիչների դերակատարություն ունեցան հայոց պատմության ողջ ընթացքում:

Ազգային աշխարհայացքի ու փիլիսոփայական մտքի հետագա զարգացման ընթացքում նշված գաղափարներն ու պատկերացումները հստակեցվեցին, բյուրեղացան, տեսական ու բարոյական հիմնավորում ստացան և վերածվեցին ամբողջական հայեցակարգի և գործնական ծրագրերի: Նախնադարյան մարդը բնության հարազատ զավակն էր, նրա մասնիկը, նրա հյուլեն: Նախնադարյան մարդու պատմությունը և ընդհանրապես մարդկային հասարակության պատմությունը բնության օրինաչափությունները ճանաչելու և դրանք օգտագործելու պատմությունն է. որքան ավելի են ճանաչվում և օգտագործվում այդ օրինաչափությունները, այնքան ավելի է զարգացած հասարակությունը:

ПРЕДСТАВЛЕНИЯ О ВСЕЛЕННОЙ В АРМЯНСКИХ ПЕТРОГЛИФАХ (КРАТКИЙ АНАЛИЗ)

Аршакян А. С.

«Кто правит прошлым, – правит будущим, кто правит настоящим – правит прошлым».

Джордж Оруэлл

Статья посвящена важности восстановления древнего мировоззрения армян доисторического и языческого периода, особенностям владения знаниями древних армян. С древних времен армяне очень хорошо чувствовали и осознавали, что живут на лоне природы и являются ее частью. Человеческая деятельность и физическое существование напрямую зависели от окружающего мира. Наши предки постепенно научились наблюдать и осмысливать отдельные явления на земле и на небе, что со временем привело к непосредственному пониманию мира (в том числе и «целостности»), т.е. к формированию мировоззрения, постепенному накоплению «опытных знаний», которые были результатом бесчисленных стихийных наблюдений, в которых отразились повторение и определенная последовательность явлений природы.

Ключевые слова: Ар, армянин, наскальная живопись, мировоззрение, генеалогия, иконография, символика.

ANCIENT ARMENIAN IDEAS ABOUT SPACE, EARTH, AND SKY
(GENERAL OVERVIEW)

Arshakyan A. S.

«Who rules the past rules the future, who rules the present rules the past.»

George Orwell

The article is devoted to the importance of restoring the ancient worldview of the Armenians, the history of the prehistoric and pagan period, the peculiarities of the knowledge of the ancient Armenians. Since ancient times, Armenians have felt and realized very well that they live in nature and are part of it. Human activity and physical existence directly depended on the surrounding world. Our ancestors gradually learned to observe and comprehend individual phenomena on earth and in the sky, which eventually led to a direct understanding of the world (including “complete”), i.e. to the formation of a worldview, the gradual accumulation of “experienced knowledge”, which were the result of countless elementary observations, and the reflection of which was the repetition and a certain sequence of natural phenomena.

Keywords: Ar, Armenian, petroglyphs, worldview, genealogy, iconography, symbolism.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Հայոց հին գրականություն, գիրք Ա// Երկեր: Հ. Գ., Երևան: 1968:
2. Աղայան Ծ. Պ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Ս., Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ. Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ, Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: Երևան: 1971:
3. Թումանյան Բ. Ե., Մնացականյան Հ. Հ. Բրոնզի դարի գոտի-օրացույց: Երևան: 1965:
4. Խորենացի Մ. Պատմություն Հայոց: Երևան: 1968:
5. Կողբացի Եզ. «Եղծ աղանդոց» (Մարտիրոս Մինասյանի կազմած բնագրի վերահրատարակումը), «Մատենագիրք Հայոց»: Ե դար: հատոր I: Անթիլիաս: 2003:
6. Հայ ժողովրդի պատմություն: Հ. 1-2: Երևան: 1971-1984:

7. Հ253 «Հայկական ազգային խորհրդանիշներ. Զինանշաններ, դրոշներ, պարզկներ»// Հ. Դեմոյան. Եր.: Հեղ. հրատ.: 2012: էջ 468:
8. Մարտիրոսյան Հ. Գիտությունն սկսվում է նախնադարում: Երևան: 1978:
9. Միրումյան Կ., Արևշատյան Ս. Հայ փիլիսոփայության պատմություն: Եր.: «Լուսաբաց», 2007: 463 էջ:
10. Շահինյան Լ. Հին Հայաստանի կուլտուրան: Երևան: 1992:
11. Շիրակացի Ա. (մ.թ. VII դար) Տիեզերագիտություն և տարեգրություն: Աշխատությամբ Ա. Աբրահամյանի: Երևան: 1940:
12. Պարիս Ս. Հերոնի Հայերը և հնագույն Հայաստանը (Հիմքերը հայոց), Արքաեօաստղագիտության, Լեզվաբանություն, Հնագույն պատմություն: Երևան: 2006: 319 էջ:
13. Սարգսյան Ս. Հայաստանի ժայռապատկերները քարի դարից մինչև բրոնզի դար: Երևան: ԵՊՀ հրատ.: 2010թ.:
14. Аветисян Г. А., Даниелян Е. Л., Мелконян А. А. История Армении (с древнейших времён до наших дней). Ереван. 1999.
15. Мкртчян Ш. Исторические и архитектурные памятники Нагорного Карабаха. Ереван. 1988.
16. Рожанский И. Д. История естествознания в эпоху античности. Москва. 1979.
17. Туманян Б., Петросян С. Астрономические петроглифы. Ереван. 1970.

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Արշակյան Ա. Ս. – մագիստրատուրա 2-րդ կուրս

ԵՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Դեկորատիվ կիրառական արվեստ էլ. փոստ՝ ani.arshakyan9810@mail.ru

Գիտական ղեկավար՝ Մարգարյան Ա., արվեստագիտ. թեկն., դոցենտ

Ստացվել է՝ 07.11.2022
Գրախոսվել է՝ 01.02.2023

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՊՈՐՏԱՅԻՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎՐԱ
Հովհաննիսյան Գ. Ա.**

Աշխատանքում ներկայացված է գեղարվեստական մարմնամարզության մրցավարական կանոնների ազդեցությունը մարզուհիների սպորտային պատրաստության կողմերի վրա կանոնների շարունակական փոփոխությունների պայմաններում:

Բանալի բառեր. գեղարվեստական մարմնամարզություն, կանոններ, արտիստիկա, կատարողականություն, մարմնի բարդություն, գործիքի բարդություն:

Աշխատանքի արդիականությունը: Ժամանակակից գեղարվեստական մարմնամարզությունը, լինելով համեմատաբար երիտասարդ մարզաձև, գտնվում է մշտական բարեփոխումների փուլում, ըստ այդմ՝ յուրաքանչյուր օլիմպիական ջիկլում մրցավարական կանոնները ենթարկվում են որոշակի փոփոխությունների, որոնց հիմնական նպատակն է մարզաձևը դարձնել ավելի օբյեկտիվ և մրցավարության տեսանկյունից ընկալելի հանդիսատեսի համար, մինչև ժամանակ այդ փոփոխություններին ադապտացվելը մարզիկների, մարզիչների և մրցավարական թիմի համար բավականին բարդ գործընթաց է:

Ընթացիկ օլիմպիական ջիկլում (2021-2024) գեղարվեստական մարմնամարզության միջազգային կանոնագրքում տեղ գտան փոփոխություններ, որոնք իրենց հերթին պահանջում են նոր մոտեցումներ: Կարևոր միջազգային ստուգատեսներում մարզուհու ցուցաբերած արդյունքները կախված են ոչ միայն մարզական և կատարողական որակներից, այլ նաև մրցավարական կանոնների լիարժեք տիրապետումից, կարևոր նշանակություն ունի նաև արդի մարզագույքի առկայությունը [1]: Բազմաթիվ հեղինակների՝ Ի. Ա. Վիներ-Ուսմանովայի, Ե. Ս. Կրյուչեկի, Ե. Ն. Մեդվեդեվայի, Ռ. Ն. Տերյոխինայի և այլոց աշխատանքները նվիրված են գեղարվեստական մարմնամարզության մարզման տեսության և մեթոդիկայի, պատմական զարգացման հարցերի բացահայտմանը [2, 3, 6], սակայն հարկ է նշել, որ գիտամեթոդական գրականության մեջ ավելի քիչ են ուսումնասիրված

մրցավարական կանոնների փոփոխությունների ազդեցությունը մարզման գործընթացի տարբեր կողմերի վրա: Գեղարվեստական մարմնամարզության մրցավարական կանոնների իմացությանը ներկայացվող բարձր պահանջները ընդգծում են տվյալ թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել գեղարվեստական մարմնամարզության կանոնների ազդեցությունը մարզուհիների պատրաստության գործընթացի վրա:

Վերջին օլիմպիական ցիկլը (2017-2020) առանձնանում էր կանոնների կտրուկ փոփոխությամբ, ըստ որի՝ մարզուհիները կարող էին նախկին բարդության սահմանափակ 10 միավորի փոխարեն մրցել ազատ միավորային սանդղակով, սակայն մարմնի բարդության տարրերի թույլատրելի քանակությունը մնացել էր անփոփոխ, արդյունքում մարզուհիների մրցելույթները դարձել էին գործիքային տեխնիկական տարրերով գերհագեցած: Ըստ այդմ՝ մարզուհիները առավելապես կատարելագործում էին գործիքով տեխնիկական տարրերի տիրապետումը և դրանց կատարման արագությունը՝ ձգտելով հնարավորինս շատ տարրեր ներառել մրցակցական էլույթներում: Փոփոխությունը իր ազդեցությունը ունեցավ մարզուհիների սպորտային պատրաստության գործընթացում, կարելի է ընդգծել, որ ավելի մեծ ուշադրություն հատկացվեց գործիքային պատրաստությանը և հնարքների յուրացմանը ինչպես փորձառու, այնպես էլ սկսնակ մարզուհիների մոտ:

Ներկայումս գեղարվեստական մարմնամարզության մրցակցական ծրագիրը բաղկացած է 4 առանցքային կողմերից, որոնցով պայմանավորված է մրցավարությունը.

- բարդություն, որտեղ առանձնացված է մարմնի և գործիք-բարդություն հասկացությունները,
- կատարողականություն, որը ենթադրում է մարզուհու տեխնիկապես ճիշտ վարժությունների կատարում,
- արտիստիկա, որը պետք է արտահայտի բարդության մատուցումը մարզուհու կոմպոզիցիայի և երաժշտության ներդաշնակ համադրությամբ [5]:

Հարկ է նշել, որ կատարողականության և արտիստիկայի թերացումների համար մարզուհին ստանում է տուգանային միավորներ, իսկ բարդության տարրերի տեխնիկապես ճիշտ կատարման արդյունքում կուտակային միավորներ: Գործող և նախորդ կանոնների

համեմատական վերլուծությունը, ըստ փոփոխված կանոնների և դրանց ազդեցության, ներկայացվում է ստորև:

Փոխվել են մրցավարական խմբերը և նրանց կողմից գնահատման և վերջնական գնահատականի (միավորի) հաշվարկային սկզբունքները (աղյուսակ 1):

Բարդության խմբում մարմնի բարդության նոր խումբ է համարվում նախկինում գործիքի բարդության տարր կազմող **Ռիսկը** (գործիքի նետում, մարզուհին կատարում է ակրոբատիկ հորիզոնական կամ ուղղահայաց պտույտներ իր առանցքի շուրջ և գործիքի ընդունում):

Աղյուսակ 1.

Գեղարվեստական մարմնամարզության կանոնների համեմատությունը 2017-2020 թթ.-ի և 2022-2024 թթ.-ի ծրագրերի համար:

մրացավարական խմբերը	2017-2020 ծրագիր	2022-2024 ծրագիր
Մարմնի բարդություն D (body difficulty)	BD (մարմնի բարդություն) D ₁ , D ₂ - BD • 9 BD, • 1 S (պարային քայլերի շարք) • Մարմնի բարդության խմբերի կատարման հսկողություն / պտույտ, ցատկ հավասարակշռություն /	DB (մարմնի բարդություն) DB ₁ , DB ₂ • 9 DB, որից 3 կոմբինացված • 0-5 R (ռիսկ), • 2 W ալիքներ • Մարմնի բարդության խմբերի կատարման հսկողություն / պտույտ, ցատկ հավասարակշռություն /
Գործիքի բարդություն D (apparatus difficulty)	AD (գործիքի բարդություն) D ₃ , D ₄ – AD AD անսահմանափակ 1-5 R (ռիսկ),	DA (գործիքի բարդություն) DA ₁ , DA ₂ • 1-20 DA • գործիքի տեխնիկական խմբերի կատարման հսկողություն
Կատարողականություն E (execution)	A+E = 10 միավոր W ալիքներ գործիքի տեխնիկական խմբերի կատարման հսկողություն A	E= 10 միավոր թերացումների համար տուգանային միավորներ
Արտիստիկա A (artistry)	մրցավար թերացումների համար տուգանային միավորներ A, E	A=10 միավոր 2 S (պարային քայլերի շարք) թերացումների համար տուգանային միավորներ
Վերջնական միավորի հաշվարկը	BD+AD +(10- (E _{միջին} + A _{միջին}))	DB+ DA + (10- A _{միջին})+(10- E _{միջին})

Առանցքային փոփոխություն է կատարվել ռիսկի կատարմանը ներկայացվող պահանջներում, նախկինում ռիսկ էր համարվում մարզուհու կողմից 2 և ավել պտտողական գործողության իրականացումը և ցանկացած համակցությունը գործիքի նետման և ընդունման հետ, որտեղ նաև կարևոր նշանակություն ունի նետման կամ ընդունման բարդությունը: Մարզուհին կարող էր նետում կատարել

գլխավոր գործողությունից առաջ կամ ընթացքում և ընդունել վերջին գործողության ժամանակ կամ հետո, չկար սահմանված պահանջ նետման բարձրության նկատմամբ [4]: Ներկայումս ռիսկ են համարվում նետված գործիքի տակ կատարվող նվազագույնը 2 պտտողական գործողությունները նույն կամ փոխվող առանցքի շուրջ (հորիզոնական կամ ուղղահայաց), օրինակ, եթե առաջին գործողության ժամանակ է կատարվել նետումը, ապա մարզուհին պետք է ցույց տա ևս 2 պտույտ: Նետման բարձրությունը պետք է լինի մարզուհու կրկնակի հասակից բարձր, հակառակ դեպքում ռիսկը կգնահատվի 0,0 միավոր [5]: Համեմատությունը ցույց է տալիս, որ նախորդ ծրագրով կատարված ռիսկերը նոր ծրագրով գնահատելու դեպքում դրանց մոտ 50 տոկոսը չի բավարարում ռիսկի կատարման չափանիշին ըստ պտույտների քանակի և նետման բարձրության: Կանոնները սահմանում են նաև միավորները բարձրացնելու լրացուցիչ չափանիշներ և նոր հնարավորություններ, որոնք դեռևս պետք է յուրացվեն մարզուհիների կողմից: Այսպիսով, ամբողջությամբ փոխվում է միավորների հաշվարկային համակարգը, և նույնիսկ բարձրակարգ մարզուհիները դժվարությամբ են ադապտացվում նոր պահանջներին: Նոր ցիկլում փոփոխվել է նաև «մարմնի բարդության կոմբինացիա» հասկացությունը, որի միջոցով մարզուհին կատարում է 2 տարրից բաղկացած գործողություն՝ ստանալով ավելի բարձր միավորներ, գնահատվելով որպես մեկ տարր: Հարկ է նշել, որ սպորտի վարպետի ծրագիրը պահանջում է 9 մարմնի բարդություն, որից 3-ը կարելի է կատարել կոմբինացիոն ձևով, այսինքն՝ կոմբինացված կատարելու շնորհիվ, բարդության տարրերի քանակը կարող է աճել մինչև 12-ը: Այս փոփոխությունը նպաստում է, որ մարզուհիները նախ և առաջ ընդլայնեն իրենց մրցակցական ծրագրում ցուցադրվող բարդությունների շրջանակը, մյուս կողմից՝ նոր ծրագիրը հնարավորություն է ընձեռնում պտույտներ խմբի միջոցով ստանալ բարձր միավորներ՝ ի հաշիվ պտույտների քանակի, որը իր հերթին մարզիչների և մարզիկների ուշադրությունը կենտրոնացրել է մրցակցական ծրագրում ավելի շատ պտույտներ ընդգրկելու և դրանց տեխնիկայի շարունակական կատարելագործման ուղղությամբ:

Առանցքային կերպով փոխվել են նաև գործիքի բարդության հաշվարկման սկզբունքները: Առանձնացվել են գործիքներով կատարվող ընդհանուր տեխնիկական տարրերը հատուկ տեխնիկական տարրերից, որոնց միջոցով կարելի է միավորներ ստանալ՝ ապահովելով

համապատասխան չափանիշները: Նախորդ կանոններով ուժեղագույն մարզուհիների մրցելույթների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գործիքի բարդության տարրերի քանակը տատանվել է 20-ից 30-ի սահմաններում նույն 1ր. 30վրկ. կոմպոզիցիայի ընթացքում: Նոր չափանիշներով մարզուհին կարող է ցույց տալ առավելագույնը 20 տարր [5], մի կողմից կրճատվել է մարզուհու կողմից կատարվող գործողությունների քանակը, մյուս կողմից՝ բարձրացվել են գործիքի տեխնիկական տարրերի տիրապետման հմտությունների նկատմամբ պահանջները, որոնք նպաստում են գործիքով տեխնիկական տարրերի կատարողական վարպետության բարձրացմանը, հատկապես այն տարրերի համար, որոնք առավել գնահատված են գործող ծրագրով, օրինակ՝ գնդակի վարժությունում երկար գլորումները:

Հաջորդ առանցքային փոփոխությունը վերաբերում է մարզուհու կատարողականության և արտիստիկայի տարանջատմանը՝ որպես առանձին գնահատման չափանիշների: Այսպիսով, մարզուհուն տրվում է առավելագույնը 10 միավոր կատարողականության և 10 միավոր՝ արտիստիկայի համար: Այս մոտեցումը բարձրացնում է մարզուհու մրցակցական ելույթների նկատմամբ կատարողական և արտիստիկայի դրսևորման պահանջները: Կատարողականությունը ենթադրում է ավելորդ շարժումների բացառումը և բարդությունների տեխնիկապես զրազետ ցուցադրությունը: Արտիստիկայի գնահատման համար կարևոր բաղադրիչներ են համարվում երաժշտության շեշտադրումը մարզուհու շարժումների և գործիքի աշխատանքի միջոցով՝ մարզուհու ինքնատիպությունը, շարժողական ոճը, կոմպոզիցիայի նորույթը, երաժշտության ներքո ստեղծած կերպարը շեշտադրող մարզահագուստը [1, 3]: Կատարողական թերությունների բացառումը նպաստում է թե՛ կատարողական բարձր միավորներ, թե՛ բարդության տարրերի միջոցով առավելագույն միավորներ ստանալուն, այս օրինակաչափությունը շեշտադրվում է նոր կանոնների միջոցով:

Կանոնների (2017-2020թթ. և 2022-2024թթ.) վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկինում շատ բարդության տարրեր ցուցադրելու միջոցով հնարավոր էր կոմպենսացնել կատարողական թերացումները և զրանցել ավելի բարձր միավորներ: Գործող ծրագիրը /2022-2024/ հավասար պայմաններ է ստեղծում մարզուհիների համար, այսինքն՝ պահպանելով ազատ միավորային սանդղակը՝ սահմանափակվել են մարմնի և գործիքի բարդության տարրերը ըստ քանակության, արդյունքում մարզուհիները նախապատվություն են տալիս բարձր արժեք ունեցող

տարրերի տիրապետմանը և ցուցադրմանը՝ միննույն ժամանակ շեշտադրելով բարձր կատարողականությունը և արտիստիկայի բաղադրիչները:

Ներկայումս գեղարվեստական մարմնամարզության սպորտային վարպետության բարձրացման և ուսուցման հիմնական դժվարություններից մեկը մարմնի և գործիքային տարրերի անընդհատ աճող բարդությունն է, որն ունի երիտասարդացման միտումներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից ուսումնամարզական պարապմունքներում գործիքային տեխնիկական տարրերի ուսուցումը կատարվում է զուգահեռ ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստությանը՝ այսպիսով կատարելով մարզման ժամանակի օպտիմալացում, միննույն ժամանակ ավտոմատացնելով և կատարելության հասցնելով տեխնիկական տարրերի յուրացումը, նպաստելով կատարողական վարպետության բարձրացմանը [2,3]: Արդեն իսկ առաջատար երկրներում մարզման օպտիմալացման արդյունքները տեսանելի են վաղ տարիքում (9-10 տարեկանում), երբ մարմնամարզուհիները տիրապետում են բարդ կոորդինացիոն շարժումների և ներառում են դրանք իրենց մրցակցական ծրագրերում:

Վերլուծությունների արդյունքում կարելի է առանձնացնել սպորտային պատրաստության առանցքային կողմերը, որոնք թույլ են տալիս նոր կանոններով կառուցել արդյունավետ և մրցավարության տեսանկյունից արժեքավոր մրցակցական ծրագրեր: Սպորտային պատրաստության գործընթացում անհրաժեշտ է մշտապես բարձրացնել մարզուհիների ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստությունը, կոորդինացիոն պատրաստությունը՝ համակցելով գործիքի տեխնիկական տարրերի ուսուցման և տիրապետման հետ, կոորդինացիոն դիմացկունությունը, կատարողական վարպետությունը, խորեոգրաֆիկ պատրաստությունը, երաժշտական լսողությունը և շարժման կուլտուրան, արտիստականությունը: Անհրաժեշտ է նաև առանձին ուշադրություն հատկացնել թե՛ մարզիչների, թե՛ մարզիկների տեսական պատրաստվածությանը, որը ենթադրում է մրցակցական ծրագրի, բարդության տարրերի և արժեքների լիարժեք իմացություն, որը իր հերթին թույլ կտա գնահատել մարզուհու կողմից յուրացված բարդությունը և մրցակցական ելույթների արդյունավետությունը:

Գեղարվեստական մարմնամարզության մեջ սկսնակ մարզուհուց մինչև սպորտի վարպետ ճանապարհը տևում է ավելի քան 10 տարի (4-ից մինչև 16 տարեկան), իսկ մարզական վարպետության կատարե-

լագործումը կարող է շարունակվել միջինում մինչև 25 տարեկան: Վերոնշյալը ցույց է տալիս, որ մարզուհու մարզական ուղին ընթանում է 3 և ավելի օլիմպիական ցիկլ՝ սպորտային մարզման ընթացքում իր վրա կրելով կանոնների շարունակական փոփոխությունները, հետևաբար որպես սպորտային պատրաստության առանցքային խնդիր կարելի է առանձնացնել նաև բազմակողմանի պատրաստության միջոցով շարժողական հարուստ փորձի ձևավորումը՝ որպես մարզուհու սպորտային հարմարվողականության և շարժողական գործողությունների վերակառուցման նախապայման:

Եզրահանգում: Այսպիսով, գեղարվեստական մարմնամարզության մրցավարական կանոնների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ բարդ-կոորդինացիոն շարժումների ուսուցման արդյունավետ մեթոդների որոնումը, արդյունավետ մրցակցական ծարգրեր կազմելու տեսական և գործնական գիտելիքները, ինչպես նաև մարզուհիների կողմից տվյալ մրցակցական ցիկլի համար արժեքավոր բարդությունների յուրացումը և կատարելագործումը գտնվում է մարզիչների մշտական ուշադրության ներքո: Կանոնների փոփոխությունները և սպորտային մարզման գործընթացի վրա դրանց ազդեցության առանցքային կողմերի իմացությունը թույլ կտան մարզիչներին բարձրացնել մարզումների արդյունավետությունը՝ օպտիմալացնելով սպորտային պատրաստության կողմերը:

ВЛИЯНИЕ ИЗМЕНЕНИЙ ПРАВИЛ СУДЕЙСТВА ПО ХУДОЖЕСТВЕННОЙ ГИМНАСТИКЕ НА ПРОЦЕСС ПОДГОТОВКИ

Ованнисян Г. А.

В статье представлено влияние правил судейства по художественной гимнастике на аспекты спортивной подготовки спортсменок в условиях постоянного изменения правил.

Ключевые слова: художественная гимнастика, правила, артистизм, исполнение, сложность тела, сложность предметов.

THE SIGNIFICANCE OF RHYTHMIC GYMNASTICS JUDGING RULES IN THE PROCESS OF SPORTS TRAINING

Hovhannisyan G. A.

The article presents the influence of the rules of judging in rhythmic gymnastics on the aspects of the sports training of female athletes in the

conditions of constant changes of the rules.

Keywords: rhythmic gymnastics, rules, artistry, execution, body difficulty, apparatus difficulty.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միմոնյան Ա. Ա., Գեղարվեստական մարմնամարզության արդի հիմնախնդիրները Հայաստանում // ՇՊՀ գիտական տեղեկագիր, Բ Պրակ, N 2: Գյումրի: 2019: էջ 465-469:
2. Винер-Усманова, И. А., Крючек Е. С., Медведева Е. Н., Терехина Р. Н., Художественная гимнастика: история, состояние и перспективы развития.- Москва: Человек, 2014. - 200 с.
URL:<https://www.studentlibrary.ru/book/ISBN9785906131294.html> (дата обращения: 04.10.2022)
3. Винер-Усманова И. А., Крючек Е. С., Медведева Е. Н., Терехина Р. Н., Теория и методика художественной гимнастики. Артистичность и пути её формирования. – М.: Спорт, 2015. – 120 с.
4. ПРАВИЛА 2017 – 2020. по художественной гимнастике. Утверждены Исполнительным Комитетом ФИЖ, 2017.- 175 с.
(<http://vfrg.ru/upload/iblock/b0e/b0ef90036571278987c9d657f05e9394.pdf>)
5. ПРАВИЛА 2022 – 2024. по художественной гимнастике. Утверждены Исполнительным Комитетом ФИЖ, 2022. – 228 с.
[https://www.gymnastics.sport/publicdir/rules/files/ru_2022-2024%20RG%20Code%20of%20Points%20\(Mark-up\).pdf](https://www.gymnastics.sport/publicdir/rules/files/ru_2022-2024%20RG%20Code%20of%20Points%20(Mark-up).pdf) (дата обращения: 29.09.2022)
6. <http://ru.sport-wiki.org/vidy-sporta/hudozhestvennaya-gimnastika/>
(հասանելի է 15.10.2022)

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

Հովհաննիսյան Գ. Ա. – բակալավրիատ 4-րդ կուրս

ՇՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ, Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ

Էլ. փոստ՝ simonyan.asya@gmail.com

Գիտական ղեկավար՝ Միմոնյան Ա., մանկ. գիտ. թեկն.

Ստացվել է՝ 09.11.2022

Գրախոսվել է՝ 27.12.2022

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԵՐԵՎՆ Ու ԱՅՍՕՐԸ
(ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)
Արզումանյան Վ. Ա.**

Մեր հոդվածում անդրադարձել ենք Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տարբեր շրջանների գործունեությանը, խաղացանկին: Թատրոնի ներկայացումները վերլուծելիս վեր ենք հանել խնդիրները, բացերը, առաջարկել դրանք հարթելու, նաև դրամատիկական թատրոնի զարգացման նոր փուլում խաղացանկը նպատակային դարձնելու արդյունավետության ուղիները:

Բանալի բառեր. Արցախ, պատերազմ, թատրոն, խաղացանկ, ներկայացում:

Ներածություն: «Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի երեկն ու այսօրը» հոդվածում անդրադարձել ենք թատրոնի հիմնադրումից մինչև մեր օրեր ձգվող ստեղծագործական ճանապարհին, որը ունեցել է ն՝ վերելքներ, ն՝ վայրէջքներ: Փորձ ենք արել հետպատերազմյան շրջանի ներկայացումները քննարկելով՝ վեր հանել մասնագիտական խնդիրներն ու առաջարկել դրանց լուծման տարբերակները: Փաստն այն է, որ դրամատիկական թատրոնը շարունակում է իր ստեղծարար ճանապարհը՝ խաղացանկային քաղաքականությունը վարելով ժամանակին համընթաց: Թատրոնի զարգացման փուլերին ծանոթանալիս չենք կարող անտարբեր անցնել հայ նշանավոր դերասանների և բեմադրիչների անունների կողքով, որոնք մասնագիտական ճանապարհ են հարթել դրամատիկականում: Վերլուծելով թատրոնի տարբեր տարիների ստեղծագործական գործունեությունը՝ տեսնում ենք, որ Ստեփանակերտում մեծամասշտաբ «թատերական հրավառության» հեռանկարներ կան նաև այս պահին: Սակայն մասնագիտական պատրաստվածության խնդիրն այսօր միանշանակ լուրջ բացերի պատճառ է հանդիսանում և ավելի է բարդացնում թատրոնի հետագա ստեղծագործական քայլերը: Մեր նպատակային ուսումնասիրությունը ցույց է տվել, որ անհրաժեշտ է դրամատիկական թատրոնի

ստեղծագործական ուղղությունը հետպատերազմյան Արցախում բազմավեկտոր դարձնել՝ ընդգրկելով մի քանի ժանրեր: Այդպիսով, խաղացանկում նպատակային փոփոխություններ կատարելու արդյունքում նաև հանդիսատեսն ավելի կմոտենա թատրոնին:

Ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք տեսական գրականությունից, թատերագիտական ու քննադատական հոդվածներից, որոնք տեղ են գտել տպագիր և էլեկտրոնային մամուլում:

Թատրոնի ճանապարհը: 1932 թվականի օգոստոսի 11-ին բացվեց Ստեփանակերտի Մաքսիմ Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի (1989 թվականին վերանվանվեց Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոն) վարագույրը: Բեմում հայ նշանավոր դերասան Վաղարշ Վաղարշյանի «Օղակում» պիեսի բեմադրությունն էր: Ժամանակակիցների վկայությամբ՝ հանդիսատեսը մեծ ուրախությամբ ողջունեց թատերախմբի անդրանիկ ներկայացումը: Այն դիտելու էին գալիս նաև մոտակա գյուղերից, հաճախ ոտքով կամ լավագույն դեպքում՝ սայլերով: Մեծահոշակ դերասան Վահրամ Փափազյանը Ստեփանակերտի դրամատիկական թատրոն ոտք դրեց 1933 թվականին: Նրա օրինակին հետևեցին շատ դերասաններ: Արդեն 1950 թվականի գարնանը սկսվում է թատրոնի նոր շենքի շինարարությունը, որն ավարտվում է շատ կարճ ժամանակահատվածում՝ 1952 թվականին, և նույն տարվա հոկտեմբերի 5-ին բացվում է թատրոնի նոր շենքի դուռը: Թատրոնը թատերաշրջանի ընթացքում հանդիսատեսի դատին էր հանձնում 10-12 նոր ներկայացում, ամսական՝ 70 ներկայացում, օրական՝ մինչև 4 ներկայացում: Թատրոնը Ղարաբաղի պատմության անքակտելի մասն է, հենց Ղարաբաղն է ողջ Այսրկովկասի գավառային շրջանակներում դարձել եվրոպական տիպի թատրոնի հանգրվանը: 1995 թվականին Լեոնիդ Հարությունյանը Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում հիմնել է «Աստղիկ» թատերական ստուդիան, որը կարևորագույն օջախ էր երիտասարդ դերասանների ուսումնառության և թատերարվեստում հմտանալու գործում: Նշենք, որ Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի բեմում երկար կյանք են ունեցել «Վարագոստ» և «Գևորգ Մարգպետունի» պատմական դրամաները, Շիրվանզադեի «Մորգանի խնամին», «Արմենուհի», «Պատվի համար», «Նամուս» պիեսները, Շեքսպիրի «Ձմեռային հեքիաթ» ողբերգությունը:

Այն կարևոր ու ապրեցնող երկարատև ուղին, որ անցել է Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը 1930-ական թվական-

ներին, Հայրենական մեծ պատերազմի տարիներին, հետպատերազմյան դժվարին ժամանակաշրջանում, ստեղծագործական վերելքի տարիներին՝ 1958-1987 թվականներին, փոթորկված Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի ընթացքում, հետպատերազմյան մաքառումների տարիներին, 2020-ի 44-օրյա չարաբաստիկ պատերազմից հետո և, վերջապես, 21-րդ դարի նոր ժամանակների մարտահրավերներին դիմակայելու տարիներին, իսկապես բացառիկ խիզախում է հայ թատրոնի պատմության շառավիղներում:

Հետպատերազմական Արցախն ու դրամատիկական թատրոնը:

«Թատերական ներկայացումը հեղինակի և հանդիսատեսի միաձուլումը և մի սիրտ ու մի էություն դառնալու պրոցեսն է՝ դերասանի միջոցով» [1, էջ 38],-գրում է Վահրամ Փափազյանը, նաև նշում, որ դերասանը «պետք է լինի հոգեբան, փիլիսոփա, բանաստեղծ, որովհետև նա հանդիսատեսի ականջից՝ հոգուն, սրտին, մտքին է խոսում» [2, էջ 28]: Ստեփանակերտի թատրոնի դերասանախումբը գործունեության տարբեր շրջաններում փորձում է հավատարիմ մնալ վարպետի վերոնշյալ պատգամ-հորդորին: Պիտեր Բրուկը գրում է, որ, ըստ էության, դժվար է հասկանալ, թե որն է հանդիսատեսի դերը. «Ներկայացմանը նա ներկա է և կարծես ներկա չէ, անտեսվում է, և, այնուամենայնիվ, նա անհրաժեշտ է: Դերասանը երբեք ոչինչ հատուկ չի անում հանդիսատեսի համար, բայց այն ամենը, ինչ անում է դերասանը, նա անում է հանդիսատեսի համար» [3]: Թատրոնն առավել կենդանի է մյուս արվեստներից, որովհետև աշխատում են դահլիճում գտնվող հանդիսատեսի բոլոր զգայարանները:

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Ստեփանակերտը կիսադատարկ էր, քաղաքի բնակիչները դեռ չէին վերադարձել, իսկ թատրոնի գործունեությունը՝ դադարեցված: Թատրոնի ստեղծագործական կազմը որոշեց նույնօրինակ վերջերին վերսկսել իր բնականոն աշխատանքը՝ «Ալվան ծաղիկ» գունագեղ հեքիաթի բեմադրությամբ (բեմադրիչ՝ ԱՀ Ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյան): Չունենալով բավարար տեխնիկական ու շենքային պայմաններ՝ թատրոնը սկսեց աշխատել նոր ներկայացումների վրա. «Երկնքից երեք խնձոր ընկավ» (բեմադրիչ՝ Կարինե Քոչարյան)՝ ըստ արձակագիր Նարինե Աբգարյանի համանուն վեպի և Ռիչարդ Կալինոսկու «Հրեշը լուսնի վրա» (բեմադրիչ՝ Վահան Խաչատրյան): Հիմնական գաղափարը, որը երկու ներկայացումների հիմքում է, խիստ արդիական հնչեղություն ունի՝ գոյատևել, անցյալը չմոռանալ, բայց անցյալում չպարփակվել,

ներկայով ապրել: Այստեղ հայի ցավոտ ճակատագրի «սեղմագիրն» է ի ցույց դրվում:

Թատրոնը՝ մտածողություն. դիտարկումներ ներկայացումների շուրջ: Դրամատիկական թատրոնը գեղարվեստական անորոշությունից դուրս գալու ուղիներ փնտրելուն զուգահեռ նաև պետք է լուծի իրապես ժամանակակից ստեղծագործական խնդիրները՝ իր գործունեության մեջ գերակա չդարձնելով ինքնանպատակությունն ու ինքնաբավությունը: Ստեփանակերտի թատրոնի դեպքում հարցադրումներն ավելի են կարևորվում, որովհետև այս թատրոնն ունի նաև ռազմավարական նշանակություն. այն հայապահպան մի կարևոր տարածաշրջանի խոշոր մշակութային օջախն է և կոչված է ձևավորելու գործուն գեղարվեստական կյանք: 2021 թվականի սեպտեմբերին դրամատիկական թատրոնի բեմ բարձրացավ լեհ հեղինակ **Ռիչարդ Կալինոսկու «Հրեշը լուսնի վրա»** երկու գործողությամբ դրաման (բեմադրությունը և երաժշտական ձևավորումը՝ Վահան Խաչատրյանի, ռեժիսորի օգնական՝ Մարիաննա Գրիգորյան, նկարիչ՝ Ջորիկ Գալստյան): Ներկայացումը ռուսալեզու էր, որը քաղաքական ենթատեքստ չունի, այլ միայն նպատակ՝ համամարդկային խնդիրները հասանելի դարձնել ավելի մեծ լսարանի: Ընդհանրապես Ռիչարդ Կալինոսկին այս «պիեսը պարզ է գրել, ամերիկյան դրամատուրգիայի բոլոր կանոններով՝ առանց բարդացնելու, հասկանալի և պարտադիր հեփփի-էնդով: Իսկ այն, ինչը դող է առաջացնում ցանկացած հայ մարդու մարմնում և անտարբեր չի թողնում մյուսներին, հենց բուն թեմայի հրեշավորությունն է և, իհարկե, դրամատուրգի հայուհի կնոջ ազդեցությունը» [4]: Ռեժիսորը կարողացել է ժամանակաշրջանի ստվերոտ գծերը ընդգծել՝ այն նաև որպես ուղերձ օգտագործելով: Բեմի ընդգրկուն ձևավորումը թույլ էր տալիս մտովի տեղափոխվել այն տարածք, որտեղ ընթանում են գործողությունները: Արամի և Սեդայի ընտանիքի բոլոր անդամներին թուրքերը սպանել են իրենց աչքի առաջ: Նրանց սրտում մեծ ու չսպիացող վերք կա: Արամը Սեդային Թուրքիայում գտնվող որբանոցից հասցրել է Ամերիկա և ամուսնացել նրա հետ: Ռուդոլֆ Հայրիյանը, որը մարմնավորում է Արամին, կարողացել է կերպարի համառությունը վերափոխել իր հետ ապրող զգացումի հետ: Նշածս երևում է հատկապես վերջին տեսարանում, երբ, այսպես ասած, զգացմունքն առաջ է մղվում՝ միախառնվելով ցավին: Մա ոչ թե ճակատագրական բախում է կերպարի ու հոգևոր ուժի, այլ իրար շարունակող ընթացքի ու բարձրակետի: Սրան զուգահեռ պետք է ընդգծել նրա մտածող-պահպանողական տեսակը,

որը բազմիցս երևում է կատարած քայլերում և խոսքում: Մեղայի կերպարը մարմնավորող Մարիա Սարգսյանը հասարակ և անցողիկ երևութների, կյանքի հետագա ընթացքի և հիշողության գաղափարաբանությունը խտացրել է հույզերում: Խոսելով արդեն Պարոնի կերպարի մասին, որը ԱՀ ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանն է մարմնավորում, պետք է նշել հետևյալը. պատմությունը տանել-բերելը ընդամենը մեկ ընտանեկան լուսանկարի հետ միասին, այն էլ թատերաբեմում՝ դյուրին չէ: Եվ այստեղ պատահականություններ չկան, որովհետև կերպարն աստիճանաբար զարգանում էր՝ մեկ-մեկ դիմախաղով ասելով ավելին, քան բառերն են: Եվ քանի որ կերպարը իտալացի է, ապա Քաջիկ Հարությունյանի ռուսերեն խոսքում առոգանությունն ու շեշտադրումները միանգամայն արդարացված են: Փոքրիկ Վինսենթին մարմնավորող Արման Հարությունյանի կարողությունների վրա անգամ զարմանալ կարելի է: Փոքրիկ դերակատարը կարողացավ իրեն հաստատուն պահել կերպարում՝ գրեթե ներկայացման կեսը հավասարաչափ գտնվելով թատերաբեմում, անցնելով տարբեր տրամադրությունների միջով, ցույց տալով զրկանքներ տեսած մանկան քայլերն ինքն իրենով: Գործողություններն ընթանում են մի ֆոտոլուսանկարի և խաչի շուրջ, որոնք սիմվոլացնում են ներկայացման հիմնական գաղափարը՝ հանդիսանալով ասելիքի հիմնարար աղբյուր: Արամն ու Մեղան այդ լուսանկարի մեջ բանտարկվել ու ապրում են երկուսով: Նրանց միայն այդ երկու բանն էր մնացել՝ խաչն ու լուսանկարը, իսկ հետո՝ տիկնիկը, որը Մեղան խաչեց: Բեմադրիչը փորձել է ամբողջ բեմը ստանալ որպես ֆոտոկադր (զավառական լուսանկարչատուն՝ եգիպտական փարավոնների ժամանակների ֆոտոխցիկով, որը ռետինե տանձիկ ունի. պետք է սեղմես, որ լուսանկարի), և այն լիովին հաջողվել է: Եվ պատահական չէ, որ ներկայացումը ռեժիսորը համեմել է կոմիտասյան մեղեդիներով, որոնք փաստում են ողբերգություն տեսած ու իրենց ճակատագրերը վերապրող երկու հերոսների կյանքի շարունակականության մասին: Ռեժիսորն էլ է իրավացիորեն նշում, որ հայի տեսակ կա այս պիեսում. «Շատ տարօրինակ է, որ այլազգի հեղինակը, որն ի դեպ որպես նավաստի Մուսա Լեռից տարհանել է մեր հայրենակիցներին, կարողացել է կողքից նայելով հայի տեսակը ճիշտ մատուցել: Հայի ողբերգություն, հայի լուսավոր արարչի կետ, հայի էություն կա այդ գործի մեջ, կյանքի շարունակության, անցյալից չհրաժարվելով՝ գնալ դեպի առաջ՝ շարժվելու գաղափարախոսություն կա: Այս կերպարները

հայի առաքելությունն են» [5]: Այս ներկայացման օրինակով կարելի է փաստել, որ Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում «ռեժիսորական թատրոնը» հաստատվում է՝ ոչ թե երկրորդ պլան մղելով դերասանին, այլ հենց նրա միջոցով լուծելով ռեժիսորական բարդագույն խնդիրներ: Մյուս ներկայացումը Նարինե Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպի մոտիվներով ստեղծված տրագիկոմեդիան է՝ երկու գործողությամբ և տասնմեկ պատկերով, որը բեմականացրել և բեմադրել է նյույորքաբնակ դերասանուհի Կարինե Քոչարյանը: Բեմում հայի կյանքն է՝ Արցախյան պատերազմներից, Գյումրիի երկրաշարժից, բոլոր այդ աղետներից ծագած հետևանքներով: Սարերի մեջ կորած, դատարկված գյուղը, որտեղ ապրում են իրենց վախճանին սպասող երեսուն ծերեր, զարթոնք է ապրում ու սկիզբ դառնում հետագա զարթոնքների համար: Ազգային տարրերով հագեցած բեմանկարչությունը ներկայացման միջավայրը ստեղծելու գործում մեծ դերակատարություն ունի (նկարչական ձևավորումը՝ Զորիկ Գալստյանի): Միանգամից աչքի են զարնում արցախյան գորգի ու կարպետի զարդանախշերը՝ հետաքրքիր գունային գուգորդությամբ, որովհետև «գոյություն ունի կարպետի գունային գուգորդություն, որը խախտելու դեպքում ստանում ենք այլ կերպարային նախշեր, որով փոխվում է նաև դրա ծիսական բնույթը, խորհրդաբանությունը և ընդհանուր սիմվոլիկ նշանակությունը, որովհետև ամեն գույն ու ձև ունի իր սիմվոլիկական և հայկական խորհրդաբանությունը» [6]: Հետաքրքիր է նաև զգեստների ձևավորումը՝ հատկապես մեր ազգային տարազի ինչ-ինչ տարրերի հնարամիտ կիրառմամբ: Այսպիսի ազգային-կոլորիտային միջավայրի պայմաններում ներկայացումն ավելի դիտարժան կլիներ, եթե ռեժիսորը մոնումենտալիզմի, բարձր պաթոսի փոխարեն մեծ տեղ հատկացներ բազմաշերտ մետաֆորայնությանը, բանաստեղծական-խորհրդապաշտական մոտեցումներին, երբ թատրոնի կյանքի հայելի լինելու իրողությունը մատուցվում է կոմպոզիցիոն-պատկերային լուծումներով, չկրկնվող ու նոր մոտեցումներով:

2022 թվականը թատրոնը մեկնարկեց հեքիաթով՝ Հանս Բրիստիան Անդերսենի «Մատնաչափիկը» լուսավոր և գունավոր ներկայացումով՝ դիտակետում ունենալով նաև կրտսեր հանդիսատեսին: Ներկայացումն ունի կարևոր գաղափար. թե՛ Մատնաչափիկը, թե՛ արքան պայքարում են իրենց երջանկության համար: Եվ ռեժիսորի խնդիրն էր ցույց տալ մանուկներին, որ եթե խոչընդոտների միջով մարդ գնում է իր երջանկության հետևից, այսպես թե այնպես՝ մի օր հասնում է դրան:

Կարևորը ճանապարհից չշեղվելն ու չհանձնվելն է: Ներկայացման մեջ զբաղված դերասանների մեծ մասը երիտասարդներ են: Բեմադրող ռեժիսորը հեքիաթին հաղորդել է կատակերգական երանգ, որովհետև գործող անձանց դիտարկել է որպես կյանքից վերցրած կերպարներ: Երբ հեքիաթի իրավիճակից դուրս ես գալիս և սկսում ես նայել իրականության ձևաչափի մեջ, կերպարները կատակերգական երանգավորում են ստանում: Ներկայացման մեջ զբաղված դերասանների բեմական խոսքում նկատում ենք մի շարք թերացումներ, որը գուցե պրոֆեսիոնալ դերասանական կրթության բացակայության արդյունք է: Այդ պատճառով էլ ռեժիսուրան գալիս է ինչ-որ կերպ քողարկելու դերասանախմբի բացը, ինչին, թվում է, հնարավոր է պատանի հանդիսատեսն այդքան էլ ուշադրություն չդարձնի: Մինչդեռ ռուս բեմադրիչ Կ. Ս. Ստանիսլավսկին ասել է, որ «Երեխաների համար պետք է խաղալ այնպես, ինչպես մեծերի համար, միայն թե ավելի լավ» [7]:

Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի առաջ ծառայած մի շարք խնդիրներից կարևորագույնը գեղարվեստական մասի խնդիրն է: Դրամատիկական թատրոնում տեսնում ենք բարձրակարգ մասնագետների բացակայություն: Անհատական մտածողությամբ, վերլուծելու ու լուծումներ տալու, դերասանների առաջ խնդիրներ դնելու գեղարվեստական ղեկավարի խնդիր կա: Դրան հետևում է նաև թատրոնի գրական-գեղարվեստական մասի խնդիրը, այսինքն՝ ինչ է բեմադրվում, ով է հեղինակը, ասելիքի արդիականությունն ու բովանդակությունը պետք է հաշվի առնվեն խաղացանկային քաղաքականության մեջ: Թատրոնի դերասանները մասնագիտական տեխնիկական հմտությունները հաղթահարելու խնդիրներ ունեն. նրանք չեն օգտվում բեմական խոսքի տեխնիկական ձեռքբերումներից: Բեմում խոսքն ու շարժումը պետք է լինեն օրգանապես համակ: «Բեմական խոսքի արվեստը դերասանի արվեստի մի կողմն է՝ թատրոնը ինտոնացիոն արտահայտության մեջ: Բնականաբար, հնչող խոսքի արվեստի պոետիկական հիմքը դրաման և թատրոնն են՝ այս հասկացությունների ամենալայն իմաստով: Դրամատիկականը և թատերայինն են այն ելակետային սկզբունքները, որոնցով հրապարակային խոսքը ստանում է արվեստի արժեք, որոնցով արդարանում է բեմական խոսքի պոետիկա հասկացությունը» [8]: Իսկ դերասանի արվեստի էության մյուս կողմը շարժումն է, գործողությունը, սեփական մարմինը: Դերասանի մարմինը, ըստ Կ. Ս. Ստանիսլավսկու, կարող է լինել կամ իր բարեկամը, կամ ռիսերիմ թշնամին:

Թատրոնը նոր փուլում: Կարծում ենք, որ Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի զարգացումն այս փուլում կարող է ընթանալ մի քանի ուղղություններով՝ այդպիսով նաև հանդիսատեսին մշտապես պահելով թատերական մթնոլորտում: Մենք գիտենք, որ համաշխարհային թատրոնում գոյություն ունի թատերականացված ընթերցման ժանրը, որը վերջին տարիներին նաև ժամանակակից թատրոնում է զարգացման փուլ անցնում: Թատերականացված ընթերցման հիմնական նպատակը ընթերցող-հանդիսատեսին անմիջականորեն բեմից ծանոթացնելն է գրական նյութին՝ պիեսին: Այսպիսով դրամատուրգի ստեղծագործությունը հասանելի է դառնում ընթերցող-հանդիսատեսին, որի պահանջները հաճախ վերածվում են իրականության, և տվյալ պիեսը բեմադրվում է: Հաջորդ ուղին թատրոնում պոեզիա բեմադրելն է: Թեև պոեզիան վերին երևույթ է և կարիք չունի որևէ արվեստի միջնորդության, բայց մեր հասարակության համար շատ օգտակար է, երբ պոետիկական խոսքը թատրոնի լեզվով է ներկայացվում և անմիջապես գրավում ընթերցող-հանդիսատեսին:

Եզրակացություն: Այսօր թատրոնը մի նոր արժեք է Արցախի համար. այն քաղաքակրթության ու մշակութային պատմության անձնագիրն է, ոգեղենի ինքնահատուկ տարածությունն է: Արցախի Մայր թատրոնը 2022 թվականին բոլորեց 90-ամյակը: Կենսագրությունն սկսեց որպես Մ. Գորկու անվան թատրոն, հաղթահարեց խորհրդային տարիների ոչ դյուրին ճանապարհը: Անփոփոխ առաքելությամբ՝ իր ընթացքը շարունակեց Արցախի անկախության տարիներին՝ արդեն որպես Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոն: Այսօր էլ, բուն թատրոնի շենքից դուրս, իր կենսագրությունն է շարունակում դրամատիկականը: Հետպատերազմյան Արցախում բեմադրված «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Հրեշը լուսնի վրա» և «Մատնաչափիկը» ներկայացումները գալիս են ապացուցելու, որ թատրոնը խիզախում է անգամ դժվարին իրավիճակներում: Ստեփանակերտի թատրոնն առաջնագծի թատրոն է, իսկ առաջնագծում ասելիքը միշտ ուրիշ է լինում ու կարևոր:

Ուսումնասիրելով թատրոնի վերջին տարիների խաղացանկը, քննելով բեմադրված ներկայացումները՝ կարելի է փաստել, որ թատրոնն ունի բազում մասնագիտական բացթողումներ, բայց ստեղծագործական կազմը չի ընկրկում և շարունակում է աշխատել նոր բեմադրությունների վրա՝ այդպիսով նպաստելով նաև խաղացանկի արդիականացմանը: Խաղացանկային քաղաքականության մեջ, սակայն,

Ժանրային աշխարհագրությունը շատ սահմանափակ է: Իսկ այժմ խաղացանկում ներառված ներկայացումները քննելիս նկատել ենք մասնագիտական գիտելիքների բացեր, մասնավորապես դերասանների բեմական խոսքում, ռեժիսորական լուծումներում, գրական գործի պիեսի շուրջ գրական-ստեղծագործական աշխատանքում: Այս ամենին զուգահեռ՝ պետք է նշել, որ Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի ամենամեծ դերը, թերևս, սերունդներին հայեցի դաստիարակելու մեջ պետք է փնտրել:

ВЧЕРА И СЕГОДНЯ ГОСУДАРСТВЕННОГО СТЕПАНАКЕРТСКОГО ДРАМАТИЧЕСКОГО ТЕАТРА ИМ. В. ПАПАЗЯНА

Арзуманян В. А.

В нашей статье мы изучили деятельность и репертуар Степанакертского государственного драматического театра имени В. Папазяна в разные периоды. Анализируя спектакли театра, мы выявили проблемы и пробелы, предложили пути их решения, а также предложили сделать репертуар Драматического театра более целенаправленным на новом этапе развития.

Ключевые слова: Арцах, война, театр, репертуар, спектакль.

YESTERDAY AND TODAY OF STEPANAKERT STATE DRAMA THEATER AFTER V. PAPAZYAN

Arzumanyan V. A.

In the paper, we have studied the activity and schedule of the Stepanakert State Drama Theater named after V. Papazyan in the course of different periods. While analyzing the performances of the theater, we have highlighted the issues and gaps, proposed ways to smooth them out, and also to make the schedule of the Drama Theater more targeted in the new stage of development.

Keywords: Artsakh, war, theater, schedule, performance.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Փափազյան Վ. Երկեր: Երևան: 1979: Հ. 1: 460 էջ:
2. Փափազյան Վ. Երկեր: Երևան: 1979: Հ. 1: 460 էջ:

3. Брук П. Пустое пространство, пер. с англ. Москва. «Прогресс». 1976. стр. 96:
4. Գյուլմիսարյան Ռ. Հավաքել ուժերն ու շարժվել դեպի ապրիլի 25-ը. Ստեփանակերտի թատրոնը բացում է թևերը. armeniasputnik.am, 01.12.2021:
5. Աղաջանյան Տ. Մշակույթը ամենահզոր զենքից հազարապատիկ զորեղ է. aparaj.am, 24.06.2021:
6. Արզումանյան Վ. Ազգային կտորն ու իրականությունը, aravot.am, 29.04.2022:
7. https://dslov.ru/pos/38/p38_337.htm?fbclid=IwAR0cQ4L-EdOzhmKEu9qBB6kfcR5dzLI8sDk1NAItSIxSa9Ju1SAbS7syDnE
8. Հովհաննիսյան Հ. Բեմական խոսքի պոետիկան: Երևան: 1973: էջ 14:

Տեղեկություններ հեղինակի և գիտական ղեկավարի մասին

*Արզումանյան Վ. Ա. - մագիստրատուրա 2-րդ կուրս
ԵԹԿՊԲ, Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետ,
Սցենարադրամատուրգիական արվեստ
Էլ. փոստ՝ vovaarzumanyan200@gmail.com*

Գիտական ղեկավար՝ Մարգարյան Ն., արվեստագիտ. թեկն., պրոֆեսոր

*Ստացվել է՝ 29.11.2022
Գրախոսվել է՝ 27.12.2022*

Խմբագրումը և սրբագրումը՝ Ն. Ղարազյոզյանի
Ա. Հովհաննիսյանի
Հ. Մատիկյանի
Համակարգչային շարվածքը՝ Ն. Սապուգյանի

Ստորագրված է տպագրության 10.10.2023

Ծավալը՝ 622 էջ:

*Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան
Հայաստան, Գյումրի, Պարույր Սևակ 4*